

Գ.Լ. ԳԱՐԵԳՈՆՅԱՆ

ՇԱԽԱՏԱՆԵՐԸ

ԽԱՄԱՆԱԿԻՅ

ՎԱՅԵՐԵՆՈՒՄ

Ե. Բ. Ե. Գ. Ե. Դ. Ե. Զ.

ՀԱՅԵՐԵՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

14



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

ИНСТИТУТ ЯЗЫКА

Г. Л. ГАРЕГИНЯН

СОЮЗЫ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Е Р Е В А Н 1963

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գ. Լ. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

ՇԱՂԿԱՊՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Սույն աշխատությունը ժամանակակից հայերենի շաղկապների վերաբերյալ առաջին մենագրական ուսումնասիրությունն է: Հեղինակը համակողմանի քննության է ենթարկում շաղկապների խոսքի մասային ու ձևարանական առանձնահատկությունները և մանրամասնորեն նկարագրում նրանց կիրառություններն ու նշանակությունները:

Աշխատությունը կարող է օգտակար լինել ուսանողների, հայոց լեզվի ուսուցիչների և առհասարակ բարձր նախադասության կառուցվածքն ուսումնասիրողների համար:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Սույն աշխատությունը, որ բաղկացած է երկու մասից, նվիրված է ժամանակակից հայերենի շաղկապների ուսումնասիրությանը:

Առաջին մասում քննության են ենթարկված շաղկապների խոսքի մասային հիմնական առանձնահատկությունները, նրանց ձևաբանական կազմն ու կազմության տեսակները: Այս մասի սկզբում տրված է նաև համառոտ ակնարկ՝ «Շաղկապի ըմբռնումը արևելահայ աշխարհաբարի քերականագիտության մեջ»:

Երկրորդ մասը ամբողջովին նվիրված է շաղկապների նշանակությունների ու կիրառությունների նկարագրությանը: Համադասական և ստորադասական շաղկապների արտահայտած իմաստային հարաբերությունները բացահայտելիս միշտ նկատի ենք ունեցել կապակցվող մասերի բովանդակությունը, նրանց շարադասությունը և նրանցում օգտագործված բայերի եղանակա-ժամանակային ձևերը, քանի որ հաճախ հենց դրանցով է պայմանավորվում շաղկապների (հատկապես արմատական և բազմիմաստ շաղկապների) այս կամ այն նշանակության դրսևորումը: Աշխատել ենք հնարավորության սահմաններում բացահայտել շաղկապների ոճական կիրառությունների ոլորտները, նշելով, թե ի՛նչ բնույթի գործերում՝ են առավելապես տարածված նրանք (գեղարվեստական, հրապարակախոսական, գիտա-տեխնիկական և այլն) և ոճական ի՛նչ երանգ են տալիս խոսքին իրենց գործածությունմբ (գրական, խոսակցական, պարզ ժողովրդական, բարբառային և այլն):

Հիշյալ ուսումնասիրության համար նյութ է ծառայել անցյալ դարի երկրորդ կեսի և այս դարի արևելահայ գրական հայերենը։ Հետազոտության համար օգտագործել ենք ինչպես գեղարվեստական գրականության, այնպես էլ հրապարակախոսության և մասամբ էլ գիտա-տեխնիկական գրականության լեզուն։ Անհրաժեշտության դեպքում նկատի ենք ունեցել նաև ժողովրդական խոսակցական լեզուն և բարբառները։ Աչքաթող չենք արել նաև հայերենի թարգմանական գրականությունը (ինչպես գեղարվեստական, այնպես էլ լրագրային), ուր հնարավոր է հետևել այլ լեզուների ազդեցությանը՝ հայերենի շաղկապական համակարգի վրա։

Ա Ռ Ա Ջ Ի Ն Մ Ա Ս

ՇԱՂԿԱՊԻ ԸՄԲՈՒՆՈՒՄԸ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Արևելահայ աշխարհարար լեզվի շաղկապների մասին առաջին հիշատակութունը գտնում ենք հոլանդացի հայագետ Սկրոդերի՝ 1711 թ. Ամստերդամում լույս տեսած «Thesaurus linguae Armenicae antiquae et hodiernae» (Արամյան լեզվի գանձ...) աշխատության «Synopsis linguae civilis Armenorum» վերնագիրը կրող բաժնում: Հեղինակն ալդտեղ, առանց որևէ դասակարգության, թվարկում է վաղ աշխարհաբարյան շրջանում գործածական որոշ շաղկապներ՝ քաղելով անշուշտ գրքի վերջում եղած նմուշներից: Բերված շաղկապներից ինը հայերեն են, չորսը՝ փոխառյալ (աբաբերեն և պարսկերեն): Սացույց է տալիս, որ վաղ աշխարհարարի այդ շրջանում անխըտիր գործ էին անում ինչպես հայերենի, այնպես էլ փոխառյալ շաղկապները, անշուշտ բարբառների ուժեղ ազդեցության տակ:

Հաջորդ հեղինակը, որ անդրադարձել է բարդ նախադասության, ինչպես նաև շաղկապների հարցին, հայ մեծ գրող ու մանկավարժ Խ. Աբովյանն է: Նա իր «Նախաշաւիղ կրթութեան ի պէտս նորավարժից» քերականական աշխատության մեջ բարդ նախադասության վերաբերյալ հետաքրքրական դիտողություններ ունի: Նախ պետք է ասել, որ

բարդ նախադասություն տերմինը առաջին անգամ նա է օգտագործել մեր քերականագիտության մեջ, որից հետո միայն Հարություն Թումանյանն ու Մանուկ Աբեղյանը օգտագործեցին այն (իհարկե, Աբովյանից անկախ, քանի որ ծանոթ չէին նրա այդ աշխատությանը)։ Խ. Աբովյանը բարդ նախադասության կազմում տարբերում է գլխավոր և ենթարկյալ նախադասություններ։ «Գլխավոր նախադասութիւն այն է՝ որ չէ կախեալ զայմէ...», իսկ «ենթարկեալ նախադասութիւնն գրի առ ի բացայայտութիւն գլխատրին, և ուր գոն յարաբերական դերանուն, շաղկապիդ ստորադասական, զի, քանզի, վասն զի, եթե այնզի, որովհետեւ, ըստ որում, սմին իրի, թէ, ուր, երբ, մինչ»¹։

Ինչպես երևում է, Խ. Աբովյանը 1840—1841 թթ. ընդհանուր կերպով արդեն ծանոթ է եղել բարդ նախադասության կապակցության այս երկու տեսակներին և նույնիսկ խոսում է ենթարկյալ (իմա՝ երկրորդական) նախադասությունների կապակցության միջոցների՝ ստորադասական շաղկապների մասին։ Հաստատապես պիտի պնդել, որ ստորադասական տերմինը շաղկապների վերաբերյալ առաջին անգամ նա է օգտագործել։

Բարդ նախադասության կառուցվածքի հարցերով շատ ավելի հանգամանորեն է զբաղվել Ստեփաննոս Պալասանյանը, որի մոտ արդեն շարահյուսության այս բաժինը կանոնավորված ու գիտականորեն ձևակերպված բնույթ է կրում։ Նրա աշխատությունը նվիրված է արդեն մշակված, գրական լեզվի աստիճանին հասած արևելահայ աշխարհաբարի քերականական կառուցվածքի նկարագրությանը և լույս է տեսել Թիֆլիսում 1874 թ. «Քերականութիւն մայրենի լեզուի» վերնագրով²։ Այս աշխատության կողքին պի-

1 Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, V հատոր, Երևան, 1950, 157։

2 Օգտագործել ենք 5-րդ հրատարակությունը։ Որպես ծանոթություն նշում ենք, որ այս երկու հրատարակությունների միջև ստորակետի տարբերություն անգամ չկա։

տի դնել նաև նույն հեղինակի 1870 թ. Թիֆլիսում լույս տեսած «Ընդհանուր տեսութիւն արեւելեան նոր գրաւոր լեզուի հայոց» արժեքավոր ուսումնասիրութիւնը, ուր տեսականորեն հիմնավորվում է աշխարհաբարի հաղթանակը և գոյութեան անվերապահ իրավունքը գրաբարի հանդեպ, մի բան, որ արդեն կատարել էր Ա. Այտընյանը արեւմտահայերէնի վերաբերյալ՝ Վիեննայում 1866 թ. տպագրված իր նշանավոր «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատութեամբ։ Այդ տեսակետից զգալի է Այտընյանի քերականագիտական հայացքների ազդեցութիւնը Ս. Պալասանյանի վրա։ Դա երևում է նաև շաղկապի վերաբերյալ այս երկու հեղինակների դիտողութիւնների համեմատութիւնից։

Ս. Պալասանյանը առաջինն է հայ քերականներից (թե գրաբարի և թե աշխարհաբարի), որ որոշակիորեն տարբերում է բարդ նախադասութեան կազմի մեջ մտնող նախադասութիւնների կապակցութեան հետեյալ եղանակները։

- 1) Երկրորդական նախադասութիւնների կապակցութիւն.
- 2) Անկախ նախադասութիւնների կապակցութիւն։

Ինչպես տեսնում ենք, նա հասնում է ստորադասութեան ու համադասութեան շարահյուսական կատեգորիաների ճանաչմանը, առանց սակայն այդ տերմինները գործածելու։ Սպասելի էր ուրեմն, որ Ս. Պալասանյանը շաղկապներն էլ ստորաբաժաներ համադասականի և ստորադասականի, սակայն նա չի անդրադառնում այդ հարցին և շաղկապների նշանակութեան մասին խոսելիս նկատի է ունենում միայն համադասականները. «Շաղկապները իրանց ընդհանուր նշանակութեան համեմատ՝ երկուսի են բաժանվում. բաղնջուսական և ներհական. առաջինները մտքի կողմից իրարու համաձայն նախադասութիւններ են կապում..., երկրորդները այնպիսի նախադասութիւններ են կապում, որոնք մտքի կողմից համաձայն չեն, այլ ներհակ են միմյանց...»¹։ Այսպիսով ստո-

¹ Ս. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, 81։

րադասական շաղկապները դուրս են մնում իմաստային դասակարգումից: Այս անտեսումը նկատվում է նաև Ս. Պալասանյանին հաջորդող մյուս քերականների մոտ (մինչև Մ. Աբեղյանը), չնայած որ նրանք ճանաչում են ստորադասական շաղկապների դերը՝ տարբեր իմաստային հարաբերություններ արտահայտող երկրորդական նախադասություններ կապակցելիս: Ընդհանրապես այս շրջանի համար հատուկ է ստորադասական որոշ շաղկապների շփոթումը համադասականի հետ, մի բան, որ նկատվում է նաև այդ շրջանի ուսու քերականագիտության մեջ:

Անհրաժեշտ է հիշել, որ գրաբարի մեր հին քերականները շաղկապների իմաստային դասակարգումները կատարելիս հիմնվել են ոչ թե նրանց (շաղկապների) քերականական ընդհանուր իմաստի վրա, այլ նրանց նեղ բառական նշանակությունների վրա: Այդ է պատճառը, որ նրանք ունեն շաղկապների իմաստային բազմաթիվ մանր ստորաբաժանումներ, որոնց մեջ հաճախ գտնում ենք զետեղված այլ խոսքի մասերով արտահայտված կապակցական բառեր: Բերենք մի քանի օրինակներ այդ իմաստային բաժանումներից. վառանական (գոնէ, գոնեա, գէթ և այլն), յարացուցական (ըստ որում, ըստ այնմ, որպէս և այլն), սկզբնաւորական (արդ, այլ արդ, իսկ և այլն), քարմատաւ (թէ, եթէ, զի, բա որ և այլն): Բաղդասար Դպիրը գրաբարի իր քերականության մեջ ունի 19 տեսակ շաղկապ, որոնց մեջ կան հետեւյալները՝ քարշողական (որովհետեւ, արդ որովհետեւ...), հաւկատական կամ հետեւողական (ուրեմն, ապա ուրեմն...), կրկնական (դարձեալ, ևս, եւս, նաևս), ժամանակական (յայսմ աւուր, ի սմին աւուր...), նմանական (որպէս, այսպէս, այս գունակ և այլն), առաւելական (մանաւանդ, առաւելևս, թող թէ, ուր մնաց թէ), նախընտրական (քան, քան թէ)¹:

Ըստ երևույթին այս հանգամանքն էլ է նկատի ունեցել

¹ Բաղդասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառոտ և դիրիմաց, Կ. Պոլիս, 1736, 168—182:

Ա. Այտրնյանը, երբ գրել է, որ քերականները շաղկապներին՝ նրանց նշանակության համեմատ այլևայլ անուններ են տալիս, սակայն այդ բաժանմունքները մի երեկելի կարևորություն չունեն¹, իսկ Ս. Պալասանյանը, ընդունելով բազմոսական և ներհակական շաղկապների գոյությունը, մյուսների մասին այն կարծիքն է հայտնում, թե դրանք երկրորդական բաժանմունքներ են և ավելորդ ծանրաբեռնվածություն են աշակերտների համար²:

Ս. Պալասանյանը ըստ կազմության շաղկապները բաժանում է արմատականների և ածանցյալների: Խոսում է ածանցյալ շաղկապների ձևաբանական կազմի մասին, այսինքն նշում է, թե ի՛նչ խոսքի մասերից են փոխանցվել (գոյական անուններից, բայերից, նախադրություններից, գերանուններից և թվականներից³): Իր գրաբարի քերականության մեջ այս բաժանումը անվանված է պարզ արմատական շաղկապներ և բարդ շաղկապներ⁴: Ըստ գործածության նա գրաբարի շաղկապները բաժանում է երեք խմբի, նկատած լինելով, որ նրանք կարող են հանդես գալ մենադիր, կրկնադիր և զուգադիր գործածությամբ (սակայն առանց այդ տերմինները գործածելու⁵):

Ս. Պալասանյանի մոտ շաղկապի սահմանման հիմունքը խոսքի մեջ ունեցած նրա դերն է միայն, կապակցական ֆունկցիան. «Այն բառերը, որոնք նախադասությունները և նախադասության անդամները միմյանց հետ կապում են, կոչվում են շաղկապ»⁶:

Շաղկապի այս ավանդական բնորոշումը գրեթե առանց

1 Ա. Այտրնեան, Քննական քերականություն... Վիեննա, 1866, 132:

2 Ս. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 5-րդ տիպ, 1906, 81:

3 Ս. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, 183:

4 Ս. Պալասանեան, Գործնական քերականութիւն... հայերէն լեզուի, 2-րդ տիպ, Թիֆլիս, 1874, 184—185:

5 Նույն տեղում, էջ 185:

6 Ս. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, 80:

էական փոփոխութիւնների գտնում ենք մեր բոլոր հաջորդ քերականների մոտ, մինչև քերականագիտութեան սովետական շրջանը: Դա գալիս է դեռ հուլյն ու լատին քերականներից և նույնն է նաև մեր գրաբարի քերականութիւնների մեջ: Այս սահմանման հիմնական թերութիւնն այն է, որ անտեսում է շաղկապի իմաստային և ձևաբանական հատկանիշները¹:

Այս է, ընդհանուր գծերով Պալասանյանի ժառանգութիւնը աշխարհաբարի շաղկապների և նրանց խմբավորումների վերաբերյալ: Ընդամիս հարկավոր է նշել հետևյալը.

1) Նա առաջինն էր հայ քերականներից, որ տվեց բարդ նախադասութեան վերաբերյալ մի ամփոփ տեսութիւն՝ կապված համադասութեան և ստորադասութեան հետ: 2) Առաջինն էր, որ նկատեց երկրորդական նախադասութիւնների պաշտոնների նմանութիւնը պարզ նախադասութեան անդամների պաշտոնների հետ և ըստ այնմ էլ խմբավորեց: 3) Առաջինն էր, որ զբաղվեց գլխավոր և երկրորդական նախադասութիւնների կապակցութեան միջոցների հարցի քննութեամբ (առ հարաբերականի մասին խոսվել է նաև առաջ), նշեցով, թե ո՛ր շաղկապը ի՛նչ բնույթի երկրորդական նախադասութիւն է կապակցում (ենթակա, լրացուցիչ, պարագայական և այլն): 4) Նվ Վերջապէս, մինչև բազմավաստակ Մանուկ Աբեղյանի հանդես գալը, նա միակն է, որ շաղկապների հարցով զբաղվել է հանգամանորեն, մանավանդ եթե հաշվի առնենք իր ստացած քերականական ժառանգութիւնը և նաև այն, որ աշխարհաբարի վերաբերյալ, բացի Ա. Այտընյանի աշխատութիւնից, ոչինչ չի ունեցել ձեռքի տակ: Հաջորդ քերականները՝ Ա. Բահաթրյանց, Ն. Տեր-Ղևոնդյան, Ն. Մելիք-Թանգյան, Ա. Արաբաջյան գրեթե ոչ մի նոր բան չեն ասել մեզ հետաքրքրող հարցի վերաբերյալ:

Հաջորդ քերականը, որ մանրամասնորեն զբաղվել է

¹ Այս հարցի մասին հանգամանորեն կխոսենք «Շաղկապը որպէս խոսքի մաս» բաժնում:

բարդ նախադասութեան (բնականաբար և նրանց կապակցութեան միջոցների) հարցերով, Հարություն Թումանյանն է: Նա առաջինն է աշխարհաբարի քերականներից, որ պարզություն ու որոշակիություն է մտցնում բարդ նախադասութեան կապակցութեան երկու եղանակների մեջ, անվանելով դրանք ստորադրական (իմա՝ ստորադասական) և շարադրական (իմա՝ համադասական)¹: Նա ունի գլխավոր և երկրորդական նախադասութիւնների բնորոշումը, ճանաչում է հատկացուցիչ, լրացուցիչ, պարագայական, ենթակա և ստորոգյալ երկրորդական նախադասութիւնները և խոսում է, ինչպէս Ս. Պալասանյանն ու Մելիք-Թանգյանը, նրանց կապակցութեան միջոցների և կրճատման եղանակների մասին: Քննելով համադասական կապակցութիւնը, Հ. Թումանյանը տարբերում է հետևյալ տեսակները՝ բաղնյուսական, ներհակական, տրոհական և պատճառական (այս վերջինի մեջ է մտցնում նաև պայմանի երկրորդական նախադասութիւնները): Նա մի քայլ առաջ է նախորդներից նրանով, որ համադասականի մեջ ընդգրկում է նաև տրոհական կապակցութիւնը, որպէս առանձին իմաստային հարաբերութիւն արտահայտող կապակցութիւն, շնույնացնելով այն ներհակականի հետ, ինչպէս նախորդ քերականներն էին անում:

Բարդ նախադասութեան ուսումնասիրութեան բնագավառում իր պատվավոր տեղն ունի ժամանակակից հայերենի քերականական կառուցվածքի մեծ գիտակ Մանուկ Աբեղյանը: Նա մեծ աշխատանք է կատարել բարդ նախադասութեան կառուցվածքն ուսումնասիրելու, ստորադասական և համադասական նախադասութիւնների շարահյուսական առանձնահատկութիւնները բացահայտելու, երկրորդական նախադասութիւնների տեսակները ճշգրտելու ու տերմինավորելու, մի խոսքով բարդ նախադասութեան շարահյուսութեան հարցերը մշակելու գործում: Նրա «Շարահյուսութեան» մեջ նկարագրված են արդի քերականագիտութեան մեջ ըն-

1 Յար. Թումանյան, Հայոց աշխարհաբար լեզուի համառոտ համաձայնութիւն, Թիֆլիս, 1911, 36:

դունված երկրորդական նախադասությունների գրեթե բոլոր տեսակները:

Ըստ կապակցության միջոցների, Մ. Աբեղյանը երկրորդական խոսքերը (իմա՝ նախադասությունները) բաժանում է հաջորդական և շաղկապական խոսքերի, նախած թե դրանք հարաբերական բառերով են կապակցված, թե ստորադասական շաղկապներով:

Մ. Աբեղյանը հանգամանորեն ուսումնասիրել է նաև համադասության քերականական կատեգորիան: Համադասություն մը արտահայտված իմաստային հարաբերությունները նա բաժանում է երկու գլխավոր տեսակի՝ բաղնյուսականի և ներհականի: Առաջին դեպքում կապակցվող մասերը «իմաստով իրարու համեմատ, համաձայն են, կամ միատեսակ, ոչ հակառակ, բովանդակություն ունին», իսկ երկրորդ դեպքում «համադաս խոսքերը բովանդակությամբ իրար հակառակ կամ անհամեմատ են»¹: Բաղնյուսական կապակցությունը իր հերթին բաժանում է հավելականի, մասնականի, մեկնականի, տեղի, ժամանակի, բաղդատության և մակաբերականի (հիմունքի և հետևանքի հարաբերություն ունեցող): Այդպիսով, մակաբերական կապակցության մեջ մտցվում են վասն գի, գի, ուստի և այլ ստորադասական շաղկապներ: Որովհետև շաղկապի համար նշում է ստորադասական լինելը, սակայն գտնում է, որ երբ վերջադաս պատճառական խոսքեր է կապում, առնվում է իբրև համադասական²:

Ժամանակակից հայերենի բարդ նախադասությունները խորապես ուսումնասիրելու բնական հետևանքը եղավ այն, որ նա հատուկ ուշադրություն դարձրեց խոսքի մեջ շաղկապների ու հարաբերական բառերի ունեցած դերի վրա:

Նա առաջինն է մեր քերականներից, որ շաղկապները խմբավորել է ըստ նրանց շարահյուսական ֆունկցիայի՝ համադասականի և ստորադասականի: Պետք է նշել, սա-

¹ Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահյուսություն, Վաղարշապատ, 1912, 327:

² Նույն տեղում, 337:

կայն, որ Մ. Աբեղյանը, սկզբունքորեն մերժելով շաղկապի խոսքի մաս լինելը, չի ղբաղվում նրա խոսքի մասային առանձնահատկությունների, կազմության տեսակների և իմաստային խմբավորումների հարցերով:

1934 թ. լույս տեսած պրոֆ. Ա. Ղարիբյանի «Հայոց լեզվի քերականություն» դասագրքում շաղկապն արդեն վերստանում է իր ավանդական տեղը խոսքի մասերի շարքում: Ա. Ղարիբյանի մոտ շաղկապը սահմանված է հետևյալ ձևով. «Շաղկապը ցույց է տալիս բառերի և նախադասությունների համադասություն կամ նախադասությունների ստորադասություն»¹: Ինչպես տեսնում ենք, այստեղ արդեն ժխտվում է ավանդական քերականության մեջ ընդունված շաղկապի սովորական սահմանումը, երբ միայն կապակցական ֆունկցիան էր հաշվի առնվում, և արդեն այն բնորոշվում է որպես համադասություն և ստորադասություն ցույց տվող խոսքի մաս: Սակայն, քանի որ թե՛ համադասությունը և թե՛ ստորադասությունը բարդ նախադասության բաղադրիչ մասերի շարահյուսական հարաբերությունը նշող, նախադասությունների շարահյուսական կապակցության բնույթը ակնարկող քերականական կատեգորիաներ են, ապա այստեղ ևս շեշտը դրված է հիմնականում շաղկապի շարահյուսական, տվյալ դեպքում բարդ նախադասության մասերի փոխկախվածության աստիճանը նշող կողմի վրա: Անցյալի քերականների մոտ անխուսափելի դարձած համադասական և ստորադասական որոշ շաղկապների շփոթումը այլևս չենք գտնում Ա. Ղարիբյանի մոտ:

Շաղկապի, որպես ինքնուրույն խոսքի մասի, վերաբերյալ ուշագրավ դիտողություններ ունի պրոֆ. Գ. Սևակը: Այդ մասին կխոսենք «Շաղկապը որպես խոսքի մաս» բաժնում:

Հաջորդ քերականը, որը առիթ է ունեցել խոսելու շաղկապների մասին, դոց. Ահարոն Գրիգորյանն է: Նրա շաղկա-

1 Ա. Ղարիբյան, Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1956, 263: Հիմնականում նույնն է նաև շաղկապի բնորոշումը նույն հեղինակի «Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա» գրքում (Երևան, 1954, 369):

պի բնորոշումը ոչնչով չի տարբերվում մեր հին քերականների մեզ արդեն ծանոթ սահմանումից. «Այն բառերը, որոնք շաղկապում են նախադասությունը նախադասության հետ և նախադասության անդամները միմյանց հետ կոչվում են շաղկապներ»¹։ Նա չի խոսում շաղկապների կազմության տեսակների և գործածության եղանակների մասին։

Անհրաժեշտ է նշել, որ հայ քերականության պատմության մեջ համադասական և ստորադասական շաղկապները, ըստ իրենց արտահայտած հիմնական նշանակությունների, հատուկ դասակարգման չեն ենթարկվել։ Քերականները գոյություն ունեցող դասդասումները կատարելիս ա) կամ հաշվի չեն առել համադասական և ստորադասական շաղկապների շարահյուսական տարբերությունները և հիմնվել են միմիայն նեղ բառական նշանակությունների վրա՝ տալով բազմաթիվ իմաստային խմբավորումներ (ինչպես գրաբարի քերականները), բ) կամ խմբավորել են միայն համադասական շաղկապները (հաճախ ստորադասական հարաբերություն արտահայտողներն էլ միացնելով դրանց), առանց զբաղվելու ստորադասական շաղկապների իմաստային դասակարգմամբ (ինչպես Ս. Պալասանյանը և նրա հետևորդները), գ) կամ էլ, ուրիշ ուղղությամբ տանելով հարցի քննությունը, շաղկապները դիտել են միայն որպես համադաս և ստորադաս նախադասությունների կապակցության միջոց և թեպետ մանրամասնորեն զբաղվել են այդ շաղկապների կիրառությունների քննությամբ, սակայն շաղկապների իմաստային դասակարգման հարցերով չեն հետաքրքրվել (ինչպես Աբեղյանը)։

Դոց. Ա. Գրիգորյանի մոտ գտնում ենք արդեն շաղկապների իմաստային դասակարգում՝ ըստ նրանց արտահայտած հիմնական նշանակությունների։ Ահա այդ դասակարգումը՝

Համադասական շաղկապներ՝ միացնող, ռակագրող, բաժանական, սաստկական, մեկնական, զիջական (181)։

Ստորադասական շաղկապներ՝ լրացական, ժամանակային, պատճառային, նպատակային, պայմանային, զիջական, համեմատական, հետևանքի (182)։

¹ Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, Երևան, 1953, 180։

Նկատելի է սակայն, որ այս իմաստային խմբավորումները երբեմն չեն համապատասխանում այդ շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունների անվանումներին և դասակարգումներին: Այսպես, երբ հեղինակը խոսում է համադաս նախադասությունների կապակցության մասին, չի հետևում համադասական շաղկապների իր կատարած խմբավորմանը: Նա ընդունում է երկու կապակցություն՝ բաղնյուսական և ներհակական: Առաջինի մեջ մտցնում է միացնող և մեկնական շաղկապներով կապակցվող համադաս նախադասությունները, ինչպես նաև այն բարդ նախադասությունները, որոնց մասերի միջև դրսևորում են հիմունքի և հետևության հարաբերություններ: Որպես այս տիպի նախադասությունների կապակցության միջոց, թվում է ուստի, ուստի և, ուրեմն, հետևաբար, հետևապես և այլ շաղկապները: Սպասելի էր, որ այդ շաղկապները, որոնք, ի դեպ, ստորադասական շաղկապներին ավելի են հարում, քան համադասականներին, տեղադրված լինեին համադասական շաղկապների վերևում հիշված իմաստային խմբավորման մեջ: Սակայն այնտեղ այդ շաղկապները բացակայում են: Անշուշտ հեղինակը տարբեր սկզբունքներով է առաջնորդվել շաղկապների և համադաս նախադասությունների դասակարգումները կատարելիս, որի պատճառով հակասություն է առաջացել: Այնուհետև, ներհակական կապակցության մեջ մտցված է տրոհական կապակցությունը, որի մեջ, սակայն, օգտագործված են նույն այն շաղկապները, որոնք համադասական շաղկապների հիշյալ խմբավորման մեջ առանձին տեսակ են համարված և անվանված են բաժանական:

Ստորադասական նախադասությունների կապակցության բաժնում բացակայում են հետևանքի և պայմանի երկրորդական նախադասությունները, մինչդեռ այդ նախադասությունների կապակցմանը ծառայող շաղկապները, որպես առանձին տեսակ, տեղադրված են, ինչպես տեսանք, ստորադասական շաղկապների կազմում:

Այս համառոտ ակնարկից երևում է, որ մինչև վերջերս շաղկապի ուսումնասիրությունը դուրս չի եկել դասագրքային սահմաններից։ Սակայն վերջին մի քանի տարիներում լույս տեսան այս խոսքի մասին վերաբերող մի քանի հոդվածներ¹ և Ս. Աբրահամյանի «Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը» (Երևան, 1959) աշխատությունը, որի մի բաժինը նվիրված է շաղկապներին։ Այդ բաժնում հեղինակը խոսում է շաղկապի խոսքի մասային առանձնահատկությունների և կազմության տեսակների մասին, ինչպես նաև համառոտակի տալիս է նրանց նշանակություններն ու կիրառությունները։ Վերջերս լույս տեսավ նաև Ն. Պառնասյանի աշխատանքը՝ «Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (Երևան, 1961), ուր, ի թիվս կապակցության այլ միջոցների, բնականաբար քննվում է նաև շաղկապների դերը ստորադասական կապակցության մեջ։

¹ Գ. Գաբրիելյան, «Շաղկապը որպես խոսքի մաս» (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» (հասարակական գիտություններ), 1957, № 8), «Ժամանակակից հայերենի շաղկապների կազմությունը» (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 9), «Ժամանակակից հայերենի համադասական շաղկապների նշանակություններն ու կիրառությունները» (ՀՍՍՌ ԳԱ Պատմա-բանասիրական հանդես, 1959 № 1), «Շաղկապի և դերանվան խոսքի մասային հարաբերակցության հարցի շուրջը» (ՀՍՍՌ ԳԱ, Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1960)։

ՇԱՂԿԱՊԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

Խոսքի մասերի այն դասակարգումը, որ գտնում ենք տարբեր լեզուների քերականություններում և որի վրա մեծ է եղել հունական տրամաբանական քերականության ազդեցությունը, լեզվաբանական տեսական աշխատություններում բազմիցս քննադատվել է: Հիմք ընդունելով այն իրողությունը, որ լեզվում բառերը բաժանվում են երկու խմբի՝ ինքնուրույն նյութական իմաստ արտահայտող բառեր և ինքնուրույն նյութական իմաստից զուրկ բառեր, որոշ լեզվաբաններ ավանդական քերականության մեջ ընդունված խոսքի մասերի շարքից դուրս են հանում կապերը, շաղկապները և ձայնարկությունները: Այս տեսանկյունով մոտենալով հարցին և դիտելով շաղկապները որպես բառական իմաստից զուրկ և միմիայն շարահյուսական-քերականական արժեքով հանդես եկող բառեր, որոշ լեզվաբանների ու քերականների մոտ հանդիպում ենք սպասարկու բառերը բնորոշող այնպիսի տնվանումների ու բացատրությունների, որոնք հաճախ ճիշտ չեն բացահայտում լեզվական համակարգում իրենց որոշակի դերն ու նշանակությունը ունեցող այդ կարգի բառերի բուն էությունը:

Լեզվաբանական գրականության մեջ խոսքի մասերի դասակարգման միասնական ելակետ գոյություն չունի: Ոմանք այդ դասակարգման համար հիմք են ընդունում բառերի իմաստային հատկանիշները, ոմանք՝ ձևաբանական, շարահյուսական: Այդ է պատճառը, որ կան դասակարգման բազմ-

մաթիվ առաջարկներ ու սկզբունքներ, որոնք հաճախ հակասում են իրար:

Ընդունելով հանդերձ, որ շաղկապները զուրկ են ինքնուրույն նյութական բովանդակությունից, գտնում ենք, սակայն, որ նրանք ունեն իմաստային և շարահյուսական այնպիսի հատկանիշներ, որոնցով նրանք առանձնանում և բաժանվում են բառական մյուս կատեգորիաներից: Հենց այս իրողությունն էլ հիմք է տալիս շաղկապները դիտել որպես ինքնուրույն կատեգորիա: Այստեղ կարևորն այն է, թե շաղկապներին ինչ անվանում պիտի տալ՝ խոսքի մաս, թե խոսքի մասնիկներ¹, այլ այն, որ այդ անվանումը երբեք չպետք է նսեմացնի շաղկապի, որպես բառական ուրույն կատեգորիայի, տեղն ու դիրքը բառական այլ խմբավորումների մեջ:

Եթե խոսքի մաս տերմինի տակ հասկանում ենք բառերի այնպիսի կարգեր, որոնք իրարից տարբերվում են իմաստային, ձևաբանական և շարահյուսական որոշակի հատկանիշներով ու առանձնահատկություններով, ապա անտարակույս շաղկապը բառական այդպիսի կարգ է, իսկ եթե այդ տերմինն օգտագործենք զուտ իմաստային առումով, նյութական բովանդակություն ակնարկելու տեսակետից, ապա, պարզ է, շաղկապներն ու կապերը զուրս են մնում խոսքի մասերի շարքից:

Այժմ տեսնենք, թե ի՛նչ առարկություններով են հանդես գալիս որոշ լեզվաբաններ, երբ վիճարկում են շաղկապի ինքնուրույն լեզվական կատեգորիա լինելը:

Ֆրանսիացի լեզվաբան Վանդրիեսը, հիմնվելով ձևաբանական առանձնահատկությունների վրա, խոսքի մասերի դասակարգման նոր սկզբունքներ է առաջ քաշում: Նշելով, որ հունական տրամաբանական քերականություն տրագիցիայով եղած խոսքի մասերի դասակարգումը դժվար է տարածել նույնիսկ այն լեզուների վրա, որոնց համար այն ստեղծվել է, էլ ուր մնաց թե տարբեր ձևաբանական սիստեմ ունեցող լե-

¹ Քանի որ այդ տարբերակումը հիմնված է նյութական բովանդակություն ունենալու կամ չունենալու վրա:

գունների վրա, նա կատարում է նոր դասակարգում և հանգում է այն եզրակացության, որ պետք է թողնել միայն բայն ու անունը (ըստ նրա մյուս խոսքի մասերը հարում են այդ երկուսին)¹։ Կապերն ու շաղկապները խոսքի մաս չհամարելու հեղինակի պատճառաբանությունն այն է, որ նրանց դերը տարբեր լեզուներում կարող է կատարվել ձևաբանական և քերականական տարբեր միջոցներով։ Այդ ապացուցելու համար բերում է հետևյալ օրինակները. Ֆրանս. le livre de Pierre = լատ. libep Petri. Ֆրանս. On disait qu'il était mort = գերմ. man sagte, er sei gestorben.

Առաջին օրինակում Ֆրանսերենի de նախդիրը փոխարինում է լատիներենի սեռական հոլովին, իսկ երկրորդ օրինակում գերմաներենի ստորադասական եղանակի օգտագործումը բարդ նախադասությանը ստորադասական բնույթ է տվել, մի բան, որ Ֆրանսերենում կատարված է que շաղկապի միջոցով։ Հիմնվելով լեզուների քերականական առանձնահատկություններից բխող նմանօրինակ փաստերի վրա՝ Վանդրիեսը եզրակացնում է, որ կապերն ու շաղկապները խոսքի մասեր չեն։ Մասնավորելով խոսքը շաղկապի մասին, անհրաժեշտ է ասել.

Այն, որ գերմաներենի ստորադասական եղանակը լրիվ բավարար է բարդ նախադասությանը ստորադասական բնույթ տալու համար, դեռ չի նշանակում, որ շաղկապի շարահյուսական դերը միշտ կարելի է փոխարինել այլ միջոցներով։ Նախ, շաղկապի դերը միայն այն չէ, որ բարդ նախադասությանը ստորադասական բնույթ տա, այլ այն, որ կապակցումն այդ ձևով արտահայտի օբյեկտիվ իրականության մեջ առկա առարկաների ու երևույթների միջև եղած բազմաթիվ հարաբերություններ՝ ինչպիսիք են՝ ժամանակի, պատճառի, պայմանի, նպատակի, հետևանքի և այլ հարաբերություններ։ Երկրորդ, չէ՞ որ շաղկապների դերը միայն ստորադասական կապակցություն ստեղծելը չէ, այլ գոյություն ունի նաև համադասական կապակցություն։ Այնուհետև, միթե՞ գերմանե-

¹ Ж. Вандриес, Язык, Москва, 1937, 86.

րենը նույն այդ հարաբերությունները արտահայտելու համար չունի համապատասխան շաղկապներ:

Այնուհետև, խոսելով «դատարկ» բառերի մասին, Վանդրիենը գրում է, որ նրանց իսկական էությունը կայանում է վերացականության մեջ: Ինչքան բառը ամրանա որպես «դատարկ» բառ, այնքան վերացական է դառնում նա: Այդ պրոցեսը հասցնում է այն բանին, որ որոշ ձևություններ դառնում են միայն հանրահաշվական սիմվոլներ, անթարգմանելի մյուս լեզուների համար...»¹:

Փորձելով շաղկապներին մոտենալ այս տեսանկյունով, մենք տեսնում ենք, որ նրանց հատուկ չեն ոչ զանազան բառահարաբերական ձևություններին փոխարինելու երևույթը (ինչպես որոշ նախդիրների է հատուկ), ոչ էլ հանրահաշվական սիմվոլներ դառնալու երևույթը:

Այդ բանը մենք չենք տեսնում նույնիսկ համադասական շաղկապներից ամենավերացականը համարվող և բառի մեջ: Նա, ճիշտ է, նյութական բովանդակություն չունի և չի արտահայտում ոչ առարկա, ոչ հատկանիշ, ոչ գործողություն, սակայն ունի իրեն հատուկ նշանակությունը՝ բառերը կամ նախադասությունները որոշակի իմաստային հարաբերություններով կապակցելու նշանակություն, իսկ նման հարաբերությունների արտահայտման համար լեզուները հիմնականում նույն շաղկապի համապատասխան համարժեքներն են օգտագործում (ֆրանս. et, անգլ. and, ռուս и և այլն): Իհարկե, հնարավոր է անշաղկապ գործածություն թե՛ բառերի և թե՛ նախադասությունների նման կառուցվածքների համար, սակայն այդ շաղկապի առատ գործածությունը լեզուներում ինքնին ապացուցում է նրա՝ լեզվի համար ունեցած մեծ կարևորությունն ու անհրաժեշտությունը: Եթե և-ը՝ ամենավերացականը շաղկապների մեջ չի հասնում «հանրահաշվական սիմվոլի» աստիճանին, ապա խոսք չի կարող լինել այլ, ասենք, որպեսզի, որովհետև, բայց, եթե, երբ շաղկապների մասին, որոնք ունեն իրենց հատուկ նշանակությունները (նպատակի,

¹ Ж. Вандриес, Язык, Москва, 164.

պատճառի, հակադրական, պայմանի, ժամանակի), նույնիսկ նախադասությունից ու խոսքից դուրս:

Կապերի ու շաղկապների միջև եղած էական տարբերություններին մեկն էլ այն է, որ եթե կապերի որոշ մասը սնորհորեն կապված է հոլովական դրույթյան հետ և հնարավոր է, ինչպես Վանդրիեսն է օրինակ բերում, մեկի փոխարինումը մյուսով, կամ էլ եթե նրանք զանազան նշանակութայիններով ու երանգներով ճշգրտում, լրացնում են հոլովական իմաստները, հետևաբար կապվում են բառահարաբերական ձևույթների (տվյալ դեպքում հոլովական իմաստ ունեցող ձևույթների) հետ, ապա նույնը չի կարելի ասել շաղկապների մասին, որոնց իմաստային հարաբերություններն արտահայտելու համար լեզուն ոչ բառահարաբերական ձևույթ ունի, ոչ էլ մի ուրիշ ձևաբանական միջոց (այստեղ նկատի չունենք ինտոնացիայի, շեշտի, շարադասության, արտասանական դադարի և այլ դեպքերը, որոնք հեռու են այդ պահանջները նույն որակով ու ծավալով բավարարելուց):

Այսպիսով, եթե «դատարկ բառ» տերմինը դեռ մի կերպ տանելի է քերականական միջոցի դեր կատարող որոշ բառերի համար, ապա այն բոլորովին չի կարելի տարածել շաղկապների վրա, քանի որ նրանք չեն վերածվում բառահարաբերական ձևույթների և պահպանում են իրենց իմաստային ինքնուրույնությունը որպես բառ:

Ինչպես գիտենք, բնդհանուր երևույթ է այն, որ լեզուները քերականական ձևեր կամ մասնիկներ փոխ չեն առնում, այլ կերպ ասած, շատ բացառիկ են այն դեպքերը, երբ մի լեզու որևէ զուտ քերականական բնույթի փոխառություն է կատարում: Մինչդեռ, ինչպես փաստերն են ցույց տալիս, հայերենի բարբառներում շատ մեծ են շաղկապների օտար փոխառությունները արաբերենից, պարսկերենից և թուրքերենից: Պարզ է, որ քերականական վերացական ձևույթները, ինչպիսիք են, Վանդրիեսի պնդումով, «դատարկ բառերը» չէին կարող այդպես ազատ կերպով մուտք գործել հայերենի

բարբառներում¹։ Հետևաբար շաղկապները բառական անկախությամբ ու իմաստային ինֆնուրույնություն ունեցող խոսքի մաս են, որի պատճառով էլ դրանք ազատ կերպով փոխ են անցվում լեզվից լեզու, դիտվելով որպես շարահյուսական յուրահատուկ նպատակների ծառայող բառական միավորներ²։ Հատկանշական է այն փաստը, որ Կը ճյուղի բարբառներում փոխ են առնվել նույնիսկ շաղկապների մեջ ամենավերացական համարված և, որ բառերը՝ իլէն և քի ձևով, անշուշտ դիտվելով որպես բառեր և ոչ թե քերականական ձևույթներ։

Հիմնականում նույն բնույթի առարկություններով է հանդես գալիս ակադեմիկոս Ի. Մեշչանինովը, երբ մերժում է շաղկապի, որպես ինքնուրույն խոսքի մասի, գոյությունը. «...Կյանքի կոչվելով շարահյուսության պատճառով և պահպանելով միայն շարահյուսական նշանակություն, շաղկապները չունեն բավարար տվյալներ որպես հատուկ խոսքի մաս առանձնացվելու համար։ Նրանք մնում են սպասարկու մասնիկներ՝ վերևում հիշված հատուկ շարահյուսական խնդիրներով»³, կարգում ենք նրա մոտ։ Այնուհետև հեղինակը նշում է, որ ոչ կապը, ոչ շաղկապը շարահյուսական անկախ դիրք չեն գրավում, չեն հանդիսանում գաղափարների արտահայտությունների կրողներ, դրա համար էլ ինքնուրույն բառական նշանակություն չունեն⁴։

¹ Ինչպես, օրինակ՝ ամա «բայց», էգեր «եթե», յա «կամ» և այլն։

² Որոշ լեզվաբաններ, հիմնվելով այն իրողության վրա, որ շաղկապը նյութական բովանդակություն չունի (այսինքն առարկա, գործողություն կամ հատկանիշ չի արտահայտում), այն բառ չեն համարում։ Սակայն դրանք տարբեր հասկացություններ են, որ չպետք է շփոթել։ Շաղկապները իրենց կիրառություններում չեն զրկվում բառական հատկանիշներից, ունեն անկախ գործածություն ու իմաստային ինքնուրույնություն, թեև նրանց պաշտոնը նյութական բովանդակություն արտահայտող բառերի, բառակապակցությունների, ինչպես նաև շարահյուսական ավելի խոշոր միավորների միջև եղած իմաստային փոխհարաբերությունները նշելն ու ճշգրտելն է։

³ И. И. Мещанинов, Члены предложения и части речи, М.—Л., 1945, 318—319.

⁴ Նույն տեղում, 295։

Ինչպես տեսնում ենք, այստեղ ևս շաղկապը, որպես սպասարկու բառ, հակադրվում է նյութական բովանդակության արտահայտող բառերին, ուստի և դուրս է մնում խոսքի մասերի շարքից: Ակադեմիկոս Ի. Մեշչանինովը այնուհետև անդրադառնում է գիր շունեցող կամ վերջերս գիր ստացած լեզուների շաղկապական համակարգի հարցին, բերելով հետաքրքրական տվյալներ: Նա նշում է, որ այն լեզուներում, որտեղ թույլ են զարգացած կամ բոլորովին բացակայում են բարդ ստորադասական նախադասությունները, և որոնց մեջ նախադասության համազոր անդամների կապը արտահայտվում է բառերի դասավորությամբ, շաղկապները շատ թույլ հիմք ունեն զարգացման համար: Օգտագործելով Գ. Ի. Պրոկոֆևի «Язык и письменность народов Севера» ուսումնասիրության փաստերը, ակադ. Մեշչանինովը նշում է, որ էսկիմոսերեն, սամոյեդերեն, հյուսիսային ուլոու-ֆիննական և մի շարք այլ լեզուներ, խուսափելով բարդ նախադասությունների գործածությունից, համադասության և ստորադասության փոխարեն օգտագործում են պարզ նախադասությունը: Այնուհետև բերում է մի նմուշ ենիսեյերեն-սամոյեդերեն լեզվից, մի ժողովրդական հեքիաթ բառացի թարգմանությամբ և նշում է, որ պատմվածքի կապակցվածությունը (СВЯЗНОСТЬ) և պետք եղած դադարները ձևեր են բերվում շարադրման արտաքին միջոցներով, ինտոնացիայով, պաուզաներով և այլն: Նման լեզուներում մեկը մյուսի հետ սերտորեն կապված նախադասությունները միանում են բայական ժամանակների մասնիկներով¹, որոնք կատարում են այն դերը, ինչ որ ռուսերենում շաղկապները: Նրանց նախադասությունները կառուցված են այնպիսի շա-

¹ Գոյություն ունի նաև հակառակ երևույթը, երբ այս կամ այն շաղկապի գործածությունն է որոշում բայական եղանակի բնույթը նախադասություններում: Ահա թե ինչ ենք կարդում Հ. Աճառյանի 1959 թ. հրատարակած «Լիակատար քերականության...» 4-րդ հատորի առաջին մասում (էջ 26). «Երբայցերենում թեական եղանակ չկա. բայց սահմանականի վրա ավելացնելով որևէ թեական բառ (եթե, թերևս և այլն), ստացվում է նույն նշանակությունը»:

րահյուսական հնարանքներով, նշում է Ի. Մեշչանինովը, որ շաղկապների գործածության անհրաժեշտությունը չի զգացվում:

Եթե բայական ժամանակների մասնիկները կատարում են շաղկապական ֆունկցիա, ապա պակաս հետաքրքրական չէ նաև թուրքերենի գործիական հոլովի իlen վերջավորությունը, որը միաժամանակ հանդես է գալիս որպես համադասական շաղկապ՝ «և» նշանակությամբ¹: Այդ վերջավորությունը իլեն ձևով, անշուշտ արդեն որպես շաղկապ, անցել է նաև հայերենի Կը ճյուղի որոշ բարբառներին՝ «և» նշանակությամբ: Իմաստի զարգացման համար կարելի է համեմատել նոր Նախիջևանի բարբառի գործիական հոլովի համապատասխան կիրառությունը, որի մասին Հ. Աճառյանը գրում է «Գործիականը գործ էածվում ի մեջ այլոց նաև և շաղկապի փոխարեն, օրինակ՝ Մէգ հադ էրիմարթօյ մէգ հադ դինիմարթ «մեկ այլ և մեկ կին»²:

Այս փաստերը ցույց են տալիս, որ շաղկապների ծագման մասին խոսելիս չպետք է աչքաթող անել այն հնարավոր ծագումնաբանական կապը, որ նրանք կարող են ունենալ որոշ թեքման ձևերի՝ բայական և հոլովական վերջավորությունների հետ: Շաղկապների և քերականական վերջավորությունների հարաբերակցության հալոցը՝ տարբեր լեզուների տվյալների հաշվառման միջոցով, տեսական մեծ կարևորություն ունի:

Ակադ. Ի. Մեշչանինովը նշում է, որ ստորադասական կառուցվածքները դերբայներով և ընթացակցական դերբայներով տալը հասցնում է այն բանին, որ այնպիսի զարգացած լեզվում, ինչպիսին թուրքերենն է, չկա բավարար հոդ ստորադասական կապակցության լայն զարգացման համար: Վերջում հեղինակը հետաքրքրական դիտողություն է անում, նշելով, որ ստորադասական շաղկապները իրենց զարգա-

¹ Հ. Աճառյան Քննություն պոլսահայ բարբառի, էջ 167, (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հ. 19, 1941):

² Հ. Աճառյան, Քննություն նոր Նախիջևանի բարբառի (Երիմի), Երևան, 1925, 350:

ցումը համեմատաբար ուշ են ստացել, և դրանց զարգացումը կապված է եղել գրականության աճի և թեքական լեզուների զարգացման հետ (քանի որ կցական լեզուները դերբայական լայն հնարավորություններ ունեն ստորադասական հարաբերություններ արտահայտելու համար)։ Համադասական շաղկապները ևս իրենց զարգացումը պարտական են գրական լեզվին, քանի որ վերոհիշյալ լեզուներում էլ նրանք հաճախակի չեն հանդիպում¹։

Ընդունելով հանդերձ այն իրողությունը, որ գիր չունեցող կամ վերջերս գիր ստացած լեզուները սովորաբար օգտագործում են պարզ, հաճախ նույնիսկ ոչ ընդարձակ նախադասություններ՝ շատ թույլ շաղկապական սիստեմով (որը երբեք էլ չի կարող պատճառ համարվել՝ շաղկապի խոսքի մասային արժեքը անտեսելու համար), մենք ցանկանում ենք անել մի դիտողություն՝ համառոտակի շոշափելով գրաբարի հարցը։

Հայերենի գրերի գյուտից հետո թարգմանական ու ինքնուրույն գրականության առաջին իսկ նմուշներում նկատում ենք նոր գիր ու գրականություն ստեղծող լեզվի համար անսովոր մի երևույթ։ Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ շաղկապների (թե՛ համադասական և թե՛ ստորադասական) բավական մեծ գործածության ենք հանդիպում, մի բան, որ զարմանալի է նոր գիր ստացած մի լեզվի համար։ Եթե դա վերագրենք հունարենի կամ ասորերենի ազդեցությանը, ապա դեռ գիր ու գրականություն չունեցող հայերենը չէր կարող այդպես արագ կերպով շաղկապներ առանձնացնել նյութական բովանդակություն ունեցող մյուս խոսքի մասերից. ուրեմն պետք է ենթադրել, որ այդ շրջանի հայերենը ունեցել է շաղկապների բավական լայն գործածություն, թեկուզ բանավոր խոսքի մեջ։ Այստեղ խոսք չի կարող լինել այլ լեզուներից շաղկապների փոխա-

¹ См. И. Мещанинов, Члены предложения и части речи, М.—Л., 1945, 318.

ռության մասին¹, քանի որ գրաբարի և ոչ մի շաղկապի փոխառյալ լինելը ապացուցված չէ: Կապակցական իրենց դերը այդքան հաջող կերպով կատարող գրաբարի շաղկապները գործածվել են ոչ միայն թարգմանական գրականության մեջ, այլև ինքնուրույն: Անշուշտ մենք չենք ժխտում նման դեպքերում թարգմանվող լեզվի շաղկապական միջոցների որոշ ազդեցությունը, սակայն մի բան պարզ է, որ Ե դարի հայերենը, նախքան գրականությամբ արձանագրվելը, ունեցել է իր սեփական բավական հարուստ շաղկապական համակարգը, որը իր հետագա զարգացումն ու մշակումը ստացել է գրականության աճի հետ զուգընթաց: Ուրեմն պետք է (շաղկապական համակարգի մասին խոսելիս) տարբերել ոչ միայն գիր ու գրականություն ունեցող լեզուները նոր գիր ու գրականություն ստեղծող լեզուներից, այլև գիր չունեցող կամ այն նոր ստացած լեզուների միջև էլ պետք է հաշվի առնել մի շատ կարևոր հանգամանք: Դա այդ լեզվով խոսող ժողովրդի քաղաքական և կուլտուրական ընդհանուր զարգացման մակարդակն է, որից կախված է անշուշտ այդ ժողովրդի լեզվի զարգացման մակարդակը: Պարզ է, որ սամոյեդներենով խոսող ժողովուրդը (թեկուզ XX դարում) իր բանավոր լեզվի մշակվածության ու զարգացման հարցում այն նույն պահանջը չի ունեցել, ինչ որ, ասենք, հինգերորդ դարում պետականություն ունեցող հայ ժողովուրդը:

Լեզվաբանական գրականության մեջ սպասարկու բառերի վերաբերյալ եղած տարակարծությունները, բնականաբար, իրենց արտացոլումն են գտել նաև տեսական քերականական աշխատություններում, որի պատճառով միասնական տեսակետ չկա նաև այդ բնույթի գործերում: Ուստի ավելորդ չենք համարում մի երկու խոսքով ծանոթանալ ռուսերենի բուհական ձեռնարկներում ընդունված խոսքի մասերի դասակարգման սկզբունքներին:

¹ Դա սովորական երևույթ է նման դեպքերում: Հայերենի բարբառների շաղկապական փոխառությունների մասին արդեն խոսել ենք: Հյուսիսային Կովկասի լեզուներում էլ մեծ չափով տարածված են արաբերենից, պարսկերենից ու թուրքերենից փոխառյալ շաղկապները:

Ռուսերենի խոսքի մասերը շատ խոր ու բազմակողմանի քննության են ենթարկված ակադ. Վ. Վինոգրադովի «Русский язык» գրքում: Այդ աշխատության մեջ հեղինակը խոսքի մասերի մեջ մտցնում է միայն ինքնուրույն նյութական բովանդակություն ունեցող բառերը (գոյական, ածական, թվական, բայ, մակբայ և վիճակի կատեգորիա), իսկ մասնիկները, շաղկապները, կապերը և հանգույցները (ор. быть) մտցնում է խոսքի մասնիկների մեջ: Բացի այս երկու խմբերից, առանձնացնում է եղանակավորող բառերը և ձայնարկությունները, որոնք կազմում են բառերի հատուկ կառուցվածքա-իմաստային կարգեր և առնչվում են խոսքի մասնիկների հետ: Այս երկու հիմնական բաժանումներն ընդգրկվում են «բառերի կատեգորիաներ» ընդհանուր հասկացության տակ¹:

Այնքան էլ որոշ ու հստակ չէ խոսքի մասերի դասակարգումը «Современный русский язык» (Москва, 1952) աշխատության մեջ, ուր, ինչպես Վ. Ֆեոդորովն է նշում², նրանք մերթ դիտվում են որպես ունիվերսալ հասկացություններ՝ բառերի բոլոր տիպերն ընդգրկող (լիիմաստ բառերը, սպասարկու բառերը, եղանակավորող բառերը և ձայնարկությունները), մերթ էլ, ակադ. Վինոգրադովի կոնցեպցիային համապատասխան, ընդգրկվում են միայն լիիմաստ բառերը (տե՛ս էջ 36 և 41):

Այնուհետև, շարունակում է Վ. Ֆեոդորովը այդ նույն հոդվածում, անհրաժեշտ է համընդհանուր մի տերմին, որն ընդգրկի ռուսերեն բառերի բոլոր 13 կարգերը (իմա խոսքի մասերը): Հեղինակը անհարմար է համարում այդ նույն գրքում գործածվող «լեքսիկո-քերականական բառերի կարգեր» տերմինը, քանի որ մեծածավալ է: Դրա հետ մեկտեղ, նշում է նա, այդ նույն գրքում գործածվում է նաև «բառերի կատեգորիաներ» տերմինը: Բայց քանի որ նույն խոսքի մասի մեջ եղած կատեգորիաներն էլ բառերի կատեգորիաներ են (ինչպես որակական ածական, հարաբերական ածական և այլն),

¹ В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, 44.

² „Вопросы языкознания“, 1954, № 6, 132—133.

ապա հեղինակը մերժում է նաև այդ տերմինը, այն համարելով անորոշ և նշելով, որ այն չի կարող փոխարինել ավանդական խոսքի մաս տերմինին: Հրաժարվել այս վերջինից, քանի դեռ ավելի հարմարը չի գտնվել, միտք չունի: Վերջում իրավացիորեն պնդում է, որ տալ այդ տերմինին ոչ թե համապարփակ, այլ սահմանափակ բնույթ, ընդգրկելով նրա մեջ միայն բառերի 7 կարգերը (իմա նյութական բովանդակություն ունեցող բառերը), նույնպես ավելորդ է, քանի որ այդ վերջինների համար կա շատ հարմար «լիմաստ բառեր» տերմինը¹:

«Грамматика русского языка» (Москва, т. I, 1952) աշխատության մեջ ինքնուրույն նյութական բովանդակություն չունեցող խոսքի մասերը առանց վերապահության ընդգրկված են «խոսքի մասերի» մեջ: Այստեղ պարզ ու որոշակի նշված է, որ խոսքի մասերը, ըստ իրենց ունեցած նյութական նշանակության, բաժանվում են երկու մեծ խմբի՝ նշանակական (знаменательные) խոսքի մասեր և սպասարկու խոսքի մասեր (էջ 20): Մեզ թվում է, որ այս ձևով դնել հարցը շատ ավելի նպատակահարմար է: Նախ, քանի որ այդ կատեգորիաների մեջ ընդգրկվում են լեզվում հանդես եկող բոլոր բառերը՝ որպես այս կամ այն չափով պարտադիր լեզվական միավորներ և, երկրորդ, չեն անտեսվում նաև այդ խոսքի մասերի միջև եղած որոշակի տարբերությունները՝ իմաստային և քերականական առանձնահատկությունները՝ որով նրանք բաժանվում են նշանակական խոսքի մասերի և սպասարկու խոսքի մասերի:

Հայ քերականներից միայն Մ. Աբեղյանն է, որ իր «Հայոց լեզվի տեսություն» (Երևան, 1931) աշխատության մեջ ժխտում է շաղկապի խոսքի մաս լինելը, պատճառաբանելով, որ նրանք «...Ունեն միայն ձևական նշանակություն և խոսքի մեջ ինքնուրույն մաս չեն կազմում, ուստի և կոչվում են խոսքի մասնիկներ (էջ 130): Մեզ թվում է, որ ճշտման կարիք ունի նաև բազմավաստակ հայագետի այն կարծիքը, թե շաղկապների նշանակությունը կամ իմաստը «պարզ է լինում, երբ

¹ „Вопросы языкознания“, № 6, 1954, 133.

դրվում են խոսքի մեջ նյութական նշանակություն ունեցող բառերի կամ խոսքերի միջև: Չէ՞ որ նախադասությունից, խոսքից դուրս էլ մենք շատ պարզ կերպով զգում ենք և, իսկ. բայց, որովհետև, որպեսզի, եթե, քանի որ և այլ շաղկապների միջև եղած իմաստային տարբերությունները:

Խոսքի մասերի որոշման հարցում բոլորովին նոր, նախորդ քերականներից տարբեր սկզբունքներ է առաջ քաշում պրոֆ. Գուրգեն Սևակը:

Մերժելով խոսքի մասերի որոշման հարցում շարահյուսական, ձևաբանական, իմաստային (կոնտեքստային) և այլ հատկանիշների հաշվառման անհրաժեշտությունը, հեղինակը զարգացնում է մի նոր կոնցեպցիա, խոսքի մասերի որոշման լեզվա-իմացաբանական կոնցեպցիան. «Բառերի խոսքի մասային կատեգորիաները որոշելիս պետք է այդպիսիք դիտել իբրև լեզվական-իմացաբանական «հանգուցային կետեր», իբրև առարկայական աշխարհի ճանաչման աստիճանիկներ»¹: Բառը դիտել խոսքից, նախադասությունից դուրս, որպես լեզվական միավոր՝ ահա այս է հեղինակի առաջադրած պահանջը: Հեղինակն իր այդ տեսակետը հավասարապես տարածում է նաև «խոսքի մասնիկների» վրա, «Քանի որ նրանք ևս լեզվական կատեգորիաներ են, իրենց լեզվական-իմացաբանական արժեքն ու իմաստն ունեն նաև խոսքից դուրս, այն է՝ լեզվի մեջ»:

Այսպիսով, այդ տեսանկյունով մոտենալով նյութական բովանդակություն չունեցող և հետևապես նախադասության մեջ ինքնուրույն պաշտոնով հանդես չեկող սպասարկու՝ բառերի գնահատման հարցին, հեղինակը անհիմն է համարում դրանք խոսքի մասերի շարքից հանելու որոշ քերականների պնդումները և գնահատում է դրանք որպես գոյային զանազան վերաբերություններ (կապեր) և բաշխական զանազան

¹ Գ. Սևակ, Խոսքի մասերի ուսմունքը (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատ. 11, 1939), 229:

² Նույն տեղում, 240:

վերաբերություններ (շաղկապներ) ցույց տվող խոսքի մասեր¹։

Հեղինակը գտնում է, որ ճիշտ չէ այդ խոսքի մասերը դիտել իբրև «ինքնուրույն իմաստ չունեցող», «աննշանակ», «անինքնուրույն», «երկրորդական» և կամ «ձևական» խոսքի մասեր, առավել ևս «խոսքի մասնիկներ»։ «Դրանք ցույց են տալիս միայն գոյային տարբեր վերաբերություններ, ունեն վերաբերական իմաստներ և ընդհանուր կերպով կարող են կոչվել վերաբերական խոսքի մասեր ի տարբերություն նյութական խոսքի մասերի, որպիսիք կարելի կլինեն կոչել գոյային խոսքի մասեր»²։ Սակայն հեղինակը երեք էջ հետո, խոսելով այդ երկու բառախմբերի մասին, օգտագործում է հիմնական և երկրորդական խոսքի մասեր արտահայտությունը, անշուշտ աշխատության ձեռնարկային բնույթի պատճառով և, բացի դրանից, լեզվաբանական գրականության մեջ արմատացած ավանդական անվանումը պահպանելու միտումով։

Նզրափակելով տարբեր լեզվաբանների ու քերականների կարծիքները այս հարցի վերաբերյալ, անհրաժեշտ ենք գտնում նշել հետևյալը.

Լեզուն, որպես հասարակական հաղորդակցման կարևորագույն միջոց, որպես մտածողության միջոց, որպես օբյեկտիվ իրականության արտացոլման միջոց, ունի լեզվական բոլոր հնարավորությունները իրականությունն իր առարկաներով ու երևույթներով, իր գործողություններով ու հատկանիշներով ճշգրիտ կերպով արտացոլելու համար։

Ինչպես գիտենք, իրականության մեջ եղած այդ առարկաներն ու երևույթները, այդ գործողություններն ու հատկանիշները մեկուսացված չեն մեկը մյուսից, այլ կապված են մեկը մյուսի հետ, պայմանավորված են մեկը մյուսով։ Նրանց միջև գոյություն ունեն բազմաթիվ ու բազմապիսի

¹ Գ. Սևակ, խոսքի մասերի ուսմունքը (Նրևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ, հատ. 11, 1939), 240։

² Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Ֆրեան, 1953, 246։

փոխհարաբերություններ ու կապեր, որոնք անպայման իրենց դրսևորման հնարավորությունն ու միջոցն ունեն լեզվում: Ահա այդ փոխհարաբերությունների ու կապերի արտահայտմանը ծառայող լեզվական միջոցներից մեկն է նաև շաղկապը: Որպես այդպիսին, նա լեզվի կարևորագույն միավորներից մեկն է:

Այս տեսանկյունով մոտենալով հարցին, մենք միանգամայն համամիտ ենք պրոֆ. Գ. Սեակի հետ, որը այս առթիվ գրում է. «...կապը, շաղկապը և ձայնարկությունը, նույնպես և անունները, բայր և մակբայր, խոսքի մասեր են, իմացաբանական «աստիճանիկներ», լեզվական-իմացաբանական կատեգորիաներ. կապը, շաղկապը և ձայնարկությունը նույնպես ունեն իրենց խոսքի մասային հիմնական իմաստը...»¹:

Թեև վերևում նշված հարաբերությունների դրսևորման համար օգտագործվում են նաև այլ միջոցներ (ինտոնացիա, արտասանական դադար, բառերի ու նախադասությունների շարադասությունը, բայական որոշ վերջավորություններ՝ ժամանակների հաջորդականությունը պահպանելու և նախադասությունների միջև որոշակի կապակցություն ստեղծելու համար և այլն), սակայն, որպես բնահանուր կանոն, աշխարհի գիր ու գրականություն ունեցող գրեթե բոլոր լեզուներն էլ զուրկ չեն շաղկապական հարաբերություններ արտահայտող բառերի որակ կազմող որոշակի քանակից: Հետևաբար այդ լեզուների համար շաղկապը, որպես բառական-բերական-կան ուրույն կատեգորիա, որպես առանձին խոսքի մաս, ունի իր գոյություն իրավունքը:

Որպես հիմունք ընդունելով պրոֆ. Գ. Սեակի լեզվական-իմացաբանական կոնցեպցիան՝ կապերը և շաղկապները խոսքի մաս համարելու հարցում, գտնում ենք սակայն, որ խոսքի մասերի, մանավանդ նյութական բովանդակություն չունեցող խոսքի մասերի սահմանման, բնորոշման համար միայն իմացաբանական հատկանիշով առաջնորդ-

¹ Գ. Սեակ, *խոսքի մասերի ուսմունքը*, 243:

վելը բավարար չի: Շաղկապի սահմանման, բնութագրման համար անհրաժեշտ է հաշվի առնել իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները միասնաբար, քանի որ այդ երեք հիմնական կողմերով է ամբողջանում նրա լեզվական պատկերը: Սակայն այս հարցում ևս քերականների կարծիքները բաժանվում են:

«Вопросы языкознания» (1955, № 1, 162—166) ամսագրում ղեկավարած «Дискуссия о частях речи» հոդվածում համառոտակի տրվում են դիսկուսիային մասնակցած լեզվաբանների կարծիքները խոսքի մասերի բնորոշման և դասակարգման հարցում: Ոմանք այն կարծիքն են հայտնում, որ հարկավոր է հաշվի առնել ֆեռականական հատկանիշները, ոմանք՝ բառական-ֆեռականական հատկանիշները, ոմանք՝ ձևաբանական, ոմանք էլ թե ձևաբանական և թե շարահյուսական հատկանիշները: Վ. Սևորոգյանը, ինչպես և ուրիշները, դասակարգման համար առաջարկում է հիմք ընդունել այդ երեք հատկանիշները միաժամանակ: Նա պնդում է, որ առանձին վերցրած այդ հատկանիշներից ոչ մեկը բավարար չէ բառերը ըստ խոսքի մասերի դասակարգելու համար (163—164): Նույն տեսակետը դիսկուսիայից առաջ պաշտպանել է նաև պրոֆ. է. Աղայանը¹:

Ինչպես արդեն նշել ենք, շաղկապը լրիվ բնորոշելու, նրա հիմնական առանձնահատկությունները բացահայտելու, այլ խոսքի մասերի հետ ունեցած նրա արմատական տարբերությունները պարզելու, մի խոսքով այն լեզվական բոլոր կողմերով դիտելու համար պետք է հաշվի առնել իմաստային, ձևաբանական և շարահյուսական հատկանիշները միաժամանակ: Եթե գոյականի, ածականի, բայի համար միայն իմաստային կողմով ընտրողումը կարող է ընդհանուր առմամբ բավարար համարվել, ապա նյութական բովանդակություն չունեցող շաղկապի համար միմիայն իմաստային կողմի հաշվառումը՝ խոսքի մասային արժեքը որոշելու համար, անբավարար է: Օրինակ, ասել, թե շաղկապները ցույց

¹ է. Աղայան, *Լեզվաբանության ներածություն*, Երևան, 1952, 353:

են տալիս իրականության մեջ եղած հարաբերությունները, բավարար չէ, քանի որ իրականության մեջ եղած հարաբերություն են ցույց տալիս նաև կապերը. նույնիսկ հատկացուցիչի և հատկացյալի միջև եղած հարաբերությունն էլ կարելի է ընդունել որպես այդպիսին (ծառի տերեւը). սա էլ իրականության մեջ եղած պատկանելության, սերման հարաբերություն է: Ասել, թե ցույց են տալիս գոյային տարբեր վերաբերություններ, կամ, մասնավորելով խոսքը շաղկապի մասին՝ բաշխական տարբեր վերաբերություններ, նույնպես բավարար չէ: Այդ է անշուշտ պատճառը, որ պրոֆ. Գ. Սևակը շաղկապի սահմանման մեջ ավելորդ չի համարում վերոհիշյալ իմացաբանական հատկանիշին ավելացնել նաև շարահյուսականը, այսինքն «...իրար շաղկապելով համադաս բառեր կամ համադաս և ստորադաս նախադասություններ»¹ լրացուցիչ բացատրությունը: Շաղկապի բնորոշման համար արված շարահյուսական բնույթի այս լրացումը, այն դեպքում, երբ մյուս խոսքի մասերը սահմանված են միմիայն նրանց ունեցած ընդհանուր իմաստի հիման վրա, գալիս է ապացուցելու, որ միայն այդ (իմաստային) հատկանիշի վրա հիմնված շաղկապի բնորոշումը բավարար լինել չի կարող:

Իսկ արդյոք անհրաժեշտ է նրա իմաստային կողմի վրա կանգ առնել: Չի՞ կարելի անտեսել այդ կողմը, հիմնվելով միայն շարահյուսական և ձևաբանական հատկանիշների վրա: Ո՛չ, չի կաբելի: Իմաստային կողմի վրա կանգ առնել անհրաժեշտ է նախ նրա համար, որ շաղկապը տարբերակվի նյութական բովանդակություն ունեցող մյուս խոսքի մասերից, որպես այնպիսին, որ թեև զուրկ է նման բովանդակությունից, բայց զուրկ չէ նյութական բովանդակություն ունեցող բառերի և նախադասությունների միջև եղած իմաստային հարաբերությունները արտահայտելու հատկանիշից: Շաղկապները նման դեպքերում նշում և ճշգրտում են բառերի և նախադասությունների միջև եղած իմաստային կապերը. օրինակ՝

¹ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 249:

Ես գնում եմ ինստիտուտ, որովհետև ուզում եմ ընկերոջը տեսնել:

Ես գնում եմ ինստիտուտ, մանավանդ որ ուզում եմ ընկերոջս տեսնել:

Ես գնում եմ ինստիտուտ, երբ որ ուզում եմ ընկերոջս տեսնել:

Ես գնում եմ ինստիտուտ, չնայած որ ուզում եմ ընկերոջս տեսնել:

Ես գնում եմ ինստիտուտ, եթե ուզում եմ ընկերոջս տեսնել:

Այս բարդ նախադասություններում տարբեր շաղկապների գործածությունները տարբեր իմաստային հարաբերությունների մեջ են գնում այդ նախադասությունների բաղկացուցիչ մասերը, երբ նույնիսկ չենք փոխում այդ նախադասություններում և ոչ մի բառ: Պարզ է ուրեմն, որ իմաստային կողմի ընդգծումը շաղկապի բնորոշման համար վճռական նշանակություն ունի:

Այնուհետև, այդ կողմի հաշվառումով կճշգրտվի շաղկապի, որպես խոսքի մասի, գոյություն իրավունքը և այն չի դիտվի որպես «հանրահաշվական սիմվոլ», որպես զուտ քերականական ձևույթ, որպես բառական ոչ մի արժեք չունեցող խոսքի մաս: Եթե շաղկապները իրոք հանդես գալին որպես այդպիսի «հանրահաշվական սիմվոլներ», որպես միայն կապակցական դերով հանդես եկող ձևույթներ, ապա նրանք չէին կարող փոփոխել բարդ նախադասության բաղադրիչ մասերի իմաստային փոխհարաբերությունները՝ պատճառի, ժամանակի, զիջական, պայմանի և այլ նշանակությունների արտահայտմամբ:

Թեև շատ հաճախ շաղկապների այս կամ այն նշանակության կամ կիրառության դրսևորումը կախված է ընդհանուր բարդ նախադասության կառուցվածքից (կապակցվող մասերի շարադասությունից, շաղկապի դիրքից այդ մասերում, եղանակա-ժամանակային ձևերից, գլխավոր նախադասության բալի սեռից, լրացուցիչ, օժանդակ բառերի առկայությունից և

այլն), սակայն դա վերաբերում է հիմնականում բազմիմաստ շաղկապներին (օրինակ՝ ուր, քե, եւր և այլն): Շաղկապների մեծ մասը ունի որոշակի իմաստային կիրառություններ, որոնք փոփոխություն ենթակա չեն նշված գործոններից (այսինքն այդ շաղկապները կիրառական այն առանձնահատկությունը չունեն, որ տարբեր նշանակություններով հանդես գան տարբեր կառուցվածքներում (ինչպես՝ ուստի, որովհետեւ, բայց, կամ, իսկ, այնպես ուր, քեւ, քեպեւ, չնայած ուր և այլն): Նկատելի է, որ համադասական և ստորադասական կապակցությունից դուրս՝ ավարտված նախադասությունների և պարբերությունների միջև շաղկապները զրկվում են համադասական և ստորադասական կապակցություն ստեղծելու իրենց քերականական արժեքից և հանդես են գալիս սուկ իրենց բառական իմաստից բխող նշանակություններով՝ արտահայտելով այդ մասերի միջև զրոնորվող իմաստային և տրամաբանական կապեր:

Այստեղից հետևում է, որ շաղկապների բնորոշման ժամանակ իմաստային կողմի հաշվառումը անպայման անհրաժեշտ է:

Առարկելով այն քերականներին, որոնք շաղկապը արժեքավորում են սուկ նրա շարահյուսական դերով, մենք բոլորովին էլ այն կարծիքին չենք, որ նրա այդ դերը պետք է անտեսել: Ինչպես հայտնի է, խոսքի մասերի բնորոշման, նրանց էության բացահայտման ժամանակ իմաստային, ձևավորանական և շարահյուսական հատկանիշները թեև հավասարապես մասնակցում են, բայց նրանցից որևէ մեկը գերիշխող արժեքով է հանդես գալիս: Եթե գոյականի, ծածկանի և այլնի համար իմաստային հատկանիշը ավելի մեծ կարեւորություն է ստանում նրանց խոսքի մասային արժեքը բացահայտելու համար, ապա նույնը չի կարելի ասել շաղկապի մասին: Եվ դա է պատճառը, որ քերականների ճնշող մեծամասնությունը դիտել է շաղկապը միայն շարահյուսական դերի տեսակետից, տալով մոտավորապես հետևյալ բնորոշումը. «Այն բառերը, որոնք կապում են բառը բառի հետ

կամ նախադասութիւնը նախադասութեան հետ, կոչվում են շաղկապներ»:

Այն, որ այդ քերականները նման շարահյուսական մոտեցմամբ են հանդես գալիս այս հարցում, պետք է բացատրել ոչ թէ այն բանով, որ նրանք շփոթում են ձևաբանական և շարահյուսական կատեգորիաները, ինչպես որ այդ շատ հաճախ է պատահում այս կամ այն խոսքի մասի վերաբերյալ խոսելիս, այլ այն բանով, որ շաղկապի շարահյուսական դերը գերիշխող դիրք է զբաղում նրա իմաստային և ձևաբանական հատկանիշների համեմատութեամբ և այդ պատճառով միայն այդ կողմի հաշվառումը արդեն զգալ է տալիս, որ խոսքը շաղկապի մասին է:

Շարահյուսական կողմի հաշվառման կարևորութիւնը երևում է նաև զուգահեռ կիրառութիւն ունեցող բառերի խոսքի մասային արժեքը որոշելու հարցում: Ինչպես գիտենք, կան որոշ թիւով բառեր, որոնք հարաբերակցում են այս կամ այն խոսքի մասի հետ: Այդ բառերը մակբայ, գերանուն, կապ կամ շաղկապ են ըստ կիրառութեան, ըստ նախադասութեան մեջ զբաղած իրենց դիրքի ու պաշտոնի: Այսպես, երբ խոսքից, նախադասութիւնից դուրս լսում ենք այնինչ, այլ, միայն, էլ, քեկուզ, միևնչ, ու, նախքան և այլն, ապա մենք չենք կարող որոշել նրանց խոսքի մասային պատկանելութիւնը: Սակայն բավական է գիտել միդ բառերը խոսքի, նախադասութեան մեջ, որպեսզի նրանց խոսքի մասային արժեքը բացահայտվի:

Սակայն, ինչպես նշել ենք, միայն շարահյուսական կողմի հաշվառումը բավական չէ նրա խոսքի մասային արժեքը որոշելու, նրա խոսքի մասային պատկանելութիւնը պարզելու համար: Ինչպես գիտենք, որ հարաբերակոն գերանունը եզակի և հոգնակի ձևերում (որը, որի, որին, որից, որով, որոնք, որոնց, որոնցից, որոնցով, որոնցում) նույնպես ծառայում է նախադասութիւնը նախադասութեան հետ կապելու համար, բայց նա չունի շաղկապի խոսքի մասային իմաստ: Մինչդեռ, եթէ սոսկ շարահյուսական հատկանիշը (կապակցելու հատկանիշը) բավարար լիներ շաղկապի բնու-

քոշման համար, ապա այն պետք է շաղկապ համարվեր: Այստեղ արդեն օգնության է դալիս ձևաբանական կոդմի հաշվառումը, այսինքն այն, որ շաղկապը, որպես խոսքի մաս, գուրկ է հոլովման կամ խոնարհման ձևերից: Այսպիսով, ձևաբանական այս հատկանիշի հաշվառումը օգնում է մեզ նման բառերը որպես շաղկապ չընդունել, որովհետև, որպես հոլովական ձևեր ունեցող բառերի, նրանք հարում են դերանուններին (իհարկե իրենց խոսքի մասային իմաստով էլ նրանք դերանուն են): Նույնպիսի վիճակ են ներկայացնում նաև մյուս հարաբերական դերանունները (որտեղ, ինչ, ով և այլն), որոնք շարահյուսական նույն դերն են կատարում, ինչ որ շաղկապները (իհարկե պետք է ավելացնել նաև նրանց ունեցած փոխարինման ֆունկցիան): Այդ բառերը շաղկապ չհամարելու օգտին է խոսում նաև այն հանգամանքը, որ բացի իրենց ձևաբանական հատկանիշից, նրանք ունեն նաև նյութական բովանդակություն ունեցող բառերի շարահյուսական այն հատկանիշը, որի համաձայն կապակցական իրենց դերի մեջ նրանք կարող են նախադասության անդամ լինել, մի բան, որ հատուկ չէ շաղկապներին. օրինակ՝ «Սրանք այն երեխաներն են, որոնք (ենթակա) եկել են մասնակցելու երգեցիկ խմբի պարապմունքներին»: «Սա այն դահլիճն է, որտեղ (տեղի պարագա) տեղի կունենան պարապմունքները»:

Այս համառոտ քննությունից հետևում է, որ շաղկապները դիտել իրենց շարահյուսական պաշտոնի անվանումով, այսինքն դիտել որպես սպասարկու բառեր, ունի այն առավելությունը, որ նախ ընդգծվում է նրանց ձևաբանական հատկանիշը, այսինքն շփեղծող խոսքի մաս լինելը՝ ի հակադրություն կապակցական դերով հանդես եկող հարաբերական և այլ բառերի, որոնք թեքման ձևեր ունեն և երկրորդ՝ այդ տերմինով բացառվում է նախադասության մեջ որևէ պաշտոնով հանդես գալու նրանց հնարավորությունը՝ նորից ի հակադրություն կապակցական դերով հանդես եկող այն բառերի, որոնք այդ հատկանիշը ունեն: Այսպիսով՝ օբյեկտիվ իրականության առարկաների ու երևույթների միջև

եղած փոխհարաբերությունները նշող շաղկապները կարելի է սահմանել հետևյալ ձևով.

Այն սպասարկու բառերը, որոնք որոշակի իմաստային հարաբերություններով կապակցում են նախադասության համագոր անդամներն ու բարդ նախադասության բաղկացուցիչ մասերը, ինչպես նաև ավարտված նախադասություններն ու խոսքի տարբեր հատվածները, կոչվում են շաղկապներ:

Ինչպես տեսնում ենք, այս բնորոշման մեջ ընդգրկված են վերոհիշյալ երեք հատկանիշները:

Գտնում ենք, որ պարզ նախադասության շաղկապվող լեզվական միավորների մասին խոսելիս ավելի նպատակահարմար է օգտագործել անդամներ տերմինը, քանի որ վերջինիս մեջ ընդգրկվում են ինչպես նախադասության անդամներ հանդիսացող առանձին բառերը, այնպես էլ բառակապակցություններն ու բառախմբերը. օրինակ՝ «Աշակերտները և ուսուցիչները գնացին էքսկուրսիա»: «Բարձր դասարանների աշակերտությունը և ուսուցչական կազմը գնացին էքսկուրսիա»: «Նա ձգտում է դեպի ուսում և դեպի գիտություն»: Այս բոլոր ընդգծված բառերը նախադասության անդամներ են՝ արտահայտված մեկ առանձին բառով կամ մի քանի բառերով:

Այնուհետև, կապակցվող լեզվական միավորների մասին խոսելիս անհրաժեշտ է հիշել ավարտված նախադասություններն ու խոսքի տարբեր հատվածները, քանի որ շաղկապները նշում են նաև այդ միավորների միջև դրսևորվող իմաստային հարաբերությունները:

Վ. Սեմյոնիխինը «Русский язык в школе» ամսագրի էջերում (1956, № 6, էջ 17—21) հանդես գալով շաղկապների

1 Շաղկապների կիրառական այս հատկանիշի, ինչպես նաև նրանց բնորոշման ու դնահատման համար իմաստային, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշների հաշվառման անհրաժեշտության մասին մենք խոսել ենք նաև 1957 թ. տպագրված «Շաղկապը որպես խոսքի մաս» հոդվածում (ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր» № 8): Շաղկապի բնորոշման համար

վերաբերյալ մի հոգվածով և անդրադառնալով ռուս քերականների մոտ հանդիպող շաղկապների սահմանումներին՝ անհաջող է գտնում դրանք և առաջարկում է շաղկապը սահմանել հետևյալ ձևով. «Շաղկապը կարելի է սահմանել որպես սպասարկու բառ, որը ցույց է տալիս նախադասության անդամների և նախադասությունների միջև եղած այս կամ այն փոխհարաբերությունները» (էջ 18): Ինչպես կարելի է նկատել, հեղինակը անհրաժեշտ չի համարել ավելացնել համազոր բառը նախադասության անդամների համար, որով այս սահմանումը տարածվում է նաև կապերի վրա, որոնք նույնպես «...նախադասության անդամների միջև եղած այս կամ այն փոխհարաբերություններն» են ցույց տալիս: Այսպիսով, համազոր բառի հիշատակելը սահմանման մեջ, նախադասության անդամների կապակցման մասին խոսելիս, անպայման անհրաժեշտ է:

Արդի հայերենում կապակցական դերով հանդես եկող այնպիսի բառեր կան, որոնք գտնվում են անընդհատ զարգացման և վերալմաստավորման վիճակում, որի պատճառով էլ չափազանց դժվար է վճռականապես որոշել նրանց սահմանները՝ խոսքի մասային պատկանելությունը հաստատելիս:

Հանրագումարի բերելով այս գլխում արծարծված հարցերը, հարկ ենք համարում նշել հետևյալը.

Շաղկապը խոսքի մաս է, անկախ այն հանգամանքից, որ երբեմն այս կամ այն լեզվի այս կամ այն շաղկապը կարող է փոխարինվել քերականական որևէ այլ միջոցով: Այն, որ շաղկապը կյանքի է կոչվել շարահյուսության միջոցով և շեշտված կերպով շարահյուսական բնույթ ունի, արդեն ընդունել վերապահորեն, քանի որ նա կյանքի է կոչվել լեզվի զարգացման պահանջներից դրված և քանի որ նա նախա-

նշված հատկանիշների կարևորությունը, ինչպես նաև կիրառական վերոհիշյալ առանձնահատկության մասին զրեւ են նաև Ս. Արբաշյանը («Ժամանակակից հայերենի շփեքվող խոսքի մասերը» Երևան, 1959, էջ 141—143) և Պ. Շարաբխանյանը («Գրաբարի շաղկապները», Երևան, 1960, էջ 15):

դասութիւնից դուրս էլ ունի իր իմաստը, իր տարբերակված, մեկը մյուսի հետ չշփոթվող բառական իմաստը: Եվ քանի որ շաղկապները ունեն նման բառական իմաստներ, հետևաբար խոսքի մաս են, մյուս խոսքի մասերից տարբերակված և միայն իրենց հատուկ լեզվական արժեքով:

Գիր շունեցող կամ վերջերս գիր ստացած լեզուներում շաղկապների ոչ առատ գործածութիւնը բոլորովին չի վկայում, որ շաղկապը որպէս խոսքի մաս ավելորդ է այդ լեզուների, կամ նույնիսկ, ընդհանուր կերպով վերցրած, ընդհանրապէս լեզուների համար: Հարուստ գիր ու զրականութիւն ունեցող շատ ժողովուրդների խոսակցական առօրյայում նույնպէս, ինչպէս ցույց են տալիս փաստերը, համեմատաբար քիչ են շաղկապների կիրառութիւնները (չէ՞ որ բանավոր խոսքում այդ նպատակով օգտագործվում են այլ միջոցներ), սակայն ոչ ոք էլ չի կարող ժխտել, որ, ասենք, հայերենում, ռուսերենում կամ ֆրանսերենում շաղկապները կազմում են հատուկ քերականական կատեգորիա՝ ուրույն բառային նշանակութեամբ ու գործածութեամբ:

Շաղկապի գնահատման և բնորոշման համար անհրաժեշտ է նկատի ունենալ ինչպէս իմաստային, այնպէս էլ շարահյուսական ու ձևաբանական հատկանիշները: Այդ միջոցով միայն կամբողջանա նրա խոսքի մասային արժեքը:

ՇԱՂԿԱՊԵՆՐԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

Ժամանակակից հայերենի շաղկապների ձևաբանական կազմը հարուստ է: Քննությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր խոսքի մասերը այս կամ այն չափով մասնակցել են շաղկապի, որպես առանձին խոսքի մասի, ձևավորմանը: Ստուգաբանական քննությամբ պարզվում է նաև, որ շաղկապները գրեթե առանց բացառության այլ խոսքի մասերից են առաջացել: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ լեզվի զարգացման նախնական շրջաններում շաղկապները և նրանց արտահայտած իմաստային հարաբերությունները լեզվական այնպիսի անհրաժեշտություն չեն եղել, ինչպես որ հետագայում՝ գիր ու գրականության ծաղկման շրջանում: Դա միանգամայն պարզ է, քանի որ շաղկապների աճն ու զարգացումը կապված է հիմնականում բարդ նախադասությունների զարգացման հետ: Բարդ նախադասությունը, որը մտածողության ու դատողության զարգացման մի նոր աստիճանի լեզվական արտահայտությունն է, մարդկային մտքի մեծագույն նվաճումներից է: Նա արդյունք է քերականական ընդհանրացման, որին հնարավոր է հասնել նրա բաղադրիչ մասերի կոնկրետ բովանդակությունից վերանալով:

Բարդ նախադասությունների հետագա զարգացումը, կապված գիր ու գրականության հարաճուն վերելքի հետ, հրամայաբար առաջ քաշեց շաղկապական միջոցների հարստացման ու մշակման անհետաձգելի պահանջ: Այդ պահանջը բավարարելու համար լեզուն չէր կարող նոր շաղկապ-

ներ (իմա՝ նոր արմատներ) ստեղծել: Պարզ է ուրեմն, որ լեզուն պետք է դիմեր այլ խոսքի մասերի օգնությանը՝ շաղկապների ու շաղկապական բառերի իր պակասը լրացնելու համար: Սկզբում այդ բառերը լինելով նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասեր, հանդես են եկել որպես նախադասության ինքնուրույն անդամներ, գտնվելով անշուշտ նախադասության եղբերում: Հետագայում այդ բառերը՝ նման կիրառությունների մեջ վերաիմաստավորման ենթարկվելով, սկսում են նշել նաև նախադասության անդամների և նախադասությունների միջև եղած իմաստային և շարահյուսական կապեր, չկորցնելով սակայն իրենց խոսքի մասային բուն արժեքը: Գործածության որոշ շրջանից հետո նրանց նյութական բովանդակությունը աստիճանաբար կորչում է, որի պատճառով նրանք դադարում են նախադասության անդամ լինելուց և ծառայում են կապակցական նպատակների, դառնալով արդեն սպասարկու բառեր՝ շաղկապներ:

Մեր նկարագրած պրոցեսը, սակայն, բոլոր դեպքերում չի հանգեցնում այն բանին, որ այդ բառերը անպայման վերածվեն շաղկապների, կորցնելով իրենց նախկին խոսքի մասային կիրառությունները (ինչպես, օրինակ, և, ու, թե, եթե, բայց, որովհետեւ, ուրպե՞սզի, ուստի, թեև և այլ շաղկապները): Լեզվի քերականական կառուցվածքում գոյություն ունեին նաև կապակցական դեր կատարող բառերի երկու այլ շերտեր: Դրանք այն բառերն են, որոնք հարաբերակցում են այլ խոսքի մասերի՝ դերանունների, մակբայների, եղանակավորող բառերի և կապերի հետ: Այդ հարցի վերաբերյալ կատարած մեր քննությունը ցույց է տալիս, որ հարաբերակցությունը լինում է լիակատար և մասնակի, նայած թե շաղկապական դերով հանդես գալիս հարաբերակցող բառը լրիվ կորցնե՞ւմ է խոսքի մասային իր նախորդ արժեքը, թե առանց զրկվելու այդ արժեքից՝ կապակցական դեր է կատարում:

Ոչ մի կասկած չի կարող լինել, որ հարաբերակցության այս երկու տեսակները ներկայացնում են լեզվի շաղկապա-

կսն միջոցների առաջացման ու զարգացման տարբեր փուլեր, երբ այս կամ այն բառը նախ սկսում է ըործածվել խոսքի մասային համատեղ արժեքներով (մասնակի հարաբերակցություն) և այնուհետև, աստիճանաբար ամրանալով կապակցական իր պաշտոնում, ձեռք է բերում նաև խոսքի մասային մի զուգահեռ արժեք՝ շաղկապական արժեք (օրինակ այլ դերանունը և այլ շաղկապը)։ Սա արդեն լիակատար հուրաբերակցություն է։ Ի վերջո, ինչպես արդեն ասվել է, այդ պրոցեսը հանգեցնում է այն բանին, որ լեզվի մեջ զուգահեռ խոսքի մասային կիրառություններ ունեցող որոշ բառեր, աստիճանաբար կորցնելով իրենց ոչ շաղկապական նշանակությամբ կիրառությունները, հանդես են գալիս արդեն որպես սոսկ շաղկապ։ Սա արդեն այլ խոսքի մասերից շաղկապների առաջացման վերջին փուլն է։

Լեզվի շաղկապական միջոցների առաջացման ու զարգացման այս պրոցեսը հատուկ է ոչ միայն արդի հայերենին, այլև հայոց լեզվի զարգացման բոլոր շրջաններին։ Եվ դա շատ հասկանալի է, քանի որ լեզուն անընդհատ զարգանում ու կատարելագործվում է։ Չպետք է սակայն կարծել, որ այս երեք փուլերը միշտ կանոնավորապես հաջորդում են իրար։ Լեզվի զարգացման նույն շրջանում մենք միաժամանակ հանդիպում ենք շաղկապների առաջացման հիշյալ երեք ձևերին։ Այնպես որ, ինչպես ոչ մի լեզվում, այնպես էլ ժամանակակից հայերենում, շաղկապի կայուն, մեկընդմիջ հաստատված համակարգ գոյություն չունի։ Այդ է պատճառը, որ շատ հաճախ դժվար է լինում որոշել, թե ի՞նչ խոսքի մաս է տվյալ բառը՝ մակբայ, դերանուն, եղանակավորող բառ, թե՞ շաղկապ։ Նման բառերի խոսքի մասային պատկանելությունը պետք է որոշել համապատասխան կիրառություններում։ Սակայն երբեմն նույնիսկ խոսքի, նախադասության մեջ էլ դժվար է լինում (եթե ոչ անհնարին) հաստատապես որոշել այդ (օրինակ՝ որոշ կառուցվածքներում երբ-ի դերանուն թե շաղկապ լինելը և այլն)։ Մի բան պարզ է սակայն, որ ծագումնաբանական տեսակետից հարաբերակցող խոսքի մասերին է տրվում գերադասությունը։ Այդ

այն պատճառով, որ նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերից են առաջացել սպասարկու բառերը և ոչ թե հակառակը:

Կապակցական դեր կատարելու տեսակետից շաղկապների հետ հարաբերակցում են դերանունները, մակբայները, եղանակավորող բառերը և կապերը:

Դերանուններից շաղկապների հետ հարաբերակցում են հարաբերական, անորոշ և ցուցական դերանունները¹:

Հարաբերական դերանունների մեծ մասի հարաբերակցությունը շաղկապների հետ մասնակի է, քանի որ կապակցական դեր կատարելիս այդ դերանունները հանդես են գալիս երկու խոսքի մասի՝ դերանվան և շաղկապի համատեղ արժեքներով: Նկատելի է, որ այդ դեպքում հարաբերական դերանունները հանդես են գալիս նաև նախադասության որևէ անդամի ձևական պաշտոնով: Բերենք մի քանի օրինակներ՝

Նա գնալու է գյուղ, ռաբոչ (աեդի պարագա) մնալու է մեկ ամիս:

Նրա ետևից գնում է պատանի Հուսիկը, որը (ենթակա) զինակրի պաշտոն էր կատարում (ԲՄ, 490):

Որքան արևը բարձրանում էր, այնքան (չափի պարագա) ճանապարհի անցուդարձը ավելի կենդանություն էր ստանում... (Բաֆ., 72):

Ժամանակակից հայերենում շաղկապի և դերանվան խոսքի մասային համատեղ արժեքներով են հանդես գալիս, որ ինչ, ուր, որտեղ, երբ, քանի, որպես, ինչպես, որչափ, որպիսի, ինչպիսի, որքան, ինչքան հարաբերական դերանունները, որոնց նյութական իմաստի վերացական ու անորոշ լինելը նախադրյալներ է ստեղծում, որ դրանցից մի քանիսը հարաբերական որոշ կիրառություններում աստիճանաբար կորցնեն իրենց առանց այն էլ անորոշ իմաստը և հանդես գան նաև զուտ շաղկապական դերով: Այսպես, երբ, քանի,

¹ Այս մասին մանրամասն տե՛ս Գ. Գաբեգիմյան, Շաղկապի և դերանվան խոսքի մասային հարաբերակցության հարցի շուրջը (Լեզվի և ոճի հարցեր, Երևան, 1960, էջ 146—172):

ինչպես, ինչ դերանուները ժամանակակից հայերենում արդեն շաղկապական կիրառություններ են ձեռք բերել, ուստի և հանդես են գալիս երկու խոսքի մասի՝ շաղկապի և դերանվան արժեքներով: Ուր դերանունը, որը դեռ հին հայերենում սկսել էր փոխարինել զի շաղկապին, հետագայում լիովին ստանձնեց նրա բոլոր շաղկապական կիրառությունները և այժմ ու բառը ունի դերանվանական և շաղկապական զուգահեռ գործածություններ:

Ցուցական և անոռոշ դերանուններից շաղկապների հետ հարաբերակցում են նույնպես, այլ, այնինչ բառերը, որոնք լեզվում ունեն ինչպես դերանվանական, այնպես էլ բուն շաղկապական կիրառություններ: Շաղկապի նշանակություն է սկսում ձեռք բերել նաև այնքան ցուցական դերանունը, որը բարդ նախադասության որոշակի կառուցվածքներում հիմունքի յուրահատուկ նշանակություն է արտահայտում. օրինակ՝ «Շահ յուրդի տախտերում ձին ձիավորով կկորչեր, այնքան (այնքան որ) խոտը բարձր էր... (ԱՔԵ, 376):

Շաղկապի, մակբայի, եղանակավորող բառերի, ինչպես նաև կապերի խոսքի մասային ընդհանուր հատկանիշը նրանց անթեքականությունն է: Սակայն իմաստային և շարահյուսական հատկանիշներով նրանք խորապես տարբերվում են իրարից: Այս հանգամանքը, սակայն, չի խանգարում, որ շաղկապները համարվեն մակբայներով ու եղանակավորող բառերով: Այստեղ նույնպես հարաբերակցությունը կարող է լինել մասնակի և լիակատար:

Շաղկապների հետ մասնակի կերպով են հարաբերակցում մասամբ... մասամբ, երբեմն... երբեմն, նախ... ապա, նախ... հետո, սկզբում... հետո, ապա (գործողության հաջորդականություն նշող), այնուհետև և այլ մակբայներ և բող, նույնիսկ, անգամ, մինչև անգամ, մինչև իսկ, գոնե, գեր, մանավանդ, նամանավանդ եղանակավորող բառերը: Կապակցական դեր կատարելիս այս բառերը չեն կորցնում մակբայներին և եղանակավորող բառերին հատուկ իրենց նշանակությունները: Նույն այս արժեքով են հանդես գալիս նաև

գուցե, քերես բառերը՝ զուգադիր գործածությամբ (եթե... գուցե, եթե... քերես, կամ էլ հակառակ դիրքով) և հագիլ մակբայը՝ երբ շաղկապի հետ գործածված (հագիլ... երբ):

Շաղկապների հետ լիակատար կերպով են հարաբերակցում էլ, ևս, այլապես¹, մերք (վերջինը կրկնադիր գործածությամբ) մակբայները և կարծես, կարծես թե, ասես, ասես թե, որպես թե, իբր(և) թե (որպես շաղկապ՝ ոչ տարածված), միայն, քեկուզ, հենց եղանակավորող բառերը: Այս բառերը հանդես են գալիս զուգահեռ արժեքներով՝ կամ որպես մակբայներ ու եղանակավորող բառեր, կամ էլ որպես շաղկապներ: Նրանց խոսքի մասային պատկանելությունը այս դեպքում լուծվում է նրանց կիրառական առանձնահատկությունները հաշվի առնելով: Այս խմբին հարող բառերից մի քանիսը (հետևաբար, հետևապես, այլապես) կարելի է արդեն դիտել որպես սոսի շաղկապ: Շաղկապական նշանակություն են ձեռք բերում նաև գոնե, գեթ եղանակավորող բառերը՝ զուգադիր գործածությամբ, ինչպես՝ եթե... գոնե, եթե... գեթ:

Շաղկապները հարաբերակցում են նաև կապերի հետ: Թեև նրանք ընդհանուր շատ հատկանիշներ ունեն, սակայն այդ երկու խոսքի մասերի հարաբերակցության դեպքերը այնքան էլ տարածված չեն: Նրանց ընդհանրությունները արտահայտվում են այն բանում, որ թե՛ կապերը և թե՛ շաղկապները զուրկ են թեքման ձևերից և նախադասության անդամ դառնալու հնարավորությունից: Բացի դրանից, նմանություն է նկատվում նաև նրանց արտահայտած իմաստային հարաբերությունների մեջ (ժամանակի, պատճառի, հիմունքի, նպատակի, համեմատության, զիջական և այլն), թեև պետք է նշել, որ կապերի օգտագործմամբ հիշյալ հարաբերությունները ավելի նեղ դրսևորում ունեն, քան շաղկապների, քանի որ վերջիններս լեզվական ավելի մեծ ու ծավալուն միավորների են վերաբերում:

¹ Որպես մակբայ այս բառը հանդիպում է գերադանցապես անցյալ դարի հեղինակների գործերում, այն էլ ոչ հաճախակի: Բերենք մի օրինակ՝ «Բայց որդին այլապես էր մտածում» (Ուֆ., 484):

Կապերի և շաղկապների միջև բացի ընդհանրությունից, կան նաև այնպիսի սարբերություններ, որոնցով պայմանավորվում են նրանց խոսքի մասային սարբեր նշանակություններն ու կիրառությունները: Այսպես, եթե շաղկապը ոչ մի ձևով չի կապվում այլ բառերի հետ՝ նախադասության անդամ լինելու համար, ապա կապը իր խնդրի հետ միասին նախադասության անդամ է դառնում, թեև առանձին գործածությամբ, ինչպես ասել ենք, նա էլ այդ հատկանիշից զուրկ է:

Կապվելով գոյականների, իսկ երբեմն այլ խոսքի մասերի հետ, կապը նշում է նրանց շարահյուսական հարաբերությունը գլխավորապես բայերի, ինչպիսի նաև գոյականների, ածականների և այլ խոսքի մասերի հետ: Այսպիսով նա հանդես է գալիս նախադասության անդամների ստորադասական կապակցությունը նշելու պաշտոնով՝ այս կամ այն հարաբերությամբ ճշգրտելով, լրացնելով այդ նպատակին ծառայող հոլովների արտահայտած իմաստները: Հենց այդ հատկանիշից զուրկ են շաղկապները: Նրանք էլ, ճիշտ է, արտահայտում են ստորադասական հարաբերություններ, բայց ոչ թե նախադասության անդամների, այլ բարդ նախադասության բաղադրիչ մասերի միջև, հետևաբար նրանք ավելի ծավալուն ձևով են դրսևորում ստորադասական հարաբերությունները: Եվ բացի դրանից, կապի և իր խնդրի հոլովաձևի միջև որոշակի կախվածություն է դրսևորվում, մինչդեռ շաղկապների կիրառություններում այս երևույթը գոյություն չունի¹:

Այնուհետև, շաղկապները արտահայտում են նաև համադասություն՝ նախադասության անդամների և նախադասությունների միջև, մինչդեռ այդ հատկանիշից զուրկ են

¹ Տարբեր բնույթի է այն կախվածությունը, որ դրսևորվում է որոշ շաղկապների և նրանցով կապակցվող ստորադաս նախադասությունների ստորոգյալի բայաձևի միջև. այսպես՝ ուրպեսզի, մասամբ նաև եթե (պայմանի նշանակությամբ) շաղկապների օգտագործման դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը ըղձական եղանակով է օգտագործվում:

կապերը, քանի որ նրանք արտահայտում են ոչ համավիճակ բառերի միջև եղած հարաբերությունները:

Պետք է նշել, որ կապերի հարաբերակցությունը շաղկապների հետ միշտ լիակատար է, այսինքն հարաբերակցող բառերը իրենց կիրառություններում կամ կապ են, կամ շաղկապ: Հիշյալ բառերի օգտագործմամբ մասնակի հարաբերակցություն, այսինքն երկու խոսքի մասի արժեքի համատեղ դրսևորում հնարավոր չէ ենթադրել, քանի որ կապից անբաժան է կապի խնդիրը, մինչդեռ շաղկապական գործածության համար դա խանգարիչ հանգամանք է:

Կապական և շաղկապական զուգահեռ կիրառություններ ունեն մինչ, մինչև, ինչպես, որպես, քան, նախքան և շնայած բառերը:

Մինչ, մինչև—Այս բառերը արդի հայերենում զուգահեռ կիրառություններ ունեն՝ կապական և շաղկապական: Առաջին գործածությամբ դրանք արտահայտում են ժամանակային և տարածական հարաբերություններ, իսկ երկրորդ գործածությամբ՝ միայն ժամանակային: Նկատելի է, որ մինչ բառը այժմ հազվադեպ է կապական կիրառությամբ հանդես գալիս: Այդ նշանակությամբ նա տարածված է հիմնականում չափածոյում, ինչպես նաև որոշ բառակապակցություններում (մինչ այդ և այլն). կապական կիրառության օրինակներ.

Ինձ պահեցեք մինչև առավոտ... (ԲՄ, 270): Լուս էր և անտառը, որ տարածված էր մինչև կապտագույն ծովեզրը (ԲՄ, 275—276): Տարոնում մինչ այդ ժամանակ դեռ գոյություն ուներ հին արևադարձությունը (ԲՄ, 63):

Շաղկապական կիրառության օրինակներ.

Եվ նա ասում էր՝ նույնն է մարդը եվ միշտ էլ նույնը կմնա, Մինչև ցնդի այս ակնթարթը, Որ ընթանում է դեպի մահ (ԵԶ, 105): Ու մինչ Մկրտումը թղթադրամի վրա կգտներ հոր ուզած նշանը, խոչան սրտնեղած ասում էր... (ԱԲՆ, 462):

Մինչև կապի շաղկապական կիրառություն ստանալու հետաքրքրական օրինակ է հետևյալ նախադասությունը. «Ինձ պահեցեք մինչև առավոտ, մինչև օրիորդը վեր կկենա»

(ԲՄ, 270): Առաջին մասում ժամանակի նշանակություն արտահայտող կապի խնդիրը (առավոտ) երկրորդ մասում փոխարինված է ժամանակի տեղդրությունն ավելի որոշակի ներկայացնող օրիորդը վեր կկենա նախադասությամբ: Ինչպես տեսնում ենք, կապակցվող շարահյուսական միավորի փոփոխությամբ է պայմանավորված այս օրինակում կապի փոխանցումը շաղկապի: Եվ ընդհանրապես, մինչ, մինչև, չնայած, նախքան կապերի շաղկապական կիրառությունները արդյունք են նրանցով կապակցվող մասերի շարահյուսական փոփոխության (պարզ անդամի փոխարեն՝ լիարժեք նախադասություն): Դրանով է բացատրվում նաև այն երևույթը, որ եթե երկրորդական նախադասությունների զեղչման հետևանքով շաղկապները զեղչվում են, ապա մինչև, մինչ, նախքան, չնայած բառերը չեն ենթարկվում այդ օրինաչափությանը: Բերենք մի երկու օրինակ՝

Երկար որսորդների ասպախումբը գնում էր նույն փողոցներով, բայց տակավին բավական ժամանակ էր հարկավոր, մինչև դուրս կգային—մինչև նրանց դուրս գնալը (Բաֆ., 527): Ես գնում եմ քաղաք, չնայած չափից դուրս հոգնած եմ—չնայած իմ չափից դուրս հոգնած լինելուն:—Թուլացյալ ոգիները, նախքան կանցնեն թշնամու կողմը՝ կոշնչանան մեր ձեռքով—նախքան թշնամու կողմն անցնելը կոշնչանան մեր ձեռքով (ԴԴ, 3, 379):

ՉնԱՅԱԾ—Այս բառը, որ արդի հայերենում տարածված է թե՛ կապական և թե՛ շաղկապական կիրառություններով, ծագմամբ դարձյալ կապ է, որ անցյալ դարի հեղինակների մոտ հանդիպում է նաև չնայելով ձևով (որ իր հերթին ուսեսերենի несмотря կապի օրինակով է կազմված): Հնարավոր է, որ չնայած բառի տարածումը որպես շաղկապ արդյունք լինի նաև չնայած ու (ուս. несмотря на то что) շաղկապական հարադրության ու բաղադրիչի զեղչման (կարճության համար): Սակայն հիմնական պատճառը դարձյալ այն է, որի մասին խոսել ենք մինչև կապի առթիվ: Բերենք նախ կապական, այնուհետև շաղկապական կիրառության օրինակներ.

Զնայելով տառնամանիքին, երա լիք այտերն այրվում էին տաքացած (ՆԴՄ, 501): ...Ոմանք հրահրում են իրենց սաների բնավորության հոռի կողմերը, ինչպես հանգուցյալ ռեկտոր էվերսը, որը շնայած գառամյալ հասակին, սուսերամարտի գահլիճում մասնակցում էր վարժություններին (ԱՔՆ, 578): Այդ որ ասեր, մենք էլ էինք տխրում, շնայած (շաղկապ) մեզնից ոչ ոք չէր տեսել մեր քեռի Եգորին... (ԱՔՆ, 133):

ՆԱԽՔԱՆ—Հիմնականում որպես կապ է կիրառվում այս բառը, որի շաղկապական կիրառությունները տարածվեցին վերջին մի քանի տասնամյակներում: Հատկապես շատ են հանդիպում այս բառի շաղկապական գործածությունները Դ. Գեմիրճյանի «Վարդանանք» վեպում. օրինակ՝

Այդ անհրաժեշտությունը կարևոր համարելով, ես ճախֆան (կապ) Տարոն գալը Վաղարշապատում տեսնվեցա տիկնոջ հետ (ԲՄ, 149): Թուլացյալ ողիները, ճախֆան կանցնեն թշնամու կողմը՝ կոշնչանան մեր ձեռքով (ԴԴ, 3, 379):

ԻՆՉՊԵՍ, ՈՐՊԵՍ—Այս բառերը, բացի դերանվանական և շաղկապական կիրառություններից, ունեն նաև կապական կիրառություններ: Պետք է նշել, որ այս վերջին գործածությունմբ տարածված է հատկապես ռուս բառը. օրինակ՝ «Ահա մեկը ձգվում է ինչպես հաղարամյա կաղնի (ԱՔՆ, 371)»: «Ընկերս աշխատում է դպրոցում ռուս ուսուցիչ»:

ՔԱՆ—Որոշ քերականներ այս բառը համարում են թե՛ շաղկապ, թե՛ նախադրություն (կապ), ըստ որում պարզ չէ, թե ո՛ր դեպքում է այն նախադրություն համարվում և ո՛ր դեպքում՝ շաղկապ¹:

Կասկած չի կարող լինել, որ քան բառը շաղկապ է բոլոր այն դեպքերում, երբ ծառայում է բարդ նախադասու-

1 Մանուկ Աբեղյանը իր «Աշխարհաբարի շարաճյուսության» մեջ բազմաթիվ օրինակներ է բերում քան բառի շաղկապական կիրառության վերաբերյալ (էջ 313—4), իսկ «Աշխարհաբարի քերականության» (Վաղարշապատ, 1906) մեջ նշում է, որ նա կարող է նաև որպես նախադրություն գործածվել (էջ 72):

թյան բաղադրիչ մասերի կապակցմանը: Շաղկապական պետք է համարել նաև քանի որ այն կիրառությունները, երբ նրա օգտագործմամբ որևէ հատկանիշի դրսևորման տեսակետից համեմատվում են երկու առարկաներ (կամ անձեր): Նկատելի է, որ այս գործածությունը նա հանդես է գալիս նախադասության էլիպտիկ կառուցվածքներում, երբ նրանով շաղկապվող մասում արտահայտված է լինում միայն համեմատության ամենակարևոր, ամենահիմնական մասը, այսինքն համեմատելի եզրերից մեկը: Բերենք համապատասխան օրինակներ՝

Աշոտը ավելի մեծ է, քան Սուրիկը¹:

Քո գրիչը ավելի լավ է գրում, քան Սուրիկի:

Ուսուցիչը քեզ ավելի լավ գիրք տվեց, քան Սուրիկին:

Նա քեզ ավելի շատ է հարգում, քան եղբորդ:

Նա հայրիկից ավելի է քաշվում, քան մայրիկից:

Նա քեզանով ավելի է հպարտանում, քան նրանով:

Դու այդ գրքում ավելի շատ քան կգտնես, քան սրանում:

Օրինակներից երևում է, որ քանի որ քան գործածված է հայերենի բոլոր յոթ հոլովների հետ, մինչդեռ եթե այն կապ լինեք, ապա պետք է որոշակի հոլովով խնդիր պահանջներ: Այնուհետև, բերված օրինակներից երևում է, որ համեմատվող առարկայի (կամ անձի) հոլովը կախված է նախադասության բայական ստորոգյալի սեռից և իմաստից և ոչ թե քան քանից (մինչդեռ կապ լինելու դեպքում համեմատելի առարկայի հոլովը պետք է կախված լինեք քան քանից, նրա հոլովառությունից): Վերջապես, նախադասության նույն անդամի պաշտոնով հանդես եկող բառերի կապակցմանը ծանայող քան քանի կապ չլինելը հաստատվում է նաև նրանով,

¹ Երբեք չպետք է կարծել, թե Սուրիկը քան կապի խնդիրն է հայցական հոլովով: Նա այստեղ ուղղական հոլովով է. դա խնդիրն երևում է, երբ փոխարինում ենք այն որևէ մի դերանվամբ, ինչպես՝ Աշոտը ավելի շատ է կարգում, քան ես (դու, նա և այլն): Այս դեպքում արդեն կասկած չի կարող լինել նրա հոլովի մասին:

որ վերևում բերված բոլոր օրինակներում մենք այն կարող ենք փոխարինել քան շաղկապով:

Հին հայերենում ևս, բոլոր այն դեպքերում, երբ քան բառով կապակցվում են համեմատվող և համեմատելի առարկաներ՝ արտահայտված շարահյուսական համանման պաշտոն կատարող անդամներով, այն պետք է դիտել որպես շաղկապ: Բերենք մի քանի օրինակներ՝

Հզոր է բորբոքումն նորա քան զհրոշ:

Փափաքէ ի մահ քան ի կեանս:

Երկիցուք յերդմանց քան յամենայն մեղաց¹:

Երբ նախադասության մեջ առկա չեն շարահյուսական տեսակետից համավիճակ անդամներ, ապա այդ դեպքում նա արդեն նախադրություն (կապ) է. օրինակ՝ «Ապա եթէ բռնագոյն քան զնա էր Հիւղն...»²: Այս օրինակում թեև հնարավոր է հիւղն բառը բերել քան-ից առաջ՝ «Ապա եթէ հիւղն բռնագոյն էր քան զնա...», սակայն այս փոփոխությունը չի փոխում հիւղն բառի պաշտոնը (ենթակա), մինչդեռ զնա, ինչպես տեսնում ենք, մնում է դարձյալ որպես քան նախադրության խնդիր:

Ժամանակակից հայերենում քան բառը չունի այդօրինակ կապական կիրառություններ: Մանուկ Աբեղյանի Շառանջուսության մեջ (էջ 145) հանդիպում ենք այդ բառի մի երկու կապական գործածությունների, որոնք, սակայն, բարբառային են, ինչպես՝ «Քան պուտը կարմիր չկա, որ ճղես սիրտը սև է»:

Շաղկապների ձևաբանական կազմի և նրանց ու այլ խոսքի մասերի հարաբերակցության հարցի մասին մեր համառոտ քննությունը ավարտելու համար ավելորդ չենք համարում թվարկել այն բառերը, որոնք չունենալով շաղկապի խոսքի մասային արժեք, կարող են համադասական և ստորադասական հարաբերություններ արտահայտող բառերի

¹ Այս օրինակները քաղել ենք Նոր հայկազեան բառարանից, քան քան տակ (նախադրությունների բաժնում):

² Ա. Ա. Աբրահամյան, Գրաբարի ձևաբանություն, 1952, 302:

դերում լինել: Կարող են նաև ավարտված նախադասությունների, պարբերությունների և խոսքի հատվածների միջև տրամաբանական կապեր ստեղծել: Այդ բառերից առավել գործածականները հետևյալներն են՝ մեկը... մյուսը, կեսը... կեսը, շատը... քիչը, վերջապես, վերջը, ի վերջո, այնտեղ, այն ժամանակ, այն միջոցին, նրա համար... ուր, այն պատճառով... ուր, այդ պատճառով, այս պատճառով, սրա համար, դրա համար, իսկապես, նիշտ է, նշանակում է, այսպես, այսպիսով, այստեղից, արդ, ընդամին, շատ էլ, մի բան ուր, դիցուք, դիցուք թե, ասեմք և այլն և այլն:

Այս բառերը կամ բառակապակցությունները լեզվում ունեն բավական տարածված կապակցական կիրառություններ, որոնք էլ ավելի են հարստացնում արդի հայերենի շաղկապական միջոցները՝ ներդրելով դրանց մեջ տարբեր խոսքի մասերին հատուկ բաղմամբով ու բազմապիսի երանգներ: Հետաքրքրական է այս տեսակետից Վ. Վ. Վինոգրադովի կարծիքը ուսուցիչների շաղկապների կազմության վրա. «Լեզվի զարգացման անալիտիկ տենդենցները իրենց կնիքն են թողել ուսուցիչների շաղկապների կազմության վրա. շաղկապի դերով արդեն հանդես են գալիս ամբողջ դարձվածաբանական միավորներ կամ իդիոմաներ. շաղկապների քերականական ֆունկցիաները ավելի ու ավելի են կապվում նրանց բառական (ստուգաբանական) նշանակության հետ: Դրա հետևանքը հանդիսանում է այն, որ ուսուցիչներում էլ ավելի են աճում ու բազմապատկվում հիբրիդ կամ անցողիկ բառերի կամ արտահայտությունների խմբերը, որոնց մեջ շաղկապների նշանակությունները համատեղված են այլ քերականական կատեգորիաների իմաստների հետ»¹:

Նշանակությունը պարզ է: Ինչքան էլ մեր գրական լեզուն նորմավորված ու մշակված բնույթ է կրում, այնուամենայնիվ անընդհատ զարգացման ու կատարելագործման շրջան է ապրում, մի օրինաչափություն, որ հատուկ է բոլոր կենդանի լեզուներին: Լեզվում կատարվում են խոսքի մասա-

¹ В. В. Виноградов, Русский язык, Москва, 1947, 706.

յին տեղաշարժեր, կիրառությունների փոփոխություններ կամ համատեղ գործածություններ, որոշ բառերի իմաստային ծանրաբեռնվածություններ ու թեթևացումներ և լեզվական այլ երևույթներ, որոնք իրենց կնիքն են դնում նաև լեզվի շաղկապական համակարգի վրա: Այդ պատճառով հնարավոր չէ ճշգրիտ կերպով սահմանագծել որոշ բառերի խոսքի մասային այս կամ այն արժեքով հանդես գալու որոշակի սահմանները:

Ինչպես տեսանք, ժամանակակից հայերենում որոշ դերանուններ, մակբայներ, եղանակավորող բառեր և կապեր մասնակի և լիակատար հարաբերակցության մեջ են շաղկապների հետ: Քանի որ հարաբերակցության վերոհիշյալ պրոցեսը հատուկ է ինչպես արդի հայերենին, այնպես էլ լեզվի զարգացման նախորդ շրջաններին, ապա պարզ է միանգամայն, որ արդի հայերենի շաղկապների կազմության մասին խոսելիս պետք է անպայման հաշվի առնել այլ խոսքի մասերի հետ ունեցած նրա ծագումնաբանական կապը և երբեք շաղկապներին հատուկ չհամարել կազմության այն եղանակները, որոնք հատուկ են, ասենք, շաղկապների հետ հարաբերակցող մակբայներին կամ դերանուններին:

Այսպես, արդի հայերենում այլապես բառը գերազանցապես շաղկապ է: Սակայն կասկած չի հարուցում նրա մակբայական ծագումը: Պարզ է ուրեմն, որ այդ բառը անցել է զարգացման վերոհիշյալ ուղին: Այդ խսկ պատճառով այդ շաղկապի կազմության մասին խոսելիս անհրաժեշտ է անպայման նշել նրա ծագումնաբանական նույնությունը գրաբարյան այլապես մակբայի հետ, որով կարգարանա նաև պես մակբայակերտ ածանցով ունեցած նրա կազմությունը: Այդպես է նաև հետևապես, հետևաբար բառերի զարգացումը: Այդ ձևով վարվելով մենք նախ՝ շատ համառոտ, բայց և արժեքավոր տվյալներ կստանանք ընդհանրապես շաղկապների ձևաբանական կազմի մասին և երկրորդ՝ կտեսնենք, թե կազմության ո՞ր տեսակներն են հատուկ այն շաղկապներին, որոնք իրենց բառակազմությամբ ուղղակիորեն կապված չեն մյուս խոսքի մասերի հետ:

Այժմ քննենք ժամանակակից հայերենի շաղկապներն ըստ կազմության: Ժամանակակից հայերենի շաղկապներն ըստ կազմության լինում են պարզ և բարդ:

ՊԱՐԶ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Արդի հայերենի պարզ շաղկապները, իրենց առաջացմամբ կապված լինելով հայոց լեզվի զարգացման տարբեր շրջանների հետ, կազմությամբ միատարր չեն և բաժանվում են հետևյալ տեսակների.

Ա) Բուն արմատականներ՝ և, ու, որ, թե, բայց, կամ, քան, այլ, էլ, ապա, երբ, իսկ, ոչ: Բ) Երբեմնի բաղադրյալներ, որոնք այժմ գիտակցվում են որպես արմատական շաղկապներ՝ եթե, ևս, սակայն և այլն: Գ) Բառահարաբերական որևէ ձևով կազմվածներ՝ չնայած, կարծես և այլն (այլ խոսքի մասերից փոխանցված):

Ա) Սրանցից ծագմամբ ամենահինն են բուն արմատական շաղկապները, որոնք հիմնականում ընդհանուր են ամբողջ հայերենի համար: Թե՛ գրաբարում և թե՛ միջին հայերենում ու աշխարհաբարում մենք հանդիպում ենք այդ արմատական շաղկապներին: Նույնիսկ բարբառներում, որոնք, որպես կանոն, չեն պահպանել գրաբարյան այլ կազմություն: Դրանցից շաղկապներից գրեթե ոչ մեկը, բավական տարածված են արմատական ու, թե, որ, երբ, կամ (շատ սակավ), ապա և արդի հայերենում չպահպանված, սակայն բարբառներում շատ տարածված նէ, նը (գրբ. նա) շաղկապները:

Այս փաստը բավական է ցույց տալու համար, թե որքան կայուն են բուն արմատականները, որ նույնիսկ փոխառյալ շաղկապներով շատ հարուստ հայերենի բարբառներում դուրս չեն մղվել գրաբարյան մյուս շաղկապների պես:

Հիշատակության արժանի է, որ այս արմատական շաղկապների մեծ մասը կապվում է հնդեվրոպական արմատների հետ: Սա ևս վկայում է, որ նրանք ծագմամբ շատ հին են: Պետք է նշել սակայն, որ հայերենի այս բուն արմատականները ուղղակիորեն չեն կապվում հնդեվրոպական շաղկապ-

ների հետ, քանի որ, ըստ Մեյեի¹, հնդեվրոպական շրջանից միայն երկու շաղկապ է մնացել հին լեզուներում, որոնք հետո անհետացել են նաև այդ լեզուներից: Այսպես, հնդեվրոպականում «և» նշանակությամբ շաղկապը մի վերջահար մասնիկ է եղել, ներկայացված սանս. ca, գենդ. ča, հպրս. čā, հուն. τε, լատ. que (օրինակ՝ լատիներեն jus vitae necis-que «կյանքի և մահվան իրավունք») ձևերով: Հնդեվրոպական նախաձևը դնում են *K^we. այս մասնիկը չի պահպանվել ոչ հնդկական լեզուներում, ոչ իրանական լեզուներում, ոչ ժամանակակից հունարենում, ոչ էլ ռոմանական լեզուներում: «Կամ» նշանակությամբ շաղկապը նույնպես մի փոքրիկ վերջահար մասնիկ է եղել՝ ներկայացված սանս. vā, հպրս. vā, քուչ. աճականով՝ vet, լատ. ve (օրինակ՝ albus aterve «սպիտակ, թե սև») ձևերով: Նախաձևը Մեյեն դնում է *Wē: Եթե այս ձևերը հին լեզուներում ավանդված չլինեին, նշում է նա, մենք այդ երկուսի մասին էլ գաղափար չէինք ունենա: Այս երկու շաղկապների անհետացումը Մեյեն իրավացիորեն բացատրում է նրանով, որ վերջահար մասնիկները հընդ-եվրոպականին հատուկ երևույթ էին և իսկույն անհետացան, երբ այդ լեզուներում կատարվեցին շարահյուսական բնույթի հատուկ փոփոխություններ:

Այս պատճառով է ահա, որ հայերենի հնդեվրոպական ծագումի վերոհիշյալ արմատական շաղկապները ուղղակիորեն չեն կապվում հնդեվրոպական շաղկապների հետ: Նրանք մասնակի ու լիակատար հարաբերակցության ուղիով են վերածվել շաղկապների, ծագմամբ լինելով այլ խոսքի մասեր: Այդ հաստատելու համար բերենք Արմատական բառարանից վերցված նրանց ստուգաբանությունները:

1. ԵՎ <հնխ. epi «նաև, ևս». հմմտ. սանս. āpi «նաև, դեռևս, էլ, մոտը», հպրս. aply, գենդ. aipi «հենց, ըստ, մոտը, միջոցին», հուն. ἐπί «վրա, սրա վրա» և այլն: Epi ձևի միջին աստիճանի ձայնդարձից է ծագել հայերենի արմատական՝

¹ A. Meillet, Linguistique historique et linguistique générale, Paris, 1948, T. I, p. 161.

2. ՈՒ շաղկապը՝ ու <օրի, վերջին i ձայնավորի սո-
վորական կորուստով: Այս երկու դեպքերում է ք-ն ձայնա-
վորների միջև կանոնավոր կերպով վերածվում է լ-ի (ինչպես
ovl-pā> հովիւ), որով ստանում ենք եւ, ու ձևերը: Չի
կարելի ու շաղկապը փոխառյալ համարել պհլ. ւ, պազ. ւ,
պրս. ւ հոմանիշից, նշում է Աճառյանը, քանի որ այդ ու-ն
պահպանված է նաև ութուտասն և այլ թվականների մեջ և
նույնիսկ իբրու ձևի մեջ:

3. Թե <հնխ. te հմմտ. հսաքս. the, անգսք. Թե (շեշտ-
յալ), լիթ. te: Այս բառը, ըստ Մեյեի, նախապես ունեցել է
«այսպես, այս ձևով» նշանակությունը: «Այսպես, այս ձևով»
իմաստից թեական իմաստին անցնելու օրինակ է նաև լա-
տիններեն sī «եթե» շաղկապը, որը նույնպես «այսպես»
իմաստն է ունեցել՝ անշուշտ sīc ձևով¹:

4. ՈՐ <հնխ. k^ho հարցական և անորոշ դերանունից՝
r մասնիկով, նախաձայնի անկումով: Հենց գրաբարում մենք
հանդիպում ենք այս բառի շաղկապական գործածություննե-
րին: Նոր հայկազեան բառարանը այս բառի «զի, թէ, որպէս
զի, մինչ զի» նշանակություններով կիրառությունները աշ-
խարհիկ ոճ է համարում, այսինքն գրաբարին ոչ հատուկ:

5. ՈՉ—Հնդեվրոպական ծագում ունի՝ ո+չ: Առաջին
բաղադրիչը բուն բացասական է, որ կապվում է հսլ. otū,
սանս. āti «հակառակ» բառերին: Այս բառը թե գրաբա-
րում և թե ժամանակակից հայերենում կրկնադիր գործածու-
թյամբ է միայն շաղկապական արժեքով հանդես գալիս:

6. ԱՅԼ <հնխ. *alyo-, որից ծագում է հունարեն ἄλλος
«այլ, ուրիշ»: Այս բառը, ունենալով գրաբարում անորոշ դե-
րանվան և մակբայական կիրառություններ, միաժամանակ
գործածվել է նաև որպես շաղկապ՝ «բայց, սակայն» և հազ-
վադեպ՝ «նաև, ևս» նշանակություններով: Այս վերջին իմաս-
տի համար կարելի է համեմատել նշվ.-ից վերցված հետևյալ
օրինակը՝ «Եւ նոքա այլ հասին անողորմք ի վերայ թշուառա-
կանացս (Հմբ. սղ.)»:

¹ A. Meillet, Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1903, p. 106.

ԺԱ դարից ավանդված այլ բառի այս նշանակությունն է պահպանել բարբառներում և աշխարհաբարում շատ տարածված՝

7. էլ շաղկապը՝ այլ> սովորական հնչյունափոխություններ:

8. ՔԱՆ <հնիս. K^wān ձևից. հմմտ. լատ. quam «քան, ավելի քան», quantus «առավել քան, որքան»: Բուլղրի պարզականն է հնիս. K^wo-, K^we-, K^wi— դերանվանական արմատը, որի ժառանգները տարբեր իմաստներով են հանդես գալիս՝ «եթե, երբ, ինչպես» և այլն: Քան բառը գրաբարում կապական և շաղկապական զուգահեռ գործածություններ ուներ:

9. ԵՐԲ—Հնդեվրոպական արմատ է և նույնն է ծագմամբ իբր բառի և բար «պես» մասնիկի հետ: Գրաբարում հիմնականում դերանվանական մակբայի իմաստով է գործածվել, չնայած որ շաղկապական որոշ կիրառությունների հանդիպում ենք:

Այսպիսով, արդի հայերենի բուն արմատական 13 շաղկապներից 9-ը հնդեվրոպական ծագում ունեն և դեպի խոշ հնություն են գնում: Եթե փյա թվի վրա ավելացնենք նաև գրաբարում գործածական, սակայն արդի հայերենում արդեն անգործածական զի և նա շաղկապները, որոնք նույնպես հնդեվրոպական արմատների հետ են կապվում, ապա շատ պարզ կերևա, թե ինչ մեծ տոկոս են կազմում նրանք: Պարզ է ուրեմն, որ մինչև գրաբարում արձանագրվելը այդ բառերը զարգացման երկարատև ուղի են անցել և գրաբարյան շրջանում նրանցից մի քանիսը (և, ու, քե, ինչպես նաև գրաբարյան զի, նա), հասնելով զարգացման վերջին աստիճանին՝ ամրացել են լեզվում գերազանցապես որպես շաղկապներ, իսկ մյուսը՝ որպես զուգահեռ արժեքով հանդես եկող բառեր (ուր, ոչ, քան, այլ, երբ և բարբառներում ու աշխարհաբարում շատ սովորական էլ բառը): Ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ բուն արմատական շաղկապները, որպես ավելի հնատիպ և զարգացման ավելի երկարատև ուղի անցած բառեր, զերծ են խոսքի մասային համատեղ արժեքով կիրառվելու այն հատկանիշից, որը կապակցական միջոցների

զարգացման նախնական շրջանին և ընդհանրապես կապակցական դերով նոր հանդես եկող բառերին է հատուկ: Անշուշտ այդ նախնական շրջանը բուն արմատական շաղկապները անցել են նախագործարյան շրջանում և արդեն զրաբարում ներկայանում են մեզ որպես կամ միմիայն շաղկապներ, կամ էլ երկու խոսքի մասի զուգահեռ արժեքներով կիրառվող բառեր: Մեր նշած զարգացման այս պրոցեսը չի ենթադրում, սակայն, որ զուգահեռ կիրառություններ ունեցող այս բառերը անպայման հասնեն զարգացման այս վերջին աստիճանին և հանդես գան միմիայն որպես շաղկապներ: Ո՛չ, մեր թված ուր. ոչ, ի՞նչ, երբ, էլ բառերից և ոչ մեկը արդի հայերենում ձևով չբերեց միմիայն որպես շաղկապ կիրառվելու շարահյուսական հատկանիշ: Նրանք բոլորն էլ ունեն կամ շաղկապական կիրառություն և կամ դերանվանական, մակբայական կիրառություն՝ նայած իրենց գրաված դիրքին և նախադասության կառուցվածքին:

Սակայն, ինչ էլ լինի, զրաբարից մինչև արդի հայերենը բնկած ժամանակամիջոցում զուգահեռ կիրառություն ունեցող վերոհիշյալ բառերը պետք է զարգացման որոշ շրջան անցնեն, այս կամ այն խոսքի մասային արժեքով գործածվելու որոշ դերակշռություն ստանալին: Եվ իրոք, փաստերը ցույց են տալիս, որ նման զարգացում եղել է: Վերցնենք, օրինակ, երբ բառի զարգացումը որպես շաղկապ:

Գրաբարում այդ բառը շատ սակավ էր շաղկապական կիրառությամբ հանդես գալիս, այն էլ այն դեպքերում, երբ պատճառական հարաբերությամբ երկրորդական նախադասություն էր կապակցում գլխավորին, ինչպես՝ «Ընդէ՞ր է ինձ սրբութեան ծարաւել՝ երբ դու ես իմ սրբութիւն (Լմբ. պտրգ)»: «Զիարդ կատարեալ լինիմ, երբ չունիմ ինչք (Բրս. Մրկ)¹»:

Անշուշտ նման կիրառությունները հատուկ չէին զրաբարին և բարբառների ու ժողովրդական լեզվի ազդեցության արդյունք էին: Ծիշտ. նույնպիսի պատճառական գործածու-

¹ ՆՁԲ, երբ բառի տակ:

թյան մենք հանդիպում ենք նաև ժամանակակից հայերենում, ինչպես՝ «Ինչո՞ւ մոտենամ, երբ չես ուզում նույնիսկ բարեկէ ինձ»:

Նվ իրոք, Նոր հայկազյան բառարանում եղած այդ երկու օրինակներն էլ ուշ շրջանի գրաբարյան նմուշներ են՝ առաջինը Ներսես Լամբրոնացու գրչին է պատկանում (ԺԲ դար), իսկ երկրորդը 1325 թ. գրված «Բարսեղի Մեկնութիւն աւետարանի սրբոյն Մարկոսի» գործն է, որի համար Նոր հայկազյան բառարանը գրում է. «Ոճն պարզ և ստորին ըստ ԺԳ և ԺԴ դարուց, այլ ուրեք հետևող հնախօսութեան. մանաւանդ ըստ միում օրինակի, յորում կան յաւելուածով ձևք բանից քաջավայելուչք: Ուստի յայտ է թի գրչագրաց յուլութիւն կամ անհաւատարմութիւն այլափոխեալ է զգործն» (Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա, Վենետիկ, 1836, էջ 10):

Պարզ է ուրեմն, որ երբ շաղկապի այս գործածությունը հետագա զարգացման արդյունք է:

Ա. Այստընյանը հնագույն հայերենի համար անկանոն գործածություն է համարում նաև երբ բառի կիրառությունը «յորժամ, իբրև» նշանակությամբ: Բերում է հետևյալ օրինակները. «Երբ գա և մեռանի՝ աւերի Երուսաղէմ»: «Երբ լսեն՝ ուրախ լինին»¹: Նոր հայկազյան բառարանում էլ կա հետևյալ օրինակը՝ «Հրեշտակք երբ լսեն զանունն աստուծոյ, ուրախ լինին (Նեղոս)»²:

Այս բոլոր օրինակներում երբ բառը շաղկապական արժեքով է հանդես գալիս, թեև գրաբարի քերականները հակված են այդ կիրառությունները մակբայական համարել:

Այսպես ուրեմն, գրաբարի համար անկանոն ու անսովոր համարվող երբ բառի վերոհիշյալ կիրառությունները ժամանակակից հայերենում լայն տարածում ստացան և այժմ երբ բառը կանոնավոր կերպով հանդես է գալիս որպես շաղկապ մեծ մասամբ ժամանակի և սակավ դեպքերում պատճառի և

1 Ա. Այստընյան, Քնն. քեր., Վիեննա, 1866, էջ 68—69:

2 «Խրատք կամ ճառք սրբոյն Նեղոսի արքայի», հունարենից թարգմանված Ե դարում:

բացատրական նշանակությունն արտահայտող ստորագծած մասերը կապակցելով գլխավորին:

Նույնպիսի զարգացում է անցել նաև ուր բառը: Մեսրոպյան գրաբարում այս դերանվան շաղկապական կիրառությունները հազվադեպ էին և համարվում էին անկանոն գործածություններ՝ որպես բարբառային ու ժողովրդական լեզվի արդյունք: Հետագայում ուրի շաղկապական գործածությունները աստիճանաբար շատացան (զի-ին փոխարինելու պատճառով) և այժմ արդի հայերենում այն ամենագործածական շաղկապներից մեկն է:

Այլ բառը գրաբարում ունի դերանվանական (անորոշ), մակբայական և շաղկապական կիրառություններ: Արդի հայերենում այս բառն արդեն երկու նշանակությամբ է գործածվում՝ շաղկապական և դերանվանական:

Թե... քեզ զուգարհիր շաղկապը արդի հայերենում շատ ավելի է տարածված, քան էր գրաբարում:

Բուն արմատական մյուս շաղկապներն են ապա, բայց իսկ, կամ: Սրանցից միայն կամ շաղկապն է ստուգաբանված և նույն է կամիլ (պհլ. kām «կամք, կամեցողություն») բառի հետ և բուն նշանակում է «ուզե՛ս» (հմմտ. աշխարհաբար՝ կուզես արի, կուզես մնա, որպես՝ «կա՛մ արի, կա՛մ մնա»): Հ. Աճառյանը նշում է, որ այդպես է նաև ուրիշ լեզուների մեջ, ուր կամ շաղկապը ծագում է «ուզել» բայից, ինչպես պրս. xāh «կա՛մ» (բուն «ուզի՛ր», xāhānīdan «ուզել» բայից), լատ. vel «կա՛մ, կա՛մ թե» (հմմտ. volo «ուզում եմ, կամիմ»), ումբր. heris... heris «կամ... և կամ» (հմմտ. heriest «ուզում է»), սանս. kam «կամք², կամ թե»¹: Այսպիսով կամ շաղկապը, ծագած լինելով կամիլ բայից, անշուշտ համատեղ գործածության որոշ շրջանից հետո, արդեն և դարձավ ամրացել էր լեզվում որպես համադասական շաղկապ, բոլորովին խզելով իր կապը նախորդ խոսքի մասի հետ:

Բայց շաղկապը, որ գրաբարում ունեի թե՛ շաղկապա-

1 Հ. Աճառյան, Արմատական բառարան, հատ. Գ, էջ 907:

կան և թե՛ կապական¹ կիրառություն, արդի հայերենում օգտագործվում է միմիայն որպես շաղկապ:

Ինչ վերաբերում է իսկ բառին, ապա այն, բացի շաղկապական գործածությունից, գրաբարում ունեցել է նաև գոյականի, ածականի, մակբայի և եղանակավորող բառի կիրառություններ, որոնցից արդի հայերենում պահպանվեցին միայն եղանակավորող բառի (այդ իսկ պատճառով) և շաղկապի գործածությունները:

Լեզվաբանական և քերականագիտական գրականության մեջ տարածված է այն կարծիքը, ըստ որի համադասությունը ավելի վաղ է ծագել, քան ստորադասությունը: Եթե այս տեսակետին մոտենանք հայոց լեզվի բնձեռած սովյալներով, ապա կտեսնենք, որ իրոք այդ այդպես է: Այսպես օրինակ, բուն արմատական շաղկապների մեջ, որոնք, ինչպես տեսանք, իրենց ծագմամբ ըստ զարգացմամբ կապված են լեզվի հնագույն շրջանի հետ, համադասական շաղկապները ավելի մեծ տոկոս են կազմում, քան ստորադասական շաղկապները. օրինակ՝ հայերենի 13 բուն արմատական շաղկապներից 9-ը համադասական են, 4-ը՝ ստորադասական: Տոկոսային այս հարաբերությունը արդեն պերճախոս կերպով վկայում է այն մասին, որ հայոց լեզվի հնագույն, նախադրաբարյան շրջանում համադասությունը, ինչպես նաև համադասական շաղկապները շատ ավելի տարածված էին, քան ստորադասությունը և ստորադասական շաղկապները: Եթե ավելացնենք նաև գրաբարյան զի. և նա շաղկապները, ապա հարաբերությունը գրեթե ոչնչով չի փոխվի՝ 10 և 5:

Այնուհետև, զարգացման վերջին աստիճանին են հասել, այսինքն միմիայն որպես շաղկապ են օգտագործվում համադասական շաղկապներից 5-ը, մինչդեռ ստորադասականներից միայն թե-ն է, որ չի հարաբերակցում ուրիշ խոսքի մասերի հետ: Սակայն հենց այս միակ թե-ն էլ հանդես է գալիս նաև որպես համադասական շաղկապ՝ տրոհական

¹ Տե՛ս հետևյալ օրինակը՝ «Ոչ ոք գիտաց բայց ի նոցանէ յերկուցունցն (ՆՃԲ, հտ. Ա)», ուր նա համադար է «բաց ի» նախդրին:

նշանակությամբ և գուցե նախապես համադասության իմաստըն է գերիշխել այս բառի կիրառություններում¹:

Այս փաստը ևս հաստատում է, որ համադասական շաղկապները, ծագմամբ լինելով ավելի հին, այլ խոսքի մասային կիրառություններից սահմանազատվելու և միմիայն որպես շաղկապ կիրառվելու ավելի երկարատև ժամանակամիջոց են անցել, քան ստորադասականները:

Անհրաժեշտ է նշել նաև, որ բուն արմատական շաղկապները չափազանց հարուստ են իմաստային զանազան հարաբերություններ արտահայտելու հնարավորությամբ, քան այլ կազմություն ունեցող շաղկապները: Այդ տեսակետից նշանակություններով չափազանց ծանրաբեռնված են և, ուր, թե, ու շաղկապները, որոնք ընդունակ են արտահայտելու նըրբագույն իմաստային երանգներ, մի բան, որ չի կարելի ասել այն շաղկապների մասին, որոնց մեջ դեռ ուժեղ է բառական կապը համապատասխան խոսքի մասի հետ (օրինակ՝ կարծես, չնայած (ուր), հետևաբար, այլապես և այլն): Ինչպես ակադ. Վ. Վ. Վինոգրադովն է նշում՝ «նրանց (ասինքն արմատական շաղկապների—Պ. Գ.) ձևաբանական պարզությունը և անտարրալուծելիությունը հակադարձ համեմատական են նրանց շարահյուսական ֆունկցիաների բազմազանությունն ու իմաստաբանական բարդությունը»²:

Բ) Պարզ շաղկապների մեջ են մտնում նաև երբեմնի բաղադրյալ, սակայն այժմ որպես արմատական գիտակցվող այն շաղկապները, որոնց ածանցները լեզվի դարգացման տարբեր շրջաններում աստիճանաբար կորցրել են իրենց բառակազմական արժեքն ու նշանակությունը: Այդպիսիք են՝ եթե, թեկուզ, թեպետ, միայն, մինչ, սակայն, ուրեմն, քանի. ևս: Մեզ հետաքրքրող որոշ հարցերի պարզաբանման համար քննենք այդ բառերի կազմությունը՝ դիմելով Արմատական բառարանին:

¹ A. Meillet, Esquisse d'une grammaire comparée..., Vienne, 1903, p.p. 105—107 և Linguistique historique et linguistique générale. T. I, Paris, 1948, p. 170—171.

² В. В. Виноградов, Русский язык, М.—Л., 1947, 107.

թխամբ կիրառությունները մակրայական են համարվում, թեև ըստ էության գրանք շաղկապական են, ինչպես՝ «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ես աւերակացս ո՞րպէս թագաւորեմ—*Խոր. Բ. 58 (ՆՀԲ, հտ. Բ, 276)*»։ «Յոսիֆի եօթնուտասնամեայ էր, մինչ արածէր եղբարբք հանդերձ խաշինս (*ՆՀԲ, հտ. Բ, 276*)»։

6. ՍԱԿԱՅՆ—կազմված է սակ «պայման» բառից՝ —այն մասնիկով։

7. ՌԻՐԵՄՆ—ծագում է ուր+եմն բաղադրիչներից, ինչպես կոս երբ-եմն և ուտ-եմն։ Նկատելի է, որ հետևանքի նշանակութիւնն արտահայտող այս բառի կապը տեղի իմաստ ունեցող ուր բառի հետ հիշեցնում է ուտի բառի համանման իմաստային անցումը տեղի իմաստից հետևանքի իմաստին (*հմմտ. նաև որտեղից բառի որոշ կիրառությունները արդի հայերենում, որոնք սկսում են ձեռք բերել հետևանքի երանգ, առավելապես մաթեմատիկական բնույթի գործերում*)։ Ուրեմն բառը գրաբարում ունեցել է մակբայական և շաղկապական կիրառություններ։ Նկատելի է սակայն, որ որպես շաղկապ այս բառը գրաբարում այն գործածութիւնը չուներ, ինչ որ արդի հայերենում, մանավանդ երբ նկատի ենք ունենում նրա կիրառութիւնը բարդ նախադասութեան մասերի միջև։

8. ՌԻՍՏԻ—ուտ «որ տեղից» + ի։ Գրաբարում ունեցել է թե մակբայական («որ տեղից որ») և թե շաղկապական («սրա համար») գործածութիւն։ Համեմատիր մակբայական՝ «Ուտի սկսար դու, անտի տաց քեզ պատասխանի—*Եղիշ. ա. ը.*» և շաղկապական՝ «Հաճոյ թուեցաւ Հերովդի, ուտի և երդմամբ խոստացաւ տալ նմա... *Մտթ. Ժդ, 7 (ՆՀԲ, հտ. Բ, 557)*»։ Արդի հայերենում այս բառը բացառապես որպէս շաղկապ է գործածվում, շնայած բարբառային ձևով հաճախ ենք հանդիպում ուտի բառի «որտեղից» իմաստին։

9. ՔԱՆԻ—կազմված է քան+ի բաղադրիչներից։ Գրաբարում հարցական բառ էր և որպէս շաղկապ չէր գործածվում, սակայն նոր կտակարանում, *Մտթ. է. 13—14*, հանդիպում ենք նրա հետևյալ գործածութեանը՝ «Մտէք ընդ նեղ դուռն,

Բանի ընդարձակ է դուռնն եւ համարձակ ճանապարհն, որ տանի ի կորուստ, եւ բազումք են որ մտաննն ընդ նա: Քանի՜ անձուկ է դուռնն եւ նեղ ճանապարհն որ տանի ի կեանս, եւ սակաւք են որ գտանեն զնա»¹:

Մեզ թվում է, որ հունարեն բնագրի Բանգի շաղկապի փոխարեն Բանի բառի կիրառությունը (պատճառական նշանակությամբ) նրա շաղկապական առաջին գործածություններից մեկն է, եթե միայն լընդունենք, որ դա գրիչների կողմից է մտցված ավելի ուշ դարերում՝ ժողովրդական խոսակցական լեզվի աղղեցությամբ, ուր, ըստ երևույթին, տարածված էր: Հենց այդ հնագույն շաղկապական գործածությունը, որը գրաբարին հատուկ չէր, արդի հայերենում լայն տարածում ստացավ, հանդես գալով ու շաղկապի հարադրությամբ՝ Բանի ու ձևով:

10. ԵՎՍ—կաղմված է և բառից՝ ա մասնիկով:

Ստուգաբանական այս համառոտ քննությունից երևում է, որ այս շաղկապներից մի քանիսը իրենց բաղադրիչ մասերի անկախությունը կորցրել են այն աստիճան, որ ստուգաբանական քննությամբ է միայն հաստատվում նրանց ածանցյալ լինելը: Գուցե նույնիսկ ավելի նպատակահարմար կլիներ այս շաղկապներից մի քանիսը տեղադրել բուն արմատականների մեջ, ինչպես միայն, մինչ, ուստի. Բանի, սակայն, մանավանդ որ այդ բառերի -այն, -նչ, -ի բաղադրիչները բառակազմական ոչ մի դեր չեն կատարում արդի հայերենում: Սակայն, ինչ էլ լինի, սրանք դեռ չեն հասնում բուն արմատական շաղկապների աստիճանին, որի պատճառով ավելի նպատակահարմար համարեցինք այս բառերը առանձնացնել բուն արմատականներից և կոչել երբեմնի բաղադրյալներ, չնայած որ, ինչպես ասացինք, բաղադրիչ մասերի մթազնման պատճառով ներկայիս լեզվազգացողությամբ սրանք արդեն դիտվում են որպես արմատականներ:

¹ Տողատակում նշված է՝ Ոմանք, Բանգի: Նոր հայկադյան բառարանը, որը սխալմամբ այս հատվածի տեղը դնում է Մտթ. է. 15, նշում է, որ այլ ձեռագրեր ըստ հունարենի ունեն «...Քանգի՜ անձուկ է...» (Հտ. Բ, էջ 979):

Ինչպես երևաց, գրաբարում այս բառերից մի մասն էլ միայն որպես շաղկապ գործածվում, ինչպես՝ եթե, թեպետ, սակայն, իսկ մյուս մասը զուգահեռ կիրառություններ ունեն՝ մակբայական (իմա նաև եղանակավորող բառի) և շաղկապական: Արդի հայերենում զուգահեռ կիրառություն ունեցող այդ բառերից մի քանիսը ձևավորվեցին հիմնականում որպես շաղկապաներ, ինչպես՝ ԵՐԵՄԱՆ, ԵՍԽԻ: Իսկ մյուս մասի շաղկապական գործածությունները, գրաբարի համեմատությամբ, քանակապես աճեցին (ֆանի, միայն): Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես նկատելի է այն զարգացումը, որ բուն արմատականներին էլ էր հատուկ: Այստեղ նույնպես նկատվեց լեզվական այն օրինաչափությունը, ըստ որի լեզվի զարգացմանը զուգընթաց աճում են նաև նրա կապակցական միջոցները, և այն բառերը, որոնք լեզվի ավելի վաղ շրջանում լիովին չէին դրսևորվել որպես շաղկապաներ կամ շաղկապական բառեր, լեզվի հետագա շրջանում հանդես են գալիս որպես այդպիսիք:

Պետք է նշել, որ բուն արմատական շաղկապաները թեև թվով գրեթե հավասար են երբեմնի բաղադրյալներին, սակայն լեզվի մեջ ունեցած իրենց դերով և բաղմիմաստային կիրառություններով կապակցական միջոցների համակարգում անհամեմատ ավելի մեծ կշիռ ունեն, քան վերջինները: Այդ պարզ կերևա երկրորդ մասում այդ շաղկապաների իմաստային կիրառությունները քննելիս:

Գ) Բառահարաբերական որևէ ձևությամբ կազմված շաղկապներ—Հայերենի կազմությամբ թե՛ պարզ և թե՛ բարդ շաղկապների մեջ հանդիպում ենք նաև այնպիսիներին, որոնք առաջացել են զանազան հոլովաձևերում ու խոնարհման ձևերում կայունանալու և քարանալու ճանապարհով: Սկզբնական շրջանում այս կարգի բառերը դեռ լիովին չեն խզում իրենց կապը անունների կամ բայերի բառական և քերականական նշանակությունների հետ, սակայն, երկարատև գործածությունից հետո, նրանք իրենց շաղկապական նոր պաշտոնում բառական և խոսքի մասային նոր արժեք են ստանում: Հիշյալ ճանապարհով կազմված շաղկապաներից են՝

որովհետև, այնուամենայնիվ (այսուամենայնիվ), բայց
որում, համեմայն դեպքս և այլ բարդ շաղկապները և գոնե,
չնայելով (որ), չնայած (որ), կարծես, ասես պարզ շաղկապ-
ները: Վերջին հինգը աշխարհաբարյան շաղկապներ են:

Հիշյալ պարզ շաղկապներից գոնե բառը, որ գրաբարում
գործածական էր գոնէ, գոնեա և գոնեայ ձևերով, կորած մի
բայի միակ մնացորդն է, որ քարացել է հրամայական եղա-
նակում և որի ներկան ենթադրվում է գոնեմ: Այս բառը
գրաբարում հանդես էր գալիս սովորաբար եղանակավորող
բառի իմաստով, ինչպես՝ «Գոնեա դու փախուցեր զնոսա ի
քաղաքէս (ՆՀԲ)»:

Արդի հայերենում, հիմնականում պահպանելով եղանա-
կավորող բառի իր արժեքը, հանդես է գալիս նաև շաղկապա-
կան իմաստով, երբ գործածվում է որպես զուգադիր շաղկա-
պի բաղադրիչ մաս՝ եթե... գոնե ձևով:

Ռուսերենի несмотрѣ, несмотрѣ на то что ձևերի ազդե-
ցությամբ են կազմվել չնայելով, չնայած, չնայելով որ և
չնայած որ շաղկապները², որոնցից չնայելով, չնայելով որ
ձևերը ավելի գործածական էին անցյալ դարի վերջերին: Անո-
րոշ դերբայի գործիական հոլովով կազմված չնայելով որ
շաղկապը արդեն XX դարի սկզբներին դուրս մղվեց լեզ-
վից՝ փոխարինվելով նույն բայի հարակատար դերբայով
կազմված չնայած (որ) շաղկապով (երբեմն առաջին ձևը
հանդիպում է նաև ժամանակակից հեղինակների գործե-
րում):

Զիջական հարաբերությունն արտահայտող այս շաղկապի
հետ զուգահեռ արդի հայերենում նույնպիսի նշանակությամբ
օգտագործվում են նաև թեպետ և թեև շաղկապները, որոնք
պահպանված են նաև արևմտահայ գրական լեզվում, ուր
չնայելով և չնայած ձևերը մուտք չեն գործել, քանի որ այդ
լեզուն ռուսերենի անմիջական ազդեցությունը չի կրել:

Բայական ծագում ունեն նաև կարծես և ասես շաղկապ-

1 Հ. Անաոյան, Արմ. բռ., հատ. 2, 267:

2 Սրանցից առաջին երկուսը միաժամանակ կապական կիրառու-
թյուններ էլ ունեն:

ները, որոնք արդի հայերենում ունեն նաև եղանակավորող բառի կիրառություն: Սրանք ծագումով կապված են անշուշտ գրաբարի սահմանական եղանակի ներկա ժամանակի ձևերի հետ, և ոչ թե աշխարհաբարի ըղձական եղանակի ձևերի: Այս բառերը որպես եղանակավորող բառ և շաղկապ ձևավորվել են այն ժամանակ, երբ, աստիճանաբար կայունանալով կապակցական իրենց պաշտոնում, կորցրել են բայերին հատուկ թե՛ ժամանակի և թե՛ սեռի կատեգորիաները: Հետաքրքրական է, որ այս բայերը շաղկապական ֆունկցիայում կայունացել և ամրացել են եզակի երկրորդ դեմքով:

Պարզ շաղկապների այս բաժինը ավարտելու համար մենում է խոսել մակբայական կազմություն ունեցող այն պարզ ածանցավոր բառերի մասին, որոնք գրաբարում թեև կանոնավոր կերպով մակբայական գործածություն ունենին, սակայն արդի հայերենում ստացել են բացառապես կապակցական ֆունկցիա: Այդ բառերից են՝ հետևաբար, հետևավապես շաղկապները, որոնք հետևանքի նախադասություններ են կապակցում և այլապես շաղկապը, որը թեև անցյալ դարի որոշ հեղինակների մոտ երբեմն հանդիպում էր մակբայական գործածությամբ, սակայն ներկա շրջանում այն բացառապես հանդես է գալիս որպես շաղկապ:

Որպես եզրակացություն պետք է ասել, որ արդի հայերենի կազմությամբ պարզ շաղկապները իրենց քանակով զիջում են բարդ շաղկապներին, որոնց առաջացումն ու զարգացումը մշտական երևույթ է լեզվում: Պարզ շաղկապների աճը կարող է կատարվել միմիայն ի հաշիվ մյուս խոսքի մասերի (խոսքի մասային փոխանցումների ուղիով), մինչդեռ կազմությամբ բարդ շաղկապների աճը կատարվում է ոչ միայն այդ ճանապարհով, այլ գերազանցապես և, էլ, ուր, թե շաղկապների բաղադրությամբ կազմված հարադրությունների (մանավանդ ուր, մինչև ուր, թեկուզ և, ոչ թե, ուրբան էլ, այնքան ուր, ոնց ուր և այլն) և այլ կազմությամբ շաղկապական կապակցությունների (ապա ուրեմն, համեմայն դեպս, ինչպես նաև և այլն) միջոցով:

Բարդության ընդունված տեսակներից շաղկապներին հատուկ են միայն կցական և հարադրական բարդությունները: Իսկական բարդությունները և անիսկական համարված բաղնյուսական և կրկնական տեսակները հատուկ չեն շաղկապներին, քանի որ նման կազմություն ունեցող բառերից և ոչ մեկը չի փոխանցվել շաղկապի՝ խոսքի մասային հարաբերակցության ուղիով:

Ա) Կցական կազմությամբ շաղկապներ— Շաղկապների կցական բարդության մասին խոսելիս պետք է տարբերել հետևյալ տեսակները.

ա) Բուն կցականներ, որոնք երբեմնի շարահյուսական կապակցության բաղադրիչ մասերի ձուլումից են առաջացել (ինչպես՝ որովհետև, այնինչ և այլն). բ) այնպիսիները, որոնց երկրորդ բաղադրիչը շաղկապ է (և, զի), ինչպես՝ այլև, որպեսզի, քեև և այլն:

Մենք այս վերջին տեսակը առանձնացրինք բուն կցականներից նկատի ունենալով այն հանգամանքը, որ շաղկապներով կազմված կցականները իրենց բաղադրիչ մասերի փոխհարաբերության տեսակետից ըստ էության տարբերվում են լիիմաստ բառերից կազմված կցականներից:

ա) Բուն կցականներ

1. ԱՅՆԻՆՉ—գրաբարում այս բառը դեռ գրվում էր անշատ: ՆՉԲ-ում չի նշվում այս բառի ոչ մի շաղկապական գործածություն: Գրաբարում շատ տարածված էր այնինչ բառի «նոր նոր, իսկույն, երբ որ դեռ» ժամանակի նշանակությամբ գործածությունները, որտեղից անշուշտ հետագայում զարգացել է հակադրական շաղկապի նշանակությունը¹ (համեմատիր ժամանակի իմաստ ունեցող բառերից հակադրական

¹ Մայիսայանի բառարանում բերված են այս բառի ժամանակի նշանակությամբ կիրառությունների օրինակներ, որոնք, սակայն, խորթ են ժամանակակից հայերենին, ինչպես՝ Այն ինչ նրանք վիճում էին՝ դուրսը մի աղմուկ լսվեց (իբրև «այն ժամանակ որ, մինչդեռ»):

նշանակության զարգացումը հետևյալ բառերում՝ մինչդեռ, ապա, այն ժամանակ, երբ և այլն. այս նույն երևույթը նկատվում է նաև ուրիշ լեզուներում): Այնինչ շաղկապը նար-Դոսի մոտ դեռ ավանդաբար առանձին էր գրվում, սակայն հետագայում գիտակցվեց որպես մեկ ամբողջական իմաստ արտահայտող բառ և գրվեց միասին:

2. ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ (ԱՅՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ)—գրաբարում սովորական շարահյուսական կապակցություն էր, իհարկե առանձին գրությամբ: Արդի հայերենում այս բառը ձեռք բերեց շաղկապական արժեք՝ արտահայտելով հակադրական հարաբերություն: Զուրկ չէ նաև եղանակավորող բառի կիրառությունից: Առաջին և երկրորդ բաղադրիչները գործիական հոլովով են:

3. ԱՅՍԻՆՔՆ—գրաբարյան տեքստերում թե առանձին, թե միասին գրությամբ. հավանաբար դեռ չէր կայունացել որպես մի ամբողջական բառ: Գործածվում էր նաև այսինքն է ձևով: Հենց դրաբարում դերանվանական արժեքի հետ միասին ուներ նաև շաղկապական արժեք: Արդի հայերենում հանդես է գալիս որպես մեկնական շաղկապ և գրվում է միշտ միասին:

4. ԱՅՈՒՆԱՆԴԵՐՁ (ԱՅՆՈՒՆԱՆԴԵՐՁ)—առաջին բաղադրիչը գործիական հոլովով: Որպես շաղկապ տարածվեց արդի հայերենում, ուր ունի նաև եղանակավորող բառի կիրառություններ:

5. ԻՆՉՊԵՍ—այս բառը շենք գտնում ոչ նշՐ-ում և ոչ էլ Առձեռն բառարանում: Անկասկած աշխարհաբարյան կազմություն է՝ ինչ+պես: Արդի հայերենում, ի թիվս այլ կիրառությունների, հանդես է գալիս նաև որպես շաղկապ:

6. ՄԻՆՉԴԵՆ—կազմված է մինչ+դեռ բաղադրիչներից. գրաբարում մակբայական համարված նրա կիրառությունները պետք է դիտել որպես ժամանակի հարաբերություն արտահայտող շաղկապական կիրառություններ. օրինակ. «Մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դէն (նշՐ, այդ բառի տակ)»: Արդի հայերենում այս բառը արտահայտում է նաև նակադրություն:

7. ՆՈՒՅՆՊԵՍ—կազմված է նույն+պես բաղադրիչներից. դեռ գրաբարում, ուր այն մակբայ է համարվում, հանդիպում ենք շաղկապական կիրառությունների, ինչպես՝ «Կաթիլ հանէ զմարդ ի տանէ, նոյնպես և կին անզգամ ի տանէ իւրմէ զայր (ՆՀԲ, հտ. Բ, 441)»։ Արդի հայերենում գերազանցապես շաղկապական գործածություն ունի։

8. ՈՐՈՎՀԵՏԵՎ—ՆՀԲ-ում մակբայ և շաղկապ է համարված, մինչդեռ բերված օրինակները շաղկապական են։ Արդեն գրաբարում միասին էր գրվում։ Երկու բաղադրիչներն էլ գործիական հոլովով են։

բ) Շաղկապներով կազմված կցականներ

Այս բարդ շաղկապների առաջին բաղադրիչները սովորաբար չթեքվող խոսքի մասեր են՝ մակբայներ, կապեր և շաղկապներ, որոնք բոլորն էլ հենց գրաբարում, ի թիվս իրենց խոսքի մասային այլ կիրառությունների, ունեցել են նաև կապակցական բառի կիրառություններ։ Այնուհետև, միանալով որոշ շաղկապների հետ, այս բառերը գործ ենածվել միայն որպես շաղկապ, բացառությամբ մինչև բառի, որ արդի հայերենում ունի նաև այլ կիրառություններ։ Քննենք այդ շաղկապների կազմությունը առանձին-առանձին։

1. ԱՅԼԵՎ—կրկին՝ շաղկապ, կազմված այլ+և բաղադրիչներից։ Գրաբարում դեռ առանձին գրությամբ։ Հակադրական և միավորի, շաղկապների կցումից առաջացել է ոչ փակադրական հարաբերություն արտահայտող շաղկապ. համեմատիք գրաբարի հետևյալ նախադասությունները. «Խընդամ, այլ և ուրախ ևս եղէց»։ «Ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլ և հայր իւր կոչէր զաստուած (ՆՀԲ, այդ բառի տակ)»։ Այս կիրառություններից երկրորդն է տարածված արդի հայերենում, այն էլ մեծ մասամբ այն դեպքում, երբ առաջին նախադասության մեջ առկա են ոչ միայն կապակցությունը, կամ ժխտական ձևով որևէ ստորոգյալ։

1 Պահպանել ենք Հ. Աճառյանի տերմինը։

2. ԹԵՊԵՏԵՎ—կրկին շաղկապ: Գրաբարում հանդիպում է թե առանձին և թե միասին գրությունք. նույնը և այժմ: Այս շաղկապը հետաքրքրական է նրանով, որ առաջին (թե) և վերջին (և) բաղադրիչները շաղկապ են:

3. ԹԵՆՎ—կրկին շաղկապ, կազմված է թե + և բաղադրիչներից. նաև առանձին գրությամբ: Արդի հայերենում միշտ միասին: Առաջին բաղադրիչը անշուշտ թեակա՞ն իմաստ ունեցող թե շաղկապն է:

4. ՄԻՆԶԵՎ—կազմված մինչ + և բաղադրիչներից: Գրաբարում առաջին բաղադրիչը ուներ շաղկապական կիրառություններ, սակայն, շնայած այդ բանին, և շաղկապի համեմատումը այնպես չազդեց այդ բառի նշանակության և գործածության վրա, որ նա միայն շաղկապական կիրառություն ձեռք բերեր: Գրաբարում հանդես էր գալիս երկու խոսքի մասի արժեքով՝ կապի և շաղկապի: Մինչև բառի ժամանակի նշանակությամբ այն կիրառությունները, որ գրաբարի քերականություններում դիտվում են որպես մակբայական, մենք համարել ենք շաղկապական, քանի որ այդ կիրառություններում մինչև բառը հանդես է դալիս միշտ բարդ ստորագասական նախադասության բաղադրիչ մասերի միջև, արտահայտելով ստորագասական հարաբերություն: Ի դեպ, շաղկապական ենք համարել նաև մինչ, մինչդեռ բառերի ժամանակի նշանակությամբ նույնպիսի կիրառություններ¹: Գրաբարի քերականները մինչև բառը շաղկապ են համարում միայն այն դեպքում, երբ նրանով կապակցվում են հետևանքի և չափի երկրորդական նախադասություններ (որոնք շատ անգամ անորոշ դերբայով են), օրինակ՝ «Այնպէս սիրեայ աստուած զաշխարհ, մինչև զորդին իւր միածին ետ»: «Զարմացան ամենեքին, մինչև հծծել ընդ միմեանս» (ՆՀԲ): Մինչ շաղկապի այս կիրառությունները տարածված են նաև ժամանակակից հայերենում, ուր հաճախ այս բառը հարա-

¹ Պ. Շարաբխանյանի «Գրաբարի շաղկապներ» (Երևան, 1960) աշխատության մեջ ժամանակի շաղկապների հատուկ իմաստային խմբավորում չկա (տե՛ս էջ 45), որից հետևում է, որ հեղինակը հիշյալ բառերը շաղկապ չի համարում:

դրվում է ու շաղկապով, մի բան, որ հանդիպում ենք նաև գրաբարում, և որ ՆՀԲ-ն համարում է ուսմակական, ինչպես՝ «Ոչ բո՛որ առանց մասանց ասի երբէք, մինչև ու ի մասանցն բոլորն բաղկանայցէ—Ոսկիփոր (ՆՀԲ, 277)»:

5. ՆԱՆՎ—կրկին շաղկապ, կազմված է նա+և բաղադրիչներից: Գրաբարում թե միասին, թե առանձին գրությամբ:

6. ՈՐՊԵՍՁԻ—կազմված է որպես+զի բաղադրիչներից: Գրաբարում միշտ առանձին գրությամբ, այժմ միասին: Առաջին բաղադրիչը ունեցել է մակբայական, կապական և շաղկապական կիրառություն: Մակբայական համարված կիրառությունները բոլոր էություն շաղկապական են, ինչպես՝ «Վկայութիւն Յովսեփոս՝ զոր եղ ընդ նմա, որպէս ելանէր նա յերկրէն եգիպտացոց (ՆՀԲ, հտ. Բ, 536)»:

Ուշագրավ է այն փաստը, որ որպես բառը գրաբարում ունեցել է նպատակի շաղկապի իմաստ՝ «որպեսզի» նշանակությամբ, ինչպես՝ «Ի նմանէն խնդրեսցես դու, որպէս ուղղեսցին ճանապարհք քո»: «Բարձր արարեր զիս ի դրանց ի մահուանէ, որպէս պատմեցից զամենայն օրհնութիւնս քո (ՆՀԲ, հտ. Բ, 537)»:

Զի շաղկապի հավելումը որպես բառի վրա ընդգծեց ու ավելի որոշակի դարձրեց նրա նպատակի նշանակությունը՝ սահմանափակելով նրա կիրառությունների շրջանակը միայն շաղկապական գործածությամբ. օրինակ. «Առնեն, որպէս զի փառաւորեսցին (ՆՀԲ, հտ. Բ, 537)»:

7. ՔԱՆԶԻ—կազմված է քան+զի բաղադրիչներից: Արեւելահայ գրականում գրեթե անգործածական (համեմատաբար ավելի շատ հանդիպում է չափածոյում):

Կատարված քննությունից պարզվում է, որ կցական կազմությամբ այս շաղկապները, աննշան բացառությամբ (ինչպես, այսուհանդերձ, այնուհանդերձ, որոնք գրաբարի բառարաններում չեն վկայված) եղել են նաև գրաբարում: Սակայն քանի որ հենց գրաբարում նրանք շաղկապի են վերածվել խոսքի մասային հարաբերակցության միջոցով, ուստի կցական կազմությունը չի կարող դիտվել որպես շաղկապանե-

րի կազմավորման բառակազմական միջոց: Բացառություն է կազմում, իհարկե, հարադրական կազմություն ունեցող շաղկապների ձևավորումը որպես կցական (թեև, այլև, որպեսզի և այլն), բայց որովհետև հենց գրաբարում նրանք ավելի տարածված էին իրենց բաղադրիչների անջատ գրությունամբ, ուստի այս դեպքում էլ կցական բարդությունը, իբրև բառակազմական միջոց, որոշակի դեր չի խաղացել շաղկապների կազմավորման համար:

Նկատելի է, որ կցական կազմություն ունեցող շաղկապների թիվը արդի հայերենում գրաբարի համեմատությամբ քանակապես չի աճել: Սակայն, շնայած այդ բանին, հիշյալ կազմությամբ շաղկապները որոշակի զարգացում ունեցել են: Ինչպես տեսանք, այդ շաղկապներից ոչ բոլորն էին գրաբարում շաղկապական կիրառություն ունեցել, մինչդեռ այժմ նրանք բոլորն էլ հանդես են գալիս կապակցական դերով, հարաբերակցելով շաղկապների հետ գերազանցապես լիակատար կերպով, իսկ նրանցից մի քանիսը արդի հայերենում հանդես են գալիս արդեն սոսկ որպես շաղկապ (մինչդեռ, նույնպես): Ահա այս ուղղությամբ, այս բառերի շաղկապական կիրառությունների ծավալման ուղղությամբ է ընթացել զարգացումը:

Բ) Հառադրական կազմությամբ շաղկապներ—Այսպես ենք անվանելու կազմությամբ բարդ բոլոր այն շաղկապները, որոնց բաղադրիչները գրվում են անջատ, բայց որոնք արտահայտում են մեկ ընդհանուր շաղկապական իմաստ: Որպես կանոն, այդ բաղադրիչներից երկրորդը գրեթե միշտ շաղկապ է լինում: Երբ խոսք է լինում արդի հայերենի շաղկապական միջոցների զարգացման մասին, միշտ պետք է նկատի ունենալ այս ճանապարհով կատարվող կապակցական միջոցների հարստացումը:

Եվ իրոք, եթե արժատական շաղկապները մնում են անփոփոխ լեզվի զարգացման սարբեր շրջաններում, եթե բառահարաբերական որևէ ձևությամբ եղած շաղկապները սահմանափակ թիվ են կազմում, եթե կցական բարդությամբ եղած կազմությունները հիմնականում, դեռ գրաբարում, գո-

յություն են ունեցել և այլ խոսքի մասերից են փոխանցվել շաղկապի, ապա հարադրական շաղկապները անընդհատ առնում ու բազմապատկվում են՝ արտահայտելով լեզվին անհրաժեշտ նորանոր հարաբերություններ ու իմաստներ, տարբեր ոճական նրբություններ ու երանգներ:

Շաղկապական միջոցների հարստացման այս անալիտիկ ուղին հատուկ է ոչ միայն արդի հայերենին, այլև ռուսերենին, ֆրանսերենին և ընդհանրապես մյուս լեզուներին:

Ի տարբերություն ֆրանսերենի, որտեղ, շատ քիչ բացառությամբ, գրեթե բոլոր հարադրական շաղկապները կազմված են զսե «որ» շաղկապով, արդի հայերենում բաղադրյալ շաղկապների կազմում հանդես է գալիս ոչ միայն ուր «զսե» շաղկապը, այլև թե, և, էլ շաղկապները: Այսպիսով ստեղծվում է հարադրական շաղկապների մի հարուստ համակարգ: Բացի դրանից, բավական մեծ թիվ են կազմում նաև սովորական հարադրությունները երկու կամ երեք բառի, որոնք նույնպես շաղկապի նշանակությամբ են հանդես գալիս:

Ստորև տալիս ենք այդ շաղկապներով եղած կազմությունները:

ա) Ուր շաղկապով կազմված հարադրություններ: Սրանք բոլորն էլ ստորադասական հարաբերություններ են նշում: Թե քանակով և թե որակական հատկանիշներով հատուկ տեղ են գրավում հարադրական շաղկապների կազմում: Պետք է նկատել նաև, որ այս շաղկապով կազմված հարադրությունները բոլորն էլ աշխարհաբարյան կազմություններ են, քանի որ գրաբարում հնարավոր չէ ենթադրել որևէ հարադրություն ուր շաղկապով, երբ վերջինս որպես շաղկապ խորթ էր գրաբարին: Հարկ ենք համարում նշել, որ հիշյալ շաղկապով եղած հարադրություններից ոչ բոլորն են նույն աստիճանի վրա կանգնած: Պատահում են այնպիսի հարադրական շաղկապներ, որոնք նոր են տարածվում լեզվում, որի պատճառով շաղկապական այն արժեքը չունեն, ինչ որ մյուսները: Ահա այդ շաղկապները.

Այնքան որ¹, այնքանով որ, այնքանով որքանով ու
 (սրանք վերջերս են տարածվել լեզվում, մանավանդ վերջին
 երկուսը), այնպես որ¹, դե որ (ժողովրդական), երբ որ (նաև
 միասին), թե որ, ինչպես որ, հակառակ որ (սկսում է կա-
 պակցական դեր կատարել), հենց որ, մանավանդ որ, մի
 բան, որ... (յուրահատուկ հարաբերական բառ), մինչև որ,
 նամանակահատված որ, ոնց որ (ժողովրդական), չնայած որ, չնա-
 յելով որ (երբեմն ստորակետով բաժանված, մանավանդ
 անցյալ դարի հեղինակների մոտ), քանի որ և այլն: Բարբա-
 րային և ժողովրդական պիտի համարել բա որ, ամա որ,
 չունի որ և այլ ձևերը, որոնք երբեմն օգտագործվում են լեզ-
 վում՝ հերոսների խոսելաձևը հարազատորեն վերարտադրե-
 լու նպատակով: Կան նաև ...այն պատճառով, որ, ...այն
 նպատակով, որ, ...այն բանի համար, որ, չնայած այն բանին
 որ և շատ ուրիշ նման ձևեր, որոնք արդի հայերենում թեև
 կապակցական դեր են կատարում, սակայն դեռ զգալի է նը-
 քանց մեջ հարաբերյալի և հարաբերականի կապակցությունը,
 որի համար էլ բաժանված են ստորակետով (հմտ. ուսերեն
 ПОТОМУ ЧТО, ДЛЯ ТОГО ЧТОБЫ և ուրիշ շատ ձևեր, ուր արդեն
 այդ բաղադրիչները գիտակցվում են որպես մեկ ամբողջու-
 թյուն կազմող բառեր՝ առանց ստորակետով բաժանված լի-
 նելու):

Թվարկված հարադրական շաղկապները արտահայտում
 են պատճառի, հետևանքի, պայմանի, ժամանակի, զիջական
 համեմատության հարաբերություններ, մի խոսքով գրեթե բո-
 լոր այն իմաստները, որոնք հատուկ են ստորադասական շաղ-
 կապներին: Սա անշուշտ բացատրվում է այն հանգամանքով,
 որ նրանց երկրորդ բաղադրիչը (որ) նույնպես կարող է գոր-
 ծածվել այդ նշանակություններով, ինչպես նաև բացատրա-
 կան և նպատակի իմաստներով, բացառությամբ զիջականի:

¹ Այս ցուցական դերանունների և որ շաղկապի միջև երբեմն ստո-
 րակետ է դրվում: Այդ դեպքում նրանք պետք է դիտվեն որպես հարաբե-
 րյալ և հարաբերական, քանի որ ամբողջական շաղկապական իմաստ չեն
 արտահայտում. օրինակ՝ «Նա երգում է այնպես, որ բոլորը հիանում են»:
 «Նա վազեց այնքան, որ ուժասպառ ընկավ»:

Եվ պարզ է, որ նման բազմիմաստ շաղկապը միայն կարող էր դառնալ շաղկապական համընդհանուր բաղադրիչ՝ տարբեր նշանակություններ արտահայտող վերոհիշյալ բառերի և բառակապակցությունների համար: Այդպես է նաև ուսերենում և ֆրանսերենում, ուր *что* և *que* բառերը կարող են հանդես գալ ստորադասական շաղկապների մի քանի իմաստներով:

բ) Թե շաղկապով կազմված հարադրություններ: Չնայած որ սրանք լեզվում մեծ թիվ չեն կազմում, բայց հետաքրքրական են նրանով, որ ծագում են դեռ զրաբարից, որտեղ այդ շաղկապը բավական տարածված էր: Նկատելի է նաև այն, որ բոլոր դեպքերում էլ թե շաղկապը հարադրվել է «եթե» նշանակությամբ, չնայած որ այդ պայմանի իմաստն այժմ արդեն չի զգացվում: Այժմ այդ թե բառը կարծես սոսկ ընդգծում, շեշտում է այն բառի շաղկապական արժեքը, որի հետ անմիջականորեն կապված է: Սրանում կարելի է համոզվել, եթե թողնենք այդ հարադրական շաղկապները առանց թե-ի, ինչպես՝ ապա (թե), իբր (թե), միայն (թե), որպես (թե), քան (թե), իբր (թե) և որպես (թե):

Գրաբարյան կազմությունների օրինակով արդի հայերենը ունի նաև մենակ թե (<զրբ. միայն թե), ոչ թե (զրբ. ոչ եթե), ասես թե¹, կարծես թե¹ հարադրական շաղկապները: Սրանցից առաջինը միայն բառի ժողովրդական մենակ ձևից է կազմված և հատուկ չէ զրական լեզվին: Ինչ վերաբերում է մյուս երեքին, ապա այդ շաղկապները արդի հայերենում բավական տարածված են: Ոչ թե շաղկապը հանդես է գալիս մեծ մասամբ զուգահիռ գործածությամբ՝ ոչ թե... այլ ձևով:

գ) Եվ շաղկապով կազմված հարադրություններ: Ավելանալով կապակցական դեր կատարող այս կամ այն բառի վրա՝ և շաղկապը իմաստային ոչ մի փոփոխություն չի մտցնում այդ բառերի նշանակության մեջ: Այս շաղկապով եղած հարա-

¹ Այս երկուսի շաղկապական բաղադրիչը արդեն բացատրական նշանակություն ունեցող թե-ն է՝ կապված ներդրածական սեռի կարծել, ասել բայերի հետ: Բացատրական թե է նաև նայած թե հարադրության երկրորդ բաղադրիչը, որով սկսվող նախադասությունը միշտ անուղղակի հարցում է պարունակում:

դրությունները բավական տարածված էին նաև գրաբարում, ինչպես՝ ուստի և, ուրեմն և, քէպէտ և (նաև միասին), բայց և, սակայն և, այնպէս և այլն: Արդի հայերենում առավելապես տարածված են հետևյալները՝ ուստի և, թեկուզ և, թեպետև (գրվում է նաև առանձին), ինչպես և, ուրեմն և, նույնպես և, ինչպես... այնպես և, բայց և այնպես: Այս հարադրական շաղկապները պետք է արդեն դիտել որպես մեկ ընդհանուր շաղկապական արժեք ունեցող բառեր: Հետագայում սրանց բաղադրիչների ձուլումից կարող են առաջանալ այնպիսի ձևեր, ինչպիսիք են նաև, այլև, թեև շաղկապները, որոնց բաղադրյալ լինելը գրեթե չի գիտակցվում:

դ) էլ շաղկապով կազմված հարադրություններ: Այս շաղկապով կազմված հարադրությունները վերաբերում են միայն արդի հայերենին և բավականին ամուր արմատներ ունեն լեզվում: Սակայն եթե խորապես քննենք այս էլ-ի խոսքի մասային պատկանելութունը հարադրական շաղկապների կազմում, ապա կտեսնենք, որ այն զերծ չէ եղանակավորող բառերին հատուկ զիջական երանգից: Եվ իսկապես, բոլորովին համեմատել չի կարելի «Սուրիկն էլ եկավ» նախադասության մեջ «նաև» իմաստով էլ-ի գործածությունը այն գործածության հետ, որտեղ զիջական իմաստն է իշխում, ինչպես՝ «Որտեղ էլ գնաս, քեզ կգտնեմ (իբր՝ որտեղ կուզես գնա, քեզ...)»: «Երբ էլ վերադառնաս, քեզ կսպասեմ (իբր՝ երբ կուզես վերադարձիր, քեզ կսպասեմ)»:

Էլ բառով եղած հարադրական շաղկապներից արդի հայերենում տարածված են հետևյալները ինչքան էլ, որքան էլ, այն էլ, ինչպես... այնպես էլ, կամ էլ շաղկապները, ինչպես նաև՝ ուր, որտեղ, երբ, ինչ, ինչպես և հարաբերական ուրիշ դերանուններով կազմված ուր էլ, որտեղ էլ, երբ էլ, ինչպես էլ շաղկապական բառերը, որոնք հարստացնում են արդի հայերենի շաղկապական համակարգը իմաստային և ոճական կրկնորակուն երանգներով:

Արդի հայերենում տարածված է նաև բարդ շաղկապների

մի այլ տեսակ, հարադրված՝ ա) կամ որևէ մի այլ շաղկապով¹, բ) կամ էլ որևէ բառով:

ա) Առաջին տեսակն են ներկայացնում հետևյալ շաղկապական հարադրությունները՝ ապա ուրեմն, ապա թե ոչ, ինչ է թե, թե չէ, թե ոչ, չէ թե, ինչպես նաև ինչպես եթե, նույնիսկ եթե, եթե միայն և այլ ձևեր, որոնցից մի մասը գրաբարում էլ էր գործածվում: Սրանք ներկայացնում են արդեն շաղկապական կուռ ամբողջություն դարձած ձևեր և բոլորովին չեն կարող նմանվել շաղկապների պատահական կցումով առաջացած այն ձևերին, որոնք միշտ էլ հանդիպում են լեզվում (ինչպես՝ որ եթե, բայց եթե, բայց որովհետև, իսկ երբ, բայց երբ, որովհետև եթե, այնպես որ եթե և այլն), և որոնց առաջին բաղադրիչները սովորաբար կապվում են նախորդ նախադասության կամ պարբերության հետ, իսկ երկրորդ բաղադրիչները՝ հաջորդ պարզ կամ բարդ նախադասության բովանդակությանն են վերաբերում, ինչպես «Թագուհին թեպետ կարող էր ամրոցի բանալիներն ընդմիշտ հավատալ նրան, իբրև բերդակալի. բայց որովհետև ժամանակը շար էր, և շարունակ լուրեր էին հասնում, թե այս ու այն բերդը գրավվել է թշնամուց բերդակալի թուլությամբ կամ պահնորդների մատնությամբ, ուստի թագուհին... (Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. 3-րդ, Երեվան, 1952, 21)»:

Ինչպես տեսնում ենք, բայց շաղկապը վերաբերում է թեպետ գիշական շաղկապով սկսվող նախորդ նախադասության բովանդակությանը, իսկ նրան կից որովհետև շաղկապը՝ հետեւյալների ուստի շաղկապով սկսվող նախադասությանը: Ահա հենց այս շարահյուսական առանձնահատկություններից զերծ պիտի լինի հարադրական շաղկապը, որպեսզի գիտվի իբրև իմաստային մեկ ամբողջություն ներկայացնող շաղկապ:

բ) Երկրորդ տեսակն են ներկայացնում հետևյալ շաղկապական կապակցությունները՝ քստ որում, քանի դեռ, ուր մնաց, համեմայն դեպս, այն ժամանակ, երբ, այսպես ասած, այն է, այնքանով որքանով և այլն, որոնք ավելի կամ պակաս

¹ Ըստ որում շաղկապը կարող է վերջին բաղադրիչը չլինել:

հաջողութեամբ կապակցման դեր են կատարում: Դրանցից ուր մնաց, այսպես ասած շաղկապ համարվելու տեսակետից նույն նժարի վրա դրվել չեն կարող, ինչ որ համեմայն դեպս, ըստ որում և այլն, որոնք գրաբարյան ծագում ունենալով, արդեն կանոնավորապես ամրացել են լեզվում որպես շաղկապներ: Պետք է շեշտել սակայն, որ նույնիսկ այս վերջին տեսակի հարադրական շաղկապները դեռ որոշ կապի մեջ են գտնվում համապատասխան խոսքի մասերի հետ և իմաստաբանական ու բառական այն հատկանիշները չեն ձեռք բերել, ինչ որ արմատական, երբեմնի բաղադրյալ կամ կցական կազմութիւն ունեցող շաղկապները:

Որպես այս գլխի ընդհանուր եզրակացություն, հարկ ենք համարում նշել հետևյալը.

Փաստերը ցույց են տալիս, որ հնագույն ծագում ունեցող բուն արմատական շաղկապների գերակշռող մասը հնդեվրոպական ծագում ունի: Այն հանգամանքը, որ այդ արմատական 15 շաղկապներից 10-ը համադասական են, իսկ 5-ը միայն ստորադասական, մի անգամ ևս գալիս է հաստատելու այն թեզը, որ համադասական շաղկապները ծագմամբ ավելի հին են, քան ստորադասականները:

Այն, որ բարբառներում պահպանված է միայն բուն արմատական շաղկապների որոշ մասը, իսկ շաղկապների մյուս տեսակները բացակայում են նրանցում, փոխարինվելով փոխառյալ շաղկապներով, ենթադրել է տալիս, որ հայերենի երկու գրական ճյուղավորումները՝ արևելահայերենն ու արևմրտահայերենը, իրենց կապակցական միջոցները հիմնականում վերցրել են գրաբարից, ավելացնելով նրանց վրա նաև սեփական կազմութիւնները, որոնք թվով մեծ չեն, եթե չհաշվենք հարադրական շաղկապները, որոնք, իրոք, աշխարհաբարում մեծ թափով զարգացան: Այսպիսով, երկու գրական լեզուներն էլ հիմնականում պահպանել են գրաբարի կապակցական միջոցները, իհարկե, իմաստային և կիրառական փոփոխություններով, առանց որոնց անհնարին է ենթադրել լեզվի զարգացումը՝ բավական երկարատև մի ժամանակաշրջանից հետո (գրաբարից մինչև արդի հայերեն):

Գրաբարում կապակցական դերով հանդես եկող այն բառերը, որոնք ունենին նաև խոսքի մասային այլ կիրառություններ, արդի հայերենում, շաղկապական միջոցների զարգացման հետևանքով, կամ վերածվել են շաղկապների, կամ էլ այլ խոսքի մասերի հետ հարաբերակցող այնպիսի բառերի, որոնց մեջ գերիշխում է շաղկապական արժեքը: Ռուն արմատական, երբեմնի բաղադրյալ և կցական բարդությամբ կազմված շաղկապները, եթե արդի հայերենում, գրաբարի համեմատությամբ, ֆանակապես չեն անել, ապա անել են ուրակական կողմից, շաղկապական կիրառությամբ անհամեմատ ավելի լայն գործածություն ունենալու տեսակետից:

Հարադրական շաղկապների զարգացումը, ի տարբերություն այլ կազմություն ունեցող շաղկապների մյուս բոլոր տեսակների, արտահայտվել է նաև ֆանակական ցուցանիշներով: Այսպես, գրաբարը չի ճանաչում ուր և էլ բառերով կազմված շաղկապական հարադրություններ, որոնք անշափ տարածված են արդի հայերենում, մինչդեռ արդի հայերենը գրեթե ամբողջությամբ օգտագործում ու ճանաչում է գրաբարյան շաղկապական հարադրությունների բոլոր տեսակները: Այսպիսով, երբ խոսք է լինում արդի հայերենի կապակցական միջոցների զարգացման ու հարստացման մասին, միշտ պետք է նկատի ունենալ շաղկապների կազմության հարադրական եղանակը:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ս

ՇԱՂԿԱՊԵՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախքան շաղկապների նշանակությունների ու կիրառությունների նկարագրությանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում համառոտակի կանգ առնել կիրառական և շաբահյուսական բնույթի երկու դասակարգման վրա:

Ա) ՇԱՂԿԱՊԵՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԳՈՐԾԱԾՈՒԹՅԱՆ ԵՂԱՆԱԿԻ

Շաղկապների կիրառական բնորոշ, առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանք հանդես են գալիս մեծադիր, կրկնադիր և զուգադիր գործածությամբ: Նման երևույթի մենք չենք հանդիպում մյուս խոսքի մասերի կիրառությունները քննելիս: Շաղկապների գործածության այս բազմատեսակությունը բխում է լեզվի կապակցական միջոցների զարգացումից և հարստացումից: Այսպես, մենադիր շաղկապները հաճախ ի վիճակի չեն արտահայտելու իմաստային այնպիսի հարաբերություններ ու երանգներ, որոնց դրսևորման անհրաժեշտությունը զգացվում է լեզվում: Ահա նման պայմաններում երևան է գալիս կապակցության նոր եղանակների օգտագործման անհրաժեշտություն: Անառարկելի է այն փաստը, որ նախապես շաղկապները մենադիր գործածություն են ունեցել, որից հետո միայն զարգացել են գործածության կրկնադիր և զուգադիր եղանակները:

ա) Մենադիր շաղկապներ—Այսպես են կոչվում այն շաղկապները, որոնք կապակցական դեր կատարելիս հանդես են գալիս առանձին գործածությամբ: Պետք է նշել, որ արդի հայերենի, և ընդհանրապես մյուս լեզուների, շաղկապական կառուցվածքների ճնշող մեծամասնությունը կազմվում է մենադիր շաղկապներով: Սրանք արտահայտում են լեզվի շաղկապական հարաբերությունների իմաստային բոլոր տեսակները թե՛ համադասական և թե՛ ստորադասական կապակցության մեջ: Այս շաղկապների բնորոշ կողմերից մեկն էլ այն է, որ եթե կրկնադիր և զուգադիր գործածություն ունեցող շաղկապները սովորաբար արտահայտում են իմաստային մեկ հարաբերություն, ապա մենադիրները հարուստ են իմաստային ու ոճական կիրառություններով:

բ) Կրկնադիր շաղկապներ—Որոշ համադասական շաղկապներ խոսքի մեջ հաճախ կրկնվում են, շեշտելով իրենցով կապակցվող լեզվական միավորների համազորությունը: Թվարկման նշանակություն արտահայտող այդ շաղկապները կրկնական գործածություն ունենալիս զրկվում են իրենց ունեցած իմաստային այլ երանգներից և հանդես են գալիս սոսկ իրենց ամենահիմնական նշանակությամբ: Չպետք է կարծել սակայն, որ կրկնադիր են բոլոր այն շաղկապները, որոնք այս կամ այն պատճառով կրկնվում են: Ստորադասական շաղկապներից ոչ մեկը, ինչպես նաև համադասականների մեծ մասը կրկնական գործածություն ունենալիս չեն ստանում կրկնադիր շաղկապներին հատուկ իմաստային և արտահայտչական հատկանիշները: Արդի հայերենի կրկնադիր շաղկապներն են և՛ ... և՛, թե՛... թե՛ համ... համ, կամ... կամ, ո՛չ... ո՛չ, մերթ... մերթ, մեկ... մեկ: Սրանցից վերջին երեքը միայն կրկնադիր գործածությամբ են շաղկապական արժեք ստանում: Այս շաղկապները արտահայտում են միայն միավորական և տրոհական հարաբերություններ, մեծ մասամբ հանդես գալով համազոր անդամների կամ բառակապակցությունների միջև և սակավ՝ բարդ նախադասության մասերի միջև:

գ) Զուգադիր շաղկապներ—Այս շաղկապների զարգացումն ու տարածումը կապված են գիր ու գրականության և դրա հետ մեկտեղ բարդ նախադասությունների, զարգացման հետ: Կապակցվող մասերի տրամաբանական կապը այս շաղկապների օգտագործմամբ ընդգծվում և նոր ուժով է երևան գալիս: Այս տեսակետից զուգադիր շաղկապներին մոտ են հարաբերյալի և հարաբերականի գործածությունները բարդ նախադասություններում, որոնք, սակայն, կապակցության այլ տեսակներ են կազմում:

Հին հայերենը բավականին հարուստ էր զուգադիր շաղկապներով, որոնց մեծ մասը օգտագործվում է նաև այժմ արեւելահայ և արեւմտահայ գրական լեզուներում: Ժամանակակից հայերենում զուգադիր շաղկապների դերը հատկապես մեծ է զիջական, պատհառա-հետեւաճախ և պայմանա-հետեւաճախին հարաբերություններ արտահայտող բարդ ստորադասական կապակցություններում, ինչպես նաև միավորական հարաբերություն արտահայտող համադաս նախադասություններում: Կապակցության զուգադրական եղանակը աչքի է ընկնում շարահյուսական կոռ կառուցվածք ստեղծելու համակարգիչով, երբ «...այդ շաղկապներից մեկը անպայման պետք է պատասխանե մյուսին»¹: Ահա ամենատարածված շաղկապներից մի բանիսը՝ ինչպես... այնպես էլ (և), ոչ միայն... այլև, ոչ քե... այլ, քե... բայց (սակայն, այնուամենայնիվ), չնայած որ... բայց (սակայն, այնուամենայնիվ), եթե... ապա, եթե... ուրեմն, որովհետեւ... ուստի, քանի որ..., ուրեմն և այլն: Բերենք մի երկու օրինակ՝

Տեսել եմ նրան ոչ թի երազում, այլ հենց կյանքի մեջ (ՀՀՆ, 157): Թեպետ Վասպուրականը բնությունից արդեն օժտված էր գեղեցիկ ամրություններով, այնպես որ ոչ միայն Գաղիկ Արծրունու նման բազմափորձ զինվորականը, այլև նրանից ավելի տկար մի իշխանապետ կարող էր այդ ամրությանց ապավինելով՝ ապահովել երկիրը թշնամու հարձակում-

1 Ս. Պալասանեան, Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, Թիֆլիս, 1874, 185:

ներից, բայց և այնպես, Գազիկ Արծրունին բնության տված-
ների վրա ավելացրել էր նաև յուր ստեղծագործությունները
(Մուր., 445—446): Քանի որ մենք հասկանում ենք իրար,
ուստի զուր ժամավաճառություն է այսպիսի խոսակցություն-
ներով զբաղվելը (ՆՁՀ, 180):

Այս զուգադիր շաղկապները նույնպես, ինչպես և կրկնա-
դիրները, ոճական և արտահայտչական հարուստ հնարավոր-
ություններ ունեն: Եթե նկատի ունենանք այն, որ շատ ան-
գամ զուգադիր շաղկապի նազմում հանդես են գալիս նաև
այլ խոսքի մասեր՝ մակբայներ, դերանուններ և այլն, որոնք
կապակցական դեր են կատարում, ապա պարզ կլինի, թե
շաղկապական միջոցները հարստացնելու ինչ մեծ հնարավոր-
ություններ ունի ժամանակակից հայերենը: Բավական է
ասել, որ զիջական հարաբերություն արտահայտելու համար
արդի հայերենում օգտագործվում են երկու տասնյակից ավելի
զուգադիր շաղկապներ:

Այսպիսով, ժամանակակից հայերենի շաղկապական
համակարգը համալրվում ու հարստանում է ոչ միայն ի հա-
շիվ խոսքի մասերի հաճախակցությամբ միջոցով առաջացած
շաղկապների, ինչպես նաև հաճախակցող եղանակով կազմա-
վորված շաղկապների, այլև ի հաշիվ զուգադիր շաղկապների
բուռն աճի:

Բ) ՀԱՄԱՐԱՍԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ
ԱՐՏԱՀԱՅՏԱՄ ՇԱՐԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՀԱՐԱԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Շաղկապների ավանդական բաժանումը համադասակա-
նի և ստորադասականի հիմնված է նրանցով կապակցվող
լեզվական միավորների շարահյուսական կապի բնույթի վրա:
Համադասական են համարվում այն շաղկապները, որոնցով
կապակցվող մասերը դիտվում են որպես շարահյուսական
տեսակետից հավասարազոր և իմաստային տեսակետից ինք-
նուրույն ու անկախ, իսկ ստորադասական են համարվում այն
շաղկապները, որոնցով կապակցվող նախադասություններից
մեկը շարահյուսական և իմաստային տեսակետից կախված
է մեկ ուրիշից, ստորադասված է մեկ ուրիշին:

Ինչպես տեսնում ենք, այս դասակարգումը հիմնված է շաղկապների շարահյուսական դերի հաշվառման վրա, այսինքն նրանցով կապակցվող մասերի՝ իրար նկատմամբ ունեցած շարահյուսական փոխհարաբերությունների վրա: Ձեվաբանական տեսակետից ոչ մի էական տարբերություն չկա համադասական և ստորադասական շաղկապների միջև, եթե հաշվի չառնենք այն, որ ստորադասական շաղկապների ծագումնաբանական կապը այլ խոսքի մասերի հետ (դերանուն, մակբայ և այլն) ավելի ակնառու է: Թեև համադասությունը և ստորադասությունը դիտվում են որպես շարահյուսական-տրամաբանական տարբեր կատեգորիաներ, սակայն լեզվում գոյություն ունեն բարդ նախադասությունների այնպիսի կառուցվածքներ, որոնք տատանվում են համադասության և ստորադասության միջև: Ժամանակակից հայերենում գոյություն ունեցող բարդ նախադասությունների շարահյուսական հարաբերությունների բաղմագանությունը երբեք էլ չի կարող պարփակվել միայն այդ երկու կատեգորիաների սահմաններում: Այսպես են, օրինակ, մեկնակա և զիջակա (հատկապես ղուգադիր) շաղկապներով կապակցվող բարդ նախադասությունները, ժամանակի որոշ (այն ժամանակ, երբ, այն դեպքում, երբ) շաղկապներով կապակցվողները, ինչպես նաև ուրիշ մի քանի այլ շաղկապներով եղած կառուցվածքները: Համադասության և ստորադասության միջև յուրահատուկ դիրք են գրավում հետևանքի շաղկապներով կապակցվող բարդ նախադասությունները:

Թեև համադասական և ստորադասական շաղկապներին հատուկ են իմաստային հարաբերությունների որոշակի տեսակներ, սակայն հաճախ նրանք արտահայտում են այնպիսի հարաբերություններ, որոնք բնորոշ չեն այն կատեգորիայի համար, որի մեջ նրանք դասվում են: Այսպես, համադասական շաղկապներով հաճախ արտահայտվում են ստորադասություններ հատուկ իմաստային երանգներ ու նշանակություններ, ինչպիսիք են պատճառահետևանքային, զիջական, ժամանակային, իսկ ստորադասական շաղկապներով՝ համադասությանը հատուկ երանգներ ու նշանակություններ՝ հակադրա-

կան, միավորական: Այս տեսակետից հետաքրքրական դիտողություն է անում Ի. Պոպովան, որը պնդում է, որ չի կարելի համադասության տակ հասկանալ սոսկ իմաստային հարաբերությունների որոշակի տեսակները (միավորիչ, հակադրական և տրոհական): Համադասությունը բնորոշվում է ոչ այնքան այդ հարաբերությունների որոշակի շրջանակով, որքան նրանց արտահայտման բնույթով, եղանակով (ընդգծումը մերն է—Գ. Գ.)¹:

Իրենց արտահայտած շարահյուսական հարաբերություններով ստորադասական շաղկապները միատարր չեն: Նկատելի է, որ կապակցվող մասերի ստորադասական կապը (ավելի ճիշտ՝ ստորադաս մասի կախվածությունը գերադաս մասից) համեմատաբար ավելի թույլ է արտահայտվում զիջական, հետևանքի և համեմատական շաղկապների օգտագործման ժամանակ: Այս շարքում են դասվում նաև հետևանքի շաղկապները, որոնց օգտագործմամբ ստորադասությունը երբեմն համադասությանն է մոտենում: Պատահական չէ, որ հայ քերականները (Մալխասյան, Աբեղյան և ուրիշներ) համադասական կապակցության բաժնում գետեղում են նաև պատճառի, հետևանքի և զիջական որոշ շաղկապներով կապվող նախադասությունները, նկատելով անշուշտ, որ այդ շաղկապների կիրառության ժամանակ կապակցվող մասերի կախումային հարաբերությունները այնքան ընդգծված չեն, որքան մյուս ստորադասական շաղկապների օգտագործման դեպքում:

Այն կարծիքը, ըստ որի համադաս նախադասությունները իմաստային ու շարահյուսական տեսակետից ինքնուրույն են ու անկախ, պետք է մեծ վերապահությամբ ընդունել: Զէ ո՞ր լեզվում գոյություն ունեն համադասական կապակցության այնպիսի կառուցվածքներ, որոնցում շաղկապվող մասերը ոչ միայն իմաստային ինքնուրույնություն չունեն (հետևաբար և իրար միտք են լրացնում), այլև շարահյուսական փոխկախ-

¹ „Сложно-сочиненное предложение в современном русском языке“ (Вопросы синтаксиса современного русского языка, Москва, 1950, 392).

վածության այնպիսի աստիճան են ներկայացնում, երբ կապակցվող երկրորդ համադասը առանձին վերջրած կորցնում է թե իմաստային և թե քերականական ինքնուրույնությունն ու անկախությունը, երբեմն դադարելով նույնիսկ հաղորդակցման առանձին միավոր լինելուց. օրինակներ՝

Գլուխս ծանրանում է, և տեսածներս ու խորհածներս վերածվում են ֆառսի (ԱԻ, 284): Ֆիլմը ունի տեխնիկական թերություններ և (=որի պատճառով) կցուցադրվի ընդմիջումով: Մեծ եղբայրը դաշնամուր էր նվագում, իսկ փոքրը՝ ջութակ: Նա սովորաբար երեկոյան էր պարապում, բայց 2—3 ժամից ոչ ավելի:

Ինչպես տեսնում ենք, առաջադաս համադաս նախադասությունները իմաստային և շարահյուսական տեսակետից ավելի մեծ անկախություն ու ինքնուրույնություն ունեն, քան վերջադաս համադասները: Առաջին և երկրորդ օրինակներում շատ պարզ զգացվում է, որ վերջադաս համադասները իրենց բովանդակությամբ կախված են նախորդ մասերից և հանդես են գալիս որպես անմիջական հետևանքն այն բանի, ինչի մասին խոսվում է այդ առաջադաս նախադասություններում: Երրորդ և չորրորդ օրինակներում կապակցվող մասերի միջև նկատելի է, բացի իմաստայինից, նաև կառուցվածքային այնպիսի կախվածություն, որ հատուկ է միայն ստորադասական կապակցությանը¹:

Վերջադաս համադաս նախադասությունները, որոնք քերականորեն լրիվ ձևավորված չեն, կախման մեջ են առաջադաս համադասներից, որոնք քերականորեն անթերի են, իսկ նշանակությամբ՝ ավելի անկախ և ինքնուրույն²: Պարզ է ուրեմն, որ խոսել համադաս նախադասությունների բացարձակ համազորության մասին, ավելորդ է:

¹ Կապակցվող մասերի փոխկախվածությունը ուժեղ է նաև զուգադրական գործածություն ունեցող միավորիչ և հակադրական ոչ միայն... այլև, ոչ թե... այլ և նման շաղկապների գործածության ժամանակ:

² Այդ անկախությունը ևս հարաբերական է, քանի որ բարդ նախադասության կազմի մեջ մտնող համադաս նախադասությունները երբեք չեն կարող արհեստականորեն անջատվել ընդհանուր բարդ նախադասության կառուցվածքից՝ որպես հաղորդակցման ինքնուրույն միավորներ:

Այստեղից հետևում է, որ համադասության և ստորադասության քերականական կատեգորիաների միջև կան ընդհանրություններ: Պետք է նկատել սակայն, որ համադասության ժամանակ նկարագրվող դեպքերն ու իրողությունները սովորաբար ներկայացվում են իրենց բնական հաջորդականությամբ՝ այնպես ինչպես տեսնում, զգում կամ մտածում է հեղինակը: Ստորադասության ժամանակ նկարագրվող իրողությունների, դեպքերի կապը շատ ավելի սերտ է, փոխադարձ պայմանավորվածությունը՝ շատ ավելի որոշակի: Այդ է պատճառը, որ ստորադասության ժամանակ դեպքերն ու երևույթները ներկայացվում են ոչ թե իրենց բնականոն ընթացքով, պարզ հաջորդական հերթականությամբ, այլ նրանց այն ներքին կապի ու պայմանավորվածության մեջ, գլխավոր, առաջնահերթ իրողության և նրա հետ կապված այս կամ այն հանգամանքի այն ներքին փոխհարաբերության մեջ, որ նկատել է մարդը՝ աշխարհըմբռնման բարձր աստիճանի վրա կանգնած լինելու շնորհիվ: Այդ է անշուշտ պատճառը, որ մարդկային հասարակության զարգացման ավելի ցածր աստիճաններում նախադասությունների ու բառերի շաղկապման համադասական եղանակն է իշխել, իսկ հետագայում, մարդու մտավոր ունակությունների զարգացման հետ զուգընթաց, գիր ու գրականության զարգացման հետ զուգընթաց, տարածվել է նախադասությունների ստորադասական կապակցությունը:

Սրանից չի հետևում սակայն, որ համադասությունը իր տեղը դիջել կամ զիջում է ստորադասությանը: Արդի հայերինի համադասական շաղկապների քանակական աճը ապացուցում է, որ դեպքերի և իրողությունների նկարագրման ու ներկայացման այն եղանակը, որ տրվում է համադասական կապակցությամբ, խիստ անհրաժեշտ է լեզվին:

Տեսական աշխատություններում հաճախ է մատնանշվել, որ բոլոր բարդ նախադասությունների բաժանումը միայն երկու տիպի՝ «տառապում է որոշ արհեստականությամբ»¹,

¹ В. Богородицкий, Общий курс русской грамматики, М.—Л., 1935, 229.

որի պատճառով «ավելի զգույշ կլինեն նախադասությունների համադասության և ստորադասության փոխարեն խոսել նախադասությունների կապակցման տարբեր տեսակների և նրանց կախվածության տարբեր աստիճանների մասին՝ արտահայտված շաղկապներով և այլ քերականական միջոցներով՝ եղանակային ձևերով, բառերի դասավորությամբ, դերանվանական բառերով, ինտոնացիայով և այլն»¹։

Այս բոլորը նկատի ունենալով բոլորովին էլ զարմանալի չէ, որ քերականներից շատերը շաղկապների կիրառությունները նկարագրելիս դրանք նախապես խմբավորում են ոչ թե համադասականի և ստորադասականի, այլ ըստ կիրառական տարբեր առանձնահատկությունների, բոլորովին շանդրադառնալով կապակցվող միավորների շարահյուսական փոխհարաբերություններին (համադասական, ստորադասական)²։

Մեր այս աշխատանքում մենք պահում ենք շաղկապների ավանդական բաժանումը համադասականի և ստորադասականի, քանի որ այդ խմբավորումը միաժամանակ ակնարկում է շաղկապների շարահյուսական կարևոր հատկանիշներ։ Զուտ մեթոդական նկատառումները ևս ստիպում են ընդունել այդ բաժանումը որպես նախնական խմբավորում, որին պետք է հետևեն արդեն այդ խմբերի (համադասական և ստորադասական) մեջ մտնող շաղկապների կիրառությունների կոնկրետ նկարագրությունները։ Աշխատել ենք սակայն չկաշկանդվել այդ բաժանմամբ և այդ շաղկապներով կապակցվող նախադասությունների միջև եղած իմաստային հարաբերությունները ներկայացնել հնարավոր ճշտությամբ, առանց հաշվի առնելու, թե այդ հարաբերությունները համադասությանն են բնորոշ, թե ստորադասությանը։

¹ В. В. Виноградов, Русский язык, М.—Л., 1947, 708.

² Ցե'ս, Л. Булаховский, Курс русского, литературного языка, том 1, 5-е изд., Киев, 1952, 343: Համեմատիւ նաև «Современный русский язык», Морфология (курс лекций), издательство Московского университета, 1952, 434 (բուհական այս դասադրքում «Союзы» բաժնի հեղինակն է Ա. Պետերսոնը)։

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱԳՆԵՐ

Արդի հայերենի համադասական շաղկապները, հանդես գալով նախադասության համազոր անդամների, բառակապակցությունների, համադաս նախադասությունների, ինչպես նաև խոսքի տարբեր հատվածների ու պարբերությունների շաղկապման դերով և նշելով նրանց միջև եղած տարբեր բնույթի իմաստային հարաբերություններն ու երանգները, հիմնականում բաժանվում են հետևյալ տեսակների՝

1. Միավորիչ հարաբերություններ արտահայտող շաղկապներ.

2. Հակադրական հարաբերություններ արտահայտող շաղկապներ.

3 Բաժանական կամ տրոհական հարաբերություններ արտահայտող շաղկապներ:

Համադասական և ստորադասական շաղկապների միջև հատուկ դիրք են գրավում մեկնական շաղկապները, որոնց մասին կխոսվի այս բաժնի վերջում (էջ 171):

Այս շաղկապների գերակշռող մասը, ինչպես նաև իրենց գործածությունների հաճախականությամբ ամենատարածվածները, կազմությամբ պարզ են: Հենց դրանով պետք է բացատրել իմաստային և ոճական այն հարուստ հնարավորությունները, որ ունեն նրանք:

1. ՄԻԱՎՈՐԻՉ ՇԱՂԿԱԳՆԵՐ

Միավորիչ են համարվում այն շաղկապները, որոնցով կապակցվող լեզվական միավորները (նախադասության համազոր անդամներ ու բառակապակցություններ և համադաս

նախադասություններ) հաջորդաբար մեջ բերվելով ու թվարկվելով՝ միավորվում են նույն ասույթի կազմում որպես հիմնականում հավասար արժեք ներկայացնող փաստեր¹:

Նույն ասույթի կազմում մեջ բերվող զանազան փաստերի ու իրողությունների միավորումը, որը հատուկ է միավորիչ բոլոր շաղկապներին, տարբեր շաղկապների օգտագործմամբ իմաստային տարբեր երանգներ է ստանում: Այսպես՝ երբ անհրաժեշտ է լինում շեշտել թվարկումը, օգտագործվում են այդ նշանակությունն ընդգծող համապատասխան շաղկապներ. այդպես նաև հավելական, ներառական և այլ նշանակությունների ակնարկման համար:

Միավորիչ շաղկապների շարքում հատուկ տեղ են զբաղում և, ու շաղկապները, որոնք, շնորհիվ իրենց վերացական նշանակության, հանդես են գալիս բազմաթիվ ու բազմապիսի կիրառություններով՝ թե նախադասության համազոր անդամների և թե համադաս նախադասությունների ու խոսքի տարբեր հատվածների միջև: Նկատելի է սակայն, որ եթե առաջին դեպքում նրանց դերը սահմանափակվում է հիմնականում թվարկման նշանակությամբ, ապա նախադասությունների միջև նրանց իմաստային հնարավորությունները անհամեմատ մեծանում են: Չէ՞ որ նախադասությունները,

¹ Թվարկման ու միավորման այս հարաբերությունը բնականաբար ենթադրում է նաև մեջ բերվող փաստերի ու իրողությունների զուգաբանումը, հավելումը մեկը մյուսի վրա: Այս հատկանիշն է նկատի ունեցել Մ. Աբեղյանը, երբ նման կապակցությունները (այսինքն միավորիչ շաղկապներով եղած կապակցությունները) անվանել է հավելական (տե՛ս նրա «Աշխարհաբարի շարահիւսութիւնը», Վաղարշապատ, 1912, էջ 327), զետեղելով բաղիուսական կապակցության բաժնում, որի մեջ մտցված են նաև մասնական, մեկնական, ժամանակի, բաղդատության, մակաբերական կապակցություն ստեղծող շաղկապներն ու շաղկապական բառերը՝ իբրև համադասական հարաբերությունների արտահայտող: Այդ բաղիուսական կապակցության բաժնից միայն հավելականն է, որ նույնանում է մեր կողմից նշված միավորիչ շաղկապների հետ, մինչդեռ մյուսները շաղկապական բառեր են՝ համադասական կամ ստորադասական հարաբերություններ արտահայտող, բացառությամբ մեկնական շաղկապների, որոնք միավորիչ շաղկապների հետ ընդհանուր ոչինչ չունեն և համադասական ու ստորադասական շաղկապների կազմում հատուկ դիրք են զբաղում:

որպես հաղորդակցման միավորներ, իրար նկատմամբ իմաստային բազմազան հարաբերությունների մեջ գտնելու ավելի մեծ հնարավորություններ ունեն, քան նախադասության պարզ անդամները:

Միավորիչ շաղկապների այն խմբավորումը, որ կատարել ենք մենք, հիմնված է հենց այն նշանակությունների հաշվառման վրա, որոնք առավել պարզությամբ ու որոշակիությամբ ընդգծվում և երևան են գալիս միավորական հարաբերությունների ընդհանուր ֆոնի վրա: Այժմ անցնենք այդ շաղկապների բուն կիրառություններին:

Ա) Թվաբկման նշանակությունն ընդգծող միավորիչ շաղկապներ— Թվարկում արտահայտելը այս կամ այն չափով հատուկ է միավորիչ բոլոր շաղկապներին: Ձէ՞ որ այս շաղկապների օգտագործմամբ հաջորդաբար մեջ են բերվում ու միավորվում են իրար նկատմամբ հավասար արժեք ներկայացնող կամ այդպես դիտակցվող առարկաներ, հատկանիշներ և այլն: Սակայն թվարկման նշանակությունը հատկապես շեշտվում է այն դեպքում, երբ միավորիչ շաղկապները հանդես են գալիս նախադասության համազոր անդամների կապակցման դերով: Նկատելի է, որ երբ թվարկվող անդամները երկուսից ավելի են, շաղկապը դրվում է վերջին անդամից առաջ. օրինակներ՝

Սուրիկը, Աշոտը և Մարտիրոսը լավ ընկերներ են: Նրանք ամբողջ օրը երգեցին, պարեցին և ուրախացան: Սա մի նրբակազմ, բարձրահասակ և գեղեցիկ երիտասարդ էր— (Մուր. 172): Որքան երախտավոր և սիրելի անուններ են ոգեկոչում Երևանի շատ ու շատ պողոտաներ և փողոցներ (ՍԳ, 1957, № 5, 195): Մի ժամանակ ես ու ձեր հայրը լավ բարեկամներ և լավ հարևաններ էինք... (ՆԴ, 16): Առանձին թաղ էին կազմում ներկարարները, համետ կարողները, բրուտները և կաշեգործները (ԱԲՆ, 668): Մեծամեծներ եկան հավաքվեցին մարմար ավազաններով ու շատրվաններով լի այգիները... (ՀԹՆԺ, 3, 283):

Շաղկապվող նախադասության անդամները հաճախ տարբեր ծավալի ու կառուցվածքի են՝ «Նա ազնիվ և քն

ջանկության համար անշափ մտահոգվող ընկեր է»։ «Նրանք լուռ և աշխատելով շնայել վռնողային... նորից վիրակապեցին նրանց (ՖՆԳ, 94)»։

Բարդ նախադասության մասերի միջև օգտագործվելիս այս շաղկապները այս կամ այն չափով պահպանում են թվարկում արտահայտելու իրենց նշանակությունը (թեպետ ոչ այն որոշակիությամբ, ինչպիսին նախադասության համազոր անդամների միջև)։

Թվարկումը արտահայտչական նոր ուժ ու սաստկություն է ստանում, երբ կապակցվող մասերի միջև հանդես են գալիս կրկնադիր միավորիչ շաղկապներ։ Այս դեպքում ևս թվարկման նշանակությունը ավելի ցայտուն կերպով է արտահայտվում, երբ միավորվում են նախադասության համազոր անդամներ ու բառակապակցություններ։ Այդ կրկնադիր միավորիչ շաղկապներն են և՛... և՛..., թե՛... թե՛..., էլ... էլ..., ո՛չ... ո՛չ...։ Բերենք համապատասխան օրինակներ՝

Թե-թեի կապված, կող-կողի հպված՝ Ե՛վ քայլում էին, և՛ նայում առաջ (ՀՀԵ, 95)։ Տեսա մի մարդ արդեն հասուն, Ե՛վ կենսախինդ, և՛ ամուր (ԳՍԲ, 78)։ Այդ գիտակցությունն էր ահա մեր զորավիզը, մեզ ոգևորող, առաջ մղող խթանը, մեզ արհամարհել տվողը և՛ քաղց, և՛ զրկանք, և՛ վտանգ, և՛ մահ։

Հետաքրքրական է հետևյալ օրինակը, ուր թվարկվող անդամները ունեն իրենց ստորադաս նախադասությունները. «Տերտերը մոտենում էր սեղանին և՛ ուրախ, որ ազատվեց հոգսից, և՛ չարացած, որ նավթ չեն լցրել նրազի մեջ... (ԱԲԵ, 458)։

Համադաս նախադասությունների կապակցությունը կրկնադիր և՛... և՛ շաղկապով հանդիպում է մեծ մասամբ չափածոյում և հիմնականում ոճական արժեք ունի (տե՛ս էջ 126)։ Արձակում հանդիպող կիրառությունների մեջ ևս հիշյալ ոճական-արտահայտչական նշանակությունը մասամբ պահպանվում է. օրինակներ՝

Եվ հիշում եմ քո անմոռաց զրույցները, և քո համբերանքի շիբուխի խաղաղ ծուխը աչքիս առջև է դեռ, և քո հան-

գիստ հնամենի ձայնը ականջումս է տակավին... (ԱԻ, 270)։
Ու դեռ մնում է այն հողաշեն ակումբը, եղեգնյա կտուրով,
և ծփում է վարագույրը, և բաց աչքերով մի սերմնացան սև
հողերի վրա առատությամբ շաղ է տալիս ոսկի հատիկներ
(ԱԲՆ, 244)։

Թվարկման նշանակություն է արտահայտում նաև թե՛
կրկնադիր միավորիչ շաղկապը, որ գերազանցապես օգտա-
գործվում է նախադասության համագոր առդամների կա-
պակցման համար. օրինակներ՝

Թե՛ հին և թե՛ նոր գրականությունը նրա համար բավա-
կանացուցիչ նյութ չէ պատրաստել (Բաֆ., 9)։ Լավ ժամա-
նակներում ենք ապրում, ընկերներ՝ Թե՛ երկրի վրա, թե՛
տիեզերական անեզր տարածություններում իրագործվում են
մարդու ամենահամարձակ երազանքները (ՍՀ, 1961, մարտի
19, 1)։ ...Մենք աստիճանաբար կհասնենք այն բանին, որ
քաղաքը լրիվ ապահովված կլինի թե՛ խմելու, թե՛ ոռոգման
և թե՛ տեխնիկական ջրով (Եր., 1957, նոյ. 21, 2)։ Այդ ավելի
լավ թե՛ ձեզ և թե՛ ինձ համար... (ՆԴ, 15)։

Գրական լեզվում շատ հազվադեպ է հանդիպում գուգա-
դիր գործածություն ունեցող բարբառային համ... համ շաղ-
կապը. օրինակ՝ «...Բերդը շուտով առնելու ճարը բերդի տակը
գտնվող վառողի ամբարը տրաքացնելն է. համ ճամփա բանա-
լու համար, համ թշնամուն սարսափեցնելու համար
(ԱԻ, 404)»։

Կրկնադիր էլ շաղկապը ունի շարադասական այն առանձ-
նահատկությունը, որ մյուս շաղկապների նման կապակցվող
մասերից առաջ չի դրվում, այլ պահպանում է առանձին գոր-
ծածությամբ ունեցած իր ետադաս դիրքը։ Հիշյալ շաղկապը
համադաս նախադասությունների շաղկապման դերով գրեթե
չի օգտագործվում. օրինակներ՝

Էլ ի՞նչ երկարացնեմ, գելերս վրա են տալի, իրեն էլ
են ուտում, ձիուն էլ (ՀԹ, 402)։ Ձեզանից լավ՝ երգ չի տեսել
Դարնան օրը ոսկեփայլ, Դուք եք երգն էլ, խաղն էլ, լույսն էլ.
Ու առանց ձեզ՝ ողջ մըռայլ (ՀԹՆ, 2, 189)։

Տարբեր արտահայտչական երանդավորում է ստանում

կրկնադիր էլ շաղկապը, երբ թվարկվող անդամների նկատմամբ նախադաս դիրք է գրավում: Այս դեպքում նախադասության ստորոգյալը սովորաբար դրվում է շեշտվող անդամներից հետո. օրինակներ՝

Բայց խոսում է տես, Փոքրիկ Ալիկը, Բարձել է կարծես իր ավտոն լիքը: էլ խաղող, էլ տանձ, Զմերուկ, խնձոր, Քըշում է անսանձ Ընկած սար ու ձոր (ԳՍԲ, 209): ...Նա ամեն ինչ կազմակերպում է. էլ կինո գնալ, էլ թատրոն, էլ հանդիպում, էլ ղեկուցումներ (Ավ., 1960, նոյ. 15, 3):

Կրկնադիր այս շաղկապը, ունենալով ռճական յուրահատուկ արժեք, ժողովրդական խոսակցական լեզվի կոլորիտ ստեղծելու արժեք, գերազանցապես տարածված է գեղարվեստական գրականության մեջ: Հրապարակախոսական և մանավանդ գիտական բնույթի գործերում գրեթե չի գործածվում:

Ու շաղկապը կրկնական գործածությամբ ձեռք չի բերում կրկնադիր և՛... և՛ շաղկապին հատուկ սաստկական նշանակությունը. համեմատի՛ր՝ «Եվ մարդկային սիրո առջև աստված ինքն էլ խոնարհվեց, Ու ծուխ դարձավ ու համբարձավ ու ամպ դարձավ ու ցրվեց (ՀՇ, 280):

Թվարկման նշանակություն է արտահայտում նաև ոչ... ոչ կրկնադիր շաղկապը, սակայն արդեն ժխտական իմաստով, ինչպես՝

Զվարթ ու թեթև թափառել ազատ, Եվ ոչ հայրենիք, ոչ տուն ունենալ, ոչ անուն, ոչ զենք, ոչ փառք, ոչ արծաթ... (ՎՏ, 197): Ոչ խորաթափանց կանանց աչքում Արարատ Սուրենը երևում էր անհոգ, ամեն ինչից գոհ մի մարդ, որը ո՛չ ցանկություն է ունենում, ո՛չ հետաքրքրություն, ոչ էլ՝ խոր զգացումներ ու տանջանքներ (ՀՔ, 8):

Էլ-ի փոխարեն և-ի գործածությունը՝ ժխտվող վերջին անդամի կապակցման համար, ավելի շատ հանդիպում է անցյալ դարի հեղինակների մոտ, ինչպես՝ «Ոչ հագնվել էր, ոչ լվացվել և ոչ սանրվել էր (Բաֆ, 23):

Ժխտվող վերջին անդամի կապակցման համար և-ի հետ միասին հաճախ օգտագործվում է նաև էլ շաղկապը. օրինակ՝

«Երբ Տիտոսը մոտեցավ, մարդն ասես ոչ տեսավ և ոչ էլ նրա ոտնաձայնը լսեց (ԱԲԵ, 424)»:

Երբ ժխտական նշանակությամբ թվարկվում են նախադասության բազմակի ստորոգյալները, ապա պատահում են դեպքեր, երբ առաջին ոչ բաղադրիչի փոխարեն ստորոգյալն է ժխտական ձևով գործածվում. օրինակ՝

«Լալը համաձայնեց... բայց ընդգծեց, որ եթե այդպիսի ճնշում գործադրվում է, ապա, համենայն դեպս, այն Հնդկաստանի օգտին չէ, և ոչ էլ հնդկական ուղղման օգտին (այսինքն)... ոչ Հնդկաստանի օգտին է և ոչ էլ հնդկական ուղղման օգտին (ՄՀ, 1957, նոյ. 14, 4)»:

Երբ ոչ... ոչ կրկնադիր շաղկապով կապակցվող նախադասության անդամները տվյալ նախադասության ստորոգյալից անմիջապես նախադաս կամ ետադաս են, ապա այդ ստորոգյալը անպայման ժխտական ձևով է գործածվում. օրինակ՝ «Ո՛չ Սուրիկը, ո՛չ Տիգրանը, ոչ էլ Արամը չկարողացան խնդիրը վճռել»: «Չկարողացան խնդիրը վճռել ո՛չ Սուրիկը, ո՛չ Տիգրանը, ոչ էլ Արամը»: Իսկ երբ ժխտվող կապակցությունների նկատմամբ ստորոգյալը միջադաս դիրք է գրավում, այդ դեպքում այն արդեն դրական ձևով է հանդես գալիս, ինչպես՝ «Ո՛չ Սուրիկը կարողացավ խնդիրը վճռել, ո՛չ Տիգրանը, ոչ էլ՝ Արամը»:

Կրկնադիր շաղկապների այս բաժինը ավարտելու համար հարկ ենք համարում նշել հետևյալը.

Կրկնադիր շաղկապները հիմնականում հանդես են գալիս նախադասության համազոր անդամների շաղկապման դերով: Նրանց կիրառությունները համադաս նախադասությունների կապակցման համար այնքան էլ տարածված չեն: Նրանց շեշտադրությունը կանոնավորված չէ: Այսպես՝ և... և, քե... քե, ոչ... ոչ շաղկապները հանդես են գալիս հավասարապես թե շեշտով և թե առանց շեշտի: Բոլորովին զուրկ է շեշտի գործածությունից էլ կրկնադիր շաղկապը: Կրկնադիր շաղկապ-

1 Ոչ... ոչ կրկնադիր շաղկապի հետ գործածվելիս էլ շաղկապը զուրկ չէ նաև եղանակավորող բառի արժեքից՝ «նույնիսկ» նշանակությամբ:

ների օգտագործմամբ կապակցվող մասերը ստանում են հավասար արժեք:

Այս շաղկապների կրկնվող բաղադրիչների ոչ չափավոր գործածությունները թվարկվող նախադասության անդամներից առաջ երբեմն ծանրացնում են հեղինակի ոճը, որով այդ շաղկապները զրկվում են խոսքին կենդանություն ու սաստկություն տալու այն հատկանիշը, որ հատուկ է նրանց՝ չափավոր և ըստ հարկին գործածությամբ:

Բ) Հավելական նշանակությունն ընդգծող միավորիչ շաղկապներ—Քանի որ տարբեր փաստերի ու իրողությունների միավորումը անպայման ենթադրում է նաև այդ փաստերի ու իրողությունների ավելացումը, գումարումը մեկը մյուսի վրա, ապա պատահական չէ, որ միավորիչ շաղկապները ունեն նաև հավելական նշանակություն: Այս դեպքում ևս այդ նշանակությունը հավասարապես նույն աստիճանով հանդես չի գալիս: Կան միավորիչ շաղկապներ, որոնք առանձնացվել են լեզվում այդ հարաբերությունը ավելի որոշակիորեն նշելու համար: Այսպիսով, հավելական այս նշանակությունը հատուկ լինելով ընդհանրապես միավորիչ բոլոր շաղկապներին, ավելի ընդգծված կերպով երևան է գալիս նրանցից մի քանիսի մոտ: Հիշյալ շաղկապները իրենց այդ նշանակության հետ մեկտեղ ունեն նաև այս կամ այն աստիճանի սաստկական երանգ: Անհրաժեշտ է նշել, որ այս շաղկապները հանդես են գալիս բացառապես նախադասության անդամների կապակցման դերով: Ահա դրանք. նաև, ինչպես նաև, ինչպես և, նույնպես, նույնպես և, ինչպես... այնպես և, ինչպես... այնպես էլ, ինչպես... նույնպես և, ինչպես... նույնպես էլ, ոչ միայն... այլև:

Այժմ բերենք այդ շաղկապների կիրառություններից օրինակներ.

Նորից ուշաթափվելով և նորից ուշքի գալով, աչքերը բաց էր արել և գլխի վրա նշմարել Սուլյանի ու Դավիթ Զարգարյանի հուզված դեմքերը, նաև մի զույգ անկեղծ ցավակցությունամբ լի սիրուն աչքեր (Շիրվ., 258): Դյուցազնական-նահապետական լոռին իր շքեղ բնությունով, իր ավանդներով

ու սովորույթներով, նրա հինավուրց ժողովուրդն իր կենսահայացքով, իր ցավերով, նաև իր պայքարով ազատության ու հրջանկության համար՝ եղան Օհաննեսի ներշնչարանը (ԱԻ, 439): Ուրախ, Սիրիի ու Ղազախստանի, ինչպես նաև երկրի մյուս շրջաններում, վիթխարի հնարավորություններ կան անասնաբուծության զարգացման համար (ՍՀ, 1956, օգոս. 1, 1): Պատերազմից հետո լեհերեն լույս տեսան հայ արձակից կատարված առաջին թարգմանությունները, Ստեփան Զորյանի «Սպիտակ քաղաք» և «Մի կյանքի պատմություն» վեպերը, ինչպես նաև նրա վիպակներն ու պատմվածքները (ԳԹ, 1956, նոյ. 23, 4): Երաժշտության ասպարեզում, ինչպես և գրականության ու կերպարվեստի մեջ հեղինակը կարող է ոչ հայկական թեմաներ ու բովանդակություն ընդգրկել, բայց չէ՞ որ դրանք պետք է հայերեն գրվեն, ազգային ոճ ունենան (ՍԱ, 1957, № 4, 31): Ներկա ժամանակի եզակի թվի առաջին, երկրորդ և երրորդ դեմքերում, նույնպես և՛ հոգնակի թվի երրորդ դեմքում «er» վերջավորություն ունեցող բայերը կարդացվում են միատեսակ, թեև տարբեր են գրվում (Ֆրանսերեն լեզվի դասագիրք, Երևան, 1954, 63): Մանր կերպով հարկվեցին բոլոր դասակարգելի և բոլոր զբաղմունքների մարդիկ՝ բոլորը պետք է հայթայթեին հանդերձանք, զենք, նույնպես ոսկի ու արծաթ և, բացի դրանից, զանազան պարենեղենի պաշարներ ու ամեն տեսակ փոխադրական միջոցներ (ՀՄՔՏ, 173):

Նաև և նույնպես շաղկապները հազվագեղ են հանդես գալիս հավելական նշանակությամբ: Նրանք հիմնականում տարածված են որպես ներառական նշանակություն արտահայտող շաղկապներ: Ինչպես նաև, ինչպես և, նույնպես և շաղկապները այնքան էլ տարածված չեն գեղարվեստական գրականության լեզվում և հանդիպում են մեծ մասամբ գիտական և հրապարակախոսական բնույթի գործերում:

1. Եվ նույնպես ձևով այս շաղկապը հազվագեղ է հանդիպում. օրինակ՝ «Էսում էր սրտի դռն զեղմունքը անբախտ կնոջ, որ կորուսյալ թագավոր-ամուսին ուներ, և նույնպես կորուսյալ թագաժառանգ-որչի (Բաֆ., 414):»

Նախադասության նախորդ համազոր անդամի հետ կապակցություն ստեղծող այս հավելական միավորիչ շաղկապները միաժամանակ ունեն շաղկապվող մասը յուրահատուկ կերպով ընդգծելու, շեշտելու հատկանիշ: Կարծես հեղինակը քիչ ուշացած մեջ է բերում լրացուցիչ մի նոր փաստ կամ տվյալ և կցում նախորդին (կամ նախորդներին,) որով այն առանձնացվում է և հատուկ կերպով նշվում: Այդ պարզ երեվում է, երբ հիշյալ շաղկապները փոխարինում են և-ով: Սաստկական երանգի արտահայտման մասնակի տարբերություններ են նկատվում նաև հավելական մյուս շաղկապների կիրառություններում:

Հնացած գործածություն պիտի համարել այլև բառի «նաև» նշանակությամբ գործածությունը. «Հինավուրց ամրոցը... պատսպարված էր ամեն կողմից թե՛ բնության և թե՛ արհեստի ամրություններով,—Հյուսիսային կողմից՝ պաշտպանում էին նրան, բացի կիսաբոլոր պարիսպներն ու աշտարակները, այլև Գեղարդասարի այն գահավանդները, որոնք աստիճանաբար բարձրանալով՝ կցվում էին Գեղա լեռան հետ (Մուր., 8): Լեզվի ներկա շրջանում այդ շաղկապը հանդես է գալիս սոսկ ո՛չ միայն... այլև զուգադիր գործածությամբ:

Բացի առանձին գործածություն ունեցող շաղկապներից, հավելական նշանակություն են արտահայտում նաև ինչպես... այնպես և, ինչպես... այնպես էլ, ինչպես... նույնպես և, ինչպես... նույնպես էլ՝ զուգադիր շաղկապները, որոնք կապակցում են բացառապես նախադասության անդամներ: Սրանք կրկնադիր միավորիչ շաղկապների նման շեշտում են իրենցով կապակցվող մասերը՝ հավասար արժեք տալով նրանց: Այսպիսով այս շաղկապները ունեն հավելական նշանակություն՝ սաստկական երանգով: Կապակցվող մասերը ավելի խիստ կերպով են շեշտվում ոչ միայն... այլև զուգադիր շաղկապի կիրառության ժամանակ: Բերենք օրինակներ՝

¹ Այս զուգադիր շաղկապները ավելի տարածված են դիտական, քաղաքական և լրագրային գրականության լեզվում, չնայած որ հանդիպում են նաև գեղարվեստական գրականության մեջ:

Նրա կյանքը լի է արկածներով ու սխրանքներով, որոնց միջով անցել է նա ինչպես պատերազմական, այնպես և խաղաղ տարիներին (Եր., 1957, դեկտ. 3, 1):

Դա... մեծարժեք. ներդրում է ինչպես հայ, այնպես էլ համաշխարհային լեզվաբանական մտքի պատմության մեջ (ՍՀ, 1957, նոյ. 16, 3): Ինչպես ամեն բարդություն, նույնպես և իսկական բարդությունը ծագում է շարահյուսական կապակցությունից (Մ. Աբեղյան, Հայ. լեզ. տես., Երևան, 1931, 192): Միաժամանակ իշխանին ծառայելը, ստրկանալը և հաճոյանալը ֆիզիկական պահանջ էր ինչպես նրա, նույնպես և¹ իր ընկերոջ համար (ԴԴ, 3, 274):

Հայերը լեռներից կովում էին մեզ հետ ոչ միայն զենքերով, այլև քարերով ու փայտերով: Եվ կովում էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք (Րաֆ., 518): Յուրահատուկ է ոչ միայն Մահարու հումորը, այլ նաև² մանկության ու պատանեկության թեմայի բացահայտման նրա սկզբունքը (ԳԹ, 1957):

Այլ շաղկապին հաջորդող և կամ նաև բաղադրիչների փոխարեն նույնիսկ եղանակավորող բառն է օգտագործված հետևյալ օրինակում. «Կույա քեռին, որ դուռը բացեց Ուլյայի համար, անմիջապես ճանաչեց նրան, բայց, ինչպես Ուլյային թվաց, նա չցուցաբերեց ոչ միայն ուրախություն, այլ նույնիսկ սիրալիություն (Ֆեթ 343)»:

Սխալ գործածություն է ոչ թե... այլ զուգադիր շաղկապի անանդիայով ոչ միայն բաղադրիչի փոխարեն ոչ թե-ի կիրառությունը, ինչպես՝ «Դա ոչ թե ախորժելի, այլև սրտառու է (ԴԴ, 78)»:

Կիրառական նշանակությամբ զուգադիր հավելական շաղկապներին բավական մոտ է ոչ այնքան... որքան շաղկա-

1 Րաֆֆու մոտ հանդիպում է նաև որպես... նույնպես և զուգադիր շաղկապը, որն այժմ իսպառ դուրս է եկել գործածությունից, ինչպես՝ «Նա... յուր ձեռքերի վրա սնուցել էր որպես... իշխանին, նույնպես և նրա որդի Սամվելին (Րաֆ., 485):

2 Եվ-ի փոխարեն նաև շաղկապի կիրառությունը կարծես ավելի է ընդգծում այդ զուգադիր շաղկապի սաստկական կրանգը:

պահան հարադրությունը: Սակայն եթե նախորդ շաղկապներով կապակցվող միավորները հավասար արժեք էին ձեռք բերում, ապա այս շաղկապի գործածության ժամանակ կապակցվող երկրորդ մասը ավելի մեծ կարևորություն ու արժեք է ստանում: Համեմատիր հետևյալ օրինակները՝ «Մացակ Ավագյանի տունը նշանավոր է գյուղում ոչ այնքան իր երկու հարկերով ու կղմինդրե տանիքով, որքան այդ տանիքին բույ՝ դրած աղավնիների անհամար բազմությամբ (նՁՀ, 20)» և «Մացակ Ավագյանի տունը նշանավոր է գյուղում ինչպես իր երկու հարկերով ու կղմինդրե տանիքով, այնպես էլ այդ տանիքին բույն դրած աղավնիների անհամար բազմությամբ»:

Հավելական նշանակությունը հաճախակա՛ն (այս մասին տե՛ս էջ 119) բնույթ ունի, երբ կապակցվող մասերի միջև հանդես են գալիս ընդ որում, ըստ որում շաղկապները, որոնցով սովորաբար կապակցվում են լրացուցիչ բացատրություններ, դիտողություններ և այլն. օրինակներ՝

Հնգամյակի ընթացքում շահագործման են հանձնվել 519 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ, ընդ որում գրանցից շատերը, ինչպես հայտնի է, կառուցվել են Սովետական Միության օգնությամբ (Կր., 1958, մարտ 12, 4): Ընթացիկ տարվա հունվար և փետրվար ամիսներին արդյունաբերական արտադրության երկամսյա պլանը կատարվել է 103,5 տոկոսով, ընդ որում արտադրանքի թողարկումը անցյալ տարվա համապատասխան ժամանակամիջոցի համեմատությամբ ավելացվել է 11 տոկոսով (ՍՀ, 1958, մարտ 15, 1): Ըստ մամուլի հաղորդումների, քննարկում էին Ինդոնեզիայի հարցը (ըստ որում հաղորդում է արել ոչ այլ ոք, բայց եթե Հոլանդիայի ներկայացուցիչը)... (ՍՀ, 1950, մայ. 9, 4):

Ըստ որում շաղկապը նշանակությամբ ու կիրառությամբ գրեթե համարժեք լինելով առաջինին, ունի նաև հիմունքի նշանակությամբ մի յուրօրինակ գործածություն. առաջին համադաս նախադասությամբ նշվում է մի այնպիսի դեպքի կատարման մասին, որը մասամբ հիմնավորվում է կողմնակի, լրացուցիչ պատճառաբանության արժեք ունեցող երկրորդ համադաս նախադասության բովանդակությամբ. օրինակ՝

Վերջինս արքայի հրամանով շտապել էր իշխանին օգնության, ըստ որում բուն բանակը փոքր ինչ պիտի ուշանալ (Մուր., 458): Իշխանը հանգիստ առավ արքունիքում և սկսավ խորհել նոր ծրագրերի մասին, ըստ որում հանգամանքները փոխվել էին արդեն և նա պարտավոր էր հարմարվել նրանց (Մուր., 409):

Ընդ որում շաղկապը առավելապես տարածված է հրապարակախոսության լեզվում, իսկ ըստ որում—ը՝ նաև գեղարվեստական գրականություն:

Հավելական նշանակությունից զերծ չեն նաև մանավանդ, նամանավանդ եղանակավորող բառերը, որոնք, նշելով կապակցվող երկրորդ մասի առավելությունը նախորդի նկատմամբ, միաժամանակ հատուկ կերպով շեշտելով կապակցում են այն. օրինակ՝ «Միքայելը բորբոքված աչքերով դիտում էր տիկնոջ գիրուկ ուսերը, կանոնակազմ իրանը, մանավանդ նրա կիսաբաց կուրծքը (Շիրվ., 60): Ինչպես տեսնում ենք, այստեղ չկա ոճական անմշակության կամ սխալ ոճի, նամանավանդ նոր հայերեն սովորելու կամ հայ լիինելու հարց (ԳԹ, 1958, հուն. 8, 2)»:

Ուր մնաց (թե, ուր), մնաց, թող թե և այն էլ եղանակավորող բառերը նույնպես սաստկական նշանակություն ունեն: Սակայն նրանք հեռու են բուն շաղկապական կիրառություն ունենալուց. օրինակներ՝

Կինը չէր հետևում նրա կյանքին, ուր մնաց շարժումներին (ԴԴ, 3, 63): Զգիտեմ,—ժպտաց նա,—թերևս իմ սիրով: Իմ սերը կարող էր քարը հալեցնել, թող թե կենդանի կնոջ սիրտը (ԶԼՄԻ, 217): Բազմությունը, այն էլ ոչ սովորական բազմությունը, շուք է տալիս մեր դպրոցին, իսկ մեզ երկյուղ են ներշնչում, քանի դեռ ավարտական վկայականները չենք ստացել (ՍԶ, 194):

Գ) Ներառական հարաբերություններ. նշող շաղկապներ—Արդի հայերենի ներառական շաղկապներն են նաև, նույնպես, ևս, էլ, և: Սրանց մի մասը նախադաս գործածություն ունի շաղկապվող անդամի նկատմամբ, իսկ մյուս մասը՝ հտադաս: Հայոց լեզվի զարգացման տարբեր շրջաններից

ժառանգված այս շաղկապները իմաստային հարուստ երանգ-
ներ ու բազմազան ոճական կիրառություններ ունեն, որոնք
հարստացնում են հայերենի համադասական կապակցություն-
ներ տրամաբանական շաղկապման բազմազան եղանակներով:

Ներառական ենք համարում այն շաղկապները, որոնք,
ի տարբերություն համադասական մյուս շաղկապների, մտքի
կապ են ստեղծում խոսքի տարրեր հատվածների միջև,
առանց շաղկապվող երկուդե կողմի առկայությանը՝ նույն նա-
խադասության կազմում: Նախադասության այն մասը, որին
վերաբերում է շաղկապը, մի լրացուցիչ փաստ է, մի հավե-
լում՝ նախորդ նախադասության կամ պարբերության մեջ
նկարագրվող իրողությանը կցվող: Ուշագրավ է այն հանգա-
մանքը, որ ներառական շաղկապների օգտագործման ժամա-
նակ իմաստային կապի մեջ գտնվող նախադասություններում
կամ պարբերություններում բովանդակության տեսակետից
ընդհանուր է միայն այն մասը, որ չի շաղկապված: Բերենք
մի օրինակ՝ «Ներխանները կարդացին այդ գիրքը: Այդ գիրքը
կարդաց նաև Սուրենը»։ Ինչպես տեսնում ենք, նախորդ նա-
խադասության հետ ընդհանուր է չշաղկապված մասը, այ-
սինքն ընդգծված մասը: Ինչ վերաբերում է շաղկապվող եզ-
րին (Սուրեն), ապա այն կապվում է նախորդ նախադասու-
թյան երեխաները՝ անդամի հետ, որպես համանման գործո-
ղություն կատարող:

Նկատելի է, որ ներառական հարաբերությունների ար-
տահայտման համար անհրաժեշտ է կապակցվող նախադա-
սությունների կամ պարբերությունների բովանդակության
որոշ ընդհանրություն: Չէ որ, օրինակ, անիմաստ կլիներ նաև
շաղկապի այսպիսի մի գործածություն. «Սուրիկը շատ էր սի-
րում Երվանդին: Նրան առում էր նաև վահրամը»:

Հետաքրքրական են նաև այն դեպքերը, երբ որպես շաղ-
կապվող եզր հանդես է գալիս գործողության կամ եղելության
զաղափար արտահայտող ստորոգյալը. այս դեպքում արդեն
բովանդակության ընդհանուր կողմը, նրա զուգադրման հա-
մար անհրաժեշտ առանցքը այլ անդամներ են. օրինակ՝
«Սուրիկը նաև երգեց»։ այստեղ կապող ընդհանուր օղակը

Սուրիկն է. նա է, որ ուրիշ գործողությունն էլ է կատարել (ասենք թե՛ պարել է, արտասանել է և այլն), մինչդեռ ստորագյալը (երգեց) այն շաղկապվող եզրն է, որը կապվում է պարելու, արտասանելու և Սուրիկի կատարած այլ գործողությունների հետ: Իսկ «Երգեց նաև Սուրիկը» օրինակում ճիշտ հակառակն է նկատվում. կապող ընդհանուր օղակը երգելու գործողությունն է, իսկ շաղկապվող եզրը՝ Սուրիկը:

Ներառական շաղկապների բնորոշ հատկանիշներից մեկն էլ այն է, որ նրանց օգտագործմամբ ակնարկվում է նաև այն, ինչ նախորդ մասերում հատուկ կերպով չի նշվել. օրինակ, ասենք թե հնչյունական որոշ օրինաչափություններ թվարկելուց հետո հեղինակը գրում է. «Հետաքրքրական են նաև այն դեպքերը, երբ...». այս սկզբնավորումից ակնարկվում է, որ նախորդ նախադասության կամ պարբերության մեջ նկարագրված դեպքերը հետաքրքրական են եղել կամ հետաքրքրական պիտի համարել, թեև այդ մասին (հետաքրքրական լինելու մասին) այնտեղ կարող է խոսք անգամ եղած չլինել:

Իմաստային նման զուգահեռ իրողություններ ակնարկելու այս հատկանիշն է պատճառը, որ շատ հաճախ հանդիպում ենք այդ շաղկապների՝ առաջին հայացքից տարօրինակ թվացող կիրառությունների. այսպես, փողոցում հանդիպելուց հետո, ընկերներից մեկը, առանց նույնիսկ բարևելու, բացականչում է՝ «Հրանտն էլ հեռուստացույց գնեց»: Էլ շաղկապի այս կիրառությամբ ակնարկվում է, որ խոսակցության այս պահից առաջ որևէ ժամանակում կատարվել է նման մի գնում ինչ-որ ծանոթ մեկի կողմից: Այժմ քննենք այդ շաղկապների կիրառությունները առանձին-առանձին:

Նաև շաղկապը միշտ օգտագործվում է շաղկապվող եզրից նախադաս. օրինակներ՝

Գեորգին ներքին ուժեղ ապրումներից հետո հրապարակորեն խոստովանում է իր մեղքը: Արմենը վեհանձնորեն ներում է ընկերոջը: Գեորգին հեռանում է լեռները, նրա հետ գնում է նաև Գայանեն, որպեսզի միասին սկսեն նոր կյանք (ՍՀ, 1957, նոյ. 7, 4): Նրանք աչքաթող չեն արել նաև այն

ցույցերը, որ նկարագրված են «Искра»-ի № 13 և 14-ում... նրանք աչքաթող չեն անի, եթե կենդանի մնան, նաև ռևոլյուցիան, որ կպահանջի մեզնից ամենից առաջ փորձառութուն ազդեցիկացի մեջ (ԼԵ, 5, 685):

Ոճական և իմաստային երանգներով շատ հարուստ է ներառական էլ շաղկապը, որը շաղկապվող անդամի նկատմամբ միշտ ետադաս է դրվում: Նկատելի է, որ էլ-ը այնքան սերտ է կապված շաղկապվող բառի հետ, որ կարծես վերածվում է վերջահար միավորիչ մասնիկի: Նա բառական ինքնությունությունից գրեթե զուրկ է և այս տեսակետից շատ է զիջում նաև, նույնպես, մասամբ էլ ևս, շաղկապներին: Այժմ բերենք օրինակներ՝

Գեղի հարսերն էլ էին ծիծաղում Պետու վրա, բայց նա նեղանալ չունեի (ԱԲՆ, 30): Գուցե մեծ լինի զարմանքդ, սիրելի ընթերցող, եթե ասեմ, որ ես էլ չգիտեմ (ԾԶ, 398): Նույնիսկ ձիերը կախել էին ականջները, քրտինք էր գոլորշիանում նրանց մարմնից, ձիերը մրսում էին խոնավությունից, բայց նրանք էլ անշարժ լսում էին (ԱԲՆ, 167):

Այս շաղկապի նշանակությունը մի քիչ փոխված է հետևյալ օրինակներում. «Տիգրանը ընդունակ երեխա է: Նա աշխատասեր էլ է»: «Նա գործարանում աշխատում է որպես փականագործ: Սովորում էլ է»: Այս նախադասություններում նա իմաստով մոտենում է նաև շաղկապին: Որպես կիրառական առանձնահատկություն պետք է նշել, որ ստորոգյալի հետ կապվելիս նա դրվում է հանգույցից կամ օժանդակ բայից առաջ:

Երբ զուգադրվող մասերի միջև իմաստային որևէ ընդհանուր կողմ չի դրսևորվում, այդ դեպքում էլ շաղկապը ձեռք է բերում «իսկ» նշանակությունը, ինչպես՝

Ոմանք տանուտերին էին խնդրում, ոմանք գնացողներին էին բռնում, ոմանք էլ Սիմոնի հետ էին կովում յուր «շաշու-թյան» համար (ՀԹՆԺ, 3, 21): Այնտեղ էր ապրում Եփրեմի ընտանիքը՝ օրվա մասն այնտեղ էր անցկացնում և Մկրտումի կինը՝ Շողերը: Սանամ հորքուրն էլ (=իսկ Սանամ հորքուրը)

եթե ցուպին հենվելով շաբաթը մի անգամ գալիս էր հորանց տունը, ներքին տունն էր գնում (ԱՔՆ, 472):

Նկատելի է, որ ևս շաղկապը, որը անցյալ դարի գրական լեզվում լայն գործածություն ուներ, այժմ աստիճանաբար դուրս է մղվում լեզվից, մասնավորապես գեղարվեստական գրականության լեզվից՝ փոխարինվելով էլ-ով: Սակայն այս վերջին շաղկապը, որը կենդանի խոսակցական լեզվի ամենատարածված ներառական շաղկապն է, առայժմ դեռ մուտք չի գործում գիտական և հրապարակախոսական գրականության լեզվում, ուր ևս շաղկապը դեռ իր դիրքերը պահպանում է: Ներառական հարաբերություններ նշելիս ևս շաղկապը հտադաս գործածություն ունի շաղկապվող բառի նկատմամբ: Նա (ինչպես նաև ներառական մյուս շաղկապները) կարող է կապվել տարբեր անդամների հետ, ակնարկելով նախորդ նախադասություններում նկարագրվող համանման դեպքեր, երկվույթներ, առարկաներ ու գործողություններ. օրինակներ՝

Կարելի է նշել առաջիկայում կատարվելիք այլ աշխատանքներ ևս, որոնք նպաստելու են բնակչության կենցաղային սպասարկման էական բարելավմանը (ՍՀ):—Շատ հավանական է,—ասաց Կարեն զորապետը,—ինձ հետ ևս միևնույնը պատահեց (Բաֆ., 560): Հայաստանի բաժանումից հետո ևս Արշակունիները շարունակեցին թագավորել Հայաստանի պարսկական մասում մոտ կես դար՝ 387 թվից մինչև 428 թիվը (ՀՄՔՏ, 6):

Շաղկապվող անդամի նկատմամբ ևս շաղկապը նախադաս գործածություն ունի հետևյալ օրինակում, ուր աղոտ կերպով զգալի է նաև մակրայական ինչ-որ երանգ («նորից նշանակությամբ»). «Հապճեպորեն սանրվեց, ևս մի գլանակ վառեց, ուրախացած, որ շմոռացավ լուցկին ու տուփը գրպանը խրել (ՍԳ, 1957, № 5, 20)»:

Այս շաղկապը օգտագործվում է նաև միակազմ անվանական նախադասություններում, ունենալով թե հտադաս և թե նախադաս գործածություն, ինչպես՝ «Քայց մի վերջին ճիգ ու վերջին աղաղակ ևս, և ահա հրաշք... (Շիր., 384)»: «Եվս մի հարված, և զնդակը ցանցի մեջ է»:

Ներառական հարաբերություններ է նշում նաև նույնպես շաղկապը, որը ետադաս դիրք ունի կապակցվող բառի նկատմամբ, ինչպես՝

Վերև մենք տեսանք նույնպես, որ ընդհանուր աշխարհաժողովներին նախարարների հետ միասին մասնակցում էին նաև «աղատ»-ները (ՀՄՔՏ, 342): Խնդրում եմ հավատաք, որ եթե նամակում հանդիպեք անգամ «չար» տողերի, բարի է նրանց նկրտումն ու նպատակը: Ավելորդ եմ համարում նույնպես գովասանքի խոսքեր ասել Ձեր մասին... (ԳԹ, 1957, նոյ. 21, 4): Հասարակածային Աֆրիկայի և Մեքսիկայի մի քանի շրջաններում նույնպես գոյություն ունեն սուպոցի լեզուներ, բայց դրանք այնքան ճշգրիտ չեն, ինչպես սիլբոն (Եր., 1957, նոյ. 17, 3):

Հիմնականում գեղարվեստական գրականության մեջ է օգտագործվում ներառական նշանակություն արտահայտող և շաղկապը. օրինակներ՝

Ծառերի հետ փուլ են գալիս և քարերի ահագին բեկորներ (Բաֆ., 18): Այստեղ էր ապրում Եփրեմի ընտանիքը՝ օրվա մասն այստեղ էր անցկացնում և Մկրտումի կինը՝ Շողերը (ԱԲԵ, 472): Եղբայրը նրա Հայաստան ճանապարհ դնելու ժամանակ՝ դրեց նրա հետ, իբրև օժիտ, այլ հարստությանց թվում՝ և սպասավորների մի ամբողջ քարավան (ԲՄ, 91):

Իմաստային մի քանի այլ երանգների դրսևորումը և, ու Շաղկապների կիրառության ժամանակ

Միավորիչ և, ու շաղկապների կիրառության ժամանակ կապակցվող համադաս նախադասությունների միջև, բացի բուն միավորական հարաբերություններից, արտահայտվում են նաև իմաստային այլ երանգներ՝ ժամանակային, պատճառ-հետևանքային, հակադրական և այլն: Այդ երանգները թեև աղոտանում են միավորական հարաբերությունների ֆոնի վրա, սակայն գոյություն ունեն, հետևաբար և անհրաժեշտ

է կանգ առնել դրանց վրա: Եվ, ու շաղկապները լայնորեն տարածված են նաև խոսքի տարբեր հատվածների, պարբերությունների ու ավարտված նախադասությունների շաղկապման դերով, ուր արդեն դադարում են համադասական կապակցություն ստեղծելուց:

Ա) Համադաս նախադասությունների ժամանակային փոխհարաբերությունները և, ու շաղկապների կիրառության ժամանակ—Պետք է նկատել, որ այս շաղկապներով կապակցվող համադաս նախադասությունները հնարավոր չէ պատկերացնել առանց դրանց միջև եղած ժամանակային փոխհարաբերությունների, քանի որ նախադասությունը գործողության հետ կապված մի փաստի շարադրում է: Ըստ այսմ համադաս նախադասություններում նկարագրվող գործողությունները կամ եղելությունները կարող են կատարվել.

ա) Նույն ժամանակամիջոցում, ինչպես՝

Անդրանիկ Թազվորչանը քայլում էր մենակ, և հարություն էին առնում նրա հոգում մանկության ու պատանեկության բուր հուշերը... (ՀՔ, 496): Որպես մի մարմնացած անհամբերություն, թափառում էր նա գետի ափերի մոտ և միևնույն ժամանակ կրծում էր ձեռքի ապխտած մսի կտորը, որ յուր հետ վեր էր առել (Րաֆ., 380): Ինչքան տարբեր են մարդկանց պահանջները, մտածում էր Լևոնն ու խավարի միջով քայլում դեպի տուն (ՆՁՀ, 266): Ամեն տարի համարյա սկսած երկրորդ պատրաստականից փոխում էի դասարանս, չէի սիրում մաթեմատիկան, ու չէի սովորում այն... (ՀՀԵ, 304):

Այս համաժամանակային հարաբերության ֆոնի վրա կարող են դրսևորվել նաև իմաստային այլ հարաբերություններ: Այսպես, վերջին օրինակում համադաս նախադասությունների միջև առկա է պատճառի և հետևանքի երանգ:

բ) Շատ ավելի են տարածված գործողությունների հաջորդականություն արտահայտող համադաս նախադասությունների կապակցությունները: Հիշյալ հարաբերության արտահայտման համար վճռական դեր են կատարում ստորոգյալների ժամանակներն ու եղանակները, նախադասություն-

ների կառուցվածքը և մանավանդ նրանց շարադասությունը: Ժառանգական այս հարաբերությունը նշելու համար, բացի և, ու շաղկապներից, օգտագործվում են նաև դեռևս մակբայական արժեք ունեցող այնուհետև, այսուհետև կապակցական բառերը և ապա թե շաղկապը. օրինակներ՝

Ամենքը ծիծաղեցին, և յուրաքանչյուրը սկսեց յուր լսածն ու իմացածը պատմել (Րաֆ., 354): Տրակտորիստ Գևորգն իր մասնագիտական հագուստի գրպանից հանելով մի խոշոր մեխ՝ բաց արավ կողպեքը, և բոլորը միասին ներս մտան (ՆՋՀ, 334): Քաղաքն է մտնում Դիվանան ու գնում ուղիղ թաղավորի պալատը (ՀԹԵԺ, 3, 231): Մին էլ հանկարծ բացվեց դուռը, Ու ներս մտավ շար կեսուրը (ՀԹԵԺ, 1, 283): Ուստի գնալուց հետո մի կարճատև լուսթյուն տիրեց, ապա թե խոսեց մի գյուղացի (ՀԹ, 364): Մեզ նախաճաշ տվին, ապա թե լցրին ֆուրգոնները և անտառապատ շոսեով շարժվեցին դեպի Դիլիջան (ԳՄ, 418): Թշնամին յուր նետերի տարափով կծածկե քո հարյուր զինվորներին. այնուհետև կղզին կմնա արաբացոց կատաղության նշավակ (ՄԳՄ, 325): Սեդա, իմ դուստրը և քո Սահականուշը միայնակ է. այսուհետև նա ավելի կարոտ է քո խնամքին (ՄԳՄ, 84):

Եվ, ու շաղկապների գործածության դեպքում համաժամանակային հարաբերություն արտահայտող նախադասությունների միջև սովորաբար դրսևորվում է նաև պատճառահետևանքային երանդ: Երբ գործողությունների անմիջական, արագ հաջորդում է տեղի ունենում, այդ դեպքում օգտագործվում են համապատասխան բառեր, որ մենք ընդգծել ենք, ինչպես՝

Բայց հագիվ թե իշխանն ու սեպուհը հասան դահլիճի դռանը, և ահա ներս մտան Վեհափառի գավազանակիրը, ավագ սարկավազները... (Մուր., 234): Բայց հագիվ առաջին խոյը սկսել էր յուր հարվածները, և ահա՝ պարսպի վրա թափվեց նրա վրա կրակված կարի հեղեղ... (Մուր., 274): Այդ նպատակով կարող են օգտագործվել նաև իսկույն, հենց այդ ժամանակ, անմիջապես և նման բառեր:

Գործողությունների արագ հաջորդականությունը յուրա-

հատուկ դիպուկություն է ստանում, երբ շաղկապվող առաջին (երբեմն նաև երկրորդ) մասը միակազմ անվանական նախադասություն է: Այս կառուցվածքի նախադասություններում անվանական նախադասության վերջին բառի վրա ձայնի տոնը բարձրանում է, որին, մի փոքր դադարից հետո, հաջորդում է երկրորդ նախադասությունը, ինչպես՝

Մի թույլ շփում բոցի, և նավթամբարը պիտի պայթեր, օղը ցնդելով քառասուն մարդկային կյանքեր (Շիրվ., 376): Սրերն ու սվինները սկսան շողալ: Մի վայրկյան ևս՝ և ամենքը պիտի ջնջվեին (Մուր., 215):

Նման կառուցվածք ունեցող նախադասություններում շատ արագ, անսպասելի ձևով են ներկայացվում դեպքերի, գործողությունների փոխանցումները: Ի դեպ, կապակցվող մասերի միջև երբեմն ուրվագծվում է անորոշ կերպով գրսևորվող պայմանի և հետևանքի երանգ:

Պետք է նկատի ունենալ, որ գործողությունների միաժամանակության և հաջորդականության միջև միշտ չէ, որ հնարավոր է խիստ որոշակի սահմաններ նկատել:

Բ) Պատճառ-հետևանքային հարաբերությունների դրսևորումը և, ու շաղկապների կիրառության ժամանակ—ինչպես արդեն ասացինք, իրար հաջորդող գործողությունների դեպքում, մասամբ նաև համաժամանակային հարաբերությունների առկայության դեպքում, կապակցվող մասերի միջև, ի թիվս հավելական և մասամբ նաև քվարկման հարաբերությունների, այսինքն միավորիչ հարաբերությունների, մասնակի ձևով առկա են նաև պատճառի և դրանից բխող հետևանքի հարաբերություններ, որոնք, իհարկե, բխում են այդ մասերի բովանդակությունների փոխհարաբերություններից: Բերենք օրինակներ՝

Կաթակը շանթեց մոտակա ծառերի կատարներին, և մերձակայքը լուսավորվեցավ բաց-վարդագույն փայլով (Բաֆ., 17): Այդ անել, իհարկե, թույլ չտվին նրանց հայերը, և կրիան հետզհետե այրվելով դարձավ մի մոխրակույտ (Մուր., 279): Փողոցում սաստիկ ցեխ էր, և նա հագավ իր

կրկնակոշիկները: Ղաղարջանը վերջնականապես համոզվեց, որ կանայք իր վրա են ծիծաղում, ու զայրույթի ալիքը սեղմեց նրա կոկորդը (ՆՁՀ, 67): Երեխան բռնում էր ոչ այն, ինչ հարկավոր էր, ու բարկանում էր (ՏԱԿ, 2, 485):

Հետևանքի նշանակությունը ընդգծելու համար վերացական իմաստ ունեցող և շաղկապին հաճախ հաջորդում են օժանդակ, լրացուցիչ բառեր. օրինակ՝ «Առաքել ամին հաստատ համոզված էր, որ Հասմիկը վերջ ի վերջո կընտրի Վասակին, և դրա համար խորհուրդ չէր տալիս աղջկա երեսովը տալ նրա պատանեկական համակրանքը Լեոնի հանդեպ... (ՆՁՀ, 397)»: Այդ նպատակով կարող են օգտագործվել նաև այդ պատճառով, հետևաբար, հետևապես բառերը:

Երբեմն կապակցվող մասերի միջև ուրվագծվում են պայմանի և հետևանքի երանգներ, որոնք բոլոր դեպքերում էլ բխում են կապակցվող մասերի բովանդակությունից ու կառուցվածքից¹. օրինակներ՝

— Կատարի՛ր մեր հոր կամքը և կլինես ինձ հետ հավասար ժառանգ (Շիրվ., 133): ...Ականջ դիր և՛ կլսես, թե ինչ է մտածում սիրտս. նա նախանձում է քեզ (ՆԴ, 376):

Միավորիչ և շաղկապը կապակցում է նաև եզրափակող բնույթի նախադասություններ: Նշվում է մի փաստ, մի իրողություն, որից հետո որևէ հետևությունամբ կամ առանց հետևություն եզրափակվում է հաղորդվածը. օրինակ՝ «Վարոսյանի առաջարկը ստացավ երկու ձայն, Վասակի առաջարկը՝ մնացած բոլոր ձայները, և այսպիսով պարտությունի նիստը վերջացավ (ՆՁՀ, 172)»:

Գ) Հակադրական հարաբերությունների դրսևորումը և, ու շաղկապների կիրառության ժամանակ—երբեմն այս շաղկապներով կապակցվող նախադասությունները իրենց բովանդակության որևէ կողմով հակադրվում են իրար: Նկատելի է, որ և, ու շաղկապների օգտագործմամբ հակադրությունը յուրօրինակ մեղմությամբ է արտահայտվում, յուրահատուկ անսպասելիությամբ: Եվ, ու շաղկապները կարող են ակնարկել բայց,

¹ Այս երանդի առկայությունը բխում է առաջին համադասի ստորոգյալի հրամայական եղանակից:

սակայն, այլ, իսկ շաղկապների նշանակությունները: Բերենք համապատասխան օրինակներ՝

ա) Բայց, սակայն շաղկապների նշանակությամբ.

Ուշինարան աղավնուն դրեց մի նժարում, իսկ մյուս նժարում իր մարմնից մի փերթ. բայց աղավնին դեռ ծանր էր կըշռում: Նորից կտրեց մսի մի փերթ, և աղավնին նորից ծանր էր (ԱԻ, 338): —Ի՞նչ ես ուզում ասել,—հարցրեց Մոսիկոն: —Այն, որ հետևիցս հազար ու մի բան ես ասում, ծաղրում ինձ իբրև վախկոտի և գալիս ես առերես ցավակցություն հայտնելու: Դա մարդավարություն չէ, բարեկամ... (Շիրվ., 264): Ինչ արինք, չարինք, չեկավ հավատի. Գընաց ավելի բարձր գանգատվեց, Թե՛ ինքըս թավադ, թավադի որդի, Ու չոբան Չատին ինձ ուշունց տըվեց... (ՀԹ, 163): Նա էն օրը հաց չէր դրել բերանը. ծեծվել ու լաց էր եղել, այժմ էլ քաղցած պառկեց, ու քունը չէր տանում (ՀԹԵԺ, 3, 44):

Սովորաբար նույն նշանակությունն են ունենում այդ շաղկապները, երբ նրանց հաջորդում են որևէ մակբայ, շաղկապ, դերանուն կամ միջանկյալ բառ, ինչպես՝

Այդտեղ օդն այնքան խեղդուկ էր, որ մարդիկ հագիվ կարողանում էին շունչ քաշել և չնայելով դրան, եկողը չէր ուզում հեռանալ (Շիրվ., 10): Սուրիկը առաջինը հասավ ժամադրավայրը, և որովհետև ընկերները դեռ չէին հավաքվել, սկսեց ուշադիր գննել շրջակայքը:

Համադաս նախադասությունների միջև «բայց» շաղկապի երանգը կարծես ավելի է ընդգծվում, երբ կապակցվող մասերից մեկում ստորոգյալը ժխտական ձևով է. օրինակ՝

Սպասեց և նորից սպասեց, և բացող չեղավ (ԱԻ, 374): Ես չկամ անգամ հիսուն տարեկան և ծեր եմ արդեն (ՀՀԵ, 124): Անտուն քամու պես փակ դուռըդ, գիտե՞ս, ես շատ եմ ծեծել ու դու չես բացել (ԱԻ, 65):

Դիպուկ ու կենդանի ձևով է ներկայացվում հակադրությունը, երբ այն դրսևորվում է միակազմ անվանական նախադասությունների միջև, ինչպես՝ «Վեց ուտող բերան և միայն մի աշխատող ձեռք... հաշիվը պարզ է. պիտի. օգնենք... (ՆՁՀ, 22)»:

բ) Այլ շաղկապի նշանակությամբ.

Նա հիմար էր, չէր կարգում շատ թղթեր և միայն ստորագրում էր (Շիրվ., 341): Նկատելի է, որ այս օրինակում, ճիշտ ինչպես այլ շաղկապի կիրառության ժամանակ, նախորդ նախադասության ստորոգյալը ժխտական ձևով է:

գ) Իսկ շաղկապին մոտ նշանակությամբ.

— Ի՞նչպես թե՛ քեզ ինչ: Չէ՞ որ աստված ուզեց, որ հետեւեմ քեզ, և դու հնազանդիս ինձ... (ԱԻ, 329): Իսկ երբ լսեց, որ Շմավոնին հանում են և նրա փոխարեն իրենց կոխոզի նախագահ են նշանակում Լևոն Լամբարյանին, գլխին կացնի հարված ստացածի պես նայեց Մաթոս Գրիգորյանին (ՆՁՀ): Մեր եզներն ու կովերը ճանապարհը գիտեն. գնում են հանգիստ, ու ես նրանց հետևից (ՍՁ, 97): Էդ արդար երեսդ մի էդպես բաց արա, է՞... Թե չէ մթնել էիր, ոնց որ կարկտի ամպ, ու մենք էլ կծղած հասկերի պես գողում էինք (ՆՁՀ, 563):

Եվ շաղկապի կիրառությունը «իսկ» նշանակությամբ շատ տարածված է ֆրանսերենում, որը, ի դեպ, հայերենի իսկ և ռուսերենի ա շաղկապների լիարժեք համարժեքը չունի: Այդ պատճառով «իսկ»-ի կիրառությունը բաժին է ընկնում et «և» շաղկապին: «Իսկ»-ի իմաստը այնքան է մերվել և-ին հատուկ նշանակության հետ, որ ֆրանսերենի քերականություններում և բառարաններում et շաղկապի այդ հակադրական նշանակության մասին ոչ մի հիշատակություն չկա: Բերենք մի օրինակ՝ En été les jours sont longs et (= և) les nuits sont courtes «Ամռանը ցերեկները երկար են, և (= և) գիշերները՝ կարճ»:

Հետաքրքրական է նշել, որ ռուսերենի ա «իսկ» շաղկապի ամենահին և ամենատարածված գործածություններից մեկը եղել է միավորիչը (այսինքն և շաղկապի նշանակությունը)¹:

դ) Բացի նախադասությունների համադասա-հարաբերական կառուցվածքը և շաղկապի գործածությամբ—նման բարդ համադասական նախադասությունների իմաստային առանձնահատկությունն այն է, որ երկրորդ համադասը որևէ կողմով

¹ Տե՛ս Ի. Բորկովսկու հոդվածը «Сложносочиненные предложения в древнерусских грамотах» (Институт языкознания, Доклады и сообщения, Москва, 1956, 85).

լրացնում, ճշգրտում է առաջին նախադասության բովանդակությունը, կամ նրա որևէ մի անդամը: Առաջին դեպքում և շաղկապից անմիջապես հետո սովորաբար դրվում է դա ցուցական դերանունը՝ ուղիղ կամ թեք ձևերով, որը իր մեջ ամփոփում է առաջին համադասի ամբողջ բովանդակությունը: Այսպիսով ստացվում է այնպես, որ համադաս նախադասություններից առաջինը իր բովանդակությամբ բացահայտում է դա ցուցական դերանվան իմաստը: Ստացվում է համադասությունն ստորադասությամբ ձևով: Համադասություն, որովհետև կախման միջոցը համադասական և շաղկապն է և կարելի է դադար տալ երկրորդ համադասից առաջ, իսկ ստորադասություն, որովհետև և դա, և այդ կապակցությունները լիովին հնարավոր է փոխարինել ու հարաբերական դերանվամբ. այսպես՝

Ով էլ լինեի նա, սովետական մարդ էր, և դա բավական է հասկանալու համար նրա սխրագործությունը (ՀՔ, 344): Նա չի հուսահատվում: Ճամփին քաղցրացնում է երեակայությունը, և դա արդեն սովորություն է դառել... (ԴԴ, 99): Նա դաս չէր պարապում, չէր լսում ծնողներին, և դրանից (=որից) տուժում էր միայն ինքը:

Նման հարաբերություն կարող է նշել նաև սա ցուցական դերանունը, ինչպես՝ «Գլխիս կախեց Գաղիշոն, և սա իր հերթին ազդեց նրա արբանյակներին (ԴԴ, 3, 176)»:

Երբ երկրորդ համադաս նախադասությունը լրացնում է ոչ թե ամբողջ առաջադաս մասին, այլ նրա մի անդամին միայն, ապա այդ ցուցական դերանվան հետ կրկնվում է նաև այդ անդամը, որը մեծ մասամբ արտահայտված է լինում գոյականով՝, ինչպես՝

«Ազնիվ խոսք» է տվել, և այդ ազնիվ խոսքը տասնուվեց տարեկան պատանին կատարում է գողության միջոցով (Շիրվ., 269): Երբեհիցե մի գրիչ կպատմի քեզի Դավոյի

1 Այս դեպքում արդեն նախորդից տարբեր են լինում այդ բարդ համադասական նախադասությունների կառուցվածքային և իմաստային առանձնահատկությունները:

կյանքը, և այդ գրիչը շատ կգտնի հերոսություններ նրա կյանքում (ԱՌԵ, 292):

Պատահում է նաև, որ ոչ թե առաջին համադաս նախադասության շեշտման ենթակա անդամն է կրկնվում, այլ նրան իմաստով մոտ մի բառ, կամ էլ, եթե բայ է, նրա անվանական ձևը, ինչպես՝ «Ժպտաց մինչև անգամ Հայանթին, և չար էր այդ ժպիտը (ԴԴ, 8)»: «Այսպես էր մտածում նաև կաթողիկոսը, և այդ մտքերը խոռվում էին նրան (Մուր., 240)»:

Ե) Եվ շաղկապի կիրառությունները հարակցական (присоединительный) հարաբերությունների արտահայտման ժամանակ — Հաճախ և շաղկապով միավորվում են այնպիսի նախադասություններ (նաև բառակապակցություններ), որոնք դուրս են մնում արդեն նկարագրված համադաս նախադասությունների շրջանակից: Այդ նախադասությունները իրենց ընդհանուր բովանդակությամբ հանդես են գալիս նախորդ համադասը որեէ նոր կողմով լրացնելու, այն որեէ տեսակետից ճշգրտելու, մասամբ նաև եզրափակման կամ հետևության նշանակությամբ: Հիշյալ նախադասությունները ավելի շատ հանդիպում են բանավոր խոսակցական լեզվում, երբ խոսակիցների մեջ այս կամ այն միտքը առաջանում է հենց խոսքի ընթացքում և անմիջապես արտահայտվում է: Չնայած որ այս հանգամանքը զրավոր խոսքի մեջ կորցնում է իր նշանակությունը, որտեղ հեղինակը միշտ էլ հնարավորություն ունի կանոնավորապես վերաշարադրել իր մտքերը, այնուամենայնիվ հարակցական նախադասությունները բավական տարածված են գեղարվեստական գրականության մեջ և խոսքին յուրահատուկ ոճական գունավորում են տալիս:

Ռուսերենը հիշյալ հարաբերություններն արտահայտում է и, а, да, да и, но, же շաղկապներով¹: Հայերենում նման կիրառություններով կարող են հանդես գալ և, մասամբ նաև ու, բայց, իսկ և այլ շաղկապներ. օրինակներ՝

¹ «Грамматика русского языка», том II, Синтаксис, часть вторая, Москва, 1954, 257—268.

— Եղբայրներ,— կանչեց նա քրտնակալած, հեալով,— դերմանացիները հանձնվում են... — Ճիշտ ես ասում, Մատվեիչ, թե փշոց է: — Ե՞րբ եմ սուտ ասել, և կրակն էլ զաղարեցրել են, չե՞ք տեսնում, և կարող է պատահել, որ պատահա՞մն էլ վերջանում է (ՀՔ, 479): Այս տարի ռեսպուբլիկայի գյուղատնտեսության աշխատավորները պարտավորություն են ստանձնել հանձնել 1 միլիարդ փուլ հացահատիկ: Եվ գլխավորապես ցորեն (ՍՀ, 1956, օգոս. 1, 1): Կան դերասաններ,— և նրանց թիվը քիչ չէ,— որոնք կարծում են, թե իրենց ուսերի վրա մի արքայական ծիրանի կրելը նույնն է, ինչ որ մի սովորական վերնագգեստ... (ՎՓՀՀ, 2, 149): Նա սովորաբար քնից զարթնել է միշտ կանուխ, արևածագից առաջ: Սկզբում նրան հարկադրել են, հետո դարձրել սովորություն: Բայց պատահում է, և շատ է պատահում վերջին տարիները, որ գիշերն ուշ է քնում և առավոտյան շուտ զարթնում... (ՆՋՀ, 4): Ընկերը հաճախ էր նախատում նրան, և իրավունք էլ ուներ:

Նկատելի է, որ նախադասության հիմնական մասի հետ սերտ առնչություն չունեցող այս հարակցական նախադասությունները, որոնք, ի դեպ, տարբեր բնույթի ու կառուցվածքի լինելով՝ նույն որոշակիությամբ հանդես չեն գալիս այդ հարաբերությունը նշելիս, անջատվում են նախորդ մասից (հիմնական մասից) նաև արտասանական աննշան դադարով, ձայնի որոշ իջեցմամբ: Այս երևույթը ինքնին նշում է նրա գրաված յուրահատուկ դիրքը համադասական կապակցություն մեջ:

Միավորիչ և, ու շաղկապների կիրառական և ոճական մի քանի առանձնահատկությունների մասին

Բերված օրինակներից արդեն պարզ երևում է այդ շաղկապների ամենատարածված կիրառություններն ու նշանակությունները: Այժմ կանգ առնենք ոճական բնույթի մի քանի հարցերի վրա:

1) Երբ այդ երկու շաղկապները հանդես են գալիս նույն նախադասության կառուցվածքում, ապա ու շաղկապը սովոր-

րաբար ծառայում է համազոր անդամների կապակցմանը, իսկ և-ը՝ համադաս նախադասությունների կապակցմանը, որով նրանք մի տեսակ հակադրվում են¹։ Բերենք օրինակներ՝

Սովորեցնում էր քաղցի ու ծարավի դիմանալ և գիշերը առանց անկողնի բացօթյա տեղում պառկել (ՐՍ, 59)։ Դրժ-բախտ Եփրատը հետզհետե լցվում էր դիակներով, և նրա պարզ ու հստակ ջուրը արյունի գույն էր ստանում... (ՐՍ, 343)։ Բայց երկու քայլ հեռավորության վրա կանգ առեց և կիսահեգնական ու կիսազարմացական ձայնով բացազան-չեց (ՐՍ, 43)։ Ամպը գոռաց ու տրրաքեց, Եվ անձրևը սաստկացավ, Հովիվն «Հե՛յ հե՛յ աղաղակեց, Շունը թփից վեր կացավ... (ՀԹ, 17)»։

Սակայն պատահում է նաև հակառակ դասավորությամբ կապակցության դեպքեր, ինչպես՝

Նրա շորս անկյունները պաճուճած էին գույնզգույն քարերի գողավոր և ուռուցիկ մյուսիոններով, իսկ միջավայրը, ուր լուսանցքն էր գտնվում, բարձրանում էր գմբեթաձև, գոտեոր շրջանակներով ու նույնպես զարդարված գույնզգույն և խորհրդավոր մյուսիոններով (Մուր., 19)։

Հանդիպում են նաև դեպքեր, երբ տարբերակման նշանակություն դրսևորող և, ու շաղկապների համատեղ գործածության փոխարեն կապակցությունը կատարվում է միևնույն շաղկապով, որի հետևանքով խոսքը հաճախ զրկվում է անհրաժեշտ հստակությունից. օրինակներ՝

¹ Այս մասին հետաքրքրական դիտողություն ունի պրոֆ. Գ. Սևակը. «Ինչպես նկատվում է թերթի լեզվի ուսումնասիրությունից, խմբագրությունը միանգամայն ճիշտ կերպով և-ին տվել է անջատող շաղկապի, իսկ ու-ին միացնող շաղկապի կիրառություն (օրինակ՝ «100 հրանոթ ու ավանանետ և 500 հրացան...» և այլն)։ Ակներև է, որ եթե այս օրինակների մեջ ու-երը և-ով փոխարինենք, և-երի և ու-երի տեղերը փոխենք, կստանանք կամ անորոշ, կամ միանգամայն սխալ միտք...» (Գ. Սևակ, Ժամանակակից հայերենի համառոտ պատմություն, Երևան, 1948, 184—5)։ Պետք է նշել, որ մեր գրական լեզվի վաղ շրջանում ևս այս տարբերակումը գիտակցվել է։

Օր. Սահակյանը մենակ էր: Նա նստած էր կապույտ մահուդով ծածկված երկայն սեղանի առաջ և կաթով սուրճ էր խմում և (փոխ. ու) լրագիր կարդում (ՆԴ, 102): ...Իսկ յուր վարմունքով առիթ տվեց նա նախարարների իրանից հեռանալուն և յուր լքյալ և (փոխ. ու) անօգնական մնալուն (Բաֆ., 188): Նա հագած էր ռուս քաղաքացիական աստիճանավորների հնամաշ ու դունատ մունդիր ու (փոխ. և) կրծքի վրա քաշ արած մի կարմրագույն խաչածե շքանշան (Շիրվ., 11):

Նախադասության մեջ նույն պաշտոնն ունեցող այն բազմակի անդամները, որոնք իրենց ծավալով ու թվարկման ինտոնացիայով նույնատիպ են, գերադասելի է կապակցել նույն շաղկապով, թեև հաճախ, հավանաբար կրկնությունից խուսափելու համար, օգտագործվում են այդ երկու շաղկապներն էլ, ինչպես՝ Մրգահաս է կյանքը մեր, Աճում է ուղեշուղեն, Նոր ուժն է կյանքին բերել Կամք ու սիրտ, երգ և ուղեղ (ԳՄ, 103):

Սակայն երբ համազոր անդամներով բառախմբերը նախադասության տարբեր անդամներ են, ապա այս դեպքում արդեն կարիք է դրացվում դիմել և, ու շաղկապների համատեղ գործածությանը՝ նրանց տարբերակող նշանակությունների համար, ինչպես՝

Կանայք և աղջկունք, ծեր և տղա, տանիքներից ու լուսամուտներից ողջունում էին իրար (Բաֆ., 343): Ձեճեքի և զրահների բախումն ու շառաչյունը խլացնում էին ամեն ձայն (ԲՍ, 539):

Այս օրինակներում բազմակի ենթակաների ու հատկացուցիչների կապակցությունները շատ դեղեցիկ կերպով բաժանվում են պարագաների և հատկացյալների բառախմբերից:

2) Եվ, ու շաղկապները իմաստային և շարահյուսական կողմերով շատ բնդհանուր գծեր ունեն, սակայն կան դեպքեր, երբ նրանց կիրառությունների միջև նկատվում են որոշակի տարբերություններ: Նշենք դրանցից մի քանիսը:

Ու շաղկապը չի կարող կրկնադիր գործածությամբ

սաստիկական նշանակություն արտահայտել: Նա չի կարող հանդես գալ նաև ներստական նշանակությամբ: Ուշադկապով չի կարող կապակցվել կրկնադիր շաղկապների վերջին բաղադրիչը (օրինակ՝ թե... և թե...), չի կարող կապակցվել նաև ուր շաղկապով սկսվող վերջին բարդադաս նախադասությունը (օրինակ՝ նա ասաց, որ... և որ...): Ուշադկապը չի կարող փոխարինել և-ին նաև այն դեպքերում, երբ վերջինս հարադրվում է շաղկապների և կապակցական այլ բառերի հետ (ինչպես՝ բայց և, ուստի և, թեպետ և, ուր և, ինչպես... այնպես և և այլն):

Միանգամայն հասկանալի է, որ ուշադկապը իր գործածությունն ունի սահմանափակության պատճառով չունի և չի կարող ունենալ իր հոմանիշ և շաղկապի բոլոր իմաստային կիրառություններն ու նրբությունները¹: Անշուշտ դա բացատրվում է նրանով, որ այդ շաղկապը գրաբարյան բնույթի մատենագրությունից դուրս է մնացել և միայն միջին հայերենում է տարածվել, որի պատճառով էլ աշխարհաբարի գրականացման ժամանակաշրջանում նա դեռևս, բոլոր սովորության, դիրքով էր որպես ոչ այնքան հարազատ: Եվ իրոք, հին դասական հեղինակների՝ Րաֆֆու, Մուրացանի, Նար-Պոսի և այլոց մոտ նրա գործածությունները, մեր ժամանակակից գրողների համեմատությամբ, անհամեմատ քիչ են²: Այս է նաև պատճառը, որ մեր հին քերականները (Այտընյան, Պալասանյան և նաև Աբեղյան) նրա կիրառությունները սովորաբար կապում են նախադասության համադր անդամների հետ, հակադրելով և շաղկապին՝ որպես նաև նախադասություններ շաղկապողի: Այժմ էլ ուշադկապը անհամեմատ ավելի քիչ է օգտագործվում հրապարակախոսական, ինչպես նաև գիտական գրականության լեզվում (համադաս նախադասությունների շաղկապման համար), քան գեղարվեստական գրականության:

1 Ձեռք խոսում ժողովրդական խոսակցական լեզվի մասին, ուր նա գերիշխող դիրք ունի և շաղկապի համեմատությամբ:

2 Շատ առատ է, սակայն, ուշադկապի գործածությունը Շիրվանզադեի մոտ:

Բազմավաստակ հայագետ 2. Աճառյանը Ա. Իսահակ-
յանի Աբու-Լալա-Մահարու մեջ հաշվել է 63 ու և 182 և, որից
իրավամբ եզրակացնում է «Մեր նոր գրական լեզուն շատ
չի սիրում ու շաղկապը և գերադասում է և»¹:

Ինչ վերաբերում է այդ շաղկապների ոճական-արտա-
հայտչական հնարավորություններին, ապա նրանց հետ կա-
րող է մրցել միայն ստորադասական ու շաղկապը: Ուշա-
դրության արժանի է այն հանգամանքը, որ այդ շաղկապնե-
րը գրական գրեթե բոլոր ժանրերում օգտագործվում են, մի
բան, որ չէր կարող չհարստացնել այդ շաղկապների ոճական
կիրառությունները բազմատեսակ երանգներով:

Ընդունված տեսակետ է այն, որ չափածոյում ու շաղ-
կապի առատ գործածությունը տալիս է բանաստեղծությանը
ժողովրդական կենդանի խոսքի երանգ, իսկ և շաղկապին՝
գրավոր խոսքին հատուկ ոճական հատկանիշ: Մեր կատա-
րած հարևանցի քննությունը, օրինակ, տալիս է այդ շաղ-
կապների գործածության հետևյալ հարաբերությունը: Ավե-
տիք Իսահակյանի բանաստեղծություններում², չհաշված լե-
զենդներն ու բալադները, միայն ու ունեն 51 բանաստեղծու-
թյուն, միայն և՛ 8, ոչ մի շաղկապ չունեն՝ 20, իսկ միայն և,
ու՛ 17 բանաստեղծություն: Ու շաղկապի գերակշռությունը
և-ի նկատմամբ նույնն է նաև Հովհաննես Թումանյանի
մոտ³: «Անուշ»-ում ու շաղկապը մոտ 10 անգամ ավելի է,
քան և-ը: Հակոբ Հակոբյանի «Քաղաքը»⁴ պոեմի առաջին
մասում, ժողովրդական-բարբառային լեզվով գրված լինելու
պատճառով, ոչ մի և չկա:

Ու շաղկապի առատ գործածությունը բնականաբան
տալով բանաստեղծությանը ժողովրդական բնույթ, չի կա-

1 Գրախոսություն և. Կանայանի «Ավետիք Իսահակյանի բանաստեղ-
ծությունների լեզուն» գրքի (Արմֆանի հրատարակչություն, Երևան, 1940),
որը տպված է «Սովետական գրականություն» ամսագրում (1941, № 1,
էջ 99):

2 Ա. Իսահակյան, Ընտիր երկեր, Մոսկվա, 1948:

3 Հ. Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1953:

4 Հ. Հակոբյան, Երկեր, Երևան, 1951:

որոշ սակայն այդ բանի միակ պատճառը լինելու ժողովրդական բնույթի համար վճռական դեր ունի բանաստեղծության բովանդակությունը, արտահայտության միջոցները, բառապաշարը, շարադասությունը և այլն, մի խոսքով նրա ոգին, Այդ պատճառով անշափ շատ են այն գործերը, որոնց մեջ գտնում ենք օգտագործված ու շաղկապը, բայց որոնք երբեք չեն կարող համեմատվել բուն ժողովրդական բնույթ ունեցող Իսահակյանի կամ այլոց բանաստեղծությունների հետ, ճիշտ այնպես, ինչպես խոսքի անշաղկապ կապակցությունները, ընդհանրապես հարադատ լինելով ժողովրդական կենդանի լեզվին, կարող են նաև զուտ դրական, զբաղյին ոճ ունենալ՝ վերը նշված հանգամանքների պատճառով:

Այսպես, Իսահակյանի նույն գրքի «Արագածին» (էջ 23) և «Այս ուռու տակ» (էջ 47) բանաստեղծությունները շատ է՛ր տարբերվում նրա ժողովրդական բնույթի մյուս գործերից, չնայած որ այդ երկու բանաստեղծություններում միայն ու շաղկապն է օգտագործված:

Ե. Չարենցի «Երգ ժողովրդի մասին» պոեմը¹, որ անշափ շատ ու ունի, բոլորովին չի կարելի նույնացնել ժողովրդական բնույթի չափածո գործերի հետ: Որպես ընդհանուր երեւոյթ, պետք է նշել, որ բանաստեղծական, զգացմունքային խոսքի մեջ շաղկապների թիվը անհամեմատ ավելի քիչ է: Սակավաշաղկապությունը խոսքին տալիս է կենդանություն, արագություն, ժողովրդական մտածելակերպին հարադատ երանդ, մինչդեռ բազմաշաղկապությունը սովորաբար խոսքին տալիս է ծանրություն, հանդիսավորություն, տրամաբանական շունչ (իհարկե, որոշակի շրջանակներում և որոշակի դեպքերում, նայած հաղորդվածի բնույթին ու նպատակին) և հատուկ է հատկապես արձակ խոսքին, ուր տրամաբանական կուռ հետեությունները միշտ էլ հաջորդությամբ զուգակցվում են շաղկապների համապատասխան կիրառությունների հետ:

Այժմ բերենք և, ու շաղկապների ոճական կիրառություններից որոշ օրինակներ, բոլորովին էլ սպառնիչ լուծում

1 Ե. Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1953, 27:

շատաւով հարցին, քանի որ դրա համար հարկ կլինէր հատուկ
ուսումնասիրություն կատարել.

Եվ հնչում է հրգը,	Եվ գլուխս էր գուրգուրում,
Եվ գնում է հրթը,	Սեղմում կրծքին իր մաշված,
Եվ ձուլվում են բազում	Եվ աչքերս էր համբուրում,
ձայներ.	Եվ ձեռքերս մրտոված.
Ու թվում է օդում	Եվ կրկնում էր՝ «դիժ ջան, դիժ»,
Խնդություն է հորդում,	Եվ լալիս էր, և գգվում,
Այն ուլքեր են մեր դեմ	Եվ դեռ մեր շուրջն՝ ակնապիշ
կանգնել:	Մարդիկ էին հավաքվում
(ԳՍԲ, 144):	(ՀՇ, 258):

Մանուշակներ ոտքերիս ու շուշաններ ձեռքերիս,
Ու վարդերը այտերիս, ու գարունը կրծքիս տակ,
Ու երկինքը հոգուս մեջ, ու արեւը աչքերիս,—
Ու աղբյուրները լեզվիս՝ սարից իջա ես քաղաք,—
Ու քայլեցի խաչատուով ու շաղ տաշով մայթերին
Մանուշակներ ու վարդեր ու շուշաններ ձյունաթույր,
Ու մարդիկ ինձ տեսնելով՝ իրենց հոգնած աչքերին
Տեսան ուրիշ մի աշխարհ, գարուն տեսան նորաբույր:
(ՀՇ, 5):

Բերված չափածո հատվածներում և, ու շաղկապների
առատ գործածությունը յուրօրինակ սահունություն ու հմայք
է տվել խոսքին, մինչդեռ մի այլ դեպքում նման կրկնական
գործածությունը կարող էր ծանրացնել հեղինակի ոճը: Հիշյալ
հատվածներում այդ շաղկապների առատ օգտագործմամբ
նկարագրվող գործողություններն ու դեպքերը ներկայացվում
են որպես նույն գաղափարի հետ սերտորեն կապված իրո-
ղություններ:

Արձակում և-ի առատ գործածությունը, հատկապես երբ
այն բազմիցս կրկնվում է կապակցվող նախադասություննե-
րից կամ բառերից առաջ, խոսքին գրքային երանգ է տալիս:
Այս շաղկապի կրկնական գործածությամբ Ա. Իսահակյանը

կարողանում է նաև հնատիպության գրաբարյան երանգ հաղորդել խոսքին: Այդ է պատճառը, որ նա առատորեն օգտագործել է այդ շաղկապը իր լեզենդներում ու գրույցներում, ինչպես նաև արձակ պոեմներում: Հատկանշական է այդ տեսակետից «Լիլիթ»-ը, ուր անհրաժեշտ էր դասական գրաբարին հատուկ և շաղկապի բազմաթիվ կրկնություններով պահպանել աստվածաշնչային-առասպելական շունչը¹. օրինակներ՝

— Կախարդված է աշխարհը, և բոլոր իրերը հմայված են մի անտեսանելի վհուկի դյուխական դավապանով, և հեքիաթացած է ամեն բան (ԱԻ, 380): Ադամ նայեց և հոգին նվազեց. և փափկությամբ բռնեց Լիլիթի ձեռքը և նրա աչքերի մեջ սուզվելով խոսեց (ԱԻ, 321): Եվ կտուցով ծակեց ծառի կեղևը, և մազիլներով պատառեց ծառի կեղևը, և կեղևի տակ տեսավ խոնված մի բազմություն միջատների (ԱԻ, 335):

Բոլորովին այլ է և շաղկապի ոճական կիրառությունները հետևյալ օրինակներում.

Մեկ էլ լսենք, որ թյուրքեր և քրդեր թաղ մտնեն և ջարդեն դռներ և թվանք թալեն: Եվ սրեն հասավ մեր տան և նույնպես ջարդեցին դուռ և թվանքով կոտորել սկսան: Հետո զնացին, և խորեն ջուր ուղեց, և ես վար իջա ջուր բերելու և որտեղ ոտ դնեի՝ մարդու գուլի էր, ոտ և փոր: Լուս որ լուսացավ, վար իջանք տանիքեն և տեսանք, որ հավաբուն մտած այն աղջիկն էլ սպանված էր և արուն երթար հավաբունեն (ԳՄ, 457 — մոր նամակը Գուրգենին):

«Իմ սիրելի որդի Գիքոր ջան,

Ի քաղաքն Թիֆլիզ:

«Մենք ողջ և առողջ ենք, միայն քու առողջութիւնն ենք ուզում, ամեն: Քեզ շատ կարոտով բարով են անում Ապին, Նանը, Զանին, Մոսին, Միկիչը, Գալոն, ամեն: Մեր սիրելի որդի Գիքոր. ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա և խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և Նանն ու Զանին տկլոր են և տեղներս շատ նեղ ա: Գիքոր ջան, մի քանի մա-

¹ Այդ և համանման գործերում ոչ մի ու-ի չենք հանդիպում, բացի նախադասության համազոր անդամների կապակցման եզակի դեպքերից:

նեթ փող դարգի և մի գիր դարգի քու որպիսութենիցը, Եվ իմացած ըլեա, որ Մաղիկը սատկեց, և Նանն ու Զանին տկլոր են (2Թ, 351—352):

Այս երկու հատվածներում և շաղկապի այս առատ գործածությունը չի կարելի նույնացնել նախորդ օրինակների հետ: Գիտենք, որ և շաղկապը, բացի Սուլավայից, պահպանված չէ հայերենի և ոչ մի բարբառում: Հետևաբար նմանօրինակ գործածությունները ոչ թե այդ բարբառների (Վանի և Արարատյան) լեզվական ոգուց է բխում, այլ արհեստական են, ներմուծված գրականից: Արդ, այդ շաղկապը, պահպանելով հանդերձ վերևում նշված հատկանիշները, հանդես է գալիս այստեղ մի ուրիշ յուրահատուկ ոճական երանգով:

Նամակագիրը, դիտելով և շաղկապը որպես գրական լեզվի ամենաբնորոշ բառը և ցանկանալով հնարավորին չափ գրականացնել իր բարբառախառն նամակը, դիմում է այս շաղկապի օգնությանը: Այսպիսով ստեղծվում է յուրահատուկ մի ոճ, նամակային մի ոճ, երբ և-ի առատ գործածությամբ գեղջկական քաղցր մի շունչ է հաղորդվում խոսքին: Այս գործածությունը անշուշտ առաջացել է այն սովորությունից, որ գյուղում նամակները գրում էին քահանաները, որոնք աստվածաշնչի ընթերցմամբ քիչ թե շատ ծանոթ էին այս շաղկապի նման կրկնական կիրառություններին:

Եվ շաղկապով հաճախ կապակցվում են կրկնվող ստորոգյալներ, որով նրանք արտահայտչական նոր ուժ են ստանում. օրինակ՝ խոսում էին հյուրերը, և խոսում էր ըստ մեծի մասի հայր Մարդպետը (Բաֆ., 509—510): «...Վճռեց գնալ և ճիշտ որ գնաց (ՆԴ, 42)»:

Ոճական այլ արժեք ունի կրկնությունը ու շաղկապի կիրառության ժամանակ, ինչպես՝ խմում է ու խմում, վազում է ու վազում, գրեց ու գրեց և այլն: Այս օրինակներում այդ շաղկապը ցույց է տալիս գործողության կրկնություն կամ շարունակություն, ինչպես ճիշտ կերպով նկատել է իր ժամանակին Ա. Այտընյանը¹: Նույնպիսի նպատակի է ծառայում բարբառային հա շաղկապը՝ նույնպիսի կապակցու-

¹ Ա. Այտընեան, Փնն. քեր., Վիեննա, 1866, 243:

թյունների մեջ, ինչպես՝ «Պատրիարքը անվերջ զեկուցագիր է գրում Բարձրագույն դռանը, բողոքում է հա բողոքում (ՈՄԲ, 118)»: Այդպես նաև՝ «Ծեծեց հա ծեծեց», «Փորեց հա փորեց» և այլն:

Հետաքրքրական ոճական կիրառություն ունի ու շաղկապը, երբ հաջորդում է «եմ» բային, ինչպես՝ «—Բայց մարդ է ու հիվանդացավ հանկարծ, ի՞նչ կանես ասաց նա (ԴԴ, 3, 266)»: «Ես եմ ու չգիտեմ, թե ի՞նչ է նշանակում»:

Այս դիտողություններով բոլորովին էլ չեն սպառվում և, ու շաղկապների ոճական հարուստ կիրառությունները արդի հայերենում, մանավանդ ժողովրդական խոսակցական լեզվում:

2. ԱՎԿԱԴՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Այս շաղկապները, ի տարբերություն միավորիչ շաղկապների, խոսքի կապակցվող մասերը ներկայացնում են հակադրական փոխհարաբերությունների մեջ: Որպես կանոն, նախադասության անդամների միջև այդ հարաբերությունը համեմատաբար ավելի թույլ է դրսևորվում, քան համադաս նախադասությունների միջև: Ավարտված նախադասությունների, ինչպես նաև խոսքի հատվածների միջև ևս հիշյալ հարաբերությունը մեղմ է արտահայտվում:

Պետք է նկատել, որ հակադրությունը շատ ընդհանուր հասկացություն է, այն ունի իր դրսևորման աստիճանները, իր տարբերակները: Հակադրության հիմքում մերթ ընկած է լինում ժխտման գաղափարը, մերթ սահմանափակման: Հաճախ այն բխում է զուգադրվող իրողությունների տարբերակումից, երբեմն էլ ժխտվող պայմանից: Հակադրական հարաբերությունները երբեմն բարդանում են ժամանակի, պայմանի, զիջական և այլ երանգներով: Ունենալով նման տարբերակված նշանակություններ, հակադրական շաղկապները, սակայն, իրենց արտահայտած հարաբերություններով բոլոր դեպքերում էլ հանգում են առարկության, անհամաձայնու-

թյան, սահմանափակման, հետևաբար և՛ հակադրություն
իմաստին¹:

Ստորև խմբավորում ենք այդ շաղկապները ըստ իրենց
հիմնական նշանակությունների:

Ա) Զուգադրական-հակադրական շաղկապներ — Այս
խմբի մեջ են մտնում իսկ, մինչդեռ, այնինչ, մինչ, ապա,
եթե... ապա շաղկապները, որոնք ունենալով հանդերձ իմաս-
տային տարբեր երանգներ ու ոճական կիրառություններ,
միավորվում են նույն խմբում շնորհիվ իրենց ունեցած ընդ-
հանուր շաղկապական նշանակության՝ նկարագրվող իրողու-
թյուններն ու փաստերը մեկը մյուսից տարբերակելու և իրար
զուգադրելու ու հակադրելու նշանակության: Այս խմբին են
հարում նաև երբ շաղկապի որոշ կիրառություններ: Այժմ
քննենք այդ շաղկապների կիրառությունները:

ԻՍԿ—նկատելի է, որ ինչպես այս, այնպես էլ մյուս
շաղկապների օգտագործմամբ կապակցվող երկրորդ մասը
հակադրվում է առաջինին՝ «...առանց սակայն ժխտելու կամ
սահմանափակելու կամ որևէ կերպ փոփոխելու նրա նշանա-
կությունը»²: Համեմատենք հետևյալ օրինակը՝ «Արտավազ-
դը իսկույն ձիու գլուխը շուռ տվեց և ձին, իհարկե, դուրս քա-
շեց նիզակը, իսկ ահագին վարազը անշարժ մնաց գետնին
(Բաֆ., 542—3): Այս օրինակում իսկ-ը և-ով փոխարինելիս
կապակցվող մասերը ներկայացվում են արդեն ոչ թե հակա-
դրական, այլ միավորական հարաբերությամբ, ըստ որում
այս վերջին դեպքում նրանց միջև հաստատվում է նաև հետե-
վանքի երանգ՝ կապված այդ իրողությունների ժամանակա-

¹ Գրաբարի, աշխարհաբարի հին քերականների, ինչպես նաև սովե-
տական շրջանի քերականների ճնշող մեծամասնությունը հիշյալ իմաստա-
յին հարաբերության համար օգտագործել է ներհակական տերմինը (ներ-
հակական շաղկապներ, ներհակական կապակցություն և այլն), սակայն
ոմանք զուգահեռ կերպով գործածել են նաև հակադրական տերմինը, ինչ-
պես Ս. Մալխասյանը (Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ
154):

² Մ. Աբեղեան, Աշխարհաբարի շարահիատություն, Վաղարշապատ.
1912, էջ 343:

յին հաջորդականությունն ականարկող և շաղկապի կիրառության հետ:

Համադաս նախադասությունների հակադրման հետ միաժամանակ հակադրվում են նաև այդ նախադասությունների գլխավոր անդամները՝ ենթական և ստորոգյալը: Սակայն պատահում է նաև, որ հակադրման ժամանակ շեշտը դրվում է հատկապես կա՛մ ենթակայի, կա՛մ խնդրի, կա՛մ էլ պարագայի վրա: Նման դեպքում հակադրվող անդամն է անմիջապես դրվում նախադասության սկզբում՝ իսկ շաղկապից հետո,

ա) ենթակայի հանդիպադրման դեպքեր. «—Բաճասեղծեներ մահանում են, Իսկ երգը, երգը կամիշտ... (ԳՄ, 71)»: Սակայն մարգարեն մերժեց նրա ողորմությունը, իսկ մեճք ընդունեցինք (ՍՀ, 1958, դեկտ. 12, 4):

Երբ հանդիպադրվող նախադասություններում ստորոգյալը նույնն է, ապա այն չի կրկնվում հաջորդ նախադասության մեջ: Նման դեպքերում իսկ շաղկապը ծառայում է կապակցելու այդ զուգադրվող մասերից վերջինը նախորդին: Ակնհրե է, որ նման համադաս նախադասությունները կորցնում են իրենց շարահյուսական անկախությունը՝ սերտ կախման մեջ լինելով առաջին համադասից, ինչպես՝ «Վահագնը քաջություն էր պահանջում, Անահիտը՝ արհեստ, իսկ Աստղիկը՝ սեր և բանաստեղծություն» (Րաֆ., 75)»:

Շատ հետաքրքրական է Գուրգեն Մահարու մոտ հանդիպող իսկ շաղկապի ոճական հետեյալ կիրառությունը. «Խոսեցին ուսեբեն, հետո հայերեն ասին.—հիվանդանոց տանել, իսկ Աքաբին շատ հաստ և առողջ է: Ի՞նչ հիվանդանոց: Հետո նրանք կանչեցին Աքաբուն և հարցրին, որտեղից է, իսկ նա լաց եղավ և ասաց, չգիտեմ. իսկ օրիորդը բարկացավ ասաց... որ դու չգիտես, ե՞ս գիտեմ... Բոլոր որբերը խոսում էին, իսկ վարպետ Սիմոն չէր խոսում և միայն

1 Պետք է նշել, որ թեև նախադասության նման կառուցվածքներում իսկ շաղկապի հակադրական նշանակությունը վերաբերում է անմիջապես կապակցվող հաջորդ մասին, սակայն նույնպիսի իմաստային հարաբերության մեջ են գտնվում նաև թվարկվող մյուս՝ նախորդ մասերը:

եփում էր, իսկ ճաշը շատ աղի էր: Իսկ Սուլթան ասաց... (ԳՄ, 443—444)»:

Տարբեր փաստերի հակադրումը իսկ շաղկապով այստեղ հասել է չափազանցություն: Սակայն դրանով հեղինակը ոճական յուրահատուկ երանգ է տվել դեռ երեխա Գուրգենի օրագրին՝ մանկական միամիտ շունչ ներդրելով հանկարծակի ծագող նրա մտքերի անկապ և պատահական շարադրվածքին:

Հետաքրքրական է համադաս նախադասությունների հակադրումը իսկ շաղկապով հետևյալ օրինակում. «Սև յափունջին հագին բլուրից բարձրանում էր Քեռիս: Նա ժպտում է, իսկ նրա առամները սև են (ԳՄ, 390)»: Հակադրության այս յուրահատուկ երանգը, անկասկած, առաջանում է նրանից, որ զուգադրվող ենթականերից առաջինը անձ է, իսկ երկրորդը առարկա, որով նրանց հակադրումը անիմաստ ու անտրամաբանական է թվում:

բ) Խնդիրների հանդիպարման դեպքեր. «Մնաք բարով, մնաք բարով, Գնում եմ ես, կըգամ ետ, կըգամ փառքով, հաղթանակով, Ձեզ կյանք, իսկ ինձ՝ բարի երթ (ԳՄԲ, 178)»: «Նա հանեց վերաբլուն, իսկ գլխաբլը դրեց սեղանին»: «Առաջագեմ աշակերտներին պարգևատրեցին, իսկ ծուլներին՝ նախատեցին»: Հետաքրքրական է իսկ շաղկապի փոխարինումը էլ ներառական շաղկապով. «Առաջագեմ աշակերտներին պարգևատրեցին, ծուլներին էլ նախատեցին»:

Այս դեպքը շատ պարզ ցույց է տալիս, որ իսկ-ը անմիջականորեն խնդրի զուգադրմանն է ծառայում (իհարկե, ամբողջ նախադասության բովանդակության հետ կապված), հակառակ դեպքում էլ շաղկապը չէր դրվի անմիջապես այդ անդամից հետո: Էլ շաղկապի «իսկ» նշանակության մասին մենք արդեն խոսել ենք:

գ) Պարագանների հակադրման դեպքեր. «Նա մոտեցավ, նստեց բազմոցի վրա, իսկ նրա մոտ նստեց և օրորողը (Բաֆ., 465)»: «Սկզբում ժվարությանմբ դուրս գալով ախոռից, իսկ հետո միանգամից դուրս ցատկեկով՝ Քուռակը խուլ մի խրխինջ արձակեց... (ՆԶՀ, 13)»:

Երբ հակադրվող համադաս նախադասություններում են-

թական նույն անձն է, ապա նույն ենթակաների կատարած գործողությունների հակադրման համար երկրորդ համադաս նախադասության մեջ գրվում է ինքը դերանունը, ինչպես՝ «Ուսուցիչը հանձնարարեց աշակերտներին տնային առաջադրանքներով զբաղվել, իսկ ինքը սկսեց ուղղել գրավոր աշխատանքները»:

Տարբեր փաստերի, տարբեր իրողությունների զուգադրմանը ժառանգող իսկ շաղկապը երբեմն հանդես է գալիս նաև հարակցական նշանակությամբ. օրինակ՝ «Մեծ թվով ումանսներ, իսկ դրանք հարյուրից ավելի են, գրված են մեծ ոգևորությամբ»¹: «Տոնական օրերին, իսկ տոների թիվը առասպելական է Իտալիայում շնորհիվ կաթոլիկ «սրբերի» առասպելական թվի, այդ գլխարկը մի քանի անգամ լցվում էր արծաթ դրամներով (ՎՓՀՀ, 1, 109):

«Բայց» շաղկապին մոտիկ նշանակություն է ստացել իսկ շաղկապը հետևյալ օրինակում՝ «նա սիրում էր միայն հրամաններ արձակել, իսկ (բայց) երկար չէ մտածում, թե որտեղից է գալիս հրամանը» (ՐՍ, 145):

ՄԻՆՉՊԵՆԻ, ՄԻՆՉ, ԱՅՆԻՆՉ, ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ, ԵՐԲ—Տարբեր իրողությունների զուգադրման և հակադրման նշանակությամբ իսկ շաղկապին համեմատաբար մոտ են մինչդեռ, մինչ, այնինչ, այն ժամանակ, երբ շաղկապները, որոնք ոչ ժխտական նշանակություն են արտահայտում, ոչ էլ սահմանափակման, այլ լոկ տարբերակման: Նկատելի է, որ այս շաղկապների հակադրական նշանակությունները զարգացել են նրանց ժամանակային կիրառություններից: Ժամանակի զաղափարից հակադրությանն անցնելու փաստեր կան նաև այլ լեզուներում (օրինակ՝ ռուս. тогда как, в то время как, между тем как, *Фразы. tandis que* և այլն): Անհրաժեշտ է նշել, որ հակադրական նշանակություն արտահայտելու համար այս շաղկապներով կապակցվող մասերը պետք

¹ Իսկ և բայց շաղկապների նշանակությունների տարբերությունը պարզ երևում է հետևյալ օրինակներում. «Սուրիկը գնաց քաղաք, բայց Մարտիրոսը ճանապարհ չգցեց նրան» և «Սուրիկը գնաց քաղաք, իսկ Մարտիրոսը ճանապարհ չգցեց նրան»:

է վերջադաս դիրք գրավեն: Միայն շարահասական այս կառուցվածքի դեպքում են մթագնվում հիշյալ շաղկապների ժամանակային նշանակությունները: Բերենք օրինակներ՝

Բայց առաջինի բարեկամությունը գոնե վնաս չբերավ մեզ, մինչդեռ երկրորդը ծանր հետևանքներ ունեցավ (Մուր., 60): Օր. Սահակյանն էր միայն, որ մասնակցում էր խոսակցությանը, մինչդեռ Աշխենը գրեթե բոլոր ժամանակ լուռ էր (ՆԴ, 87): Սովորաբար առավոտվա այդ վաղ պահերին մայթերը բավականին դատարկ են լինում, այնինչ փողոցի մեջտեղով, խուռն ու բազմերանգ, հոսում են բավականին ստվար բազմություններ (ԵԶ, 315): Վերի թաղեցիք փախել էին քաղաքից խճուղու ճանապարհով, այնինչ Տեկեֆոն Սեթոն որոշեց կայարանով գնալ (ԵԶ, 393): Պատահում է, որ ցեղական լավագույն ցուլերի համար շատ ավելի բարձր դին են վճարում, այն ժամանակ, երբ միջակ կուլն արժե 350—500 դոլար (Մացկեիչ, ինչ տեսանք մենք ԱՄՆ-ում և Կանադայում, Երևան, 1957, 190): Բիլբաոյում 1860 թվականին կար մոտ 11 հազար բնակիչ, այն ժամանակ, երբ Բուրգոսում հաշվվում էր 16 հազարից ավելի բնակիչ (Ֆ. Արնայս, Իսպանիա, Երևան, 1958, 49): Եթե ըմբշամարտիկը դատավորի կանչից հետո չգա գորգի վրա, ապա նա ընդհանրապես զրկվում է մրցումներին մասնակցելուց, այն դեպքում, երբ առաջ նման պայմաններում ըմբշամարտիկին պարտություն էր հաշվվում (ՀՅ, 1957, դեկտ. 27, 4):

Վերջին երեք օրինակներում օգտագործված շաղկապները անմիջականորեն պատճենված են ռուսերենի համապատասխան в то время как, тогда как, между тем как շաղկապների օրինակով, և այնքան էլ խրախուսելի չեն նրանց գործածությունները ժամանակակից հայերենում (այդ շաղկապների փոխարեն կարելի է օգտագործել մինչդեռ շաղկապը):

Հակադրական նշանակությամբ խիստ հազվադեպ է օգտագործվում մինչ բառը, որը ավելի շատ տարածված է որպես ժամանակի շաղկապ. օրինակներ՝

Լուռ է վիհը, խորհրդավոր, Մինչ նրա տեղ ամենայն օր Երզում է ծեր բուի նման Որդեկորույս մի խեղճ այան (ՀՀԵ):

նվ ազգեր կորան, մինչ քեզ, դարերում, վառ պահեց լույսի երազանքդ վեհ... (ՀԾ, 156):

Հաճախ այս շաղկապների նշանակությունը մոտենում է «բայց», «սակայն» շաղկապների նշանակությանը. բերենք մի երկու օրինակ՝ «Նա կամենում էր հրաժարվել, մինչդեռ պարտավոր էր հնազանդվել (ՕԳԲԽՊ)»: «Պայման է կապել մինչև մին էլ զարնան՝ կրկվի ձեն ածելը, այնինչ դեռ նոր են մտել ձմեռը, դեռ որտեղ են դարունն ու կկուն... (ՀԹ, 417)»:

Հիշյալ շաղկապները ժամանակի հարաբերություն չեն արտահայտում, երբ իրենցով կապակցվող նախադասությունները առաջադաս լինելով հանդերձ ստորադաս չեն (երկրորդական չեն): Այս դեպքում այդ շաղկապները վերաբերում են ամբողջ բարդ ստորադասական նախադասությանը և այն հակադրում են նախորդ մասին, ինչպես՝ «Ստորերկրյա տրնտեսություններով ժանրաբեռնված որոշ քաղաքներում գոյություն ունի միջգերատեսչական հանձնաժողով, որն զբաղվում է ստորերկրյա կաբելների ու այլ պարազանների պաշտպանության հարցերով: Մինչդեռ մեզ մոտ չկա այդպիսի հանձնաժողով, որի կարիքը վաղուց արդեն զգացվում է (Եր., 1958, մարտ. 27, 3)»:

Քննարկվող շաղկապներից միայն այնինչ-ն է, որ ժամանակակից գրական հայերենում կորցրել է ժամանակի հարաբերություն նշելու իր կիրառությունը:

Պետք է ասել, որ թվարկված հակադրական շաղկապները ժողովրդական կենդանի լեզվում քիչ են հանդիպում և հիմնականում տարածված են գեղարվեստական և գիտական ու հրապարակախոսական գրականության լեզվում¹:

Հետաքրքրական է նաև ժամանակային հարաբերություն նշող երբ շաղկապի հետևյալ կիրառությունը՝ հատկապես խոսակցական լեզվում.

Փորձիր Գեղամ գտնել, երբ Երեանը ձգվում է Շահումյանից մինչև Քանաքեռ, Արաբկիրից մինչև Սարի թաղ և նոր

¹ Մինչ շաղկապը միայն գեղարվեստական գրականության մեջ է տարածված, իսկ այն ժամանակ, երբ հարադիր շաղկապը՝ գերազանցապես հրապարակախոսության լեզվում:

Արեշ (Եր., 1959, հունվ. 1, 3): Խիստ ցավալի է, որ նա ժամանակը վատնել է իզուր, երբ կարող էր զբաղվել ավելի օգտակար գործերով: Ստիպված եմ լինում ժամերով սպասել նրան, երբ ինձ համար մի ընդհանրություն էլ թանկ է:

Այս կիրառություններում, ինչպես տեսնում ենք, ժամանակի իմաստին զուգընթաց առկա է նաև հակադրության երանգը՝ «մինչդեռ», «այնինչ», «Այն դեպքում, երբ» նշանակություններով:

ԱՊԱ—Արտահայտվող հակադրության աստիճանով «իսկ» շաղկապին մոտ է ապա շաղկապը, որը, ի դեպ, նույնպես ժամանակի մակբայ է եղել և է այժմ:

Նկատելի է, որ այս շաղկապի հակադրական նշանակությունը դրսևորվում է գերազանցապես հարցական նախադասություններում, ուր նրա օգտագործմամբ ընդգծվում է որևէ մի անդամի զուգադրումը նախորդ մասում նկարագրված մեկ ուրիշ անդամի հետ. օրինակներ՝

Նա թատրոն է գնալու, ապա դու ո՞ւր պետք է գնաս: Ընդունենք դու գնացիր ոտքով, ապա եղբա՛յրդ ինչ պետք է անի, չէ՞ որ նա հիվանդ է: Դու դպրոց ես գնում, նա՝ գրադարան, ապա տա՛նն ով մնա. հարկավոր է վերջապես երեխայի մոտ մեկին թողնել:

Ոճական լայն գործածություն ունեցող այս շաղկապը շատ է տարածված նաև ժողովրդական լեզվում՝ հապա և հատկապես բա ձևերով, նույնիսկ իմաստային այլ կիրառություններով¹. օրինակներ՝

Դու, որ ֆերմայի վարիչն ես, ասում եմ, ու այդպես թերահավատ ես դեպի պլանը, բա գոմապահներն ու կթվորները ոնց են աշխատելու (ՆՁՀ, 8): Ասելիքս էս չէր, հապա (—այլ) էն, որ նամեստնիկը իրան կուտեր, որովհետև ամոթ էր ողջ աշխարհի առաջ... (ԱԻ, 407): Բա էն մարդին, որ գելերը կերել էին՝ ձեզ էդ բուրն ո՞վ պատմեց,—հարցրեց մի գյուղա-

¹ Այս շաղկապը Նոր-Ջուլայի բարբառում ունի նաև «սակայն» նշանակությունը, ինչպես՝ «կարող աս ուտելդ, ապա շափավոր» (Հ. Աճառյան, Քննություն Նոր-Ջուլայի բարբառի, Երևան, 1940):

ցի: Հապա մարդուս խելքն ու փորձն ընչի՞ համար է,— պատասխանեց պատմողը (ՀԹՆ, 1, 403):

Երբեմն հակադրական այս նշանակություններին զուգահեռ այդ շաղկապով կապակցվող նախադասություններում աղոտ կերպով արտահայտվում է նաև հետևություն երանգ, որն անշուշտ բխում է նախորդ նախադասության բովանդակությունից: Դա զարմանալի չէ, քանի որ այդ շաղկապը հայերենում հանդես է գալիս նաև որպես հետևանքի շաղկապ. օրինակ՝ «—Սա չեմ ուզում գնալ նրա մոտ, դա ինձ համար դժվար է: —Ապա ի՞նչ պիտի անես. չէ՞ որ չի կարելի հրաժարվել»: «Ինչպես հասկանալ այդ աղջկան: Եթե նա չի սիրում Վասսակին, հապա, ինչո՞ւ է բարի գիշեր ասում այդքան մտերիմ եղանակով (ՆԶՀ, 366)»¹:

Բացի հիշյալ կիրառություններից, հանդիպում են նաև ուրիշ այլ, ոչ շաղկապական գործածություններ, որոնք հակադրության ոչ մի նշանակություն չունեն, ինչպես՝ «Ո՞ւր են, հապա (ապա) առաջըս բեր Սասմա ոսկին ու աղջիկներ» (ՀԹՆԺ, 2, 118):

Ապա շաղկապը լրագրային և գիտա-քաղաքական գրականության լեզվում հազվադեպ է օգտագործվում հակադրական նշանակությամբ:

Ապա շաղկապը օգտագործվում է նաև ինչ վերաբերում է բառակապակցության հետ: Այս վերջինս ընթերցողի ուշադրությունը նախապես հրավիրում է իրեն հաջորդող մասի վրա, որին արդեն հետևում է այդ մասին վերաբերող բացատրությունը՝ ապա—ով սկսվող նախադասության մեջ:

Իսկ ինչ վերաբերում է... (տրականով խնդիր), ապա... դարձվածաբանական արտահայտությունը մեր գրական լեզվում տարածվել է ռուսերենի (а) что касается... то արտահայտության աղղեցությամբ: Բերենք օրինակներ՝

Ինչ վերաբերվում է Փանիկյանի հաջորդ գիտողությանը..., ապա պիտի ասեմ հետևյալը (ԳԹ, 1961, մարտի 24, 3):

¹ Այս վերջին օրինակում օգտագործված է եթե... հապա զուգահիռ ձևը:

Իսկ ինչ վերաբերում է սիրո բացակայությանը սեր խաղալուն, ապա այդ երբեք նրա մտքով չէր անցնում (ՌՌԺԲ, 333): Որքան ավելի էր մոտենում մեր փրկության ռոպեն, այնքան ավելի էինք թուլանում մենք: Ինչ վերաբերում է ինձ, ապա (=իսկ ես կամ գալով ինձ) ես այլևս չարժեղ չէի կարողանում և, չնայած ցուրտ չէր, դողում էի ոտից գլուխ (ՀՄԱՀ, 232):

Ինչ վերաբերում է... ապա շաղկապական դարձվածաբանական արտահայտությունը տարածված է հատկապես քաղաքական և հրապարակախոսական գրականության մեջ:

Եթե... ԱՊԱ—Չնայած այն հանգամանքին, որ եթե... ապա շաղկապը տարածված է արդի հայերենում հենց պայմանի ու հետևանքի հարաբերությունն նշելու կիրառությանը, սակայն, նախադասության հատուկ կառուցվածքներում, այդ զուգադիր շաղկապը բոլորովին կորցնում է իրեն հատուկ այդ նշանակությունը և արտահայտում է տարբեր փաստերի, երեվույթների և իրողությունների զուգադրում ու տարբերակում, ըստ որում այդ զուգադրումը հակադրական բնույթ ունի հենց այդ տարբեր, իրարից չբխող փաստերի առկայության պատճառով¹: Այս տեսակետից այս զուգադիր շաղկապը նշանակությամբ մոտ է այն ժամանակ, երբ, մինչդեռ, այնինչ շաղկապներին: Եթե... ապա զուգադիր շաղկապի այս կիրառությունը վերջերս է տարածվել լեզվում՝ ռուսերենի еслх... то շաղկապի ազդեցությամբ: Հետաքրքրական է, որ ռուսերենում էլ այն տարածվել է, ինչպես Դ. Ուշակովի քառահատոր բառարանում է նշված², գերմաներենի wenn շաղկապի գործածության նմանողությամբ (հատկապես XX դարում): Ռուսերենում, ինչպես նաև հայերենում, այդ շաղկապը գրքային ո՞ն է տալիս խոսքին: Զուգադրման նշանակությամբ հակադրելով ամբողջ համադաս նախադասությունների բովանդակությունները, այդ շաղկապը, իսկ, ոչ քե, այլ և ուրիշ մի քանի

¹ Այս հարաբերության առկայության դեպքում կապակցվող մասերում հիմնականում նույն եղանակա-ժամանակային ձևերն են օգտագործվում:

² Москва, 1934, том I, 837.

շաղկապների նման, կարող է հատկապես ընդգծել նախադասության տարբեր անդամների դուգադրումը, սովորաբար այն անդամների, որոնք անմիջապես եթե և ապա շաղկապական բաղադրիչներին են հաջորդում. օրինակներ՝

Եթե բանաստեղծը չէր հասկանում երաժշտին, երաժիշտն էլ բանաստեղծին, ապա դերասանները ոչ մեկին էին հասկանում, ոչ մյուսին (ՌՌԺՔ, 346): Եթե խաղալու բոցավառ սերը Սիրանույշը ձեռք բերեց իր դեռահասության տարիներին... ապա հասունության շրջանում նրա մեջ արթնացավ գեղարվեստը (ՍԳ, 1957, № 12, 37): Եթե հոկտեմբերին, նշում է թեթթը, գրիպով հիվանդանալու դեպքերը հիմնականում նկատվել էին միայն Սենայի դեպարտամենտում, ապա նոյեմբերին գրիպի համաճարակը տարածվել էր երկրի մյուս շրջաններում (ՍՀ, 1957, դեկտ. 28, 4): Եթե քաղաքի կենտրոնին առավել լուրջ ուշադրություն է դարձվում, ապա նույնը չի կարելի ասել ծայրամասերի վերաբերյալ (ՍՀ, 1958, հունվ. 3, 2):

Բ) Ժխտման նշանակություն արտահայտող հակադրական շաղկապներ—Հակադրական այս նշանակությունն են արտահայտում այլ, ոչ թե... այլ, ոչ թե, և ոչ թե, այլ ոչ թե շաղկապները, որոնց օգտագործմամբ համադասական կապակցությունը կառուցվածքային երեք տարբեր ձևավորում է ստանում: Ըստ այս հատկանիշի էլ հիշյալ շաղկապները բաժանվում են 3 խմբի: Պետք է նշել, որ այս երեք խմբի շաղկապներին էլ հատուկ են կապակցվող մասերից մեկի ժխտումը, բացասումը:

Ա31—Այս շաղկապը, որ հատուկ է գրավոր լեզվի բոլոր տեսակներին, հանդես է գալիս միմիայն համադասական կապակցության մեջ: Ավարտված նախադասությունների, պարբերությունների միջև նա գործածություն չունի: Դա շատ հասկանալի է, քանի որ նրանով կապակցվող միավորները քերականական փոխկախվածության մեջ են լինում միմյանց հետ: Այլ շաղկապի օգտագործմամբ առաջին նախադասության ստորոգյալը ժխտական ձևով է հանդես գալիս, որով ժխտվում է այդ նախադասության բովանդակությունը և ըն-

դունելի է դառնում այլ շաղկապով սկսվող մասի բովանդակությունը: Բերենք օրինակներ՝

— Իզուր ես այդպես կարծում, սիրելի մայրիկ, — պատասխանեց Սամվելը անվրդով կերպով, — ես կամենում եմ ցույց տալ, որ այնքան տգետ չեմ, այլ բոլորի նշանակությունը հասկանում եմ (Բաֆ., 46): Ձի մոռանում ասել նաև այն, որ ինքը դիմակավորված չէ և ոչ էլ թուսջանական տիպի մի փեթերիստ, այլ իրեն գերում է մաքուր և անարատ սերը (ՄԴ, 1957, դեկտ. 26, 4):

Երբեմն այս շաղկապը դորացվում է ընդհակառակն(ը) միջանկյալ բառով, որով ավելի է շեշտվում հակադրությունը. օրինակ Կաթողիկոսի վարմունքը ո՛չ միայն չհուսահատեցրեց, այլ, ընդհակառակը, ավելի ևս ոգևորեց նրան յուր մտադրությունն առաջ տանելու (Մուր., 241):

Նախադասության անդամների կապակցման դեպքում նկատելի է մի առանձնահատկություն: Վերլուծենք հետևյալ օրինակը՝ «Սուրիկը տանը չի պարապում»: Այստեղ ժխտվում է Սուրիկի տանը պարապելու իրողությունը: Միաժամանակ անորոշ կերպով նշվում է նրա ընդհանրապես չպարապելու իրողությունը, մինչդեռ՝ «Սուրիկը տանը չի պարապում, այլ գրադարանում» նախադասության մեջ արդեն չպարապելու մասին խոսք չկա, այլ նշվում է միայն այն, որ տա՛նն է, որ չի պարապում, իսկ գրադարանում պարապում է: Ինչպես տեսնում ենք, ստորոգյալի ժխտական նշանակությունը: սահմանափակվեց՝ վերաբերելով միայն տեղի պարագաներից առաջինին: Բերենք այլ օրինակներ՝

— Թագուհին այլևս հետամուտ չէ փառքի, այլ հոգվող հանգստության (Մուր., 227): Այն ժամանակ Շենն այժմվա ձորերում չէ, այլ ավելի հյուսիս (ԱԲՆ, 312): Բայց կամենում եմ, որ դու տիրանաս նրանց ոչ իբրև իմ հակառակորդ, այլ իբրև եղբայր (ՄԳՄ, 364):

ՈՉ ԹԵ... ԱՅԼ— Առաջին համադաս նախադասության ստորոգյալի ժխտական չ-, չի մասնիկների փոխարեն շատ հաճախ օգտագործվում է ոչ թե (գրաբարում ոչ եթէ) շաղկապական բաղադրիչը: Որպես կիրառական առանձնահատկու-

թյուն պետք է նշել, որ շաղկապական այդ երկու բաղադրիչները սովորաբար տեղադրվում են նախադասության այն անդամներից առաջ, որոնք ժխտվելու ենթակա են. օրինակներ՝

Տեսել եմ նրան ոչ թե երազում, այլ հենց կյանքի մեջ (ՀՀԵ, 157): Ոչ թե կրիա էր քո բերածը, այլ ես էի (ՀԹԵ, 2, 352):

Երբ հակադրվում են ստորոգելիական վերադիրները կամ բուն բայերը, ապա այդ դեպքում շատ հաճախ հանգույցը կամ օժանդակ բայը շի կրկնվում, ինչպես՝ «Նա ոչ թե աշակերտ է, այլ ուսանող»: «Նա ոչ թե քայլում էր, այլ վազում»: Այս ձևով կարծես հակադրությունը ավելի է շեշտվում:

Ոչ թե բաղադրիչի ժխտական նշանակությունը կարող է վերաբերել ոչ կոնկրետ նշանակություն ունեցող մի բառի, որի բովանդակության բացահայտման համար առկա է երկրորդական մի նախադասություն: Օրինակ՝ «...եվ եթե խորը քննենք, կտեսնենք, որ այդ մեկամաղձությունն ու հոռետեսությունն արդյունք են լինում ոչ թե այն քանի, որ նրանք կյանքն ունայն են համարում, այլ այն գիտակցությամբ, որ իրենց կյանքն ունայն է անցնում, հակառակ իրենց կամքի ու ցանկության (ՆԴ, 84)»:

Ոչ թե բաղադրիչի փոխարեն երբեմն օգտագործվում է ոչ ձևը (այս վերջինս տարածված էր նաև գրաբարում). օրինակներ՝

«Թվաց նրան, որ գտնվում է ոչ սիրող մոր, այլ մի անողորմ դատավորի առջև (Շիրվ., 35)»: «Քյազիմ-բեգը սթափվեց ոչ երկյուղից, այլ ամոթից.—(Շիրվ., 99)»:

Թեև ոչ թե բաղադրիչով ժխտվող անդամը ազատ շարադասություն ունի, սակայն այն մեծ մասամբ նախադասության վերջում է տեղադրվում՝ այլ շաղկապից անմիջապես առաջ: Այս դեպքում ժխտման նշանակությունը ավելի է ընդգծվում: Համեմատիր հետևյալ օրինակները. «Ոչ թե Սուրիկը գնաց դպրոց գնդակ խաղալու համար, այլ Աշոտը» և «Գրեհակ խաղալու համար դպրոց գնաց ոչ թե Սուրիկը, այլ Աշոտը»:

Սխալ գործածություն պետք է համարել ոչ թե բաղադրիչի փոխարենն չէ թե ձևի գործածությունը, ինչպես՝ «Այս տեսակետից ես չեմ անտարբեր եմ, այլ սպասողականության մեջ եմ.... (ՏԱԿ, 2, 417)»:

Ի վերջո պետք է ասել, որ ոչ թե... այլ, ոչ... այլ զուգահեռ շաղկապները հանդես են գալիս էլիպտիկ կառուցվածքներում, գերազանցապես ծառայելով նախադասության անդամների կապակցմանը:

Ոչ թե... այլ շաղկապի անալոգիայով երբեմն օգտագործում է ոչ միայն... այլ զուգահեռ շաղկապը: Գրաբարում այս վերջինս բավական տարածված էր, բայց արդի հայերենում այն գրեթե չի գործածվում՝ փոխարինված լինելով ոչ միայն... այլև միավորիչ զուգահեռ շաղկապով: Հետաքրքրական է նշել, որ հակադրական և միավորիչ շաղկապների երկու նշանակություններն էլ կարծես համատեղվում են այդ զուգահեռ շաղկապի օգտագործմամբ. օրինակ՝

Իսկ Արուսի երեսին վիշտը թուխպ էր դրել, Այդպես երկինքն է մթնում արհավիրքից առաջ: Ոչ միայն խոր վիշտն է այդ, այլ քանդակված վրեժ, Աղաղակող լուծություն ու քարացած թառանչ (ՆՁ, 243): Նախարարները զգացին այդ մանավանդ երբ տեսնում էին, որ իրանց հպատակներից ոչ միայն դժգոհները, այլ (պետք է լինի այլև) ամեն ոք հաճությամբ կտեղափոխվի այն ազատ քաղաքը... (Բաֆ., 189):

ՈՉ ԹԵ, ԵՎ ՈՉ ԹԵ, ԱՅԼ ՈՉ ԹԵ—Ժխտական նույն նշանակությունն է արտահայտվում այս շաղկապների օգտագործմամբ, այն տարբերությամբ միայն, որ այս դեպքում ժխտովող մասը տեղադրվում է շաղկապից հետո, ոչ թե առաջ՝ Այսպիսով, այս շաղկապներով կապակցվում են, ինչպես սրամիտ կերպով նկատել է Մ. Աբեղյանը, նույն այդ ժխտական կապակցությունները, սակայն շուռ տված ձևով՝ (օրինակ՝ ես չեմ կարդում, այլ գրում եմ=ես գրում եմ, և ոչ թե կարդում): Այլ օրինակներ՝

Քանի որ դասագիրքը ոչ հայկական դպրոցների համար

1 Մ. Աբեղյան, Աշխ. շար., 340:

է, հետեւապէս այնտեղ պետք է իրենց արժանի տեղն ունենային հայ կլասիկ գրականութեան, ինչպէս նաեւ սովետահայ գրականութեան լավագոյն նմուշները և ոչ թէ թարգմանական նյութեր (Եր., 1958, ապր. 1, 3): Միհրնէրսէհը մեր կրօնափոխն է ուզում, ոչ թէ մեր պատիժը (ԴԴ, 3, 292):

Այս շաղկապի հակադրական-ժխտական նշանակութիւնը զորացվում է, երբ և-ի փոխարեն օգտագործվում է այլ շաղկապը, ինչպէս՝ «—Ի՞նչ ես ձենդ գցել... էստեղ թատրոն է, այլ ոչ թէ կալատեղ (ՆԶՊՊ, 457)»: «Դրա նպատակն է՝ խորացնել զինաթափման բնագավառում ստեղծված փակուղին, այլ ոչ թէ դուրս բերել փակուղուց (Եր., 1958, մարտ, 12, 3)»:

Հանդիպում է նաեւ և ոչ, ինչպէս՝ «Բայց վեպի համար հարկավոր է ընթացիկ, շարժուն կյանքը յուր բոլոր երեւոյթներով, և ոչ թափափորների կամ իշխանների աշխարհակալութեան կամ պարտութեան շոր ու ցամաք տարեգրութիւնը (Բաֆ., 8)»:

Պատահում է նաեւ ժողովրդական ոճով չէ՝ թէ ձեւը, ինչպէս՝ «Նիզակի՛ է գնում ձեռս, Նիզակի՛, չէ՛ թէ գերանդու,— խոսեց մի շինական (ԴԴՎ, 350)»: «...Ա՛խ, բախտ չունեմ, բախտ որ ունենայի, թագավորի աղջիկը կնիկս կլիներ, չէ՛ թէ քեզ պես անզգամը (ԱԻ, 352)»:

Գ) Ենթադրական հիմունքի երանգ արտահայտող հակադրական շաղկապներ (ԹԵ Զէ, ԱՊԱ ԹԵ ՈԶ, ԵԹԵ ՈԶ, ԱՅԼԱՊԵՍ)— Իմաստային և կառուցվածքային առանձնահատկութիւններով նախորդներից տարբեր են այս շաղկապներով կապակցվող համադաս նախադասութիւնները: Կապակցվող մասերից առաջինում խոսվում է այնպիսի մի իրողութեան: Կամ ենթադրութեան մասին, որը եթէ չիրականանա, ապա կունենա այն հետեւանքը, որ նշված է հաջորդ նախադասութեան մեջ: Այս յուրահատուկ հարաբերութիւնը առաջանում է վերոհիշյալ շաղկապների կիրառութեան շնորհիվ, որոնք ունեն գեղչված պայմանի երկրորդական նախադասութեան արժեք: Այսպիսով այս շաղկապների հակադրական նշանակութիւնը հանդես է գալիս պայմանի և հետեւանքի ֆոնի վրա, որով և

այս շաղկապները զգալիորեն տարբերվում են հակադրական մյուս շաղկապներից. օրինակներ՝

Քանի որ մտածել ես, շտապիր, քե չէ (=իսկ եթե չշտապես, ապա...) ուրիշները կարող են քեզանից առաջ ընկնել (ՀՔ, 29): Նշված ժամին դպրոցում կլինես, այլապես (=իսկ եթե չլինես, ապա...) նրանք քեզ չեն գտնի:

Հակադրական նշանակության արտահայտման համար հիմք է ծառայում բացակա առաջին համադասի բովանդակության ժխտական ձևով ընկալումը, որն ակնարկվում է այդ շաղկապներով (համեմատիր՝ ...շտապիր, իսկ եթե չշտապես...=շտապիր, եթե ոչ..., քե չէ..., այլապես..., ապա քե ոչ...): Նկատելի է, որ այդ շաղկապների օգտագործմամբ հիմունքի, պատճառի յուրահատուկ երանգ էլ է դրսևորվում, ինչպես՝ «Չարություն մի՛ անիր, քե չէ (որովհետև) հայրդ կբարկանա»: Պարզ է, որ այս շաղկապները, ունենալով հիշյալ առանձնահատկությունը, ծառայում են լոկ համադաս նախադասությունների կապակցմանը, հանդես չգալով ոչ նախադասության անդամների և ոչ էլ ավարտված նախադասությունների ու պարբերությունների շաղկապման դերով:

Թե Զէ—Հեռացեք կամուրջից, քե չէ կրակում եմ (ԱԲԵ, 283): Մայրը կռահում էր նրա անկողնին, խնդրում, աղաչում, որ զարթնի, գնա կովերը դաշտ քշի, քե չէ կբարկանա խանումը, նրան դուրս կանի գործից, Լեոնն ու նրա քույրերը կմնան սոված (ՆԶԶ, 3—4):

Այս շաղկապը իմաստային և ոճական այլ երանգ է ձեռք բերում հետևյալ օրինակների մեջ. «Շատ լավ ես արել, որ սափրվել ես, քե չէ ի՛նչ է մեր կերպարանքը, ի՛նչ պիտի սովորի կոլխոզնիկը մեզանից (ՆԶԶ, 248)»: «Դա բավականություն է պատճառում նրան: Այժմ նա ավելի ուրախ է և ավելի լավ, քան գարնանը: Թէ չէ՝ նա այնպես մռայլ էր ու այնպես տանջվում էր, որ ես սկսում էի սոսկալ նրա համար (ՏԱԿ, 487)»: Թէ չէ շաղկապի այս կիրառությունները տարածված են հատկապես կենդանի ժողովրդական լեզվում:

Հակադրության ոչ մի երանգ չունի նախադասության վերջում գործածվող քե չէ շաղկապական կապակցությունը,

որը ժամանակային հարաբերությունն է նշում, ինչպես՝ «Զև-
ռիս թվանք կա, միայն լավ գիտեմ, որ գիլի բոլուկի վրա
թվանք չեն գցիլ, թվանք գցես քե չէ՝ ավելի կատաղի վրա
կտան (ՀԹ, 396)»:

ԵԹԵ ՈԶ—Այս շաղկապական կապակցությունը նախոր-
դից տարբերվում է սոսկ ինտոնացիոն հատկանիշով: Սրան
հաջորդող նախադասությունը սովորաբար նրանից բաժան-
վում է կամ բուլթով, կամ անջատման գծով¹. օրինակներ՝

Վախենում եմ հյուրեր գան, անցնեն և հանկարծ չնկա-
տեմ, մինչդեռ ես ցանկանում եմ հաշվել քանի հյուր է մըտ-
նում ներս. որոշել եմ եթե տաս հոգի գնա, ես նույնպես կմըտ-
նեմ ներս. եթե ոչ—կսպասեմ (ՍԶ, 359): —Այո, շուտով,
եթե ոչ՝ այնտեղ մեր սևագլուխները հանդեսը կբանան
(ԴԴ, 3, 43):

Վերջում պետք է ասել, որ այս շաղկապը նախորդի
(թե չէ) գրական ձևն է, որի պատճառով այն ժողովրդական
խոսակցական լեզվում այնքան տարածված չէ:

ԱՊԱ ԹԵ ՈԶ—Արդի հայերենի գրական լեզվի հակադրա-
կան շաղկապներից է, նույնպիսի ենթադրական հիմունքի
երանգով. օրինակ՝ «Սատար օգնություն է պետք, ապա քե ոչ
նավաբեկությունն ասկհայտ է (ԴԴ, 3, 333)»:

ԱՅԼԱՊԵՍ²—Նախորդ երեք շաղկապների նման հակա-
դրական հարաբերություններ է նշում նաև այս շաղկապը,
դարձյալ ենթադրական հիմունքի աղոտ երանգով. օրինակ-
ներ՝

...Վերածնությունը պետք է կատարյալ լինի, այլապես
նորից նախկին ցեխի մեջ խրվելու վտանգի մեջ կգտնվեմ
(ՆԴ, 165): Իսկ տատս—նույնպես աստվածավախ մի կին—
զանգերի այդ ղողանջից ենթադրել է, որ ես հավանաբար
սպասավոր եմ դառնալու.—այլապես իմ ծնունդը չէր զուգա-
դիպի եկեղեցու զանգահարության... (ՍԶ, 9):

Թվարկված այս բոլոր շաղկապները իրենց կիրառու-

1 Անջատման գիծ օգտագործելը խրախուսելի չէ:

2 Բաֆֆու «Սամվել» և Մուրացանի «Գեորգ Մարգարտունի» վեպե-
րում ոչ մի այլապես գործածված չկա:

թյունների մեծ մասում նշանակությամբ համարժեք են «հակառակ դեպքում» բառակապակցությանը, Համեմատիր հետևյալ օրինակը՝ «Բարեբախտաբար, ջրի պակասելու հետ մեկտեղ մթնոլորտային ճնշումը նվազում էր, հակառակ դեպքում բոլորս խեղդամահ կլինեինք (ՀՄԱԸ, 227)»:

Գ) Սանմանափակման նշանակությունն արտահայտող հակադրական շաղկապներ—Այս իմաստային երանգն ունեն բայց, բայց և այնպես, սակայն, սակայն և այնպես, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այնուամեղեքձ, այսուամեղեքձ, միայն, միայն քե շաղկապները: Սրանք տարբերվում են հակադրական մյուս շաղկապներից նրանով, որ սահմանափակում են նախորդ նախադասության բովանդակությունը՝ իրենցով կապակցվող հաջորդ նախադասության բովանդակության պատճառով: Այս շաղկապները իրարից տարբերվում են իմաստային և ոճական նուրբ երանգներով, ինչպես նաև հակադրության արտահայտման այս կամ այն աստիճանով: Այս վերջին հանգամանքի համար նշանակություն ունի նաև բարդ համադասական նախադասության բաղադրիչ մասերի երկկազմ կամ միակազմ լինելը, ենթակաների ընդհանուր կամ տարբեր լինելը և այլն: Նկատելի է, որ այս շաղկապների օգտագործմամբ սահմանափակման ընդհանուր նշանակությունից բխող զիջական երանգ էլ է արտահայտվում:

ԲԱՅՑ—Ամենագործածական հակադրական շաղկապն է, որը լայն տարածում ունի գրական լեզվի բոլոր ոլորտներում: Իր ունեցած նշանակության պատճառով այդ շաղկապը դարձել է առարկություն, անհամաձայնություն արտահայտող բառի հոմանիշ: Այսպես՝ երկախոսություններում՝ վիճաբանությունների ժամանակ շատ հաճախ են հանդիպում նման արտահայտություններ՝ «ոչ մի բայց», «առանց բայց-ի», և այլն, մինչդեռ երբեք չեն ասում «ոչ մի իսկ», «ոչ մի այլ»:

Արտահայտելով առարկություն ու անհամաձայնություն և սահմանափակելով նախորդ նախադասության բովանդակությունը որևէ կողմով, այս շաղկապը միաժամանակ ունի երկրորդական, լրացուցիչ իմաստային երանգներ: Օգտա-

գործվում է ինչպես նախադասության անդամների, այնպես էլ համադաս նախադասությունների միջև: Շատ տարածված է նաև երկախոսություններում, որտեղ հատուկ կենդանություն ու շեշտակիություն է տալիս խոսակիցների առարկություններին:

Այժմ տեսնենք, թե իմաստային ի՞նչ երանգներ ունի այս շաղկապը հակադրության և սահմանափակման իր հիմնական նշանակություններին զուգընթաց:

ա) Այս շաղկապով կապակցվում են այնպիսի համադաս նախադասություններ, որոնք հակադիր մտքեր են պարունակում: Այդ հակադրությունը այն յուրահատկությունն ունի, որ առաջին նախադասությամբ նշվում է մի իրողություն, որին պետք է, նրա արտահայտած բովանդակության պատճառով, տրամաբանական այլ հետևություն հաջորդեր, քան այն, ինչ որ նշվում է բայց շաղկապով սկսվող երկրորդ նախադասությամբ: Այդ է պատճառը, որ նման նախադասությունները սովորաբար զերծ չեն նաև զիջական երանգից¹. օրինակներ՝

Նոր վանդալները կործանման անարգ զենքերն են նյութում, Բայց դու՛ խաղաղ և անսասան, դու կառուցում ես նորից (ՆՁ, 144): Տարիներ հետո քեզ տեսա նորից, Սիրտըս արտասվեց, բայց ժպտացի ես... (ԱԻ, 45): Սենյակը փոքր էր, համեստ, գրեթե աղքատ կահավորանքով, բայց լավ տպավորություն էր թողնում (ՆԴ, 62):

Ձիջական երանգի գոյությունը հաստատելու համար կարելի է վերի օրինակներից մեկը օգտագործել ստորադասական շնայած... բայց զուգադիր զիջական շաղկապով. օրինակ՝ «Չնայած սենյակը փոքր էր, համեստ, գրեթե աղքատ կահավորանքով, բայց լավ տպավորություն էր թողնում»:

Ինչպես տեսնում ենք, իմաստային լուրջ տարբերություն չկա այդ երկու նախադասությունների արտահայտած բովան-

¹ Եվ պատահական չէ, որ զուգադիր զիջական շաղկապներից երկրորդը միշտ հակադրական շաղկապ է լինում, այն էլ զիջական երանգ ունեցող, ինչպես՝ շնայած... բայց (սակայն, այնուամենայնիվ), թեպետ... բայց (սակայն) և այլն:

դակությունների միջև: Տարբեր է միայն կապակցության շարահյուսական եղանակը (ստորագասական և ոչ թե համադասական) և զիջական հարաբերության դրսևորման աստիճանը:

բ) Բայց շաղկապը ունի նաև մեկ ուրիշ նշանակություն: Նա սահմանափակում է նախորդ մասում արտահայտված բովանդակությունը՝ հակադրելով նրան այնպիսի մի լրացուցիչ փաստ, իրողություն կամ հատկանիշ, որը որևէ կողմով ճշտում է այդ մասի բովանդակությունը՝ վերապահությամբ միայն ընդունելի դարձնելով այն, ինչպես՝ «—Ինչ ուզում է լինի՝ պետք է այս գիշեր գործը զուլի բերենք: Հետո կարելի է, բայց ուշ կլինի (ԳԴ, 134)»: «—Շուշան, սիրելի լավ է, բայց երբ չեն սիրվում, այդ է վատը (Շիրվ., 325)»:

Բայց շաղկապի օգտագործմամբ կապակցվող մասի ճշգրտող բնույթը ավելի պարզ է արտահայտվում, երբ կապակցվող մասը քերականորեն ձևավորված նախադասություն է: Այս դեպքում հակադրությունը մասնակի է և չի ժխտում ամբողջապես նախորդ մասը. օրինակ՝ «Այսօր անձրև է նորից, բայց աշնանայի՛ն, հյուսիսային (ՎՏ, 365)»: Այս օրինակում անձրևելու փաստը չժխտվեց, բայց ճշտվեց նրա ինչպիսի անձրև լինելը: Այդպես նաև մյուս օրինակներում՝

Այդ աստիճանի անգթություն չէր անի Սամվելը,—ասաց հիվանդը:—Նա ընդունակ էր սպանելու, բայց ոչ հոր մարմինը անպատվելու (Բաֆ., 568): Այնտեղ էլ ուտում էին ախորժակով, բայց արժանավայել, խմում էին շատ, բայց ոչ շտապով և ոչ աղմկալի, ծիծաղում էին, բայց ցածր ձայնով (Շիրվ., 27): Ազամ, երբ աչքերը բացեց, տեսավ իր մոտ նստած մի նոր ընկեր, ո՛չ կիլիթի պես կատարյալ և հրեղեն գեղեցիկ, սակայն դարձյալ գեղեցիկ, բայց հողաբույր, բայց մարդկորեն (ԱԻ, 332):

Այս օրինակները դերժ են զիջական երանգից:

գ) Զիջական երանգը բացակայում է և հակադրության նշանակությունն էլ մասամբ մեղմանում է հետևյալ կառուցվածքի նախադասություններում՝ «Պարրոտը խուլ ձայնով ասաց.—Ես ձեզ, սիրելի Աբովյան, այժմ կհայտնեմ մի տեղեկություն, բայց պետք է խնդրեմ, որ ոչ ոքի չասեք՝ նույն-

նիսկ տիկին Աուալենդերին (ԱՌԾ, 365)»: «Ես ձեզ կտամ այդ գիրքը, քայց պետք է շուտ վերադարձնեք»:

Այս օրինակներում հակադրությունը որոշ չափով կապվում է պայմանի հետ, քանի որ առաջին համադասի մեջ նկարագրվող իրողության իրականացումը որոշակի կախման մեջ է քայց շաղկապով սկսվող նախադասության արտահայտած վերապահումից կամ պայմանից: Այսպես, այս օրինակներից վերջինը կարող է ներկայացվել նաև հետևյալ կառուցվածքով՝ «Ես ձեզ կտամ այդ գիրքը, եթե շուտ վերադարձնեք»:

Ծիշտ նույնպիսի հարաբերություն է դրսևորվում նաև հետևյալ օրինակներում, ուր սակայն առաջին համադասում նկարագրվող դեպքի իրականացումը նախապես ժխտվում է՝ քայց շաղկապով սկսվող երկրորդ համադասի բովանդակության պատճառով. օրինակներ՝

Սուրիկը կգար երեկոյթին, քայց հիվանդ է (= եթե հիվանդ չլիներ): Նա կուզենար խորհրդակցել մյուսների հետ, քայց վերջին օրերս և այդ օրը մանավանդ՝ նախարարները մի տեսակ շփոթ և անտրամադիր հոգեվիճակում էին (= եթե մի տեսակ շփոթ... հոգեվիճակում չլինեին) — ԴԴ., 3, 449:

Այս կիրառություններում քայց շաղկապը զիջական էրանդ չունի: Նկատելի է նաև, որ քայց շաղկապից առաջ արտասանական որոշ դադար է տրվում, իսկ առաջին նախադասության վերջին բառի արտասանության ժամանակ ձայնի որոշ իջեցում է կատարվում, մինչդեռ մյուս դեպքերում, հատկապես զիջական երանգի առկայության դեպքում, ընդհակառակն, ձայնի տոնը բարձրանում է (համեմատիր՝ «Ես հիվանդ եմ, քայց կգամ դասի»): Հակադրությունը մեղմ է, երբ այն կախված է հեշտ իրագործելի մի պայմանի ընդունումից, ինչպես՝ «Ազատ ես, կարող ես գալ ինձ հետ»: Այո, քայց նախ գնանք ընկերոջս կանչելու»: Այստեղ քայց-ը հեշտությամբ կարելի է փոխարինել միայն եթե շաղկապով:

դ) Բայց շաղկապը հանդես է գալիս նաև համադասական կապակցությունից դուրս՝ ավարտված նախադասությունների և պարբերությունների միջև: Այս դեպքում արդեն սահ-

մանափակման և դիջական նշանակությունները կապակցվող մասերի միջև աղոտանում են: Բերենք մի երկու օրինակ՝

Իսկ Վարդանը տեսնելով Վասակի խայտառակությունը՝ կրկին մղվեց Պիղամտելու: Բայց հիմա ընկավ անտանելի և անել դրության մեջ (ԴԴ, 4, 233): Հանկարծ նա հիշեց Անգղի շարաշուք զինվորյալի դեմքը փաթաթած: Եվ գունատվեց: Նա վարկաբեկվում էր շարաշար: Նա մենակ մնաց իր անխոհմ պոռթկումով: Բայց դեպքն էլ դաժան էր, անվայել, աննախընթաց, խելքից մտքից դուրս (ԴԴ, 4, 234):

Բայց շաղկապով կապակցվում են նաև լեզվական այնպիսի միավորներ, որոնցում նկարագրվող իրողությունները հանդես չեն գալիս որպես նախորդ մտքի տրամաբանական զարգացում: Կարճ ասած, այս շաղկապը օգտագործվում է նաև այն ժամանակ, երբ խոսքի նյութը փոխվում է, այլ հարց է շոշափվում, այլ խնդիր է առաջ քաշվում: Հաճախ էլ խոսակցության կամ մտածմունքի պահին ավելի կարևոր, անհրաժեշտ (կամ այդպես կարծվող) մի փաստ հիշելու պատճառով է ընդհատվում նախորդ միտքը¹: Նման դեպքերում Բայց շաղկապը ստանում է մեղմ հակադրություն արտահայտելու յուրահատուկ նշանակություն. օրինակներ՝

Մի կառք անցավ փողոցից զանգուակների զնգզնգոցով: Այդ էլ լռեց: Հիմա որ ոչ մի շշուկ չկա: Բայց ահա թիկենու տերևները խշխշացին (ԳՄ, 407): —Շա՛տ շնորհակալ եմ քո քարեսրտության համար,—պատասխանեց ուղևորը,— Բայց ես կխնդրեի քեզանից ընդունել ձեզ մոտ, որպես հյուր, իմ ձիուն միայն (Բաֆ., 19):

Երբեմն, կենդանի խոսակցական լիզվում, Բայց շաղկապը փոխանակ կապակցվող մասից առաջ դրվելու, օգտագործվում է վերջում, չկորցնելով իր հակադրական նշանակությունը, ինչպես՝ «—Տեսա՞ր Հրանտին, ասացի՞ր դալու մասին:—Տեսա, ասացի, չի ուզում Բայց»: Կարծես վերջում է հիշվում հակադրելու անհրաժեշտությունը և հենց վերջում էլ

¹ Բայց շաղկապի այս վերջին նշանակությամբ կիրառությունը կարելի է հարակցական համարել:

դրվում է այդ շաղկապը՝ հիշյալ հարաբերությունը ընդգծելու համար: Ի դեպ, ժողովրդական խոսքում նման վերջադաս կիրառություններ ունեն նաև որովհետև, չնայած և այլ շաղկապներ: Այս գործածությունները, սակայն, մնում են որպես մասնակի դեպքեր՝ հենց ժողովրդական լեզվում: Արդի հայերենի գրավոր խոսքում շաղկապների այդօրինակ կիրառությունների չենք հանդիպում, բացառությամբ սակայն, համեմայն դեպս բառերի, որոնք, հարկ եղած դեպքում, կարող են վերջադաս դիրք գրավել:

Սրանք են հիմնականում բայց շաղկապի իմաստային կիրառություններն ու երանգները արդի հայերենում:

ՍԱԿԱՅՆ—Իր արտահայտած հարաբերությունների բնույթով այս շաղկապը հոմանիշ է «բայց»-ին: Թեև դժվար է որոշակիորեն ասել, թե որոնք են այս շաղկապների տարբերիչ գծերը, սակայն թվում է, թե «սակայն» շաղկապի օգտագործմամբ հակադրությունը ավելի մեղմ երանգ է ստանում: Ստորև խմբավորում ենք այս շաղկապի կիրառությունները՝ պահպանելով նախորդ շաղկապի իմաստային երանգների դասդասումը նույն համարակալումով:

1) Հակադրություն՝ գիշական երանգով. «Ձին մինչև ծնկները թաղվեց կունրակի՝ մեջ, սակայն չդանդաղեցրեց իր ընթացքը (ՆՁՀ, 14)»: «Կինը ճշաց, սակայն ոչ ոք չվազեց նրա ճիչին (ԱԲԾ, 556):

2) Լիիթ ծիծաղելով, սակայն ցուրտ ձայնով ասաց (ԱԻ, 326): Այս կինը, որ նոր էր սգից դուրս եկել, հագնվել էր ամենավերջին տարազով, բայց որպես անշնորհք, սակայն գեղեցիկ դերասանուհի (Շիրվ., 220):

3) Որևէ իրողություն կատարման համար խանգարիչ փաստարկ է մեջ բերվում՝ հաճախ պայմանի երանգով՝ «Ծս կկատարեմ իմ խոստումը, սակայն դու պետք է լավ աշխատես»: «Դուք ինձ վաղը կանչել եք, սակայն ես այդ օրն զբաղված եմ»:

¹ Պետք է լինի կունարկ:

4) Ընդհանրապես հակադրության հարաբերությունն է արտահայտում հետևյալ օրինակներում, ուր նախորդ երանդները աղոտանում կամ բոլորովին վերանում են. օրինակներ՝

...Տեսնելով, որ երիտասարդ ուղեկիցը տրամադրություն չունի խոսելու, լռեց: Սակայն երկար չհամբերեց և հարցրեց (ՆԴ, 16): Աղջիկը համաձայն չէ հոր հետ: Ոչ, նրա ուսուցիչները լավ են: աղջիկը հարգում է նրանց: Սակայն ասել իմ կարծիքը վախենում էր (ՄԴ, 1958, հունվ. 17, 4): Ամեն անգամ վերադարձել էր ուրախ, սակայն հենց սանդուղքի գլխին մի կասկած փշի պես ծակել էր միտքը (ԱԲԵ, 510):

«Սակայն» շաղկապը «բայց»-ից տարբերվում է շարահասական իր ճկունությամբ: Հիմնականում օգտագործվելով կապակցվող մասի սկզբում, այս շաղկապը կարող է, առանց իմաստային որևէ լուրջ փոփոխություն առաջացնելու, հանդես գալ նաև նախադասության տարբեր անդամներից առաջ (մեծ մասամբ ստորոգյալի) և նույնիսկ նախադասության վերջում: Շարահասական այս հատկանիշով այս շաղկապը մոտենում է եղանակավորող բառերին և շաղկապական կիրառություն ունեցող համեմայն դեպս, այնուամենայնիվ (այսուամենայնիվ) բառերին: Այս գործածությամբ սակայն շաղկապը հիմնականում նշում է նախորդ պարբերությամբ կամ նախադասությամբ արտահայտված բովանդակության նկատմամբ որևէ առարկություն, հակադիր մոմենտի ընդգծում: Իր այս կիրառություններում նա զերծ է զիջական երանդից: Կարծես հեղինակը նախադասության կեսում է հիշում հակադրելու անհրաժեշտությունը և օգտագործում է այդ շաղկապը. օրինակներ՝

Մուշեղ բերդակալը, սակայն, ավելորդ համարեց կանանց զրույցներին մասնակցել (Մուր., 221): ...Ասաց Մարությանը ձեռքի մի խորհրդավոր նշանով, որից Շահյանը, սակայն, ոչինչ չհասկացավ (ՆԴ, 20): Հիմա կիպոն իմ չկա, նա չկա հիմա,—Ո՞վ չի սակայն երազում այդպիսի մի մահ... (ԵԶ, 113): Այդ սիրային լուռ բանակցությունները, սակայն, տխուր վախճան ունեցան (ՆԶՀ, 38): Ինձ բռնեցին շուտով:

խուզարկեցին թեթև: Բան չգտան վրաս՝ ձեռք չտվին: Ինչ որ եղավ սակայն, մահից վատ չէր միթե (69, 92):

Միջանկյալ բառի գործածություն ունեցող այս շաղկապի կետադրությունը դեռ կանոնավորված չէ: Երբեմն երկու կողմից այն բաժանում են ստորակետով, երբեմն ոչ: Սակայն թվում է, որ ստորակետների միջև առնելը պարտադիր է, երբ ենթակայի և ստորոգյալի միջև է գործածվում, որի դեպքում արտասանական որոշ դադարով այն բաժանվում է նախորդ և հաջորդ բառերից՝ եղանակավորող բառերին մոտիկ նշանակություն ձեռք բերելով: Մյուս դեպքերում սովորաբար նման դադար չի տրվում, որի պատճառով էլ անհրաժեշտություն չի զգացվում տրոհության որևէ նշանի:

Հետաքրքրական է նշել, որ Րաֆֆու «Սամվել» և «Խենթը» վեպերում ոչ մի «սակայն» չի գործածված, որի փոխարեն առատորեն օգտագործված է հոմանիշ «բայց» ձևը: Մուրացանի «Գեորգ Մարգալետունի» վեպում երկուսն էլ հավասարապես օգտագործված են: Հեղինակային ոճի տեսակետից սա ուշագրավ երևույթ է, որ ցույց է տալիս, թե հաճախ հոմանիշ ձևերից հեղինակներն ընտրում են մեկը միայն, թեև զուգահեռ մյուս ձևը կարող է այդ նույն ժամանակաշրջանում բավական տարածված լինել:

Սակայն շաղկապը առավելապես տարածված է գեղարվեստական գրականության և մասամբ էլ հրապարակախոսության լեզվում: Գիտա-տեխնիկական գրականության մեջ համեմատաբար քիչ է հանդիպում: Ժողովրդական խոսակցական լեզվում տարածված չէ:

ՐԱՅՑ ԵՎ ԱՅՆՊԵՍ, ՍԱԿԱՅՆ ԵՎ ԱՅԴՊԵՍ—Այս հարադրական շաղկապները տարբերվում են հոմանիշ բայց և սակայն շաղկապներից սոսկ իրենց գործածությունների սակավությամբ (մանավանդ վերջինը) և իմաստային ու ոճական կիրառությունների սահմանափակությամբ: Պարզ է, որ այս տեսակետից սրանք չեն կարող մրցել պարզ արմատական բայց շաղկապի հետ, որը դեռ զրաբարից ժառանգել է իմաստային բավական հարուստ կիրառություններ: Այս առթիվ հետաքրքրական դիտողություն ունի ֆրանսիացի լեզվաբան

Ա. Մեյլեն: Նա նշում է, որ բոլոր շաղկապները (մանավանդ արմատականները) ենթակա են նորոգման: Այս տեսակետից ուշադրության արժանի են հակադրական շաղկապները: Հակադրությունը պետք է ուշադրություն գրավի, ասում է նա: Երբ երկու նախադասությունների միջև մի կոնտրաստ ենք նշում, ապա դա պնդելու, շեշտելու համար է: Այդ պատճառով, օրինակ, «բայց» նշանակությունն ունեցող շաղկապները հաճախ փոփոխված են: Հեղինակը նշում է, որ լատիներենում «բայց»-ի համարժեքները շատ էին՝ at, ast, sed, uērum, uēro, autem, որոնք նշում էին հակադրության տարբեր աստիճաններ և զանազան երանգներ: Սակայն ոտմանական լեզուներում «բայց»-ի նշանակությունը նոր բառով է տրվել (լատ. magis «ավելի» > ֆրանս. mais «բայց»): Բացի դրանից, ֆրանսերենում կազմվել է նաև toutes voies հակադրական շաղկապը, որը հետո ստացել է toutefois ձևը, և որն այժմ դուրս է գալիս նաև ֆրանսերենի խոսակցական առօրյա լեզվից: Արդի ֆրանսերենում mais շաղկապը, որը միակ հակադրական շաղկապն է, խոսակցական կենդանի լեզվում թույլ է համարվում: Նրա հակադրական նշանակությունը զորացնելու համար այժմ լեզուն օգտագործում է այլ բառերի հետ ունեցած նրա հարադրությունները¹, ինչպես՝ mais bien, mais plutôt, mais au contraire, mais assurément, mais bien sûr և այլն:

Շաղկապների նորոգման այս երևույթը հատուկ է նաև հայերենին: Դա միաժամանակ շաղկապների հարստացման հիմնական դրդապատճառներից մեկն է: Այսպես՝ երբ այս կամ այն շաղկապը շատ է գործածվում իր հիմնական իմաստ

¹ Այս երևույթը նկատվում է նաև գրաբարում, ուր գտնում ենք գործածված բայց սակայն հարադրական շաղկապը, ինչպես՝ բայց սակայն՝ թէպէտ և նոքա յոյժ զուարթութեամբ խնդացին ըստ ներքին մարդոյն՝ արտաքին տեսիլն կարի ողորմ էր (Ս. Մախաճեան, Գրաբարի համաձայնութիւն, Թիֆլիս, 1892, 155):

² A. Meillet, Le renouvellement des conjonctions, p.p. 171—172 (Linguistique historique et linguistique générale, T. I, Paris, 1948).

տով, սկսում է թույլ արտահայտել այդ իմաստային հարաբերությունը (օրինակ հակադրությունը). այդ դեպքում հարադրական ձևերով, միջանկյալ բառերով, մակբայներով և եղանակավորող բառերով այդ շաղկապները, այսպես ասած, նորոգվում են, որի հետևանքը լինում է այն, որ բացի իրենց հիմնական նշանակությունից, ձեռք են բերում նաև լրացուցիչ այլ երանգներ: Բայց պետք է նկատի ունենալ, որ շաղկապների նման զարգացումը ավելի հատուկ է բանավոր խոսքին: Երբ նման հարադրական շաղկապները բանավոր խոսքում արդեն հաստատապես ամրանում են, ապա նրանցից շատերը սկսում են մուտք գործել գրավոր լեզվում, ուր և վերջիվերջո հաստատվում են: (Շաղկապների նորոգման այս եղանակը կարող է իրադրծվել նաև այլ լեզուների շաղկապական միջոցների աղդեցությունամբ. օրինակ՝ չնայելով որ, այն ժամանակ, երբ, որոնք ուսուցանող համապատասխան շաղկապների անմիջական աղդեցության արդյունք են): Արդի հայերենի խոսակցական լեզվում այս երևույթի հետ է կապված մի բան որ հարադրական շաղկապի պատճառով նշանակությամբ կիրառությունները (ինչպես՝ ես այսօր պարապմունքներին չեմ մասնակցի, մի բան որ արդեն հանձնել եմ ստուգաբար): Հարադրական կազմություն ունեցող շաղկապների մեծ մասը, որ մենք արդեն քննել ենք, առաջացել է հենց այս պատճառով:

Այս կարգի շաղկապական բառերի թվին են պատկանում բայց, սակայն շաղկապների նշանակությունները շեշտող բայց և այնպես, սակայն և այնպես հարադրական շաղկապները: Որպես բառական ծավալուն կազմ ունեցող շաղկապներ, սրանք զերծ են ոճական-արտահայտչական այն հնարավորություններից, որոնք արմատական բայց, սակայն շաղկապներին են հատուկ: Սրանք կարծես միայն շեշտում, ավելի են ընդգծում իրենց առաջին բաղադրիչների զիջական երանգը՝ «չնայած այդ հանգամանքին» կապակցությանը մոտիկ նշանակություն ստանալով. օրինակներ՝

Հուղարկավորների մեծ մասը ցրվեց, բայց և այնպես սգավորների ընդարձակ բնակարանը լցվեց (Շիրվ., 25):

Քրիստոֆը վերսկսեց տանջել մորը, պնդում էր, թե այսպես էլ լավ է, ինչպես որ կա, իր մաշված շորերով և փոշոտ կոշիկներով: Բայց և այնպես հագուստները փոխեց և կոշիկները ներկեց, կեռնեխի պես սուլելով և նվագախմբի բոլոր գործիքներին նմանեցնելով (ՌՌԺՔ, 353): Բայց Սահակը վերքը ստացավ գլխից, աչքերը լցվեցին արյունով: Նրան քաշեցին մի կողմ Հովակիմ դարբինն ու Վարաժը: Սակայն և այնպես բազմությունը թուլանում էր (ԴԴ, 4, 375): Թեև նրա հարաբերությունները բավական սառն էին դարձել մեծ դքսի հետ, որը նրան բազմիցս նկատողություն էր արել, բայց նա այդ հաշվի չէր առել,—սակայն և այնպես նա շարունակում էր ժամանակ առ ժամանակ դարձյալ գնալ (ՌՌԺՔ, 350):

Այս շաղկապներից առաջինը տարածված է գլխավորապես գեղարվեստական գրականության մեջ և գրեթե անգործածական է գիտա-տեխնիկական գրականության լեզվում, իսկ վերջինս ընդհանրապես շատ հազվադեպ է հանդիպում՝ լուրջ որպես գրաբարից մնացած ժառանգություն:

ՄԻԱՅՆ, ՄԻԱՅՆ Թե—Սահմանափակման երանգով հակադրություն են արտահայտում այս շաղկապները, երբ իրենցով կապակցվող նախադասություններում ստորոգյալը ըղձական եղանակով չի արտահայտվում: (Հակառակ դեպքում ընդգծվում է պայմանի նշանակությունը¹): Օրինակներ՝

Պատմում է իր քաջագործությունը և հետն էլ հայտնում է, որ պետք է իր կնկանից կորչի, միայն խնդրում է՝ իր արածը տերտերը գրի, որ անհայտ չմնա... (ՀԹ, 421): —Ա՛,

¹ Պայմանից բխող սահմանափակումը և դրանից բխող հակադրական նշանակությունը անսովոր երևույթ չէ: Երբ առաջադրվում է մի պայման, ապա որևէ կողմով չափավորվում, սահմանափակվում է նախորդ նախադասության բովանդակությունը այդ պայմանի ընդունման սահմաններում: Այդտեղից էլ ծագում է պայմանի ֆոնի վրա ուրվագծվող հակադրության երանգը. տե՛ս, օրինակ, հետևյալ գործածությունը՝

3000-ական ուրբլի դրամական պարգև կտրվի այն կոլտնտեսություններին, որոնք 1958 թվականին կապահովեն կովերի գլխաքանակի զգալի չափով ավելացումը, այսպանով, որ 100 հեկտար տարածության դիմաց ռեսպուբլիկայի նախալեռնային և լեռնային գոտու կոլտնտեսությունները ունենան ոչ պակաս, քան 15 գլուխ կով (ՍՀ, 1958, մարտ 22, 1):

նվաճող, դո՛ւ ես, շատ ուրախ եմ, որ տեսնում եմ քեզ. ե՛րբ ես իջել երկնքից... երեկ նկարդ տեսա թերթում, միայն հոգվածն անշնորհք էին գրել, արժեք որ պոետները գովեին քեզ... (ՀՔ, 21): Ես այդ մասին անպայման գրելու եմ, միայն թե ուզում եմ ավելի հանգամանորեն ծանոթանալ գործին: Դեռ Լիզան էր՝ ինչպես Շուլգան գիտեր նրան ավելի քան քսան տարի առաջ, միայն թե ավելի նրբացած, քան այն բանվորուհի Լիզան մի քիչ մեծ ձեռներով և կտրուկ շարժումներով, որին Շուլգան գիտեր և սիրում էր (ՖՆԴ, 97):

Պետք է նշել, որ այս բառերը շաղկապական կիրառության երկար շրջան չեն անցել, որի պատճառով դեռ զգացվում է նրանց գործածություններում եղանակավորող բառերին հատուկ նշանակությունը: Ժողովրդական խոսակցական լեզվում տարածված է նաև այս շաղկապի մենակ ձևը՝ նույնպիսի նշանակությամբ. օրինակ՝ «Ես կգամ, մենակ դու էլ արի»:

Այս բառերը գլխավորապես տարածված են զեղարվեստական գրականության, մասամբ էլ հրապարակախոսության լեզվում:

ՀԱՄԵՆԱՅՆ ԴԵՊՍ—Հակադրությունը ավելի մեղմ, ավելի յուրովի է արտահայտվում, երբ որպես կապակցության միջոց օգտագործվում է համեմայն դեպս շաղկապական բառը, որի կիրառություններում միշտ էլ զգալի է եղանակավորող բառերին հատուկ երանգավորում: Այս շաղկապական բառով սովորաբար մեջ են բերվում լրացուցիչ փաստեր, դիտողություններ կամ բացատրություններ, որոնք մեղմ առարկության նշանակություն են ստանում: Նկատելի է, որ այս շաղկապի օգտագործմամբ զիջական երանգը շատ աղոտ է դրսևվորվում: Պետք է նշել, որ շարադասական ու իմաստային հատկանիշներով համեմայն դեպս-ը իր կիրառությունների մեծ մասում հարում է միջանկյալ և եղանակավորող բառերին: Նա կարող է նախադասության կազմում ինչպես նախադաս, այնպես էլ միջադաս և ետադաս գործածություն ունենալ: Շատ հաճախ նա հանդես է գալիս նաև ինքնուրույն գործածությամբ, արտահայտելով սոսկ առարկություն, գիշում և այլն. օրինակներ՝

Մյուս տղաների հուզումը ես չեմ նկատում. այդ գուցե նրանից է, որ ես շատ եմ հուզված. համեմայն դեպս ինձ թվում է, որ նրանք իրենց չեն կորցնում (ՍԶ, 411): Ինչ պահասություն էլ ունենար Լևինը, համեմայն դեպս ձևանալու նշույլ անգամ չկար նրա մեջ (ՏԱԿ, 1, 376): Միևնույն պահին և խրատնում էր ներքուստ՝ իրեն տեսնելով հասարակ մի ուսման տանը, նրա հետ սեղան նստած, և միաժամ զգալով, որ սա «նրա» մթնոլորտն է, մեղմանում էր, ջերմանում: Խիղճը հանգիստ չէր, համեմայն դեպս (ՍԳ, 1958, № 2, 55): Դոնոյանը դեռ ձեռքը չպարզած աղբյուրին, աչքին նորից երևաց նույն սատանան, որը ցատկում էր աղբյուրի վրայով, ծիծաղում ու մատը թափ տալիս, բացականշում էր ճշան ձայնով (համեմայն դեպս նա այդպես էր լսում) (Եր., 1959, հունվ. 21, 2):—Ասենք թե հիշել եմ, հետո ի՞նչ...—Ոչինչ... Դու. համեմայն դեպս՝ իզուր ես այդքան շուտ մոռանում նվաճողին, նա լավ աղջիկ էր և արժանի էր, որ իրեն շնորհալիք (ՀՔ, 112):—Ինչպե՞ս ես ուզում, որ ես նրան օգնեմ: Նա սովորելու ոչ մի ցանկություն չի ցուցաբերում: —Համեմայն դեպս, դու նորից փորձիր: Գուցե այս անգամ կհաջողվի քեշ նրան համոզել:

Այս վերջին օրինակում այս շաղկապական բառի կիրառությունը կարելի է երկու կերպ հասկանալ: Ստորակետի առկայության դեպքում, պարզ է, այն բաժանվում է հաջորդ մասից արտասանական դադարով, որի պատճառով ընդգրծվում է նրա եղանակավորող բառի արժեքը: Իսկ տրոհության նշանի բացակայության դեպքում համեմայն դեպս-ը սերտորեն կապվում է իրեն հաջորդող նախադասության հետ, ուր և ընդգծվում է նրա շաղկապական արժեքը: Կիրառությունների որոշ մասում նրա նշանակությունը մոտենում է «գոնե» եղանակավորող բառի իմաստին:

Այս շաղկապական բառը գերազանցապես տարածված է գեղարվեստական գրականության մեջ՝ հատկապես երկախո-

1 Միջադաս դիրքով պարտադիր է ստորակետի գործածությունը այս շաղկապից հետո, թեև այստեղ բացակայում է:

սություններում: Գիտա-տեխնիկական գրականության լեզվում գրեթե անգործածական է:

ԱՅՆՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ, ԱՅՈՒԱՄԵՆԱՅՆԻՎ—Այս բառերը արտահայտում են հակադրական հարաբերություններ՝ սանմանափակման ու զիջական երանգներով և օգտագործվում են բացառապես համադաս նախադասությունների միջև: Հանդիպում են նաև ավարտված նախադասությունների կամ պարբերությունների միջև: Շաղկապական այս բառերը ունեն «Հնայած այդ հանգամանքին, շնայած այդ բոլորին» կապակցությունների նշանակությունը. օրինակներ՝

—Քանի որ շփոթվելուց այդքան շատ կրկնում ես իմ անուն-ազգանունը, հավատում եմ ուրեմն, որ ճիշտ ես ասում... Այնուամենայնիվ, հայտնում եմ քեզ, ջանիկս, որ քո նամակից... (ՀՔ, 117—8): Եթե մինչև անգամ զուրկ լինեի այդ պիտանի զգայարանքից, այնուամենայնիվ կարող էի դարձյալ իմ հոգվո աչքերով գտնել այն ճանապարհը, որ հանում է դեպի Գարդմանա իմաստուն և հայրենասեր իշխանի դղյակը (Մուր., 105): Հայրենիքն արդեն վայելում էր անդորրություն, իսկ գահը ապահովություն, այնուամենայնիվ նա դեռ իրան կապված էր համարում Գառնիում արած ահավոր երդումով (ՄԳՄ, 466):

Կապակցվող նախադասության կազմում նախադաս գործածություն ունենալու դեպքում գերադասելի է այդ բառերից հետո ստորակետ չօգտագործել, թեև երբեմն այդ արվում է (առաջին օրինակը)՝ անշուշտ միջանկյալ բառի բնույթով նրա կիրառությունների ազդեցությամբ, որոնց դեպքում ևս իմաստային նույն հարաբերությունն է արտահայտվում: Պետք է նշել, որ այս բառերը (այնուամենայնիվ, այսուամենայնիվ), որոնցից վերջինը հազվադեպ է հանդիպում, ավելի շատ տարածված են միջադաս գործածությամբ՝ որպես միջանկյալ եղանակավորող բառեր, ինչպես նաև զուգադիր գործածությամբ՝ զիջական շաղկապների հետ (թեև... այնուամենայնիվ, այսուամենայնիվ, որքան էլ... այնուամենայնիվ, այսուամենայնիվ և այլն): Տարածված են նաև նրանց գործածու-

թյունները այլ շաղկապների հետ՝ ...և, այնուամենայնիվ..., ...բայց, այնուամենայնիվ... և այլն:

ԱՅՆՈՒՀԱՆԴԵՐԶ, ԱՅՍՈՒՀԱՆԴԵՐԶ—Արդի հայերենում սահմանափակ գործածություն ունեն այս շաղկապական բառերը, որոնք իրենց իմաստային և շարադասական հատկանիշներով նմանվում են նախորդներին: Բերենք մի երկու օրինակ՝ «Ի՞նչն է ավելի շատ բախտավորություն բերում՝ բանալինե՞րը, թե նրանց թիվը...»: Այնուհանդերձ, սնոտիապաշտ ֆուտբոլիստը հավատում է իր թալիսմանին (ֆուտբոլ, առաջին շրջան, Երևան, 1958, 193)»: «Միշտ ափսոսանք էր հայտնում, որ հաստատ համոզված չի եղել, թե Արփիկը սիրում է իրեն, ձեռք չի գտել նրա հետ մտերմանալու: Այսուհանդերձ՝ շարունակում էր կրկին կատակներ անել աջ ու ձախ (ՀՔ, 13—14)»:

3. ՏՐՈՀԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Արդի հայերենի ամենատարածված տրոհական (կամ բաժանական) շաղկապներն են կամ և թե. նվազ գործածական են մեք... մեք, մեկ... մեկ կրկնադիրները: Սրանց օգտագործմամբ արտահայտվում են այնպիսի իրողությունների ու երևույթների, առարկաների ու հատկանիշների թվարկում, որոնք փոխադարձաբար ժխտում, բացառում են իրար, այսինքն երբ ընդունում ենք թվարկված փաստերից մեկը, ապա բնականաբար ժխտվում, բացառվում է մյուսը: Այս իմաստային հարաբերությունը տրոհական տարբեր շաղկապների օգտագործմամբ զրոսեորման տարբեր երանգներ է ստանում: Հենց նույն շաղկապը կարող է տրոհական նշանակությունը ուժեղ կամ թույլ ներկայացնել՝ նայած կապակցվող մասերի բովանդակությանն ու ծավալին (նախադասության անդամ, թե համադաս նախադասություն):

Անշուշտ փոխադարձ ժխտման ու բացառման իմաստային այս հարաբերությունը նկատի ունենալով է, որ մեր քերականներից շատերը այս շաղկապները համարել են հակա-

դրական՝ անտեսելով նրանց միջև եղած լուրջ տարբերությունները¹:

ԿԱՄ—Տրոհական հարաբերությունն արտահայտող ամենագործածական շաղկապն է. օգտագործվում է ինչպես նախադասության անդամների, այնպես էլ համադաս նախադասությունների կապակցման համար:

Կամ շաղկապի օգտագործմամբ փոխադարձ բացառման հարաբերությունը երկու հիմնական արտահայտություն ունի:

Ա) Խոսողը չգիտե, թե մեջ բերվող փաստերից ո՛րն է ընդունելի՝ իրականությանը համապատասխանելու տեսակետից, ուստի և թվարկում է ամենահավանականները՝ կամ շաղկապով ակնարկելով դրանցից միայն մեկի իրական կամ հավանական լինելը. օրինակներ՝

Գուցե դուք հիմա հենց այդ լուսամուտի ետևում եք, մահճակալի վրա թիկն տված, կամ սեղանի քով նստած... (ՄԳ, 1957, № 5, 22): Այսօր կամ վաղը ես գնում եմ... և գուցե այլևս չտեսնենք իրար (ՆԴ, 248): Իսկույն հեռագրեցի հավատարմատարին, որ ծախի վերջին կալվածքս... և ուղարկի այնտեղ, որտեղից նամակ կամ հեռագիր կուղարկեմ իրեն (ՆԴՄ, 556): Զէ՞ որ ամեն անգամ, երբ նա տրամադրությունը բարձր դպրոց է գալիս, պատմության ժամերը տեղի չեն ունենում, և աշակերտները ազատ թափառում են կայարանում, կամ ժամանակից շուտ վերադառնում տուն (ԱՎ., 1958, ապր. 17, 4): Հաճախե՞նու անտառներում հատումներ չեն կատարվել, կամ կատարվել են շատ չափավոր, քանի որ նախառեկոլուցիոն ժամանակաշրջանում հաճարի փայտի պահանջ չի եղել (ՍՀ, 1958, մայ. 15,2):

Նկատելի է, որ նկարագրություններում կամ շաղկապով

¹ Ս. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, մասն Ա, Բ և Գ, հինգերորդ տիպ, Թիֆլիս, 1906, 241, Ս. Մալխասեան, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, 154 (ուր ժխտականի մի տեսակն է համարել), Մ. Աբեղեան, Աշխարհարարի շարահիւսութիւն, Վաղարշապատ, 1912, 340, Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, Երևան, 1953, 315: Հակադրականից բաժանել և առանձին է դրել Հ. Թումանյանը (Հայոց աշխարհարար լեզուի համառոտ համաձայնութիւն, Թիֆլիս, 1911, 57):

թվարկվում են հաճախ այնպիսի գործողություններ կամ դեպքեր, որոնք իրոք տեղի են ունեցել կամ տեղի են ունենում: Այս դեպքում արդեն փոխադարձ բացատման հարաբերությունը առկա է սոսկ այն պատճառով, որ այդ գործողություններն ու դեպքերը չէին կարող միաժամանակ նույն ժամանակակետում կատարվել: Տրոհական նման կապակցություններում ակնարկվում է թվարկվող գործողությունների պարբերական կրկնություն՝ տարբեր ժամանակամիջոցներում. օրինակներ՝

Մեկ էլ զգիրը տնկվում էր կտուրի վրա, կամ կռանում էր և երդիկից կանչում (ԱԲԵ, 133): Երբ մտնում էր հաճախորդը, նրանք առաջարկում էին թեյ, կամ մոտակա սրճարանից բերել էին տալիս մի գավաթ սուրճ (ԱԲԵ, 675): Երբեմն հարեվանի երեխան դալիս էր փայտ կտրատում վառարանի համար կամ ջուր բերում (ԱԲԵ, 405):

Բ) Նշանակությունամբ մոտ բառերի կամ բառակապակցությունների թվարկման դեպքում տրոհական կապակցությունը այնպիսի նշանակություն է արտահայտում, որ թվարկվող փաստերից մեկի ընդունումը այլևս չի ենթադրում մյուսի ժխտումը: Տրոհական նման կապակցություններում փոխադարձ ժխտման նշանակությունը մեղմանալով վերածվում է թվարկման յուրահատուկ նշանակության, երբ շաղկապվող մասերը փոխադարձաբար լրացնում են իրար՝ ավելի իրական: ու ճշմարտացի կերպով ներկայացնելով խոսողի մտքերը: Բերենք մի երկու օրինակ՝

Բայց դուք զգացել եք մարող կայծերի այրուցքները, որպես տխուր մի ափսոսանք կամ դառն մի զղջում (ՄԳ, 1957, № 5, 22): Մենք չափել կամ կշռել չենք կարող այն, ինչ որ դեռևս գոյություն չունի,—պատասխանեց Մեսրոպը (ՐՍ, 143): Այդ պատասխանը հարևանցիորեն կամ անպատրաստից ասված չէր, այլ նա խորին կերպով մտածված էր (ՐՍ, 156):

Շաղկապվող երկրորդ մասի լրացական նշանակությունը պարզ երևում է հետևյալ օրինակում՝ «Բայց այն աստիճան՝ ճարպիկ էր նա, և սերն այնքան կուրացրել էր ինձ, որ այդ

բանը չէի տեսնում կամ, ավելի երիտ ասած չտեսնելու էի տալիս (ՆԴՄ, 555)», ուր ընդգծված բառակապակցությունը հաստատում է կամ շաղկապի ունեցած մեկնական նշանակությունը:

Երբ շաղկապվող մասերը նշանակությամբ նույնանում են, ապա տրոհական կապակցությունը վերածվում է մեկնական կապակցության, իսկ կամ շաղկապն ստանում է «այսինքն» շաղկապի նշանակությունը¹, ինչպես՝ «Յոթն ավանները միասին ունեն 14378 երդ կամ ծուխ (ԲՄ, 164):

Շատ հաճախ կամ շաղկապով կապակցվում են որևէ հատկանիշով համեմատելի այնպիսի առարկաներ կամ հասկացություններ, որոնք չեն բացառում իրար սոսկ այն պատճառով, որ հավասարապես մասնակից են նկարագրվող իրողությանը: Նման դեպքերում կամ շաղկապը իր նշանակությամբ մոտենում է միավորիչ շաղկապներին. օրինակներ՝

Իսկ ձիաների կամ ջորիների վրա նստածները (նստած էին թե՛ ձիաների, թե՛ ջորիների վրա) ցած էին իջնում երկվարներից... (ԲՄ, 70): Հալոցի և անձրևի ժամանակ, մանավանդ առաջին տարիները, հողե կտուրից կաթում էր հա՛ կաթում. էլ տունը տաշտ կամ աման չէր մնում, բոլորը դրված էր լինում հատակի վրա (ՈՄԲ, 185): Բայց շաղկապը կարող է օգտագործվել նաև ավարտված նախադասությունների կամ (և) պարբերությունների միջև:

Հաճախ կամ շաղկապին հաջորդում են եղանակավորող կամ նման բնույթի բառեր ու բառակապակցություններ, որոնք իմաստային լրացուցիչ երանգներ են հաղորդում տրոհական կապակցությանը. օրինակներ՝

Գուցե նա ինքն այդտեղ անցուցել էր մենավոր մտածությունց ժամեր, կուսական նվիրման հափշտակության վայրկյաններ, կամ, քեբես, չարաբաստիկ սիրո տանջանաց օրեր... (Մուր., 243): Նրանք սպասում էին, որ Հազկերտից կամ գոնե Միհրներսեսից սուրհանդակ կգա հրավիրելու տեսակցության կամ հրաման՝ դնալ ատյան դատի (ԴԴ, 3, 432): Նշա-

¹ Այս մասին կիսոսենք էջ 177:

նակում է՝ նա իր կնոջն ուղեկցել է մինչև այնտեղ, ուր տարել են նրան, կամ, համենայն դեպս, մինչև առաջին փոստակայանը (ԱԳԵՀ, 287):—Այս ձին իսկապես որ դեղնավուն է, կամ ավելի ճիշտ՝ մի ժամանակ այդպիսին է եղել,—ասաց անծանոթը... (ԱԳԵՀ, 17):

Արդի հայերենում տարածված են նաև կամ քե, և կամ, և կամ քե ձևերը: Օրինակներ՝

Ներկա էր լինում զորականի վարժությանց կամ քե դիտում էր պաշտպանության պատրաստությունները... (ՄԳՄ, 230): Երեխաների այս կամ այն ասածը կամ քե նրանց տված հարցը երբեմն Պայծառին խելոք մտքեր էին ներշնչում (ՈՄԲ, 187): Հորթերը հանգստանում էին գետի հովում, մտնում էին զով քարայրները և կամ ջրի մեջ կանգնած ննջում էին (ԱԲԵ, 647): Պետք էմ համարում նաև հայտնել, որ նրանց վրա դաստիարակիչ ազդեցություն չեն թողնում այն պատիժները, որ երբեմն սահմանում է կուրատորների կուեգիան և կամ քե համալսարանի սենատը (ԱԲԵ, 575):

Առանձին գործածությամբ կամ շաղկապը կայուն դիրք ունի. նա միշտ դրվում է կապակցվող անդամի կամ նախադասության սկզբում: Ստորակետի գործածությունը այս շաղկապից առաջ, համազոր անդամների կապակցման դեպքում, դեռ վերջնականապես կայունացված չէ: Ըստ որում պարզ չէ նույնիսկ կետադրական այդ նշանի օգտագործման պարտադիր և ոչ պարտադիր դեպքերը: Ըստ երևույթին այստեղ հարվի պիտի առնվի տրոհական կապակցության ընկալման եղանակը, նախորդ մասից տրոհվելու դրսևորման աստիճանը և մանավանդ շաղկապվող մասերի իմաստային մոտիկության աստիճանը: Ինչ վերաբերում է համադաս նախադասությունների շաղկապմանը, ապա այդ շաղկապից առաջ պարտադիր է ստորակետի գործածությունը, թեև երբեմն հանդիպում են նաև անստորակետ տրոհական կապակցություններ:

Փոխադարձ բացառման հարաբերությունը, մի փաստի, իրողության ընդունմամբ մյուսի մերժումը, ժխտումը սաստկանում է, երբ հանդիպում ենք նույն շաղկապի կրկնադիր

գործածութեանը: Այդ պատահում է այն պատճառով, որ հիշյալ գործածութեամբ սովորաբար կապակցվում են ներհակ, իրար բացառող իրողութիւններ: Վերջին բաղադրիչը հաճախ ստանում է կամ էլ, և կամ, կամ թե, կամ թե չէ ձևերը. օրինակներ՝

Քրիստոֆը չգիտեր, թե ինչ բան է ֆլիրտը: Նա կա՛մ սիրում էր, կա՛մ չէր սիրում (Ռիթմ, 333): Նա այնքան ուժ չուներ, որ ինքնակա դիրք պահպաներ. ստիպված էր հակվիլ կամ մեկի, կամ մյուսի կողմը (ԲՄ, 82): Այժմ ներկայանում էր մի սարսափելի պատճառ, որ կամ միանգամից պետք է խորտակեր ընտանեկան բոլոր կապերը, կամ որդուն հնազանդեցներ ծնողաց կամքին (ԲՄ, 44): Նամակը կամ պիտի ավետեր որդու առողջութիւնը, կամ պիտի գուժեր նրա մահը (ԲՄ, 461):—Որտեղից լացի ձայն լսես, ներս մտիւր. կամ մարդ է մեռել, կամ սոված են, կամ տան տիրոջ ձեռքը նեղ տեղն է (ԱԲՆ, 308): Նրանք աստիճանավորների դավակներն էին, որոնց ծնողները կամ դժվարութեամբ բարձրացել էին չինովնիկութեան սանդուղքով և կամ կորցնելով երբեմնի կալվածքը, ապրում էին, վաճառելով վաղեմի հարստութեան փրշորանքները (ԱԲՆ, 581): Նրկընտրանքը տարօրինակ թվաց Ամուն: Կամ քսան ռուբլի տուգանք անտառից փայտ գողանալու համար, կամ էլ Մթնածորի մի արջ սպանել (ԱԲՆ, 5): Նա կամ անգործ պիտի դցի, Ու ժանգոտի պատերի տակ, կամ թե մարդկանց շահագործի Ու մի տարում դառնա կուլակ (ՆԶ, 213): «Դու նրան կտեսնես կամ ինստիտուտում, կամ թե չէ հանրային գրադարանում»:

Նկատելի է, որ այս կրկնադիր շաղկապի բաղադրիչները օգտագործվում են հենց շաղկապվող այն անդամներից կամ մասերից առաջ, որոնք փոխադարձ բացառման փոխհարաբերութեան մեջ են:

Թե—Այս շաղկապը, որը հիմնականում տարածված է գեղարվեստական գրականութեան մեջ, փոխադարձ ժխտման կամ բացառման իմաստային հարաբերութիւնը հարցի ձևով է արտահայտում. օրինակներ՝

Զեմ հիշում, կարդացե՛լ եմ, թե ինձ ասել են, որ հավատք

են ունենում միայն շատ կարդացած և մեկ էլ շատ տգեղ մարդիկ (ՆԴ, 51): Նա այդ ասում էր բուլղոլվին լուրջ և չէր իմացվում՝ դառն հեղնանք էր նրա ասածը, քե՛ն ճշմարիտ ցանկություն (ԱԲԵ, 375): Քեռի Դավո՛ւ, երկար արտի ներքևի մա՛սը պիտի թանձր սերմե՛շ, քե՛ վերևի (ԱԲԵ, 290): Ի՞նչից է, պապի, այսքան ճոխ երկրում, Ինչպես ասում ես, դժվար եք ապրում, Վարձատրություն չեք ստանում հողից, Թե՛ նեղություն է դալիս մի տեղից (ՀԹ, 157): Կարճ էր հասակը, քե՛ն բարձր, թավ էր ձայնը, քե՛ն բարակ, և գիտե՞ր նա սրինգ նվագել, սիրե՞լ էր նա մի աղջկա... այդ բուլղոն ինձ չավանդեց իմ ընկեր Ավագը (ԱԲԵ, 230):

Նկատելի է, որ տրոհական նման կապակցություններում որքան ուժեղ լինի հարցական առոգանությունը, այնքան ընդգծվում է կապակցվող մասերի փոխադարձ բարձունքան հարաբերությունը: Հարցական նշանը կարող է դրվել ինչպես շաղկապով կապակցվող առաջին մասի, այնպես էլ շաղկապի կամ նրան հաջորդող մասի վրա: Երբեմն այդ նշանը բացակայում է, որից, սակայն, տրոհական նշանակությունը չի թուլանում: Այդ այն պատճառով, որ կոնտեքստում այդ նշանակության արտահայտման համար նախադրյալներ են լինում: Նկատելի է, որ քե՛ն շաղկապի օգտագործմամբ ոչ միայն թվարկվում են իրար բացառող առարկաներ ու իրողություններ, այլև ակնարկվում է դրանցից մեկի միայն իրական ու ընդունելի լինելը: Համեմատիր հետևյալ օրինակները՝

«Պետք է կանչել Սուրիկին կամ Աշոտին» և «Պետք է կանչել Սուրիկին, քե՛ն Աշոտին»:

Արդի հայերենում բավական տարածված են նաև քե՛ն շաղկապի այն կիրառությունները, երբ տրոհական կապակցության մեջ հարցական ինտոնացիան բացակայում է: Այդ դեպքում իմաստային և ոճական նոր գունավորում են ստանում հիշյալ շաղկապով կապակցվող մասերը. օրինակ՝ «Իսկ եթե ոչ ոք չէր լսում նրան, մենակությունից քե՛ն ձանձրույթից, բուխարու առաջ բաց էր անում շարականի գիրքը (ԱԲԵ, 119)»:

Գրեթե չի զգացվում քե՛ն շաղկապին հատուկ տրոհական

և փոխադարձ բացառման նշանակությունը հետևյալ օրինակներում.

Գիշեր ու ցերեկ՝ ընդերքը ճեղքելիս, քե՛ն ջրանցքը փորելիս, ձմռան խստաշունչ սառնամանիքներին, քե՛ն ամառվա տոթ օրերին շինարարական հրապարակներում եռում էր աշխատանքը (ՄՀ, 1959, նոյ. 5, 1): Միևնույն է ինձ հյուսիս քե՛ն հարավ,—Մի խենթ տագնապ կա իմ հիվանդ սրտում... (ՎՏ, 58): Խաղաղություն ձեռք, մեր անբախտ պապեր, Ձեզ տանջող ցավը մե՛զ էլ է պատել։ Այժմ տըխրության, քե՛ն քեֆի ժամին... Ձեր խոսքն ենք ասում... (ՀԹ, 9): Ժողովում, քե՛ն մասնավոր զրույցների ժամանակ նա խոսում էր մեծ մասամբ կոլեկտիվ տնտեսություն կազմակերպելու անհրաժեշտության մասին՝ (նՁՀ, 183):

Ինչպես տեսնում ենք, այս օրինակների մեջ քե՛ն շաղկապը կապակցում է իմաստով հակադիր հասկացություններ, սակայն ոչ թե հակադրելով դրանք մեկը մյուսին, այլ ներկայացնելով միասնաբար²:

Նրա այս գործածությունները հիշեցնում են նույն շաղկապի կրկնադիր կիրառությունները՝ միավորիչ հարաբերությունամբ (համեմատիր, օրինակ, 3-րդ և 4-րդ օրինակներում՝ «Այժմ տխրության, քե՛ն քեֆի ժամին...» կապակցության իմաստային մոտիկությունը «Այժմ քե՛ն տխրության, քե՛ն քեֆի ժամին» հատվածի հետ. նույնը և՛ «Ժողովում քե՛ն մասնավոր զրույցների ժամանակ» = «Թե՛ն ժողովում, քե՛ն մասնավոր զրույցների ժամանակ»: Թե՛ն շաղկապի իմաստային հենց այս հատկանիշը՝ էլ պայմանավորված են նրա գործածությունները մակբայական կամ եղանակավորող բառերի արժեքով հանդես եկող որոշ կապակցությունների մեջ՝ այսպես քե՛ն այն-

1 Նման կիրառություններում քե՛ն շաղկապը իր իմաստով մոտենում է «կամ»-ին:

2 Նման դեպքերում արժեք չի տրվում այս շաղկապով կապակցվող մասերի հակադիր բովանդակությանը. այսպես, այս վերջին օրինակում կարևորը ոչ թե այն է, թե նա «ժողովում» է խոսել, թե՞ «մասնավոր զրույցների ժամանակ», այլ այն, որ նա խոսել է «... կոլեկտիվ տնտեսություն կազմակերպելու անհրաժեշտության մասին»:

պես, քիչ թե շատ, լավ թե վատ, վաղ թե ուշ և այլն: Թե շաղկապի բառակազմական այս հատկանիշը ավելի լայն չափերով դրսևորվում է պարզ ժողովրդական խոսքում:

Խոսքին ոճական-արտահայտչական յուրահատուկ դիպուկություն ու կենդանություն է տալիս թե շաղկապի կրկնական գործածությունը թվարկվող տարբեր բառախմբերի միջև, ինչպես՝ «Ինչ զգացմունք էլ լինի՝ կարոտ թե՛ ափսոսանք, երազանք թե՛ հանդիպում, մենակություն թե՛ կարոտ, սիրո երջանկություն թե՛ կսկիծ—ամեն տեղ բանաստեղծը պահպանում է հոգու կորովը և ապագայի հույսը (ԳԹ, 1957, դեկտ. 26, 2)»: «Ինչ թեմա էլ շոշափի Մահարին՝ լինի դա հեռավոր մանկության անմեղ հուշը, թե ժողովրդական տրագեդիայի պատկերը, քաղաքացիական կոիվների մասնավոր դրվագը, թե ամենասովորական միջադեպը... մենք բոլոր դեպքերում զգում ենք նրա հեղինակին (ԳԹ, 1957, հուն. 16, 2)»:

Հետաքրքրական է թե շաղկապի գործածությունը հետևվյալ օրինակում.

— «Բա, էս օրե՛նք է՝ Դրժար բաները ես եմ անողը, Համով բաները դու ես ուտողը, Թե գանձ կապողը (Իսահակյան):

Այս կիրառությանմբ թե շաղկապը կարծես համարժեք է «նաև» շաղկապին (որպես թե «նաև» գանձ կապող»): Մեղ թվում է, որ այս նշանակությունը առաջացել է նրա կրկնադիր գործածությունից, երբ բաղադրիչներից մեկն ընկել է, բայց կրկնադիր միավորիչ թե... թե շաղկապի հավելական նշանակությունը պահպանվել է: Այսպես, անշուշտ եղել է՝ «Թե համով բաները ուտողը դու ես, Թե գանձ կապողը (դու ես)»:

Համադաս նախադասությունների կապակցման դեպքում ստորակետի գործածությունը պարտադիր է այդ շաղկապից առաջ, մինչդեռ համադրո անդամների ու բառակապակցությունների դեպքում որոշակի կայուն կետադրություն չկա: Ստորակետի գործածությունը շատ անգամ կախված է շաղկապվող մասերի միասնաբար կամ անջատաբար ընկալվելուց, մեկ ընդհանուր հասկացություն արտահայտելուց թե շարտահայտելուց, կամ էլ հեղինակի հայեցողությունից:

ՄԵՐԹ... ՄԵՐԹ, ՄԵԿ... ՄԵԿ—Այս կրկնադիր շաղկապ-

ների գործածության ժամանակ տրոհական նշանակությունը ժամանակային երանգ է ստանում:

Նրանց օգտագործմամբ թվարկում են այնպիսի գործողություններ և դրանց հետ կապված առարկաներ ու հանգամանքներ, որոնք նույն իրադրության և նույն պայմաններում այս կամ այն հերթականությամբ հաջորդում են իրար և կրկնվում: Բնական է, որ փոխադարձ բացառման հարաբերությունը այս դեպքում բոլորովին տարբեր երանգ է ստանում: Համեմատենք հետևյալ օրինակները.

«Ըստ երևույթին Տիգրանն աշխատում է կամ որպես խառատ, կամ որպես փականագործ» և «Ըստ երևույթին Տիգրանն աշխատում է մերթ որպես խառատ, մերթ որպես փականագործ»:

Առաջին նախադասության մեջ առաջին ենթադրության (որպես խառատ աշխատելու) ընդունումը բացառում է երկրորդի (որպես փականագործ աշխատելու) հնարավորությունը: Այդ նախադասությամբ արտահայտվող միտքը իրականությանը կարող է համապատասխանել միայն այդ երկու ենթադրություններից մեկի ընդունմամբ և հաստատմամբ, մինչդեռ երկրորդ նախադասության մեջ շեշտը դրված է տարբեր ժամանակամիջոցում Տիգրանի թե՛ այս և թե՛ այն մասնագիտությամբ աշխատելու կասկած չհարուցող փաստի վրա: Ինչպես տեսնում ենք, այստեղ որոշակի իմաստային տարբերություն է նկատվում: Հիշյալ տեսանկյունով մոտենալով հարցին, նկատում ենք, որ մերթ... մերթ կրկնադիր տրոհական շաղկապին նշանակությամբ մոտ է մեկ... մեկ շաղկապը, որը նույնպես ընդգծում է (իհարկե, ոչ նույնպիսի որոշակիությամբ) իրար փոխարինող գործողությունների, իրողությունների, երևույթների ոչ կանոնավոր հաջորդականությունը (համեմատիր՝ «Ըստ երևույթին Տիգրանը աշխատել է մերթ որպես խառատ, մերթ որպես փականագործ» և «Ըստ երևույթին Տիգրանը աշխատել է նախ որպես խառատ, ապա որպես փականագործ»):

Կրկնադիր մերթ... մերթ շաղկապը օգտագործվում է թե

նախադասության անդամների և թե համադաս նախադասությունների շաղկապման համար. օրինակներ՝

Այն միջոցին, երբ Մարությանը փոփոխակի նայում էր մերք դռնապանին, մերք աղջկան, մտածելով, թե ինչ անի, մի կառք դղրդալով մոտեցավ և կանգ առավ հյուրանոցի դռան առաջ (ՆԴ, 267): Մերք անհայտանում էր նա, մերք երևան գալիս, ավելի ահարկու կերպարանքով (Րաֆ., 17): ...Զյունոտ լեռներից Հարձակվում էին նրանք բյուրավոր, Մերք ետ նահանջում մեր խիստ գրոհից, Մերք առաջ անցնում ոհմակներով նոր — Ու փախչում էինք, ու գալիս նորից (ԵԶ, 11):

Նույն շաղկապի կրկնությունից խուսափելու համար երբեմն օգտագործվում է հոմանիշ մեկ... մեկ կրկնադիր շաղկապը, ինչպես՝ Մերք նա բողոքում է հուզված, որ չի կարողանում գտնել սիրած մարդուն իր սերը հայտնելու բառեր, մեկ հիշում է սիրածի «լուսով շաղախված», «բարի դեմքը»... մեկ ափսոսում է կորցրած սիրո համար, մերք էլ ցանկանում, իր մաքուր ու շերմ սիրով ոգեշնչված, բարիքներ գործել մարդկանց ու աշխարհի համար (ՍԶ, 1958, ապր. 5, 3):

Այս շաղկապին, ինչպես ասացինք, նշանակութամբ մոտ է կրկնադիր մեկ... մեկ շաղկապը. սակայն ժամանակային երանգը այս վերջինի օգտագործմամբ թույլ է ընդգծվում. օրինակ՝ «Իսկ երբ անցնում էր քամին, մոմերի բոցերը մեկ ձգվում էին, մեկ ծալվելով նստում (ԱԲԵ, 630)»: «Ճանապարհը հագիվ էր երեւում, ամպը մեկ խտանում էր, մեկ նոսրանում (ԱԲԵ, 417)»: Ժամանակի նշանակությունը արդեն բոլորովին չի զգացվում հետևյալ օրինակում՝ «—Սիրում եմ մեկ զարնանային խաղաղ լուսնկա, մեկ էլ ձմեռային այսպիսի սպիտակ գիշերներ (ՆԴ, 203)»: Այստեղ թվարկման հարաբերությունն է իշխում, առանց նույնիսկ փոխադարձ բացառման նշանակության:

Թվարկվող անդամների յուրատեսակ ժխտում է արտահայտում ոչ այն է... ոչ այն է կրկնադիր շաղկապը, որի օգտագործմամբ խոսքին անորոշության երանգ է հաղորդվում. օրինակ՝ «Մի անգամ էլ ետ դառնալով ու նայելով հեռացող

սեահերին ոչ այն է ատելությամբ, ոչ այն է ակոստանքով, նա մտածեց... (ՄԳ, 1957, 10, 25): Նկատելի է, որ տրոհական նշանակությունը այս շաղկապի օգտագործմամբ բոլորովին այլ բնույթ ունի: Բոլորովին խրախուսելի է նույն շաղկապի օրինակով կազմված է՝ քե... է՝ քե կրկնադրը շաղկապի գործածությունը, ինչպես՝ «Վոռնսկին լուրջ հայացքով նայեց Աննային, բայց վերջինս պատասխանեց նրան միևնույն զրդրիչ՝ է՝ քե ուրախ, է՝ քե հուսահատական հայացքով, որի նշանակությունը Վոռնսկին էր կարող հասկանալ (ՏԱԿ, 2, 151):

4. ՄեկնակԱն ՇԱՂԿԱՊՆԵՐ

Ռուս քերականագիտության մեջ մեկնական շաղկապների արտահայտած շարահյուսական հարաբերությունների բնույթի մասին տարբեր կարծիքներ են արտահայտվել, որոնք հիմնականում հանգում են հետևյալին.

ա) Ոմանք, նկատի ունենալով բարդ նախադասության մասերի միջև նրանց տարածված գործածությունները, հակված են այդ շաղկապները ստորադասական համարել¹:

բ) Ոմանք, նկատի ունենալով նախադասության անդամներ կապակցելու նրանց հատկանիշը, այդ շաղկապները կցում են համադասական հարաբերություններ արտահայտող շաղկապներին²:

գ) Ոմանք էլ, նկատի ունենալով մեկնական շաղկապների այդ երկու շարահյուսական հատկանիշները, համարում են համադասական, երբ նախադասության անդամներ են կապակցում և ստորադասական՝ երբ նախադասություններ են կապակցում³:

դ) Կան նաև քերականներ, որոնք գտնում են, թե մեկ-

¹ А. М. Пешковский, Русский синтаксис в научном освещении, изд. 5-е, Москва, 1935, 432.

² „Грамматика русского языка“, т. I, Москва, 1952, 668.

³ А. А. Булаховский, Курс русского литературного языка, т. I, Киев, 1952, 346.

նական շաղկապները համադասական և ստորադասական շաղկապների միջև հատուկ դիրք են զբաղում¹:

Նշված կարծիքներին հակադրվում է Ա. Պրիյատկինան «Русский язык в школе»² ամսագրում զետեղված իր «Конструкции с пояснительными союзами» հոդվածում, ուր հանգում է այն եզրակացության, թե մեկնական շաղկապները հատուկ շարահյուսական կապակցություն են ստեղծում մեկնական կապակցություն:

Աշխարհաբարի քերականներից առաջինը Ս. Պալասանյանն է, որ իր «Գործնական քերականություն հայերէն լեզուի» (երկրորդ տիպ. Թիֆլիս, 1874 թ. 47—48) աշխատության մեջ այդ շաղկապները զետեղում է բաղնյուսական բաժնում: Այդպես է նաև Մ. Աբեղյանի մոտ³, որն այդ շաղկապները քննում է բաղնյուսականի մի ենթատեսակը համարվող մեկնական կապակցության մեջ: Նույն ձևով է վարվել նաև Ա. Գրիգորյանը⁴: Ս. Աբրահամյանը մեկնական նշանակություն ունեցող այսինքն, այն է շաղկապները զետեղում է մակարեւական շաղկապների կազմում, որպես համադասականի մի ենթատեսակ, որտեղ ամփոփված են նաև հետեանքի նշանակություն արտահայտող բուտի, ուրեմն, հետեաբար և այլ շաղկապներ⁵:

Անառարկելի է այն փաստը, որ այդ շաղկապները թե նախադասության անդամների և թե նախադասությունների միջև արտահայտում են մեկնական հարաբերություններ: Այդ շաղկապներով սկսվող մասը բացահայտում, պարզաբանում է առաջին մասի բովանդակությունը կամ ամբողջապես, կամ մասնակի ձևով՝ որևէ նեղ կողմով: Մեկնական այս հարաբերությունը իրականանում է շնորհիվ այն հանգամանքի, որ

¹ А. Земский, С. Крючков, М. Светлаев, Грамматика русского языка, часть I, Москва, 1948, 194.

² 1956, № 5, 19—24.

³ Մ. Աբեղյան, Աշխ. շար., 335.

⁴ Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, Երևան, 1953, 313.

⁵ Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շփոթող խոսքի մասերը, Երևան, 1959, 202.

կապակցվող այդ մասերը թեև տարբեր ծավալով և տարբեր հասկանալիությամբ են հանդես գալիս, սակայն նույն իրական փաստերն են նշում:

Չանդրադառնալով վիճելի այն հարցին, թե մեկնական շաղկապները շարահյուսական ինչ բնույթի հարաբերություններ են նշում (համադասական, թե ստորադասական), մի հարց, որ հատուկ ուսումնասիրության կարոտ է և ընդհանուր առմամբ համաձայն լինելով այն կարծիքին, որ մեկնական շաղկապները հատուկ դիրք են գրավում համադասական և ստորադասական շաղկապների միջև, անցնենք այդ շաղկապների կոնկրետ կիրառությունների նկարագրությանը:

ԱՅՍԻՆՔՆ—Արդի հայերենի ամենազործածական մեկնական շաղկապն է: Օգտագործվում է թե նախադասության անդամների և թե նախադասությունների միջև: Երկու դեպքում էլ ծառայում է կապակցության առաջին մասը երկրորդ մասը միջոցով բացատրելու, պարզաբանելու խնդրին: Շաղկապվող մասերի միջև կարող են դրսևորվել մեկնական հետևյալ փոխհարաբերությունները.

1) Բացատրության ենթակա առաջին մասը կարող է դիտվել որպես ոչ հասկանալի, կամ այդպիսին կարծվել: Երկրորդ մասը պարզում է նրա բովանդակությունը: Սովորաբար բացատրվող մասը գիտական կամ քաղաքական որևէ տեղումն է լինում, կամ էլ բարբառային, հնացած կամ փոխառյալ մի բառ կամ բառախումբ. օրինակներ՝

Երկար ժամանակ կարծում էին, թե շետլանդական պոնինները իրենցից ներկայացնում են ձիերի մի հատուկ ցեղ, որոնք ստացվել են ինքրիդինգի, ալսինֆն՝ ներցեղային խաչասերման հետևանքով (ԺԴԿՍԱ, 130): Ընդգծելով, որ Նոր-Գվինեայի, ալսպես կոչված «հոլանդական մասը», ալսինֆն՝ Արևմտյան Իրանը, Ինդոնեզիայի անկապտելի մասն է, թերթը նշում է, որ... (Եր., 1958, նոյ. 13, 4): Այստեղ Նզնիկը վիճում էր Միհրնեսուհի հետ, որին արյաց երկրում կոչում էին Հերպետան Հերպետ, ալսինֆն՝ օրենսդրքերի մեջ հմուտ վարպետ (ԴԴ, 177): Մի առավուտ, գարունքին մոտ, ուստան հորըս տանում է պարտեզ և պատվիրում կեռասենիների չորու-

զը տալ, այսինքն ծառերի շորացած ճղները անդամահատել (ՀՀԵ, 298): Նրա կարծիքով առհասարակ մարդ-օլանը քանի զնում ժեռանում էր, այսինքն փոքրանում և վայրենանում էր... (ԱԲԵ, 312): Անձրեից հետո, երբ գետինը մի փոքր շորանում էր, տատ ու թոռներ բարձրանում էին կտուրը և աշխատում էին կոխկրտելով կամ թե «չարխը», այսինքն՝ գլանածև ծանր մի քար, պտտեցնելով՝ ամրացնել կտուրի հողը (ՈՄԲ, 185): Ես երկար անալիզ եմ արել, այսինքն՝ վերլուծել եմ երևույթները և եկել եմ այս եզրակացություն (ՆՀՀ, 478):

2) Հաճախ բացատրման են ենթարկվում այնպիսի բաներ ու բառակապակցություններ, ինչպես նաև նախադասություններ, որոնք իրենց նշանակությամբ ու բովանդակությամբ ինքնին պարզ են ու հասկանալի: Այդ պատահում է այն դեպքում, երբ բացատրության ենթակա առաջին մասը դիտվում է որպես ոչ լիովին հասկանալի՝ հեղինակի մտքերը պարզելու տեսակետից: Նման դեպքերում այսինքն շաղկապով տրվում է հիշյալ հատվածը հասկանալու համար անհրաժեշտ համապատասխան մեկնաբանություններ ու լուսաբանումներ: Բերենք օրինակներ՝

Միջին դուռը փակելը՝ այսինքն՝ բաժանքը՝ ինձ տրխրեցրեց հենց միայն նրա համար, որ այլևս չեմ տեսնելու այդ պատկերը... (ՍԶ, 19—20): Դրա հիմքում ընկած է ժողովրդական այն հումորիկ խոսքը, թե «ամեն մարդու սրտում առյուծ մը կա պառկած», այսինքն քե՛լ, ամեն մարդ, քաջ լինի, թե վախկոտ, տեղն ընկած տեղը քաջ է ու կտրիճ (ԳԹ, 1958, մարտ, 8, 4): Այս բռնադժոխիկ նախաբանից հետո Սենոն ուզում է անցնել բուն նյութին, այսինքն՝ ուզում է ասել. — Մեթուսունդ տա՛ս... (ԳՄ, 500): Հանքային ռեսուրսները առանձնապես մեծ ու բազմազան են Թուրքիայի արևելյան մասում, այսինքն՝ Հայկական բարձրավանդակի շրջանում (Ե. Ֆ. Լուդշովյետ, Թուրքիա, Երևան, Հայպետհրատ, 1958, 18): Եվ այդ օրը բոլոր նաիրցիները «տոն» ունեն, այսինքն—անվանակո-

՝ Այս ձևը հազվադեպ է հանդիպում գրական լեզվում:

շություն... (ԵԶ, 301): Այդ նրա համար էր, որ նախ՝ պատե-
րազմի արհավիրքներով չահաբեկե ամրոցաբնակ տիկնանց,
և երկրորդ՝ որ ինքն ավելի ազատ լինի յուր գործառնություն-
մեջ. այսինքն՝ եթե պարտություն կրելու լինեիր, կարող է՞
քաշվել լեռները, մինչև որ նորից կկարգավորվեր յուր բանա-
կը... (Մուր., 153): Նույնության օրենքը ապահովում է մեր
մտքերի որոշակիությունն այն պատճառով, որ օբյեկտիվ
իրականության մեջ առարկաները, փոփոխվելով ու զարգա-
նալով հանդերձ, մինչև մի որոշ սահման պահպանում են
իրենց որակը, այսինքն այն հատկանիշների միասնությունը,
որի շնորհիվ մի առարկա՝ տարբերվում է մյուս առարկանե-
րից (ԳԹ, 1957, դեկտ. 26, 3): Մի օր, այսինքն մի գիշեր, Ժա-
մը մոտավորապես երեքին, քաղաքի բոլոր տների պատո-
հանների ապակիները հանկարծ զրնգում են թափով...
(ԵԶ, 306—7): Վեպի Մհերը, արդեն, իր նախահայրերի գծով
տարեբային կոսմիկ ծնունդ ունի. Սասունի բոլոր դուցազնե-
րը զավակն են աստված-ծովի, այսինքն, երկնքի և երկրի ծո-
վի (ԱԻ, 461):

3) Բացատրվող մասը կարող է ընդհանուր գաղափար
կամ անորոշ իմաստ ունեցող այնպիսի բառ լինել, որ ենթա-
կա է պարզաբանման, ինչպես՝ «Ամսագրում ղետեղված մյուս
հոգվածները այս նույն՝ այսինքն խաղաղության ամրապնդ-
ման տեսանկյունից լուսաբանում են այլ բազմաթիվ հրատապ
և հուզող հարցեր (Եր., 1958, հունվ. 21, 1)»: «Մի տասնհինգ
րոպեից հետո նույն բանը կրկնվեց, այսինքն նորից՝ զանգը
տվին... (ՀԲ, 158)»:

Նկատելի է, որ նախադասության անդամների կապակ-
ցման ժամանակ բացատրվող և բացատրող առաջին և երկրորդ
մասերի իմաստային համարժեքությունը երբեմն պատճառ է
դառնում, որ այդ մասերը հանդես գան փոխադարձ մեկնա-
կան հարաբերությամբ: Այդ արդեն երևաց մեր բերած օրի-
նակներում: Բերենք ևս մի օրինակ՝ «Այն միտքը, թե իբր
քաղցքեղը վիրուսային, այսինքն վարակիչ հիվանդություն է,
երկրի խոշոր գիտնականների կողմից համարվում է խիստ
վիճելի և կասկածելի (Եր., 1958, հունվ. 7, 3)»: Հենց այս

հանգամանքի շնորհիվ հաճախ դերերը փոխվում են, այսինքն կապակցությունն առաջին մասն է (դյուրիմաստ ու ավելի հասկանալի լինելու պատճառով) պարզում, բացատրում երկրորդ մասի իմաստը. օրինակ՝ «Թորած ջուրը, այսինքն aqua distilla-ն, օգտագործվում է բժշկության մեջ»։ Մի օրինակ էլ կամ շաղկապով՝ «Առավոտյան կողմը՝ երբ աչք բացինք, մեզ դտանք էգեյան ծովում»։ Դարդանելը կամ, ինչպես Փափազյանը կասեր, Հելենսպոնտոսը անցել էինք գիշերով (ՍԱ, 1958, № 2, 69)»։

Բոլոր այս օրինակներում, շարադասական հանգամանքների շնորհիվ, շաղկապվող առաջին մասն է բացատրական դեր կատարում, մի իրողություն, որ, իհարկե, հարաբերական է, քանի որ ոմանք կարող են երկրորդ մասը ընդունել որպես ավելի հասկանալի։

Ուշադրության արժանի են ժողովրդական խոսակցական լեզվում բավական տարածված այսինքն շաղկապի այն կիրառությունները, որոնք ոչ թե մեկնական հարաբերություններ են նշում, այլ հակադրականին մոտ ինչ-որ նշանակություն։ Այսինքն շաղկապով մեջ բերվող ճշտումը իր բովանդակությամբ կարծես հակադրվում է նախորդ մասում նկարագրված իրողությանը. օրինակներ՝

— Մի քույր ունես, ասա՝ հա։ — Հա, այսինքն չէ, երկուսն ունեմ (Ավ., 1959, փետր. 14, 2)։ Առանձնապես պատկերավոր և այսպես ասած, քանդակած ու գույներով հարուստ է այն տեղը, որտեղ դուք զգում եք Կորդելիայի մոտենալը, որտեղ կինը... պայքարի է մտնում ճակատագրի հետ։ Ճիշտ չէ միթե։— Այսինքն՝ ի՞նչ կապ ունի այստեղ Կորդելիան, — քաշվելով հարցրեց Լևինը, բոլորովին մոռանալով, որ ֆանտազիան պատկանում էր Լիր արքային... (ՏԱԿ, 2, 350)։ «— Ուր ե՞ս գնում։— Մի տոմս հազիվ կարողացա ձարել, ստադիոն եմ գնում։ Այսինքն (= սակայն, ոչինչ) դու էլ կարող ես գալ, գուցե գտնենք»։ Ես գնում եմ դպրոց։ Այսինքն դու էլ կարող ես գալ, շուկայի մոտ կիջնես, — ասաց Տիգրանը ընկերոջը։

Այս մեկնական շաղկապից առաջ սովորաբար ստորա-

կետ է դրվում (շատ հազվադեպ՝ նաև բուժ), իսկ հետո՝ երբեմն բուժ, երբեմն ստորակետ։ Մեզ թվում է, որ պետք է խուսափել այս շաղկապից հետո կետադրական նշանի գործածությունից, քանի որ, որպես մեկնական շաղկապ, նա առանց բուժի օգտագործման էլ (որը, ինչպես գիտենք, դրվում է բացահայտվող բառերի վրա՝ ձայնի որոշ բարձրացմամբ և դադարով) անթերի կատարում է մեկնական շաղկապի իր դերը¹։ Ինչ վերաբերում է ստորակետի գործածությանը, ապա այն ոչնչով չի արդարանում, էլ չենք խոսում անջատման գծի մասին, որ երբեմն, ռուսերենի ազդեցությամբ, դնում են այդ շաղկապից հետո։

Այսինքն շաղկապի գործածությունների ոլորտը բազմազան է. նա օգտագործվում է գրավոր լեզվի գրեթե բոլոր տեսակներում, ինչպես նաև ժողովրդական լեզվում, ուր կարող է վերջադաս գործածությունն էլ ունենալ։

ԿԱՄ—Երբ այս շաղկապով կապակցվում են իմաստային տեսակետից իրար լրացնող և այդ պատճառով էլ մեկը մյուսով փոխարինելի փաստեր կամ իրողություններ, ապա կամք է բերում մեկնական նշանակություն։ Այդ նշանակությամբ նա չի կարող գործածվել բարդ նախադասության մասերի միջև։ Չունենալով այսինքն շաղկապի մեկնական բոլոր կիրառությունները, կամ շաղկապը, որպես կանոն, տալիս է բացատրության ենթակա բառի մի ուրիշ, սովորաբար ավելի հասկանալի համարվող անվանում՝ ի տարբերություն այսինքն-ի, որը ավելի բազմակողմանի և մանրամասն ձևով է ներկայացնում բացատրությունը։ Այժմ բերենք մի քանի օրինակներ.

Եղջյուրների այլ կազմություն ունեն խտանդջյուրավորների ընտանիքին պատկանողները, կամ եղջերուները (Կենդանաբ., Երև., 1951, 361)։ Մեր նալը մտել էր Բոսֆորի ջրերը, որի աջ և ձախ ափերին բարձրանում է Ստամբուլը կամ, ինչպես մենք ենք սովորաբար ասում՝ Պոլիսը (ՍԳ, 1958, № 2,

¹ Բուժի գործածությանը ավելի հաճախակի հանդիպում ենք նախադասության անդամների կապակցման ժամանակ։

68): Խոջա-Հիբանի տունը կամ ինչպես Կարմրաքարում ասում էին, ամանաթը, գտնվում էր գյուղի վերի թաղում... (ԱՔՆ, 460):

Հարկ ենք համարում նշել, որ այդ շաղկապից առաջ անհրաժեշտ է ստորակետի գործածությունը, որը նախ՝ սահմանադատում է կամ շաղկապի մեկնական կիրառությունները տրոհականից (քանի որ այս վերջին դեպքում ստորակետը սովորաբար բացակայում է), և երկրորդ՝ նրանով կապակցությունը տրոհվում է, որով շեշտվում է, առաջացող արտասանական դադարի պատճառով, երկրորդ մասի մեկնական, բացատրական բնույթը:

ԱՅՆ է — Այս շաղկապը իր կիրառություններով նկատելիորեն տարբերվում է նախորդ երկու շաղկապներից: Հարցն այն է, որ օգտագործվելով մեծ մասամբ նախադասությունների կապակցման համար, այս շաղկապը նրանց միջև եղած շարահյուսական կախվածության բնույթը և աստիճանը զգալիորեն մոտեցնում է ստորադասական կապակցություններին, որի հետևանքով ումանք մեկնական կապակցության այս ձևը քննում են որոշիչ երկրորդական նախադասությունների բաժնում¹: Այն է շաղկապը իրենով շաղկապվող մասով սովորաբար կապվում է նախորդ նախադասության որևէ մի անդամի հետ՝ այս կամ այն տեսակետից պարզելով, բացահայտելով նրա բովանդակությունը: Այժմ բերենք մի քանի օրինակներ, ընդգծելով այն բառը, որի բացատրությանն է ծառայում կապակցվող մասը:

Ըստ երևույթին նա ամբողջի ու վարդան Մամիկոնյանի ոգին էր՝ լուեյայն կատարող իր պաշտոնը, այն է՝ միշտ ճանապարհ դնել իր ամուսնուն դեպի պատերազմներ ու արշավանքներ (ԴԴ, 3, 85): Այս շրջանը տևում է 1000 տարի, երբ հայերը Թրակիան թողնելով, անցնում են Հելլեսպոնտոսը և մտնում են Փոքր Ասիա, իրենց հայրենիքը դարձնելով Ալիսի:

¹ Տե՛ս Ն. Պառնասյանի «Ստորադասական կապակցությունը ժամանակակից հայերենի բարդ նախադասություններում» աշխատության 58 էջը:

հովիտը, այն է՝ արդի Սեբաստիան, Հիթիթների և փոյուզիացոց հարևանության մեջ (Հ. Աճառյան, Լիակատար քերականություն, III, Երևան, 1957, 505—506): Այնուամենայնիվ նրանք ձեռք են առնում որոշ նախազգուշական միջոցառումներ, այն է՝ բացի ի բաց դուրս չեն գալիս իրենց բնակարանից դիտելու, այլ գնում են հեռու անտառը... (ԴԴՌԿ, 494): Կար մի պատճառ էս, որի հետևանքով «Կորբեյ» վիլլան օազիս էր թվում, այն է՝ տանտիրոջ անդորրությունը անցնում էր հյուրերին (ԻէՓ, 16):

Նույն շաղկապը կարող է օգտագործվել նաև թե շաղկապի հարադրությունմբ՝ ստանալով այն է թե ձևը: Կազմավորման տեսակետից այդ երկուսի միջին օղակն է ներկայացնում այդ շաղկապի հետևյալ կիրառությունը. «—Անշուշտ մի քանի օրից, բայց ինձ հարկավոր է՝ մինչև նրա հասնելը՝ մի վերջին գաղտնիք էս բանալ. այն է՝ թե ինչը դրդեց Ցլիկ-Ամրամին ապստամբել արքայի՝ յուր բարերարի դեմ (Մուր., 98)»:

Այն է թե շաղկապը սակավ է գործածվում արդի գրական հայերենում: Այս երկու շաղկապներն էլ բացառապես տարածված են գրավոր խոսքում, որով և գրքային ոճ են տալիս խոսքին:

Ի վերջո պետք է ասել, որ մեկնական նշանակություն ունեցող շաղկապները զարգացման մեծ հեռանկարներ ունեն: Չէ որ մարդկային միտքը շանում է բնության և հասարակական երևույթները հնարավորին չափ բազմակողմանի կերպով ներկայացնել, իրականին համապատասխան, իսկ մարդկային մտածողության նրբությունները՝ առանց անորոշության և երկդիմության: Պատահական չէ ուրեմն, որ մեկնական շաղկապները հանդիպում են աշխարհի գրեթե բոլոր լեզուներում:

Որպես եզրակացություն, պետք է նշել հետևյալը.

Արդի հայերենի համադասական շաղկապները, զարգացման երկարատև շրջան անցնելով, ներկայանում են մեզ որպես իմաստային և ոճական հարուստ հնարավորություններով օժտված կապակցության միջոցներ, որոնք ոչ միայն պահպանել են գրաբարյան շաղկապների իմաստային և կիրառական հիմնական հատկանիշները, այլև, լեզվի զարգացման օրենքի

հիման վրա, հարստացել են բազմաթիվ ու բազմապիսի նշանակություններով, լեզվի զարգացման տվյալ շրջանին անհրաժեշտ նորանոր շարահյուսական հարաբերություններով: Համադասական շաղկապների որակական և քանակական աճը տեղի է ունենում ինչպես լեզվի զարգացման ներքին օրինաչափությունների, այնպես էլ բարբառների, ժողովրդական խոսակցական լեզվի և թարգմանական գրականության ազդեցությամբ: Ավելորդ է նշել, որ համադասական շաղկապների իմաստային բաժանումը միավորիչի, հակադրականի և բաժանականի չպետք է դիտել որպես խիստ կերպով սահմանագծված դասակարգումներ, ուստի և այն պետք է որոշ վերապահությամբ ընդունել:

ՍՏՈՐԱԳԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊԵՆԵՐ

Ըստ ավանդական քերականության, ստորագասական են այն շաղկապները, որոնք երկրորդական նախադասությունը կապում են գլխավորին: Այս բնորոշումը, թերի լինելով հանդերձ, խիստ նեղացնում է ստորագասական շաղկապների կիրառության ոլորտները: Չէ՞ որ այս շաղկապները տարածված են նաև նախադասության համազոր անդամների, որպես ինքնուրույն նախադասություն չձևավորված ստորագաս մասերի (էլիպտիկ կառուցվածքներում), նախադասության տրոհվող լրացումների, ինչպես նաև միջանկյալ բառերի, բառակապակցությունների ու նախադասությունների կապակցման դերով: Բերենք այս դեպքերի վերաբերյալ առանձին օրինակներ.

Լինելով երեք տաժանավայրերի գանձապահ, Կոլենը հարուստ էր այն ավանդներով, որ վստահված էին նրա ճանաչված, թեպետև հարկադրյալ ազնվությանը (ՕԴԲԿՊ..., 107): Աղբյուրները մարգարտաշիթ՝ երբ ձմեռ լինի, էլ չեն կանչի կարկաչի, ինչպես ու հիմի (ԳՍԲ, 21): Սեղրակի մթազնած ուղեղում, ինչպես հանգչող կայծերը մոխրի մեջ, մարում էին անձև ու անորոշ մտքեր (ՆԶՊՊ..., 482): — Անկեղծորեն... Ահա այն բոլորը, ինչ ես ուզում եմ, — ասաց Պեյրադը, — և անկեղծությունը այն միակ, թեպետև մեզ համար անսովոր, նվերն է, որ մենք կարող ենք անել միմյանց (ՕԴԲԿՊ..., 160): Բջջի փակ նիստին ներկա էին, ինչպես այդ արձանագրեց տեխնիկական քարտուղարը, Լեոն Լամբարյանը, Շմավոն Մարությանը... (ՆԶԶ, 51): Ժամանակն ու տարածությունը սիրո, երբ կարելի է այսպես ասել, սղոցներ են (Շիրվ., 293):

Բացի այս դեպքերից, ստորադասական շաղկապները հանդիպում են նաև վերնազրերի մեջ, ավարտված նախադասությունների կամ պարբերությունների միջև (օրինակ՝ ուստի, ուրեմն, որովհետև՝ և այլն), այլ կերպ ասած, բարդ ստորադասական կապակցությունից դուրս։ Սրանից հետևում է, որ ստորադասական շաղկապները չեն կարող դիմել ուրախ սոսկ երկրորդական նախադասությունների շաղկապման փեռականակն միջոց։ Նրանց կիրառությունների սահմանները անհամեմատ ավելի լայն են։

Նկատելի է, որ ստորադասական կապակցության սերտության աստիճանը տարբեր շաղկապների օգտագործմամբ տարբեր է լինում։ Այն հատկապես բարձր է նպատակի, պայմանի շաղկապների օգտագործման ժամանակ, քանի որ այս դեպքում հիշյալ շաղկապները սովորաբար պահանջում են ստորոգյալի արտահայտման որոշակի եղանակ (ըզձական, պայմանական) ստորադաս նախադասության մեջ, մի հանգամանք, որ կապակցվող մասերի կախվածությունն ու կապը ավելի է ուժեղացնում։ Ստորադասական կապակցությունը բարձր աստիճանի է հասնում հատկապես բացատրական շաղկապների կիրառության ժամանակ, որոնցով շաղկապվող նախադասությունները, լրացնելով գլխավորի բովանդակության թերին, կապվում են նրա այս կամ այն անդամի, մեծ մասամբ ստորոգյալի հետ։

Վերոհիշյալից հետևում է, որ ստորադասական շաղկապները կախվածության տարբեր աստիճաններ են արտահայտում, որով և կազմվում են բարդ ստորադասական նախադասությունների կառուցվածքա-իմաստային տարբեր տիպեր։

Ամենակարևորը, ամենաէականը շաղկապների կիրառությունների քննության մեջ նրանցով կապակցվող մասերի՝ իմաստային փոխհարաբերությունների բացահայտումն է։

¹ Տե՛ս որովհետև շաղկապի հետևյալ կիրառությունը՝ «—Գնացել էի աղբյուրը՝ ջուր խմելու։—Տանը ջուր չկա՞ր, որ էս անձրեին աղբյուրը գնացի՞ր,— ասում է նա բարկացած, պարզապես չհավատալով իմ ստին, ավելի շուտ զայրանալով իմ ստի վրա։ Որովհետև ո՛վ է տեսել, որ երկուերեք ժամ ջուր խմեն։ Ու մի ապտակ է իջնում երեսիս (ՍԶ, 61)»։

Պատի վարմանալի չէ, որ քերականների ճնշող մեծամասնությունը առաջին հերթին կատարում է շաղկապների խմբավորում՝ ըստ նրանց ընդհանուր նշանակությունների, ապա միայն անցնում այդ խմբերի մեջ մտնող շաղկապների կիրառությունների նկարագրմանը։ Այս մոտեցումը, որ դրական է նախ այն իմաստով, որ պարզություն է մտցնում բազմաթիվ ու բազմապիսի շաղկապների մեջ՝ դրանք դասակարգելով ամենակարևոր ու ամենահիմնական հատկանիշի, իմաստային հատկանիշի հիման վրա, ունի մի թերի կողմ։ Այդ այն է, որ նույն շաղկապը, երբ այն բազմիմաստ է, տարբեր խմբերի մեջ է ընկնում, որի հետևանքը լինում է այն, որ նրա նշանակությունների ու կիրառությունների վերաբերյալ ամբողջական պատկերացումը թուլանում է. օրինակ, նույն ու շաղկապը, ըստ այս մոտեցման, ստիպված ենք զետեղել բացատրական, ժամանակի, պայմանի, նպատակի, պատճառի շաղկապների բաժնում։ Բացի դրանից, երբ դժվար է լինում որոշել այս կամ այն շաղկապի բուն նշանակությունը՝ այլ իմաստային երանգների առկայության պատճառով, դժվարություն առաջ ենք կանգնում, չիմանալով, թե ո՛ր բաժնի մեջ է հարմար զետեղել այն։ Մինչդեռ, իմաստային բաժանումից հրաժարվելու դեպքում մենք նույն շաղկապի տակ կարող ենք ազատորեն բացահայտել նրա բոլոր նշանակություններն ու իմաստային երանգները, առանց կաշկանդվելու տարբեր նշանակությունների առկայության փաստից։ Բերենք մի օրինակ. արդի հայերենում ու շաղկապը երբեմն կարող է հանդես գալ բարդ նախադասության այնպիսի կառուցվածքներում, ուր արտահայտվում են ինչպես հիմունքի, այնպես էլ պայմանի ու ժամանակի հարաբերություններ։ Նման դեպքերում հաճախ դժվար է լինում պնդել, թե ո՛ր նշանակություն է իշխողը. ահա այս պարագայում մենք ձգտում ենք հիմնավորել ու հաստատել այն նշանակության գերակշռությունը, որի բաժնում նկարագրվում է այդ շաղկապը։ Բացի դրանից, ստիպված ենք լինում այդ շաղկապի մյուս երկու կիրառությունների մասին խոսել նաև համապատասխան շաղկապների բաժնում։

Այս թերությունները, սակայն, չեն կարող նսեմացնել շաղկապների իմաստային դասակարգման նպատակահարմարությունը: Պետք է նկատի ունենալ նաև, որ շաղկապների իմաստային բաժանումների մեծ մասը համընկնում է պարագայական երկրորդական նախադասությունների բաժանումներին: Այս հանգամանքը ևս խոսում է հիշյալ դասակարգման օգտին:

Պետք է նշել, որ երկրորդական նախադասությունների գոյություն ունեցող դասակարգումը ընդհանրապես հիմնված է շարահյուսական հատկանիշների հաշվառման վրա, քանի որ միշտ նկատի է առնվել, թե նրանք պարզ նախադասության ո՛ր անդամի ֆունկցիան են կատարում: Այս մոտեցման անմիջական հետևանքն է այն, որ տարբերում են ենթակա, ստորոգելիական վերադիր, որոշիչ, հատկացուցիչ, բացանայտիչ, խնդիր, պարագա երկրորդական նախադասություններ: Այս անվանումները, ինչպես տեսնում ենք, ակնարկում են պաշտոնը և ոչ թե գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև դրսևորվող իմաստային հարաբերությունը: Քիչ տարբեր է դրությունը պարագա երկրորդական նախադասությունների դեպքում, որոնք, ինչպես գիտենք, ստորաբաժանվում են ըստ իրենց արտահայտած կոնկրետ նշանակությունների, որի պատճառով ժամանակի, նպատակի, պատճառի զիջական կամ հակառակ հիմունքի պարագա երկրորդական նախադասությունները, որոնք իրենց համարժեքներն ունեն պարզ նախադասության անդամների մեջ, իրենց նշանակությամբ և անվանումով նույնանում են հիշյալ նախադասությունները կապակցող համապատասխան շաղկապների հետ: Հետևանքի և պայմանի երկրորդական նախադասությունները, որոնք իրենց համարժեքները չունեն պարզ նախադասության անդամների շարքում, դարձյալ ակնարկում են այն իմաստային հարաբերությունը (և ոչ թե պաշտոնը), որ ունեն նրանք գլխավոր նախադասության նկատմամբ, որի պատճառով հիշյալ նախադասությունների կապակցմանը ծառայող շաղկապները ևս իրենց անվանումներով նույնանում են նրանց հետ (պայմանի շաղկապներ, հե-

տեւանքի շաղկապներ)։ Ձևի պարագա երկրորդական նախադասություններ կապակցող այն շաղկապները, որոնք կապված չեն ուր-ով և հետևանքի երանդ չունեն, մենք անվանել ենք համեմատական։

Ըստ նշանակության արդի հայերենի ստորադասական շաղկապները բաժանվում են հետևյալ տեսակների՝ բացատրական, նպատակի, պատճառի, հետևանքի, ժամանակի, զիջական և համեմատական։

1. ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Բացատրական են այն շաղկապները, որոնցով կապակցվող երկրորդական նախադասությունը վերաբերում է գլխավոր նախադասության սոսկ մի անդամին և բացահայտում է նրա բովանդակությունը։ Այս կառուցվածքի բարդ ստորադասական նախադասությունները ունի քերականության մեջ հաճախ անվանվում են միանդամանի (одночленный—որպես մեկ անկախ պնդում արտահայտող լեզվական միավոր) ի տարբերություն երկանդամանի (двучленный—որպես երկու անկախ պնդում արտահայտող) բարդ ստորադասական նախադասությունների, որոնց կազմում ստորադասականը սովորաբար վերաբերում է ամբողջ գլխավորի բովանդակությանը (այդպիսիք են պատճառի, հետևանքի, պայմանի, զիջական և այլ երկրորդական նախադասություններ)։ Ռուս քերականները թեև ընդունել են բացատրական շաղկապների առանձնացման անհրաժեշտությունը և ընդհանուր գծերով պարզել են նրանց գործածության ոլորտները, սակայն տարբեր մոտեցում են հանդես բերում բացատրական երկրորդական նախադասության սահմանները որոշելիս։ Ոմանք նեղացնում են այդ սահմանները, ընդգրկելով միայն ստորոգյալին լրացնող երկրորդականները (խնդիր), ոմանք ավելացնում են նաև որոշիչ երկրորդականները։ Լ. Բուլախովսկին բացատրականի տակ հասկանում է նաև չափի ու ձևի պարագա երկրորդական նախադասությունը։

Քանի որ բացատրական երկրորդական նախադասու-

թյունները բնորոշվում են միանդամանիությունով, ապա բոլոր այն կառուցվածքները, որոնցում ստորադաս մասը կապվում է գերազասի սոսկ մի անդամի հետ և լրացնում է նրան, պետք է ընդունել որպես բացատրական: Այսպես էլ վարվել ենք մենք, երբ ենթակա, ստորոգելիական վերադիր, խնդիր, որոշիչ, հատկացուցիչ (հազվադեպ), ձևի և չափի պարագա երկրորդական նախադասությունները համարել ենք բացատրական¹: Դրանք բացատրական ֆունկցիա են կատարում գլխավոր նախադասության որևէ մի անդամի նկատմամբ և լրացնում են այն թերին, որ իմաստային, շարահյուսական և կառուցվածքային տեսակետից գոյություն ունի գերադաս մասում: Բարդ ստորադասական նախադասությունների այս տիպի համար է, որ Ն. Ս. Պոսպելովը օգտագործում է обЪемлю-щий (ընդգրկող) կամ включающий (ներառող) տերմինները², միաժամանակ նշելով, որ այս տիպի բարդ ստորադասական նախադասությունները բաղադրիչ մասերի (գլխավորի և երկրորդականի) այնպիսի սերտ կապակցություն են կազմում, որ դրանք quasi—բարդ (կիսով չափ բարդ) կարելի է համարել:

Արդի հայերենում բացատրական հարաբերություններ են արտահայտվում որ, թե շաղկապներով: Երբեմն այդ դերով են հանդես գալիս նաև երբ, իբր (թե), ինչ, որպեսզի շաղկապները: Ինչպես ասել ենք, բացատրական շաղկապներով կապակցվող նախադասությունները ծառայում են գլխավոր նախադասության որևէ բառի (մեծ մասամբ ստորոգյալի) լրացմանը, ծավալմանը, Քննենք հետևյալ օրինակները.

Նա ասաց... (որ Սուրիկը այսօր չի գալու)

Հայտնի է... (որ երկիրը պատվում է արևի շուրջը)

Նա այնպես էր երգում... (որ բոլորը զարմացել էին)

¹ Հայ քերականագիտությունը այս հարցին բոլորովին չի անդրադարձել:

² Բացատրական տերմինը նա օգտագործում է միայն գլխավորի ստորոգյալին լրացնող երկրորդական նախադասությունների համար (խնդիր, ենթակա): *Sl'ya H. C. Поспелов, Сложноподчиненные предложения и его структурные особенности* (ВЯ, 1959, № 2, 19—27).

Նա այնպիսի պատասխան տվեց... (որ մենք հիացանք)
Այդ նրանից է... (որ դու անուշագիր ես)

Ինչպես տեսնում ենք, այս գերադաս նախադասությունները իմաստային և կառուցվածքային տեսակետից այս կամ այն շափով թերի են։ Այդ բացը լրացվում է ստորագրաս նախադասություններով, որոնք, սերտ կապի մեջ գտնվելով գլխավորի ընդգծված անդամների հետ, կատարում են այդ անդամների լրացման և ծավալման ֆունկցիան։ Միայն երկրորդական նախադասությունների առկայությամբ է, որ այդ նախադասությունները ամբողջանում և իմաստավորվում են։

Բացատրական շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունների դասակարգությունը՝ հիմնված նրանց շարահյուսական պաշտոնի վրա (ենթակա, խնդիր, ստորոգելիական վերագիր և այլն), շատ դեպքերում սոսկ ձևական բնույթ է կրում։ Ինչ անբերություն կարող է նկատվել, օրինակ, հետևյալ նախադասությունների միջև.

ենթադրվում է, որ այդ խնդիրը կլուծվի:

ենթադրում են, որ այդ խնդիրը կլուծվի:

Որ շաղկապով կապակցվող այս երկու նախադասությունները, որոնք ըստ իրենց շարահյուսական պաշտոնի տարբեր խմբավորումների մեջ են ընկնում (ենթակա, խնդիր), փաստորեն նույն բացատրական-լրացական դերն են կատարում գլխավորի ստորոգյալի նկատմամբ՝ իմաստային տեսակետից լրացնելով նրա նույն թերին։

Արդի հայերենի բացատրական շաղկապներից, և ընդհանրապես ստորադասական շաղկապներից, ամենագործածականը ու-ն է, որը հասել է բառական այնպիսի վերացականություն, որ կարծես դարձել է սոսկ ստորադասություն նշելու քերականական մասնիկ, զուրկ որևէ հատուկ նշանակությունից։ Այդ է պատճառը, որ նա կարող է հանդես գալ ստորադասական շաղկապների գրեթե բոլոր նշանակություններով ու երանգներով, բացառությամբ զիջականի։ Նման դեպքերում բաղադրիչ մասերի միջև դրսևորվող իմաստային

հարաբերությունները բխում են կապակցվող մասերի բովանդակությունից, նրանց կառուցվածքային առանձնահատկությունից և այլն: Ուր, թե բացատրական շաղկապները աչքի են ընկնում իրենց ոճական կիրառությունների հարստությամբ ու բազմազանությամբ:

Կարելի է առանձնացնել բացատրական շաղկապներով կապակցվող բարդ ստորադասական նախադասությունների կառուցվածքային երեք հիմնական տիպեր.

1) Բացատրական շաղկապով կապակցվող մասը անմիջականորեն վերաբերում է գլխավոր նախադասության հոգեկան գործունեություն արտահայտող (և ոչ ֆիզիկական) որևէ բայի կամ բայական արտահայտության:

2) Բացատրական շաղկապով կապակցվող մասը լրացնում է գոյականով արտահայտված կամ գոյականի կիրառություն ունեցող որևէ անդամի:

3) Բացատրական շաղկապով կապակցվող մասը կապվում է գլխավոր նախադասության՝ ցուցական դերանուններով (այն, այնպիսի, այնպես, այնքան և այլն) արտահայտված և նախադասության զանազան պաշտոններով հանդես եկող հարաբերյալների հետ, որոնք իրենց բովանդակություն ստանում են բացատրական-լրացական դեր կատարող այդ երկրորդական նախադասություններից:

1) Առաջին տիպի նախադասություններում ուր, թե բացատրական շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասություններ, որոնք գերազանցապես վերջադաս դիրք ունեն գլխավորի նկատմամբ, հանդես են գալիս երկու հիմնական գործածությամբ.

Ա) Ստորադաս մասը կապվում է գլխավորի հոգեկան գործունեություն նշող ներգործական սեռի բայական ստորոգյալի հետ՝ նշելով նրա գործողության անմիջական առարկան:

Բ) Ստորադաս մասը կապվում է գլխավորի դարձյալ հոգեկան գործունեություն նշող, սակայն արդեն ոչ-ներգործական սեռի բայական ստորոգյալի հետ՝ լրացնելով նրան:

Երկու դեպքում էլ ստորադաս մասը, սերտ կապի մեջ

լինելով գլխավոր նախադասության ստորոգյալի կամ բայական որևէ մի այլ անդամի հետ, բացատրական-լրացական դեր է կատարում նրա նկատմամբ: Որպես կանոն, այս կառուցվածքի բարդ ստորադասական նախադասություններում գլխավորում բացակա է այն անդամը, որի ֆունկցիայով հանդես է գալիս բացատրական մասը:

Ա) Այս ենթատեսակի բարդ ստորադասական նախադասություններում բացատրական մասը իր բովանդակությամբ հանդես է գալիս որպես գլխավորի ներգործական սեռի բայական ստորոգյալի նշանակությունից բխող խոսքի, մտածության, իմացության, զգայության, կամքի ու ցանկության օբյեկտ: Այլ կերպ ասած, բացատրական մասում նկարագրվում է այն, ինչ ասել, մտածել, իմացել, զգացել և կամեցել է գլխավոր նախադասության մեջ արտահայտված սուբյեկտը: Նկատելի է, որ շաղկապավոր օբյեկտ երկրորդական նախադասությունները կապվում են միայն որոշ կարգի բայերի, գերազանցապես հոգեկան գործունեությունն նշող բայերի հետ (և ոչ ֆիզիկական գործունեությունն արտահայտող բայերի, ինչպես՝ ջարդել, խփել, ծռել և այլն, որոնց գործածության դեպքում գլխավոր և երկրորդական նախադասությունների կապակցությունը իրականանում է գերազանցապես հարաբերյալների ու հարաբերական բառերի միջոցով): Հոգեկան գործունեությունն արտահայտող բայերի հետ են կապված նաև ուր, թե շաղկապների կիրառությունները ուրիշի անուղղակի. հազվագեղ նաև՝ ուղղակի խոսքի կապակցման համար, ինչպես նաև թե շաղկապի գործածությունը՝ անուղղակի հարցում պարունակող նախադասությունների շաղկապման համար:

Այժմ քննենք ուր, թե շաղկապների կիրառությունները՝ կապված այս կարգի բայերի հետ:

ա) Ուրիշի անուղղակի խոսքի կապակցմանն են ծառայում ուր և թե շաղկապները, երբ գլխավորում առկա են ասացական և մասամբ նաև մտածական նշանակությամբ ներգործական սեռի բայեր. օրինակներ՝

Բժիշկները ասում են, որ աղիքների հիվանդություն ունի

(ՆԴ, 10): Սրապը քրոջ տղային պատմեց, որ պանիրն ու յուղը լավ գնով է ծախել... (ՍԽՀ, 54): Միրզամը հաղորդեց, որ եղանակը շորային է, գիշերները կանաչը մրսում է (ԱԲՆ, 684): Ռեկտորը հայտնել էր նաև, որ նախահարձակ են եղել... վաճառականները (ԱԲՆ, 601): Բայց հայտնեցի նրան, թե դիմել ենք եգերացոց օգնության (ՄԳՄ, 101): Գնա և ասա ոստիկանին, թե շուտով մենք կգանք յուր հաշիվը քննելու... (ՄԳՄ, 426):

Մտածական բայերի հետ կապվելիս բացատրական մասի բովանդակությունը չի հաղորդվում ուրիշին, այլ մնում է որպես ներքին խոսք. օրինակ՝

Եվ մտածում եմ, որ Ազնոն հիմա դպրոց է գնում և կտուրների վրա ջինջ ձայնով այլևս չի երգում (ԱԲՆ, 109): Նրանք մտածում էին, որ իրենց գործը թարսվել է նրա համար, որ հարևանի դործը հաջող է գնում (ՆԶՀ, 344):

Նկատելի է, որ թե շաղկապի կիրառությամբ ուրիշի անուղղակի խոսքը շատ հաճախ ներկայացվում է որպես ոչ այնքան ստույգ ու հավաստի, ինչպես՝ «Ասում են, թե էն Փարվանա ջահելներն են սիրավառ (ՀԹԾԺ, 1, 296)»: «Ընկերս ասում է, թե ինքը ավելի լավ է նկարել»:

Բացատրական մասի ենթադրական երանգը ավելի է շեշտվում, երբ ստորադաս մասում օգտագործվում են իբր, իբր թե, իբրև թե եղանակավորող բառերը. օրինակներ՝

Նրանք... հասկացնել են տալիս Տոսյայի և իմ մայրիկին, որ իբր նրանց փոխհարաբերությունները սիրային են... (ՅԾԳ, 438—9): Սահակյանը ճգնում էր ապացուցել, թե իբր շենքն իր համար չի կառուցում, այլ՝ իր սիրելի փեսա Վահանի համար (ԵՐ., 1958, դեկտ. 28, 2):

Յուրահատուկ կառուցվածք ունի հետևյալ օրինակը, որ ստորադաս նախադասության հատկացուցիչը օգտագործված է գլխավոր նախադասության մեջ, ինչպես՝ «Երբ որ դպրոցների տեսուչն ինձ պատմեց Ձորագյուղի մասին, թե տեղն անառիկ է, օդը լավ..., ես իսկույն համաձայնեցի (ԱԲՆ, 118)»: Համեմատիր՝ «...Տեսուչն ինձ պատմեց, թե Ձորագյուղի տեղն անառիկ է...»:

բ) Կապվելով իմացական և զգայական բայերի հետ, որ շաղկապով կապակցվող բացատրական երկրորդական նախադասությունը նշում է սուբյեկտի իմացության և զգայության առարկան. օրինակներ՝

Օր. Սահակյանը... հասկացավ... որ ավելորդ էր հին հիշատակները նորոգել, ուստի շտապեց խոսքը փոխել (ՆԴ, 105): Ես թեև լավ գիտեի, որ ինձ չէր տվել, բայց գրպաններս ման եկա ու ճանապարհ ընկանք (ՀԹԵԺ, 3, 119): Որքան մեծ եղավ իմ ուրախությունը, երբ մյուս օրն իմացա, որ նրա փոքր քույրը սովորում է դպրոցում (ԱԲԵ, 122):

Անհո՛ւն հրճվանքով զգում էի ես, որ լա՛վ է, Որ կամ այս հին աշխարհում (ԵԶ, 7): — Լավ, լավ, մեջ ընկավ Մարությանը, տեսնելով, որ բանը շատ հեռու է գնում (ՆԴ, 183): Փողոցով անցնելիս նա հանկարծ լսեց, որ մի ծանոթ ձայն իրեն է կանչում: Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագավորներից և իշխաններից, բացի հոգևորականներից և ղրնվորներից, Հայաստանում կար և ժողովուրդ... (Բաֆ., 8):

Իմացության առարկան կամ զգայարանների կողմից ընկալվող իրողությունները չեն կարող սուբյեկտի համար անիրական կամ անստույգ համարվել: Այդ է անշուշտ պատճառը, որ ենթադրական ընդհանուր երանգ արտահայտող թե՛ շաղկապը չի օգտագործվում այս նշանակությամբ բայերի հետ: Բացառություն են կազմում միայն այն դեպքերը, երբ իմացական նշանակություն ունեցող բայը օգտագործվում է «կարծել», «ենթադրել» իմաստով: Սակայն այս դեպքում էլ բացատրական մասում արտահայտված իրողությունը թե՛ շաղկապի օգտագործմամբ փոխանակ ենթադրական արժեք ստանալու, ձեռք է բերում ստույգ իրողության նշանակություն, ընկալվելով հակառակ իմաստով. օրինակ՝ Նա իմացավ, թե եղբայրը հիվանդ է (այսինքն՝ հիվանդ չէ): Նա գիտեր, թե Սուրիկը եկել է (այսինքն՝ չի եկել): Նույնը և ժրխտականի դեպքում՝ «Նա գիտեր, թե Սուրիկը չի եկել (այսինքն՝ եկել է)»:

Բացատրական մասի բովանդակությունը հաճախ հակառակ իմաստով չի ընկալվում, երբ այս կառուցվածքի բարդ

ստորադասական նախադասութիւնները իրենց հերթին ստորադասւում են մի այլ նախադասութեան. օրինակ՝

Նա չի ուզում, որ Մաշոն իմանա, թե ինքը ձու է ծախում (իսկապես ծախում է) -- ԱԲԵ, 152:

դ) Հրաման, խնդիր, ցանկութիւն արտահայտող բայերի¹ հետ կապվելիս ստորադաս մասը նշում է այն, ինչ անհրաժեշտ է սուբյեկտին կամ ինչին ձգտում է նա: Այդ է պատճառը, որ այս դեպքում երկրորդական նախադասութեամբ նշվում են ոչ թե ռեալ, իրական փաստեր ու եղելութիւններ, այլ սոսկ ցանկալի կամ անհրաժեշտ: Համեմատենք հետևյալ օրինակները.

Դասդեկն ասաց, որ աշակերտները գնացել են տուն:

Դասդեկն ասաց, որ աշակերտները գնան տուն:

Առաջին օրինակում ասել բայը ասացական նշանակութիւն ունի, իսկ բացատրական երկրորդական նախադասութեան բովանդակութիւնը՝ ռեալ իրողութեան արժեք, մինչդեռ երբ երկրորդ օրինակում բացատրական մասի ստորոգյալը ըզձական եղանակով է օգտագործվում, ասել բայը «կարգադրել» նշանակութիւնն է ստանում, իսկ կապակցվող մասի բովանդակութիւնը ներկայանում է որպէս սոսկ ցանկալի կամ անհրաժեշտ: Բերենք ուրիշ օրինակներ՝

Վարդանը գնաց ընդունման վայրը, ռամիկների կողմը: Նստեց թամբերի կույտերի վրա և հրամայեց, որ մոտենան նրանց պետերը (ԴԴ, 4, 543): Հայրը հատկացրեց Սամվելին առանձին ծառաներ, պատվիրելով, որ միշտ սպասումն լինեն (ԲաՖ. 487): Նոր եկողները պահանջում էին, որ կողպեքը կոտրեն, դուռը բաց անեն... (ՆԶՀ, 339): Գարեգինը մորը խնդրեց, որ իր անկողինը գցի ընկուղենու տակ (ՍԽՀ, 94): Ուզում է, որ իրեն ազատես Վարազվաղանի ճանկերից (ԴԴ, 454):

¹ Կամական այս բայերից շատերի (հատկապես հրաման արտահայտող) խնդրառական հատկանիշներից մեկն այն է, որ պարզ նախադասութեան կառուցվածքում նրանց ուղիղ խնդիրը արտահայտվում է անորոշ դերբայով. օրինակ՝ Հրամայեց առաջ շարժվել, կարգադրեց ճեռնալ և այլն:

Ինչպես տեսնում ենք, կամական նշանակություն ունեցող բայերի հետ կապվելիս ստորագաս մասը սկսվում է միշտ ուր շաղկապով, իսկ նրա ստորոգյալը արտահայտված է լինում ըղձական եղանակով: Նկատելի է, որ նույնպիսի կառուցվածք ունեն նաև ուր շաղկապով սկսվող նպատակի երկրորդական նախադասությունները: Տարբերությունն այն է, որ այս վերջինները սուբյեկտի կատարած գործողության նպատակն են նշում, և ոչ թե օբյեկտը, բայիմաստի հետ են առնչվում, և ոչ թե բայական սեռի:

Ուսուցիչներում կամական բայերի հետ կապվող նման ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները կապակցվում են բացառապես *чтобы* շաղկապով (*օրինակ՝ попроси мамашу, чтобы нас взяли на охоту...*): Այդ է անշուշտ պատճառը, որ ուսուցիչների այդօրինակ նախադասությունների թարգմանություններում ուրիս փոխարեն շատ հաճախ օգտագործվում է հայերենի որպեսզի շաղկապը, որ բոլորովին էլ խրախուսելի չէ: Որպեսզի շաղկապի նմանօրինակ կիրառությունը տարածված է հատկապես լրագրային լեզվում. օրինակ՝

Առաջարկում եմ, որպեսզի Հայկական ՍՍՌ Լուսավորության Մինիստրությունը նախապես մշակի ութամյա և միջնակարգ դպրոցների ուսումնական պլանների ու կարգերի նախագիծը... (ՍՀ, 1958, դեկտ. 8, 3):

Նկատելի է, որ քննարկվող բարդ ստորագասական նախադասությունների այս կառուցվածքներում հոգեկան գործունեություն արտահայտող ներգործական սեռի բայերը ընդարձակվում են ուղիղ խնդրի ֆունկցիա կատարող բացատրական նախադասությամբ միայն այն դեպքում, երբ գրված լինում բացակայում է սեռի խնդիրը: Սակայն հարաբերական դերանունների օգտագործման դեպքում հակառակ երեւիլով է նկատվում. այս դեպքում արդեն սեռի խնդրի առկայությունը գլխավոր նախադասության մեջ գրեթե պարտադիր է, քանի որ նրա միջնորդությամբ է այդ խնդրի պաշտոնը փոխանցվում հարաբերականով սկսվող երկրորդական նախադասությանը (օրինակ՝ «Ես կրկնում եմ այն, ինչ քեզ անհրա-

ժեշտ է»։ «Տիկինը շկարողացավ իրան զսպել, հայտնեց այն, ինչ որ ծածկել էր աշխատում (ԲՍ, 49)»։

Անդվում, սակայն, հանդիպում են դեպքեր, երբ շաղկապավոր կառուցվածքներում հարաբերյալներ են օգտագործվում գլխավորում։ Այս դեպքում արդեն առավել ևս ձևական է դառնում նրանց ունեցած շարահյուսական պաշտոնը (սեռի խնդրի), որի փոխարեն ավելի ընդգծվում է նրանց ոճական-արտահայտչական արժեքը, օրինակ՝

Ես ա՛յն եմ ասում, որ Մարի Ստյուարտի վիճակը չի շարժում քո կարեկցությունը (ՆԴ, 47)։ Ես այն տեսա, որ նա պատուհանից ցատկեց բակը։

Վերոհիշյալ օրինակներում այդ հարաբերյալի՝ գործածությամբ ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը նախապես հրավիրվում է այն փաստի կարևորության վրա, որ տրրվելու է ստորադաս նախադասությամբ (հմմտ. նաև այդ ցուցականի գործածությունը հետևյալ օրինակում՝ «Այդ ես գիտեմ, որ այնտեղից մարդիկ չեն վերադառնում... (ԲՍ, 49)։ Կարծես այդ հարաբերյալը նման դեպքերում սահմանափակող նշանակություն է ստանում՝ «Միայն» նշանակությամբ (Ես միայն ա՛յն եմ ասում..., ես միայն ա՛յն տեսա...)։

Հետաքրքրական է նշել, որ կամական բայերի գործածության դեպքում այն հարաբերյալի փոխարինումը այդ, հաղվադեպ նաև այս ցուցական դերանուններով հիմնովին փոխում է բարդ ստորադասական նախադասությունների կապակցվող մասերի իմաստային փոխհարաբերությունը։ Այս վերջիններս, զուրկ լինելով այն վերացական ու անորոշ նշանակությունից, որ հատուկ է այն դերանվանը և ակնարկելով որևէ կոնկրետ, նախապես հիշատակված ցանկություն կամ պահանջ, հանդես են գալիս սեռի խնդրի բուն նշանակությամբ, որի պատճառով երկրորդական նախադասությունը ձեռք է բերում նպատակի նշանակություն. օրինակ՝

¹ Խրախուսելի չէ այն-ի փոխարեն օգտագործել այս ցուցականը ինչպես՝ Ես միայն այս եմ ասում, որ... կյանքն ինքնըստինքյան հուսահատեցուցիչ է (ՆԴ, 47)։

Ես պահանջում եմ այն, որ այլևս չբացակայես դասերից
(ուղիղ խնդիր):

Ես պահանջում եմ այդ, որ (=որպեսզի) այլևս չբացա-
կայես դասերից (նպատակ):

կամ՝

Ես այն եմ պահանջում, որ այլևս չբացակայես դասերից:

Ես այդ պահանջում եմ, որ (=որպեսզի) այլևս չբացա-
կայես դասերից:

Անուղղակի հարցում պարունակող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունները գլխավորի հոգեկան գործունեություն արտահայտող ներգործական սեռի բայերի հետ կապվում են բացառապես քե՛ն շաղկապով (այդպես է նաև գրաբարում): Շատ լեզուներ, ինչպես օրինակ ռուսերենն ու ֆրանսերենը, հարցական դերանուններ ունեցող նման նախադասությունների կապակցման համար այլ շաղկապների օգնությամբ չեն դիմում¹, որի պատճառով շաղկապման ֆունկցիան անցնում է հարցական-հարաբերական դերանուններին. օրինակ՝

Никто не знает, где он.

Personne ne sait où il est.

Ոչ ոք չգիտե, (թե) որտեղ է նա:

Բերենք օրինակներ.

Դարձյալ մի բան ասած լինելու համար, ուզեց հարցնել, քե՛ն ով է այդ երիտասարդը, բայց վախեցավ... (ՆԴ, 63): Ես մտածում եմ, քե՛ն ինչո՞ւ նա գյուղում չի երևում (ԱԲՆ, 145): Ես բացատրեցի քեզ, քե՛ն ինչ հանգամանքներ ստիպեցին ինձ վարվել այդպես... (ՄԳՄ, 102): Ինքն էլ չէր իմանում, քե՛ն ինչ է մտածում (ՆԴ, 21): Հիմի ժամանակը լրացել է, էս գիշեր

¹ Ռուսերենում և ֆրանսերենում այդ հարցական դերանունների բացակայության դեպքում հարցական երանգավորում ունեցող երկրորդականները կապակցվում են *или* և *si* շաղկապներով, որոնց համարժեքը հայերենում նորից նույն թե՛ն է: Համեմատիր՝

Ես հարցնում եմ, քե՛ն գնո՞ւմ է նա վաղը = Я спрашиваю, уезжает ли он завтра = Je demande s'il part demain.

պիտի գա, մենք էլ չըգիտենք, քե ինչ պատասխան տանք (ՀԹԵԺ, 3, 160): Էսպես որ գնա չեմ իմանա, քե ես Աթո՞ն եմ, թե էն աղբանոցում հաշոդը... (ԱԲԵ, 229): Խոսք տվեք որդուս, ես ուզում եմ լսել, քե ինչ կասի նա իմ մասին (ՍԳ, 1956, № 6, 64): Այն սենյակի փակ դռան ետևում... մայրս լսում էր... քե ինչպես է հայրս համառորեն խնդրում ազատել իրեն պաշտոնից (ԳԹ, 1960, հոկտ. 21, էջ 3): Ես տեսա, քե ինչպես նա ցատկեց ցանկապատի վրայով:

Երբ գլխավոր նախադասությանը ստորադասվում են մեկից ավելի անուղղակի հարցումներ, այդ դեպքում քե շաղկապի կրկնությունը կապակցվող բոլոր մասերից առաջ պարտադիր չէ.

Պատմում է, քե ի՛նչպես սատանան օձի կերպարանքով դրախտում մոտեցավ Եվային, խաբեց նրան և համոզեց, որ ուտե արգելված պտուղը. ի՛նչպես Կայենը սպանեց իր Աբել եղբորը, ի՛նչպես Աբրահամը աստծո պահանջի համաձայն ուզում էր զոհ բերել իր սիրելի որդուն՝ Իսահակին, ի՛նչպես փարավոնի աղջիկը ջրից ազատեց և որդեգրեց մանուկ Մովսեսին և այլն (ՈՄԲ, 205): Ժողովրդական խոսակցական լեզվում տարածված են նաև նման հարցումների անշաղկապ կապակցությունը. օրինակներ՝

—Այո՛, գեկուցիր: Եվ ահա վերցրու հեռագիրը, հանձնիր, տես՝ (թե) ի՛նչ կասի (ՏԱԿ, 1, 8): Մարդկային քաղցր ձայնը փռված էր ամենուր, բարևում էին, հարցնում՝ (թե) ով ինչպես է ապրում... (ԽՄՄՀ, 202): Զգիտեի (թե) ինչն է կուրացրել նրան (ՀԹԵԺ, 1, 35): Շվարած շիրակեցին չգիտեր (թե) ինչ պատասխան տա (ՀԹԵԺ, 3, 13): Զգիտեմ, (թե) ե՞րբ պետք է թողնես քո այդ սովորությունը... (ՆԳ, 44):

Նկատելի է, որ այս կարգի երկրորդական նախադասությունները հարցական տարբեր երանգավորումներ ունեն. որքան ուժեղ է հարցական ինտոնացիան, այնքան թույլ է դրսևվորվում ստորադասական կապակցությունը և որքան թույլ է հարցական ինտոնացիան, այնքան սերտ է գլխավորի և երկրորդականի կապը:

Առաջադաս գործածությամբ անուղղակի հարցում պա-

բունակող նախադասութիւնների բովանդակութիւնը շեշտովում է, ըստ որում քե շաղկապը կարող է և չգործածվել. օրինակներ՝

Թե որտե՞ղ եք դուք՝ Մանգասար Պետրոսյան և Աշոտ Միքայելյան, չգիտեմ (Ավ. 1960, ապր. 2, 4): Թե որքան ստույգ են դրանք— դժվար է պնդել, բայց այդ բոլորն ինձ թվում են խորհրդավոր ու սարսափելի (ՍՁ, 368): Իսկ քե ինչ իմաստ ունեւ Սահակյանի «հըմ»-ը, կտեսնենք հետո (Եր. 1958, դեկտ. 28, 2): (Թե) ինչ էր որոնում նրանց մեջ,— ինքն էլ չգիտեւ (ԲՍ, 420):

Բ) Բացատրական ուր, քե շաղկապներով են կապակցվում նաև այն ստորադաս նախադասութիւնները, որոնք լրացնում են գերադաս նախադասութիւն հոգեկան գործունեութիւն արտահայտող ոչ-նկարգական սեռի բայերին կամ բայական արտահայտութիւններին: Այս դեպքում ևս ստորադաս մասի նշանակութիւնն այն է, որ նա լրացնում է աշխ. թերին, որ կա գլխաւոր նախադասութիւն մեջ, Երեւե՛կ՝ պարզվեց... (ի՛նչ), անհրաժեշտ է... (ի՛նչ), նա վախենում է... (ինչի՞ց), համոզված եմ... (ինչո՞ւմ) նախադասութիւնները անիմաստ և թերի են առանց լրացնող բացատրական նախադասութիւնների: Այժմ խմբավորենք այս կարգի բարդ ստորադասական նախադասութիւնները.

ա) Բացատրական մասը լրացնում է գլխավորի մտային և հոգեկան գործունեութիւն արտահայտող որոշ կարգի չեզոք սեռի բայերի (կասկածել, հավատալ, համոզվել, համաձայնվել, տարակուսել և այլն): Երեւե՛կներ՝

Ես տարակույս չունեմ, ուր նա մեղ հետ լաւ հարաբերութիւններ կսկսեւ (Բաֆ., 413): Ես համոզված եմ, ուր այդ թեւակապների մեջ ամփոփված են մի որեւիցե մոգի գրվածքները (Բաֆ., 45): Ես կատարելապէս հավատացած եմ, ուր դուք երբեք չեք կեղծում (ՆԴ, 66): Ու չէր հավատում, քե այդ ուսումնասիրութիւնների հեղինակը կյանքում կարող է անլուրջ ու շտաժված խոսքեր ասել... (ՀՔ, 10):

Անուղղակի հարցումների շաղկապման օրինակներ՝

Եվ Միքայելը չէր էլ հետաքրքրվում, քե ինչ թղթեր են

(Շիրվ., 166): Երբ կառքը կանգ առավ Մարությանների տան առաջ, Շահյանն ինքն էլ զարմացավ, քե ինչպիսի համարձակությամբ ցած թռավ... (ՆԴ, 48):*

բ) Բացատրական մասը լրացնում է գլխավորի չեզոք սեռի բայերի և բայական արտահայտությունների, որոնք ցույց են տալիս խոսողի ներքին հոգեվիճակն ու ապրումները: Զգացական նման բայերի հետ կապվելիս բացատրական մասը ձեռք է բերում պատճառի կամ հիմունքի լրացուցիչ երանգօրինակներ՝

Ես, օրինակ, ձանձրանում եմ, որ մարդ չկա մոտս, որ խոսեմ (ՆԴ, 63): Նա լալիս էր, որ իր որդու զավակները խորթ են իր մայրենի եկեղեցուց (Շիրվ., 290): Մենք հպարտանում ենք, որ նրա պես մի եղբայր ունինք (ՆԴ, 99): Նա գոհ էր, որ անգամ խմած վիճակում չենթարկվեց այդ կնոջ կոչուն հրապուրանքին... (ՆՁԶ, 403): Անտոնինա Իվանովնան շատ ուրախ էր, որ Շուշանիկը հանձն առավ յուր օգնականը լինելու (Շիրվ., 328): — Հպարտ է իմ հոգին անվերջ, Որ հարազատ հոգում այս պերճ... Մի նոր կյանք է աճում (ՀՍ, 45):

Թե շաղկապը տարածված չէ պատճառի նման երանգ արտահայտող բացատրական նախադասությունների կապակցման դերով:

գ) Բացատրական նախադասությունները օգտագործվում են նաև խոսողի զգացական ռեակցիան արտահայտող որոշ կարգի բայերի կամ բայական արտահայտությունների հետ: Այս դեպքում ևս բացատրական նախադասությունները ձեռք են բերում պատճառի կամ հիմունքի լրացուցիչ երանգ: Թե շաղկապը գործածական չէ այս կառուցվածքի բարդ ստորադասական նախադասություններում. օրինակներ՝ Ներեցեք, որ այս կես գիշերին անհանգստացնում եմ ձեզ,—ասաց օր. Սահակյանը (ՆԴ, 177): ...Շնորհակալություն, որ մեզ բարի ծառայություն մատուցիք (ՆԴ, 33): Երանի ձեզ, որ ոչինչ չգիտեք (ՀԹԵԾ, 1, 42): Ամոթ քեզ, որ այդպես ես մտածում, Կոլյա,—պատասխանում է ինձ ու էլի ոչինչ չի ասում (ՀՔ, 442): Ափսոս, որ մինչև հիմա չեմ ճանաչել քեզ... (ՍՈՎՄ, 172):

դ) Բացատրական նախադասությունները կապվում են

նաև ասացական, իմացական և այդ կարգի որոշ բայերի կրա-
վորական ձևերի հետ (կրավորաձև միադիմի). օրինակներ՝

Ժողովում պարզվեց, որ դեռևս թերություններ կան նաև
աշխատողների քաղաքական-դաստիարակչական աշխա-
տանքներում (Եր., 1960, հոկտ. 23, 3): Ժողովում նշվեց, որ...
Հայկ. ՍՍՌ Ժողտնտխորհը և նրա տեխնիկական վարչությունը
պատշաճ օգնություն և ղեկավարություն ցույց չեն տալիս
ինստիտուտին (Եր., նույն տեղում): Այս փաստաթղթում
պնդվում է, թե դիտորդների խմբի եզրակացությունները իբր
«անհամոզիչ» են (ՍՀ, 1958, հուլ. 11, 4):

Թե՛ շաղկապը այս տիպի բարդ ստորադասական նախա-
դասություններում կարող է կիրառվել նաև անուղղակի հար-
ցում արտահայտելու համար:

ե) Հրաման, իղձ, ցանկություն արտահայտող միադիմի
բայերի հետ օգտագործվում է բացառապես որ շաղկապը,
խսկ ստորադաս մասի ստորոգյալը արտահայտվում է ըղձա-
կան եղանակով. օրինակներ՝

Անհրաժեշտ է, որ ծնողները կապ պահպանեն դպրոցի
հետ: Հարկավոր է, որ բոլորն զբաղվեն քաղաքի մաքրության
գործով: Ցանկալի է, որ բարձրագույն ուսումնական հաստա-
տություններն ընդգրկվեն աշխատանքի փորձ ունեցող երի-
տասարդները:

զ) Կայն տարածում ունեն նաև այն բացատրական նա-
խադասությունները, որոնք կապվում են չեղոք սեռի բայերի
կամ բայական արտահայտությունների հետ, որոնք օգտա-
գործվում են բացառապես եզակի հրորոգ դեմքով:

Կալ է, որ եկար (ՆԴ, 146): Բանից գուրս է գալիս, որ
դրանք թուղցիկներ են եղել (ՍՀ, 479): Բուրդին հայտնի է,
որ Կամոյի շրջանը աչքի է ընկնում գյուղատնտեսական
մթերքների արտագրությամբ... (Ավ., 1960, հոկտ. 27, 3):
Երևում է, որ դու ինձանից ավելի ես սիրում եղբորս (ՆԴ, 98):
Բայց ոչինչ չշինած՝ վերադառնալ, այդ միևնույնը կլինեն, թե՛
զինվորը փախչում է պատերազմի դաշտից՝ մի զնդակ անգամ
չարձակեց (ՆԴ, 192): Սխալ է, թե մեզանում աշխատանքը
կատարվել է գլխավորապես ինտելիգենտ բանվորների մեջ,

իսկ մասսաները գրեթե բացառապես տնտեսական պայքարին մղել (լՆ, 5, 667):

Նկատելի է, որ այս կառուցվածքի բարդ նախադասություններում բացատրական մասը հաճախ զորությամբ կապված է այնպիսի բառերի հետ, որոնք զեղչված կամ բացակա են գլխավոր մասում (օրինակ՝ սխալ է (այն կարծիքը), թե... հոգ չէ (այն...), թե... և այլն):

2) Կառուցվածքային տարրեր տիպ են ներկայացնում, որ, թե շաղկապներով կապակցվող այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնց կազմում գլխավոր նախադասության լրացման ենթակա անդամը ոչ թե բայ է, այլ գոյական (մեծ մասամբ ասացական նշանակությամբ բայանուն): Պետք է նշել, որ գոյականին լրացնող բացատրական երկրորդական նախադասությունները ժամանակակից հայերենում տարածված չեն: Այդ բացատրվում է նրանով, որ գրականների հետ կապը մեծ մասամբ իրականացվում է այն, այնպիսի ցուցական դերանունների միջնորդությամբ:

Պետք է նշել, որ թե շաղկապը բարդ ստորադասական նախադասությունների այս կառուցվածքում ավելի է տարածված, քան ուր: Այս վերջինիս գործածությունը հաճախ կապվում է այնպիսի գոյականների հետ, որոնց սերտ կապը իրենց խնդրառու բայերի հետ հիշեցնում է հարադրական կազմություն ունեցող բայերին (երազ տեսնել, վկայություն տալ և այլն): Օրինակներ՝

Երազ է տեսնում Թաթուլ իշխանը, որ վիշապ օձը եկել է ահա... (ԳՄԲ, 14) Ձեր հայրենակիցները ետ են առել իրենց երդումը և նոր վկայություն են տվել, որ մենք Արարատի գագաթը չենք բարձրացել (ԱԲՆ, 565): Օր չէր անցնում, որ Սարգիսը շանիժեր աղջկան (Շիրվ., 326): Գրիշա քեռու պատմությունները սովորաբար վերջանում էին միևնույն ասացվածքով՝ որ այդ բոլորը եղել է վաղուց և հավանորեն ճիշտ չէ, որ դա «եպոս» է (հենց այդպես էլ արտասանում էր այդ բառը (Ավ., 1958, օգ. 5, 3): Թագուհին պատմեց օրիորդին գործի իսկությունը, թե նա գերի է այդ բերդում (Բաֆ., 448): Ու մի օր էլ լուր տարածվեց, թե Այգեշատում էլ կան երիտա-

սարգներ, որոնք ուզում են նոր ձևով ապրել ու աշխատել, կոմունիստաբար (Ավ., 1960, նոյ. 15, 3):

Լրացվող գոյականը կարող է ստորոգելիական վերադիր լինել, ինչպես՝ «Դա նշան էր, թե գնացքը դուրս է եկել մերձակա կայարանից» (ՆԴ, 140):

Հատկապես տարածված են թե-ով սկսվող բացատրական նախադասությունների միջադաս կիրառությունները՝ լրացվող գոյականից անմիջապես հետո, ինչպես՝ «Որոտացին բոլորը, և Ժորեսի պատնառաբանությունը, թե իրենից ավելի հարմար թեկնածուներ կան, կուլ գնաց աղմուկին» (Ավ., 1960, նոյ. 15, 3):

3) Կառուցվածքով նախորդներից տարբեր են այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնց կազմում բացատրական շաղկապով կապակցվող ստորադաս մասը կապվում է գլխավոր նախադասության մեջ ձևականորեն այս կամ այն պաշտոնը կատարող ցուցական դերանունների հետ: Նկատելի է, որ այս կառուցվածքի բարդ ստորադասական նախադասություններում խիստ սերտ է կապակցվող մասերի շարահյուսական և իմաստային փոխկախվածությունը: Ցուցական դերանունների բովանդակությունը բացահայտող բացատրական նախադասությունները կապակցվում են հիմնականում ուր շաղկապով: Թե-ի գործածությունը այս տիպի բարդ նախադասություններում հիմնականում սահմանափակվում է անուղղակի հարցումների շաղկապման դերով:

Կարելի է տարբերել կառուցվածքային նշված հատկանիշներն ունեցող բարդ ստորադասական նախադասությունների հետևյալ ենթատեսակները.

ա) Ուր շաղկապով կապակցվող բացատրական մասը լրացնում է խնդրի¹, ենթակայի և ստորոգելիական վերադիրի պաշտոնն ունեցող հարաբերյալների, ուստի և ստորադաս մասը ստանում է առարկայական նշանակություն:

¹ Սյն ցուցական դերանվան և նրան լրացնող ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների փոխհարաբերության մասին խոսել ենք 194 էջում:

— Դո՛ւ այդ իմ պապերի սխա՞լն ես համարում, Մես-
րոպ, որ նրանք բարբարոս Հայաստանը հեթանոսական տըղ-
մից հանեցին և քրիստոնեական լույսի մեջ դրեցին (Բաֆ.,
82): Բայց այս էլ ճիշտ է, որ դու կախարդ ես: Կախարդ ոո
չլինեիր, քեզ տեսնելու կարոտն այսպես չէր սպանիլ ինձ
(ՆԴ, 353): Այդ առաջին անգամն էր, որ նա մեն-մենակ նըս-
տած էր. մի օրիորդի հետ միմիայն մի փոքրիկ երեխայի ներ-
կայությամբ (ՆԴ, 26): Ավագյանին . դուր էր գալիս այն, որ
նորեկ նախադահն ունի կին, երեք մանր երեխաներ և աշխա-
տունակությունից զրկված աներ ու զոքանչ (ՆՁԶ, 22): Կու-
լակների ատամները հանած են: Մենակ այն կա, որ նրանք
վերջին դիրքերում դեռ նստած են ու խուլ դիմադրում են
(ԴԴ, 256): Բայց ավելի զարմանալին այն էր, որ այդ փորձն
ամենևին խրատ չեղավ Շահյանի համար (ՆԴ, 59): Այժմ
խնդիրն այն է, որ արդյունավետ օգտագործվի ջուրը (ՍԶ,
1960, նոյ. 26, 1): Եվ որպես մութ պատմություն, մի անգամ
նրա ականջովն էր ընկել այն, որ իբր թե իր հայրը Խոջա Հի-
բանի մեծ որդուն, Մկրտումին կապել է ծառից... որ նրան
կենդանի վառի (ԱԲԵ, 501):

Երբեմն բացատրական նշանակություն ունեցող երկրոր-
դական նախադասությունը դրվում է անմիջապես հարաբե-
րյալից հետո, որով կարծես ստացվում է յուրահատուկ մի ոճ՝
սաստկական նշանակությամբ. օրինակ՝

Այն, որ Սողոն առարկեց Ալեքսանի մասին, շատ շատե-
րին պղտորեց (ՆՁ, 185): — Շուտով երեք տարին կլրանա,—
մտքում ասաց Լեոնը: Եվ այն, որ շուտով երեք տարին կլրա-
նա, այն, որ Լուսիկի բաց ճակատին մի խոպոպ էր կախվել,
որ նրան խանգարում էր գրել և այն անկրկնելի դարունը,—
այդ ամենը նրա սիրտը վրդովեցին անհանգիստ հույզերով
(ԱԲԵ, 173—174):

Հաճախ ցուցական դերանվամբ արտահայտված հարա-
բերյալը բացակայում է. օրինակ՝ «Խեղճ մարդու միակ իղձն
էր (այն), որ թողնես այնտեղ նրանց և գաս մտնես ծնողներիդ
օջախը (Շիրվ., 18)»:

Որոշ կարգի բայերի հետ կապվելիս ցուցական դերանունները բայիմաստի թեւադրութեամբ կարող են հանդես գալ նաև հոլովական թեք ձևերով. օրինակներ՝

Այդ նրանից է, որ ճշնավորի կյանք ես վարում,—նկատեց Բաղենյանը... (ՆԴ, 205): Վլադիմիր Իլյիչ Լենինը գտել է, որ մենք իրավունք ունենք հպարտանալու և հպարտանում ենք նրանով, որ մեզ բախտ վիճակվեց սկսելու Սովետական պետութեան կառուցումը (ՍՀ, 1960, նոյ. 6, 2):—Ինչով է լավագույն,—զրդովեց Սաբրարյանը:—Նրանով, որ ռալկոմի հրահանգը չի ուղում կատարել և տապալում է դարնանացանի պլանը (ՆՁՀ, 293): Շահյանն արդարացաւ նրանով, որ ասաց, թե սաստիկ զբաղված էր... (ՆԴ, 4):

Թե շաղկապը տարածված չէ որ շաղկապին հատուկ այս կիրառութեամբ: Բացառութիւն են կազմում այն դեպքերը, երբ նրանով կապակցվում են անուղղակի հարցում արտահայտող նախադասութիւններ, ինչպես՝ «Այդ պայքարի հաջողութիւնը կախված է նրանից, թե որքանով այդ լուրջ գործին մասնակցութիւն են ունենում հասարակութեան անդամները (Եր., 1959, փետր. 28, 3):

բ) Որ և թե շաղկապներով կապակցվող բացատրական մասը այն, այնպիսի հարաբերյալների միջնորդութեամբ կապվում է գոյականների (մեծ մասամբ բայանունների) հետ՝ նշելով նրանց այս կամ այն հատկանիշը: Այսպիսով, այս ենթատեսակի բարդ ստորադասական նախադասութիւններում արտահայտվում են որակային կամ հատկանիշային հարաբերութիւններ: Նկատելի է, որ այս կիրառութեամբ թե շաղկապը ավելի է տարածված, քան ուր-ը. օրինակներ՝

Սարգսյանից թաքուն, նա միշտ պարծանքով էր հիշատակում այն հանգամանքը, որ ինքն ավարտել է Երևանի թեմական դպրոցը (ՆՁՀ, 355): Շահյանը վերադարձաւ տուն այն մտադրութեամբ, որ Երևանի դարձյալ գնա ընկերոջ մոտ (ՆԴ, 230): Նա հիշեց այն օրը, որ քեզ հանդիպեց: Եվ միայն մարքսիզմի ամենաբիրտ անըմբռնողութիւնը (կամ նրա «ըմբռնումը» «ստրուվիզմի» ոգով) կարող էր ծնել այն

կարծիքը, քե բանվորական մասսայական տարերային շարժման ծագումն աղատում է մեզ... կադմակերպություն ստեղծելու պարտականությունից¹, (ԼԵ, 5, 632): Մյուս կողմից, ինչպես ասացի, ինձ ուժ է տալիս այն գիտակցությունը, քե դժվարություններից փախչելն առհասարակ ամոթալի բան է... (ՆԴ, 194):

Անուղղակի հարցումների կապակցման օրինակներ.

Բայց նրան տանջում է այն միտքը, քե արդյոք պատմե՞թագուհուն այդ ամենը, ինչ որ ինքը գիտե... (Մուր., 35): Նրան մտահոգություն էր պատճառում այն հանգամանքը, քե ինչպես պիտի անցկացնեի մի քանի ժամ Եվայի և Աշխենի մոտ... (ՆԴ, 61): Խիստ հաճախ սովորություն ունեի խոսել այն ճակատամարտի մասին, քե ինչպես պարսիկները կտրեցին Եփրատի նավակամուրջը, արգելեցին Հուլիանոսի անցքը... (Րաֆ., 60):

Երբ հարաբերյալի դերով հանդես է գալիս այնպիսի ցուցական դերանունը, ապա բացատրական երկրորդական նախադասությունը սկսվում է բացառապես ու շաղկապով և ձեռք է բերում հետևանքի երանգ, որը բխում է կապակցվող մասերի կոնկրետ բովանդակությունից. օրինակ՝

Եվ այնպիսի տարփանքներ նրանք կտան հիմա քեզ, Ու կամոքվի քո հոգին կարոտանքից սիրական (ԵԶ, 150): Նա այնպիսի ոգևորությամբ էր խոսում, ու մենք բոլորս զարմացել էինք:

Արդի հայերենում հազվադեպ են այն դեպքերը, երբ այնպիսի հարաբերյալը բացակայում է. օրինակ՝ «Ոտը դուրս դնելիս մի (այնպիսի) խոր հոգոց քաշեց, ու պնդեցիցը ծուխը դուրս եկավ (Մ. Աբեղեան, Աշխարհաբարի շարահիւսութիւն, Վղրշատ, 1912, էջ 315):

¹ Նկատելի է, որ այս ենթատեսակի բարդ ստորադասական նախադասություններում օգտագործվող այն ցուցական դերանվան համապատասխան համարժեքը գրեթե միշտ բացակայում է ռուսերենի համապատասխան կառուցվածքներում: Այդպես է նաև ֆրանսերենում:

Այս կառուցվածքը հաստուկ է պարզ ժողովրդական խոսքին:

գ) Բացատրական ու շաղկապով կապակցվող բացատրական մասը այնպես, այնքան, այնչափ և այլ հարաբերյալների միջնորդությամբ կապվում է գլխավոր նախադասության բայի հետ՝ նկարագրելով նրա գործողությունը բնորոշող այնպիսի մի հատկանիշ, որը միաժամանակ հանդիսանում է այդ գործողության կատարման ձևից, աստիճանից կամ չափ ու քանակից բխող հետևանք. օրինակներ՝

Նա այնպես սեղմեց Անուշի հաստ թևերը, որ խեղճ կինը ցավից ճչաց (Շիրվ., 151): Դրկում ես սիրով անհույս Այնպես միշտ ջերմ ու համառ, Ու սիրտըս համր ու անհույզ Բացվում է սիրո համար (ՎՏ, 225): Նվազախումբն այնքան վատն էր, որ դիրիժորն ի վերջո թափ տվեց ձեռքը (Եր., 1960, դեկ. 29, 3): Ուրախության ալիքը բարձրացավ այնքան, որ սրբեց, ես վանեց քունը (Բաֆ., 41): Այն աստիճան ազդու էր նրա ձայնը, որ ամենքն էլ ակամա նայեցին նրան (ՆԴ, 190): Նա այն աստիճան քնքուշ և նրբակազմ էր, որ դրսից կարելի էր կողքերը համարել (Բաֆ., 29—30): Երեկոն մութն էր այնչափ, որ սև բուրգերը չէին երևում:

Հենց բառի օգտագործմամբ խոսքին բարբառային երանգ է տրվում, ինչպես՝ «—Դե, գնանք, տղե՛րք,—աշխուժացավ բրիզավարը: Հենց աշխատենք, որ ընկեր նախագահը մեզանից գոհ մնա (ՆՁՀ, 209)»:

Բացատրական մասը նպատակի երանգ է ձեռք բերում, երբ նրանում ստորոգյալը արտահայտվում է ըզձական եղանակով: Այդ կառուցվածքի նախադասություններում գործողության կատարումից առաջանալիք հետևանքը գրողի կամ խոսողի կողմից ներկայացվում է որպես ցանկալի, սպասելի կամ հնարավոր: Դա զարմանալի չէ, քանի որ հետևանքը որոշ դեպքերում կարելի է դիտել որպես իրականացված նպատակ. օրինակներ՝

Բայց դրա համար ես այնպես կերգեմ, Որ այդ ձեր սիրտը ցավից պատառի (ՀԹԵԺ, 1, 61): Հանդարտ, կամաց իջի՛ր

այնպես, Որ ծաղկունքը շարթնանան (ԳՍԲ, 59): Նա պարտապէս այնքան, որ ետ շմնա առաջագեմ աշակերտներից:

Հետեանքի երանգ ունեցող այս կառուցվածքի բարդ նախադասութիւնների սերտ կապը բուն հետեանքի որոշ նախադասութիւնների հետ երևում է այնպես հարաբերյալի և որ հարաբերականի ձուլումից (այնպես որ): Միջակա օղակ պետք է համարել հետեյալ կիրառութիւնները.

Մտքերը խուժում էին նրա գլուխը, մտքերը՝ պարզ, որոշակի, այնպես՝ որ ինքը կարող էր բարձրաձայն կարգաւ առանց թղթի վրա գրի առնելու (ՀՔ, 103): Արարատ Սուրենը որոշեց նրանից արագ իջնել մինչև քաղաքային բուլվարի ծայրը և հետո հանգիստ ու խաղաղ քայլերով գնալ նրան բնդառաջ, այնպես, որ՝ թվա, թե պատահական հանդիպում էր (ՀՔ, 48):

Թե շաղկապի գործածութիւնը այս հարաբերյալների հետ տարածված չէ և հիմնականում սահմանափակվում է այն դեպքերով, երբ գլխավոր նախադասութեան մեջ ստորոգյալը արտահայտված է լինում թվալ, կարծել և նման բայերով. բերենք մի օրինակ՝ «Կիսամութի պատճառով այնպես է թվում, քն սենյակը լիքն է մարդկանցով... (ՍԶ, 408)»:

Ցուցական դերանունների միջնորդութեամբ գլխավոր նախադասութեան բայական կամ անվանական անդամներին լրացնող բացատրական նախադասութիւնների այս համառոտ քննութիւնը ավարտելուց առաջ, անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ նաև այն դեպքերին, երբ որպէս հարաբերյալ հանդես են գալիս բնդհանուր և անորոշ նշանակութիւն ունեցող բառակապակցութիւններ: (Այն պատճառով, այն նպատակով, այն պայմանով, այն բանի համար և այլն): Թեպետ և այդ բառակապակցութիւններում դարձյալ առկա է ցուցական որեւէ դերանուն (մեծ մասամբ այն), սակայն նրա և նրա հետ կապված բառի միջև այնպիսի կապ է հաստատվում, որ նրանք կազմում են իմաստային մեկ սերտ ամբողջութիւն ներկայացնող բառակապակցութիւն: Մեծ մասամբ դրանք կապական բառի և խնդրի շարահյուսական կապակ-

ցություններ են¹։ Նկատելի է, որ որպես հարաբերյալ հանդես եկող լրացման ենթակա բառակապակցության նշանակությունը փոխանցվում է նրա բովանդակությունը բացահայտող բացատրական մասին։ Այսպես, պատճառի, նպատակի և պայմանի երանգներ ունեն հետևյալ օրինակները.

1) Պատճառի. երկրաշարժ կարող է տեղի ունենալ նախ այն պատճառով, որ երբ ներքևում մի շերտ է իջնում, կեղևի վերևի շերտը փլվում է (Եր., 1960, նոյ. 19, 3)։ Նա սիրեց այդ աղջկան միայն² նրա համար, որ նա նման էր Անահիտին (ԴԴ, 3, 225)։ Ընկեր Արզումանյանը խիստ քննադատության է ենթարկում շրջավերի գործկոմներին այն բանի համար, որ նրանք ինչպես հարկն է չեն զբաղվում անհատական շինարարության ծավալման հարցերով (Երե., 1958, հուլ. 17, 1)։

2) Նպատակի. Նա Նեղոսի ալիքներից հրաշքով աղատեց մանուկ Մովսեսին և պատասխարեց նրան պարավոնի պալատում միայն նրա համար, որ վերջը նաեզիպտացոց գերությունից յուր ժողովուրդը փրկի (Մուր., 237)։

3) Պայմանի. Ես կխոսեմ այն պայմանով, որ ինձ չընդհատես։

Բերված օրինակներում ստորագաս նախադասությունները չեն կորցնում իրենց բացատրական նշանակությունը, թեպետ և նրանք ըստ էության արտահայտում են պատճառի, նպատակի և պայմանի հարաբերություններ։ Եվ պատահական չէ, որ երբեմն, սխալմամբ, բացատրական ու շաղկապը փոխարինում են հիշյալ հարաբերությունն արտահայտող բուն շաղկապով, ինչպես՝ «Նա գուցե այն պատճառով էր շատ հպարտանում սուրճ պատրաստելու իր շնորհքով, որովհետև այդ ամենօրյա սփոփիչ զբաղմունքը նրան թույլ էր տալիս

1 Նկատելի է, որ որպես կապի խնդիր հանդես եկող այն (նաև այս, այդ) ցուցականը չի կորցնում իր ուղիղ ձևը, գուցե թե իր որոշյալի բացակայության պատճառով. համեմատիր նաև՝ «Ու կպատմի նա այն (հարցի) մասին, որ այդ աշխատասեր կինը մեծ սիրով մտել է երիտասարդների օգակը... (Ավ., 1960, նոյ. 15, 3)։

2 Նման եղանակավորող բառերը ավելի են ընդգծում պատճառի նշանակությունը։

գոնե մի քանի ռոպեով կտրվել ատելի հաժասարություններից (ԺՎԲՀՀՄ, 23):

Բացի որ շաղկապից, նման կիրառություններ կարող են ունենալ նաև երբ, եթե, որպեսզի և այլ շաղկապներ, ինչպես՝ ...այն ժամանակ, երբ..., ...այն դեպքում, եթե..., այն պայմանով, եթե...,այն բանի համար, որպեսզի... և այլն (ԺԴԿՍԱ, 43): Այս շաղկապների օգտագործման դեպքում նույնպես առկա է նրանցով սկսվող երկրորդական նախադասությունների սերտ կապը նշված հարաբերյալների հետ, նրանց բացատրական դերը այդ հարաբերյալների նկատմամբ: Սակայն, դրան զուգահեռ, ինչպես վերը տեսանք, կապակցվող մասը ձեռք է բերում նաև հարաբերյալի նշանակութունը, տվյալ դեպքում ժամանակի, պայմանի և նպատակի նշանակությունները: Իմաստային երկու հարաբերությունների համադրումը այս կառուցվածքի բարդ ստորադասական նախադասություններում իրավունք է տալիս մեզ դրանք անվանել ժամանակա-բացատրական, պայմանա-բացատրական, պատճառա-բացատրական, նպատակա-բացատրական և այլն:

Արդի հայերենը դեռ չի հասել զարգացման այն աստիճանին, երբ հարաբերյալի կապակցությունը, կորցնելով իր անկախ դիրքը գլխավոր նախադասության վերջում, ձուլվի որ (կամ էլ երբ, եթե, որպեսզի) շաղկապին՝ կազմելով բաղադրյալ մեկ ձև¹: Նկատված դեպքերը սահմանափակ են և հաճախ արդյունք են թարգմանական գրականության ազդեցության. օրինակներ՝ (այն) պայմանով որ...||նրա համար||նրա համար որ...||այն պատճառով, որ||այն բանի համար, որ||այն դեպքում, երբ||չնայած (այն բանին) որ և այլն: Ստորակետի գործածությունը այդ բաղադրյալ շաղկապների բաղադրիչ մասերի միջև մեծ մասամբ ավանդաբար է պահպան-

¹ Ռուսերենում այս երևույթը լայն տարածում ունի, և այս ճանապարհով առաջացած բաղադրյալ շաղկապները մեծ կշիռ ունեն այդ լեզվի շաղկապների ընդհանուր համակարգում, օրինակ՝ не смотря на то что, затем чтобы, вследствие того что, в силу того что, тогда как, в то время как, так как և այլն:

վում: Այնպես որ շաղկապը, որը կազմության այլ եղանակով է առաջացել, լեզվում արդեն կայունացել է որպես միասնական շաղկապական մեկ հարադրություն, որի պատճառով չի տրոհվում բաղադրիչ մասերի:

Բացատրական ճաղկապների մասնակի այլ գործածությունների և ոճական-արտահայտչական բնույթի մի քանի կիրառությունների մասին

Հարուստ են ու բազմազան ուր, թե շաղկապների ոճական կիրառությունները: Այս տեսակետից քիչ դեր չեն խաղացել հայերենի բարբառներն ու ժողովրդական կենդանի լեզուն: Այս շաղկապների ոճական կիրառությունները ծավալման լայն հնարավորություններ են ստանում հատկապես գեղարվեստական գրականության լեզվում: Հնարավորություն չունենալով այս հարցի մանրամասն քննությամբ զբաղվելու, որը, ի դեպ, հատուկ ուսումնասիրության նյութ է, կաշխատենք նկարագրել այս շաղկապների ոճական կիրառություններից մի քանիսը միայն:

Ա) Յուրահատուկ սաստկական կիրառություն է ձեռք բերում ու շաղկապը, երբ իրենով կապակցվող երկրորդական նախադասությունը, կապվելով գլխավոր նախադասության որոշ անդամների հետ (մեծ մասամբ պարագայական նշանակություն ունեցող), շեշտում, ընդգծում է այդ անդամների բովանդակությունը: Օրինակներ՝

Այս մարգագետնում էր ահա, որ Գրիգորի Դավիդովը նկարվեց ջահել աղջիկների հետ, որսի հրացանը ձեռքին (ՀՔ, 367): Կարծես երեկ էր, որ բարձրանում էր նա այնտեղ աղավանիներին կանչելու... (ՀՔ, 413): Հոր ներկայությամբ էր, որ նա նախատեսեց եղբորը: Ծոպության պատճառով է, որ նա մնաց նույն դասարանում: Բենիամինի ինը որդիներից ամեն մեկը սիրում էր իր մասնագիտությունը և միայն այն պրոպագանդելու վրա է, որ եղբայրների միջև տարաձայնություններ են ծնվում (Ավ., 1960, հոկտ. 29, 1):

Թեք ձևերի հետ կապվող և սաստկական նշանակություն

ունեցող երկրորդական նախադասությունների նման գործածությունները Ա. Այտընյանը ֆրանսիական օտար ռճ է համարում (Ռուսիոյ սահմաններէն է որ այդ փախստականները հոս հասան)¹։

Ինչպես նկատելի է, այս բարդ ստորադասական նախադասությունները պարզի են վերածվում, երբ ղեղչում ենք էական բայն ու նրան հաջորդող ու շաղկապը (Այս մարգագետնում ահա Գրիգորի Դավիդովը նկարվեց ջահել աղջիկներ՝ հետ...)։

Սաստկական նույնպիսի նշանակություն է դրսևորվում այն դեպքերում, երբ ստորադաս մասը կապվում է առարկայական հասկացություն արտահայտող այնպիսի անդամների հետ, որոնք պարզեցման դեպքում վերստանում են իրենց շարահյուսական նախկին պաշտոնը, այսինքն պարզ նախադասության կազմում հանդես են գալիս որպես ենթակա կամ խնդիր։ Նկատելի է սակայն, որ այս դեպքում որպես կապակցության միջոց օգտագործվում է ու դերանունը², թեպետ և լեզվի արդի շրջանում այն արդեն գիտակցվում է որպես շաղկապ. օրինակներ՝

Այնուհետև ես էլ ոչինչ չեմ տեսնում առջևս. քարեր են, ու ես, Աշոտն ու Մելիտեն նետում ենք դեպի փողոց... (ՍԶ. 176)։ Գոգնոցներ էին, ու լցվում ու դատարկվում էին իրար հտեկից (Ավ., 1960, հոկտ. 29, 3)։ Մարդիկ էին, ու դուրս էին գալիս ստադիոնից։

Ինչպես տեսնում ենք, երբ սաստկական կիրառություն ունեցող ու շաղկապը կապվում է հոգնակի թվով արտահայտված գոյականների հետ, ակնարկվում են նաև քանակային հատկանիշներ (շատ քարեր, շատ մեքենաներ և այլն)։

Բ) Պետք է միադիմի բայի հարկադրական նշանակությունը մեղմացնելուն է ծառայում ու շաղկապի հավելադրա-

¹ Ա. Այտընյան, Քնն. քեր., Վիեննա, 1866, 197։

² Այդ բանի լավագույն ապացույցն այն է, որ ստորադաս մասում չի արտահայտվում այն անդամը (խնդիր կամ ենթակա), որը շեղվում է ու դերանվամբ. օրինակ՝ Մեքենաներ էին, որ(ոնք) անընդհատ սլանում էին այդ փողոցով։

կան կիրառությունները՝ հետևյալ օրինակներում (կարծես նույնիսկ ենթադրության, կասկածի աղոտ հրանգ է արտահայտվում նրա օգտագործմամբ)։

Իհարկե, պետք է որ կարիք զգան Բորենիները բորենու սիմֆոնիային (ՆՁ, 123)։ Ուրիշ առիթներով ևս խոսվել է այն մասին, որ այդ հրգեհրն ու երաժշտությունը պետք է որ լինեին ազգային իրենց ոճով (ՍԱ, 1957, № 3, 33)։

Գ) Յուրահատուկ սաստկական կիրառություն ունի որ շաղկապը, երբ նրան հաջորդում է կամ բայը։ Այս գործածությունը հատուկ է մասնավորապես ժողովրդական լեզվին և բարբառներին. օրինակներ՝

— Մեծ վրանում է քնած նա, է՛ն, որ միջից ծուխը կելնի, էն ծուխն էլ հո ծուխ չի որ կա, Գոլորշին է իր բերանի (ՀԹ, 247)։ Հենց ես եմ, որ կամ (ՆԴ, 247)։ Այդ է, որ կա, Լեհնն է... (ՏԱԿ, 1, 25)։

Դ) Ժամանակ և տեղ ցույց տվող որոշ բառերից հետո գործածվելով, որ բառը կարծես ձեռք է բերում «մանավանդ» եղանակավորող բառի նշանակությունը։ Նույն նախադասության մեջ ստորոգյալը սովորաբար ժխտական ձևով է արտահայտվում. օրինակներ՝

Մի կառք անցավ փողոցից զանգուկաների զնգզնգոցով։ Այդ էլ լոեց։ Հիմա որ (հիմա մանավանդ) ոչ մի շշուկ չկա։ Բայց ահա թղկենու տերեւները խշխշացին (ԳՄ, 407)։ Լևոնը ժամանակ շատ է վատնել։ Արդեն վերջացրած կլիներ աշխատանքը։ Ամառները որ (մանավանդ) բան չի անում. «շոգ է»... ասում է։ Անտանելի տոթ է այս տարի Երևանում։ Տանը նըստել չի լինում։ Փողոցում որ (մանավանդ) անտանելի է, ասֆալտը շիկացնում է օդը։

Ե) Հետաքրքրական են որ, քե շաղկապների եղանակավորող մասնիկի նշանակությամբ կիրառությունները կրկնվող բայերի միջև, երբ նրանց գործածությամբ ընդգծվում են գործողության տեսականությունն ու սաստկությունը. օրինակներ՝

Փա՛խի, որ փա՛խի, թե մարդ ես գլուխդ պրծացրու, որ քաջ նազարը ծառերն արմատահան անելով գալիս է... (ՀԹ, 430)։ Սա պրկին է կանգնում թե՛ չէ որ չէ, հենց էս կես գիշե-

րին պետք է գնամ... (ՀԹԵԺ, 1, 402): Գալիս են ու անվերջ գալիս, Ով գալիս է՝ տուր քե տալիս (ՀԹԵԺ, 1, 260):

Գոյականների նույնպիսի կրկնական գործածությամբ շեշտվում է նրանց արտահայտած հատկանիշը. «Թագուհին մի շատ բարի ու ազնիվ կին է լինում և էնքան չքնաղ, որ հրեղեն-փարեղեն մի արարած է թվում Դիվանային: Կախարդ ու կախարդ, հենց մի տեսնելով կախարդում է նրան (ՀԹԵԺ, 3, 228):

Որ, քե շաղկապների հիշյալ կիրառությունները, որոնք մեծ մասամբ տարածված են պարզ ժողովրդական խոսքում, հիշեցնում են ու, հա շաղկապների նույնպիսի սաստկական գործածությունները (օրինակ՝ Փախի հա փախի, փախի ու փախի և այլն):

2) Եղանակավորող բառի յուրահատուկ ոճական կիրառություն ունի ու բառը հարցական, մասամբ նաև բացականչական նախադասությունների վերջում, ստորոգյալից հետո նման դեպքերում հարցով կամ բացականչությամբ արտահայտվող իրողությունը գրողի կամ խոսողի կողմից կարող է ներկայացվել հետևյալ երանգներով.

ա) Զարմանքով, ինչպես՝ «—Սպարտակ» ֆուտբոլային թիմը դարձավ Սովետական Միության չեմպիոն: — Ինչպե՞ս, «Սպարտակ»-ը «Տորպեդո»-ին տարե՞լ է ու: բ) Թեքահավատությամբ. «—Հետո գիլին մեղք կըգա՞ն ու, Սահակ բի՛ճա,— ձեն տվեց մի հովիվ (ՀԹԵԺ, 1, 406)»: գ) Դժգոհությամբ. Շան չարչարանք եմ քաշել, մինչի Արմավիրից ալյուրը բերել եմ... Տա՛լիս են ու (ԱԲԵ, 318): Պառկելու հնարավորություն չկար, ասենք ե՞րբ էր պառկելու հնար լինում ու... (Ավ., 1959, փետր. 10, 4)»: դ) Արհամարհանքով. «—Մարտիկն ո՞վ է ու... ես նրան միշտ էլ տանում եմ,— պարծենկոտությամբ մեջ ընկավ փոքրիկ Ռազմիկը»: ե) Հիացմունքով. «—Ո՞վ է Մյունխհաուզենը, պապի: — Մյունխհաուզենը... նա իր ժամանակին մի որսկան էր ու... (ՀԹԵԺ, 3, 207):—Այնքան հետաքրքիր էր ու, ես այդպիսի կինոնկար վաղուց չէի տեսել»:

Որ բառի ոճական այս կիրառությունները առաջացել են

ներանով կապակցվելիք երկրորդական նախադասությունների բացակայությունից: Այն ընդհանուր տպավորությունը կամ կարծիքը, որ պետք է հաղորդվեր երկրորդական նախադասությամբ, արդեն տրվում է ու բառի հիշյալ կիրառություններով, որոնք զարմացական, հիացական կամ թերահավատության երանգներով ակնարկում են բացատրական մասով տրվելիք հաղորդումը: Այդ պարզ երևում է, երբ վերականգնում ենք բաց թողնված նախադասությունը. օրինակ՝ «Սպարտակ» ֆուտբոլային թիմը դարձավ Սովետական Միության չեմպիոն: — Ինչպե՞ս, «Սպարտակ»-ը «Տորպեդո»-ին տարե՞լ է, որ դարձել է Սովետական Միության չեմպիոն»:

Ու շաղկապի եղանակավորող բառի նշանակությամբ այս կիրառությունները տարածված են գերազանցապես բավոր խոսքում և գեղարվեստական գրականության լեզվում:

է) Երբեմն այնքան սերտ է լինում ու բացատրական շաղկապի կապը ասացական, իմացական կամ այլ կարգի բայերի հետ, որ նա կցվում է այդ բայերին, կարծես որպես վերջաճառ բացատրական մասնիկ, որին արդեն հաջորդում է որպես լրացում հանդես եկող բացատրական մասը: Նման դեպքերում ու շաղկապը կորցնում է կապակցական բառի իր շարահյուսական հատկանիշը և պահպանում է միայն իմաստայինը, այսինքն բացատրական արժեքը՝ հաջորդող նախադասության պատճառով: Ու շաղկապը իր այս կիրառությամբ տարածված է հատկապես ժողովրդական լեզվում ու գեղարվեստական գրականության մեջ. օրինակներ՝ Միակ ժառանգը է Մովսեսը ներհուն Փարավոնների հզոր բանակի, Սակայն գիտե՞ր ու, արյունն է կրում Մեծ Իսրայելի ընտրագույն ազգի (ԱԽ, 181): Էսսեղ էն տխուր բանը ախտի ասեմ ու, — ձայնը իջեցնելով հառաչանքով ասաց Ղազար աղան — ... (ԱԽ, 405): Միտք արի ու՝ թե էս քոթուկը բերի վրես գցի, տակին շունչս կը կտրի (ՀԹ, 360):

Այս օրինակներում ուշագրավ է արտասանական դադարի առկայությունը այդ շաղկապից հետո (և ոչ թե առաջ, ինչպես սովորաբար), որ ակնարկվում է տրոհության նշանների գործածությամբ՝ դարձյալ այդ շաղկապից հետո (և ոչ թե առաջ):

Վերջահար բացատրական մասնիկի նման դերով շատ ավելի է տարածված քե բացատրական շաղկապը, դարձյալ ժողովրդական կենդանի լեզվում, ինչպես՝ «—Գրեւ էի քե, որ (=եթե) վերադառնամ, այսպես միասին պիտի քնենք, այսպես գրկած: Հիշում ես (ՆԴ, 374)»:

Հատկապես շատ են հանդիպում քե, մասամբ նաեւ որ շաղկապների անստորակետ կիրառություններ¹. օրինակներ՝

Եվ թվում է քե ահա կերեա (ԳՍԲ, 36): Ասում են քե մի աղջիկ... (ԳՍԲ, 76): Ես չգիտեի քե ինչ է սերը (ՀՍ, 77): Ասում են քե մայրս օրերով (ՀՍ, 114): Ավագը հարցրեց քե ինչ էինք խոսում... (ՀՔ, 202): Մտածում է քե մեծ կին է... (ՀՔ, 174):

Որ, քե բացատրական շաղկապների այս կիրառությունները տարածված են գերազանցապես զեղարվիստական գրականության լեզվում: Թվում է, թե բարդ նախադասությունն ընդունել է պարզի բնույթ, իսկ որ շաղկապը քերականական այնպիսի մի ձևույթի արժեք, որ մեջ է բերում ամբողջական նախադասություններ՝ կարծես սոսկ որպես նախադասության ծավալուն անդամներ: Կասկած չի կարող լինել, որ բացատրական հարաբերություններ արտահայտող նման կառուցվածքներում են կայունացել նայած քե, կարծես քե, ասես քե, չի՛նի քե և նման բաղադրյալ ձևերը:

Ը) Արդի հայերենում տարածված է որ շաղկապի գործածությունը որպես հարադրական մասնիկ՝ կապակցական դեր կատարող որոշ բառերից հետո: Պետք է նշել, որ այս շաղկապի հարադրությամբ հիշյալ բառերը զրկվում են այլ խոսքի մասի նշանակությամբ հանդես գալու հնարավորությունից: Այսպես, ուր, որտեղ, ինչպես, ինչ, երբ, քանի, մանավանդ, այնպես և այլն կարող են տարբեր խոսքի մասերի արժեքով գործածվել, բայց որ թարմատարի հարադրությամբ նրանց կիրառությունները սահմանափակվում են լոկ կապակցական դերով: Կարելի է նշել երկու հիմնական գործածություն.

¹ Գեոեա XVI դարում, Նահապետ Քուլակի տաղերում, հանդիպում ենք նման կիրառությունների. «Ասես քե յաղութն ես դու...» (Նահապետ Քուլակ, Երևան, 1957, 125):

ա) Հարադրվելով հարաբերական դերանունների հետ, այդ շաղկապը այդ բառերին տալիս է ընդհանուր ու անորոշ նշանակություն: Սովորաբար նման դեպքերում այդ հարադիրները հանդես են գալիս զիջական երանգով, իսկ ու թարմատարը կարծես ձեռք է բերում «թեկուզ» նշանակությունը. օրինակներ՝ «Երբ որ¹ ցանկանաս, կգամ: Ինչ որ¹ պահանջես, կանեմ: Ուր որ գնաս, կհետևեմ»:

Նույնպիսի կիրառություն ունի ու շաղկապը որքան, ինչքան, որանդ և այլ բառերի հետ (որքան որ, որտեղ որ, որքան էլ, ինչքան էլ, որտեղ էլ):

Հետաքրքրական է նաև ու-ի հետևյալ կիրառությունը. «Ինչ տեղից որ ինքդ կուզես, էս սըհաթին քաշեմ տամ քեզ (ՀԹ, 124)»:

Նույն ձևով կարելի է ասել՝ «Ու տեղից որ ինքդ կուզես...», ուր նախադաս ու-ը համարժեք է ինչ-ին: Հիշյալ կիրառությունները շատ են տարածված ժողովրդական լեզվում (համեմատիր, օրինակ՝ ու մարդը ու, ու ժամանակ ու և այլն և այլն):

բ) Ու շաղկապը զուրկ է զիջական երանգից, երբ կապվում է քանի, ինչպես, այնպես, մանավանդ և այլ բառերի հետ (քանի ու, ինչպես ու, այնպես ու, մանավանդ ու): Այստեղ արդեն նրա դերը սոսկ այն է, որ ընդգծում է այդ բառերի շաղկապման արժեքը:

Թ) Երբ համեմատության իմաստային հարաբերությամբ զուգադրվում են երկու տարբեր իրողություններ, որոնք այս կամ այն հատկանիշով բաղդատելի են, ապա հիշյալ համեմատությունը շեշտելու համար հաճախ օգտագործվում է ու շաղկապը, որը դրվում է անմիջապես այն անդամից հետո, որը զուգադրվում և կրկնվում է կապակցվող երկու մասերում, ինչպես՝

Ամենից առաջ պիտի ասեմ ձեզ, որ դուք ձեր այդ հոռետեսությամբ ինձ վրա այնպիսի տապալորություն եք թողնում,

¹ Հաճախ ու շաղկապը գրկվում է իր այդ զիջական երանգից. «Երբ ու եղբայրդ գա, կանչի՛ր նրան ինձ մոտ»: «Հայրը նայեց որդուն զարմացած և ծիծաղեց, ինչ ու շատ հազիվ էր պատահում (ՆԴ, 39)»:

ինչպիսի տպավորություն ու կթողնի ծխախոտ ծխող երեխա՝ (ՆԴ, 242): Ամեն անգամ, երբ արտասուքս գալիս, բռնում է բուկս... ես միևնույն տանջանքն եմ զգում, ինչ տանջանք ու կզգար ծարավից պապակվող այն մարդը, որ ջրի տեղ հալած արձիճ խմեր (ՆԴ, 375):

Ժ) Խիստ հարուստ ու բազմազան են թե շաղկապի ոճական կիրառությունները գեղարվեստական գրականության լեզվում: Ստորև տալիս ենք ամենատարածված գործածություններից մի քանիսը, որոնք հանդիպում են հատկապես պարզ ժողովրդական կենդանի լեզվում և խոսքին տալիս են կենդանություն ու թարմություն:

ա) Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում ժողովրդական և խոսակցական լեզվում բավական տարածված թե շաղկապի այն կիրառությունները, երբ նրանով կապակցվող նախադասությունը կապվում է գլխավոր նախադասության մեջ բացակա, սակայն զորությամբ իմացվող ասացական բայի հետ: Նման դեպքերում հենց միայն թե շաղկապի գործածությամբ ակնարկվում է բացատրական իմաստային հարաբերության առկայությունը կապակցվող մասերի միջև և ափելորդ է դառնում ասացական բայի ներկայությունը գրված լինելով (նման կիրառությունների կարելի է հանդիպել նաև գրաբարում). օրինակներ՝

Մեկ ուրիշ մարդ մոտեցավ (և ասաց) թե՝ նո՛յ, աղատի ինձի, դու լավ մարդ ես (ԱԻ, 267): Ղազարը (ասաց) թե՝ այս անգամ էլ կխղճամ ծաղիկ կյանքիդ ու ձիուդ ականջը կթրուցրենեմ (ԱԻ, 401): Հրացանիս քարը շինեցի, պնդացրի, ասի՝ Ավա՛գ, էլի պետք է գնամ: Թե՝ ա՛յ տղս, ձեռք վեր կալ, կրբլունի, կրգգի: Ասի՝ հիմի սովորեցի, էնպես չեմ անի որ բռնի: Թե՝ դու գիտես (ՀԹԵ, 1, 335): Մի օր, Ջրղջիկն ու ճայն եկան, Թե՝ ե՛կ դառնանք վաճառական (ՀԹ, 90):

Մեծ մասամբ երկախոսություններում հանդիպող այս կիրառություններում թե շաղկապը կարծես դարձել է ասացական բայի հոմանիշ: Նրանով կապակցվում է գերազանցապես ուրիշի ուղղակի խոսքը:

Նկատելի է, որ այս կառուցվածքի բարդ ստորադասական

նախադասություններում քե շաղկապով կապակցվող մասը հաճախ նպատակային հիմունքի երանգ է ստանում: Դա պատահում է այն դեպքում, երբ ասացական, իմացական կամ զգայական բովանդակություն ունեցող խնդրառու բայը բացակա է, և ստորադաս մասը ընկնում է անմիջապես մեկ ուրիշ, մեծ մասամբ ֆիզիկական գործունեություն արտահայտող չեզոք սեռի բայի մոտ. օրինակ՝

— Կայ, ես դրա՛... — բորբոքվեց Մաթոս Գրիգորյանը, — եկել է (որպեսզի ասի կամ ասելու), քե գործիքներդ լավ չեն դարսված, զնա, ասում է, շորերդ բրիգադի պահեստը տես նրանք ոնց են դարսել, արի ինքդ էլ էդպես դարսի (ՆՁՀ, 27 — 28): — Ա՛խ, նանի ջան, ի՛նչ լավ էր սիրտդ իմացել, — հառաչում էր Գիբորը տեղի տակին ու հաց ու պանիրը ուտում ականջը սրած (իմանալու կամ տեսնելու), քե խազեինը հոշի գալի (ՀԹ, 349):

Բացակա, սակայն զորությամբ հասկացվող զգայական բայերի հետ կարող են կապվել նաև այն նախադասությունները, որոնք սկսվում են ու շաղկապով, (սակայն առանց հիմունքի երանգի) ինչպես՝

Նո մտիկ տամ (և տեսնեմ), ու մի անտեր գել էլ մի ոչ... խարի բռնել է, հետը կողք կողքի ընկել. ու պոչով հտեկիցը քշում է... (ՀԹԵԺ, 3, 99): Քույրը մին էլ ետ է նայում (և տեսնում է), Ու մի գառը մղկտալի Իր հտեկից տխուր մայում Ու մայելով վազ է տալիս (ՀԹ, 108):

բ) Նպատակի շաղկապի կիրառություն է ձեռք բերում քե-ն, երբ ստորադաս մասը, որի ստորոգյալը արտահայտված է լինում ըղձական եղանակով, հանդես է գալիս որպես բայիմաստի լրացում՝ կապվելով առավելապես ֆիզիկական գործունեություն նշող բայերի հետ. օրինակներ՝

...Նկան քաշեցին՝ քե զոռով տանեն, թափ տրվավ, մարդկանց գրցեց դես ու դեն (ՀԹԵ, 2, 99): ...Վասիլիսան երեսը լվանում էր, գլուխը սանրում, հագնվում, զուգվում, նստում լուսամուտի առաջն ու սպասում: Սպասում է քե տեսնի ի՛նչ պետք է լինի (ՀԹԵ, 2, 392): Չարչարվեց, քոթովը պոկեց ու, ոնց որ մարդը խտտի՝ խտրտեց, բերավ, քե վրաս

գցի (ՀԹԵ, 1, 335): ...Հեշտ բան հո չի՛, հըլա նոր եմ Յըրցամ տըվել, քե որ կարեմ (ՀԹԵ, 1, 196):

Այս վերջին օրինակում քե-ի նպատակային երանգը սաստկանում է ու շաղկապի հարադրությամբ: Բերված բոլոր օրինակներում երկրորդական նախադասության համար կարելի է տալ «ինչ նպատակով» հարցը: Պետք է նշել, որ քե շաղկապի նպատակային կիրառությունները խորթ չէին նաև գրաբարին: Համեմատիր հետևյալ օրինակը. «Եվ ոչ խառն ի խուռն ինչ առնէ, քէ (զի) առ ապա զղջանայցէ և եղծանիցէ զստեղծուածն իւր (Ղուկասեան մատենադարան, ԺԳ, Եղնրկայ վարդապետի Կողբացոյ, Եղծ աղանդոց, Թիֆլիս, 1914, 163)»:

Քիչ տարբեր է քե շաղկապի հետևյալ կիրառությունը հարցական բառեր պարունակող նախադասությունների միջև. «Ի՞նչ են տարել նըրանք կյանքից, քե ի՛նչ տանես դու քեզ հետ, Խաղաղ անցիր, ուրախ անցիր երկու օրվան էս ճամփեդ (ՀԹԵ, 1, 153)»:

գ) Թե շաղկապը հավելադրական գործածություն ունի, երբ նրանով կապակցվող մասերում նույն անձի կատարած գործողություններն են նկարագրվում, կամ երբ բայական ստորոգյալները նույն դեմքով են օգտագործվում: Նման կառուցվածքներում քե շաղկապով կապակցվող ստորադաս նախադասությունները լրացնում են հոգեկան գործունեություն արտահայտող բայերին (մեծ մասամբ կամական). օրինակ՝

Ես չեմ կարողանում քե կարդամ: Մոռացա քե կանչեմ: Ուզում եմ քե գամ:

Գրական լեզվում քե շաղկապով կապակցվող այս ստորադաս նախադասությունները փոխարինվում են դերբայական կառուցվածքով (ես չեմ կարողանում կարդալ, մոռացա կանչել, ուզում եմ գալ): Նկատելի է, որ այս կառուցվածքի նախադասություններում, որոնք հատուկ են հատկապես ժողովրդական լեզվին, ստորադաս մասի բայական դեմքի փոփոխությունը առաջ է բերում ու շաղկապի օգտագործման անհրաժեշտությունը (օրինակ՝ ուզում եմ, որ գաս, և ոչ թե՛ քե գաս):

Որոշ կառուցվածքի բարդ ստորադասական նախադասու-
թյուններում քե շաղկապի օգտագործմամբ կարող են ակ-
նարկվել նաև ստորադաս մասով արտահայտված գործողու-
թյան իրականացման դժվարությունը կամ ավելորդությունը.
օրինակ՝ «Եկանք, ճամփին մոլթն ընկավ: Մեկնահայր ձյուն.
ցուրտն էլ հո թրի նման մարդի երես է կտրատում: Ճամփեն
էլ լավ չգիտենք: Գնա, քե պետք է հասնես Արթիկ (ՀԹԵ, 1,
339)»: Համեմատիր նաև ու-ի համապատասխան կիրառու-
թյունը հետևյալ օրինակում (Սպասիր ու պետք է գա) = նա
այլևս չի գա:

Այս բաժինն ավարտելու համար մնում է խոսել ու, քե
բացատրական շաղկապների կիրառական մի առանձնահատ-
կություն: մասին:

Ինչպես երևաց բերված օրինակներից, այս շաղկապնե-
րով կապակցվող բացատրական նախադասությունները գե-
րազանցապես վերջադաս դիրք ունեն գլխավորի նկատմամբ:
Նրանց միջադաս գործածությունները սահմանափակվում են
բացառապես այն դեպքերով, երբ այդ երկրորդական նախա-
դասությունները կապվում են բայանունների կամ էլ դերբա-
յական ձևերի հետ: Այս երկու դեպքերի վերաբերյալ օրինակ-
ների հանդիպել ենք նախորդ մասերում: Մնում է բերել առա-
ջադաս գործածություն ունեցող բացատրական նախադասու-
թյունների օրինակներ.

Ու ես այժմ բախտավոր եմ, դրա մասին կասկած չու-
նիմ... (Մուր., 4, 284): Ու Ռուլթը շատ հավատք չունի Մար-
տինի գրական ընդունակությունների վրա, դա չփոխեց և
չպակասեցրեց նրա սերն ու հարգանքը աղջկա նկատմամբ
(ԶԼՄԻ, 231): Ու սոցիալ-դեմոկրատների թեորիական աշխա-
տանքը նպատակ պետք է ունենա ուսումնասիրելու առաջին
դասակարգերի նոցիալական և քաղաքական դրություն բոլոր
առանձնահատկությունները, — այդ մասին ոչ ոք չի տարա-
կուսում (ԼԵ, 5, 563): Ու նա սիրում է ուրիշ կնոջ, դա այլ կերպ
չի կարող լինել (ՏԱԿ, 2, 427):

Նկատելի է, որ առաջադաս բացատրական նախադասու-
թյանը վերջադաս գլխավոր նախադասության մեջ սովորա-

բար համապատասխանում է որևէ ցուցական՝ դերանուն, որը կարծես ամփոփում է ամբողջ երկրորդականի բովանդակությունը, դառնալով նրա փոխարինողը գլխավոր նախադասության մեջ: Այս հանգամանքը պատճառ է դառնում, որ կապակցվող մասերի փոխկախվածությունը ուժեղանա: Այստեղ արդեն մենք գործ ունենք բարդ ստորադասական նախադասությունների կառուցվածքային մի նոր տիպի հետ, որը մեծ մասամբ հանդիպում է ռուսերենից կատարվող թարգմանական գրականության մեջ և աստիճանաբար տարածվում է նաև արդի հայերենի գրական լեզվում:

Թե շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները առաջադաս գործածություն են ունենում մեծ մասամբ այն դեպքերում, երբ անուղղակի հարցում են պարունակում: Հիշյալ եղանակով ընդգծվում է տրվող հարցի կարեւորությունը. օրինակ՝ Թե ո՛ւր է Սուրիկը, ես չեմ կարող ասել:

Ինչ, ՈՐՊԵՍՁԻ, ԻՔՐ (ԹԵ), ԵՐԲ

Նրբեմն բացատրական շաղկապի նշանակությամբ հանդես են գալիս նաև ինչ, որպեսզի, իբր (թե), երբ բառերը:

1) Ինչ բառի կիրառությունները բացատրական շաղկապի նշանակությամբ գերազանցապես կապվում են ժամանակային հարաբերությունների արտահայտման հետ: Օրինակներ՝

Գններալ բարոն Ֆոն Վենցելն ու նրա շտաբն արդեն մի քանի օր էր, ինչ մեկնել էին դեպի արևելք (ՖԵԳ, 343): Մի քանի ամիս է, ինչ քեզ հետ եմ ես, սիրելի թագավոր... (ՄԳՄ, 288): Արդեն երկու շաբաթ լրացավ, ինչ նա հեռացել է մեզանից (ՄԳՄ, 14): Այս նշանակությամբ հազվադեպ է օգտագործվում ինչ որ բառը՝ «Այն օրից, ինչ որ նրան թաղեցին, Այլևս խընդալ ես չեմ կարենում (ՀԹԵ, 1, 88):

2) Ռուսերենի ազդեցությամբ են անշուշտ տարածվել և տարածվում որպեսզի բառի բացատրական շաղկապի նշանակությամբ կիրառությունները, որոնք հանդիպում են առավելապես լրագրային և հրապարակախոսության լեզվում: Ինչպես գիտենք, ռուսերենը բացատրական երկու հիմնական

շաղկապ ունի ՎՏՕ և ՎՏՕԾԿ. այս վերջինս օգտագործվում է այն դեպքում, երբ նրանով կապակցվող ստորադաս նախադասությունը լրացնում է գլխավոր նախադասության ցանկություն, անհրաժեշտություն, հրաման, հնարավորություն, կասկած կամ երկյուղ արտահայտող բայերի: Սակայն հայերենում նման բայերի հետ օգտագործվում է ու շաղկապը, որն ունի ռուսերենի ՎՏՕ և ՎՏՕԾԿ շաղկապների բոլոր նշանակություններն ու կիրառությունները: Այնպես որ սխալ է այդպիսի նշանակություն արտահայտող բայերի հետ օգտագործել ռուսերենի շաղկապը, որի հիմնական կիրառությունը նպատակի երկրորդական նախադասություններ կապակցելն է. օրինակներ՝

Ժամանակն է. ռուսերենի համապատասխան մարմինները զբաղվեն ջեռուցման հարցով: ...Երկու թունելախորշերի միացման գործը արագացնելու համար անհրաժեշտ է, ռուսերենի երկրորդ թունելախորշի կոնկրետիվը նույնպես ամսին կատարի 60... դժամեառ առաջխաղացում (Եր., 1960, նոյ. 3, 1): Սուրիկը խնդրեց, ռուսերենի մենք էլ ներկա լինենք հավաքություն: ...Ամբողջ ներկայացման ընթացքում ես չնկատեցի, ռուսերենի հանդիսականները նրանց դիմեին նրանց իսկական անուններով (ԵՁ, 422): Աշխատասիրությունը օգնեց, ռուսերենի բավարարելիք նրանց ցանկությունը (ՀՖ, 1958, հուլ. 15, 4): ...Այն ժամանակ ամբողջ խնդիրն այն էր, ռուսերենի ամբողջական բանվոր դասակարգի մեջ (ԼԵ, 5, 569): Մենք՝ հայ երիտասարդներս, կաշխատենք այնպես, ռուսերենի մեր խոսքի բարեկամներն... (ՍԶ, 1957, օգ. 31, 3): Եվ եթե մեզ իրոք հաջողվեր հասնել այն դրության, ռուսերենի բոլոր տեղական կոմիտեները, տեղական խմբերն ու խմբակները... ակտիվ կերպով ձեռնարկեին ընդհանուր գործին (ԼԵ, 5, 679): Մենք անհրաժեշտաբար խնդրում ենք ՍՍՌՄ Պետականին՝ և Հաղորդակցության ճանապարհների մինիստրությանը՝ 1958 թվականին ավարտել Երևան-Աղստաֆա երկաթուղու կառուցման նախագծումներն այն հաշվով, ռուսերենի 1959 թ. սկսվի այդ ճանապարհի կառուցումը (ՍԶ, 1957, դեկտ. 24, 4): Իսկ ագիտատորը իր բոլոր ջանքերին այնպիսի ուղղություն կտա,

որպեսզի օգտվելով ամենքին և ամեն մեկին ծանոթ այդ փաստից, տա «մասսային» մեկ գաղափար՝ հարստության աճման և աղքատության աճման միջև եղած հակասության անիմաստության գաղափարը... (ԼՆ, 5, 543):

Ինչպես տեսնում ենք, բերված օրինակներից և ոչ մեկում հնարավոր չէ տալ «Ինչ նպատակով» հարցը, ուստի և ավելի ճիշտ կլիներ այս բոլոր օրինակներում օգտագործել ուր շաղկապը:

3) Իբրեւ հղանակավորող բառը բացատրական շաղկապի դեր է կատարում, երբ ստորադաս նախադասության մեջ բացակայում են ուր և թե շաղկապները:

Համեմատիր հետեւյալ օրինակները՝

«—Լուրեր եք տարածում, թե իբրեւ մենք մտադիր ենք Վարդան Ղազարյանին նշանակել... վարիչ (ՆՁՀ, 360)» և «—Լուրեր եք տարածում, իբրեւ մենք մտադիր ենք Վարդան Ղազարյանին նշանակել... վարիչ»:

Այս կապակցական բառը, որ երբեմն օգտագործվում է նաև իբրեւ թե ձևով, շաղկապվող երկրորդականի բովանդակությունը ներկայացնում է որպես անհավաստի կամ անստույգ: Բերենք օրինակներ՝

Երեխան նույնպես աչքերը խփեց, գլուխը դրեց հոր կուրծքի վրա և ձևացրեց, իբրեւ թե քնում է (ՐՍ, 152): Երազում տեսավ, իբրեւ թե երկու արծաթ շղթաներով երկնքից մի ոսկի ճոճ էր իջնում ներքև (ՀԹԵ, 2, 493): Ծերերն ասում են, իբրեւ թե վարպետը էն օրվանից ետը ինչքան ապրեց աշխարհքում՝ ամեն գիշեր նրա լուսամուտի տակ հնչում էր էս տխուր, սրտաճմլիկ երգը (ՀԹԵ, 2, 440): Պեյրադին մեկուսացնելու համար առաջ քաշվեց գոփողության գոհճիկ պատրվակը, իբրեւ նա հովանավորել էր մաքսանենգությունը՝ օգուտը բաժանելով խոշոր առևտրականների հետ (ՕԴԲԿՊ... 144):

4) Արդի հայերենում գնալով ավելի են տարածվում երբ շաղկապի կիրառությունները բացատրական շաղկապի նշանակությամբ: Նկատելի է սակայն, որ այս շաղկապի օգտագործմամբ բացատրական նշանակությունը ներկայացվում է ժամանակային հարաբերության հետ ունեցած սերտ կապի

մեջ, որի պատճառով գլխավոր նախադասության բացատրության ենթակա անդամը լրացվում է խամանակի այս կամ այն հատվածին վերաբերող կոնկրետ մի պիտոլոգյամբ: Կարելի է տարբերել երբ շաղկապի հետևյալ կիրառությունները.

ա) նրանով կապակցվող բացատրական մասը, կապվելով միադիմի բայերի կամ արտահայտությունների հետ (որոնք մեծ մասամբ վիճակ կամ դրություն են ցույց տալիս)՝ բացահայտում է նրանց բովանդակությունը և միաժամանակ նշում, թե ո՞ր ժամանակի հետ է կապվում գլխավորի մեջ՝ արտահայտված վիճակի կամ դրության գոյությունը (հենց այս հատկանիշով էլ տարբերվում է երբ շաղկապի գործածությունը *որ-ից*). օրինակներ՝

Ինձ համար շատ սոսկալի է, երբ մարդկանց արյուն է թափվում, երբ հայր և մայր մաշվում են բանտերի մեջ, իսկ զավակները, որք և անտեր, մնում են դահիճների ձեռքում (Բաֆ., 138): Պատահական չէր, երբ մենք օգտագործեցինք «հարձակվողների ուժեղ կազմ» բառերը (ՀՅ, 1958, նոյ. 23, 4) Դե, ասենք արհեստավորների համար ամեն տեղ էլ դործ կա, բայց քաղցր բան է՝ երբ հարազատ քո տանը, քո ժողովրդի համար ես օգտակար դործ կատարում (Նրև., 1958, օգ. 10, 2):

բ) երբ շաղկապով կապակցվող բացատրական մասը այն, այնպիսի հարաբերյալների միջնորդությամբ կապվում է գոյականների հետ՝ նշելով նրանց այս կամ այն հատկանիշը: Նկատելի է, որ այս շաղկապի օգտագործմամբ արտահայտվող հատկանիշը կայուն բնույթ չունի և ընդունելի է դառնում լոկ ժամանակի այն սահմանում, որ նշվում է ստորագրյալ մասում (հենց այս հատկանիշով էլ երբ-ը տարբերվում է *որ-ից*՝ համանման կիրառություններում). օրինակներ՝

Լեկինը դեռ գտնվում էր խելահեղ այն կացության մեջ, երբ թվում էր նրան, թե ինքն ու իր բախտավորությունը կապում են գոյություն ունեցող ամեն ինչի գլխավոր ու միակ նպատակը... (ՏԱԿ, 2, 3): Որ քո փայլն հղացել է օրերում այն, երբ ամեն փայլ մեռնում էր հրում (ԵԶ, 134): Մենք այժմ գտնվում ենք աշխարհագրական գիտելիքների զար-

գացման այնպիսի ստադիայում, երբ կարելի է հաշվառել երկրում բնակվող մարդկանց և երկրի միջև եղած փոխադարձ կապը (ԺԴԿՍՍ, 38)։

Ավելորդ չէ նշել, որ այս օրինակներում երկրորդական նախադասությունները չեն նշում գլխավոր նախադասության լրացման ենթակա առարկայի, երևույթի կամ վիճակի որակական հատկանիշները։ Նրանք առարկայի (երևույթի) հատկանիշը նշում են նրա անհատականացման, առանձնացման ճանապարհով։

Քերված օրինակներից տարբեր է հետևյալ կառուցվածքը՝ «Բայց ավելի հուզիչն այն է, երբ ամփոփում են օրվա արդյունքները (Ավ., 1960, հոկտ, 29, 3)։ Այստեղ երկրորդականը լրացնում է ցուցական դերանվամբ արտահայտված հարաբերյալին։

զ) Նշված հատկանիշը առավել ցայտուն կերպով է դրսևորվում, երբ բացատրական մասը անմիջականորեն կապվում է լրացման ենթակա գոյականների հետ՝ առանց ցուցական դերանունների միջնորդության։ Կապակցվող բացատրական մասը այս դեպքում ևս արտահայտում է այնպիսի հատկանիշ, որի նպատակն է անհատականացնել լրացման ենթակա համապատասխան առարկան (կամ երևույթը), առանձնացնելով այն ուրիշ այլ առարկաներից (կամ երևույթներից)։ Տարբերակման այս նշանակությունը անշուշտ կախված է ստորադաս մասում նկարագրվող այն իրողությունից, որ վերագրվում է լրացման ենթակա առարկային (կամ երևույթին)։ օրինակներ՝

Առաջին և երկրորդ դեմքի ենթակաները վերածվում են երրորդ դեմքի (բացի վերևի ծանոթության մեջ ցույց տված դեպքերից, երբ անուղղակի և ուղղակի խոսքերը դեմքով չեն տարբերվում (Սևակ, Հայոց լեզու, Շարահյուսություն, Եր., 1956, 140)։ Կան նաև միանգամայն տարօրինակ փաստեր, երբ անհնարին է հասկանալ, թե ինչով են առաջնորդվում տերերը հյուրընկալության իրենց անսպասելի մերժումների ժամանակ (ՍՀ, 1958, նոյ. 7, 3)։ Կարելի է շատ օրինակներ բերել, երբ ձեռնարկություններին ուղարկվում է ցածրորակ

հումք և այն էլ հաճախ ձգձգումներով (ՍՀ, 1958, հուլ. 29, 1)։

Հետաքրքրական է երբ շաղկապի կիրառությունը հետեւյալ օրինակում՝ «phthisicus, чахоточное телосложение, թոքախտային մարմնակազմություն, երբ (= որի առկայության դեպքում) կրծքավանդակը լինում է նեղ, պարանոցը երկար, մաշկը սպիտակ և նուրբ, թշերը վարդագույն և այլն» (Վահան Արծրունի, Ռուսերեն-լատիներեն-հայերեն բժշկագիտական բառարան, Եր., 1956, 81)»։

Երբ շաղկապի մինչև այժմ նկարագրված կիրառությունները առավելապես տարածված են հրապարակախոսական և գիտական գրականության լեզվում։

դ) Բավական տարածված են նաև երբ շաղկապի այն կիրառությունը, երբ նրանով կապակցվող ստորադաս մասը լրացնում է հոգեկան գործունեություն արտահայտող որոշ կարգի բայերի (սիրել, առել և այլն)։ Նկատելի է, որ այս կառուցվածքներում երբ շաղկապը լրիվ չի կորցնում ժամանակի նշանակությունը։ Համեմատիր՝ «...Պապը չի սիրում, երբ հակաճառում են իրեն—ՍևՀ, 517» (չսիրելու երևույթը, ավելի ճիշտ Պապի այդ հոգեվիճակը դրսևորվում է իրեն հակաճառելու ժամանակ...)։ Բերենք այլ օրինակներ՝

Երիտասարդ կրտսեր լեյտենանտը տանել չէր կարողանում, երբ իր պետերից բացի ուրիշներն իրեն կարգադրություն էին անում (ԳՍ, 1, 35)։ Սակայն այս չի նշանակում, թե մեծ արձակագիրը ունեցել է բարբառայնության կուլտ։ Շիրվանզադեն չէր հանդուրժում, երբ գրողը հեղինակային խոսքը խճողում էր բարբառային անհարկի տարրերով (Եր., 1958, նոյ. 13, 2)։

Երբեմն այս նշանակությամբ օգտագործվում է երբ որ հարադիր ձևը։ Մեր բերած օրինակում այն միջադաս գործածությամբ է՝ «Սիրում եմ՝ սրբի պատկերի առաջ երբ որ վառվում է մոմը սրբափայլ եվ խորհրդավոր լույսով երերուն Ցրում է մեղմիվ խավարը մրույլ (ԱԻ, 2, 218)»։

Ամփոփելով այս բաժնի շաղկապների քննությունը, նկատում ենք, որ բացառական հարաբերությունների արտահայտմամբ հիմնականում տարածված են որ և թե շաղ-

կապները, որոնք խիստ հարուստ են իմաստային և ոճական երանգներով։ Այս շաղկապների առանձնահատկությունն այն է, որ նրանցով կապակցվող բացատրական նախադասությունները վերաբերում են գլխավոր նախադասության սոսկ մի անդամին, իմաստային և կառուցվածքային տեսակետից ընդարձակելով այն։ Ինչ, որպեսզի, իբր (քն) շաղկապները մասնակի դեպքերում են բացատրական շաղկապի նշանակությունամբ հանդես գալիս։ Երբ-ը այս կիրառությունամբ համեմատաբար ավելի է տարածված։

2. ՆՊԱՏԱԿԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Արդի հայերենի նպատակի շաղկապները հիմնականում երկուսն են՝ որպեսզի և որ։ Սրանցով կապակցվող երկրորդական նախադասությունները ցույց են տալիս այն նպատակը, որի իրականացման համար կատարվում է որևէ գործողություն կամ եղելություն (նկարագրված գլխավոր նախադասության մեջ)։ Անհրաժեշտ է նշել, որ նպատակային հարաբերությունների արտահայտման համար պարտադիր է ստորադաս նախադասության ստորոգյալի ըղձական եղանակով գործածությունը և ենթակայի առկայությունը կամ առկայության հնարավորությունը գլխավոր նախադասության մեջ¹։

Նպատակային հարաբերությունը պարագայական հարաբերություն է։ Այդ է պատճառը, որ այդ նշանակության դրսևորման համար կարևորություն ունի գլխավոր նախադաս-

¹ Միակազմ անենթակա նախադասությունների հետ կապվելիս երկրորդական նախադասությունները չեն կարող դիտվել որպես նպատակի։ այս դեպքում նրանք արտահայտում են բացատրական հարաբերություն (օրինակ՝ Անհրաժեշտ է, որ նա ներկա գտնվի)։ Որպեսզի շաղկապի նման գործածությունը, ինչպես ասել ենք, խրախուսելի չէ այս կառուցվածքի բարդ նախադասություններում։ Ինչ վերաբերում է անձրևում է, մթնեց է, նման միադիմի բայերին, ապա տրամաբանորեն հնարավոր չէ ենթադրել այդ կարգի բայերից բխող նպատակի հարաբերության արտահայտում, քանի որ սուբյեկտը, որը պետք է որևէ գործողություն կատարելով ձգտի որևէ նպատակի, անվերականգնելի է նման բայերի հետ։

սության ստորոգյալի բայիմաստը և ոչ թե սեռը: Այս հարաբերությունը կարող է արտահայտվել բոլոր այն դեպքերում, երբ գլխավորում առկա է այնպիսի ստորոգյալ, որն իր բառական բովանդակությամբ և արտահայտած գործողության բնույթով կարող է ենթադրել կամ թելադրել գործողության, կամ հազվադեպ նաև՝ եղելության կատարման նպատակ: Հետաքրքրական է նշել, որ որոշ բայեր, իրենց բառական բովանդակության պատճառով, չեն կարող առնչվել նպատակի հետ. օրինակ՝ զգայական զգալ, տեսնել, լսել և նման բայեր ունեցող գլխավոր նախադասությունները չեն կարող նպատակի ստորադաս նախադասությունների հետ կապվել, քանի որ նրանց (այդ բայերի) արտահայտած գործողությունները սուբյեկտի կամքից կամ դիտավորությունից չեն բխում, այլ կատարվում են նրա կամքից անկախ (աղմուկ լինելու դեպքում մարդը իր կամքից անկախ է լսում այն):

Որպես կանոն, այս կառուցվածքի նախադասություններում գրեթե պարտադիր է սեռի խնդրի առկայությունը գլխավորում, երբ այնտեղ օգտագործված է ներգործական սեռի: Որևէ բայ: Այդ անդամի բացակայության դեպքում որևէ մի այլ միջոցով միշտ էլ ակնարկվում է այդ անդամի գոյությունը. օրինակ՝

«Ինչո՞ւ հայտնեցիր այդ լուրը Վահանին:—Հայտնեցի, որպեսզի նա տեղյակ լինի»: «—Ու՞ր է լուցկի: —Մայրիկը թաքցրեց, որպեսզի երեսան չխաղա (լուցկու հետ)»: Ինչպե՞ս տեսնում ենք, ընդգծված բառերը ըստ էության այն անդամներն են, որոնք կապված են (գործությամբ) գլխավորի բայական գործողության հետ (հայտնեցի, թաքցրեց):

Կամական բայերի, մասամբ էլ առաջարկի կամ հրամանի

1 Խոսքը չի վերաբերում այն դեպքերին, երբ նման բայերը այլ նշանակությամբ են գործածվում (օրինակ՝ ասել բայը ունի նաև «հնազանդվել, ենթարկվել» նշանակությունները), կամ էլ այն դեպքերին, երբ այդ բայերը հանդես են գալիս որպես գլխավորի ստորոգյալի նպատակի լրացում. օրինակ՝ «Սա գնացի ընկերոջս տեսնելու, որպեսզի հայտնեմ նրան այդ մասին» (Գնալու նպատակը ընկերոջը տեսնելը և այդ լուրը հայտնելն է):

նշանակութիւնն արտահայտող ասացական բայերի օգտագործման դեպքում ստորադաս նախադասութեան շարահյուսական բնութիւնն ու նշանակութիւնը կախված է այն բանից, թե զխաւորում արտահայտված է արդյոք այդ բայերի սեռի խնդրը, թե ոչ: Արտահայտված լինելու դեպքում ստորադաս մասը նպատակի նշանակութիւնն է ստանում (Ես պահանջում եմ այդ (ասենք՝ գործին ծանոթանալը), որ [որպեսզի] տեղյակ լինեք հարցին), իսկ բացակայութեան դեպքում՝ բացատրական (Ես պահանջում եմ, որ [որպեսզի?] տեղյակ լինեք հարցին): Ֆիզիկական գործունեութիւնն արտահայտող ներգործական սեռի բայերի օգտագործման դեպքում սեռի խնդրի բացակայութիւնը թեև չի փոխում ստորադաս մասի նպատակի նշանակութիւնը (քանի որ բացատրական հարաբերութիւնն արտահայտելիս ստորադասը հարաբերական դերանուններով է կապվում զխաւորին), սակայն, այդ կառուցվածքում ևս, սովորական չէ նրա բացակայութիւնը:

Նպատակի շաղկապների օգտագործմամբ ստորադաս մասը, որպէս կանոն, լրացնում է ամբողջ զխաւորին՝ առավելապէս սերտ կապ ունենալով ստորոգյալի և նրա լրացումների հետ: Այս վերջիններին բացակայութեան դեպքում ուժեղանում է նրա կապը զխաւորի ստորոգյալի հետ: Նկատելի է, որ նպատակի շաղկապները բարդ նախադասութեան որոշ կառուցվածքներում արտահայտում են նաև պատճառի և հետևանքի երանկ:

Մեր հին քերականներից շատերը նպատակի երկրորդական նախադասութիւնները համարում են պատճառական, դիտելով դրանք որպէս «Վախճանական պատճառ, որի համար մի բան կատարվում է»¹: Ս. Մալխասյանը նպատակի նշանակութիւնն ունեցող երկրորդական նախադասութիւն-

1 Ս. Մալխասեանց, Գրաբարի համաձայնութիւնը, Թիֆլիս, 1892, 147—148: Այդ կարծիքին են նաև՝ Ս. Պալասանյանը (Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, 233), Մելիք Թանգյանը (Աշխարհաբարի քերականութիւն, Շուշի, 1893, 95—97), Հ. Թումանյանը (Հայոց աշխարհաբար լեզուի համառոտ համաձայնութիւն, Թիֆլիս, 1911, 47) և ուրիշներ:

ները գետեղում է թե համադասության և թե ստորադասության մեջ:

ՈՐՊԵՍՁԻ—Նպատակի հարաբերությունն արտահայտող ամենատարածված շաղկապն է: Այս շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունը գլխավորի նկատմամբ սովորաբար վերջադաս դիրք է գրավում:

Նկատելի է, որ նպատակի հարաբերության արտահայտման համար գլխավոր նախադասության մեջ սովորաբար նկարագրվում են հատուկ դիտավորությամբ կատարված գործողություններ: Սակայն հաճախակի են այն դեպքերը, երբ նկարագրվող նպատակը չի հանդիսանում գլխավոր նախադասության սուբյեկտի ակտիվ գործողության հետևանքը: Այս դեպքում արդեն ստորադաս մասը նշում է, թե ի՛նչ նպատակի հետ է կապվում գլխավորում նկարագրվող եղելության կամ իրողության գոյությունը:

Ա) Նշված նպատակին հասնելու համար հատուկ դիտավորությամբ կատարված գործողություններ են նշում հետևյալ օրինակները.

Ասլանն ուշացրեց պատասխանը: Դիտմամբ ուշացրեց, որպեսզի ավելի մեծ տպավորություն թողնի և, վերջապես, ծիծաղելով ասաց (ՍԽՀ, 44): Թագավորի հրամանով իշխանները դուրս գնացին, որպեսզի հավատարիմներին հարկ եղած հրահանգները տան (Մուր., 543): Խոսում էր Մամիկոնեից տիկինը, որպեսզի խլացնի իր սրտի տագնապը, մարդկային թուլությունը (ԴԴ, 4, 100):

Բ) Նշվող նպատակը չի կապվում սուբյեկտի կողմից հատուկ դիտավորությամբ կատարվող գործողությունների հետ. օրինակներ՝

Վարազդուրներն իջեցված էին, որպեսզի արևը ներս չթափանցեր: Դպրոցում կա նաև գրադարան, որպեսզի երեխաները օգտվեն գրականությունից: Ուղիղ կես ժամ պահանջվեց, որպեսզի բավարարեինք նրանց ցանկությունը (ՀՅ, 1958, հուլ. 15, 4):

Նպատակի նշանակությունը առկա է նաև այն դեպքերում, երբ որպեսզի շաղկապով սկսվող ստորադաս մասը

ըստ շարահյուսական դերի բացատրական է (անուղղակի խնդրի պաշտոնով)¹. օրինակ՝ «Մնում է հիսուն էջ, որպեսզի աշխատանքս ավարտվի»: «Աշխատասիրությունն օգնեց, որպեսզի հաջորդ կիսամյակներում էլ հաջողության հասնի» (Եր., 1958, հուլ. 9, 3):

Հետաքրքրական է նշել, որ նպատակը ընդհանրապես կարելի է դիտել որպես սպասելի հետևանք, որի իրականացումը ցանկալի կամ անհրաժեշտ է, իսկ հետևանքը կարելի է դիտել որպես իրականացած նպատակ: Այդ է պատճառը, որ այդ երկու նշանակությունները երբեմն համատեղվում են նույն ստորադաս նախադասության մեջ:

Այժմ կանգ առնենք որպեսզի շաղկապի իմաստային այլ կիրառությունների և ոճական գործածությունների վրա:

Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում որպեսզի շաղկապի կիրառությունները հետևանքի նշանակությամբ, որն արտահայտվում է այն բանում, որ ստորադաս նախադասությամբ արտահայտված ենթադրական կամ սպասվող հետևանքը կախման մեջ է դրվում գերադաս մասում նկարագրվող որևէ գործողության կամ հատկանիշի դրսևորման աստիճանից: Կարելի է տարբերել հետևյալ դեպքերը.

1) Պայմանա-հետևանքային յուրահատուկ երանգ է դրսևորվում կապակցվող մասերի միջև, երբ գլխավորում օգտագործվում են «բավական է», «հերիք է» միադիմի բացերը. օրինակ՝ «Երբ գետը բարձրանում է մինչև իր ափերի մակարդակը, բավական է ջրի ամենափոքր բարձրացում, որպեսզի հեղեղ առաջանա (ԺԴԿՍԱ, 387)»:

Նկատելի է, որ այս կառուցվածքի նախադասություններում արտահայտվում է նաև գործողությունների անմիջական հաջորդում: Երբ ստորադաս մասում ստորոգյալը ըղձականի անցյալի ապառնի ժամանակով է արտահայտվում, իսկ գերադաս մասում՝ անցյալ ժամանակի որևէ ձևով, ապա հնարավոր կամ սպասվող հետևանքը ներկայացվում է որպես արդեն իրականացած. օրինակներ՝

¹ Նման կառուցվածքներում գերադասելի է որ-ի գործածությունը:

Բավական եղավ կառավարական որոշումը մեղալակիր-
ների արտոնություն վերացման վերաբերյալ, որպեսզի Լու-
սավորության մինիստրությունը ազատվեր ծնողների «գրոհ-
ներից»¹ (ՍՀ, 1958, դեկտ. 17, 3): Բայց հետիֆ էր, որ Մկր-
տումը վերից կանչեր մեկն ու մեկին, որպեսզի աղմուկը դա-
դարեր (ԱՔՆ, 478): Շվեյկը մոտեցավ նրան և համարձակ
ցնցեց նրա ուսը: Այդքանը բավական էր, որպեսզի նա անմի-
ջապես գլորվեր աթոռից հատակի վրա, հանգիստ շարունա-
կելով խումփալ (Յա. Հաշեկ, Քաջ գինվոր Շվեյկի արկած-
ները... 2, Երևան—Մոսկվա, 1936, 237):

2) Ստորոգելիական վերադիրի միջոցով ենթակային
վերագրվող այս կամ այն հատկանիշի ուժեղ դրսևորումը
(որն ընդգծվում է բավական, շատ, չափից դուրս, չափազանց
և այլ բառերով), կամ էլ այդ հատկանիշի ոչ բավարար շա-
փով դրսևորումը արգելք են հանդիսանում, որ իրականանա
ստորադաս նախադասությամբ արտահայտված ենթադրու-
թյունը. օրինակներ՝

Նրանք շատ մոտ էին պալատական ազնվականու-
թյան հետ, որպեսզի իջնեին դեպի պրովինցիայի դատարկ
շահագրգռությունները (ՕԴԲԽՊ, 95): ...Բուպեն շատ հանդի-
սավոր էր, որպեսզի կարելի լիներ տարվել անժամանակ ու-
րախության (ՀՄԱԸ, 265): Նա այնքան խելոք չէր, որպեսզի
կարողանար հասկանալ Սուրիկի ակնարկը (համեմատիր՝ նա
այնքան խելոք չէր, ուստի չկարողացավ հասկանալ Սուրիկի
ակնարկը):

3) Հետևանքի նույնպիսի նշանակությունն է արտա-
հայտվում նաև այն դեպքում, երբ ստորադաս մասի բովան-
դակությունը կախման մեջ է լինում գլխավորում նկարագր-
վող ընդհանրապես որևէ հատկանիշի արտահայտման աստի-
ճանից, կամ էլ որևէ գործողության իրականացումից. օրի-
նակ՝

¹ Որպես այս կառուցվածքի շարահյուսական հոմանիշ կարելի է բե-
րել հետևյալ օրինակները՝ «Բավական եղավ...», և Լուսավորության մինիս-
տրությունը... ազատվեց...», կամ՝ «Հենց որ եղավ կառավարական որո-
շումը, Լուսավորության մինիստրությունը... ազատվեց...»:

Նրանք դարձյալ լռեցին: Խոսակցությունը չէր կաշոււմ, չէր տաքանում, որպեսզի վասակը կարողանար առիթ ստեղծել՝ անցնելու համար ամենակարևոր նյութին (ՆՁԶ, 364): Դուք այնքան շատ մետադ չունեք, որպեսզի այն չխնայեք (ՍԶ, 1960, փետր. 18, 2): Միրո, մանավանդ իր սիրո մասին եվան չափազանց վեհ և անպայման մաքուր գաղափար ունեք, որպեսզի կարողանար հաշտվել Բազենյանի աչքերի մեջ նկատված փոփոխության հետ... (ՆԴ, 263): Մեր ներկա երիտասարդների մասին ես չափից դուրս աննպաստ գաղափար ունիմ, որպեսզի ձեր եռանդն ինձ հրճվանք չպատճառի (ՆԴ, 83): Պետք է նշել, որ որպեսզի շաղկապի ոճական այս կիրառությունները մեծ մասամբ ուսերենի համապատասխան գործածությունների ազդեցության արդյունք են (ուսերենն էլ իր հերթին ազդվել է ֆրանսերենից)¹:

Այժմ քննենք որպեսզի շաղկապի մի քանի այլ կիրառություններ:

ա) Ուսերենի միջնորդությամբ են տարածվել նաև որպեսզի շաղկապի բուն նպատակային այն գործածությունները, երբ նրանով կապակցվող երկրորդական նախադասության բայը անորոշ դերբայով է արտահայտված: Նման կառուցվածքները խորթ են արդի հայերենին². օրինակներ՝

Հարկավոր է կալանավոր լինել, որպեսզի այդ հասկանալ (ՆԶ, 442): Արժե՞, արդյոք նորից վատնել ահագին եռանդ ու ժամանակ, առողջություն փչացնել, որպեսզի ճակատամարտ տալ 25 տարով փոքր մրցակցի հետ (ՀՖ, 1961, մարտի 14, 2):

բ) Յուրահատուկ կիրառություն ունի որպեսզի շաղկապը, երբ նրանով կապակցվող մասերի գործողությունները ներկայացվում են որպես պարբերաբար իրար հաջորդող և

¹ Р. Буслаев, Историческая грамматика русского языка, 4-е изд., Синтаксис, Москва, 1875, 332.

² Բոլորովին տարբեր է գրաբարի անորոշի գործածությունը հետևյալ օրինակում՝ «էր հայր Յորայ՝ Զարեհ, որդի որդւոյն Եսաւայ, որպէս զի (=այնպես որ) լինել նմա հինգերորդ յԱբրահամէ» (Զալլիսեան Վ., Քերականութիւն հայկազնեան լեզուի, Վիեննա, 1885, 412):

կրկնվող, ինչպես՝ «Բայց պտույտը վերջանում էր, որպեսզի մի ուրիշը ծայր առնի»։ «Մայրը անընդհատ սրբում էր փոքրիկ Տիգրանիկի դեմքը, որպեսզի մի առժամանակ հետո նա նորից մածնոտվի»։

Այս օրինակներում արտահայտվում է հակադիր նպատակի հարաբերություն. գլխավոր նախադասության գործողությունը չի հասնում այն նպատակի իրագործմանը, որին ուղղված է, և ստացվում է հակառակ հետևանք։ Այդ է պատճառը, որ բերված օրինակները կարելի է ներկայացնել նաև դիջական քեև... սակայն զուգադիր շաղկապով, ինչպես՝ «Թեև պտույտը վերջանում էր, սակայն ծայր էր առնում մի ուրիշը»։

գ) Հատիկները մի ականթարթ փայլում էին արևի տակ մեղվի ոսկեգույն պարսի նման և ընկնում հողը, որպեսզի այլևս չբարձրանան (ՆՁՀ, 197)։

Ավելորդ է նույնիսկ կասկածել, որ ստորադաս մասը այս օրինակում կարող է նպատակի նշանակություն ունենալ։ Չէ՞ որ հիշյալ իմաստային հարաբերությունը ենթադրում է մտածական գործունեություն՝ գլխավոր նախադասության սուբյեկտի կողմից, մինչդեռ բերված օրինակում ենթական անշունչ առարկա է, թեև հեղինակի կողմից որոշ չափով անձնավորված է։

դ) Դժգոհության երանգ է հաղորդվում խոսքին, երբ ստորադաս նախադասության մեջ նկարագրված նպատակը հերքվում է գլխավոր նախադասության հոնտորական հարցի կամ ստորոգյալի ժխտական ձևի պատճառով. օրինակ՝ «ինչ է, ես անընդհատ նույն բանը պետք է կրկնեմ, որպեսզի դուք իսկույն մոռանա՞ք»։ «Նա հինգ տարի ինստիտուտում չի սովորել, որպեսզի ավարտելուց հետո անգործ թափառի» (=Նա ինստիտուտում սովորել է հինգ տարի, ուստի չպետք է անգործ թափառի)։

Ներկայություններում, հարց ու պատասխանի մեջ այս շաղկապը կորցնում է իր քերականական նշանակությունը (ստորադասական հարաբերություն նշելու) և արտահայ-

տում է սոսկ իր բառիմաստից բխող նպատակի նշանակություն:

Մնում է խոսել այս շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունների շարադասության մասին: Գլխավորի նկատմամբ վերջադաս երկրորդական նախադասությունների օրինակներ մենք շատ ենք բերել: Այժմ կտանք գլխավորի նկատմամբ առաջադաս և միջադաս դիրք զբաղեցրած նախադասությունների օրինակներ.

ա) Առաջադաս գործածությամբ երկրորդականում նշվող նպատակը հատուկ ուշադրության է արժանանում. «Բայց որպեսզի այդ գեղեցիկ երազները դառնան գեղեցիկ իրականություն, որպեսզի ինձ էլ ապագայում չմոռանան մարդիկ, հենց հիմա պետք է սկսեմ պարապել, ժամանակ կորցնելը դավաճանություն է (ՀՔ, 140)»:

բ) Միջադաս գործածությամբ հատուկ կերպով ընդգծվում է ստորադաս մասի սերտ կապը նախորդ մասի հետ: Հատկապես ուշադրավ են այն դեպքերը, երբ ստորադասը դրվում է անմիջապես պարապելի անդամներից հետո՝ արտահայտելով նաև պատճառի երանգ. օրինակներ՝

Առանց կոշիկների, որպեսզի ոչ մի ձայն չսլի, նա դանդաղ մոտեցավ դռանը: Մութ գիշերին, որպեսզի ոչ մեկի կողմից չնկատվի, նա հեռացավ գյուղից: Բայց առանձնապես դուր եկավ նրան այն, որ Աննան անմիջապես... որպեսզի թյուրիմացություններ չծագեն օտար մարդու ներկայությամբ, Վոռնսկուն պարզապես անվանեց Ալեքսեյ... (ՏԱԿ, 2, 37):

ՈՐ—Այս շաղկապը նպատակի հարաբերություն է արտահայտում բոլոր այն դեպքերում, երբ իրենով կապակցվող երկրորդական նախադասությունը, որի կազմում ստորոգյալն արտահայտվում է ըզձական եղանակով, չի հանդիսանում գլխավոր նախադասության ստորոգյալի բայական սեռի կամ բայիմաստի խնդիրը, ոչ էլ նրա ենթակայական ժավալուն լրացումը: Այլ կերպ ասած, այն նպատակի պարագայական հարաբերություն պետք է արտահայտի և ոչ թե առարկայական: Հենց այս առանձնահատկությամբ էլ նա

տարբերվում է բացատրական հարաբերությունն արտահայտող ու շաղկապից:

Նախադասության որոշ կառուցվածքներում նպատակի և պայմանի հարաբերությունները կարող են շփոթվել, երբ գլխավոր նախադասության մեջ ստորոգյալն արտահայտվում է պայմանական եղանակով, ինչպես՝ «Ես կգնամ գրադարան, ու (որպեսզի, եթե) Սուրիկին տեսնեմ»¹: Նման դեպքերում, երկդիմությունից խուսափելու համար, պայմանի երկրորդականը առաջադաս է գործածվում՝ «ու (եթե) Սուրիկին տեսնեմ, ես կգնամ գրադարան»:

Իմաստային յեասակետից գրեթե հոմանիշ լինելով, ու և ուրպեսզի շաղկապները գործածության ոլորտներով տարբերվում են իրարից: Ի տարբերություն ուրպեսզի շաղկապի, որը հավասարապես օգտագործվում է հրապարակախոսության, գիտական ու գեղարվեստական գրականության լեզվում, նպատակի ու շաղկապը տարածված է հիմնականում գեղարվեստական գրականության լեզվում: Նա խիստ լայն գործածություն ունի նաև խոսակցական լեզվում, մասնավորապես ժողովրդական խոսքում, որտեղ ուրպեսզի շաղկապը տարածված է:

Ու շաղկապի օգտագործմամբ կապակցվող ստորադաս մասը կարող է նշել.

ա) Հատուկ դիտավորությանմբ կատարված գործողության նպատակը:

բ) Ընդհանրապես որևէ իրողության կամ եղելության ի՛նչ նպատակի ծառայելը. օրինակներ՝

ա) Նա մի ակնթարթում ձիու թամբից սողաց դեպի գավալը, ու նրա բեռը թեթևացնե (Րաֆ., 17): Ամեն տարի մի քանի անգամ նա այցի է գնում կնոջ գերեզմանին, մաքրում շիրիմաքարը, ու վրան մամուռ չբուսնի և գրերը լիցվեն հողով (ՍԽՀ, 27):

բ) Արշավախմբում կար նաև մի բժիշկ, ու հետևել

1 Թեև պայմանն ու նպատակը բարդ ստորադասական կառուցվածքներում տարբեր ինտոնացիայով են արտահայտվում, սակայն հաճախ այն պարզ կերպով չի սահմանադատում այդ նշանակությունները:

մասնակիցների առողջական վիճակին: Թող մեռնի չարը, ուր բարին ծաղկի... (ՀԾ, 34):

Այժմ կանգ առնենք ուր շաղկապի մասնակի այլ կիրառությունների և ոճական գործածությունների վրա:

1) Ստորադաս նախադասություններ արտահայտված «նպատակի» իրականացման հնարավորությունը նախապես բացառվում է, երբ հոետորական հարցի կամ ստորոգյալի ժխտական գործածության պատճառով ժխտվում է այն նախադրյալի առկայությունը գլխավորում, որից կախված է հիշյալ նպատակի կենսագործումը: Ոճա-արտահայտչական արժեք ունեցող այս կառուցվածքներում նպատակի ուր շաղկապով սկսվող մասը անուղղակիորեն հետևանքի նշանակություն է ստանում, իսկ գլխավոր մասը՝ պատճառի. օրինակներ՝

Չէ որ ինքը՝ ծղրիղը երբեք ոչ մեր է տեսնում, ոչ ձագ, ուր սովորած լինի, փորձով գիտենա (ՀԹԵԺ, 3, 96): Եղանակը չբացվեց, ուր գնայինք դաշտերը զբոսնելու: Մենք մեռն՝ ենք, ուր մեղրածորցին մեր գլխին դեկավար դառնա (ՆԶԶ, 28): — Մեքենան պատրաստ է, ուր քաղաք գնանք... (ՀՔ, 75):

Այս բարդ նախադասություններում ազատորեն հնարավոր է օգտագործել ուստի շաղկապը (օրինակ՝ «Եղանակը չբացվեց, ուստի չենք կարող գնալ դաշտերը զբոսնելու»: «Մեքենան պատրաստ չէ, ուստի չենք կարող գնալ քաղաք»):

2) Ստորադաս մասում արտահայտվող ենթադրությունը չի կարող իրականանալ գլխավոր նախադասության ենթակային վերագրվող հատկանիշի ուժեղ դրսևորման պատճառով: Նկատելի է, որ ստորոգելիական վերագրիին կից օգտագործվում են բավական, բավականաչափ և հատկանիշի չափ ու աստիճան նշող այլ բառեր: Ուր՝ շաղկապի այս կիրառությունները գրքային ոճ են տալիս խոսքին: Բերենք մի օրինակ՝ «Պ. դր-նեգրպելիսը տակավին բավականաչափ ազնվական էր, ուր վախենար անհավասար ամուսնությունից (ՕԴԲԽՊ, 46—47)»:

1 Այս կառուցվածքի նախադասություններում, ինչպես տեսանք, մեծ մասամբ օգտագործվում է որպեսզի շաղկապը:

3) Միայն չափածոյում է հանդիպում նպատակի ու շաղկապի համեմատական կիրառութիւնները նախադասութեան համադրո անդամներից յուրաքանչյուրի առաջ, ինչպես՝ «Իմ թիթեռ բալիկ, դու աշխարհ եկար, Որ մանկութեանս կարոտանքն առնեմ... Որ թիթեռներին, Որ թռչնակներին, Որ առվակներին իմ գիրկը կանչեմ... (ՀԾ, 138):

Ստորագաս նախադասութեան մեջ ըղձականի փոխարեն անցյալի վաղակատար ժամանակն է օգտագործված Թումանյանից վերցրած հետեյալ օրինակում՝ «Վա՛յ գետինն անցնենք,—ճշաց խորթ մերը, Թող դուք կորչեիք հորթերի տեղակ, Անտակ ձորի մեջ, անժած քարի տակ, Մի արջ պատահեր, մի գազան մի գել, Որ չէի տեսել ձեր շուքը մեկ էլ... (ՀԹԵ, 1, 213):

4) Որ շաղկապով կապակցվող մասը, սերտ կապի մեջ լինելով գլխավոր նախադասութեան որևէ անդամի հետ, նշում է, թե ի՛նչ նպատակի է հատկացված, կամ ի՛նչ նպատակի է ծառայում հիշյալ անդամով արտահայտված առարկան կամ անձը¹. օրինակ՝ «—Կանչեցե՞ք ասա՛վ, իմ զորքը բոլոր. Հազար հազար մարդ, որ փողեր հընչեն, Հազար հազար մարդ, որ թըմբուկ զարկեն... (ՀԹ, 240):

Սովորաբար նպատակի երկրորդական նախադասութիւններին գլխավորում հարաբերյալներ չեն համապատասխանում: Սակայն երբեմն գլխավորում հանդես են գալիս այն բանի համար, նրա համար հարաբերյալները, որոնց օգտագործմամբ նպատակի նշանակութիւնն ընդգծվում է: Հարաբերյալի և որ շաղկապի սերտ կապը երբեմն հասնում է այն աստիճանի, որ նրանք հանդես են գալիս որպէս շաղկապական մեկ ամբողջութիւն կազմող կապակցութիւն, ինչպես՝ «— Հապա ինչո՞ւ քո երեխաներն էս տեսակ տարօրինակ կերպարանք են առել, որ իսկի նման չի մեր կերպարանքին: —Նրա համար, որ ինձ օգնեն, հաց աշխատենք, ապրուստ անենք (ՀԹԵ, 2, 367):

Որ շաղկապով կապակցվող նպատակի երկրորդական

¹ Այս կիրառութեամբ տարածված է նաև. որպէսզի շաղկապը:

նախադասությունը երբեք առաջադաս գործածություն չունի: Նկատելի է նաև, որ նա ստորադասի կազմում միշտ նախադաս է հանդես գալիս (Պայմանի և ժամանակի նշանակությունամբ կիրառվելիս ռ-ը հաճախ միջադաս է):

Չլինի ԹԵՆ—նպատակի յուրահատուկ նշանակություն ունի այս հարադրական շաղկապը, երբ իրենով կապակցվող նախադասությունը նշում է այնպիսի մի իրողություն, որի իրականացումը ցանկալի չէ: Բարդ ստորադասական այս կառուցվածքի նախադասություններում շլինի թե շաղկապը ռ-պեսզի-ով փոխարինելիս երկրորդական նախադասության ստորոգյալը պարտադիր կերպով ժխտական ձև է ստանում. օրինակ՝ «Ինքը մեր ռայկոմի անդամը չէր, բայց շատ էր նման այն հովվին, որը գիշեր ցերեկ պտտվելով իր հոտի շուրջը, հսկում է նրան, շլինի թե մառախուղին գայլը փախցրնի ոչխարներից մեկն ու մեկին (=ռպեսզի մառախուղին գայլը չփախցնի ոչխարներից մեկն ու մեկին (ՀՀԵ, 447)»:

Այս հարադրական շաղկապի օգտագործմամբ նշվում է նաև երկյուղ՝ նշվող փաստի հնարավոր իրականացման վերաբերյալ:

ԻնՉ է ԹԵՆ—Այս շաղկապը, որ հանդիպում է գերազանցապես պարզ ժողովրդական լեզվում, արտահայտվող նպատակը ներկայացնում է որպես ոչ կարևոր, ինչպես՝ «էն փողը, որ խարջելու ես, թե ինչ ա՝ (=ինչ է թե) տանդ վրա մի էտած ալեւացնես, լավն էն ա, որ խարջես ու էս բեխի գրւխումը ուսում ու գիտակցություն մտցնես (Մուր., 4, 100—101): Կարծես նույնիսկ ծաղր է արտահայտվում նկարագրվող նպատակի վերաբերյալ: Հանդիպում է նաև ինչ է ձևը, օրինակ՝ ...Գիտնականները հազար ու մի տեսակ փորձեր են անում, քիմիական տեսակ-տեսակ պարարտանյութեր են օգտագործում, թմբերը լարային սիստեմի են վերածում, ինչ է հեկտարից 200—250 ցենտներ խաղող ստանան (Ա. Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, Եր., 1958, 322—332): Այս օրինակում էլ ընդգծված ձևը ունի «միայն թե» նշանակությունը:

Ամփոփելով այս բաժինը, պետք է նշել, որ թեև արդի հայերենի նպատակի շաղկապները սակավաթիվ են (հիմնա-

կանում ուրպեսզի և որ), սակայն նրանք լիապես բավարար են նպատակային հարաբերությունների արտահայտման համար: Երբ այդ հարաբերությունների հետ զուգընթաց հարկ է զգացվում նշել նաև իմաստային այլ երանգներ, ապա օգտագործվում են շիճի թե, ինչ է թե, միայն թե (այս վերջինիս նպատակային երանգով կիրառությունների մասին կխոսենք «Պայմանի շաղկապներ» բաժնում) հարադրական շաղկապներ:

3. ՊԱՏՃԱՌԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Արդի հայերենը հարուստ է պատճառի հարաբերություն: արտահայտող շաղկապներով, որոնք, ըստ իրենց բուն նշանակության, բաժանվում են երկու կարգի. 1) Բուն պատճառի հարաբերություն արտահայտող, 2) Հիմունքի հարաբերություն արտահայտող:

Առաջին կարգի շաղկապների օգտագործմամբ ստորադաս մասում նկարագրվում է այն պատճառը, որով պայմանավորված է գերադաս մասում նկարագրված իրողության կամ եղելության առաջացումը: Երկրորդ կարգի շաղկապներն օգտագործմամբ ստորադաս մասում ներկայացվում է այնպիսի մի փաստ, որի առկայությամբ հիմնավորվում, հաստատվում է գլխավորում նկարագրվող իրողության իսկությունը: Այս դեպքում արդեն, ինչպես տեսնում ենք, պատճառը չի դրսևորվում, այլ հիմունքը:

Բուն պատճառի և հիմունքի հարաբերությունների արտահայտման համար արդի հայերենի ամենագործածական շաղկապներն են ուռվինետե-ը և քանի որ-ը: Թեև առաջինը տարածված է բուն. պատճառի, իսկ երկրորդը՝ հիմունքի հարաբերությունների արտահայտման դերով, սակայն այդ շաղկապները կարող են այդ երկու նշանակություններն էլ արտահայտել: Նկատելի է, որ բուն պատճառական կիրառությունների ժամանակ ստորադաս նախադասության գործողությունը, որպես կանոն, կամ նախորդում է գլխավորի գործո-

դուժյանը, կամ էլ նրա հետ միաժամանակ կատարվում¹, որի հետևանքով էլ նշվում է ներգործող բնույթի պատճառ: Մինչդեռ հիմունքի հարաբերությունն արտահայտող նախադասություններում մեծ մասամբ հակառակ երևույթ է նկատվում: Այս երկու տարբեր իմաստային հարաբերությունները մենք ընդհանուր անունով պատճառական ենք կոչում բոլոր այն դեպքերում, երբ կարիք չի զգացվում տարբերակել այդ նշանակությունները:

Հայ հին քերականներից շատերը պատճառական շաղկապների որոշ կիրառություններ քննում են նաև համադասական շաղկապների բաժնում: Մեծանուն հայագետ Մ. Աբեղյանը, ի տարբերություն նախորդների, վերապահություն է անում, նշելով, թե «Գրական լեզվում ստորադասական որովհետև շաղկապը, կապելով վերջադաս պատճառական խոսքերը, հաճախ առնվում է իբրև համադասական»²:

Այժմ անցնենք պատճառի շաղկապների կիրառությունների նկարագրմանը:

ՈՐՈՎՀԵՏԵՎ—Արդի հայերեն ամենագործածական պատճառի շաղկապն է, որ հավասարապես օգտագործվում է թե բանավոր և թե գրավոր լեզվում: Տարածված է հատկապես գեղարվեստական գրականության մեջ: Այս շաղկապը արտահայտում է ինչպես պատճառի, այնպես էլ հիմունքի հարաբերություններ:

1) Պատճառի հարաբերություն—Այս իմաստային հարաբերությունն արտահայտվում է այն դեպքում, երբ այս շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունը ցույց է տալիս գլխավոր նախադասության մեջ նկարագրվող որևէ մի իրողության կամ երևույթի ծագման կամ գոյության պատճառը. օրինակներ՝

Ես ծիծաղեցի, որովհետև համաձայն էի Իշխանի հետ.

1 Եթե նույնիսկ գլխավոր և երկրորդական նախադասություններում նույն բայական ժամանակներն օգտագործվեն, ապա գործվածք միշտ էլ հասկացվում է, թե ո՛ր մասի գործողությունն է առաջ կատարվել:

2 Մ. Աբեղյան, Աշխարհարարի շարահյուսութիւն, Վազաբաբար, 1912, 337:

բայց միևնույն ժամանակ ավելացրի (Մուր., 49): Նա խար-
խափելով էր գալիս, որովհետև ներսի տաքից գոլորշի էր
նստել ակնոցի հաստ ապակիներին (ԱԲՆ, 242): Նրանք ըմ-
բոստացել են ռեկտորի դեմ, որովհետև նրանց հետ վարվում
են ինչպես ճորտերի հետ (ԱԲՆ, 590): Այդ փողոցով էին անց-
նում և գյուղերից եկող սայլերը, որովհետև հին ճանապարհը
նորոգում ու լայնացնում էին (ԱԲՆ, 185):

2) Հիմունքի հարաբերությունը—Այս շաղկապի օգտա-
գործմամբ ստորադաս նախադասությունը հիմունքի հա-
րաբերություն է արտահայտում սովորաբար այն դեպքում,
երբ գլխավորում առկա են հավանաբար, ըստ երևույթին.
գուցե, երևի, երևում է, կարծես, անշուշտ և ենթադրական կամ
հաստատական նշանակությամբ այլ բառեր. օրինակներ՝

Երևում է, որ գիշեր է, որովհետև ներսը, սեղանի վրա
վառվում է մոմը (ԱԲՆ, 611): Ես... այն աստիճան ակնա-
պիշ էի նայում, որ նա կարծես նկատեց, որովհետև ելույթիցս
անմիջապես հետո ինձ կանչեց սեղանի մոտ, մի բաժակ գա-
րեջուր հրամցնելով (Եր., 1958, նոյ. 13, 2): Հավանաբար
Սուրիկը հիվանդացել է, որովհետև այսօր դպրոց չի եկել:
Ըստ երևույթին աշակերտը շատ վատ արարք է գործել, որով-
հետև բոլորը նրան նայում են հանդիմանանքով:

Առաջին օրինակում, ինչպես տեսնում ենք, երկրորդա-
կան նախադասությամբ չի նշվում գիշերվա առաջացման
պատճառը, այլ մոմի վառվելու կապակցությամբ հաստատ-
վում կամ հիմնավորվում է գիշեր լինելը: Այդպես են նաև
մյուս օրինակները:

Պատճառաբանելու կամ հիմնավորելու անհրաժեշտու-
թյունը հաճախ առաջանում է նրանից, որ գլխավոր նախա-
դասության մեջ նշվում են գործողության հետ կապված դա-
նազան հանգամանքներ, ինչպես «Ես թիավարում էի և լը-
սում... Ես մինչև անգամ դանդաղ էի թիավարում, որովհետև
շատ էի ուզում լսել նրանց խոսակցությունը (ԱԲ, 659)»: Այս-
տեղ ստորադաս մասը նշում է ոչ թե ընդհանրապես թիավա-
րելու, այլ դանդաղ թիավարելու պատճառը: Համեմատիր
նաև՝

Դա սկիզբն էր, հսկայական աշխատանքների սկիզբը-
հսկայական, որովհետև տրամվայի երթուղին ունենալու է 4
կիլոմետր երկարություն, որովհետև միաժամանակ հիմնո-
վին բարեկարգվելու է նոր Արեշի 13-րդ փողոցը... (Ծրև.,
1958, նոյ. 27, 1): ...Լեհներ կառքից իջավ կենդանաբանական
այգու մոտ և շավիղով գնաց դեպի լեռներն ու սահարանը:
Հաստատ իմանալով, որ Կիտիին կգտնի այնտեղ, որովհետև
Շչերբացիկների կառեթը տեսավ գլխավոր մուտքի մոտ
(ՏԱԿ, 1, 40):

Յուրահատուկ նշանակություն ունի որովհետև շաղկապը
հետևյալ օրինակում. «Չարություն մի՛ անիր, որովհետև
հայրդ կբարկանա»: Այստեղ որովհետև շաղկապը նշանակու-
թյամբ մոտենում է «թե չէ» շաղկապին. գլխավոր նախադա-
սությունը նշում է յուրահատուկ «պայման» իսկ երկրորդա-
կանը (որի ստորոգյալը սլավոնական եղանակով է արտա-
հայտվում)՝ այն հետևանքը, որ կառաջանա այդ «պայմանը»
չկատարելու դեպքում:

Այժմ խոսենք այս շաղկապի մի քանի այլ կիրառություն
ների մասին:

ա) Որոշ ստորադասական շաղկապների նման որովհե-
տև շաղկապն էլ կարող է օգտագործվել ստորադասական կա-
պակցությունից դուրս՝ ավարտված նախադասությունների,
պարբերությունների, խոսքի տարբեր հատվածների միջև,
ինչպես նաև երկախոսություններում: Նման դեպքերում դըր-
սեորվում է միայն նրա բառական արժեքը (պատճառի նշա-
նակությունը) և ոչ թե ստորադասություն նշելու նրա քերա-
կանական-շարահյուսական հատկանիշը, օրինակներ՝

Այժմ թշնամին եկել, հասել էր հայոց երկրի սահմանա-
գլխին: Եթե այժմ նա չդիմեր յուր նպատակին, այնուհետև
ամեն հույս պետք էր կորած համարել: Որովհետև նա կանց-
ներ սահմանը, ոտք կդներ պարսկական հողի վրա, և գործը
կդժվարացներ (ԲՄ, 369): — Կարևոր չէ... Գիտե՞ս ինչու եմ
եկել: Որովհետև չեմ կարող առանց քեզ: Փորձեցի և չեմ կա-
րող... (Ի. Էրենբուրգ, Իններորդ ալիք, Երև., 1955, 617):
— Ճակատագիրս է այդպես, քննադատները միշտ էլ ենթարկ-

վում են ահաբեկման...—Որովհետև լեզուն իրենց չեն պահում (ՀՔ, 23):

բ) Հետաքրքրական են պարզ ժողովրդական խոսքում երբեմն հանդիպող որովհետև շաղկապի վերջադաս կիրառությունները. կարծես խոսողը քիչ ուշացած մտաբերում է նախորդ մասի հետ պատճառական կապը նշելու անհրաժեշտությունը: Բերենք մի օրինակ՝

«—Ինչո՞ւ չեկար ժողովին: —Դաս ունեի որովհետև»:

գ) Հայերենին խորթ են և հիմնականում ռուսերենի թարգմանական գրականության ազդեցության արդյունք են որովհետև շաղկապին զուգահեռ պատճառի նշանակությունը շեշտող հարաբերյալների (այն պատճառով, նրա համար և այլն) գործածությունը գլխավոր նախադասության մեջ. օրինակ՝ «Նա որոշեց նստել միայն այն պատճառով, որովհետև բոլորովին ուժասպառ էր եղել (ՀՄԱԸ, 149)»: «Նրանք չեն կարող ինձ հաղթել նրա համար, որովհետև ես բարձր տեղ եմ—գոմի կտրանը (ՍԶ, 37)»:

դ) Որովհետև շաղկապի գործածության ժամանակ ստորադաս մասը մեծ մասամբ վերջադաս դիրք է զբաղում գրված խավորի նկատմամբ: Նրա առաջադաս գործածության դեպքում պատճառի հետ միաժամանակ հատուկ կերպով շեշտվում է նաև պատճառից բխող հետևանքի նշանակությունը: Այդ նշանակության ընդգծման համար հաճախ օգտագործվում են ուստի, ապա, այդ պատճառով բառերը: Բերենք մի երկու օրինակ՝

Ես կրկնեցի միևնույն խնդիրքը: Որովհետև հրապարակով երգվել էր, չկարողացավ զանց առնել (Րաֆ., 263): Որովհետև մանկությունից նա ընդունակ էր նկարչության և որովհետև նա չգիտեր, թե ինչպես ծախսի իր դրամը, սկսեց հավաքել գրավյուրներ... (ՏԱԿ, 2, 43): Եվ որովհետև այդ բոլորը փաստական նյութերի վրա գրված ուսումնասիրություններ չեն, այլ ժամանակակցի ու ականատեսի կենդանի տպավորություն, ապա արևմտաեվրոպական թատրոնի պատմությունը հետազոտողների համար դրանք իրավունք են շահում:

դասվելու այնպիսի վկայությունների կողքին, որոնց հեղինակները հռչակված դեմքեր են... (ՎՓՀՀ, 1, 4):

Որովհետև շաղկապով սկսվող ստորադաս մասը միջադաս գործածություն կարող է ունենալ բոլոր այն դեպքերում, երբ կարիք է շագացվում ընթերցողի կամ ունկնդրի ուշադրությունը հրավիրել ստորադասով ընդմիջված գլխավոր նախադասության երկրորդ մասի բովանդակության վրա՝

Ամենից առաջ նա մարդ ուղարկեց Նսրրի մոտ և հայտնելով նրան յուր դիտավորությունը, խնդրեց օգնել իրան, եթե հարկը պահանջե: Նսրրը, որովհետև հենց այդպիսի առիթ էր որոնում յուր հին վրեժը լուծելու համար, սիրով ընդունեց «բռնավորի» խնդիրքը (Մուր., 431):

ե) Իրենց բնույթով հաճախական պետք է համարվեն որովհետև շաղկապի հետևյալ կիրառությունները:

Բացի այդ, պաշարյալները երկյուղով տեսան, որ փայտակերտ աշտարակն ու ահագին կրիան, որոնց նախընթաց օրը թողել էին պարիսպներից հեռու (որովհետև հույս ունեին ավելի թեթև գործիքներով պարիսպները փլցնել), արդեն մոտենում են... (Բաթ., 276): Տիրեց լուռություն, որի միջոցին Վոռնսկին, — որովհետև պետք էր մի բանի նայել, — նայեց լեկինին, նրա ոտներին, նրա համազգեստին, հետո նրա դեմքին... (ՏԱԿ, 2, 314): Ավտոն, որ գիշերը մնաց ծառի տակ, որովհետև գավառական քաղաքում դեռ գարած չկար, հաջորդ առավոտ նորից կանչեց զիլ, ոնց որ ձին էր վրնջում հնձվորին սպասելիս (ԱԲԵ, 399):

Պատճառի նշանակություն ունեցող հարակցական այս նախադասությունները, որոնք տարածված են նաև համադասական կապակցության մեջ և, բայց և այլն շաղկապների օգտագործմամբ, օրգանապես կապված չեն ընդհանուր ասույթի հետ: Կարծես խոսքի ընթացքում առաջացած մի շատ կարևոր պատճառաբանություն կամ հիմնավորում՝ մոռացվելու երկյուղից, իսկույն նշվում է, անկախ այն բանից, թե տվյալ շարահյուսական կառուցվածքում նրա գործածությունը տեղին է, թե ոչ: Նկատելի է, որ բերված օրինակներում

այդ նախադասությունները առանձնանում են ինչպես ինտու-
նացիայով, այնպես էլ արտասանական դադարով:

ՔԱՆԻ ՈՐ—Եթե անցյալ դարի վերջերին դեռ չէին դադարել այս շաղկապի ժամանակի նշանակությամբ կիրառությունները¹, ապա XX դարում նա արդեն ամրաքավ լեզվում որպես պատճառի (հիմունքի) շաղկապ:

Ի տարբերություն ուրվմետև շաղկապի, որը, ինչպես նշեցինք, ավելի շատ հանդիպում է գեղարվեստական գրականության մեջ, այս շաղկապը լայնորեն տարածված է նաև գիտա-տեխնիկական, քաղաքական, հրապարակախոսական գրականության մեջ: Դա բացատրվում է նրանով, որ այդ բնույթի գործերում անհրաժեշտություն է զգացվում պատճառաբանելու կամ հիմնավորելու առաջ քաշված այս կամ այն դրույթը, եզրակացությունը, հետևությունը:

Քանի որ շաղկապի օգտագործմամբ կապակցվող մասը կարող է թե առաջադաս և թե վերջադաս դիրք ունենալ գրվածքի նկատմամբ: Առաջադաս գործածության դեպքում հատուկ կերպով շեշտվում է պատճառը (կամ հիմունքը) և նրանից բխող հետևանքը (կամ հետևությունը): Այդ նպատակով շատ հաճախ վերջադաս գլխավորը սկսում է ուստի, ուրեմն, ապա և այլ շաղկապներով:

ա) Առաջադաս գործածությունների օրինակներ.

...Քանի որ թուղթը կնքված էր կնիքով, գրված էր պատշաճ ձևով, նախագահը բացեց մտից մատչյանը և գրեց... (ԱՔԵ, 85): Քանի որ մենք հասկանում ենք իրար, ուստի զուր ժամավաճառություն է այսպիսի խոսակցություններով զբաղվելը (ՆԴ, 215): Քանի որ երկրի երրորդ սովետական արբանյակն ունի հսկայական քաշ՝ 1327 կիլոգրամ, ապա պարզ է, որ դա հեշտությամբ կարող է փոխարինվել նույնքան քաշ ունեցող հրթիռով (Եր., 1958, օգ. 9: 3): Քանի որ տարվա այդ եղանակին գյուղի ճանապարհի վրա անցորդներ սակավ

¹ Համեմատիր, օրինակ. «—Լո՛ր, անհրես, Լո՛ր, քանի որ (= քանի դեռ) խելքս գլխիս է (Շիրվ., 270)»: «Սուտ էր: Ու միշտ քանի որ կա Շահ ու գերի, ըստրուկ ու տեր, Զի լինելու երկրի վրա Ոչ շիտակ խոսք, ոչ կյանք, ոչ սեր... (ԶԹ, 136)»:

էին լինում, դրա համար էլ ես ստիպւած էի ավելի և ավելի զբաղվել Կոմունաշենի հեռապատկերով (ՄԱՊ, 6):

բ) Վերջադաս գործածութեան օրինակներ.

Օրհասական ժամը մոտենում էր, ֆանի որ թանձր, այլաճանաչ հրեշի նման մոտենում էր կույտը (Բաֆ., 4): Հըրթիոր պայթել է արձակումից 32 վայրկյան անց, ֆանի որ անմիջապէս կտրուկ շեղվել է տրված ուղղութիւնից (ՍՀ, 1958, հոկտ. 12, 4):

Երբ առաջադաս գլխավոր նախադասութիւնը, որի ստորագլխին արտահայտւում է ըղձական եղանակով, հարցական բնույթ ունի, ապա ֆանի որ շաղկապը նշում է այն հիմունքը, որը պատճառ է հանդիսանում տվյալ հարցի առաջացման համար. օրինակ՝ «Ի՞նչպէս չխոսե մի մայր, ֆանի որ նրա սիրեցյալ զավակի վրա կարող է ծանրանալ հայրական անեծքը (Շիրվ., 36)»: «Ես որտե՞ղ գիշերեմ, ֆանի որ այս քաղաքում ոչ մի ծանոթ չունեմ»:

Այս կառուցվածքի բարդ ստորադասական նախադասութիւններում կարող են հանդես գալ նաև եթե և երբ շաղկապները, որոնց օգտագործմամբ հիմունքի ընդհանուր նշանակութիւնը պայմանի և ժամանակի լրացուցիչ երանգ է ստանում:

ՈՐ—Բացատրական շաղկապներին նվիրված բաժնում մենք արդեն խոսել ենք այս շաղկապի պատճառաբացատրական կիրառութիւնների մասին: Այստեղ կրեւենք միայն այնպիսի օրինակներ, ի տեղ պատճառի նշանակութիւն արտահայտող հարաբերւոյալները, բաժանվելով գլխավոր նախադասութիւնից, միացել են որ շաղկապին, կազմելով բաղադրյալ շաղկապ (թեպետ և մեծ մասամբ ստորակետով բաժանված): Նման ձևերը, սակայն, խորթ են արդի հայերենին և հազվադեպ են հանդիպում: Բերենք մի քանի օրինակներ՝

Գալով տուն, նա բարկացավ կնոջ վրա, այն բանի համար, որ կինը չէր կարողանում վարվել դրամ պահանջող տանտիրոջ հետ (ՏԱԿ, 2, 47): Սակայն Մացուլան առայժմ չի արդարացնում իտալական գործարարների հույսերը: Այն

պատճառով, որ (=որովհետև) նրա խաղընկերներն են այնպիսի արդյունավետ ֆուտբոլիստներ, ինչպիսիք են երկրի հավաքականի անդամներ Գալին, Դանովան, Մացուլան չի կարողանում գոլ խփել (ՀՖ, 1958, դեկտ. 2, 4):

Բանավոր խոսակցական լեզվում կարելի է հանդիպել նրա համար որ բաղադրյալ շաղկապին. «Երևի հարցնեք, թե ինչո՞ւ է այդպես ստացվում: Նրա համար, որ մեր քաղաքում տրանսպորտը լավ չի աշխատում (Ավ., 1959, փետր. 14, 3)»: «էլ չղնացինք, նրա համար որ հոգնած էինք»:

Այժմ քնենք որ շաղկապի հիմունքի նշանակությամբ փրառությունները:

ա) Որ շաղկապը հիմունքի նշանակություն է արտահայտում, երբ իրենով կապակցվող ստորադաս մասը, որի մեջ նկարագրվում են կատարված կամ կատարվող իրողություններ, առաջադաս դիրք է գրավում: Որ շաղկապի այս կիրառությունները շատ հարազատ են պարզ ժողովրդական կենդանի լեզվին, որի պատճառով առաջադաս էն բացառապես՝ գեղարվեստական գրականության մեջ. օրինակներ՝

— Չնայած շատ եմ զբաղված, բայց որ պարտկազմակերպությունը հանձնարարեց ղեկավարել խմբակը, հանձն առա... (Եր., 1959, հունվ. 13, 2): Որ այդքան խնդրում ես, կաշխատեմ անպայման ներկա լինել: — էս հասակին, որ սավախ չունի մենակ գնալու ուրեմն սրտոտ տղա պիտի լինի... (ԱԲՆ, 417): Բա էն մարդին, որ գելերը կերել էին՝ ձեզ էդ բոլորն ով պատմեց... (ՀԹՆ, 1, 403):

Այս կառուցվածքի բարդ նախադասություններում հաճախ օգտագործվում է նաև եթե շաղկապը, որի գործածության մեջ հիմունքի նշանակությունը բարդանում է պայմանի երանգով, երբեմն այն աստիճան, որ դժվար է լինում որոշել հիմնական նշանակությունը: Նկատելի է նաև, որ սահմանական եղանակի փոխարեն ըզձականի գործածությունը ստորադաս նախադասության մեջ հիմունքի հարաբերությունը պայմանի է փոխում (օրինակ՝ «Որ (=քանի որ) գալիս ես ինձ հետ, կպատմեմ քեզ այդ դեպքը» և «Որ (=եթե) գաս ինձ հետ, կպատմեմ քեզ այդ դեպքը»):

Այս երևույթը վառ ապացույց է այն բանի, որ բազմիմաստ շաղկապների իմաստային այս կամ այն կիրառությունը սերտորեն կապված է ամբողջ նախադասության կառուցվածքի, կապակցվող մասերի շարադասության, բայական եղանակների ու ժամանակների, վերջապես բարդ նախադասության ամբողջ լեզվական ատաղծի հետ: Այս հանգամանքն է անշուշտ առիթ տվել պնդելու, թե շաղկապները լոկ քերականական մասնիկներ են, զուրկ բառական արժեքից: Բայց մենք արդեն ասել ենք, որ այս երևույթը հատուկ է միայն բազմիմաստ շաղկապներին, այն էլ ոչ բոլորին, մինչդեռ շաղկապների մեծ մասը հանդես է գալիս որոշակի իմաստային կիրառություններով՝ նշանակությունների փոփոխման տեսակետից այդպիսի կախման մեջ չլինելով բայական եղանակներից, ժամանակներից, կապակցվող մասերի շարադասությունից և այլն:

Յուրահատուկ հիմունքի նշանակություն է արտահայտում ու շաղկապը, երբ առաջադաս գլխավոր նախադասությունը հարցական է: Այդ կառուցվածքի բարդ ստորադասական նախադասություններում արտահայտվում են դժգոհություն, անբավականություն և դարմանք՝ ստորադաս մասում նկարագրվող իրողությունների նկատմամբ. օրինակներ՝

Տանը ջուր չկա՞ր, ու էս անձրևին աղբյուրը զնացի՞ր... (ՍԶ, 61): Հացի ու ջրի կարո՞տ է մնացել, ու այդպիսի միջոցների է դիմում (ՆԴ, 113): — Ի՞նչ ես ուզում ինձանից, Ո՞վ քեզ կանչեց, ու եկար (ՆԶ, 175):

Հետաքրքրական է նշել, որ երկրորդական նախադասությունը կարող է հետևանքի երանգ էլ ունենալ, եթե հարցի պատճառը իրոք երկրորդական նախադասությամբ արտահայտված իրողությունը լինի (այսպես, երկրորդ օրինակը կարելի է ընկալել որպես «Հացի ու ջրի կարոտ է մնացել, ուստի այդպիսի միջոցների է դիմում»):

բ) Ու շաղկապով կապակցվող վերջադաս երկրորդական նախադասությունը կարող է այնպիսի բովանդակություն ունենալ, որ հիմք հանդիսանա գլխավորի մեջ ներկայացվող համապատասխան մի հետևության կամ եզրակացության

համար. օրինակ՝ «—Ուրեմն մի բան կա, որ քո մայրը լրտեսներ է դնում—ասաց Մուշեղը, և նրա թախծալի դեմքը ընդունեց ավելի մոռյալ կերպարանք (Բաֆ.)»։ «Երևի մարդ ու կին շատ բարձր ձայնով էին վիճում, որ գրավեցին զբոսում եղողների ուշադրությունը (Շիրվ., 277)»։ Նկատելի է, որ այս օրինակներում որ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները կարող են դիտվել նաև որպես հետևածանքի յուրահատուկ երանգ ունեցող նախադասություններ (Ուրեմն մի բան կա, որ (= ուստի) քո մայրը լրտեսներ է դնում...)։

Համեմատիր նաև՝ «Նա հիվանդ է, որ չի եկել դպրոց»։ Փաստորեն հիվանդ լինելու պատճառով է, որ նա չի եկել դպրոց։ Պետք է ասել, որ նման դեպքերում տրամաբանական բուն հետևանքը հիմունքի ձևական արժեք ունեցող ստորադաս նախադասությունն է արտահայտում։ Հետևանքի երանգով նման իմաստային կիրառություններ ունեն նաև, ինչպես տեսանք, եքե, քանի որ շաղկապները։

ԱՅՆՔԱՆ—Այս բառը արդի հայերենում սկսել է ձեռք բերել պատճառի շաղկապի կիրառություն։ Սրա օգտագործմամբ առաջադաս գլխավոր նախադասությամբ տրվում է այն հետևությունը, որը բխում է ստորադաս մասում նկարագրվող որևէ հատկանիշի զրոսերման շարժից ու աստիճանից. օրինակներ՝

Միքայելը ևս կորցրել է իր գլուխը՝ այնքան դերասանուհին հափշտակել էր նրան իր քաղցր, իմաստալի ժպիտներով և ձայնի զրգռիչ հնչյուններով (Շիրվ., 89)։ Ինչպես խոշոր էր գլուխը, այնպես և խոշոր էին աչքերը, որոնց վերեր, սակայն, կարծես հոնքեր չկային—այնքան բարակ և աննկատելի էին այդ հոնքերը (ՆԳ, 10)։ Մըջնոցի վրա էլ ոտք չի դնում, այնքան քնքուշ սիրտ ունի (ՀՔՄՈԻ, երև., 1946, 45)։

Հիշյալ իմաստային հարաբերությունը իր շաղկապական արտահայտությունն է գտել որպես շաղկապ ձևավորված այնքան որ հարադրության մեջ, ինչպես՝

Նա երբեք չէր տրտնջում. հաշվող էր պառավ աղջկա

նման, և նմանում էր մի ժլատի, այնքան որ մեթոդով էր շարժվում (ՕԴԲԽՊ, 246)»:

Երբեմն հիմունքի նշանակություն է արտահայտում նաև այնպես բառը. «Կարծես քարերի տակից էին բուսել, այնպես¹ անակնկալ էր նրանց երևալը (ԱԲՆ, 555)»:

Այնքան բառի կիրառություններում ևս նկատելի է հիմունքի դրսևորման այն յուրահատկությունը, երբ հետևություն պարունակող մասը իր հերթին հանդես է գալիս որպես հիմնավորումը այն բանի, որ նկարագրվում է ստորադաս նախադասության մեջ. այսպես՝ երրորդ օրինակում «մըջնոցի վրա էլ ոտք չդնելը» կարող է դիտվել որպես հիմունք՝ «քընքուշ սիրտ ունենալու»:

ԱՅՆՔԱՆ ՈՐՔԱՆ, ԱՅՆՔԱՆՈՎ ՈՐՔԱՆՈՎ (ՈՐ), ՈՐՔԱՆՈՎ ՈՐ, ԱՅՆՔԱՆՈՎ ՈՐ, ՈՐՉԱՓՈՎ ՈՐ—Ծագման ու զարգացման տեսակետից, ինչպես նաև իրենց արտահայտած հարաբերությունների բնույթով, սրանք բավական մոտ են նախորդին (այնքան):

Սրանք վերջերս են տարածվել լեզվում, կազմվելով անշուշտ ուսուցիչի ПОСКОЛЪКУ շաղկապի անալոգիայով, և օգտագործվում են պաշտոնական գրագրությունների, հրապարակախոսության, լրագրային և մասամբ էլ թարգմանական գրականության մեջ: Իրենց գործածությամբ այս շաղկապները գրքային երանգ են տալիս խոսքին: Դրանցով կապակցվող երկրորդական նախադասությունները կարող են թե առաջադաս և թե վերջադաս դիրք ունենալ գլխավորի նկատմամբ. օրինակներ՝

Այնքան, որքան² այս բոլորը լավագույն դեպքում միայն եզրակացություններ էին, ուստի, նկատի ունենալով իմ վիճակը, ևս ոչինչ չէի կարող անել (ԴԴՌԿ, 254): Այնքան որքան նրանք այս մարդկանց տալիս էին ամենօրյա ուտելիք, հետև-

¹ Որ շաղկապի հավելումը այնպես-ի վրա տարածված չէ, քանի որ լեզվում արդեն կա այնպես որ հարադրությունը՝ հետևանքի նշանակության մեջ:

² Նման պատճառական կիրառությունների ժամանակ ավելորդ է այդ հարադրական շաղկապների բաղադրիչները ստորակետով բաժանել:

վաբար նրանք էլ դրա փոխարեն տալիս էին իրենց աշխատանքը, և տեղերը ստրուկներին պահում էին լիակատար ստրկական աշխատանքի մեջ (ԴԴՌԿ, 498): «Թայմս»-ը խոստովանում է այն հսկայական տպավորությունը, որ «թույլ զարգացած երկրներում առաջ կբերեն ռուսական թվերը և ռուսական հաջողությունները», հատկապես այնքանով, որ Բանդլ ավելանում է (այդ երկրների:— իմք.) առևտուրը Ռուսաստանի հետ և մեծանում է ռուսական տնտեսական օգնությունը (ՍՀ, 1958, նոյ. 17, 4): Հայերենի մյուս հատվածներում ևս կան նման մակբայներ, որքանով որ դրանք բառապաշարային ընդհանրություն ունեն վերոհիշյալ հատվածների հետ (Ա. Քյուրբջյան, Հայերենի մակբայները (դիսերտացիա), էջ 325): Մենք անպայման անհրաժեշտ ենք զրտնում սոցիալ-դեմոկրատական թեորիայի քննադատության ազատությունը պարտիական գրականության մեջ, որչափով որ քննադատությունը չի հակասում այդ թեորիայի դասակարգային և ռեուլյուցիոն բնույթին (Լե, 5, 482):

ԵՐԲ—Երբ առաջադաս գլխավոր նախադասությունը, որի ստորոգյալն արտահայտվում է ըղձական եղանակով, հարցական բնույթի է, ապա այս շաղկապով կապակցվող ստորադաս մասը նշում է այն իրական, մասամբ նաև ենթադրական հիմունքը, որի առկայությունը խանգարում է գլխավոր նախադասության մեջ նկարագրված գործողության իրականացմանը: Այդ է պատճառը, որ տրվող հարցը դժգոհություն և անհամաձայնություն է արտահայտում. օրինակներ՝

Իսկ ինչպե՞ս օգտվել¹, երբ մայրենի լեզվով այդպիսի գրականություն չկա (ՍՀ, 1956, դեկտ. 7, 3): — Ինչո՞ւ գոմր կառուցենք, երբ պատրաստվում ենք քոչելու (ՍԽՀ, 48): Ու պղտորված խորհում էի, — էլ ինչ սրտով ես կարկաչում, երբ ծարավներն իմ ափերի Տխրում են, որ խմելու չեմ... (ՀՇ, 149):

Ինչպես նկատելի է, նշվող հարցերով ըստ էության ժխտվում են գլխավորում նկարագրվող գործողությունները:

¹ Նման դեպքերում անորոշ դերբայն ունի ըղձականի նշանակություն

Այդ է պատճառը, որ եւր շաղկապը հիմունքի նույն նշանակութիւնն է արտահայտում նաեւ այն դեպքում, երբ առաջագաս գլխավորում ժխտվում կամ որպէս անիրականանալի է ներկայացվում նկարագրվող գործողութիւնը, ինչպես՝ «Ինչ համար անհնարին է ձեզ մոտ բերել մի մարդու, եւր նա շնորհագրկվել է ձեր կողմից (ՕԴԲԽՊ, 666)»:

Պատճառական շաղկապի մասնակի կիրառութիւն ունի նաեւ եւր ու հարադիրը, երբ իրենով կապակցվող երկրորդական նախադասութիւնը արտահայտում է ստույգ, կասկածի ոչ ենթակա իրողութիւն: Նման դեպքերում պայմանն ու ճիմունքը միասնաբար են դրսևորվում, ինչպես՝

— Բայց ես շուտով մայր պետք է լինեմ,— հայտնեցի ես:— Ծի՛շտ, բացականչեց նա, հետո ինչ-որ մտախոհության մեջ ընկավ և ասաց շատ հանգիստ.— Հա՛, եւրբայդպէս է... պետք է օրինական անուն տալ մեր զավակին (ՆԴ, 325):

ՄԻ ԱՆԳԱՄ ՈՐ— Զարգացումը ժամանակ արտահայտող շաղկապական բառերից դեպի պատճառականը երևում է նաեւ հետևյալ օրինակներից.

Բայց եւր մի անգամ կապվեցավ նա իմ դստեր հետ սուրբ ամուսնության կապով, ապա պարտավոր էր պատկառմանալ աստուծո և մարդկանց բերանով օրհնված այդ միութեանը (Մուր., 122): — Դու սոփեստ ես: Ափսոս, սոփեստութիւնը հոռետեսների գլխավոր հատկանիշն է: Մի անգամ ուր լճոն ես հոռետես լինել, աշխատում ես ամեն բան թարս հասկանալ... (ՆԴ, 391):

Առաջին օրինակում ոչ այնքան հաջող, բայց երկրորդում արդեն հիմունքի նշանակութիւն արտահայտող շաղկապի կիրառութիւն ունի ընդգծված կապակցութիւնը (պայմանի երանգով), որի գոյութիւնը արդի հայերենում գուցէ և արդունք է ուսերենի раз¹ շաղկապի անալոգիայի: Այս շաղկապական կապակցութիւնը տարածված չէ արդի հայերենի ոչ գրական, ոչ էլ խոսակցական լեզվում:

Ինչ է թե՛ — Յուրօրինակ պատճառական հարաբերութիւն

¹ Ռուսերենի քերականութիւններում այդ բառը ընդունված է որպէս պայմանի հարաբերութիւն արտահայտող շաղկապ:

է արտահայտում երբեմն միայն կենդանի ժողովրդական լեզվում հանդիպող ինչ է քե շաղկապական կապակցությունը, որի օգտագործմամբ նշվող պատճառը ներկայացվում է որպես ոչ հիմնավոր՝ գլխավոր նախադասության մեջ նկարագրված հետևանքը առաջացնելու տեսակետից: Նշանակություն մոտ է «այն բանի համար, որ» բառակապակցությանը. օրինակներ՝

Ինձ հետ մարդավարի չվարվեց, այնպիսի բաներ արեց, որ ես ստիպված եղա հեռանալ: Ինձ օր չէր տալիս, ինչ է քե նրա երեսին մի քանի ցուրտ խոսք էի շարտել ժողովում (ՍԽՀ, 575): Ինչ է քե հարևանը մեքենա է գնել, ինքն էլ է ուզում ձեռք բերել: Հանդիպում է նաև քե ինչ է (ա) ձեռով՝ «Մենք էլ ուրախացել ենք, քե ինչ ա, մի պախրա կըսպանենք, կուտենք (ՀԹԵ, 1, 358):

ՄԻ ԲԱՆ ՈՐ—Ուշադրության արժանի են նաև հիմունքի նշանակությունն արտահայտող այս շաղկապական կապակցության կիրառությունները, որոնք տարածված են բացառապես ժողովրդական խոսակցական լեզվում. օրինակներ՝

«Արի մի անգամ էլ լողանանք, մի բան որ ժամանակ ունենք»: «Է՛հ, նրա համար ի՛նչ կա, կարող է և ուշ քնել, մի բան որ արձակուրդի մեջ է»:

ՄԱՆԱԿԱՆԻ ՈՐ—Արդի գրական հայերենում խիստ տարածված այս շաղկապի յուրահատկությունն այն է, որ նրա օգտագործմամբ նշվում է ոչ թե բարդ նախադասության առաջին մասում նկարագրված հետևանքի առաջացման ընդհանուր պատճառը, այլ լրացուցիչ պատճառներից մեկը միայն, սովորաբար ամենահիմնականն ու ամենաորոշողը: Այդ է պատճառը, որ նրանով կապակցվող նախադասությունը սովորաբար հարակցական բնույթ է ստանում: Այս նշանակությամբ հազվադեպ օգտագործվում է նաև նամանավանդ որ շաղկապը. օրինակներ՝

Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ը իր տեսակի մեջ կարելի է մեր բառարանագիտության պսակը համարել, բայց նրա հետ զուգահեռ անհրաժեշտ է ունենալ նաև մեր արդի հայերենի կենդանի գրական լեզվի

բառարանը, մանավանդ որ վերոհիշյալ բառարանը սպառ-վել է (Եր., 1958, հուլ. 9, 3): Թուրքիայի հասարակայնու-թյունը... հհասկանա իր թիկունքում կատարվող խաղերի բուն իմաստը, նամանավանդ որ Սովետական Միությունը և սո-ցիալիստական մյուս երկրները որևէ ագրեսիվ նպատակ չու-նեն ինչպես որևէ երկրի, այնպես էլ Թուրքիայի նկատմամբ... (ՍՀ, 1959, հունվ. 12, 4):

Մանավանդ որ շաղկապի պատճառական կիրառություն-ները չպետք է շփոթել նրա այն կիրառությունների հետ, երբ առաջին բաղադրիչը եղանակավորող բառի արժեքով է հան-դես գալիս, իսկ երկրորդը (որ)՝ սովորական բացատրական շաղկապի. օրինակներ՝

Եվ սկսվում է Ուղղիչ Տան երեկոն՝ լի աղմուկով ու կարո-տով, որովհետև օրվա այդ պահերին է մանավանդ, որ կա-լանավորներն ամենից ավելի խորն են զգում ազատագրվման ամբողջ դառնությունը (ԵԶ, 448): Նա հրճվում էր մանավանդ, որ դրոշի հետ միասին վերադարձնում էր թագավորին յուր հարազատ եղբորը (Մուր., 387):

Այս վերջին օրինակում արդեն նկատելի է պատճառի նշանակությունը: Սակայն քանի որ հեղինակը ցանկանում է հատուկ կերպով շեշտել ստորադաս մասի բովանդակությու-նը, ապա բաժանել է բաղադրիչները որպես եղանակավորող բառ և շաղկապ: Նույն այդ նախադասությունը կարելի է օգ-տագործել նաև «Նա հրճվում էր, մանավանդ որ դրոշի հետ միասին վերադարձնում էր...» ձևով, ուր արդեն բաղադրիչ-ները ձուլվել են որպես պատճառի շաղկապ:

Զի, ՎԱՍՆԶի, ՔԱՆԶի—Զուտ ոճական նպատակ է հե-տապնդում այս շաղկապների գործածությունը արևելահայ գրականում: Սրանց օգտագործմամբ խոսքին տրվում է հան-դիսավորություն և երբեմն էլ հնատիպության երանգ. օրի-նակներ՝

Կովել չենք կարող, որովհետև ասպարեզ չկա, ելնել չենք կարող, զի ճանապարհ չունինք... (Մուր., 192): «Ապրեցե՛ք, ապրեցե՛ք միմյանց հետ, երջանի՛կ արարածներ, ապրեցեք, զի սիրում եք կաթոգին, զի աստծո աջը հովանի է ձեր սիրոյն...

(Մուր., 254): Նրան ազատեցին ուժով, հակառակ իր կամքի, ինչպես և այդ անդամալուծին, վասնզի չէր ուզում փրկվել առանց փրկելու (Շիրվ., 397): Ավելի խորաթափանց անցորդներին թվում էր, թե նա խանութի վարիչ է, ֆանգի, նրանց կարծիքով, առևտրի աշխատողը միայն կարող է այդչափ ինքնավստահ կեցվածք ունենալ (Ոզնի, 1957, հոկտ.-նոյ., 14):

Երբեմն հեղինակների կողմից օգտագործվում են զուտ բարբառային շաղկապներ, որոնց ոճական արժեքը խոսքին գեղջկական գունավորում տալն է: Բերենք մի օրինակ՝ «Հիմի ուզում ենք, որ հավասար ըլենք, չունի՞ որ հիմի կարող ենք աղքատից էլ դհա ներքե ընկնենք (ԴԴ, 249)»:

Պատճառի և հիմունքի նշանակություններ կարող են արտահայտվել նաև չէ՞ որ, թե չէ հարադիր ձևերով, օրինակ՝ «Նորածիլ բողբոջները ցրտահարվեցին. չէ՞ որ գիշերը 10 աստիճան սառնամանիք արեց»:

Ինչպես տեսնում ենք, արդի հայերենի պատճառի շաղկապները, հանդես գալով հիմունքի և բուն պատճառի հարաբերությունների արտահայտմամբ, հարուստ են նաև իմաստային լրացուցիչ երանգներով ու մանավանդ ոճական կիրառություններով: Նկատելի է նաև, որ այս բաժնի շաղկապների մի մասը տարածվեց հատկապես վերջին մի քանի տասնամյակներում. դրանց թվին են պատկանում այնքան որքան, այնքանով որքանով, այնքանով որ, որքանով որ, մի անգամ որ, մի բան որ, ինչ է թե, այնպես, այնքան, նրա համար որ և այլն: Այս շաղկապների և շաղկապական բառերի առաջացումն ու տարածումը մեծ մասամբ արդյունք են ժողովրդական լեզվի և թարգմանական գրականության ազդեցության:

4. ՀԵՏԵՎԱՆՔԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Արդի հայերենում օգտագործվող հետևանքի շաղկապները, ըստ իրենց ծագումնաբանական կապի, բաժանվում են երեք տեսակի. 1) Գործողության հատկանիշի գաղափար արտահայտող այնպես ցուցական դերանվան և որ բացատրական շաղկապի ձուլումից առաջացած: 2) Տեղի գաղափար

արտահայտող մակբայներից ձևավորված շաղկապներ։ 3) Ժամանակի գաղափար արտահայտող մակբայներից ձևավորված շաղկապներ։ Այս վերջին երկու տեսակները տարբերվում են նախորդից նրանով, որ հարաբերյալների ձուլումից չեն առաջացել։ Խոսենք այդ տեսակների մասին առանձին-առանձին։

Մենք արդեն ասել ենք, որ երբ գլխավոր նախադասության մեջ առկա է այնպես հարաբերյալը, ապա ու շաղկապով կապակցվող բացատրական (ձևի պարագա) երկրորդական նախադասությունը ձեռք է բերում հետևանքի երանգ՝ ինչպես՝ «Նա այնպես էր նվագում, որ բոլորը հիացած էին»։ Ինչպես տեսնում ենք, տրամաբանական շեշտը ընկնում է ընդգծված ցուցական դերանվան վրա, որը, զուրկ լինելով նյութական կոնկրետ բովանդակությունից, իր բացատրությունն ստանում է երկրորդական նախադասությամբ, որը բացահայտում է գործողության հատկանիշը՝ նրանից առաջացած հետևանքը նկարագրելու միջոցով։ Պետք է նշել, որ ուսերենի, ֆրանսերենի և այլ լեզուների հետևանքի շաղկապները ևս մեծ մասամբ առաջացել են ձևի կամ շափի պարագա երկրորդական նախադասությունների կապակցմանը ծառայող լեզվական տարրերի ձուլումից։

Հարաբերյալի վերջադաս գործածությունը գլխավոր նախադասության մեջ, ու բացատրական շաղկապից անմիջապես առաջ, պայմանավորեց այնպես ու հետևանքի շաղկապի ծագումը։ Հարաբերյալի նման դիրքը ստեղծում է այնպիսի դրություն, երբ միայն տրամաբանական շեշտի առկայությունն է, որ ակնարկում է բացատրական կամ հետևանքի հարաբերություններից մեկն ու մեկի գերակշռությունը գրված գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև։ Պարզ է, որ հենց այդ շեշտով էլ պայմանավորված է ցուցական դերանվան և շաղկապի մասնատումը բաղադրիչ մասերի օրինակ՝

Տեսնելով Միքայելին, ակամա ցնցվեց այնպես, որ քիչ էր մնում բաժակը ձեռից գցել (Շիրվ., 241)։ Մեկ էլ թաքս-

տողից դուրս կգար, կմոնչար այնպես, որ արջերն էլ էին քնից զարթնում և որջերում մոռում (ԱՔՆ, 4):

Այս օրինակներում բավական է տրամաբանական շեշտի բացակայությունը հարաբերյալի վրա, որպեսզի նա ձուլվի որ շաղկապին, արտահայտելով արդեն բուն հետևանքային հարաբերություններ: Նկատելի է, որ այս դեպքում կապակցվող մասերի միջև որոշ արտասանական դադար է տրվում, որի պատճառով գլխավոր նախադասության վերջում ձայնը ոչ թե բարձրանում է, այլ իջնում, մոտենալով ասույթի ավարտ ակնարկող արտասանական տոնին. օրինակ՝ «Տեսնելով Միքայելին, ակամա ցնցվեց, այնպես որ քիչ էր մնում բաժակը ձեռից գցե»:

Գլխավոր նախադասությունից ստորակետով բաժանված լինելու դեպքում հարաբերյալն արդեն ավելի է մոտենում որ շաղկապին՝ ձուլման տեսակետից կանգնած լինելով վերջին աստիճանի վրա, ինչպես՝ «Տեսնելով Միքայելին ակամա ցնցվեց, այնպես, որ քիչ էր մնում բաժակը ձեռից գցե»:

Պետք է նշել, որ բացատրական համարվող շափի պարզա երկրորդական նախադասությունների կապակցության դեպքում այնքան հարաբերյալի և որ շաղկապի ձուլում խիստ հազվադեպ է նկատվում, թեև բավական տարածված է այդ հարաբերյալի վերջադաս գործածությունը գլխավոր նախադասության մեջ:

Երբեմն խոսակցական լեզվում հանդիպում ենք այնքան, որ շաղկապական կապակցությանը, ինչպես՝ «Նա շատ պարեց, այնքան, որ հետո հազիվ էր քայլում»: Ինչպես տեսնում ենք, բաղադրիչները այս օրինակում դեռ չեն ձուլվել որպես մի ամբողջական շաղկապ:

Տեղի նշանակության հետ կապվող շաղկապներն են ուստի, ուրեմն: Իմաստի զարգացման համար կարելի է համեմատել մաթեմատիկական գրականության մեջ տարածվող ուրաեղից բառի համապատասխան անցումը տեղի նշանակությունից հետևանքի նշանակությանը:

Ժամանակի նշանակության հետ կապվող շաղկապ է ապա-ն, որ նախապես ժամանակի մակերայ է եղել, այնուհետև

տե ժամանակի գաղափարի հետ կապվող որոշ շաղկապների նման զուգադրական-հակադրական նշանակություն է ստացել (համեմատոր մինչդեռ, այն ժամանակ, երբ և այլն): Այս շաղկապի ժամանակի նշանակությունից հետևանքի նշանակության զարգացումը տարօրինակ չպետք է թվա, քանի որ գործողությունների հաջորդականությունները սովորաբար ուղեկցվում են հետևանքի հարաբերությունների արտահայտմամբ: Զե¹ որ որևէ հետևանքի համար առիթ հանդիսացող իրողությունը պետք է ավելի շուտ կատարվի, քան այն հետևանքը, որը բխում է նրանից¹: Պատահական չէ, որ այն ժամանակ բառակապակցությունը ևս հետևանքի երանդունի, երբ օգտագործվում է առաջադաս դիրք ունեցող պայմանի երկրորդական նախադասության հետ, օրինակ՝ «Ու որոշում եմ՝ կանգնել նրանց տան մոտերքը կամ անցողաբժանել դիմացի մայթի վրա. եթե տեսնեմ հյուրերը գալիս են, այն ժամանակ (=ապա) ես էլ կմտնեմ (ՍԶ, 358—9)»: Հենց հետևանք, հետևություն բառերը իրենց բառական ստուգաբանությամբ կապվում են ժամանակի հաջորդականության գաղափարի հետ:

Հետևանքի շաղկապների շարահյուսական առանձնահատկություններից մեկն այն է, որ նրանցով կարող են կապակցվել ինչպես գլխավոր, այնպես էլ երկրորդական նախադասություններ, մի հատկանիշ, որից զուրկ են մյուս ստորադասական շաղկապները: Երբ բարդ նախադասության բաղադրիչ մասերից առաջինը սկսվում է պատճառական որևէ շաղկապով, ապա հետևանքի շաղկապով սկսվող հաջորդ նախադասությունը դիտվում է որպես գլխավոր: Այդ այն պատճառով, որ նման բարդ ստորադասական նախադասությունների մեջ լրացական ֆունկցիայի տեսակետից շեշտվում է պատճառը, իսկ որպես գերադաս հանդես է գալիս հետևանքի նշանակություն ունեցող գլխավորը. օրինակ՝ «Ուրվհետև ամբողջ օրը պարսպակնով հոգնել էի, ուստի երե-

1 Եվ շաղկապի հետևանքի երանդը ևս արտահայտվում է այն դեպքերում, երբ նրանով կապակցվող երկրորդ համադաս նախադասության գործողությունը հաջորդում է առաջին համադասի ղեկավարությանը:

կոյան դուրս եկա դբոսնելու»։ Ուստի շաղկապով սկսվող մասը ներկայացվում է որպես հաղորդման հիմնական նպատակը, որի նկատմամբ երկրորդական նախադասությունը սոսկ պատճառաբանող, հիմնավորող նշանակություն է ստանում։ Սակայն բավական է հանել ուղղակի շաղկապը և ահա հարաբերությունը փոխվում է, ուստի և թուլանում է երկրորդական նախադասության կախյալ լինակը։ Այս դեպքում արդեն հետևանքի նշանակություն ունեցող գլխավոր նախադասությունն է օժանդակ դեր կատարում, նախորդ նախադասությունից բխող և նրանից կախված հետևանքը նշելու պատճառով։ Բերենք ևս մի օրինակ՝

Ամբողջ օրը պարապել էի (հաղորդման հիմնական նպատակն է)։ ուստի երեկոյան դուրս եկա դբոսնելու (օժանդակ, լրացնող դեր ունի)։

Ինչպես տեսնում ենք, շաղկապի սոսկ ներկայությունը կամ բացակայությունը փոխում է բաղադրիչ մասերի շարահյուսական ֆունկցիաները, ակնարկելով այս կամ այն իմաստային հարաբերությունը։ Թվում է, թե լոկ ձևական նշանակություն է ստանում այստեղ գլխավոր և երկրորդական նախադասությունների փոխհարաբերության հարցը, քանի որ բարդ նախադասությամբ արտահայտված ընդհանուր բովանդակության մեջ էական տարբերություն չի նկատվում, եթե հաշվի չառնենք այն, որ առաջին դեպքում պատճառը ավելի խիստ է ընդգծվում (համապատասխան հետևանք առաջացնելու համար), քան երկրորդ դեպքում։ Պետք է նշել, որ հետևանքի երկրորդական նախադասությունների կախվածությունը գլխավորից ընդհանրապես թույլ է։ Այդ է պատճառը, որ շատ քերականներ հակված են կարծելու, որ նրանք մոտենում են համադաս նախադասություններին։ Այդպես են կարծել նաև աշխարհաբարի այն քերականները, որոնք պատճառի երկրորդական նախադասությունները դիտելով որպես համադասական հարաբերություններ արտահայտող հետևանքի նախադասություններն էլ են համադասական կապակցության բաժնում տեղադրել (Ս. Պալասանյան, Ս. Մալխասյան, Հ. Թումանյան)։ Մ. Աբեղյանը հետևանքի շաղ-

կապանների մի մասը (ուստի, ուրեմն, ապա ուրեմն, հետևաբար, հետևապես և այլն) համարելով համադասական՝ տեղադրում է բաղճյուսականի մակաբերական կապակցության բաժնում, իսկ մյուս մասը (մինչև որ, այնպես որ և այլն) համարելով ստորադասական՝ զետեղում է ձևի ու շափ ու փանակի խոսքերի մեջ¹:

Ա. Գրիգորյանի «Հայոց լեզու» դասագրքում (Երևան, 1953) համադասական շաղկապանների իմաստային խմբավորման մեջ հետևանքի շաղկապանների մասին խոսք չկա, մինչդեռ այդ նույն շաղկապանների մասին (ուստի, ուրեմն, հետևապես, հետևաբար և այլն) խոսվում է բարդ համադասական նախադասությունների բաղնչուսական կապակցության բաժնում (հմմտ. 181 և 314): Նույն երևույթը նկատում ենք նաև ստորադասական շաղկապանների վերաբերյալ, որոնց իմաստային խմբավորման մեջ թեև առանձնացված են հետևանքի շաղկապներ ենթախումբը (ուր բերված է միայն այնպես որ-ը), սակայն ստորադասական նախադասությունների կապակցության բաժնում հետևանքի նշանակությամբ նախադասությունների մասին ոչ մի ակնարկ չկա, նույնիսկ այնպես որ-ով կապակցվողների մասին (հմմտ. 182 և 319—323): Ս. Աբրահամյանը առանձին (ոչ զուգադիր) գործածություն ունեցող ուստի, ուրեմն, հետևապես, հետևաբար շաղկապները զետեղում է մակաբերական շաղկապների բաժնում՝ որպես համադասական հարաբերություն արտահայտող շաղկապներ²:

Հետևանքի երկրորդական նախադասությունները միշտ էլ վերջադաս գործածություն ունեն: Դա շատ հասկանալի է, քանի որ պատճառից անկախ հետևանք գոյություն ունենալի կարող:

¹ Մ. Աբեղեան, Աշխարհաբարի շարահիւսութիւն, Վաղարշապատ, 1912, 338 և 314:

² Նրա դասակարգումից դուրս է մնում այնպես որ շաղկապը, որ Մ. Աբեղյանի և Ա. Գրիգորյանի մոտ ստորադասական է համարվում: Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի չթեքվող խոսքի մասերը, Երևան, 1959, էջ 202:

Հետաքրքրական է նշել, որ բարդ նախադասության կազմում հետեանքի շաղկապներից առաջ արտասանական որոշ դադար է տրվում, իսկ այդ շաղկապին նախորդող նախադասության վերջում ձայնի տոնը իջնում է՝ մոտենալով նախադասության ավարտ ակնարկող ինտոնացիային: Նման երևույթ մենք չենք նկատում ուրիշ ստորադասական շաղկապների կիրառության ժամանակ: Նշված յուրահատկությունից զերծ են նաև այն բարդ ստորադասական նախադասությունները, որոնց կապակցությունը իրականացվում է պատճառահետեանքային հարաբերությունն արտահայտող զուգադիր շաղկապներով (որովհետև... ուստի, քանի որ... ուրեմն և այլն):

ԱՅՆՊԵՍ ՈՐ—Աշխարհաբարյան շրջանում կաղմավորված այս շաղկապը արդի հայերենի ամենատարածված հետեանքի շաղկապն է. նրանով կապակցվող նախադասությունը հանդես է գալիս որպես նախորդ մասում նկարագրված իրողության անմիջական կամ անուղղակի հետեանքը: Այս շաղկապի շարահյուսական յուրահատկություններից մեկն այն է, որ նա երբեք չի կարող զուգադիր գործածություն ունենալ որովհետև, փնի որ պատճառի շաղկապների հետ:

Այս շաղկապի օգտագործմամբ զխափոր նախադասությունը կարծես պատճառի երանդ է ստանում սոսկ այն պատճառով, որ նրան հաջորդում է որևէ հետևություն. օրինակներ՝

Չորանանց տունը գտնվում էր Հացավանի հարավային ծայրամասում, ամենաբարձր դիրքի վրա, այնպես որ Չորանանց բակից նայողի առաջ փռվում էր ամբողջ գյուղը՝ իր դար ու փոս մակարդակով (ՆՁԶ, 369): Ամառվա սպիտակ պիսարկը ցածր էր քաշել մինչև ականջները, այնպես որ հագիվ էին երևում նրա ոսկեպատ պարզ ապակիները... (ՆԴ, 5—6): Հինգ վեց մեծ ու փոքր բարձեր դարսված էին միմյանց վրա սիմետրիկ ձևով, այնպես որ կազմում էին մի տեսակ բուրգ (Շիրվ., 51):

Հետաքրքրական են այս շաղկապի նպատակի երանգով գործածությունները, երբ կապակցվող մասում նկարագրվում

է սոսկ սպասվող հետևանքը կամ դեռ չիրականացած նպատակը. բերենք մի օրինակ՝

Երբ վերջապես ես միջանցք մտա, արդեն իմ պառավ հարևանուհին դուռը բացել էր գյուղից եկած քեռուս վրա և բարձրաձայն, այնպես որ ես լսեմ, փնթփնթում էր (ՀՔ, 158)։

Ինչպես տեսնում ենք, այնպես որ շաղկապով կապակցվող երկրորդականը միջադաս գործածություն ունի և կապված է անմիջապես ձևի պարագայի հետ (բարձրաձայն)։ Այս երևույթը, ի դեպ, հատուկ չէ հետևանքի երկրորդական նախադասություններին, որոնք, լավազույն դեպքում, դերբայական դարձվածի հետ կապվելիս են նման դիրք գրավում (այն էլ միայն այնպես որ շաղկապի կիրառության դեպքում)։

Երբեմն այս շաղկապով արտահայտվում են հետևանքի շատ աղոտ հարաբերություններ, որի ժամանակ նա կարծես կորցնում է հետևանքի նշանակություն արտահայտելու իր հատկանիշը¹։ Նման դեպքերում այդ շաղկապով մեջ են բերվում եզրափակող բնույթի նախադասություններ, որոնք կոդմնակի, լրացուցիչ հաղորդման տալավորություն են թողնում. օրինակ՝ «Ստեփան Արկադեիչը «դու»-ով էր խոսում համարյա իր բոլոր ծանոթների հետ... այնպես որ նրա հետ «դու»-ով խոսողներից շատերը գտնվում էին հասարակական սանդուղքի երկու հակադիր ծայրակետերի վրա և չափազանց կզարմանային, եթե իմանային, որ իրենք Օբլոնսկու միջոցով ունեն ընդհանուր մի բան (ՏԱԿ, 1, 26)»։ Նկատելի է, որ այս օրինակում այնպես որ շաղկապը իր կիրառությամբ մտատենում է «ըստ որում» համադասական շաղկապին, մի բան, որ հաստատում է կապակցվող նախադասության լրացուցիչ մեկնակաճ երանգ ունենալը։

Խոսքի մտքի սոսկ ձևական կապ է նշվում, ասանց հե-

¹ Այդ արտահայտվում է ղխավորապես այն դեպքերում, երբ այդ շաղկապը հանդես է գալիս ավարտված նախադասություններից կամ պարբերություններից հետո։ Այնպես որ-ի այդ կիրառությունները հատկապես շատ են հանդիպում երկախոսություններում։ Պարզ է, որ այս դեպքում խոսք չի կարող լինել ստորադասական կապակցության մասին։

տեանքի նշանակութեան նվազագոյնն զրոստուման, ռուսերենի ազգեցութեամբ հայերենում տարածված այնպես որ շաղկապի հետեյալ կիրառութիւններում.

Երկրորդ վագոնից այն կողմ նա պատահեց Շվեյկին և փորձեց շուտով անցնել, խուսափել նրանից, որովհետեւ Շվեյկի դեմքից կարելի էր գուշակել, որ այդ մարդու սրտում շատ քան էր կուտակվել, որի մասին նա կուզենար խոսել իր պարուլիկի հետ:

Իսկ Շվեյկն ուղղակի մոտեցավ պարուլիկ Լուկաշին և զեկուցեց.

— Այնպես որ, թույլ տվեք զեկուցել, պարոն պարուլիկ—վաշտի սուրհանդակ Շվեյկը խոնարհաբար խնդրում է, չկա՞, արդո՞ք, որեւէ կարգադրութիւն: Այնպես որ ես ձեզ որոնում էի շտաբի վագոնում, պարոն պարուլիկ (Յա. Հաշեկ, Քաջ դինվոր Շվեյկի արկածները..., մաս 3, Երևան—Մոսկվա, 1936, 126):

— Դուք դեղձեր էիք դրել անկյունի սենյակում. այնպես որ, կարծեմ, նա սուսուսիտա կերել է մի հատը (ՏԱԿ, 1, 406):

Ուշադրութեան արժանի է այն դեպքերը, երբ այս շաղկապը իրենով կապակցվող մասից բաժանվում է միջադասայնպիսի նախադասութիւններով կամ կապակցութիւններով, որոնք բացահայտում են հետեանքի նախադասութեան գործողութեան հետ կապված պարագայական այս կամ այն հանդամանքը, ինչպես՝

Եվ եվան հանկարծ հուսահատական մի քաջութիւն զգաց իր մեջ, այնպես որ, երբ հայրը նորից առարկեց, որ միասին գնան Բազենյանի մոտ, նա համաձայնեց (ՆԴ, 266): Եվ այդ իրող պատահում է, այնպես որ, կազմակերպութեան մասին խոսելիս, մենք տառացիորեն գտնվում ենք տարբեր լեզուներով խոսող մարդկանց դրութեան մեջ (ԼՆ, 5, 600):

ՈՒՍՏԻ—Այս շաղկապով սկսվող մասի կախումային կապը առաջագաս նախադասութիւնից շատ ավելի սերտ է դառնում, երբ այս վերջինս սկսվում է որովհետեւ, քանի որ շաղկապներով: Այս դեպքում ավելի շեշտված ձևով են արտա-

հայտնում նաև պատճառա-հետևանքային հարաբերությունները. օրինակներ՝

Քանի որ մենք հասկանում ենք իրար, ուստի զուր ժամավաճառություն է այսպիսի խոսակցություններով զբաղվելը (ՆԴ, 215): Որովհետև ոչ ոք ուշադրություն չէր դարձնում նրա վրա, և թվում էր, թե նա ոչ ոքի պետք չէր, ուստի կամացուկ դիմեց դեպի փոքրիկ դահլիճը, որտեղ ուտում-խմում էին... (ՏԱԿ, 2, 317): Այնքան, որքան այս բոլորը լավագույն դեպքում միայն ենթադրություններ էին, ուստի, նկատի ունենալով իմ վիճակը, ես ոչինչ չէի կարող ասել (ԴԴՌԿ, 254):

Առանձին գործածությամբ այս շաղկապով կապակցվող մասը արդեն երկրորդական նախադասության արժեք է ստանում: Այս հանդամանքը ցույց է տալիս, թե երբեմն որքան հեղհեղուկ և ձևական հատկանիշներով են որոշվում գլխավոր և երկրորդական նախադասությունների սահմանները. օրինակներ՝

Աբասը հայտնում էր, որ թագավորն անհուսալի հիվանդ է, ուստի խնդրում էր իրան՝ շտապել դեպի Ոստան (Մուր., 425): Վերադառնալու էր մի, կամ կես ժամից հետո, ուստի ես թողի գրասենյակը և գնացի քրեական կորպուսը նայելու (ԵԶ, 402): Վասակը դիպավ Վարոսյանի ամենահիվանդոտներվին, ուստի վերջինս վայրկենաբար կորցրեց իր հավասարակշիռ հեգնական տոնը, կմկմաց և ձեռքը մեկնեց թանաքամանին (ՆԶԶ, 165):

Որպես կանոն, այս շաղկապով սկսվող հետևանքի նախադասությունը չի կարող կապվել դերբայական դարձվածի կամ պարադայական որևէ անդամի հետ, մի առանձնահատկություն, որ ցույց է տալիս, թե այս շաղկապի օգտագործմամբ կապակցվող մասը նշում է միայն ընդհանուր նախադասության բովանդակությունից բխող հետևություններ կամ եզրակացություններ:

Արդի հայերենում այս շաղկապը տարածված է նաև ուստի և ձևով՝ օրինակ՝ «Այդ իհարկե գիտեր թագավորը, ուստի և նրան ոչինչ չպատվիրեց (Մուր., 412)»:

Օգտագործվելով պարբերությունների կամ խոսքի տարբեր հատվածների միջև, այս շաղկապով սկսվող մասը եզրակացության կամ եզրափակման ընդհանուր նշանակություն է ստանում: Այս կիրառությամբ ուստի շաղկապը հատկապես տարածված է հրապարակախոսական և գիտական բնույթի գործերում: Պարզ ժողովրդական լեզվում այս շաղկապը գործածական չէ:

ՈՒՐԵՄՆ—Այս շաղկապի ամենաբնորոշ իմաստային առանձնահատկությունն այն է, որ նրա օգտագործմամբ կապակցվող մասերի միջև արտահայտվում են հիմունքի (իրական կամ ենթադրական) և նրանից բխող հետևության կամ եզրակացության հարաբերություն: Ուրեմն շաղկապը չի կարող հանդես գալ նախադասության այն կառուցվածքներում, որտեղ արտահայտվում են բուն պատճառի և նրանից բխող իրական հետևանքի հարաբերություն: Այսպես, ուրեմն-ը չի կարող փոխարինել ուստի շաղկապին հետևյալ օրինակում. «Որովհետև Սուրիկը հիվանդ էր, ուստի չեկավ դպրոց»: Քանի որ, որովհետև պատճառի շաղկապների հետ զուգադիր գործածություն ունենալու դեպքում ևս (որը, ի դեպ, այնքան էլ տարածված չէ) ուրեմն շաղկապը դարձյալ եզրակացության կամ հետևության նշանակություն է արտահայտում: Ուրեմն շաղկապի օգտագործմամբ հետևությունը կարող է բխել ինչպես իրական, այնպես էլ ենթադրական հիմունքից:

ա) Իրական հիմունքից բխող հետևությունը. «— էսօր պարտիան նրան մեղ դեկավար է նշանակել, ուրեմն մենք նրան պետք է թև ու թիկունք լինենք... (ՆՁՀ, 22): — էս հասակին որ սա վախ չունի մենակ գնալու, ուրեմն սրտոտ տղա պիտի լինի... (ՈՔԵ, 417)»:

բ) Ենթադրական հիմունքից բխող հետևություն՝ մեծ մասամբ եթե... ուրեմն զուգադիր շաղկապի միջոցով. «Պարոն Վարդանը գրվածքս վերցրել է կարդալու, եթե հավանի, ուրեմն պիտի տպենք (ՍԶ, 433)»:

Իրական հիմունքից բխող հետևությունների այլ օրինակներ՝ «Այս տեղը թե՛ հարմար է և թե՛ ապահով: Հարմար է նրանով, որ փողոցով անցնողը երևում է. ուրեմն կապալա-

ուրին կարող եմ տեսնել անցնելիս (ՍԶ, 33)»։ «Վարդանը հայելի է ուզում, հայելին դնում է կնոջ դեմքին, հայելու վրա գուրբշի է հավաքվում—ուրեմն դեռ ապրում է (ԱԻ, 282)»։

Արդի հայերենում բավական տարածված են ուրեմն շաղկապի կիրառությունները և շաղկապի հարադրությանմբ, որը կարծես ընդգծում է հետևության նշանակությունը. օրինակ՝ «—Նրանք գիտեն, որ ես ծառայում եմ Իշխան Մարգարետունուն, ուրեմն և իմ պատճառով կճանաչեն նաև քեզ (Մուր., 97)»։ Արժե հիշել, որ պայմանի երկրորդական նախադասություններից հետո, ինչպես նաև պայմանի երանգ ունեցող նախադասություններից հետո այս հարադրական շաղկապի գործածությունը տարածված չէ։

Ուրեմն շաղկապը ունի նաև մասնակի այլ կիրառություններ։ Հետաքրքիր են հատկապես նրա գործածությունները ավարտված նախադասությունների միջև, ինչպես նաև երկախոսություններում։

ա) Հեղինակի մտքերի տրամաբանական կապն է նշվում այս շաղկապով, երբ հետևությունը ներկայացվում է որպես։ նախորդ մասի բովանդակությունից բխող. օրինակ՝ «Այդպանի առաջարկը, որ ես մնամ իրենց մոտ, մխիթարեց ու սիրտ տվեց ինձ։ Ուրեմն դեռ ամեն բան կորած չէ, ես կարող եմ նոր կյանք սկսել (ՀՄԱԸ, 156)»։ Այդ անկարելի է, այդ անհավատալի է։ Ուրեմն մեր փողերը մի ավազակի ձեռք են ընկել, ուրեմն նամակն էլ իզուր ենք հանձնել նրան (ՆԴ, 283)։ «Ուրեմն նա եկած է եղել ինձ տեսնելու... մտածեց նա խորին տխրությամբ,—Իսկ իմ փոխարեն տեսավ մեր ամրոցի ավերակները... ուրեմն նրան հայտնի են ցավալի անցքերը (Բաֆ., 291)»։

«Ապա» շաղկապի նշանակությունն է կարծես ստանում ուրեմն-ը հետևյալ օրինակում. «—Ո՛չ սոսկալի է դա։ Լինել ինչ-որ ստրուկ.—ճշաց Լեինը, վեր կենալով ու այլևս չկարողանալով զսպել իր սրտնեղությունը։—Ուրեմն էլ ինչո՞ւ ամուսնացար։ Ազատ կլինեիր... Հարեց Կիտին... (ՏԱԿ, 2, 76)»։

բ) Այս շաղկապը ազատորեն օգտագործվում է նաև

հարց ու պատասխան պարունակող երկախոսություններում, որ նա, չկորցնելով հանդերձ հետևությունն նշելու իր հատկանիշը, խոսակիցների մտքերի կապն է նշում. օրինակ՝ «—Նախ ուզում եմ տեսնել Վիտալիսին, հետո կանեմ այն, ինչ նա ինձ սովորեցրել է. տավիղ կնվագեմ ու կերգեմ: —Ուրեմն դու որոշել ես շարունակել այդ զբաղմունքը: (ՀՄԱԸ, 155)»:

զ) Որոշ դեպքերում այս շաղկապի հետևության նշանակությունն այնքան է աղոտանում, որ նա հանդես է գալիս միայն տարբեր ասույթների միջև ձևական կապեր նշելու գերով: Հատկապես ուշադրության արժանի են այն դեպքերը, երբ նա ընդհատված խոսակցությունների կամ մտքերի կապակցմանն է ծառայում: Այս նշանակությամբ ուրեմն—ը ավելի տարածված է կենդանի խոսակցական լեզվում. օրինակ՝

—Այո՛, այո՛,—ասաց նա, բոտ երևույթին աշխատելով վանել իրենից խանդոտ մտքերը: Բայց եթե դու իմանայիր, թե ինչպես ծանր է ինձ համար: Ես հավատում եմ, հավատում եմ քեզ... Ուրեմն ինչ էիր ասում դու (ՏԱԿ, 1, 504): —Դուք ճանապարհից ուղղակի տո՞ւն,—ասաց բարոնուհին,— ուրեմն, ես թուա: Ա՛խ ես կզնամ հենց այս րոպեիս, եթե խանգարում եմ (ՏԱԿ, 2, 160):

դ) Նախորդ մասում (կամ մասերում) ասվածը ամփոփելու, ի մի բերելու կիրառության մեջ էս այս շաղկապը շատ է տարածված. նշվում են այս կամ այն բնույթի առաջարկներ, կարծիքներ, տեսակետներ, որոնք ամփոփվում են «այսպես ուրեմն» կամ սոսկ «ուրեմն» շաղկապով սկսվող որևէ եզրակացությամբ: Այս գործածությունը հանդիպում է հատկապես գիտա-քննադատական և հրապարակախոսական բնույթի գործերում:

ե) Հետաքրքրական են այս շաղկապի կիրառությունները թարմատարի նշանակությամբ, երբ նրա տեղի կամ անտեղի գործածություններով պատմողը ի մի է հավաքում իր մտքերը, ամփոփում ասելիքը և ժամանակ շահում նոր միտք զարգացնելու համար: Այս խոցելի երևույթը հատկապես շատ է տարածված լեզվական ոչ բարձր կուլտուրայի տեր մարդ-

կանց մոտ: Ուրեմն շաղկապի՝ միջանկյալ բառի նշանակութեամբ այս կիրառությունները հատուկ են բանավոր լեզվին: Բերենք մի օրինակ՝ «—Փաստ,—գրգռվեց Ղազարյանը:—Փաստը հենց այն է, որ դու, ընկեր կամբարյան, ուրեմն չքավորներին հեռացնում ես աշխատանքից՝ առանց պարտքյուրոյի հետ համաձայնեցնելու (նՁՀ, 170)»:

զ) Կապակցվող նախադասության մեջ հանդես գալով միջադաս կամ ետադաս գործածությամբ, այս բառը իր դերով մոտենում է կապակցական դեր կատարող եղանակավորող բառերին: Հաճախ նախորդ կամ հաջորդ մասից բաժանվում է ստորակետով. օրինակներ՝

Մի փոքր լուռ կանգնելուց հետո նա ասաց.—Ձեր խոսքերից ես կարող եմ ուրեմն եզրակացնել, որ հնարավոր է ապահարգանք (ՏԱԿ, 1, 520): Հնարավոր է ուրեմն, որ անցման այս ժամանակաշրջանում՝ 609—590 թթ. հայ արմենական ցեղերը օգտվեն առիթից... (Հայկ. ՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1958, № 6, 54):

Այս շաղկապը առավելապես տարածված է գեղարվեստական գրականության մեջ:

ՀԵՏՆՎԱՊԵՍ, ՀԵՏՆՎԱԲԱՐ—Թիեև այս բառերը արտաքինապես դեռ հիշեցնում են մակբայներին, սակայն արդի հայերենում նրանք սոսկ կապակցական կիրառություններ ունեն: Սրանք իրենց բառական նշանակությունից բխող հետևություն հարաբերություններ են արտահայտում՝ մեծ մասամբ կապակցելով եզրակացության կամ եզրափակման նշանակություն ունեցող նախադասություններ: Օգտագործվելով հիմնականում գրավոր խոսքում, հատկապես գիտական և հրապարակախոսական գրականության մեջ, այս շաղկապները իրենց գործածությամբ գրքային ոճ են տալիս խոսքին. օրինակներ՝

Մենք անձանոթ ենք այժմյան դիրքին... ասացին եզբրացի իշխանները, ճեղքապես գիշերանց թշնամու դեմ գնալ չենք կարող (Մուր., 184): Իսկ երբ այդ հրթիռի շարժին իր աշխատանքն ավարտեց, ապա, ինչպես ցույց է տալիս հաշիվը, կունենա ավելի մեծ արագություն, քան տիեզերական

երկրորդ արագությունը: Հետևաբար տիեզերական երկրորդ անջրպետը կարող է հաղթահարվել արդեն գոյություն ունեցող վառելանյութերի և կոնստրուկցիաների միջոցով (եր, 1958, օգոստ. 9, 3): Այնքան որքան նրանք այս մարդկանց տալիս էին ամենօրյա ուտելիք, հետևաբար նրանք էլ դուրս փոխարեն տալիս էին իրենց աշխատանքը, և տերերը ըստրուկներին պահում էին լիակատար ստրկական աշխատանքի մեջ (ԴԴՌԿ, 498):

ԱՊԱ—Ի տարբերություն ուստի շաղկապի, որը կարող է և՛ զուգադիր, և՛ առանձին գործածություն ունենալ, այս շաղկապը հետևանքի հարաբերություններ արտահայտելիս միշտ զուգադիր գործածություն ունի, մեծ մասամբ երբ... ապա, քանի որ... ապա ձևով: Առանձին գործածությամբ նա հանդես է գալիս որպես համադասական շաղկապ՝ ժամանակի հաջորդականությունն նշող միավորիչ շաղկապի, կամ էլ հակադրական շաղկապի նշանակությամբ: Այժմ բերենք համապատասխան օրինակներ.

...նա բարձրացավ աթոռից և ասաց, որ եթե իր լավագույն ընկեր Վալոդյան չի կարող մեկնել, ապա նա՝ Տոլյա Օրլովը կմնա նրա հետ (ՖԷԳ, 98). Օգտակար է նկատել, որ ամեն մի թեորեմա կարելի է մանրամասն բառերով արտահայտել այնպես, որ նրա պայմանը սկսվի «եթե» բառով, իսկ եզրակացությունը՝ «ապա» բառով: Օրինակ՝ «Հակադիր անկյունները հավասար են» թեորեման կարելի է մանրամասն արտահայտել այսպես. «Եթե երկու անկյունները հակադիր են, ապա նրանք հավասար են (Ա. Պ. Կիսելյով, Երկրաչափություն, առաջին մաս, Հարթաչափություն, Երև. 1955, 27): Եվ քանի որ հեղինակն իր քննադատիչ շարքային գործիչներից չէ, այլ խոշոր անհատականություն, որի հոչակն ու համարումը վաղուց դուրս է եկել ազգային թատրոնի շրջանակներից, ապա նա նվաճել է այդպես գրելու իրավունքը (ՎՓՀՀ, 1, 3):

Ինչպես տեսնում ենք, այս զուգադիր շաղկապներով արտահայտվում են պայմանա-հետևանքային և պատճառա-հետևանքային հարաբերություններ: Նկատելի է, որ այս վերջին

դեպքում հետևանքը կապվում է ոչ թե բուն պատճառի, այլ հիմունքի նշանակության հետ:

Այս շաղկապի հետևանքի երանգը շեշտելու համար երբեմն օգտագործվում է ապա ուրեմն ձևը, ինչպես՝ «—Տեր Մարգարետունի. եթե դու եկել ես ինձ մոտ իբրև պատգամավոր, ապա ուրեմն պետք է լրիվ պատասխան տանես նրան, ով որ ուղարկել է քեզ—ասաց սեպուհի (Մուր., 163)»:

ԹՈՂ—Որեւէ հիմունքից կամ պայմանից բխող հետևանքի նշանակությունը զիջական երանգ է ստանում, երբ որպես կապակցության միջոց քոզ բառն է օգտագործվում: Առաջադաս երկրորդական նախադասության բովանդակությունից բխող անխուսափելի զիջումը վերջադաս նախադասության մեջ ներկայացվում է որպես այնպիսին, որը մի կերպ ընդունվում է: Թող բառի այս կիրառությունները տարածված են գերադանցապես գեղարվեստական գրականության մեջ. օրինակներ՝

Եթե այդպես է, թող գնան, հերն էլ անիծած (ՀՔ, 114): Քանի որ Հովհաննեսը խոստացել է ու չի ուզում իր խոստումը կատարել, թող նրա ասածը լինի... (ՀՔ, 280):

Հետևանքի հարաբերություններ ու երանգներ են արտահայտում նաև այդ պատճառով, որի հետևանքով, այդ բանի հետևանքով, դրա համար, որից, որով, մինչև որ, նշանակում է և այլ բառերն ու բառակապակցությունները: Սրանք կապակցվող մասերի պատճառա-հետևանքային փոխհարաբերությունների մեջ ներդրում են իրենց խոսքի մասային և բառական առանձնահատկություններից բխող իմաստային գանազան երանգներ: Բերենք մի քանի օրինակներ՝

Եվ որովհետև դեռ երկյուղ էր կրում Մարգարետունու անակնկալ հարձակումից, այդ պատճառով նա Գեղամա լեռներից շանցավ (Մուր., 333): Ես ուրախացա... կարծես թե իմ զորքի հաղթանակը կպսակվի իմ մահվամբ. այդ պատճառով էլ իսկույն դուրս քաշեցի նետը, որպեսզի նրա հետ միասին ելներ և իմ հոգին (Մուր., 347): —Գուցե տեղը չգիտեն. դրա համար չեն գալիս (Ողնի, 13/93, 1958, հուլ., 5): Հորեղբայր Գասպարը բոլորից բարձր էր խոսում, դրա համար

նրան հանձնարարվեց պատասխանել (ՀՄԱԸ, 231): Սուրենյր շատ ազնիվ, անձնվեր և ընկերասեր երիտասարդ էր, որով արժանացել էր հարևանների ու ընկերների հարգանքին: Իսկ եթե պարոն Վարդանը զարմանում էր, նշանակում է ուրիշներն ավելի կզարմանան (ՍԶ, 433):

Ամփոփելով այս բաժինը, նկատում ենք, որ հետևանքի շաղկապները տարածված են ինչպես երկրորդական, այնպես էլ գլխավոր նախադասությունների կապակցման դերով: Խիստ տարածված են այս շաղկապների (ինչպես նաև շաղկապների) գործածությունները խոշոր պարբերությունների ու ավարտված նախադասությունների միջև՝ տրամաբանական զանազան կապեր նշելու համար, որի ժամանակ նրանք մեծ մասամբ եզրափակող կամ եզրակացություն արտահայտող բառերի նշանակություն են ստանում: Այս շաղկապները հանդիպում են նաև երկախոսություններում:

Նկատելի է, որ այս շաղկապների գործածությունների մեծ մասում բարդ նախադասության բաղադրիչ մասերը սոսկ տրամաբանական կապի մեջ են գտնվում միմյանց հետ, առանց, սակայն, շարահյուսական կամ կառուցվածքային խիստ կախվածության մեջ լինելու մեկը մյուսից: Այդ է պատճառը, որ նրանք ոմանց կողմից դիտվում են որպես համադասական շաղկապներ:

5. ՊԱՅՄԱՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Այս շաղկապներով կապակցվող նախադասությունները կարող են արտահայտել. 1) Այնպիսի ենթադրություններ, որոնք կարող են իրականանալ: 2) Այնպիսի ենթադրություններ, որոնք կարող են իրականանալ, բայց չեն իրականացել: 3) Այնպիսի ենթադրություններ, որոնք անիրագործելի են՝ իրականությանը հակադիր լինելու պատճառով: Քանի որ պայմանը սովորաբար կապվում է նրանից բխող հետևանքի հետ, ապա պայմանի այս երեք տարբեր տեսակներին համապատասխանում են հետևանքի երեք տարբեր տեսակներ,

որոնք, սակայն, ընդհանուր առմամբ ներկայացվում են որպես իրագործելի և ոչ իրագործելի:

Արդի հայերենում կիրառությունների բազմազանությունամբ ամենատարածված շաղկապը եթե-ն է. այնուհետև գալիս են թե և ու շաղկապները:

Հաճախ պայմանի իմաստային հարաբերության արտահայտման հետ զուգընթաց տարբեր շաղկապների օգտագործմամբ նշվում են նաև հիմունքի, ժամանակի, զիջական երանգների, որոնք մեծ մասամբ բխում են կապակցվող մասերի նյութական բովանդակությունից և բայական եղանակներից ու ժամանակներից: Նկատելի է հատկապես հիմունքի և պայմանի նշանակությունների մոտիկությունը: Այդ նկատել են հայ հին քերականները, որոնք պայմանի շաղկապներով կապակցվող նախադասությունները մեծ մասամբ նույնացնում են պատճառականների հետ¹: Մ. Աբեղյանը էլ ավելի է խորանում հարցի քննության մեջ: Նկատելով, որ պատճառի, նպատակի, պայմանի և զիջական երկրորդական նախադասությունների արտահայտած իմաստային հարաբերությունների միջև ընդհանուր շատ կողմեր կան, նա դրանք միացնում է հիմունքի խոսքեր ընդհանուր հասկացության տակ²: Հիմունքի ընդհանուր նշանակություն ունեցող այս նախադասությունները, սակայն, իմաստային որոշակի տարբերություններ են դրսևորում, որի պատճառով դրանք արժեքավորվում են որպես երկրորդականների առանձին տեսակներ:

Այժմ քնենք այդ շաղկապների կիրառությունները առանձին-առանձին:

Եթե—Ամենատարածված պայմանի շաղկապն է: Օդ-

1 Հ. Թումանյան, Հայոց աշխարհաբար լեզուի համառոտ համաձայնություն, Թիֆլիս, 1911, 59: Տե՛ս նաև Ս. Մալխասյան, Գրաբարի համաձայնություն, Թիֆլիս, 1892, 149—150, Ս. Պալասանյան, Գործնական քերականություն հայերէն լեզուի, հատ. 2, «Համաձայնություն», Թիֆլիս, 1869, 93:

2 Մ. Աբեղյան, Աշխարհաբարի շարահիստություն, Վաղարշապատ, 1912, 316—322:

տագործվում է գրական բոլոր ժանրերում: Կարող է արտահայտել ինչպես պայմանի, այնպես էլ պայմանի նշանակությունից արդեն՝ շեղված իմաստային այլ հարաբերություններ: Առաջին նշանակությամբ գործածվելիս նրանով կապակցվող ստորադաս մասը կարող է նշել ինչպես իրագործելի, այնպես էլ անիրագործելի ենթադրություններ: Պայմանի այս երկու տարբեր տեսակները կախված են կապակցվող մասերի կոնկրետ նյութական բովանդակությունից և նրանցում օգտագործված բայական եղանակներից ու ժամանակներից: օրինակ՝ «Եթե վաղը ժամանակ ունենամ, անպայման կգնամ թատրոն»: Ինչպես տեսնում ենք, հնարավոր է, որ վաղը ժամանակ ունենամ, հետևաբար և հնարավոր է, որ գնամ թատրոն: Այս օրինակում պայմանը ներկայացվում է որպես իրագործելի: «Եթե հիմա ժամանակ ունենայի, անպայման կգնայի թատրոն», «Եթե երեկ ժամանակ ունենայի, անպայման թատրոն գնացած կլինեի»: Այս վերջին երկու օրինակներում ներկային և անցյալին վերաբերող պայմանը անիրագործելի է, որի պատճառով անիրագործելի են նաև այդ պայմանից բխող գործողությունները:

Մի դեպքում ունի և մյուս դեպքում սոսկ ցանկալի, ենթադրվող կամ հնարավոր համարվող պայմանները խորապես տարբերվում են իրարից իրենցով պայմանավորված գործողությունների իրականացման տեսակետից:

Նկատի պետք է ունենալ, որ բուն պայմանական հարաբերությունների համար անհրաժեշտ է, որ ստորադաս նախադասության գործողությունը կամ նախորդի գլխավորի գործողությանը, կամ էլ նրա հետ միաժամանակ կատարվի: Այս դեպքում միայն կարտահայտվեն ենթադրական հիմունքից (պայմանից) բխող ենթադրական հետևանքներ:

Եթե շաղկապի օգտագործմամբ ստորադաս նախադասությունը կարող է արտահայտել.

ա) Այնպիսի ենթադրություններ, որոնք կարող են իրականանալ (իրագործելի պայմանի առկայության դեպքում).

— Եթե ինձ կրկին չբռնեն, դեռ լույսը չծագած կհասնեմ (Բաֆ., 292): Եթե այդպես արեւ անի, Խուռուփի ձորի գարի-

ները շուտ կհասնեն, շատ շուտ... (ԱԲՆ, 374): — Մայրիկ, սիրելի մայրիկ, ինչո՞ւ ես լաց լինում, եթե դու լաց լինես, ես էլ լաց կլինեմ (ՐՍ, 314):

Նույն իմաստային հարաբերությունն է նշվում, երբ երկրորդականի ստորոգյալը ոչ թե ըղձականի ապառնի ժամանակով է արտահայտվում, այլ նրա նշանակությունն ունեցող անցյալ կատարյալի, ինչպես՝ «Եթե արձակուրդ ստացա (ստանամ), կգամ ձեզ մոտ կարճ ժամանակով (ԱԲՆ, 444)»։ Ապառնի ժամանակի օգտագործման դեպքում ևս ռեալ. իրագործելի պայմաններ են նշվում. «Որովհետև եթե Շապուհը գնալու է քուշանների դեմ, անպատճառ կկանչե ինչպես և Աղվանից թագավորներին՝ մասնակցելու արշավանքին (ՐՍ, 389)»։

Սահմանական եղանակի ներկա և անկատար ժամանակների օգտագործման դեպքում նկարագրվող իրողությունները ներկայացվում են որպես պարբերաբար կրկնվող։ Նկատելի է, որ այս դեպքում եթե շաղկապը զերծ չէ ժամանակի աղետ նշանակությունից.

Եթե հեռու գյուղերից իր վաղեմի ծանոթը, կամ թուրք «քիրվան» նրան տեսության էր գալիս, մեր տունը դառնում էր հարսանքատուն (ԱԲՆ, 132): Իսկ եթե ոչ չէր լսում նրան, մենակությունից թե ձանձրույթից, բուխարու առաջ բաց էր անում շարականի գիրքը (ԱԲՆ, 119): Գիշերը մինչև լույս ջրաղացը բանում էր, իսկ ջրաղացպանը եթե չէր ննջում,— ջրաղացի դռները նստած կամ օջախի մոտ, պատմում էր իր հեքիաթներից մեկը... (ԱԲՆ, 318):

Բերված օրինակներում, ի տարբերություն նախորդ դեպքերի, պայմանից բխող հետևանքը ոչ միայն իրագործելի է, այլև իրագործվում է ամեն անգամ, երբ կրկնվում է ստորադաս մասում նկարագրված դեպքը կամ գործողությունը։ Եթե շաղկապը իր աչք նշանակությամբ տարածված է նաև սահմանումների և կանոնների մեջ, ինչպես՝ «Եթե ուղղակի խոսքը կարճ է, սովորաբար չակերտների մեջ չի առնվում և զրլխավոր նախադասությունից բաժանվում է ոչ թե միջակետով,

այլ՝ բուժով (Գ. Սևակ, Հայոց լեզու, Շարահյուսություն, 1956, 141)»:

բ) Այնպիսի ենթադրություններ, որոնք չեն կարող իրականանալ (պայմանի անիրագործելի լինելու հետևանքով): Սրանք, իրենց հերթին, բաժանվում են երկու տեսակի.

ա) ենթադրություններ, որոնք կարող էին իրականանալ, բայց չեն իրականացել. «Եթե դու քեզ հանձնած նամակը յուր ժամանակին տեղ հասցնեիր, դրանցից և ոչ մեկը չէր կատարվի (ՐՍ, 7, 264)»:

բ) ենթադրություններ, որոնք անիրագործելի են՝ իրականությունը հակադիր լինելու պատճառով: Նման դեպքերում եթե շաղկապը պատկերավոր, թեմատիկ խոսքերի կապակցմանն է ծառայում, օրինակ՝ «Եթե հոնքերդ տեսնես, ինձ էլ կտեսնես»: «Այդ անպաճույճ սենյակում մշակվեցին այնպիսի ծրագրեր և ընդունվեցին այնպիսի որոշումներ, որոնք կկազմեին տարօրինակ տարեգրություններ և հետաքրքրական դրամաներ, եթե պատերը խոսել իմանային (ՕԳԲԿՊ..., 151)»: Ավելորդ է ասել, որ անիրագործելի իրողությունը որպես պայման առաջադրելը հավասար է գլխավոր նախադասության մեջ ներկայացվող հետևությունը մերժելուն:

Իրագործելի և ոչ իրագործելի, հետևապես ռեալ և ոչ ռեալ ենթադրությունների միջև ամենաէական տարբերություններից մեկն այն է, որ առաջին դեպքում պայմանի հետ կապված իրողության իրականացումը ներկայացվում է որպես սոսկ հնարավոր, մինչդեռ երկրորդ դեպքում որոշակիորեն նշվում է, որ անիրագործելի պայմանի առկայության հետևանքով գլխավոր նախադասությամբ արտահայտված իրողությունը չի կարող իրականանալ: Բերենք ևս մի օրինակ. «Աննան կընկներ գորգի վրա, եթե Վոռնսկին չպահեր նրան (ՏԱԿ, 1, 210)»: Այստեղ պարզ ու որոշակի նշվում է, որ Աննան չի բնկել գորգի վրա, ըստ որում դրա համար պատճառ է հանդիսացել եթե շաղկապով սկսվող ստորադաս նախադասության մեջ նկարագրված դեպքը: Հիշյալ կառուցվածքի նախադասություններում կարծես սոսկ նպատակ է դր-

վում ակնարկել նման իրողության հնարավոր լինելը, հակառակ դեպքում կասվեր՝ «Աննան չընկավ գորգի վրա, որովհետև Վոռնսկին պահեց Նրան»:

Հետաքրքրական է այն, որ եթե աեիրագործելի պայմանի արտահայտման դեպքում երկրորդական նախադասության ստորոգյալը հիմնականում ըղձականի անցյալի ապառնի ժամանակով է արտահայտվում, ապա իրագործելի պայմանի արտահայտման դեպքում ստորոգյալը կարող է օգտագործվել ինչպես ըղձականի ապառնի, այնպես էլ սահմանականի ներկա, անկատար, ապառնի, անցյալի ապառնի և այլ ժամանակներով:

Եթե շաղկապի օգտագործմամբ կապակցվող մասերի միջև կարող են արտահայտվել նաև լրացուցիչ իմաստային այլ երանգներ:

1) Ենթադրական հիմունքի փոխարեն իրական հիմունք է նշվում, երբ եթե շաղկապով սկսվող նախադասության մեջ նկարագրվում են ոեալ կերպով գոյություն ունեցող փաստեր: Հիմունքի այս իրական նշանակությունն ընդգծելու համար ստորադաս մասի ստորոգյալը սովորաբար սահմանական եղանակով է արտահայտվում, օրինակ՝

Ինձ թվում է, «դուուցիչ», որ եթե առնետները վազում են ստորերկրյա անցքով, ուրեմն այնտեղ ազատ տարածություն է գոյացել, որով ես կարող եմ լողալ մինչև աստիճանները (ՀՄԱՐ, 228): Էսպես շարունակ մի ամբողջ շաբաթ: Իերգը վճռեց, որ էս երազը եթե էսպես նույնությամբ կըրկընվում է, կնշանակի սրա մեջ մի ճշմարիտ բան կա (ՀԹԵ, 2, 493): Ինչպե՞ս կարող ես դու այդպես մտածել, եթե ճահաշում ես ինձ (ՕԴԲԽՊ, 78):

Նկատելի է, որ եթե շաղկապի գործածությամբ կասկածի կամ ենթադրության ինչ-որ աղոտ երանգ դեռ պահպանվում է, որը, սակայն, ավելի ոճական արժեք ունի, քան իմաստային (որպես թե՝ «եթե իրոք առնետները վազում են...», կամ «եթե ճիշտ է այն, որ առնետները վազում են...», մինչդեռ Բանի ու շաղկապի գործածությամբ այդ երանգը վերանում է, և հիմունքը ներկայացվում է որպես ստույգ և իրական:

2) Երբ պայմանը հակադիր է այն իրողությանը, որը ցանկալի կամ հնարավոր է համարվում, ապա կապակցվող մասերի միջև արտահայտվում է հակադրության ինչ-որ անորոշ երանգ: Զիջական նշանակություն ունեցող եղանակավորող բառերի օգտագործմամբ այս երանգն ավելի է շեշտվում: Բերենք օրինակներ՝

Հիպոն... Հիպոն կապեր, եթե մինչև անգամ ծնողները նրան չգտնեին (ՆԶՊՊ..., 482): Ո՛չ, ո՛չ, չի կարելի հաշտվել: Եթե նույնիսկ մենք մնանք մի տան մեջ, մենք օտարներ ենք (ՏԱԿ, 1, 21): Այդ դատարկ խաղալիք է, որովհետև իրականում երբեք ոչ մի ռեուլյուցիոն կազմակերպություն լայն դեմոկրատիզմ չի կիրառել և չի կարող կիրառել, նույնիսկ եթե շատ է ցանկանում այդ (ԼԵ, 5, 638):

Եթե նույնիսկ շաղկապը, որը բավական տարածված է լեզվում և արդեն ձեռք է բերել հարադիր շաղկապի արժեք, արտահայտում է պայմանա-գիշական հարաբերություններ, որոնց դեպքում միշտ էլ առկա է հակադրության երանգը:

Իմաստային այլ երանգ է արտահայտվում եթե շաղկապի հետևյալ կիրառություններում.

Նա արտաքուստ հանգիստ էր, եթե չլինեին թեթևակի դողացող ձեռքերը, որ ակամայից մատնում էին նրա հուզմունքը (ՍԳ, 1958, № 6, 64): Մենք վստահ ենք, որ Սուեզի ջրանցքի շրջանում դրությունը չի սրվի, եթե այն արհեստականորեն չսրեն դրսից (ՍՀ, 1956, օգոս. 1, 2):

Եթե շաղկապով կապակցվող այս վերջադաս նախադասությունները, ինչպես տեսնում ենք, սահմանափակում են գլխավորի բովանդակությունը, մեջ բերելով այնպիսի վերապահումներ, որոնց բացակայությամբ միայն ընդունելի կհամարվեր և իրականության կհամապատասխաներ այն, ինչի մասին խոսվում է գլխավորում:

3) Մենք արդեն նշել ենք, որ պայմանա-հետևանքային հարաբերությունների արտահայտման համար երկրորդական նախադասության գործողությունը պետք է նախորդի գլխավորի գործողությանը, կամ նրա հետ միաժամանակ կատարվի: Սակայն պատահում են դեպքեր, երբ հակառակն է կա-

տարվում: Նման դեպքերում եթե շաղկապով սկսվող մասը վերջադաս դիրք է ունենում և չի պայմանավորում գլխավոր նախադասության գործողությունը, քանի որ վերջինս ժամանակով նախորդում է երկրորդականի գործողությանը: Ստացվում է այնպես, որ պայմանի նշանակություն ունեցող նախադասությունը միաժամանակ ներկայացվում է որպես անուղղակի հետևանք այն բանի, ինչ ասված է առաջադաս գլխավորում. օրինակներ՝

Երևի երեսային լավ չեն կերակրել, եթե նա անընդհատ լաց է լինում: Հավանաբար Սուրիկը դասը լավ չի սովորել, եթե անընդհատ գրքին է նայում,— մտածեց ուսուցիչը: Երեսային թվաբանություն լավ չգիտե, եթե այս հասարակ խնդիրը չի կարող վճռել:

Նկատելի է, որ եթե պայմանի այս երկրորդական նախադասությունները ստույգ և կասկածի տեղիք չտվող ռեալ փաստեր են արտահայտում, ապա գլխավորում արտահայտված իրողությունը ենթադրական նշանակություն ունի, քանի որ այնտեղ տրվում է ստորադասում նկարագրված փաստի հավանական (կամ ամենահավանական) հիմունքներից մեկը միայն: Այս բանին մեծապես նպաստում են գլխավորում սովորաբար օգտագործվող երևի, հավանաբար եղանակավորող բառերը, որոնց բացակայությամբ ներկայացվող հիմունքը ավելի հաստատ ու իրական արժեք է ստանում (տես վերջին օրինակը): Պետք է նշել, որ հետևանքի երանգի հետ միաժամանակ եթե շաղկապով կապակցվող այս երկրորդական նախադասությունն ունի նաև հիմունքի ինչ-որ նշանակություն՝ գլխավոր նախադասությամբ արտահայտված կարծիքը որպես իրողություն ընդունելու համար: Բերենք մի օրինակ ևս. «Նա ֆիզիկապես թուլացել է, եթե այլևս չի կարող մրցունենում հաջող հանդես գալ»:

Նման կառուցվածքի նախադասություններում եթե շաղկապը ֆանի ու-ով փոխարինելիս շեշտվում է հիմունքի իրական լինելը: Ու շաղկապի օգտագործման դեպքում կարծես հիմունքն ու հետևանքը համատեղ են հանդես գալիս: Երբ եթե-ով սկսվող ստորադաս մասը առաջադաս դիրք է ստա-

նում, հետևանք նշող մասը երբեմն կապակցվում է նշանա-
կում է բառակապակցությամբ. օրինակ՝ «Եթե ճամփի մեջ
քար է ընկած և առաջին անցորդը նկատելով այն և վնասե-
լով ոտքը, չի վերցնում ու մի կողմ շարտում, նշանակում է
պակաս են նրա մարդկային արժանապատվությունները (ՍՀ,
1958, նոյ. 14, 4)»:

4) Մենք խոսել ենք այս շաղկապի ժամանակի երանգով
կիրառությունների մասին, երբ նշվում էին պարբերաբար
կրկնվող գործողություններ ու դեպքեր: Բերենք այլ կարգի
մի քանի օրինակներ ևս. «Նա կհասնի այն ժամանակ, եթե
(երբ) մերոնք ապստամբեն (նՁ, 221)»: «Մի սարսափեք,
եթե լսեք ոտքերիդ տակից ներքև գլորվող քարերի արձագան-
քը (Ավ., 1960, հոկտ. 29, 2)»:

5) Բացատրական շաղկապի ֆունկցիայով եթե շաղկա-
պը տարածված չէ: Նրանով կապակցվող նախադասությունը,
լրացնելով ստորոգյալին, միաժամանակ չի կորցնում իր են-
թադրական նշանակությունը և արտահայտում է այնպիսի
իրողություններ, որոնք հնարավոր կամ ցանկալի են համար-
վում. օրինակներ՝

Այնպես որ, ավելի լավ է, եթե (որ) չգնաք... (ՏԱԿ, 1,
331): Այլ բան էր, եթե (որ) լեռներ նրան որևէ հույս տված
լիներ, որևէ կերպ հետապնդած լիներ (նՁ2, 406): Ճիշտ
կլինի, եթե (որ) ռեսպուբլիկայի յոթնամյա պլանում լայն
տեղ տրվի մեքենայացման և ավտոմատացման ուղղությամբ
կատարվող աշխատանքին (ՍՀ, 1958, դեկտ. 17, 2):

Որ շաղկապի օգտագործման դեպքում երկրորդականով
նշվող իրողությունները մասամբ կորցնում են ցանկալիու-
թյան կամ հնարավորության երանգը:

Էզդվում բավական տարածված է պայմանի նշանակու-
թյունը շեշտող այն դեպքում հարաբերյալի գործածությունը
գլխավոր նախադասության մեջ: Այս դեպքում արդեն կա-
պակցվող մասերի միջև առկա է պայմանա-բացատրական
հարաբերություն. օրինակ՝ «...Այդ բանում էլ կատարումը
հնարավոր է միայն այն դեպքում, եթե դրան համաձայնե-
ինչպես Սովետական Միությունը, այնպես էլ Ամերիկայի

Միացյալ Նահանգները (ՍՀ, 1958, նոյ. 27, 4)»։ Հրապարակախոսության լեզվում երբեմն հանդիպում է այն դեպքում, եթե նորակազմ շաղկապական հարադրությունը. օրինակ՝ «Այն դեպքում, եթե ձեռնարկվի ՍՍՌՄ-ի և նրա դաշնակից սոցիալիստական պետությունների դեմ ուղղված ագրեսիայի փորձ...», ռազմական անհրաժեշտությունը անխուսափելի կդարձնի պատասխան հարվածը... (ՍՀ, 1958, դեկտ. 16, 3)»։

6) Այս շաղկապը զուտ ռճական-արտահայտչական նշանակություն է ձեռք բերում այն օրինակներում, որտեղ նրանով կապակցվող մասերի բովանդակությունը բացառում է պայմանա-հետևանքային որևէ հարաբերության հնարավորությունը. օրինակ՝ «Ծա մավոնը չեմ, եթե չապացուցեմ, որ նրանք հարյուր տոկոսով զրպարտում են (ՆԶՀ, 477)»։ «Եթե Սուրիկը գա, ես իմ վիզը կկտրեմ»։ Այստեղ տրամաբանորեն չեն արդարացվում նմանօրինակ հարցադրումները։

7) Խիստ տարածված են եթե շաղկապի կիրառությունները ստորադասական կապակցությունից դուրս, պարզ նախադասության կազմում։ Նման դեպքերում նրանով սկսվող նախադասությունները կարող են արտահայտել զանազան իմաստային կամ զգացմունքային երանգներ։ Նշենք մի քանիսը.

ա) Որևէ ենթադրություն, որի իրականացումը ցանկալի է. «Իսկ եթե ճամփի պաշարը վերջանա (ԱԲԵ, 425)»։ «Եթե հանկարծ մոլորվեք, հեռանար ճանապարհից, մութն իջնե՞ռ ու մնար սարում (ԱԲԵ, 417)»։

բ) Որևէ ցանկություն, որի իրականացումը խիստ փափագելի է (կամ՝ էր)։ «—Ախ, եթե քեզ գոնե մի անգամ տեսներ Շապուհ արքան,— ասում էր նա սրտագին բաղձանքներով (ԲՍ, 444)»։ «Այնքան եռանդ ունեի աշխատելու և այնպիսի կորով... եթե մնացած չինե՞ր այդ երիտասարդությունը (ԱԲԵ, 117)»։

գ) Որևէ անվճռական ցանկություն, խնդիր. «—Լավ, անպայման կգաս։ Իսկ եթե (գուցե) երեխաներին էլ բերեիր։ Նրանք իրենց լավ կզգային, կզվարճանային»։

Նկատելի է, որ այս բոլոր օրինակներում պայմանականորեն կարելի է ենթադրել պայմանից բխող հետևություններ (օրինակ՝ Իսկ եթե ճամփի պաշարը վերջանա... (ապա ի՞նչ ենք անելու):

8) Պայմանից բխող հետևության ոչ մի հարաբերություն չի նշվում, երբ եթե-ով կապակցվող նախադասություններում լրացուցիչ հաղորդումներ, զուգահեռ դիտողություններ կամ էլ ճշտում արտահայտող վերապահումներ են մեջ բերվում: Այս դեպքում այդ նախադասությունները այս կամ այն չափով բաժանվելով տվյալ նախադասության շարահյուսական կառուցվածքից (և ինտոնացիայով էլ առանձնանալով), միջանկյալ նախադասության արժեք են ստանում¹: Նրանք կարող են առաջադաս, միջադաս և վերջադաս դիրք ունենալ: Օրինակներ. «Այդ կաստայի մարդկանց համար ես արհեստավոր եմ, մի վաճառական՝ եթե կուզես, բայց մի արդյունաբերող, որ ձեռնարկություն է պահում Բուլիո փողոցում (ՕԴԲԵՊ, 80): «Սրանք են առողջապահության տարրական կանոնները կամ, եթե կարելի է ասել՝ այբուբենը (ԺՎԲՀՀՄ, 159):

Սահմանափակման երանգը հատկապես նկատելի է վերջադաս կիրառություններում.

Մի օր աշխատանքից հետո Արամը դուրս եկավ Աստաֆյան փողոցում զբոսնելու, եթե միայն կարելի էր հանգիստ խղճով զբոսնել այն ժամանակ, երբ ամեն կողմից մայթերի վրա լսվում էր քաղցամահների նվոցը (ՆԶՊՊ..., 403): Այդ հին շուկայում կային և մի քանի խանութներ, որոնք ցուցանակ ունեին, ինչպես իսկական շուկայի խանութները, բայց ներսը դարակները դատարկ էին, եթե չհաշվենք ճրագի յոթանոց ապակիները և ծղոտների մեջ, դազանի սապոն, մի երկու կապ պարան... (ԱԲՆ, 314):

¹ Հավ կլինեիր նման նախադասությունները առնվազն կոչել, քանի որ միջանկյալ տերմինը իր նշանակությամբ ակնարկում է այդ նախադասությունների միջադաս գործածությունները:

Պետք է նշել, որ եթե շաղկապի նման կիրառությունները շատ են տարածված գիտական և հրապարակախոսական գրականության մեջ:

Եթե շաղկապը կայուն դիրք չունի: Մեծ մասամբ օգտագործվելով նախադասության սկզբում, կարող է նաև միջադաս կիրառություններ ունենալ՝ մանավանդ՝ գեղարվեստական գրականության լեզվում: Նկատելի է, որ միջադաս դիրքով նախադասության ո՛ր մասում էլ որ գտնվի, նա սերտորեն կապվում է գործողություն նշող ստորոգյալի հետ՝ դրավելով նրա առաջ: Ավելորդ համարելով բերել համապատասխան օրինակներ, քանի որ այս բաժնում մենք արդեն հանդիպել ենք նման կիրառությունների, տանք այս շաղկապի վերջադաս գործածության մի օրինակ՝ «Ապրեցեք կյանքում, կարող եք եթե, Ինձնից օգնություն չուզեք երբևէ (ԳՍԲ, 92)»:

Չափածոյում երբեմն հանդիպող նման վերջադաս գործածությունները գերազանցապես հանգի համար են և խորթ են արդի գրական հայերենին:

Ինչ վերաբերում է բարդ ստորադասական նախադասության կազմում եթե շաղկապով կապակցվող պայմանի երկրորդական նախադասությունների շարադասությունը, ապա պետք է ասել, որ նրանք երեք դիրքով էլ կարող են հանդես գալ:

Պայմանա-հետևանքային հարաբերությունների արտահայտման համար տարածված են նաև եթե... ապա, եթե... ուրեմն և այլ զուգահեռ շաղկապներ, որոնց մասին կխոսենք ստորև:

Եթե... ԱՊԱ.—Եթե շաղկապով կապակցվող երկրորդական նախադասության և գլխավորի միջև պայմանի (կամ ենթադրական հիմունքի) և հետևանքի իմաստային հարաբերությունն ավելի որոշակիորեն է գրսևորվում, երբ վերջադաս դիրք ունեցող գլխավորը կապվում է ապա շաղկապով: Այս դեպքում ևս կարող են արտահայտվել իրագործելի և ոչ իրագործելի ենթադրություններ և նրանցից բխող հետևություններ, որոնց վրա մենք կանգ չենք առնի, քանի որ այդ մասին արդեն մանրամասն խոսել ենք:

1) Բուն պայմանա-հետևանքային հարաբերություններ.

Եթե մենք չփրկվենք հանքահորի ելքով, ապա մեզ կազատեն փորված անցքի միջով (ՀՄԱԸ, 231): Եթե նրանք այդ մրցման մեջ հաղթանակեն, ապա կդառնան երկրի շեմպիոններ (Եր., 1958, նոյ. 5, 3): Եթե հա գնայի Նյու-Յորք, — ասել է Չապլինը, ապա հավանաբար այնտեղ կհանդիպեի անախորժությունների (ԳԹ, 1956, հուլ. 29, 1):

Մշտապես գործող օրենքի ուժ ունեն նշվող պայմանը և նրանից բխող հետևությունը հետևյալ օրինակներում. «Եթե երկու անկյունները հակադիր են, ապա նրանք հավասար են»: «Եթե գոնգը ազդարարում է պայքարի ավարտը, ապա այդ դեպքում զգուշացումը չի հաշվվում (ՀՅ, 1957, դեկտ. 27, 4)»:

2) Հիմունքի երանգը ընդգծվում է հետևյալ օրինակում. «...նա բարձրացավ աթոռից և ասաց, որ եթե իր լավագույն ընկեր Վալդյան չի կարող մեկնել, ապա նա՝ Տոլյա Օրլովը կմնա նրա հետ (ՖԵԳ, 98)»: Հետևանքի երանգը շեշտելու համար երբեմն ապա-ին կցվում է նաև ուրեմն շաղկապը, ինչպես՝ «Եթե կաթողիկոսի գալը կապ ունի մի նոր դժբախտության հետ, ապա ուրեմն իշխանի բացակայությունը վտանգի մեջ է դնում մեզ (Մուր., 19)»:

3) Զուգահրեական հակադրական հարաբերություններ են նշվում հետևյալ օրինակներում. «Եթե ռախիտը քննության առնվող զոնայում հաղվադեպ երևույթ է, ապա ատամների ոսկրափտումը՝ ռախիտի բացակայության յուրահատուկ «փոխհատուցումը», բավականին հաճախ է հանդիպում (ԺԴԿՍԱ, 161)»:

4) Պայմանի հետ միաժամանակ զիջական երանգ է ար-

1 Նման իմաստային հարաբերություններ արտահայտող բարդ համադասական նախադասությունները որոշ ուսու քերականների համարում են ստորադասական, իսկ եթե շաղկապով սկսվող երկրորդականը՝ զուգահրեական (сопоставительные) երկրորդականներ (Русский язык в школе, 1957, 5, էջ 127): Մենք եթե... ապա շաղկապի այս կիրառությունները քննել ձեռք համադասական շաղկապների բաժնում, որպես հակադրական-զուգահրեական հարաբերություններ արտահայտող:

տահայտվում հետևյալ օրինակներում. «Եթե մեր մամուլում հատ ու կենտ քննադատական հոդվածներ են լույս տեսել բիբլիոգրաֆիական մենագիր աշխատությունների վերաբերյալ, ապա դժբախտաբար աչքաթող է արված բիբլիոգրաֆիական աշխատանքի մի կարևոր բնագավառ՝ ընթացիկ բիբլիոգրաֆիան... (Եր., 1958, օգոս. 5, 3)»:

Զիջական երանգի արտահայտման համար օգտագործվում է եթե... դա չի նշանակում, որ... շաղկապական կապակցությունը, որը հավասարազոր է չնայած... սակայն զուգադիր շաղկապին, ինչպես՝ «Եթե ես չեմ երգում կամ նվագում, դա չի նշանակում, որ երաժշտություն չեմ սիրում»:

Եթե... ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿ—Այս զուգադիր շաղկապական կապակցությունը պայմանա-հետևանքային հարաբերությունները ներկայացնում է ժամանակային որոշակի փոխհարաբերությունների մեջ. օրինակ՝ «Ու որոշում եմ՝ դնալ կանգնել նրանց տան մոտերքը կամ անցուղարձ անել դիմացի մայթի վրա. եթե տեսնեմ հյուրերը գալիս են, այն ժամանակ ես էլ կմտնեմ ներս (ՍԶ, 358—359)»: Այն ժամանակ կապակցության բերված գործածությունը մի անգամ ևս ապացուցում է, որ ապա շաղկապի հետևանքի երանգը զարգացել է ժամանակի մակբայի նրա կիրառություններից:

Եթե... ՈՒՐԵՄՆ—Պայմանից բխող հետևանքը էլ ավելի է ընդգծվում, երբ գլխավոր նախադասությունը սկսվում է ուրեմն շաղկապով. օրինակ՝ «Եթե նա շարունակ այդպես գունատվի, ուրեմն լևտնը չի կարող ոչ մի աշխատանք կատարել կոմերիտիության մեջ (ՆԶՆ, 180)»:

Եթե... ԳՈՒՅԵ, ԵԹԵ... ԹԵՐԵՎՍ—Գլխավոր նախադասության մեջ նկարագրվող իրողության կատարման համար պայմանի արժեքը նվազագույն աստիճանի է հասնում, երբ վերջադաս գլխավորը սկսվում է գուցե, թեև և նման եղանակավորվող բառերով: Բերենք մի քանի օրինակներ՝

Եթե բախտն ու վայելքները քեզ ժպտան, օտար մարդիկ քեզ սիրաբար ողջույն տան, Գուցե ես լամ բախտիդ համարիմ անգին, Սակայն դարձիր, վերադարձիր դու կրկին (ՎՏ,

32): Եթե սա տիրապետող մոտիվ լիներ Շիրազի ստեղծագործության մեջ, Բերես կարելի լիներ հանդիմանել բանաստեղծին (ՄՀ, 1956, օգոս. 4, 3):

ԵԹԵ... ԹՈՂ—Պայմանից բխող հետևությունը թող եղանակավորող բառի օգտագործմամբ ներկայացվում է որպես թեև՝ ոչ ցանկալի, սակայն այս կամ այն չափով անխուսափելի՝ օրինակ՝

Եթե այդպես է, թող գնան, հերն էլ անիծած (ՀՔ, 114):
—Եթե կաղնին պիտի բնկնի կայծակից, ճյուղերն էլ թող այրվեն,— հաստատեց Սիսակը (ՀՔ, 234):

ԵԹԵ... ԳՈՆԵ—Այս զուգադիր շաղկապի օգտագործմամբ գլխավոր նախադասության մեջ նկարագրվող հետևանքը ներկայացվում է որպես միակ քիչ թե շատ մխիթարական արդյունքը այն բանի, ինչ ասված է երկրորդականում. «Եթե նա շատ է աշխատում, գոնե ֆիզիկապես կոփվում է»: Զիջական այս յուրահատուկ հրանգն արտահայտվում է նաև այն դեպքերում, երբ ստորադաս մասում ստորոգյալը ժխտական է. օրինակներ՝

Եթե չի կարող «մնալ բարով» ասել, գոնե ժպտա վերջին անգամ: Ես մեծ հույսեր ունեմ, որ եթե չհաղթենք, գոնե պատվով կմեռնենք... (ԲՄ, 140): Եթե «Ջերմուկ» չկար, գոնե «Արզնի» բերերի:

ԵԹԵ ՈՉ... ԳՈՆԵ (ԳԵԹ)—Այս զուգադիր շաղկապը կապակցում է նախադասության համազոր անդամների կամ շարահյուսորեն նույնատիպ բառակապակցություններ: Նրա օգտագործմամբ արտահայտվում են պայմանա-գիջական հարաբերություններ՝ սահմանափակման ընդհանուր հրանգով:

Գոնե շաղկապով սկսվող մասը ճշտում և միաժամանակ

1 Այլ նշանակություն ունի թող եղանակավորող բառը առանձին գործածությամբ, ինչպես՝ «Թող բոլորը այսօր ժամը 8-ին հավաքվեն դպրոցի բակում»: Այստեղ արդեն նա հորդորական մասնիկի դեր է կատարում՝ կապվելով բայի այն զեմքերի հետ, որոնք հրամայական եղանակի հատուկ ձևից զուրկ են (I և III զեմքերը):

սահմանափակում է եթե ոչ շաղկապական բաղադրիչով սկսվող մասի բովանդակությունը, ինչպես՝ «Երևում է, որ քամին ու անձրևը եթե ոչ դադարել, գոնե մեղմացել չին (ՆԴ, 13)»։ Զիջական այս երանգը, որը զրոնորվում է ստորոգյալների միջև (համեմատիր նույն օրինակը զիջական քեև... Բայց զուգադիր շաղկապի օգտագործմամբ՝ «...քեև չէին դադարել, բայց մեղմացել էին»), նույն որոշակիությունամբ չի արտահայտվում նախադասության այլ անդամների միջև. օրինակներ՝

Վառուդյանի այդ օրիգինալ կարծիքում կար՝ եթե ոչ ուղղակի, գոնե կողմնակի ճշմարտության որոշ տոկոս (ԵԶ, 337)։ Ինչպես, նա՞, այդ հասարակ աղջիկը չի՞ վախենում Միքայել Ալիմյանից, մի մարդուց, որ ամեն բան կարող է անել, եթե ոչ անձնական հրապույրներով, գեթ ամենահաղթ փողի ուժով (Շիրվ., 184)։

Ինչպես տեսնում ենք, սահմանափակման նշանակությունն այս օրինակներում ավելի խիստ է արտահայտվում, որի պատճառով գրեթե բոլորովին հերքվում է ընդգծված մասերի բովանդակությանը։ Նկատելի է, որ այս զուգադիր շաղկապով կապակցվող մասերը ավելի համադասական կապակցության բնույթ ունեն, քան ստորադասական։

ԵԹԵ ՈԶ... ԱՊԱ.—Այս զուգադիր շաղկապի կիրառության ժամանակ յուրահատուկ իմաստային նրբությամբ է ներկայացվում երկու ենթադրություններից վերջինի հավանականությունն ու անավելությունը. օրինակ՝ «Եթե ոչ այսօր, ապա վաղը նա այստեղ կլինի»։

ԹԵ—Պայմանի նշանակությամբ՝ այս շաղկապը, ի տարբերություն եթե-ի, առավելապես տարածված է պարզ ժողովրդական լեզվում, որտեղից էլ մուտք է գործել գեղարվեստական գրականության մեջ՝ հերոսների խոսելաձևը հարազատորեն վերարտադրելու նպատակով։ Այս պատճառով նրա ռճական կիրառությունների սահմանները նեղ են, ուստի և հատուկ արտահայտչական արժեք են ստանում այն գործերը, որտեղ այս շաղկապը առատորեն օգտագործված է։ Ունենալով գործածության այդպիսի նեղ ոլորտ, այս շաղկապը

սահմանափակ հնարավորություններ ունի իմաստային ալլերանգներին արտահայտման համար, մանավանդ որ նա ղերծ է նաև ալլ շաղկապների հետ զուգադիր գործածություն ունենալու հնարավորությունից: Նկատելի է, որ քե շաղկապը հաճախ միջադաս դիրք է գրավում կապակցվող նախադասությունից կազմում:

1) Բուն պայմանա-հետևանքային հարաբերություններ (իրագործելի կամ ոչ իրագործելի)։

Միտք արի որ՝ քե էս քոթուկը բերի վրես գցի, տակին շունչս կըկտրի (ՀԹՆ, 1, 335): Ժամանակ դըրին հինգ հարյուր տարի Արքան հավքերի, արքան անտառի, որ քե որոշված էն օրին հասնեն, էն օրը մին էլ դան իրար տեսնեն (ՀԹՆ, 1, 217):

Ենթադրությունը և նրանից սպասվող հետևանքը կարող են ներկայացվել որպես պարբերաբար կրկնվող: Հաջորդ օրինակում հիշյալ նշանակությունն արտահայտվում է բայական անցյալ կատարյալ ժամանակով, որը, պարզ է, օգտագործված է սահմանականի ներկայի կամ ըլծականի ապառնիի նշանակությամբ. «Դե գելերի սովորությունն էլ գիտեք էլի. մինը քե վիրավորվեց, մյուսները նրա վրա կթափվեն, կուտեն (ՀԹՆ, 1, 402):

2) Բացատրական շաղկապի երանգով. «Պատմում է՝ ոտքերը կախ տալիս թոնրի վրա: Նրան ի՞նչ, քե աչքերը կիսախուփ անող թոռնիկը վախից կուչ է եկել տատի փեշի մոտ, շգիտե՛ լսի՞ պապի զլխով անցածը, թե քնի տաք քուրսու մոտ (ԱԲՆ, 83)»:

3) Յուրահատուկ արտահայտչականություն է ստանում բարդ նախադասությունը, երբ ներկայացվող ենթադրության իրական լինելը պնդելու համար զլխավորում նրան հակադրվում է անիրագործելի մի հետևանք. օրինակ՝ «Եվ ի՞նչպես նա մինչև այժմ էլ ձեռքը կապած է պահում... Ես մեռնեմ, քե նրա ձեռքն իմ ձեռքից էլ առողջ չիների... (ՆԴ, 278)»:

Դե ՈՐ—նկատելի է, որ քե շաղկապը տարածված չէ հիմունքի հարաբերություն ակնարկող կիրառություններով: Այս նշանակությամբ ժողովրդական խոսքում տարածված է դե ու

հարադիր շաղկապը, որի օգտագործմամբ ներկայացվող իրողությունները ոչ այնքան ենթադրական, որքան իրական արժեք են ստանում. օրինակներ՝

— Դե որ (քանի որ) այդպես է, ինչո՞ւ առաջուց չէիք ասում, որ իդուր ժամավաճառ չլինեի կարողալով... (ՆԴ, 189):
— Բա էս ո՞նց պրտի ըլի: — Դե որ (քանի որ) չըկա՝ ի՞նչ անենք... Գնանք, քեռի Խեչան (ՀԹԵԺ, 3, 64):

Երբ այս բաղադրիչները տրոհված են լինում, այդ դեպքում դե բառը ըմբռնվում է որպես սոսկ բացականչություն, կորցնելով շաղկապական բաղադրիչի իր նշանակությունը, ինչպես՝ «Դե, որ այդպես է, ի՞նչ ես բողոքում,—նկատեց կիպարիտը (ՆԶՀ, 258)» «Դե ինչ անենք, որ չկա»:

Թե ՈՐ—ժողովրդական լեզվում տարածված էր նաև պայմանի հարաբերություն արտահայտող թե որ հարադիր շաղկապը: Բերենք օրինակներ՝

— էս էլ հերիք էր, նանի ջան: Չէ՞ դու ինքդ ասիր՝ թե որ շատ իմանամ, շուտ կըպառավեմ (ՀԹԵ, 2, 388): Հմայք ունի երգս այնպես, Հոգսի ժամին թե որ երգես, Թախիծ ու վիշտ կըքանա—Լքված հոգուն նեցուկ է նա (ՀՀԵ, 89): ...Թող փող զրկի՝ ունի թե որ... (ԵԶ, 82):

ՈՐ—Դարձյալ ժողովրդական լեզվում և այդ պատճառով էլ միայն գեղարվեստական գրականության մեջ է տարածված այս շաղկապը, որը պայմանի նշանակություն արտահայտելիս մեծ մասամբ միջադաս կիրառություն ունի: Կարող է արտահայտել ինչպես բուն պայմանի, այնպես էլ նրա հետ միասնաբար հանդես եկող իմաստային այլ երանգներ.

1) Բուն պայմանա-հետևանքային հարաբերություններ (իրագործելի կամ ոչ իրագործելի).

— Հա՛, ճշմարիտ, թոկը որ ետևիցդ քաշ տաս՝ գեղը կվախենա, մոտ չի գալ,—հաստատեց քեռի Անդրիասը (ՀԹԵ, 1, 401): — Է՛յ, Մանթաշի նըշխուն հավքե՛ր, Իմ դարդըս որ՝ ձերն էղներ, Ձեր էդ զառ-վառ, խաս փետուրներ Կսենային,

քանց գիշեր (ԱԻ, 34): Ես ու մեռնիմ՝ ինձ կթաղեք Ալագյաղի լանջերում... (ԱԻ, 39): Բոլոր հանգամանքները ու իմանանք, կտեսնեք, որ ալեկի վաղ չէի կարող գալ ձեզ նեղություն պատճառելու (ՆԴ, 82):

Նկատելի է, որ պայմանի հետ միասնաբար որոշ օրինակներում ակնարկվում է նաև ժամանակի երանգ:

2) Պայմանի հետ միաժամանակ զիջական երանգ է արտահայտվում, երբ երկրորդական նախադասության մեջ առկա է էլ եղանակավորող բառը. օրինակ՝ «Մայրը միշտ մայր է, օձ էլ ու (եթե նույնիսկ) ծնի, Իր խիղճը երբեք նա չի կորցրնի (2Շ, 48)»:

Այս շաղկապը ուրիշ մասնակի կիրառություններն ունի: Այսպես, պարբերաբար կրկնվող երևույթները կամ դեպքերը որպես պայման ներկայացվելիս վերջադաս գլխավոր նախադասությունը հաստատ ու իրական հետևություն է նշում. օրինակ. «Մի վայրկյան ու ուշացան (ուշանում են), արդեն ջղերս գրգռվում են (ՆԴ, 44)»:

Յուրահատուկ սաստկական կիրառություն ունի ու շաղկապը, երբ գլխավոր նախադասությունը հարց է պարունակում, իսկ երկրորդականում ստորոգյալը ժխտական ձևով է արտահայտվում. «—Բա ի՞նչ անեմ, ու լաց չլինեմ, քեռի՛ Մացակ,—ծնկները տրորելով ողբում է Անուշը (ՆՁՀ, 432)»:

Բարդ ստորադասական նախադասության հիշյալ տիպը բավական տարածված է ժողովրդական խոսքում: Այս օրինակում հնարավոր է ենթադրել նաև ու շաղկապի կիրառությունը «որպեսզի» նշանակությամբ: Համեմատիր նաև՝ «Իսկ ի՞նչ անեմ, ու (որպեսզի) քեզ չսիրեմ»:

Այս շաղկապով կապակցվող պայմանի երկրորդական նախադասությունները մեծ մասամբ առաջադաս դիրք ունեն: Վերջադաս լինելու դեպքում սովորաբար գուցահեռ ուրիշ իմաստային երանգներ էլ են արտահայտվում:

Պայմանի հարաբերություն արտահայտող քն, ու շաղկապները հազվադեպ են հանդիպում թարգմանական գրականության լեզվում:

ՄԻԱՅՆ, ՄԻԱՅՆ ԹԵ՛—Այս շաղկապները արդի հայերենում արտահայտում են թե համադասական և թե ստորադասական հարաբերություններ: Առաջին դեպքում նրանց դերն աչն է, որ սահմանափակում են նախորդ մասի բովանդակությունը, ձեռք բերելով հակադրական շաղկապի նշանակություն (տես էջ 156):

Երբ սրանցով կապակցվող վերջադաս նախադասություններում ստորոգյալն արտահայտվում է ըղձական եղանակով, ապա այս շաղկապները արդեն ձեռք են բերում պայմանի նշանակություն (զիջական երանգով)՝ արտահայտելով ստորադասական հարաբերություն. օրինակներ՝

Դո՛ւ եղիր, ասավ, մեր գլխի տերը, Ու քու շըվաքում քանի որ մենք կանք, Քու ծառան լինենք, քու խարջը միշտ տանք, Միայն մեր երկիր քարուքանդ չանես Ու քաղցրը աչքով մեզ մըտիկ անես (ՀԹԾ, 2, 99): Նա պատրաստ է ամեն կերպ գոհացում տալ Գրիշային, միայն թե կարողանա արդարանալ ինքն իր խղճի առջև (Շիրվ., 227): Նա պատրաստ էր ամեն անձնվիրության, միայն թե ազատեր սիրելի իշխանին երգման կապանքներից (Մուր., 405):

Ինչպես տեսնում ենք, այս կառուցվածքի բարդ նախադասություններում գլխավորում նկարագրվող իրողությունը ներկայացվում է որպես զիջում, միայն թե իրականանա երկրորդական նախադասության մեջ նշված խիստ ցանկալի պայմանը: Վերջինս կարող է դիտվել նաև որպես այնպիսի՝ նպատակ, որին ամեն կերպ ցանկանում է հասնել սուբյեկտը: Զիջական երանգը ավելի է շեշտվում, երբ նախորդ մասում օգտագործվում է քող բառը. օրինակ. «Կուվում ընկնեմ հերոսի պես, Թող չունենամ գերեզման. Միայն թե դու լաս ու հիշես, Թող քո՛ սրտում ես մնամ (ՆԶ, 278)»:

Տարածված լինելով գերազանցապես գեղարվեստական գրականության մեջ, այս շաղկապները ունեն նաև իրենց բարբառային տարբերակները՝ մեճակ, մեճակ թե ձևերով: Բերենք մի օրինակ՝ «Ինչ որ ասեին, համաձայն էր, մեճակ թե համփա մարդկանց խաթրին չկաչեր (ԱԲԵ, 10)»:

Զիջական երանգի առկայությունը, ինչպես տեսանք, պայմանավորված է լինում կապակցվող մասերի կոնկրետ նյութական բովանդակությամբ: Այդ է պատճառը, որ երբ կապակցվող մասերի միջև նման փոխհարաբերություն չի լինում, միայն թե շաղկապը արդեն դադարում է այդ երանգը նշելուց, որի պատճառով նա իր նշանակությամբ ավելի մոտենում է եթե շաղկապին. օրինակ՝ «Փաստն այն է, որ Գևորգը հեշտությամբ է հասկանում տրակտորի լեզուն, միայն թե նրան բացատրող լինի (նՁՀ, 76)»:

ԵԹԵ ՄԻԱՅՆ—նախորդ երկու շաղկապներից տարբեր է այս շաղկապի արտահայտած պայմանի հարաբերությունը: Տարբերությունն այն է, որ հարադրական այս շաղկապի երկրորդ բաղադրիչը շեշտում է այն պայմանը, որի առկայությամբ միայն կարող է իրագործվել գլխավոր նախադասությամբ արտահայտված իրողությունը: Այս շաղկապի օգտագործմամբ նվազագույնի է հասնում զիջական երանգը կապակցվող մասերի միջև. օրինակ՝ «Գառնին ամուր է և անառիկ. թշնամին նրան վնասել չէ կարող, եթե միայն մատնիչները չդավաճանեն, և եթե պաշարը չսպառի (Մուր., 288)»:

Հայերենին խորթ է այն պայմանով հարաբերյալի օգտագործումը հիշյալ շաղկապի գործածության ժամանակ. օրինակ՝ «Հայրս, աչքերը փակ, բացատրում է նրան, որ ինքն ինձ թույլ կտա տանել այն պայմանով, եթե միայն զգիրն ինքը չի թողնի ինձ ծեծեն կամ վախեցնեն (ՍՁ, 40)»:

Այս շաղկապի օգտագործմամբ երկրորդական նախադասությունը կարող է նաև վերապահում արտահայտող պայման նշել: Այդ հատկապես շեշտվում է հետևյալ կառուցվածքի նախադասություններում. «Ոչինչ չէր փոխվել, ոչինչ չէր կատարվել, եթե միայն փոփոխություն չհամարենք այն հասարակ հանգամանքը, որ գեներալ Ալոշը, Մագուլթի Համոն և ընկերները այդ առավոտ մի փոքր հոգնած էին զգում իրենց, մի փոքր կոտրված, ինչպես այդ լինում է սովորաբար քեֆերից հետո (նՁ, 328)»: Սոսկ ոճական արժեք ունի և միջանկյալ (առնթեր) նախադասություն է կապակցում այս շաղկապը հետևյալ օրինակում. «—Հը, քեզ եմ հարցը-

նում, ինչացո՞ւ էմ ես կամ ինչացո՞ւ են ինձ նմանները, եթե միայն ուրիշներ էլ կան ինձ նման (ՆԴ, 152)»:

Պայմանի գրեթե բոլոր շաղկապների նման, սա էլ կարող է օգտագործվել խիստ ցանկալի, փափագելի հնթադրությունների արտահայտող նախադասությունների սկզբում. օրինակ՝ «—Այստեղ կա թյուրիմացություն,— ասաց նա:— Այո, եթե միայն դա լիներ թյուրիմացություն... (ՏԱԿ, 1, 523)»:

Մեկ ՈՐ, ՊԱՅՄԱՆՈՎ ՈՐ—Պայմանի հարաբերություններ են արտահայտում նաև արդի հայերենում վերջերս տարածված մեկ ուր (ռուս. раз), պայմանով ու՛ր՝ հարադրական շաղկապները, որոնցից առաջինը երբեմն հանդիպում է կենդանի խոսակցական լեզվում, իսկ երկրորդը՝ հրապարակախոսական և գիտա-քաղաքական գրականության մեջ: Բերենք մի օրինակ՝ Նա մոլի ձաղկող է, ուղղափառ է, խուզարկու է հոգու ու սրտի, Նա սիրում է միայն գաղափարը: Պայմանով ուր... շինի խրթին (ԵԶ, 253):

Մեկ ուր շաղկապը ունի իր տարբերակը մի անգամ ու ձևով, որ մենք զետեղել ենք պատճառի շաղկապների բաժնում, նշելով, որ այն ունի նաև պայմանի նշանակություն: Նույնը պետք է ասել նաև մեկ ուր շաղկապի պատճառի նշանակության մասին: Ավելի ճիշտ կլինի գուցե ասել, որ այս երկու շաղկապները պայմանի և պատճառի (հիմունքի) նշանակությունները միասնաբար են ներկայացնում: Բերենք մի օրինակ՝ «Մեկ ուր (եթե, քանի որ) ասաց չէ, էլ իզուր է պընդել, չի համաձայնվի»:

Պայմանի շաղկապների կիրառությունների այս փոքրիկ քննությունը ցույց է տալիս, որ այս շաղկապների օգտագործմամբ կապակցվող մասերի միջև դրսևորվում են ոչ միայն բուն պայմանի հարաբերություններ, այլև իմաստային այլ

1 Այն ցուցական դերանվան օգտագործմամբ հարադիր այս շաղկապը վերստանում է իր նախկին արժեքը որպես հարաբերյալ և հարաբերական, ինչպես՝ Նա կգամ այն պայմանով, որ դու ինձ ընկերակցես:

երանգներ, որոնցից առաջին հերթին պետք է հիշել նիմունֆի, գիջական և ժամանակի երանգները: Կապակցվող մասերի բովանդակությունը և օգտագործվող բայական եղանակներն ու ժամանակները վճռական դեր են խաղում հիշյալ իմաստային երանգների արտահայտման համար: Նկատելի է նաև, որ տարբեր շաղկապների օգտագործմամբ խոսքին տրվում են լեզվա-ոճական տարբեր երանգներ (գրքային, ժողովրդական, բարբառային, թարգմանական և այլն):

6. ԺԱՄԱՆԱԿԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Օբյեկտիվ իրականության մեջ մարդու պրակտիկ գործունեությունը անխզելիորեն կապված է ժամանակի հետ. քանի որ նրա տարբեր հատվածներում է իրականանում մարդու արտադրական գործունեությունը: Ժամանակային հարաբերությունների ճիշտ ըմբռնումը և արտացոլումը հսկայական նշանակություն ունի մարդու համար: Այդ է պատճառը, որ ամեն քիչ թե շատ զարգացած լեզվում մենք հանդիպում ենք այս նշանակությամբ շաղկապների տարբեր տեսակների, որոնք ընդունակ են արտահայտելու ժամանակային փոխհարաբերությունների բազմազան դրսևորումներն ու նրբագույն երանգները:

Ժամանակի շաղկապների օգտագործմամբ կարող են նշվել ինչպես համաժամանակային, այնպես էլ տարժամանակային հարաբերություններ, նայած թե գլխավոր և երկրորդական նախադասությունների մեջ նկարագրվող իրողությունները ներկայացվում են որպես նույն ժամանակամիջոցում կատարվող, թե որպես իրար հաջորդող կամ նախորդող¹:

Այս շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունների տեղադրումը՝ որպես վերջադաս կամ առա-

¹ Գլխավոր և երկրորդական նախադասությունների միջև դրսևորվող ժամանակի հիշյալ փոխհարաբերությունները իր ժամանակին նկատելի է Ս. Պալասանյանը (Քերականութիւն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, 232—233), Ի դեպ, այդ գրքում ժամանակի երկրորդական նախադասությունների կապակցության միջոցները մոակբայ են համարված:

չադաս հաճախ կառուցվածքա-իմաստային տարբերություններ է առաջացնում: Նկատելի է, որ ստորադաս մասի առաջադաս գործածությամբ գլխավոր նախադասությունը կորցրնում է իր հարաբերական անկախությունը և որոշակի ժամանակային կախման մեջ է ընկնում երկրորդական նախադասության բովանդակությունից: Այդ հատկապես նկատելի է, երբ որպես կապակցության միջոց հանդես են գալիս քանի, քանի դեռ, մինչ, մինչդեռ, մինչև, մինչև որ շաղկապները, որոնց օգտագործմամբ ժամանակային ներքին փոխհարաբերությունները մեծ մասամբ սահմանափակման ընդհանուր նշանակություն են ձեռք բերում: Պետք է տարբերել նաև բարդ ստորադասական նախադասությունների այն տեսակը, երբ կապակցվող նախադասությունները արտահայտում են ոչ թե բուն ժամանակային հարաբերություններ, այլ նրանց ֆոնի վրա ուրվագծվող մասնակի այլ նշանակություններ ու երանգներ: Այս տեսակետից հատկապես աչքի են ընկնում եւթ շաղկապի կիսառությունները:

ԵՐԲ—Արդի հայերենում այս բառը կապակցական դերով կիրառվելիս մեծ մասամբ շաղկապ է, թեև զերծ չէ նաև հարաբերական դերանուններին հատուկ որոշ հատկանիշներից: Նա այնքան է տարածված տարբեր պաշտոններ ունեցող երկրորդական նախադասությունների կապակցման դերով, որ կարծես սկսում է ձեռք բերել կապակցական համընդհանուր արժեք՝ արտահայտելով ժամանակի, բացատրական, պայմանի, հիմունքի, հակադրա-գուգադրական հարաբերություններ: Այս հանգամանքն անշուշտ ազդել է նրա դերանվանական արժեքի նսեմացման, աղոտացման վրա և ընդգծել նրա զուտ կապակցական-շաղկապական հատկանիշները: Այս հարցը, սակայն, կարոտ է հատուկ ռեսուսիտության և մեր նպատակից դուրս է:

ԵՐԳ շաղկապի բառական նշանակությունը շատ ընդհանուր է, քանի որ ժամանակային հարաբերությունների տարբեր տարատեսակները չեն նշվում ու կոնկրետանում նրա սոսկ գործածությամբ: Այդ թերին լրացվում է բարդ նախադասության բաղադրիչ մասերի նյութական բովանդակու-

թյամբ, ինչպես նաև բայական եղանակների ու ժամանակների օգտագործմամբ:

Երբ շաղկապի օգտագործմամբ կապակցվող մասերի միջև կարող են դրսևորվել համաժամանակային և տարժամանակային հարաբերություններ:

Ա) Համաժամանակային հարաբերություն—ժամանակային այս հարաբերությունը երբ շաղկապի օգտագործմամբ կարող է ունենալ հետևյալ տարատեսակները.

ա) Ժամանակային լրիվ համապատասխանություն.

Կադոյի դեմքը շողում էր երջանկությունից, երբ խորհրդակցությունների ժամանակ գտնվում էին մեկի աշխատանքը, երբ մեկին պարգևատրում էին (ՆՁՀ, 253): Եվ Շիրվանզադեի ժերունական աչքերը ժպտում էին, երբ խոսում էր մեր երիտասարդության մասին, որի առջև գործունեության լայն ասպարեզներ են բացված (ՍՀ, 1958, նոյ. 14):

Ժամանակային այս հարաբերության դրսևորման դեպքում գլխավոր և երկրորդական նախադասություններում ստորոգյալը սովորաբար արտահայտվում է սահմանական եղանակով՝ ներկա և անցյալի անկատար ժամանակներով, որոնք, ինչպես գիտենք, կարող են գործողության կամ եղելության տեսականություն ու կրկնություն նշել: Նման հարաբերություն է նշվում նաև ընդհանուր և բոլորի կողմից ընդունված կարծիքներ ու տեսակետներ արտահայտելիս, ինչպես՝ «Երբ տրամադրություն չես ունենում, չես կարողանում չորս կերպով պարապել»:

բ) Երբ երկրորդական նախադասության մեջ գործողության տեսականություն նշող ժամանակներ են օգտագործվում, իսկ գլխավորում, ընդհակառակն, նկարագրվում են կատարված և ավարտված գործողություններ, ապա համաժամանակային հարաբերությունը մասնակի բնույթ է կրում. գլխավորում նկարագրվող գործողությունը կատարվում և ավարտվում է երկրորդականում նշված գործողության կամ եղելության կատարման ժամանակակետերից մեկում: Դեռ մակբայի օգտագործմամբ հիշյալ ժամանակային հարաբերությունն ավելի է ընդգծվում. օրինակներ՝

Մի օր էլ Գիքորը երբ մուշտարի էր կանչում՝ դիմացից երկու գյուղացիք դուրս եկան (ՀԹ, 350): Փողի կարիք որ չգաս, դիմիր Լևոն Շահյանին, որի հետ ծանոթացար ինձ մոտ, երբ ես պառկած էի հիվանդ (ՆԳ, 331): Դեռ հորթարած էր, երբ մայրը մեռավ, և Պետին մնաց կատարյալ որբ (ԱՔԵ, 29):

զ) Համաժամանակային պետք է համարել նաև կապակցվող մասերի միջև դրսևորվող ժամանակային այն հարաբերությունը, երբ գլխավոր նախադասությամբ նշվում է ընթացքի մեջ եղող մի գործողություն կամ եղելություն, որը դեռ չավարտված՝ իրականանում է երկրորդական նախադասության գործողությունը¹. օրինակներ՝

Այստեղ դրույցն ավարտվում էր, երբ մեր աջ կողմից մի կանացի ձայն լսվեց (ՈԶՆԻ—1958, 18, (98), 2): Տակավին տատանվում էր նա փախչել ապարանքից, երբ մի օր եկավ շնաշխարհիկ պարուհին—Լի-Սի-Շի (ԱԻ, 285):

Գործողության անավարտությունն ավելի է ընդգծվում գլխավոր նախադասության ստորոգյալի ժխտական ձևի ու նրանում օգտագործվող դեռ, տակավին (հազվադեպ) մակբայների գործածությամբ². օրինակներ՝

Արևը դեռ չէր թուլացրել իր այրուցքը, երբ դաշտից եկավ Ռուբենը (ՍԽՀ, 95): Տակավին ինձ համար չէր լուծված այս առեղծվածը, երբ ընկերս մի երեկո ինձ ասաց ծիծաղելով (ԱԻ, 259): Դեռ ժամը երկուսը չկար, երբ ատյանի դահլիճի ապակյա մեծ դուռը հանկարծ բացվեց և մեկը ներս մտավ (ՏԱԿ, 1, 24):

Ինչպես երևում է բերված օրինակներից, գլխավորի դեռ անավարտ գործողության կատարման ժամանակը բացահայտվում է այդ գործողության ժամանակակետերից մեկում իրականացած մի դեպքի նկարագրությամբ: Ավելորդ չէ նկատել, որ բարդ նախադասության հիշյալ երկու տեսակներում

¹ Որոշ քերականներ ժամանակային հիշյալ հարաբերությունները ընդունում են որպես տարժամանակային:

² Որ շարժապարհ է տարածված է այս կառուցվածքի բարդ նախադասություններում (տե՛ս էջ 305):

ասույթի հիմնական բովանդակությունը, նրա ամենակարևոր մասը տրվում է երկրորդական նախադասությամբ:

Բոլորովին խրախուսելի չեն բարդ ստորադասական նախադասությունների անշաղկապ կապակցության հետեյալ կառուցվածքները. «Դեռ արտասուքը չէր ցամաքել նրա երեսին, դեռ ալրվում էին խաղեխնի ապտակների տեղերը, դեռ նոր էր լուև աղջիկ պարոնի ձենը—շվշվացնելով ներս մտավ վասոն, Բազազի աշկերտը (ՀԹԵԺ, 3, 43)»:

Համաժամանակային հարաբերությունների ընդգծման համար գլխավոր նախադասության մեջ կարող է օգտագործվել այն ժամանակ հարաբերյալը:

Բ) Տարժամանակային հարաբերություն—ժամանակային այս հարաբերությունը երբ շաղկապի օգտագործմամբ կարող է ունենալ հետեյալ տարատեսակները.

ա) Գլխավոր նախադասության գործողությունը հաջորդում է երկրորդականի գործողությանը (որը մեծ մասամբ առաջադաս է լինում). օրինակներ՝

Սուրենը խորին ցավակցությամբ նայում էր նրա վրա: Երբ կրկին գլուխը վեր բարձրացրեց նա, Սուրենը պատասխանեց (Բաֆ., 26): Երբ Բազենյանը, կարծես հոգնելով, փոքր ինչ խաղաղեց, Մարությանը շտապեց վեր կենալ (ՆԴ, 72): Զխավորը կրկին անգամ գոհությամբ երեսը խաչակրեց, երբ ոտք դրեց ցամաքի վրա (Բաֆ., 17):

Պատմական ներկա ժամանակի օգտագործման դեպքում էս (որը շատ է տարածված հեքիաթներում) կարող է հիշյալ հարաբերությունն արտահայտվել. օրինակ՝ «Եվ երբ պարոն Վարդանը խոստանում է (խոստացավ) «երկու օրից կարդալ»—էս ուրախությունից վազում եմ (վազեցի) Գարասի մոտ և հայտնում (հայտնեցի), որ պարոն Վարդանը գրվածքս վերցրել է կարդալու... (ՍԶ, 433)»:

Հիշյալ ժամանակային հարաբերությունը շեշտելու համար արդի հայերենում վերջերս սկսել է տարածվել (առաջժմ դեռ լրագրային ու քաղաքական գրականության լեզվում միայն) այն բանից հետո, երբ հարադիր շաղկապը, որը ուսերենի после того как շաղկապի ուղղակի թարգմանու-

թյունն է. օրինակ՝ «Իրաքի խաղաղության կողմնակիցների ազգային կոմիտեն հրատարակել է Իրաքի ժողովրդին ուղղված դիմում: Դիմումի մեջ ասված է, որ այն բանից հետո, երբ Միացյալ Նահանգները Արաբական Արևելքում ձախողվեցին արաբական ժողովուրդների ազգային-ազատագրական շարժմանը խանգարելու իրենց փորձերի մեջ, ԱՄՆ-ի կառավարող շրջանները հերթական դավադրություն են նախապատրաստում այդ շրջանի երկրների դեմ (Եր., 1958, նոյ. 13, 4)»:

բ) Երկրորդական նախադասության գործողությունը հաջորդում է զլխավորի գործողությանը.

Արևելքը հագիլվ սկսել էր շառագունել, երբ Վահրաման ու Էգեբաջի իշխանը վերադարձան իրանց թիկնապահներով և հայտնեցին թագավորին ու իշխաններին հետազոտության արդյունքը (Մուր., 184): Անուշավանը նուր էր ավարտել իններորդ դասարանը, երբ պատերազմն սկսվեց (ԽՄՄՀ, 173): Մեկ օր հյուր էի գնացել ընկերոջս հարազատների մոտ: Նուր էինք նստել սեղանի շուրջը, երբ թռչկոտելով ներս մտավ նրանց հինգ տարեկան որդին (ՍԴ, 1958, օգոս. 15, 4):

Այս կառուցվածքի բարդ նախադասություններով արտահայտվում են գործողությունների արագ փոխանցումներ, որոնց համար քիչ դեր չեն խաղում հագիլվ, նուր մակբայները:

Երբեմն այս շաղկապով կապակցվող մասերի միջև ժամանակային հարաբերությունների դրսևորումը ազդոտանում է, և նրանց միջև երևան են գալիս այլևայլ իմաստային երանգներ ու նշանակություններ՝ հակադրա-զուգադրական, բացառական, պատճառի, պայմանի և այլն: Մենք համապատասխան բաժիններում այս կամ այն չափով արդեն խոսել ենք երբ շաղկապի առաջին երեք կիրառությունների մասին, ուստի այստեղ կաշխատենք շատ համառոտակի ներկայացնել այն դեպքերը, երբ այդ շաղկապը արտահայտում է պայմանա-հետևանքային հարաբերություններ՝ ազդոտ կերպով դրսևորվող համաժամանակային և տարժամանակային հարաբերությունների ֆոնի վրա: Բարդ ստորադասական նախադասությունների հիշյալ տեսակները բավական տարած-

ված են ինչպես գեղարվեստական, այնպես էլ հրապարակա-
խոսական գրականության լեզվում: Հարկ է նշել, սակայն,
որ հիշյալ կառուցվածքի նախադասություններում պայմանի
հրանգը համեմատաբար ավելի որոշակի է արտահայտվում,
հրք գլխավոր նախադասության գործողությունը հաջորդում է,
էլամ պետք է հաջորդի երկրորդականի գործողությանը. օրի-
նակ՝

Ի՞նչ կլինի, մտածում եմ ես, երբ ետ նայեմ և տեսնեմ.
որ նա կանգնած է ետևս և ժպտալով նայում է ինձ (ՆԳ, 32):
— Ես շատ ուրախ կլինեի, երբ մեր տերը յուր թագավորի հետ
կվերադառնար՝ Տիգրանից, և ոչ թե Մերուժան Արծրունու հետ
(Բաֆ., 63):

Ինչպես տեսնում ենք, երբ շաղկապով սկսվող երկրոր-
դական նախադասություններում շեշտը դրված է ոչ այնքան
գլխավոր նախադասության գործողության կատարման ժա-
մանակի վրա, որքան այն պայմանի, ավելի ճիշտ ենթադրու-
թյան վրա, որի իրականացումից կբխի կամ կբխեր այն, ինչի
մասին խոսվում է գլխավոր նախադասության մեջ:

Ընդհանրապես պետք է ասել, որ պայմանի և ժամանակի
նշանակությունները երբեմն շփոթվում են, քանի որ երևույթ-
ների միջև եղած պայմանական կապը ժամանակի այս կամ
այն հատվածում է իրականանում: Հաճախ դժվար է լինում
հաստատել մեկի կամ մյուսի գերակշռությունը:

Այն դեպքում հարաբերյալի գործածությամբ հատուկ
կերպով է ընդգծվում պայմանի նշանակությունը. օրինակ՝
«Կանխել անտառի կտրատումը Զանգեզուրում կարելի է այն
դեպքում, երբ վառելափայտի դիմաց բնակչությանը մատու-
կարարվի վառելափայտին համարժեք փոխարինիչ (ՍՀ, 1958,
դեկտ. 18, 3)»:

Տարբեր է երբ շաղկապի պայմանի նշանակությունը այն
դեպքերում, երբ կապակցվող մասերի միջև չեն արտահայտ-
վում որևէ պայմանից բխող ապագայում իրականանալիք
իրողություններ: Կարելի է տարբերել հետևյալ տեսակները.

1 Ունի ըղձական եղանակի նշանակություն, որպես՝ վերադառնալ:

1) Երկրորդականով նշվում է այն պայմանը, որի առկայությամբ միայն կարող է ընդունելի համարվել գլխավոր նախադասության մեջ արտահայտված իրողությունը. օրինակներ՝

Բուժը դրվում է ուրիշի ուղղակի խոսքից առաջ, երբ դա մեկ կամ մի քանի բառ է և մեջ է բերվում առանց շահերտների (Գ. Սևակ, Շարահյուսություն, Երևան, 1956, 141): Երբ ուզում ես ամեն ինչ պատկերել, պարտավոր ես ամեն բան իմանալ (ՕԴԲԽՊ, 326):

Ինչպես տեսնում ենք, երբ շաղկապի այս կիրառությամբ հիշյալ բարդ նախադասությունները արտահայտում են բոլորի կողմից ընդունված, կամ օրենքի ուժ ունեցող կանոններ կամ ասույթներ:

2) Գլխավոր նախադասությամբ նշվում է այնպիսի մի փաստ, որը իրական ու հավաստի կհամարվի այն դեպքում միայն, եթե երկրորդականով արտահայտված իրողությունը ընդունվի. օրինակ՝

Ես հասկանում եմ (կհասկանամ) հոռետեսությունը, երբ դա արդյունք է (լինի) կյանքի դառն փորձության, և այդ դեպքում հոռետեսն արդարանալու հիմքեր ունի... (ՆԴ, 388): Արվեստն ինքը մարդկային հոգու գեղեցկության արտահայտությունն է, նրա ծնունդը: Այն իր բոլոր ճյուղերի մեջ գեղեցիկ է (կլինի), երբ կապված է (լինի) կյանքի հետ (Եր., 1958, նոյ. 13, 3):

3) Ավելի զգալի է հիմունքի, քան պայմանի երանգը. երբ գլխավորում ստորոգյալը ժխտական է. օրինակ՝

Իհարկե մեր պոեզիան, այդ թվում երիտասարդ բանաստեղծների ստեղծագործությունները, զուրկ չեն այդ բնույթի թերություններից, բայց չի կարելի ներել Վ. Դավթյանին, երբ նա դրանց կողքին չի ուզում տեսնել այն լավն ու արժեքավորը, որ արդեն ձեռք են բերել մեր երիտասարդ բանաստեղծները (ՍՀ, 1958, օգոս. 10): Ես թեև հակառակ եմ քո ցանկությանը, բայց չեմ կարող ուժով բռնել, երբ ուզում ես հեռանալ,—ասավ Սեն-Խինյին (ՀԹԵ, 2, 353):

Երբ... ապա, եթե... այն ժամանակ զուգադիր շաղկապ-

ների գործածության ժամանակ այդ շաղկապական բաղադրիչները արտահայտում են նաև պայմանա-հետևանքային երանգ. օրինակ՝

Իսկ երբ (եթե) այդ հրթիռի շարժիչն իր աշխատանքն ավարտի, ապա կունենա ավելի մեծ արագություն, քան տիեզերական երկրորդ արագությունը (Եր., 1958, օգոս. 3, 3): Երբ հողային աշխատանքի ընթացքը թույլ տա սկսելու ամբարտակի կառուցումը, այն ժամանակ հուժկու ամբարձիչների օգնությամբ կարելի կլինի ավելի արագ տեմպերով շարել երկաթ-բետոնե բլոկներ (ՍՀ, 1958, օգոս. 12):

Երբ... ապա զուգահեռ շաղկապի նախորդ կիրառությունից տարբեր է հետևյալը. «Երբ մենք խոսում ենք Արագոնի մասին, ապա նկատի ունենք և պատմական մարզը, և դաշտավայրը (Ֆ. Արնայս..., Իսպանիա, 1958, 10): Այստեղ հետաքրքրականն այն է, որ զուգահեռ շաղկապի առաջին բաղադրիչը (երբ) ընթերցողի ուշադրությունը նախապես հրավիրում է այն հարցի վրա, որի բացատրությունը տրվում է ապա շաղկապով սկսվող մասում: Այս օրինակում պայմանի և հետևանքի հարաբերությունն բոլորովին չի դրսևորվում: Համեմատոր նաև՝ «Ընկերներ՝ երբ մենք խոսում ենք խոպանի միլիոնավոր հեկտար խամ ու խոպան հողեր յուրացնելու մասին, ապա այդ ժողովրդական սխրագործությունը իրավացիորեն կապում ենք լենինյան կոմերիտմիության հերոսական գործերի հետ, սովետական երիտասարդության գոծների հետ (ՍՀ, 1961, մարտ 19):

Պետք է նշել, որ բոլոր այն դեպքերում, երբ կապակցվող մասերի միջև չեն դրսևորվում բուն ժամանակային հարաբերություններ (համաժամանակություն կամ տարժամանակություն), նրանց միջև սովորաբար առկա են լինում ժամանակի ֆոնի վրա ուղղագծվող պայմանի և որոշ դեպքերում նաև պայմանի հետ միասնաբար հանդես եկող հիմունքի և այլ երանգներ: Երբ շաղկապի այս կիրառությունները հիմնականում պայմանավորված են գլխավոր և երկրորդական նախադասությունների բառական կազմով, բայց-ստո-

րոգյալների ժամանակային և եղանակային ձևերով, ինչպես նաև կապակցվող մասերի շարադասությունը:

Երբ շաղկապը օգտագործվում է նաև վերնագրերի սկզբում: Այդ դեպքում նա ըստ էության կորցնում է ժամանակի իր նշանակությունը: Այսպես, կարդալով «Երբ բացակայում է պատասխանատվության զգացումը» վերնագիրը (ՀՅ, 1958, նոյ. 4, 4), իսկույն հասկանում ենք, որ հոգվածը կամ հատվածը այդ շաղկապով սկսվող վերնագրի առաջ քաշած հարցին է վերաբերում: Կարծես վերնագիրը հանդես է գալիս որպես առաջադաս երկրորդական նախադասություն, իսկ նրա տակ շարադրված հատվածը՝ վերջադաս գլխավոր: Նման վերնագրային կիրառություններով տարածված են նաև ուրիշ շաղկապներ, ինչպես եթե, որպեսզի և այլն, որոնցով սկսվող վերնագրերի առաջ քաշած հարցերը իրենց լրացումն ու բացատրությունն են գտնում հոգվածում կամ ակնարկում: Այս շաղկապների հիշյալ գործածությամբ շատ ավելի դիպուկ, կենդանի ու արտահայտիչ են հնչում վերնագրերը և հատուկ ուշադրության արժանանում:

Շարադասական հատկանիշներով այս շաղկապը շատ ձկուն է: Ստորագրաս նախադասության կազմում հիմնականում հանդես գալով նախադաս գործածությամբ, նա գեղարվեստական գրականության մեջ հանդիպում է նաև միջադաս և հազվադեպ (չափածոյում) ետադաս դիրքով. օրինակ՝

Ընթրիքից հետո բուխարու մոտ երբ նա ննջեց, ես արապ թերթեցի նրա շարականի գիրքը... (ԱՔԵ, 123): Ու տարերքը շարժել է երկիրը մի օր, Օրորվել են շենքերիդ կատարները երբ (ԳՍԵ, 159):

Նկատելի է, որ այս շաղկապով կապակցվող երկրորդական նախադասության առաջադաս դիրքը շեշտում է նրանում արտահայտված բովանդակության կարևորությունը, երբեմն նույնիսկ այն աստիճան, որ երկրորդականի բովանդակությունը ավելի մեծ արժեք է ստանում, քան գլխավորինը: Գլխավորի կազմում միջադաս գործածության օրինակ է հետևյալ բարդ նախադասությունը. «Մարդ, երբ նրա սիրտը լի

է զգացումներով, երբ չափից ավելի հուզված է և շատ բան ունի ասելու, մեծ մասամբ լռում է (ՍՀ, 1960, նոյ. 25, 4):

ԵՐԲ ՈՐ—Այս հարադրական շաղկապը, որը գործածական է հատկապես գեղարվեստական գրականության լեզվում, նշում է ինչպես համաժամանակային, այնպես էլ տարժամանակային հարաբերություններ: Ընդհանուր առմամբ սրա գործածությունները ոչնչով չեն տարբերվում երբ հոմանիշի համապատասխան կիրառություններից: Սակայն պետք է նկատի ունենալ, որ հարադրական կազմությամբ այս շաղկապը գործածությունների սահմանափակության և ավելի ժողովրդական բանավոր լեզվին հատուկ լինելու պատճառով չունի երբ շաղկապի բոլոր նշանակություններն ու իմաստային երանգները: Բերենք ամենատարածված կիրառություններից մի քանի օրինակներ.

Ա) Համաժամանակային հարաբերություն

ա) Լրիվ համապատասխանություն. «Ինձ այն հողն է կանչում, ուր նույն պահին, երբ որ ձորերի մեջ բալն է հասնում, Ձնծաղիկն է բացվում ձորագլխին (ՀՍ, 46)»:

բ) Գլխավորի գործողությունը իրականանում է երկրորդականի գործողության կատարման ժամանակի մի հատվածում. «Այդ երգը, սի՛րտ, գիտես դու, Երգել եմ և ես, երբ որ պատանի էի՝ Հրավառ ու վես (ԱԻ, 140)»:

Համաժամանակային հարաբերությունների ֆոնի վրա կարող է արտահայտվել նաև պայմանի երանգ. օրինակ՝ «Գեյլը, երբ որ կուշտ է, շատ վախկոտ կենդանի է (ՀԹԵ, 1, 390)»:

Բ) Տարժամանակային հարաբերություն

ա) Գլխավոր նախադասության գործողությունը հաջորդում է երկրորդականի գործողությանը. «Եվ ձին հեծած, բանակներով հաղթագեն, Եկավ մի օր կանանչ—կտրիճ մի իշխան... Սանձը ձգեց, ու քար կտրեց հիացքեն, երբ որ տեսալ պատշգամբում աղջկան (ԱԻ, 169)»:

Ժամանակային այս հարաբերությունը պահպանվում է նաև այն դեպքերում, երբ կապակցվող գլխավոր և երկրորդական նախադասություններում պատմական ներկա ժամա-

նական է օգտագործվում. «Երբ որ բոլոր սենյակաները ման է գալիս, հոգնում է, քունը տանում է, ուզում է քնի... (ՀԹԵԺ, 3, 340)»:

Պայմանի երանգ. «Երբ որ կինը քեզ կըթողնի, Շուտով մյուսին դու սիրիր... (ՀԹԵԺ, 1, 361)»:

բ) Հիմունքի հարաբերություն. «—Ձէ, էս մինը բավական էր, էլ երբեք ճամփից դուրս չեմ գալ ու մենակ անտառն քնկնիլ, երբ որ (քանի որ) մայրիկը չի թողնում (ՀԹԵ, 2, 461)»: Այս հարադրական շաղկապի բաղադրիչները գրվում են թե միասին, թե առանձին: Մեզ թվում է, որ գերադասելի է վերջին ձևով գործածությունը:

ՈՐ—Որպես ժամանակային հարաբերություն արտահայտող շաղկապ՝ ուր-ը տարածված է մասնավորապես կենդանի խոսակցական լեզվում, որտեղից էլ մուտք է գործել գեղարվեստական գրականության մեջ: Հրապարակախոսական և գիտատեխնիկական գրականության մեջ այն գրեթե չի հանդիպում: Այժմ խմբավորենք այս շաղկապի իմաստային տարբեր կիրառությունները:

Ա) Համաժամանակյալին հարաբերություն

ա) Լրիվ համապատասխանություն. «Ուր կառքն անցնում էր մեր տան առջևով, պատուհանները զնգզնգում էին»: «Դու մի ասիլ՝ Փանոսը ուր լիճն է մտնում ու խորը գնում, էդ ժամանակ լճափով մի անց կենող է լինում (ՀԹԵԺ, 3, 201)»:

բ) Գլխավոր նախադասության գործողության կամ եղելություն կատարման ժամանակակետերից մեկում ավարտվում վերջանում է երկրորդականում նշվող գործողությունը: Կարելի է տարբերել այդ բարդ նախադասությունների հետևյալ կառուցվածքա-իմաստային տեսակները.

ա) Երբ առաջադաս գլխավոր նախադասությունը ժամանակի գաղափար արտահայտող միադիմի բայ է, իսկ սաստկական նշանակություն ունեցող ու շաղկապով կապակցվող երկրորդականը նկարագրում է այդ նույն ժամանակամիջոցում կատարվող որևէ մի դեպք, երևույթ, ապա ժամանակի իմաստով լրացական դերը փաստորեն ոչ թե երկրորդական

նախադասությունն է կատարում, այլ գլխավորը: Այդօրինակ կառուցվածք ունեցող բարդ ստորադասական նախադասություններում ասույթի հիմնական բովանդակությունը տրվում է ոչ թե գլխավոր նախադասությամբ, այլ երկրորդականով. օրինակ՝ «Իրիկնադեմ էր, որ հասանք գյուղը, ուր սպասում էին մեզ հյուրընկալ կուտնտեսականները (ՀՔ, 307)»: Այս բարդ նախադասությունը կարելի է օգտագործել նաև հետեւյալ ձևով՝ «Իրիկնադեմին հասանք գյուղը, ուր...»: Սակայն այս վերջին օրինակում չի զգացվում առդեն բառի նշանակությունը, որ ակնարկվում էր նախորդ օրինակում: Համեմատիր նաև՝ «Առավոտ էր, որ դուրս եկանք խնջույքից (առդեն առավոտ էր, որ դուրս եկանք խնջույքից)»:

Կառուցվածքա-իմաստային տարբեր տիպ է հետեւյալ օրինակը, ուր գլխավորն արդեն միադիմի նախադասություն չէ. «Սուրիկը առավոտյան էր, որ դուրս եկավ խնջույքից»: Այստեղ որ շաղկապը նաև սաստկական գործածություն ունի և ընդգծում է նախորդ բառի ժամանակի նշանակությունը. համեմատիր՝ «Սուրիկը առավոտյան դուրս եկավ խնջույքից (և ոչ թե ուրիշ ժամանակ)»: Պետք է նշել, որ մեր բերած օրինակներում որ շաղկապի հավելադրական այս կիրառությունները գերծ չեն նաև բացատրական նշանակությունից:

б) Հենց բառի օգտագործմամբ շեշտվում է երկրորդական նախադասության գործողության կատարման ճիշտ ժամանակը, ինչպես՝ «Հենց այդ խոսքին էր, որ երեսց ընկեր Ասյան (ԱՔԵ, 95)»: «Հենց էս խոսքի մեջ էինք, որ մի հրացան տրաքեց, շների հաջոցը սաստկացավ ու միաժամանակ մի աղմուկ բարձրացավ (ՀԹԵԺ, 3, 98)»: Այս օրինակներում ևս որ շաղկապը գերծ չէ բացատրական նշանակությունից:

с) Գլխավոր նախադասության գործողությունը չափարտված՝ երկրորդականի գործողության սկսելն ու վերջանալն են նշում բարդ ստորադասական նախադասությունների հետեւյալ կառուցվածքները.

Մյուս օրը, կեսօր դեռ չէր եղել, որ քշելով թշնամուն՝

1 Այդ մասին խոսել ենք նաև բացատրական շաղկապների բաժնում:

հասանք այրվող գյուղին (ՀՔ, 344): Գնացքը դեռևս կանգ չէր առել, ու նա թռավ վազոնի սանդուղքի աստիճանը, շտապով բարձրացավ վերև և ներս մտավ (ՆԴ, 361):

Ինչպես տեսնում ենք, գլխավոր նախադասություններում առկա են դեռ, դեռևս մակբայները. ստորոգյալն այնտեղ ժխտական ձևով է օգտագործված, իսկ ու շաղկապով կապակցվող երկրորդականները միշտ վերջադաս դիրք են գրավում: Արդի հայերենում նման կիրառություն ունի նաև երբ շաղկապը:

Բ) Տարժամանակային հարաբերություն

ա) Շատ են տարածված ու շաղկապի կիրառությունները այնպիսի կառուցվածքներում, որոնց մեջ ստորադաս մասի գործողությունը նախորդում է գլխավորի գործողությանը: Ու շաղկապով կապակցվող մասը կարող է թե առաջադաս և թե վերջադաս դիրք ունենալ. օրինակներ՝

Նեսո բիձու պատմությունը ու վերջացավ, վեր կացան վերմակները ետ քաշեցին (ՀԹ, 380): Ու մեռավ, հիվանդացավ վշտից (ՆԴ, 30):

Որոշ դեպքերում այս շաղկապի օգտագործմամբ նշվում են գործողության արագ փոխանցումներ, ինչպես՝ «Այդ ու ասեին, Օսեփի ջանը իրոք որ զոռ էր ընկնում, վեր էր կենում, գեղամիջից հեռանում (ԱԲՆ, 74)»:

Այս երկրորդական նախադասությունը կարծես ունի «այդ ասելուն պես» կամ «հենց որ այդ ասեին» նշանակությունը: Հիշյալ նշանակությունը ավելի է շեշտվում, երբ առաջադաս երկրորդականի ստորոգյալը ժխտական ձևով է գործածվում. օրինակներ՝ «Ու չիսից, գլուխս պտույտ եկավ (հենց որ խից)»: «Ու նրան շտեսա, քիչ մնաց զարմանքից քարանայի (հենց որ նրան տեսա)»:

Ժամանակային հաջորդականության հարաբերություններ են նշվում նաև այն դեպքերում, երբ կապակցվող մասերում ստորոգյալներն արտահայտվում են պատմական ներկա ժամանակով՝ խոսքն ավելի պատկերավոր ձևով ներկայացնելու համար. օրինակներ՝ «Ու շատ նեղացնում են՝ ձեռք տանում է երեսին զարկում (ՀԹՆԺ, 3, 189)»: «Ու թիկնա-

պահները ետ են մնում՝ սա սուրը հանում է, խրում բարի եղբոր թիկունքը (ՀԹԵԺ, 3, 250)»։ Հատկապես շատ են հանդիպում ուր-ի այսպիսի կիրառությունները Հ. Թումանյանի մոտ։ Նկատելի է, որ այս ժամանակային հարաբերության արտահայտման համար երկրորդական նախադասությունը միշտ առաջադաս դիրք է զբաղում։

Անսպասելիության ոճական երանգ է արտահայտվում, երբ ու շաղկապով կապակցվող վերջադաս երկրորդական նախադասության մեջ գործողությունը վերջանում է ճիշտ այն ժամանակ, երբ սկսվում է գլխավորի գործողությունը։ Գլխավոր նախադասության մեջ սովորաբար օգտագործվում են հենց, հենց այն է, հենց նոր և նման բառեր, օրինակներ՝

Հենց այն է՝ ուղում էի խոսել, որ մահակներն իջան սրանց գլխին այնպիսի նոր ուժով, որ սրանք փախան մտան մոգպետի վրանը (ԴԴՎ, 346)։ — Հենց նոր պատրաստվում էի քեզ մոտ գալու, որ նամակդ բերեցին (ՆԴ, 157)։

բ) Երբ գլխավոր նախադասության գործողությունն է նախորդում վերջադաս երկրորդականի գործողությանը, ապա գերադաս մասում սովորաբար օգտագործվում են հազիվ, նոր և նման բառեր։ Բերենք մի օրինակ՝ «Նա նոր էր դուրս գնացել, որ Շահյանի մոտ մտավ Բազենյանը խիստ ուրախ տրամադրությամբ (ՆԴ, 222)»։

Ի վերջո պետք է ասել, որ այս շաղկապի որոշ կիրառություններում, ինչպես արդեն ասել ենք այլ առիթներով, արտահայտվում են, բացի ժամանակի նշանակությունից, նաև պայմանի և հիմունքի հարաբերություններ, և հաճախ դժվար է լինում որոշել, թե դրանցից ո՛րն է իշխողը. օրինակ՝ «Ուր (երբ, եթե, քանի որ) այդպես է, ես էլ եմ գալիս»։ Իմաստային երանգների այս ճոխությունը առաջանում է անշուշտ նաև այն բանից, որ փակագծում նշված երեք շաղկապները կարող են հիշյալ երեք երանգներն էլ ունենալ. այսպես, երբ-դ կարող է «եթե», «քանի որ» նշանակությունները ունենալ, եթե-ն՝ «երբ», «քանի որ» և այլն։ Բերենք մի ուրիշ օրինակ՝ «—Այ տղա, ոնց ա կտրվում բեզի՛ հոտը, ուր (երբ, եթե, քանի որ) էի բեզի ձեռքին ենք մտիկ տալի (ԴԴ, 259)»։ Այս

օրինակում հնարավոր է ենթադրել նաև ինչ-որ հետևանքի երանգ, որն անուղղակի արդյունք է գլխավորում նկարագրովո՞ղ իրողութեան:

Երբ, երբ որ, որ շաղկապները, ինչպես տեսանք, կարող են թե համաժամանակությունն են, թե տարժամանակություն: Այդպես չեն սակայն մյուս ժամանակի շաղկապները, որոնք արտահայտում են գերազանցապես ժամանակային մեկ հարաբերություն: Այդ պատճառով նպատակահարմար ենք գտնում խմբավորել դրանք ըստ այն ժամանակային հարաբերության, որ արտահայտում են նրանք:

1. Համաժամանակային հարաբերություններ արտահայտող շաղկապները

Բացի երբ, երբ որ, որ շաղկապներից, համաժամանակային հարաբերությունների են արտահայտում նաև քանի, քանի դեռ, քանի որ (հնացած) մինչ, մինչդեռ շաղկապները, որոնք, լեզվում տարածված լինելով միմիայն ժամանակային հիշյալ հարաբերությունն արտահայտելու դերով և ունենալով բառական այդօրինակ նշանակություն, այլ կերպ են ներկայացնում բարդ նախադասության մասերի միջև դրսևորվող ժամանակային փոխհարաբերությունները: Այսպես, եթե երբ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունները նշում են սոսկ գլխավորում արտահայտված իրողության կատարման ժամանակը (օրինակ՝ ընկերս կարդում էր, երբ ես սենյակ մտա), ապա վերի շաղկապների օգտագործմամբ կապակցվող մասերում նկարագրվող դեպքերը, երկ-չույթները ներկայացվում են ժամանակային փոխադարձ աերտ կապի ու կախվածության մեջ:

ՔԱՆԻ, ՔԱՆԻ ԴԵՌ, ՔԱՆԻ ՈՐ (հնացած)—Այս շաղկապների օգտագործմամբ կապակցվող նախադասությունների միջև դրսևորվում են համաժամանակային այնպիսի հարաբերություններ, որոնք սահմանափակման ընդհանուր նշանակություն ունեն: Գլխավոր նախադասությամբ արտահայտված գործողությունը կամ վիճակը ներկայացվում է որպես այնպիսին, որ տևում է (կամ կտևի) այնքան ժամանակ մի-

այն, քանի դեռ տեղի է ունենում կամ գոյություն ունի երկրորդական նախադասության մեջ նկարագրվող գործողությունը կամ վիճակը. օրինակներ՝

«Այսպես չէի ապրում ես. այսպես չէր անցնում իմ կյանքը, ֆանի նա սիրում էր ինձ...», շշնջաց նա և լռեց (Մուր., 255): «Քանի ծնողներից, եղբայրներից ու քրոջից հեռու էր, Սմբատը կարողանում էր իր կյանքի դառնությունները մի կերպ մարսել (Շիրվ.): Շնորհակալ եմ քեզանից, անչափ շնորհակալ, պիտի օրհնեմ կյանքդ, ֆանի կենդանի եմ (ՄԳՄ, 37): Մեզ համար չէ հանգստությունը, ֆանի դեռ մեր եղբայրներն ու քույրերը գերության մեջ են գտնվում (ՐՍ, 358): Քարե ծեր մի վարդապետ է կարծես, նստել է բլուրի լանջին ու մնացել է նստած—դարեր, ու կմնա նստած, ֆանի դեռ կա աշխարհը և անհուն աշխարհում—երկիրը Նաիրի (ԵԶ, 302): Դեռ բաղադրիչը կարող է նաև բաժանված լինել ֆանի շաղկապից. օրինակ՝ «Քանի լուսեղեն քու հերր դեռ կար, Ես շատ եմ էնտեղ որսի միս կերել... (ՀԹԾԺ, 2, 112)»:

Արդի գրական հայերենում ֆանի որ շաղկապի ժամանակային կիրառությունները գրեթե բոլորովին դուրս են եկել գործածությունից: Այդ նշանակությամբ հիմա օգտագործվում է ֆանի դեռ հարադրական շաղկապը, որի երկրորդ բաղադրիչը ավելի է ընդդժում ժամանակի սահմանափակման ընդհանուր նշանակությունը: Բերենք մի օրինակ՝ «Բայց հետո, բայց այժմ և այսուհետև ես միշտ լաց եմ եղել, լալիս եմ և պիտի լամ, ֆանի որ (=քանի դեռ) եղբորս հիշատակը կենդանի կմնա սրտումս (ՆԴ, 368—369)»:

Քանի բառի քանակական հատկանիշն էլ է արտահայտվում հետևյալ օրինակներում. «Քանի (=քանի անգամ որ) գալիս եմ, դուռը փակ է»: «Քանի (=քանի անգամ որ) խնդրել եմ օգնել, հրաժարվել է»: Քանի դեռ շաղկապը չունի այս գործածությունը:

Արդի հայերենի խոսակցական լեզվում կարելի է հանդիպել նաև բարդ նախադասությունների հետևյալ կառուցվածքին. ֆանի շաղկապով կապակցվող և առաջադաս դիրք

ունեցող ստորադաս մասի ստորոգյալը արտահայտված է լինում վաղակառար ժամանակով, իսկ գերադասի ստորոգյալը՝ ժխտական ձևի որևէ ժամանակով: Ստորադասում նշված դեպքը հանդես է գալիս որպես մի այնպիսի ժամանակակետ, որից հետո տեղի չի ունենում կամ չի ունեցել այն, ինչի մասին խոսվում է գերադաս նախադասության մեջ: օրինակ՝ «Քանի ընկերս եկել է, չի հանգստացել», «Քանի հեռացել է, նամակ չի գրում»: Նկատելի է, որ քանի դեռ ու քանի որ շաղկապները չեն կարող հանդես գալ այս կիրառությանմբ:

Ժամանակային այս հարաբերությունը գերազանցապես արտահայտվում է ինչ շաղկապով (հատկապես կենդանի խոսակցական լեզվում). օրինակ՝ «Ինչ ընկերս գնացել է, նրան չեմ տեսել»: «Ինչ հնուստացույցը գնել ենք, կինո չեմ գնացել»: Պետք է ասել, որ ինչ շաղկապի այս կիրառությունները ծագել են այն օրվանից և նման նշանակություն արտահայտող քառերի հետ ունեցած կապակցությունից. «Այն օրվանից, ինչ մեծացել եմ, ես միշտ խղճում եմ ձիաներին (ՀԹԾԺ, 3, 212)»: «էն օրվանից, ինչ դու գնացել ես՝ մեր տունը կրակ չի վառվել (ՀԹԾԺ, 3, 265)»:

Ռուսերենի ազդեցության արդյունք պետք է համարել ընդգծված շաղկապական հարադրության գործածությունը հետևյալ օրինակում. «Այն ժամանակվանից, ինչ կոնգրեսը ընդհատել է իր աշխատանքը (անցյալ տարվա օգոստոսին), սկսվել է նոր դարաշրջան...» (ՍՀ, 1958, հունվ. 9, 4):

Երբ ստորադաս մասի ստորոգյալն է արտահայտված ժխտական ձևով, ապա համաժամանակային հարաբերությունների բնույթը փոխվում է: Գերադաս նախադասությամբ արտահայտված իրողությունը ներկայացվում է որպես այնպիսին, որ կատարվում, կկատարվի կամ կարող է կատարվել, քանի դեռ չի սկսվել կամ իրականացել երկրորդական նախադասության մեջ նկարագրվող գործողությունը: Այս կառուցվածքի բարդ նախադասություններում երկրորդականը մեծ մասամբ վերջադաս դիրք ունի. օրինակներ՝

Վազեցի, եկա, որ քեզ իմացնեմ: Շուտ արա, գլխիդ ճարը տես, քանի չի եկել (ՀԹԾԺ, 3, 147): Նա շտապում էր անիլ

այդ, քանի դեռ բանակը չէր շարժվել յուր տեղից, քանի դեռ ճանապարհը ընկած չէր դեպի Պարսկաստան (Մուր.): Եվ այդ ճանապարհը կշարունակվի և ավելի զարհուրելի կերպարանք կստանա, քանի որ դուք չեք դառնա ձեր շար ճանապարհից (ՐՍ, 296): Այս վերջին օրինակում նկատելի է պայմանի ինչ-որ անորոշ երանդ:

Հետաքրքրական է Ս. Պալասանյանի մոտ օգտագործված քանի որ դեռ ձեր: Ըստ երևույթին, նույնիսկ անցյալ դարում, քանի որ շաղկապի ժամանակի նշանակությունը թույլ է եղել, ուստի երկդիմությունը վերացնելու և ժամանակի նշանակությունն ընդգծելու համար ստիպված են եղել ավելացնել դեռ մակբայը: Բերենք Պալասանյանի օրինակը, «Քանի որ դեռ ոչինչ հասկացողություն չունեի, կարծում էի, թե արեգակը պտտվում է երկրի շուրջը (Քերականություն մայրենի լեզուի, Թիֆլիս, 1906, 233)»:

Քանի շաղկապը ոչ այնքան ժամանակի, որքան քանակի հետ կապվող նշանակություն է ձեռք բերում, երբ վերջադաս գլխավոր նախադասությունը սկսվում է այնքան հարաբերյալով: Նման կառուցվածքի նախադասությունների բաղկացուցիչ մասերը իմաստային սերտ կապի մեջ լինելով միմյանց հետ՝ արտահայտում են նույն ժամանակամիջոցում աստիճանաբար ծավալվող, զարգացող գործողություններ, դեպքեր, իրողություններ. օրինակներ՝

Ու քանի Կառլ Կառլիչի ձայնը բարձրանում է, նա այնքան ավելի է կուշ գալիս ու լսողություն դառնում¹ (ՍԶ, 218): Քանի մոռացում է նա, այնքան ժպտում են մազաղաթները (ԴԴ, 199):

Արդեն առանց հարաբերյալի են հետևյալ օրինակները. «Քանի գեղին մոտենում ենք, գելերը ետ են ընկնում (ՀԹԵԺ, 3, 111)»: «Քանի մենք մոտենում էինք, կովի շուրջը եղած բազմությունը աճում էր... (ՀՄԱԸ, 250)»: Կապակցվող որոշ մասերի ձուլումից և որոշ անդամների կրճատումից են անշուշտ առաջացել այն պարզ նախադասությունները, որոնք

¹ Այս օրինակում այնքան բառը միջադաս գործածություն ունի:

արտահայտում են իմաստային նույնպիսի հարաբերություններ, սակայն ավելի շեշտված ձևով. օրինակ՝ «Քանի գնում (է, այնքան) գեղեցկանում է (այսինքն՝ գնալով գեղեցկանում է)»։ Այստեղ արդեն ֆանի գնում բառախումբը կարելի է դիտել որպես մեկ ամբողջական իմաստ արտահայտող կապակցություն։

Ի վերջո պետք է նշել, որ ֆանի շաղկապը, առավելապես տարածված լինելով բանավոր խոսքում, այնտեղից էլ մուտք է գործել գրական լեզուն, ի տարբերություն ֆանի դեռ շաղկապի, որը տարածված չէ ժողովրդական խոսակցական լեզվում։

ՄինջԳենի, Մինջ—Այս շաղկապների օգտագործմամբ արտահայտվում են նույն ժամանակամիջոցում զուգահեռաբար ծավալվող գործողություններ, դեպքեր։ Գլխավոր նախադասության գործողության կատարման ժամանակը զուգադիպում, համընկնում է երկրորդական նախադասության մեջ նկարագրվող գործողության կատարման ժամանակի հետ։ Պետք է նշել, որ այս կառուցվածքի բարդ նախադասություններում ստորադաս մասը գերազանցապես առաջադաս դիրք ունի գերադասի նկատմամբ¹։

Այս շաղկապների օգտագործմամբ համաժամանակային հարաբերությունը լինում է երկու կարգի․

ա) Լրիվ համապատասխանությունն արտահայտող—Գլխավորում հաճախ օգտագործվում են այդ նույն ժամանակ, այդ միջոցին և նման բառեր. օրինակներ՝

Մինչդեռ անձնվեր ընկերը թափում էր ամեն ճիգ ու ջանք մխիթարելու Արարատ Սուրենին, նա մտքում ծիծաղում էր Մովսեսի դյուրահավատության վրա... (ՀՔ, 38)։ Մինչդեռ թերթերը վիճում են այն մասին, թե ով է մեղավոր, այդ նույն ժամանակ չեմպիոնների արյունը շարունակում է ներկել արշավի ուղիների ասֆալտը (ԵՐ., 1958, օգ. 27, 4)։

Հիշյալ ժամանակային հարաբերությունը ոչ մի փոփո-

¹ Այս շաղկապներով կապակցվող նախադասությունների վերջադաս գործածության դեպքում արտահայտվում են գերազանցապես զուգադրական-հակադրական հարաբերություններ (տե՛ս էջ 133)։

խություն չի կրում, երբ օգտագործվում է մինչ շաղկապը. օրինակներ՝

Մինչ հայր ու որդի սույն հոգետանջ լուծւոյան մեջ էինք, որ ամեն վայրկյան պատրաստ էր պայթելու, պատանի Արտավազը, կղզու մյուս կողմում հրաշքներ էր գործում (Բաֆ., 540): Մինչ էստաֆետան տարվում էր սահմանի երկարությամբ, մեր օկրուգի ռազմիկ սպորտսմենները պատրաստվում էին նրան դիմավորելու (ՍՀ, 1958, հոկտ. 5, 4): Մինչ երկաթյա մարդը տանջվում էր օրհասական տագնապի մեջ, այդ միջոցին Սամվելը... գերիներին աղատած, շտապում էր դեպի շիկակարմիր վրանը (ԲՍ, 547):

բ) Մասնակի համապատասխանություն արտահայտող — երկրորդական նախադասության գործողության կատարման ժամանակի հատվածներից մեկում սկսվում և ավարտվում է գլխավորի գործողությունը. օրինակներ՝

Մինչդեռ Սերյոժկան հանվում էր, Վանյան վերցրեց թեյամանը, ռուսական վառարանի վրայից հանեց կոնքը, դրեց տաբուրետի վրա, անկյունում էլ դրեց հասարակ, լվացքի համար գործածվող, վատ հոտ ունեցող ու բանեցրած սապոնի մի կտոր (ՖՖԳ, 435): Կարող էինք բազմացնել գործի մարդկանց թիվը, բայց մինչդեռ մենք խոսքով էինք, նրանք արդեն անցան իրենց գործին (ԱԲՆ, 221): Մինչ խոհանոցում երկու նաժիշտները այդ խորհրդածությունների մեջ էին, թագուհին վերադարձավ ապարանքը (ԲՍ, 407): Մինչ այդ շփոթության մեջ էին, հեռվից երևաց մի մարդ (ԲՍ, 262):

Հետաքրքրական են մինչ շաղկապի կիրառությունները այն բարդ նախադասություններում, որոնց կազմում առաջադաս երկրորդական նախադասության ստորոգյալն արտահայտվում է պայմանական եղանակի անցյալի անկատար ժամանակով, իսկ գլխավորում նկարագրվում են այնպիսի գործողություններ կամ եղելություններ, որոնք կատարվում են նախքան երկրորդականով նշված գործողության ավարտը¹:

¹ Մինչ շաղկապի այս կիրառություններին մենք չենք հանդիպում անցյալ դարի հեղինակների մոտ: Սրանք տարածվել են անշուշտ վերջին մի քանի տասնամյակներում:

Այս կառուցվածքի նախադասություններում ակնհայտ կերպով երևում է մինչ բառի ծագումնաբանական և իմաստային սերտ կապը մինչև-ի հետ. օրինակներ՝

Մինչ մենք կավարտեինք հողվածները, արդեն վալենկաները պատրաստ էին (ՀՔ, 328): Մինչ ավտոմեքենան տեղ հասներ, Օֆելյան սկսեց կենդանության նշաններ ցույց տալ (Ավ., 1960, հոկտ. 29, 4): Ու մինչ Մկրտումը թղթադրամի վրա կգտներ հոր ուզած նշանը, խոջան սրտենդած ասում էր... (ԱՔԵ, 462):

Որպես ոճական առանձնահատկություն, պետք է նշել, որ այս շաղկապները հիմնականում տարածված են գրավոր խոսքում: Պարզ ժողովրդական խոսակցական լեզվում նրանք քիչ են օգտագործվում: Մինչ շաղկապի ժամանակային կիրառությունները տարածվեցին հատկապես վերջին տասնամյակում: Նար-Դոսի «Մահը» վեպում ոչ մի մինչ չկա. խիստ հազվադեպ է մինչ-ի գործածությունը Բաֆֆու «Սամվել», Մուրացանի «Գեորգ Մարգարետունի» վեպերում, ինչպես նաև Ակսել Բակունցի և մասամբ Հովհաննես Թումանյանի մոտ: Ինչ վերաբերում է մինչդեռ շաղկապին, ապա այն թեև հազվադեպ է հանդիպում Բաֆֆու մոտ, սակայն սովորական է Մուրացանի, Նար-Դոսի և այլոց գործերում:

2. Ֆարժամանկային հարաբերություններ արտահայտող շաղկապներ

Հենց, հենց որ, թե չէ, մինչև, մինչև որ, նախքան շաղկապների օգտագործմամբ տարժամանակային հարաբերությունների արտահայտումը թե ոճական և թե իմաստային երանգի տեսակետից խորապես տարբերվում է երբ շաղկապի համապատասխան կիրառություններից: Գլխավոր նախադասության գործողության նկատմամբ երկրորդականի ունեցած ժամանակային հարաբերությունը կարող է ունենալ երկու արտահայտություն.

ա) երկրորդական նախադասության գործողությունը

1 Օգտվել ենք չեզվի ինստիտուտի քարտարանից:

ճախորդում է գլխավորի գործողությանը—Այս ժամանակա-
յին հարաբերության արտահայտման համար օգտագործվում
են հենց, հենց որ, թե չէ շաղկապները, որոնք նշում են գոր-
ծողության արագ փոխանցումներ: Այս վերջին հանգամանքն
է պատճառը, որ որոշ դեպքերում կապակցվող նախադասու-
թյուններում նկարնագրվող իրողությունները, դեպքերը կա-
տարման ժամանակով կարծես նույնանում են: Քննենք այդ
շաղկապների կիրառությունները առանձին-առանձին:

Հենց ՈՐ—Հենց որ նա քարը նետեց մեր տիրոջ վրա, իմ
սուրն իջավ նրա գլխին (ՀՔ, 238): Հենց որ կարողացա, տե-
սություն եկա (ՀՄԱԸ, 264):

Գլխավորում կարող է գործողության արագ փոխան-
ցումն ընդգծող որևէ բառ լինել. օրինակ՝ «Հենց որ սա փոքր-
ինչ առողջացավ, փոքր ինչ կազդուրեց յուր սպառաժ ուժերը,
խկույն թողեց վանքը և ճանապարհ ընկավ դեպի յուր նպա-
տակը (ԲՄ, 442)»:

Ապագայում իրականանալիք նույնպիսի արագ փոխան-
ցումներ են նշում հետևյալ օրինակները (պայմանի աղոտ
երանգով). օրինակ՝ «Հենց որ դուրս գամ, առաջին իսկ կա-
յարանից կհեռագրեմ (ՆԴՄ, 587)»:

Այս շաղկապը տարածված է նաև վերջադաս և միջադաս
երկրորդական նախադասությունների կապակցման դերով.
օրինակ՝ «Այդ բոլոր ծրագիրները հայտնի դարձան Մարզպե-
տունուն, հենց որ նա Ամրամի Տավուշից հեռանալն իմացավ
(Մուր. 153)»: «Ուտով գնացողները, հենց որ տեսնում էին իշ-
խանին, քաշվում էին ճանապարհի մի եզրում, կանգնում
էին... և այնքան սպասում էին, մինչև անցնում էր (Բաֆ.,
72)»:

Հենց—Ճիշտ նույնպիսի իմաստային և կիրառական
հատկանիշներ ունի հենց շաղկապը: Սակայն սրա գործածու-
թյունները ժողովրդական բնույթի գործերում ավելի շատ են
տարածված, քան նախորդինը: Ի դեպ, պետք է նշել, որ այս
երկու շաղկապներն էլ ժողովրդական լեզվից են մուտք գոր-
ծել գրական լեզուն, որի պատճառով անցյալի դասական հե-
ղինակների մոտ այնքան էլ տարածված չեն. այսպես, Նար-

Դոսի «Մահը» վեպում ոչ մի հենց չկա (որպես շաղկապ), իսկ հենց որ միայն երկու անգամ է օգտագործված: Բաֆֆու «Սամվել»-ում հենց-ը երեք անգամ է գործածված: Հետագայում, ժողովրդի բարքն ու կենցաղը նկարագրող հեղինակները հաճախ դիմում են այս շաղկապներին, և նրանց գործածությունները խիստ ծավալվում են (Թումանյան, Բակունց և ուրիշներ): Պետք է նաև նկատել, որ այս երկու շաղկապներից արդի հայերենում շատ ավելի լայն տարածում ունի հարադրական կազմություն ունեցող հենց ուր-ը: Նա հանդիպում է թե գեղարվեստական և թե հրապարակախոսական գրականության լեզվում: Այժմ բերենք հենց շաղկապի կիրառություններից մի քանի օրինակներ՝

Բայց հենց մոտեցան, տեսան Մարկոյին, էլ սիրտ չի արին առաջը գրնան (ՀԹՆԺ, 2, 254): Ու հենց շողաց ցուքն արեհի՝ Անտես, անհետ չըթացան (ՀԹՆԺ, 2, 46): Եվ իմ ականջին—հենց մուծն ընկնում է, Մի անտես—անհայտ ոգի երգում է (ՀԹՆԺ, 2, 189):

Նկատելի է, որ եթե հենց որ շաղկապով կապակցվու ստորադաս նախադասությունը կարող է ինչպես առաջադաս, այնպես էլ վերջադաս դիրք գրավել գլխավորի նկատմամբ, ապա հենց շաղկապի գործածության դեպքում այն գերազանցապես առաջադաս դիրք ունի:

Երբեմն այս շաղկապների օգտագործմամբ երկրորդական նախադասություններում նկարագրվում են այնպիսի իրողություններ, որոնք անմիջապես կիրականանային, եթե չկատարվեր այն, ինչի մասին խոսվում է գլխավորում: Երկրորդական նախադասության ստորոգյալը մեծ մասամբ արտահայտված է լինում հարկադրական եղանակի անցյալի ապառնի ժամանակով (կամ էլ ապառնիության գաղափար արտահայտող ուզել բայով). օրինակներ՝

Հենց որ պիտի գար, մայրը կանչեց: Հենց պիտի խոսեի, նախագահն ընդհատեց: Հենց ուզում էի իմանամ, թե իմ գործը ոնց կլինի, ձեռքով արեց, թե գնա... (ԱԲՆ, 533): Հենց ուզում էր հեռանա, մայրը դիմացի անկյունից դուրս եկավ (ԱԲՆ, 415):

Շատ ավելի շեշտված ձևով է արտահայտվում այս նշանակությունը, երբ երկրորդական նախադասության մեջ քննց-ի փոխարեն օգտագործվում է այն է շաղկապական բառը. օրինակ՝ «Մի շուն՝ այն է պիտի սկսեր հաշել՝ ետ մտածեց, ծմրաց և կիսահաշ բերանով հորանջեց մնաց (ԴԴ, 3, 352)»:

Թե Չէ—Բազմաթիվ են այն դեպքերը, երբ համաժամանակային հարաբերությունն ընդգծելու համար առաջադաս երկրորդական նախադասության վերջում օգտագործվում է թե չէ շաղկապական կապակցությունը: Այն հատկապես շատ է հանդիպում Թումանյանի և Բակունցի մոտ: Բերենք օրինակներ՝

Հենց Բաղին մի բերան կանչեց թե չէ, վեր թռա տեղից (ԱԲԵ, 8): Հենց հյուրը գնար թե չէ, Խոջա-Հիրան սկսում էր զայրանալ որդու վրա (ԱԲԵ, 464): Հենց արցունքը ցամաքեր թե չէ, դուրս էինք գալիս և շտապում տուն... (ԱԲԵ, 545):

Հետաքրքրական է նշել, որ այս վերջին երկու օրինակներում երկրորդական նախադասության ըզձականաձև ստորոգյալները արտահայտում են անցյալ անկատար ժամանակի գաղափար, մի հանգամանք, որ ենթադրել է տալիս այդ ձևերի գրաբարյան գործածության (անցյալ անկատարի) մասին: Ինչ վերաբերում է թե չէ շաղկապի՝ ժամանակի նշանակությամբ հիշյալ կիրառությունների առաջացմանը, ապա այդ կարելի է բացատրել հետևյալ ձևով. ժողովրդական լեզվում կարելի է հանդիպել գործողության արագություն նշող ստորոգյալի դրական և ժխտական ձևերով կազմված բայական հարադիրների, ինչպես՝ գնար չգնար (=հենց որ գնար), ցամաքեր չցամաքեր (=հենց որ ցամաքեր), տեսավ չտեսավ (=հենց որ տեսավ): Այս բայական արտահայտությունները ավելի տարածված են թե շաղկապով, ինչպես՝ գնար թե չգնար, ցամաքեր թե չցամաքեր, տեսավ թե չտեսավ: Ահա այս ձևերից էլ, երբ ժխտական ձևով արտահայտված երկրորդ բայական բաղադրիչը փոխարինվում է չէ-ով, կարող

1 Կարելի էր բերել ավելի հաջող օրինակներ, սակայն մենք օգտագործել ենք վերի նախադասություններում եղած բայական ձևերը:

էին առաջանալ և առաջացել են գնար թե չէ, ցամաքեւ թե չէ, տեսալ թե չէ արտահայտութիւնները, որտեղ արդեն թե չէ-ն շաղկապական նշանակութիւն արտահայտող ամբողջական կապակցութիւն է դարձել: Պետք է նշել, որ հենց որ շաղկապը երբեք չի օգտագործվում թե չէ-ի առկայությամբ:

Ժողովրդական-խոսակցական լեզվում տարածված են նաև թե չէ շաղկապի ինքնուրույն գործածութիւնները (առանց հենց-ի). օրինակներ՝

Հերը հեռանում է թե չէ՝ աղջիկը վազում է, պահարանից մի դեղ է հանում, բերում քսում տղի վերքին (ՀԹԵ, 2, 357): Մենակ են մնում թե չէ, թագուհին սկսում է լաց լինել ու լաց լինելով էսպես է խոսում երիտասարդի հետ (ՀԹԵ, 2, 428):

Հետաքրքրական է բավական է կապակցութեան գործածութիւնը՝ հիշյալ նշանակութեան արտահայտման համար. օրինակ՝ «Բավական է (=հենց որ) մի քիչ խմեր, և սկսում էր հիմարութիւններ անել»:

բ) Գլխավոր նախադասութեան գործողութիւնը նախորդում է երկրորդականի գործողութիւնը—Տարժամանակային այս հարաբերութիւնն արտահայտելու և բնդգծելու համար արդի հայերենում գործածվում են մինչև, մինչև որ շաղկապները: Սրանց օգտագործմամբ նշվում է ժամանակի այն սահմանը, որից առաջ միայն կատարվել, կատարվում կամ կարող են կատարվել գլխավոր նախադասութեան մեջ նկարագրվող իրողութիւնները: Հիշյալ շաղկապների օգտագործմամբ ժամանակային հարաբերութիւնները ստանում են նաև քանակային և հետևանքային երանգներ, որոնցից զուրկ է, ինչպես տեսանք, երբ շաղկապը՝ համապատասխան տարժամանակային իր կիրառութիւններում: Նրկորդական նախադասութեան կազմում այս շաղկապները միշտ նախադաս գործածութիւն ունեն: Նրանցով կապակցվող մասերը հիմնականում վերջադաս են: Մինչև, մինչև որ շաղկապների օգտագործմամբ կապակցվող մասերի միջև կարող են արտահայտվել տարբեր իմաստային հարաբերութիւններ ու երանգներ:

1) Բուն տարժամանակային հարաբերութիւններ. «Կրկին վազում էր աղջիկն հեծի, մինչև որ խավարն իջավ

անտառում (ԱԻ, 152)»։ «Ու կանգնում է այնքան, մինչև որ մի դատարկ կառք է անցնում կողքի փողոցով (ՍԶ, 58)»։ Նկարագրվող դեպքերը կարող են ներկայացվել որպես պարբերաբար կամ հաճախակի կրկնվող. օրինակներ՝ «Արուսը հեկեկում էր այնքան ժամանակ, մինչև որ Լևոնի քունը վերջապես տանում էր... (ՆԶԶ, 381)»։

Ապագայում կատարվելիք կամ իրականանալիք գործողություն հետ է կապվում գլխավոր նախադասության մեջ նկարագրվող գործողության կամ վիճակի տևողությունը։ Երկրորդական նախադասության մեջ ստորոգյալը սովորաբար ըղձական եղանակով է արտահայտվում. օրինակներ՝

Եղան նրանք քաջ պետեր—հայեր սեպուհ հաղթական, Աշխարհ եղավ Հայաստան և պիտ մնա Հայաստան՝ Մինչև արևը հանգչի և ցուրտ աճյունը նրա Զյունն համայն ազգերի հայրենիքների վրա... (ԱԻ, 168)։ Եվ նա ասում էր՝ նույնն է մարդը եվ միշտ էլ նույնը կմնա, Մինչև ցնդի այս աղնթարթը, Որ ընթանում է դեպի մահ (ԵԶ, 105)։

2) Գործողության տևողության չափն ու փանակը՝ ժամանակի տեսակետից — Տարժամանակային հարաբերություններ արտահայտող այս օրինակներից շատերում զուգահեռաբար ընդգծվում են նաև գլխավոր նախադասության գործողության տևողության չափն ու քանակը։ Այս վերջին նշանակությունը ընդգծելու համար գլխավոր նախադասության մեջ հաճախ օգտագործվում են այնքան, այնքան ժամանակ հարաբերյալները. օրինակներ՝ «Այդ օտարները ժամանակավոր վարձկաններ էին, որ պետք է պահվեին այնքան ժամանակ, մինչև մեր աշխարհում բնիկներից նոր ուժեր պատրաստվեին (Բաֆ., 89)»։ «Լևոնը հարկադրված խոսեց, համոզեց, հավատացրեց այնքան ժամանակ, մինչև որ Արուսը հավատաց, փարվեց նրա կրծքին (ՆԶԶ, 132)»։

3) Գործողության կատարման տևողությունից բխող արդյունք—նախորդ օրինակների քննությունը ցույց է տալիս, որ շատ հաճախ նախադասության գործողությունը շարունակվում է մինչև որոշակի մի արդյունքի հասնելը։ Այդ արդյունքը կարող է ինչպես անուղղակի, այնպես էլ ուղղակի

կերպով կախված լինել գլխավոր նախադասության մեջ նկարագրված գործողությունից: Վերցնենք մի օրինակ. «Եվ մի ժամու շափ եսամուր տանջեց անձնվեր աղջկան, մինչև որ նիրհեց նրա քաղցրահնչյուն ձայնի օրորով (Շիրվ., 322)»: Ինչպես դժվար չէ նկատել, եսամուր աղջկան չի տանջել այն նպատակով, որ հետագայում նիրհի «նրա քաղցրահնչյուն ձայնի օրորով», այլ պարզապես տանջել է, որի անուղղակի հետևանքն էլ այն է եղել, որ հետո նիրհել է:

Այլ է սակայն հետևանքի երանգի բնույթը հաջորդ օրինակներում, ուր գլխավոր նախադասության մեջ նկարագրվող հատուկ դիտավորությամբ կատարված գործողությունից է անմիջապես բխում երկրորդականում նշվող հետևանքը. օրինակ՝ «էստեղ թիակն առավ Ուրաշիման, մյուս թիակն առավ ծովի թագավորի աղջկին ու երկար թիավարում էին, մինչև հասան ծովի տակի վիշապների ապարանքը... (ՀԹՆԺ, 3, 235)»: «Ես հանգիստ չթողեցի նրան, մինչև որ նա վերջապես խոսեց (ՀՄԱԸ, 237)»: Նկատելի է, որ հատուկ դիտավորությամբ կատարված կամ կատարվող գործողությունից բխող հետևանքը կարելի է գիտել նաև որպես այնպիսի նպատակ, որն իրականացված է: Հետաքրքրական է հետևյալ օրինակը՝ «Գիտե՞ս, հոգիս դուրս եկավ, մինչև որ մեր պնդազուլուս դուղացիներին հասկացրի ուսումնարանի օգուտը և կարողացա մի քանի կուպեկ կորզել մեր հարուստներից (ՆԴ, 79)»: Այս օրինակում հետևանքի երանգը ըստ էության ավելի շատ արտահայտվում է գլխավոր նախադասության մեջ, որտեղ նկարագրված է մի այնպիսի վիճակ, որի անմիջական պատճառը մինչև որ շաղկապով սկսվող ժամանակի երկրորդական նախադասության մեջ նկարագրված նպատակի իրականացումն է:

Մինչև և մինչև որ շաղկապները օգտագործվում են նաև ժխտական կառուցվածք ունեցող նախադասությունների շաղկապման համար: Այդ դեպքում երկրորդական նախադասությունը սովորաբար նշում է այնպիսի իրողություն, որը մինչև չկատարվի, չի կարող իրականանալ այն, ինչի մասին խոսվում է գլխավոր նախադասության մեջ: Որպես կառուց-

վածքային յուրահատկութուն, պետք է նշել, որ երկրորդականը մեծ մասամբ առաջադաս դիրք է ունենում, որով շեշտվում է նրա կարևորությունը. օրինակներ՝

Մինչև հատիկը հողում չի մեռնում՝ Մեկը հազարի պտուղ չի բերում... (ՀՀԵ, 212): — Այո՛. իշխանն ասել էր վեհափառին, թե «մինչև ու թագավորը երդմամբ չխոստանա, թե վրատահանում է ինձ վրա իբրև յուր հարազատի և հավատարմի վրա, ես ոտքս արքունիք չեմ դնիլ (Մուր., 129—130)»:

Նկատելի է, որ այս օրինակներում կապակցվող մասերի միջև առկա է պայմանի աղոտ երանգ. այդ ավելի պարզ է երևում, երբ երկրորդական նախադասություն մեջ ստորոգյալն արտահայտվում է ըղձական եղանակով: Համեմատիր նաև՝ «Մինչև չկարդաս, հանգիստ չեմ թողնի»:

Երբեմն մինչև շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությունը գլխավորից չի բաժանվում տրոհության նշանով: Դա անշուշտ մինչև կապի անալոգիայի պատճառով է. օրինակ՝ «Նա նայում է մինչև սալիկը ծածկվեն լեռան հետեր, ապա նայում է ձորի մեջ ընկած իրենց գյուղին (ԱԲԵ, 273)»: Հավանաբար երկզիմությունից խուսափելու համար է, որ լեզվում, ի տարբերակումն մինչև կապի, լայն տարածում ստացավ մինչև ու հարադրական շաղկապը, որի գործածությունը հետևանքի երանգը կարծես ավելի է ընդգծվում:

ՆԱԽԹԱՆ—Հիմնականում որպես կապ հանգես եկող այս քառը շաղկապական կիրառություն ունի հաջորդ օրինակում. «Դեռ զիտակցությունս, ինչպես և շունչս լրիվ չէի կորցրել. ուստի տեսնելով ինձ ցամաքին ավելի մոտիկ, քան սպասում էի, ոտքի ելա, կանգնեցի և ամենայն արագություն վազեցի դեպի ցամաք, նախքան մի ակիք կգար ու նորից ինձ հոտ կտաներ (ԴԴՌԿ..., 74)»:

Ինչպես տեսնում ենք, արդի հայերենը ժամանակային հարաբերություն արտահայտող հարուստ շաղկապական միջոցներ ունի: Հետաքրքրական է նշել, որ ինչպես շաղկապների մյուս տեսակների, այնպես էլ ժամանակի շաղկապների համար արդի հայերենն ունի զույգ ձևեր, շաղկապական գրեթե բացարձակ նույնանիշներ (երբ-երբ ու, քանի-քանի դեռ,

մինչ-մինչդեռ, հենց-հենց որ, մինչև-մինչև որ): Զանազան պատճառներով առաջացած այս զույգ ձևերը խիստ հարբատացնում են ժամանակի շաղկապների ոճական հնարավորությունները, խոսքին տալով մերթ զուտ գրքային, մերթ ժողովրդական-բարբառային, մերթ կենդանի խոսակցական և այլ ոճական երանգներ: Որոշ լեզուներում, ինչպես օրինակ ռուսերենում և ֆրանսերենում, այս բնույթի հոմանիշ շաղկապներ չկան:

7. ԶԻՋԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

Զիջական են համարվում այն շաղկապները, որոնց օգտագործմամբ կապակցվող մասերի միջև դրսևորվում է հակառակ հիմունքի հարաբերություն: Ստորադաս մասում նկարագրվող իրողությունը իր բովանդակությամբ հակադիր է այն իրողությանը, որ նկարագրվում է գլխավոր նախադասության մեջ:

Հայերենի զիջական շաղկապների գոյությունն ու գործածությունը նկատել են դեռ գրաբարի քերականները, որոնք տարբեր անուններ են տվել այդ շաղկապներին: Այսպես, Մ. Չամչյանն ու Գ. Ավետիքյանը կոչում են անկատարակա՞ն, Ս. Պալասանյանը թե գրաբարի և թե աշխարհաբարի քերականությունների մեջ անվանում է տեղատուական: Առաջին անգամ Ս. Մախասյանն էր, որ հիշյալ շաղկապները բնորոշելու համար օգտագործեց զիջողական տերմինը՝ համարելով դրանք ներհակական (իմա հակադրական) հարաբերություններ արտահայտող շաղկապներ¹: Ս. Պալասանյանը զիջական շաղկապներով կապակցվող նախադասությունները ղետեղում է պատճառական նախադասությունների կապակցության բաժնում, որի մեջ, ի դեպ, մտցնում է նա պայմանի և պատճառի շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները²: Գրեթե նույնպիսի մոտեցում է ցուցաբերում

1 Ստ. Մախասեան, Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, 154:

2 Ս. Պալասանեան, Գործնական քերականություն հայերէն լեզուի, հատ. II, Թիֆլիս, 1869, 93—94:

նաև Մ. Արեղյանը, երբ հիմնում է խոսքերի մեջ ամփոփում է պատճառի, նպատակի, պայմանի և զիջական երկրորդական նախադասությունները¹։

Հիշյալ երկրորդական նախադասությունների արտահայտած իմաստային հարաբերությունների մոտիկությունն է անշուշտ պատճառը, որ այդպես են վարվել նաև ուրիշ հին քերականներից ոմանք։ Այսպես, Ի. Գավրիլովը պատճառականի մեջ է մտցնում նույն այդ երկրորդականները²։

Պետք է նշել նաև, որ շատ քերականներ հակված են այդ երկրորդական նախադասությունները ստորադասականի և համադասականի միջին տեսակը համարել, քանի որ նրանց օգտագործմամբ զիջական և հակադրական հարաբերությունները միասնաբար են հանդես գալիս։ Նման ակնարկ է անում նաև հայ քերականներից Ս. Պալասանյանը իր «Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, Համաձայնութիւն» (Թիֆլիս, 1869, 94) աշխատության մեջ։ Ռուս քերականներից Ռ. Բուլաեկը զիջական երկրորդական նախադասությունները համադասությունից ստորադասության անցնելու անցողիկ շրջան է համարում, քանի որ, ըստ նրա, զիջական երկրորդականը նշանակությամբ ստորադասվում է հակադիր նախադասությունը, իսկ բերականական իմաստով գլխավորին հավասար արժեք է ստանում³։ Ոմանք զիջական շաղկապները համարում են ստորադասա-համադասական հարաբերությունների արտահայտող⁴։

Արդի հայերենում ևս զիջական երկրորդական նախադասությունները, գլխավորի նկատմամբ ունեցած իրենց շարահյուսական կախվածության աստիճանով, բավական տարբերվում են մյուս տիպի երկրորդական նախադասություններից։

¹ Մ. Արեղյան, Աշխարհարարի շարահյուսութիւն, Վաղարշապատ, 1912, էջ 316—322։

² И. Давыдов, Опыт общесравнительной грамматики русского языка, изд. 3-е, СПб, 1854, 368.

³ Р. Буслаев, Историческая грамматика русского языка, 4-е изд., Синтаксис, Москва, 1875, 340.

⁴ А. Пешковский, Русский синтаксис в научном освещении, изд. 5-е, Москва, 1935, 414.

րից: Բերենք մի օրինակ. «Թեև (չնայած, թեպետ) Սուրիկը հիվանդ էր, բայց շբացակայեց դասերից»: Եթե հիշյալ օրինակում հանենք զիջական շաղկապը, ապա: կապակցվող մասերի միջև դրսևորվող հակադրա-զիջական հարաբերությունները գրեթե ոչնչով չեն փոխվում, միայն թե քիչ թուլանում է երկրորդականի (որն այս դեպքում արդեն դիտվում է որպես համադաս նախադասություն) զիջական նշանակությունը: Այս երևույթը ցույց է տալիս, որ իսկապես զիջական հարաբերություններ արտահայտող բարդ ստորադասական նախադասությունները խիստ մոտ են կանգնած համադասությունը¹: Այս հանգամանքի օգտին է խոսում նաև այն, որ թեև հայերենի բարբառները զիջական շաղկապներ չունեն², սակայն բարդ համադասական որոշ կառուցվածքների, էլ եղանակավորող բառի և հատկապես հակադրական շաղկապների միջոցով րնդունակ են արտահայտել նշված իմաստային հարաբերությունը: Այսպես, ամա փոխառյալ հակադրական շաղկապի օգտագործմամբ (հնչյունական զանազան տարբերակներով՝ տարբեր բարբառներում) հակադրազիջական հարաբերությունն է նշվում հետևյալ բնույթի օրինակներում «(թեև) հոգնած եմ, ամա էս ա գուկամ» (Նիկոմիդիա):

Զիջական շաղկապների կարևոր կիրառական առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրանցով կարող են կապակցվել նաև համազոր անդամներ ու բառակապակցություններ, մի բան, որ պերճախոս կերպով վկայում է նրանց համադասական շաղկապների հետ ունեցած սերտ կապի մասին: Բերենք մի երկու օրինակ. «Նա կարողացավ հիանալ երկու էակի քնկուզ թաքուն, բայց խորունկ վշտով (ՕԴԲԿ..., 30)»: Իսկ մեր փրկարարների բացականչությունները լսվում

¹ Այս երևույթը դեռ իր ժամանակին նկատել է Ս. Պալասանյանը, որը գրել է, նկատի ունենալով քաջեռ և շաղկապը. «Թէպէտ և շաղկապը Լրբմն ներգործությամբ չէ դրվում, և այս ժամանակ տեղատվական (իմա զիջական—Գ. Գ.) նախադասությունը անկախ նախադասության ձև է ստանում» «(Թէպէտ և) քաղցր է մեղր, բայց ախտալից մարմնոյ վնաս առնէ» (Գործնական բերականութիւն հայերէն լեզուի, հատ. II, Թիֆլիս, 1869, 94:

² Ոչ միայն գրաբարից ավանդված, այլև փոխառյալ:

էին շնայած թույլ, բայց պարզորոշ (ՀՄԱԸ, 230)»: «...Կուղեի այնպիսի հաջողության հասնել, որ այն լսեմ առանց բարկանալու, քեպետ ո՛չ առանց հուսահատության,—պատասխանեց Լյուսինը (ՕԴԲՖՊ, 269)»:

Զիջական շաղկապները արդի հայերենում խիստ տարածված են զուգադիր գործածությամբ՝ սակայն, բայց, այնուամենայնիվ, բայց և այնպես, այնուամենայնիվ շաղկապների հետ, որոնցով սկսվում են վերջադաս գլխավոր նախադասությունները:

Զիջական այս կամ այն շաղկապի օգտագործումը ոճական և իմաստային տարբեր երանգներ է ներդրում բարդ նախադասության քննարկվելու կառուցվածքներում: Նկատելի է, որ վերջին մի քանի տասնամյակներում այս շաղկապների քանակը մեծապես աճեց: Պետք է նշել սակայն, որ զիջական շաղկապները տարածված չեն ժողովրդական լեզվում:

ԶՆԱՅՅԵԼՈՎ ՈՐ, ԶՆԱՅԱՄ ՈՐ, ԶՆԱՅԱՄ—Այս շաղկապներից առաջինը, որ գործածական էր անցյալ դարի վերջերին, այժմ գրեթե դուրս է մղվել լեզվից՝ փոխարինվելով հոմանիշ շնայած ու, շնայած ձևերով: Այս շաղկապները ունեն թե զուգադիր և թե առանձին գործածություն:

1) Զուգադիր գործածությամբ ստորադաս մասը գլխավորից առաջ է դիրք գրավում, իսկ վերջինս սկսվում է որևէ շաղկապով (բացառապես հակադրական այն, շաղկապներով, որոնք զիջական երանգով կիրառություններ ունեն համադասական կապակցության մեջ՝ բայց, բայց և այնպես, սակայն, այնուամենայնիվ և այլն. իսկ, մինչդեռ շաղկապները, օրինակ, չեն կարող օգտագործվել այս կառուցվածքի նախադասություններում). օրինակներ՝

Չնայելով որ աշնանավերջ էր, սակայն օրը մեղմ ու տաքուկ լինելով, ախորժալի էր կացուցել երեկոն (Մուր., 244): Եվ շնայած, որ փոխվել են դիրքերն ու հարաբերությունները, տնտեսական հիմնաշենները ու բարոյական զանգակատները, այնուամենայնիվ չեն փոխվել հին տիտղոսներն ու վայելչանքը (ԳՄ, 496): Չնայած որ միջանցքներում լույսը միանգամայն բավարար էր, սակայն առաջին անգամից այդ մի-

ջանքները թողին իմ վրա մուսուլ, մութ, անօդ գալերեյանների տպավորություն (ԵԶ, 403): Եվ չնայած մայրը խորթ էր, հայրը հարբեցող, չնայած նրան հանդիմանում էին, հաճախ ու նախատում, քայց նա երբեք չէր տխրում և իրեն միշտ ազատ էր զգում (ՍԶ, 170):

Ձիջական նշանակությունը շեշտվում է, երբ որպես կապակցության միջոց օգտագործվում է չնայած այն բանին, որ շաղկապական արտահայտությունը, որ երբեմն օգտագործվում է հրապարակախոսական գրականության լեզվում. օրինակ՝ «Չնայած այն բանին, որ ժողովածուի շատ նյութեր անմիջապես պատմողի բերանից չեն գրի առնված, այլ լավելուց տարիներ հետո հիշողությամբ են վերարտադրված, այնուհանդերձ, հնարավորության սահմաններում պահպանված են սկզբնաղբյուրի բովանդակությունը, ոճն ու ոգին (Եր., 1958, նոյ. 5)»:

2) Երբ ստորագրաս նախադասությունն է գլխավորից հետո դիրք գրավում, ապա զիջական շաղկապները արդեն հանդես են գալիս առանձին գործածությամբ: Այս կառուցվածքի բարդ ստորագրասական նախադասությունները համեմատաբար քիչ են տարածված: Օրինակներ՝

Անկողին մտնելով, իսկույն չկարողացավ քնել, չնայելով որ գիշերից արդեն բավական անցել էր և ինքն էլ այդ օրը շատ հոգնած էր զգում իրեն (ՆԴ, 448): Բայց այրուծին ճարպրկորեն թռավ նրանց բոլորի միջով, չնայած որ նրանք դեսուդեն փախան և անվթար անցան (ԴԴ, 3, 475): Լեոնն էլ էր խոսում ռուսերեն, չնայած որ էլուշը ծիծաղում էր նրա կուպիտ արտասանության վրա (ՆԶԶ, 516): Այդ որ ասեր, մենք էլ էինք տխրում, չնայած մեզինից ոչ ոք չէր տեսել մեր քնույն եզորին, որին տարիներ առաջ աքսորել էին (ԱԲԵ, 133):

Պետք է նշել, որ չնայած շաղկապը այնքան էլ տարածված չէ վերջադաս երկրորդական նախադասությունների կապակցման դերով: Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում այս շաղկապի կիրառությունները նախադասության համազոր անդամների կամ բառակապակցությունների միջև, ուր արդեն նա արտահայտում է սահմանափակման նշանա-

Այսպիսով: Այս դերով նա կարող է հանդես գալ հիմնականում զուգահեռ գործածությամբ. օրինակ՝ «Իսկ մեր փրկարարների բացականչությունները լսվում էին շնայած թույլ, բայց պարզորոշ (ՀՄԱԸ, 230):

Այս շաղկապներով կապակցվող նախադասությունները կարող են նաև միջադաս գործածություն ունենալ, գերազանցապես տեղադրվելով գլխավորի ստորոգյալից առաջ. օրինակ՝ «Այս խոսքերը, շնայած կատակով էին ասված, պառավ տիկնոջը սարսուռ պատճառեցին (Բալզակ, հատ. 9, Երև., 1960, 179)»: «Այդ կիներ, շնայելով, որ ամիսներով Պետրոսի քաղցր խոսքին չի արժանանում... կյանքից զոհ է ավելի, քան երբևէ (Շիրվ., 163)»:

Անցյալ դարի մեր գրողները ճիշտ են վարվել, երբ խուսափել են հարադրական շնայելով որ շաղկապի բաղադրիչ մասերը բաժանել ստորակետով: Մինչդեռ ժամանակակից շատ հեղինակներ դեռ երբեմն շարունակում են տրոհել շնայած և որ բաղադրիչները, հաշվի չառնելով անշուշտ, որ նրանք արդեն շաղկապական կուռ ամբողջություն կազմող ձևեր են: Հրաշյա Քոչարը մինչև այժմ էլ դեռ շարունակում է օգտագործել շնայելով, որ հնացած բաղադրյալ ձևը: Նրա մոտ կարելի է հանդիպել մինչև անգամ շնայելով սխալ ձևին (անշուշտ շնայած պարզ ձևի անալոգիայով), որ չենք դտնում նույնիսկ անցյալ դարի մեր հեղինակների մոտ. օրինակ՝ «Ուրեմն ինքն իսկապե՞ս չի մոռացել նրան, շնայելով վճռակա- նորեն որոշել էր մոռանալ և կարծես արդեն մոռացել էր (ՀՔ, 112)»:

Թեե՛վ, Թե՞ՊԵՏ (ԵՎ)—Այս շաղկապները, որոնք տարածված են մեծ մասամբ գրավոր խոսքում, կարող են հանդես գալ ինչպես զուգադիր, այնպես էլ առանձին գործածությամբ: Այս տեսակետից նրանք ունեն կիրառական ճիշտ նույն առանձնահատկությունները, ինչ որ շնայելով որ, շնայած որ շաղկապները:

1) Զուգադիր գործածություն. վերջադաս գլխավորն սկսվում է հակադրական շաղկապներով:

Թե՛ն ընկալ ցարն իր գահից, Բայց չի՛ ջարդված միան-

գամից (ՀՀԵ, 63): Նամակը Թեև հին էր, այնուամենայնիվ հոր համար շատ հետաքրքրական էր (Րաֆ., 481): Թեև առաջուց ձեզ ասում եմ, որ ձեր առաջարկած պայմաններով չեմ կարող վարժուհի ճարել, բայց և այնպես վաղընեթ կխոսեմ մեկի հետ, որին առայժմ ի նկատի ունեմ (ՆԴ, 85): Թեպետ մեր ուժը գերազանց, քեպետ հանգամանքները նպաստավոր, այսուամենայնիվ մենք չենք կարող Դվինը դրավել, առանց գոնե մի քանի հարյուր զինվոր զոհելու... (Մուր., 401): Իսկ մնացածները, ինչպես շարքայինները ճակատամարտից առաջ, քեպետ և պատրաստվում էին կռվի, բայց առայժմ փնտրում էին իրենց համար զանազան զվարճություններ (ՏԱԿ, 2, 308): Մենք քեպետ վայելչագրության տետրակի վրա գլխահակ ենք, բայց գիտենք, որ նա դեպի մեզ է գալիս:

Հազվադեպ են այն դեպքերը, երբ վերջադաս գլխավոր նախադասության մեջ հակադրական շաղկապներ չեն օգտագործվում: Չափածոյում, հանգի համար, դա ավելի հաճախ է պատահում. օրինակ՝ «Թեև իջնում է հոգուս ըստվեր Եվ չեմ սպասում գալիքից վարդ, (սակայն, բայց) Սրտիս հուշերը բարի են դեռ Քնքուշ անվամբ քո, անուշ Նվարդ (ՎՏ, 231):

Այս զիջական շաղկապները շարադասական մեծ ճկունություն ունեն, երբ իրենցով կապակցվող երկրորդական նախադասությունները առաջադաս են: Այս դեպքում նրանք կարող են միջադաս և նույնիսկ ետադաս գործածություն ունենալ. օրինակներ՝

Բժիշկների հուսադրությունները Թեև բոլորովին չհանգրստացրին նրան, այնուամենայնիվ, երեսը շուտ տվեց դեպի բարձի մյուս կողմը և լուռ կացավ (Րաֆ., 558): Քունը տանում էր Թեև, բայց նա մտածում էր էն փոքրիկ աղջկա վրա, որ ժպտալով իրեն նվիրեց գոգին դրած կոշիկները (ՀԹԵ, 1, 376):

2) Երբ այս շաղկապները հանդես են գալիս առանձին գործածությամբ (առանց բայց, սակայն և այլ շաղկապների), ապա նրանցով կապակցվող նախադասությունները գերազանցապես վերջադաս դիրք են գրավում գլխավորի նկատ-

մամբ: Նման դիրքում նրանք ունենում են նաև սահմանափակման նշանակություն: Պետք է նշել, որ թեև շաղկապը այս դերով ու դիրքով շատ ավելի է տարածված, քան թեպետ-ը. օրինակներ՝

Նա մինչև անգամ կաթողիկոսի մոտ շմնաց, թեպետ և կցանկանար ամբողջ ժամերով կանգնել նրա առաջ և հայրապետի սուրբ խոսքերը լսել (Մուր., 222): Բայց կղզում բնակիչներ կային, թեև նրանց թիվը եռեք հոգուց ավելի չէր (Րաֆ., 228): Տեր-Սիմոնը կարգաց: Այրին սկսեց լաց լինել, նրան հետևեցին մյուս պառավները, թեև ոչ մի բառ չէին հասկանում (Շիրվ., 39):

Հատուկ հետաքրքրություն է ներկայացնում զիջական այս շաղկապների ներթափանցումը պարզ նախադասության կազմի մեջ: Նման դեպքերում նրանցով կապակցվում են. ա) Զիջական նշանակություն ունեցող ծավալուն կամ ոչ ծավալուն տրոհվող լրացումներ (պարագա, որոշիչ) և միջանկյալ բառակապակցություններ: բ) Նախադասության համադրական դամներ ու բառակապակցություններ: Առաջին դեպքում այս շաղկապները ձեռք են բերում սահմանափակող ու ճշգրիտող նշանակություն, մի հանգամանք, որ նրանց մոտեցնում է համադասական շաղկապներին. օրինակներ՝

Նրանք ինձ հիշեցնում են այն միայնակ ծառը, որ բուսել է անտառի եզրին և որին առավել զայրույթով խփում է հողմը և չար կայծակը... Բայց և այնպես նա մնում է, թեև անպտուղ և առանց նոր ընձյուղների (ԱՅԵ, 671): Բանտապետը հեռացավ, զարմացած տեսնելով, թե ինչպես էին տաժանապարտները և բանտարկյալները անտարբերությամբ, թեև ոչ առանց հետաքրքրության, նայում այդ քուհանային... (ՕԴԲԿՊ..., 547): ...Կուզեի այնպիսի հաջողության հասնել, որ այն լսեմ առանց բարկանալու, թեպետ ոչ առանց հուսահատության, — պատասխանեց Լյուսինը (ՕԴԲԿՊ, 269): Այդ դաշինքի շնորհիվ զարմանալի կերպով արագ հաղթանակ տարվեց նարոդնիկության նկատմամբ և չափազանց լայն տարածում ստացան մարքսիզմի գաղափարները (թեպետ և գոհակացած ձևով) (ԼԵ, 5, 477):

Համազոր անդամների ու նույնատիպ բառակապակցութ-
յունների միջև օգտագործվելիս այս շաղկապները (առավե-
լապես զուգադիր գործածությամբ) մեծ մասամբ կապվում
են գործողություն կամ հատկանիշ արտահայտող բառերի
հետ: Այս կիրառությունների ժամանակ ավելի է շեշտվում
թեև, թեպետ (և) շաղկապների սահմանափակող և ճշգրտող
նշանակությունները. օրինակներ՝

Աչքերը կայծեր էին արձակում, այն աչքերը, որոնց ար-
տահայտությունը, թեև հրող, քայց երբեք երկյուղալի չէին
եղել (Շիրվ., 150): Բայց աղջիկը դիտում էր կատվին և թեև
չէր ժպտում, քայց զբաղվում էր (ԴԴ, 60): Բարեկամս զնաց
մեզանից անսովոր կերպով, առանց ոչ ոքի ծանրություն լի-
նելու, անաղմուկ ու համեստ վերջակետելով իր բազմավաս-
տակ, թեև կարճ գործունեությունը (ՎՓՀՀ, 2 21): Լինելով
երեք տաժանավայրերի գանձապահ, Կոլենը հարուստ էր այն
ավանդներով, որ վստահված էին նրա ճանաչված, թեպետ և
հարկադրյալ ազնվությանը (ՕԴԲԿՊ..., 107): — Անկեղծո-
րե՛ն... Ահա այն բոլորը, ինչ ես ուզում եմ, — ասաց Պելրա-
զը, — և անկեղծությունը այն միակ, թեպետ և մեզ համար
անսովոր, նվերն է, որ մենք կարող ենք անել միմյանց
(ՕԴԲԿՊ..., 160): Երբ մերժում են զենքերը հոտ տալ, զայրա-
նում են և, թեպետ անզեն, քայց կապը կտրած գծերի նման
սկսում են սպառնալիքներ կարդալ իսպանացիներին
(ԴԴԲԿ..., 485):

Ի վերջո պետք է նշել, որ թեպետ (և) շաղկապը, որ գրա-
բարում ավելի էր տարածված, քան թեև-ը, արդի հայերե-
նում սկսում է իր դիրքերը աստիճանաբար զիջել թեև և շնա-
յած (որ) շաղկապներին: Այս վերջինն էլ, որ բավական տա-
րածված է գրավոր խոսքում, կարծես բանավոր-խոսակցա-
կան (սակայն ոչ թե բարբառախառն պարզ ժողովրդական)
լեզվում ավելի է գործածվում, քան թեև-ը, որն ընդհանրա-
պես հատուկ է գրավոր խոսքին (ինչպես թեպետ-ը): Պետք է
նկատի ունենալ սակայն, որ այս կամ այն շաղկապի գործա-
ծության գերակշռությունը մյուսի նկատմամբ հեղինակային
ոճի արդյունք էլ կարող է լինել: Այսպես, Սերո Խանզադյանի

«Հողը» վեպում ոչ մի «թեպետ» չկա, ոչ էլ «շնայած» (իհարկե, շաղկապի նշանակությամբ), բայց շատ առատորեն օգտագործված է թեև շաղկապը: Նաիրի Զարյանի «Հացավան» վեպում թեև շաղկապը օգտագործված չէ՝ կա միայն մի թեպետ¹:

Թեկո՞ւմ—Այս շաղկապը տարբերվում է նախորդներից թե իր արտահայտած գիշական հարաբերությունների բնույթով և թե գործածությամբ: Նկատելի է, որ այս շաղկապի օգտագործմամբ գիշական երկրորդական նախադասությունները պայմանի երանգ են ստանում այն դեպքերում, երբ նրանցում օգտագործված է ըղձական եղանակով որևէ ստորոգյալ: Այս շաղկապը կարող է ունենալ նաև պայմանի երանգից զերծ կիրառություններ, այս անգամ արդեն հակադրական երանգով:

Ի տարբերություն նախորդ շաղկապների, թեկուզ՝ հազվագեպ է գուգադիր գործածությամբ հանդես գալիս (թեկուզ... բայց և այնպես և այլն): Այս շաղկապը հիմնականում տարածված է վերջադաս երկրորդական նախադասությունների կապակցման դերով, ունենալով «եթե նույնիսկ» շաղկապական կապակցության նշանակությունը, որի մասին արդեն խոսել ենք «Պայմանի շաղկապներ» բաժնում: Բերենք օրինակներ՝

Ես չեմ կարող ուրիշի բարությունը շահագործել, թեկուզ այդ ուրիշը լինի իմ հարազատը (ՆԳ, 105): Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա, Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա (ՀԹՆ, 2, 99):

Պայմանի երանգը աղոտանում է, երբ վերջադաս երկրորդական նախադասության մեջ փոքրագլին արտահայտված չէ ըղձական եղանակով: Այս դեպքում թեկուզ շաղկապի նշանակությունը մոտենում է շնայած, թեև շաղկապների նշանակությանը. օրինակ՝

Ա՛խ, տխուր է նա, թեկուզ արևի շողերն են վրան... (ԳՍԲ, 33): «Մուկ տեղը»—այսպես են անվանում քաղաքա-

¹ Ըստ ԳԱ Լեզվի ինստիտուտի հեղինակային համաբարբառների տըվյալների:

ցիք այդ սենյակը, քեկուզ սենյակը բոլորովին լույս է՝ հրկու պատուհան ունի և երեք էլեկտրական լամպ (ԵԶ, 306): Սաքանը ունքերի տակից Ասյային էր նայում, նրա սպիտակ բլուզին, թևերին և մատով սրբում կարպետի երեսը, քեկուզ սրբելու էլ բան չկար (ԱՔՆ, 90):

Այս օրինակներում նկատելի է քեև, քեպետ շաղկապների կիրառական ազդեցությունը, քանի որ քեկուզ շաղկապին հատուկ չեն պայմանի երանգից զերծ նմանօրինակ գործածությունները: Նույնպիսի ազդեցության արդյունք է հավանաբար այս շաղկապի այն գործածությունը, երբ նրանով կապակցվող երկրորդական նախադասությունը առաջադաս է, իսկ վերջադաս գլխավորն սկսվում է հակադրական որևէ շաղկապով: Նման կառուցվածքները բավական տարածված են Ակսել Բակունցի մոտ. օրինակ՝

Առաստաղից կախած ճրագն առատ լույս էր տալիս: Ու քեկուզ գարնանամուտ էր, բայց և այնպես բուխարիկում վառվում էին կաղնու շոր փայտերը և տաքացնում տունը (ԱՔՆ, 472): Թեկուզ պարտեզը փոքր էր, ծառերը ծեք, մամռոտած փշակներով, բայց Ունանի համար աշխատանքն անպակաս էր (ԱՔՆ, 432): Թեկուզ գիտեի կալանավորների, մասնավորապես Բաղդասարի, ծայր աստիճանի կասկածոտ լինելը՝ այնուամենայնիվ նրա այդ խոսքերը ծայր աստիճանի ծանր տպավորություն թողեցին իմ վրա (ԵԶ, 464):

Թեկուզ շաղկապի այս զուգադիր գործածությունները տարածվել են վերջին մի քանի տասնամյակներում և հարազատ չեն մեր գրական լեզվին: Այս բառը, զուգադիր կամ մենադիր գործածությամբ, ծառայում է նաև նախադասության համադր կամ տրոհվող անդամների կապակցմանը, անշուշտ քեև, քեպետ շաղկապների նմանակությամբ. օրինակներ՝

Պարապմունքները, քեկուզ փոքր ուշացած, բայց արդեն սկսվել էին դպրոցներում (ԵԶ, 357): Նա կարողացավ հիանալ երկու էակի քեկուզ թաքուն, բայց խորունկ վշտով (ՕԴԲԿՊ..., 30):

Թեկուզ շաղկապը տարածված է նաև և շաղկապի հարա-

դրությամբ՝ քեկուզ և ձեռով՝ դարձյալ քեպետ և շաղկապի նմանակությամբ։ Բերենք մի օրինակ. «Միանգամայն տրամաբանական և անխուսափելի, որի վրա չի կարելի չպնդել, քեկուզ և նրանք, ովքեր սկսում են իրագործել այդ ծրագիրը, իրենք չգիտակցեն էլ նրա անխուսափելիությունը (լՆ, 5, 554)»։

Ի վերջո, որպես կիրառական առանձնահատկություն, պետք է նշել, որ այս շաղկապը, ինչպես և քեկ. չնայած շաղկապները, բանավոր լեզվում հաճախ նախադասության կամ բառակապակցության վերջում են դրվում, այնպես, որ կարծես խոսողը զիջական նշանակությունն ընդգծելու անհրաժեշտությունը վերջում է նկատում. օրինակ՝ «Սպանիր քեկուզ... չեմ ծառայի... (ԴԴ, 3, 55)»։

ՀԱԿԱՌԱԿ ՈՐ—Այս հարադրական շաղկապը, որ խիստ սահմանափակ գործածություն ունի լեզվում, նշանակությամբ մոտ է չնայած որ շաղկապին. օրինակ՝ «Ասենք, այսպես դեկտեմբերի ցրտին Հաճի աղան դուրս եկողը չէր, այն էլ այս ցեխին, որ գոյացել էր սայլերի ու զորքի տակ կոխկըրտած ձյունից՝ հակառակ որ միշտ այս ամսին գետինը սառած էր լինում (ԴԴ, 25)»։

ՈՐՔԱՆ է՛Լ, ԻՆՁՔԱՆ է՛Լ—Զիջական տարբեր երանգ ունեն որքան է՛լ, ինչքան է՛լ հարադրական շաղկապները, որոնք գերազանցապես տարածված են գեղարվեստական գրականության և կենդանի խոսակցական լեզվում և գրեթե չեն հանդիպում գիտա-տեխնիկական գրականության մեջ։ Սրանք աշխարհաբարյան կազմություն ունեն և լայն տարածում ստացան հատկապես 20-րդ դարում։

Որքան, ինչքան հարաբերական դերանունները իրենց զիջական նշանակությունն ստանում են էլ եղանակավորող բառի հարադրությամբ։

Ինչպես ասել ենք, է՛լ բառը կարող է կապվել նաև նախադասության տարբեր անդամների պաշտոնով հանդես եկող հարաբերական դերանունների հետ, կազմելով նրանց հետ զիջական տարբեր երանգներ ակնարկող շաղկապական կապակցություններ։ Այսպես, նա կարող է կապվել.

ա) Ենթակայի հետ (ով էլ դա կանչելու, չեմ գնա)։
բ) Ստորոգյալի հետ (փնտրես էլ, չես գտնի)։ գ) Խնդրի հետ, ուղիղ կամ անուղղակի (ինչ էլ ասես, չեմ լսի. ում էլ կանչես, զժգոհ կմնա. ումից էլ խնդրես, չեն մերժի և այլն)։ դ) Որոշիչի հետ (ինչպիսին էլ լինի քո ձայնը, դու պետք է այն մշակես)։ ե) Պարագայի հետ (եթե էլ գաս, չես հանդիպի. ուր էլ (ուրեղ էլ) գնաս, նա քեզ կգտնի. ինչպես էլ երգես, նրանք գոհ կմնան)։

Հաճախ էլ-ի հետ միասին օգտագործվում է նաև ուր շաղկապը, որով էլ ավելի է ընդգծվում հիշյալ իմաստային երանգը։ Վերջինս կարող է օգտագործվել նաև էլ եղանակավորող բառի փոխարեն, որի դեպքում դիջական ընդհանուր նշանակության հետ զուգընթաց ակնարկվում է նաև քանակի հետ կապվող ինչ-որ մի երանգ (համեմատիր ա և գ կետերի օրինակները, ինչպես՝ ով որ գա..., այսինքն՝ ինչքան մարդ որ գա..., ինչ որ ասես..., այսինքն՝ ինչքան բան որ ասես... և այլն)։ Որոշ բառերի հետ օգտագործվելիս ուր շաղկապը մեծ մասամբ կորցնում է դիջական նշանակություն ակնարկելու իր հատկանիշը և հանդես է գալիս լոկ որպես զորացուցիչ շաղկապական մասնիկ (օրինակ՝ երբ ուր, ինչպես ուր և այլն)։ Ստորոգյալի հետ այն բոլորովին չի գործածվում։

Դժվար չէ կռահել, որ նույն ուղիով են առաջացել և զարգացել գործողության չափ ու քանակի հետ կապվող պարագայական ուժան էլ, ինչքան էլ ձևերը։ Սակայն եթե վերի հարաբերական դերանունները էլ շաղկապի հետ ունեցած իրենց հարադրությամբ չեն ամրացել լեզվում որպես դիջական հարաբերություն արտահայտող շաղկապներ, ապա սրանք, իրենց տարածման համար պարարտ հող գտնելով լեզվի շարահյուսական կառուցվածքում, հասել են զարգացման նոր աստիճանի¹։ Այնուհետև, եթե նախորդ ձևերը ունե-

¹ Հետաքրքրական է նշել, որ ուսերենում ևս տարածված է հարաբերական դերանունների հարադրությունը **НИ** մասնիկի հետ (որը տվյալ դեպքում համարժեք է լինում էլ-ին. օրինակ՝ что ни, кто ни, где ни, как ни)։ Սակայն այդ լեզվում այդ ձևերից ոչ մեկը չի առանձնացվել որպես շաղկապ։

նային նաև իրենց խոսքի մասային բնույթից բխող ընդհանրացնող նշանակություն, ապա այս վերջին երկու շաղկապները հիմնականում զուրկ են այդ հատկանիշից:

Ի տարբերություն շնայած, քեև, քեպետ և այլ շաղկապների, որքան էլ, ինչքան էլ շաղկապները իրենց արտահայտած զիջական հարաբերությունների մեջ ներդրում են չափի, քանակի երանգ: Սրանցով կապակցվող երկրորդական նախադասությունները արտահայտում են այնպիսի իրողություններ, որոնց գործողություններն ու հատկանիշները ինչքան էլ շեշտվեն ու ընդգծվեն՝ համապատասխան հետևանք առաջացնելու նպատակով, դարձյալ մնում են անհետևանք: Նրանց արտահայտած իմաստային երանգների տարբերությունը զգացվում է հետևյալ օրինակում. «Թեպետև արբահայրը շարունակաբար հանձնարարում էր իր աշակերտունուն լինել է՛լ ավելի վայելուչ ու համեստ, որքան էլ ընդարձակ լինեն գիտելիքները, բայց և այնպես, օրիորդ Նեգրպելիսը իր մասին շատ մեծ կարծիք կազմեց և ուժեղ արհամարհանք հղացավ մարդկության հանդեպ (ՕՂԲԽՊ, 45)»: Ինչպես նախորդ, այնպես էլ այս շաղկապները տարածված են գովառիչ և առանձին գործածությամբ:

1) Զուգադիր գործածության օրինակներ.

Մի կողմից ցանկանում եմ գնալ և տեսնել, թե ինչպիսին է այդ հավաքույթը, մյուս կողմից՝ ամաչում եմ. չգիտեմ ինչպես պետք է պահեմ ինձ այնտեղ: Որքան էլ ամաչեմ, սակայն թվում է հրաժարվել չեմ կարող (ՍԶ, 356): Որքան էլ տխրալի բան է մահը, որքան էլ ես վախենում եմ մեռնելուց, այնուամենայնիվ հաշտվում եմ, որովհետև տեսնում եմ... (ՆԴ, 69):

Երբեմն այս շաղկապների օգտագործմամբ առաջադասականապես օժանդակ բայը կամ հանգույցը զեղչվում է. օրինակներ՝

Նվ տերտերը որքան էլ ցրված, այնուամենայնիվ նկատում է նրա ներկայությունը և գոռում անսպասելի զայրացած (ՍԶ, 115): Որքան էլ յուր գունդը նվազ, որքան էլ հակառա-

կորդը զորավոր, այնուամենայնիվ նրա անպարտելի հոգին չէր ընկճվում թվի մեծության առաջ (Մուր., 189):

Հոմանիշ ինչքան էլ շաղկապը չի հանդիպում Բաֆֆու, Մուրացանի, Նար-Դոսի և նրանց ժամանակակից ուրիշ հեղինակների մոտ. հավանաբար ուս նախորդի օրինակով է կազմվել և ավելի շատ հանդիպում է 20-րդ դարի, հատկապես վերջին մի քանի տասնամյակների գրականության լեզվում: Նկատելի է, որ այս շաղկապը տարածված է նաև կենդանի խոսակցական լեզվում, մինչդեռ ուրբան էլ շաղկապը հատուկ է մասնավորապես գրքային լեզվին: Բերենք մի երկու օրինակ՝

Որովհետև ինչքան էլ կյանքը դժվար էր և շատերը կիսաբաղջ էին օրը մթնեցնում,—այնուամենայնիվ հիվանդի սիրտը շաքարով թել էր ուզում (ԱԲՆ, 360): Ոմանք գյուղեգյուղ շրջում էին մի կտոր հացի հոգսով. ոմանք գութանի սարքն էին նորոգում, որովհետև ինչքան էլ սովը զոռեր, նրանք այնուամենայնիվ պիտի սերմեին աշնան ցելը, թեկուզ թնդանոթի կրակի տակ (ԱԲՆ, 375): Ինչքան էլ (եթե նույնիսկ) մարդ արդար մնա, միեկնույն է, պրծնում չկա... (ԱԲՆ, 453):

Հակադրական շաղկապի փոխարեն օգտագործված միևնույն է բառակապակցությունը, ինչպես տեսնում ենք, ընդգծում է զիջական նշանակությունը ավելի, քան հակադրական որևէ շաղկապ: Երբեմն ինչքան էլ, ուրբան էլ հարադրական շաղկապների վրա ավելանում է որ թարմադարը, որով կարծես ավելի է շեշտվում զիջական նշանակությունը. օրինակ՝

Ինչքան էլ որ ձեզ սիրեմ խենթենալու շափ, այսինքն այնքան, որ ամուսնանալի ձեզ հետ, բայց ինձ համար շատ ծանր կլինեի կռվել տիկին Շարդոն (ՕԴԲԽՊ, 435): Ուրբան էլ որ անակնկալ չէր Աշխենի համար եվայի այդ վարմունքը, այնուամենայնիվ սկզբում նա սառած մնաց (ՆԴ, 109):

Արդեն հնացած է ուրբան և հարադրական շաղկապը, որ երբեմն հանդիպում է 19-րդ դարի հեղինակների մոտ. օրինակ՝ «Միայն չեմ թաքցնում հայտնել քեզ, որ, ուրբան և հա. ճելի լինեի ինձ քո խնդիրը, այնուամենայնիվ, ես իմ թագա-

վորի երկրի շահերը ավելի բարձր կդասեմք՝ արտասուքից (Րաֆֆի, 515)»:

Նկատելի է, որ 19-րդ դարի հեղինակները, որպես զուգադիր շաղկապի երկրորդ բաղադրիչ, օգտագործել են գերազանցապես այնուամենայնիվ, այսուամենայնիվ շաղկապները: Հետագայում այդ կիրառությամբ աստիճանաբար տարածվեցին նաև սակայն, բայց շաղկապները, որոնք, սակայն, դեռ հնուս են նախորդ հրկուսի գործածականությունը ունենալուց:

2) Առանձին գործածությամբ՝ այս շաղկապները կարող են կապակցել թե առաջադաս և թե վերջադաս երկրորդական նախադասություններ: Քննենք այդ դեպքերը.

ա) Այս շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները դարձյալ առաջադաս են, սակայն արդեն վերջադաս գլխավորում բացակայում են հակադրական շաղկապները: Բերենք մի երկու օրինակ՝

Այս անախորժ տրամադրությունը, որի մեջ արթնացալ նա, ավելի տիրապետեց իրեն և ռոբան էլ աշխատում է վանել մտքից երեկվա դեպքերը՝ չէր կարողանում (ՀՔ, 68): Բայց հիմար կատուն չէր զարթնում: Եվ մայրս ռոբան էլ ասում էր «սատկած» է,— ես չէի համոզվում (ՍԶ, 19):

բ) Այս շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները կարող են նաև վերջադաս դիրք ունենալ: Այս կառուցվածքի բարդ ստորադասական նախադասությունները տարածվեցին հատկապես վերջին տասնամյակներում, նրբ ստորադաս մասում ստորոգյալն արտահայտված է լինում ըղձական եղանակով, ապա այս շաղկապները նշանակություն մոտենում են թեկուզ (և) շաղկապին, այն տարբերությամբ, որ շեշտում են քանակի մոմենտը, իսկ երբ ստորադաս մասում առկա է լինում սահմանական եղանակով որևէ ստորոգյալ, ապա նրանք նշանակությամբ մոտենում են թեև, չնայած որ շաղկապներին, դարձյալ քանակի երանգ արտահայտելով օրինակներ՝

Նա երբեք ինձ այդպիսի հարց չի տալիս, ռոբան էլ ուշանամ (ՍԶ, 472): Արուսի համար անհասկանալի էին կռուի

դատաւորութիւնները, ինչքան էլ Լեոնն աշխատում էր խոսել կոնկրետ օրինակներով (ՆՁՀ, 186): Նա ամէն օրվա սկսւ որոշել էր ամուսնուն շնեղացնել ոչ մի հարց ու փորձով, ինչքան էլ նա ուշ տուն վերադառնա (ՆՁՀ, 269):

8. ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՇԱՀԱՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդի հայերենի համեմատական հարաբերութիւններ արտահայտող կապակցման միջոցները բոլորն էլ այլ խոսքի մասերից են փոխանցվել շաղկապների. նրանց կիրառութիւններում դեռ զգացվում է ծագումնաբանական այդ կապը:

Այդ շաղկապներով կապակցվող նախադասութիւնները և համեմատական արտահայտութիւններն ու դարձվածքները կարող են նշել, ինչպէս իրական բնույթ ունեցող համեմատութիւններ, այնպէս էլ բռնաբերական և անբարեխաղիչ բնույթ ունեցող համեմատութիւններ: Երբ այդ զուգադրվող իրողութիւնները համապատասխանում են իրար՝ իրենց բովանդակութեան այս կամ այն կողմի բնոյշանրութեան սկստնառով, ասլա իրական արժէք ունեցող համեմատութիւնները հաճախ բռնկում են համապատասխանութեան երանգ:

Հիշյալ շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասութիւնները շարահյուսութեան դասագրքերում մեծ մասամբ դիտվում են որպէս ձևի պարզապէս երկրորդական նախադասութիւններ: Սակայն, նկատի ունենալով, որ այդ անվանումը սոսկ շարահյուսական պաշտոնն է ակնարկում և այն, որ համեմատութիւն արտահայտող ոչ բոլոր նախադասութիւններն են, որ զխափոր նախադասութեան գործողութեան կատարման ձևն են ակնարկում, ավել ի նպատակահարմար է այդ շաղկապները բնորոշող համեմատական տերմինն ընդունել:

Ուշադրութեան արժանի են համեմատական շաղկապների խիստ տարածված կիրառութիւնները էլիպտիկ կառուցվածք ունեցող նախադասութիւններում, որոնց մեջ, ինչպէս օրինակ, զեղչվում են ստորոգյալները (երբ նրանք նույն են

գլխավոր մասի ստորոգյալի հետ, կամ էլ նշանակությունը մոտ են նրան) կամ նախադասության այն անդամները, որոնք ենթակա են կրկնվելու Այդ պատճառով էլ կապակցվող մասերը համեմատական արտահայտությունների և դարձվածքների բնույթ են ստանում (օրինակ՝ «նրանց ձայնը... հնչում էր մի առանձին խորհրդավորությամբ, ինչպես դավադիրների քշիւոց—ՆԴ, 6»)։ Այս հանգամանքը մեկ անգամ ևս ապացուցում է, որ ստորադասական շաղկապների ֆունկցիան չի սահմանափակվում միայն երկրորդական նախադասությունների շաղկապման դերով։

Տարբեր շաղկապների օգտագործմամբ կապակցվող մասերի համեմատությունը բազմապիսի երանգներ է ստանում, որոնք բխում են հիմնականում կապակցվող մասերի բովանդակությունից։ Սակայն կան շաղկապներ՝ կառծես (թե), ասես (թե) և այլն, որոնց առկայությամբ ակնարկվում է կատարվող համեմատությունների ենթադրական բնույթը։ Նկատելի է նաև, որ ոճական ու արտահայտչական բազմապիսի կիրառություններ էլ ունեն այդ շաղկապները, որոնք կարող են իրենց սոսկ գործածությամբ նշել խոսքի զրական, պարզ ժողովրդական կամ բարբառային բնույթը։

Արդի հայերենում համեմատական շաղկապներով կապակցվող նախադասություններն ու արտահայտությունները գերազանցապես վերջադաս գործածություն ունեն։ Բացառիկ դեպքերում միայն, երբ հարկ է ղգացվում հատուկ կերպով շեշտել համեմատության կարևորությունը, նրանք գլխավորից առաջ են դիրք գրավում։ Քան, քան թե շաղկապներով կապակցվող մասերը իրենց արտահայտած համեմատական հարաբերությունների բնույթով որոշակիորեն տարբերվում են մյուս համեմատական շաղկապներով կապակցվող մասերից։ Այդ շաղկապների օգտագործմամբ ակնարկում են քանակային և ոչ թե որակային հատկանիշներ։ Դրանցով կապակցվող մասերը երբեմն դրվում են գլխավորից առաջ, երբ հատկապես շեշտվում է զուգադրվող փաստերի միջև ընտրություն կատարելու և գերադասությունը գլխավոր նախադասությամբ արտահայտված իրողությանը տալու մոմենտը։

Գրաբարի և աշխարհաբարի քերականները տարբեր անուններ են տվել համեմատական շաղկապներին և նրանցով կապակցվող երկրորդական նախադասություններին: Այսպես, գրաբարի քերականները՝ նմանակաճ (որպէս, այսպէս, սոյնպէս և այլն), նախընտրակաճ (շան, քան թէ)¹, համեմատական (մինչ զի, մինչ, մինչև), նախընտրական (քան, քան թէ, քան եթէ)², համեմատական (քան, քան թէ, առաւել, յաւետ, մինչ, մինչև անգամ)³, բուն որակական և համեմատական նախադասություններ⁴, աշխարհաբարի քերականները՝ որակական նախադասություններ (չափի և ձևի պարագա նախադասություններ)⁵, ձևի պարագա երկրորդական նախադասություններ⁶, համեմատական շաղկապներ (ինչպես, ինչպես որ, կարծես թե, կարծես)⁷ և այլն:

ԻնՉՊԵՍ—Արդի հայերենի ամենագործածական համեմատական շաղկապն է, որ տարածված է ինչպես զուգադիր (երբ գլխավորում առկա է այնպես հարաբերյալը), այնպես էլ մենադիր կիրառությամբ: Զուգադիր գործածության դեպքում ինչպես բառը դեռ գիտվում է որպես դերանվանական արժեքը չկորցրած կապակցական բառ. օրինակներ՝

Նրանք քաշում, արմատահան են անում այդ խեղճ մարդկանց տնկած բոլոր փոքրիկ ծառերը, քանդում ցանկապատը... և այնպես հիմնովին ավերում ամեն ինչ, ինչպես կավերերն թաթարական հորդանները (ԴԴՌԿ..., 482): Այդ սովորույթը մեռցել էր այնպես հաստատ, ինչպես հարեան հաստաբուն ընկուզենին (ԱԲԾ, 9): Նրան թվում էր, թե կյան-

1 Բաղդասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառօտ և դիրքիմաց, Կ. Պոլիս, 1736, 168—182:

2 Մ. Չամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, 4-րդ տպ., Վենետիկ, 1859, 76—77:

3 Գ. Ավետիսեան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1823, 137:

4 Ս. Պալասանեան, Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, 2-րդ տիպ, Թիֆլիս, 1874, 91:

5 Ս. Պալասանեան, Քերականութիւն մայրենի լեզուի, 5-րդ տիպ, Թիֆլիս, 1906, 223:

6 Ա. Գրիգորյան, Հայոց լեզու, Երևան, 1953, 244:

7 Անգ, 182:

քը խեղդ է, մի նեղուստ, ճիշտ այնպես, ինչպես ջաղացի կամուրջի տակ (ԱՔԾ, 460):

Ինչպես տեսնում ենք, այնպես հարաբերյալի հետ ունեցած իր գործածությունները ինչպես բառը տարածված է թե նախադասությունների և թե համեմատական դարձվածքների կապակցման դերով: Հանդիպում են նաև դեպքեր, երբ այնպես-ի փոխարեն այնքան և այնպիսի ցուցական դերանուններն են օգտագործվում որպես հարաբերյալ: Այս դեպքում արդեն նրա դերանվանական արժեքը զգալի չափով թուլանում է: Օրինակներ՝

Գորիսի ոչ մի փողոցում չեղուն այնքան վճիտ չէր, ինչպես Հին ճանապարհի վրա (ԱՔԾ, 357): Ես երբեք, երբեք իմ կյանքում չեմ կրել այնպիսի հիասթափություն, ինչպես կրեցի այն ժամանակ, երբ տեսա էջմիածնի խունացած դեմքը (ԳՄ, 399):

Արդի հայերենում ինչպես շաղկապը տարածված է առավելապես առանձին գործածությամբ, առանց համապատասխան հարաբերյալի: Այս դեպքում այն արդեն պետք է դիտվի որպես շաղկապ, չնայած այն հանգամանքին, որ երբեմն հնարավոր է գլխավոր նախադասության մեջ ավելացնել հարաբերյալը, առանց իմաստային փոփոխություն առաջացնելու ասույթի ընդհանուր բովանդակության մեջ: Նկատելի է սակայն, որ ինչպես շաղկապի կիրառությունների մեծ մասում հնարավոր չէ ավելացնել այնպես հարաբերյալը՝ գլխավոր նախադասության համապատասխան մասում: Սա վկայում է այն մասին, որ ինչպես բառը, որպես շաղկապ, արդեն ձեռք է բերել կիրառական անկախություն և իմաստային ինքնուրույնություն:

Տարածված լինելով նախադասությունների, համազոր անդամների ու բառակապակցությունների, ինչպես նաև համեմատական դարձվածքների շաղկապման դերով, ինչպես շաղկապը կարող է մեջ բերել ինչպես իրական արժեք ունեցող համեմատություններ, այնպես էլ անիրական՝ կարծեցյալ կամ փոխաբերական բնույթի համեմատություններ: Սակայն, ի տարբերություն կարծես (թե), ասես (թե) և այլ շաղ-

կապիւնի, այս բառի կիրառութեան ժամանակ հիշյալ երանգները ընտելում են միայն կապակցվող մասերի բովանդակութիւնին:

1) «Ինչպես» շաղկապը բարդ նախադասութեան բաղադրիչ մասերի միջև—կապակցվող երկրորդական նախադասութիւնը արտահայտում է այնպիսի մի իրողութիւն, որը որեւէ կողմով նման է կամ նմանեցվում է գլխավոր նախադասութեան մեջ նկարագրվող որեւէ փաստի, երևույթի, հատկանիշի: Նմանութիւնը կարող է լինել ա) ոչ իրական և բ) իրական, սակայն երկու դեպքում էլ կապակցվող մասը լրացնում և պատկերավոր ու արտահայտիչ ձևով է ներկայացնում գլխավոր նախադասութեան, մեջ նկարագրվող իրողութիւնը:

ա) Անհագ ու զրնգուն աշակերտուհին մի քանի ընկերի մեջ փոխվեց, հասունացավ, մեծացավ, ինչպես լեռնային կարկաչուն վտակն է մեծանում, երբ նրա մեջ հանկարծակի ներխուժում է սարից փոթած հեղեղը (ՆՁԶ, 415): Տանտիրհու բարկութիւնը բոլորովին անցնում է և նա ժպտում է ներողամտաբար, ինչպես ամպրոպից հետո արև բացվի (ՍԶ, 419):

Ինչպես տեսնում ենք, այս վերջին օրինակում ծաղալու երևույթը նմանեցվում է արևի բացվելու հետ, որով պատկերավոր ու բանաստեղծական արժեք է ստանում կատարվող համեմատութիւնը:

Նրբեմն ինչպես շաղկապին հաջորդում է եթե բառը, որի օգնությամբ էլ ավելի է ընդգծվում կատարվող համեմատութեան անիրական կամ ենթադրական արժեքը. օրինակներ՝

— Չե՞ք գնում,— և զայրույթից նրա դեմքը կարմրում էր, ինչպես եթե տղան երեսին քսեր գողացած բալը (ԱԲԵ, 343): Ասում են Սմակի խաչին գողացել է, ինչպես՝ եթե վրան կրակ թափեն (ԱԲԵ, 306):

Հետաքրքրական է նշել, որ այս օրինակներում երկրորդական նախադասութեամբ արտահայտված իրողութիւնը կարծեցյալ պատճառի նշանակութիւն է ձեռք բերում, քանի որ գլխավորում նկարագրված վիճակը կամ դեպքը ներկա-

յացվում է որպէս այնպիսին, որ կարող էր բխել միայն երկրորդականում նկարագրված գործողութիւնից:

բ) Համեմատութիւնները իրական նմանութեան արժեք ունեն, երբ գլխավոր նախադասութեան մեջ նկարագրված իրողութիւնը համեմատվում և զուգահըժվում է երկրորդականի այնպիսի մի երևույթի, դեպքի կամ վիճակի հետ, որի իրապէս տեղի է ունենում կամ տեղի է ունենալու. օրինակներ՝

Կլորեսը մեռնում էր, ինչպէս մեռնում էր խուռուփի ձորի վերջին կաղնին... (ԱՅԵ, 304): Եթե ես այդպիսի բախտ ունենայի թղթախաղի մեջ, ինչպէս նա ունի ձիերի մեջ (ՏԱԿ, 1, 357):

Նկատելի է, որ այս տիպի բարդ նախադասութիւններում կապակցվող մասերի ստորոգյալները սովորաբար կրկնվում են: Այս հանգամանքը քիչ դեր չի խաղում, որպեսզի գլխավոր և երկրորդական նախադասութիւնների միջև դրսևորվի նաև նամ պատասխանութեան երանգ: Բերենք մի երկու օրինակ ևս՝

«—Ես ուզում եմ մեռնել, ինչպէս եղբայրս մեռավ, պետք չէ ինձ ան կյանքը, որ զավաճանութեամբ են գնում,— պատասխանեց Գեդամը (23, 247)»: «Երազում էի նրան տեսնել, ինչպէս, առհասարակ, պատանիները տննչում են տեսնել իրենց սիրելի գրողներին (ԱԻ, 441)»:

Երբեմն ինչպէս շաղկապով կապակցվող նախադասութիւնը կապվում է նախորդ մասում օգտագործված և հատկանշի դատափար արտահայտող որևէ բառի հետ՝ համեմատութեան միջոցով բացահայտելով նրա այս կամ այն հատկանիշը. օրինակ՝ «Տիրացած պաւծառ, արևոտ բախտիդ, կառծուացած, ինչպէս թուշ է կարծրանում... (ԵԶ, 279)»:

Համապատասխանութեան երանգը իրեն զգալ է տալիս նաև այն դեպքերում, երբ երկրորդական նախադասութիւնը առաջադաս է, իսկ վերջադաս գլխավորը սկսվում է այնպէս բառով և է՝ շաղկապով (ինչպէս... այնպէս էլ): Համադասական միավորիչ շաղկապների բաժնում մենք արդեն խոսել ենք նախադասութեան համազոր անդամներ կապակցող այս զու-

գաղիւր շաղկապի կիրառութիւնների մասին: Բարդ նախադասութեան բաղկացուցիչ մասերի միջև օգտագործվելիս նրանով կապակցվող մասերը իրենց շարահնչուական կախվածութեան աստիճանով միջին դիրք են գրավում համադասութեան և ստորադասութեան միջև: Բերենք մի օրինակ՝ «—Ընկերներին կասեմ,—կարծես իր փոխվող ձայնից ամաչելով կարճ կապեց և ինչպես անսպասելի հայտնվել էր, այնպես էլ միանգամից ծածկվեց ծխախոտի անտառում (Ա. Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, Երև., 1958)»:

Ինչպես շաղկապը տարածված է նաև միջանկյալ նախադասութիւնների կապակցման դերով, որոնք սովորաբար նշում են հաղորդման աղբյուրը, նրա հավաստութեան աստիճանը, ինչպես նաև տալիս են ընդհանուր կարգի ծանոթութիւններ ու բացատրութիւններ: Այդ նախադասութիւնները հեղինակի համար կարող են ծառայել նաև որպես միջոց՝ ընթերցողին կամ խոսակցին դիմելու համար: Նրանք ինտոնացիայով բաժանվում են ասույթի ընդհանուր միաձուլ կազմից: Սակայն երբեմն համապատասխանութեան երանգ ունեցող այդ միջանկյալ նախադասութիւնները մոտենում են բուն համեմատական երկրորդական նախադասութիւններին, որի պատճառով դժվար է լինում որոշակիորեն սահմանազատել և տարբերակել այդ երկու տիպի նախադասութիւնները: Այս շաղկապը կարող է կապակցել.

ա) Առաջադաս դիրք ունեցող միջանկյալ՝ նախադասութիւններ—Այս գործածութեամբ ինչպես շաղկապը առավելապես տարածված է հրապարակախոսական և գիտական գրականութեան լեզվում՝ մեջ բերելով հաղորդման աղբյուրն ու հավաստիութիւնը ցույց տվող նախադասութիւններ. օրինակ՝ «Ինչպես հաղորդում է Ֆրանս Կրեմ գործակալութեան թղթակիցը, այսօր Անտարկտիկայում ԱՄՆ-ի Մակ-Մերդո բազայից 30 մղոն դեպի հյուսիս արևմուտք աղետի է մատնւել ամերիկյան մի ինքնաթիռ (ՍԶ, 1959, հունվ. 6, 4)»: Այսպես նաև՝ «Ինչպես արդեն նշել ենք...», «Ինչպես դժվար է նկատել...» և այլն:

1 Այս դեպքում նպատակահարմար է աղբյուրը կոչել:

Բ) Միջադաս դիրք ունեցող միջանկյալ նախադասություններ—«Սովետական մամուլի ուժը, ինչպես սովորեցրել է մեծ լենինը, ոչ միայն նրա մասսայականության, այլև ճշմարտացիության մեջ է (ՍՀ, 1956, դեկտ. 9, 2)»: «Գծաությունից... հետո, երրորդ օրը իշխան Ստեփան Արկադևիչ Օբլոնսկին՝ Ստիվան, ինչպես կանչում էին նրան բարձր հասարակության մեջ, սովորական ժամին... զարթնեց ո՛չ թե կնոջ ննջարանում, այլ իր առանձնասենյակում, սեղե դիվանի վրա» (ՏԱԿ, 1, 4)»:

Գ) Վերջադաս դիրք ունեցող միջանկյալ նախադասության օրինակ. «Տրեդ-յունիոնիզմն ամենևին չի բացառում ամեն մի «քաղաքականություն», ինչպես կարծում են երբեմն» (ԼԵ, 5, 495)»:

Ուշադրության արժանի են նաև ուրիշ բառով կապակցվող միջանկյալ նախադասությունները: Սրանք, ի տարբերություն ինչպես շաղկապով կապակցվող նախադասությունների, գերազանցապես նշում են հաղորդման հավաստիության աստիճանը, հաղորդման աղբյուրի (սուբյեկտի) իրազեկության աստիճանը. օրինակներ՝ «—Ջարմանալի է: Ուրիշն իմացել եմ, դուք ես ծառայում եք միևնույն գործին, ինչոր նա... (ՆԴ, 190)»: «...նավթային ընկերության ներկայացուցիչը այսօր ժուռնալիստներին հայտարարել է, թե, ուրիշ իրեն հայտնի է, Իրաքից շարունակվում է նավթի ստացումը» (ՍՀ, 1958, հուլ. 17)»:

Զ) «Ինչպես» շաղկապը համեմատական դարձվածքների կապակցման դեռում—ինչպես ասել ենք, այս շաղկապը ծառայում է կապակցելու ոչ միայն համեմատական երկրորդական նախադասություններ, այլև համեմատական դարձվածքներ (նախադասության էլիպտիկ կառուցվածքներում), որոնք, կցվելով նախադասության գլխավոր մասին, այս կամ այն կողմով բնորոշում են նրանում նկարագրված իրողությունը՝ համեմատական գույզահեռ անցկացնելով մի ուրիշ իրողության հետ: Գլխավոր մասի համեմատվող անդամը սովորաբար լինում է պարագա, որոշիչ կամ ստորոգյալ, իսկ համեմատական դարձվածքը կարող է թե համազոր անդամի բնույթ

ունենալ և թե կ'ընտրուի նախադասութիւն: Օրինակներ՝
Նրա ուղեւորի մեջ մամուր կերպով, ինչպես ոստր փայտի
մեջ, ցցված էր մի գիտակցութիւն միայն—եղբայրն այլևս
չկար, նա այլևս չէր վերադառնալու (ՆԴ, 348): Սեդրակի
մթազնած ուղեղում, ինչպես հանգչող կայծերը մոխրի մեջ,
մարում էին անձե ու անորոշ մտքեր (ՆԶՊՊ..., 482):

Գլխավոր մասի որոշիչի հետ է կապվում համեմատու-
թիւնը հետևյալ օրինակներում. «—Երևի, էի այնպիսի մի
թուղթ, ինչպես ձեր խարդախած կոնտր-կտակը... (Շիրվ.,
335)»:

Ինչպես շաղկապով կարող են կապակցվել նաև համե-
մատութիւն պարունակող այնպիսի հատվածներ, որոնք հա-
մապատասխանութիւն են արտահայտում: Համեմատու-
թիւնն անց է կացվում կապակցվող մասերի ենթակաների,
պարագաների և այլ անդամների հանդիպողման միջոցով.
օրինակ՝

Արցունքները հոսում էին այտերից, ինչպես ցողը՝ մար-
մարի վրայով... (ՍԽՀ, 19): Եվ նույնքան հաստատուն է մեզ
ընթացքը, ինչպես արեգական ճանապարհը դեպի արե-
մուտք... (ՀՔ, 356):

Ինչպես շաղկապի հիշյալ կիրառութիւնները երբեմն մո-
տենում են համադասական միավորիչ ինչպես և շաղկապի
նավելական նշանակությամբ կիրառութիւններին, երբ զուգա-
դրվող անդամները անմիջապես հաջորդում են իրար, առանց
կողմնակի անդամներով բաժանվելու. օրինակներ՝

Իսկ կարող էիք նույնքան հաջողությամբ ինքնասպա-
նութիւն գործել Պուատիեյում, ինչպես Անգուլեմում, Տու-
րում՝ ինչպես Պուատիեյում (ՕԴԲԽՊ, 684): Գիլի էգն էլ, ինչ-
պես շանը, ավելի քնքուշ է, դունչն ավելի սուր ու պոչն ավե-
լի բարակ (ՀԹ, 406):

Արդեն սոսկ միավորիչ հարաբերութիւն է նշվում, երբ
այդ շաղկապը, հարադրվելով և-ի հետ, ծառայում է կապակ-
ցելու իմաստային ինչ-որ մի կողմով համեմատելի փաստեր.
օրինակ. «Քաղաքում, ինչպես և գյուղում, բոլորը սպասում
էին նրա գալստյանը»:

Միջանկյալ բառակապակցության բնույթ ունեն ինչպես շաղկապով կապակցվող այն բառերն ու բառախմբերը, որոնք, բուն իմաստով, համեմատություն չեն նշում: Բերենք մի օրինակ. «Հիմա նրանք ձեզնից միայն մի բան են խոնդրում՝ կամ երթուղուց հանել նաև միակ ավտոբուսը, որպեսզի մարդիկ, ինչպես տարիներ առաջ, հանգիստ ոտքով քայլեն և չուշանան աշխատանքից...» (Եր., 1959, հունվ. 14, 2):

ԻնՉՊԵՍ ՈՐ—Այս հարադրական շաղկապը ծառայում է գերազանցապես նախադասությունների կապակցմանը և հատուկ է մասնավորապես գեղարվեստական գրականության լեզվին: Նա իմաստային ոչ մի նոր երանգ չունի ինչպես շաղկապի համեմատությամբ, այլ սոսկ ոճական տարբերություն ունի, քանի որ նրա գործածությունների ոլորտը սահմանափակվում է լոկ գեղարվեստական գրականության շրջանակներում: Այս շաղկապը իր գործածությունների սահմանափակության պատճառով հանդես չի գալիս բոլոր այն շարահյուսական կառուցվածքներում, ինչ որ ինչպես—ը:

ա) Անիրական, այսինքն պատկերավոր համեմատությունների կապակցմանն է ծառայում նա հետևյալ օրինակում. «Երգիչը ի՞նչ գիտենար, որ Աննան արքայաբույր... Անցնելիս հոնքի տակից նայում է հեղահամբույր, ինչպես որ ամպի տակից նայի մի լիալուսին (ԳՄԲ, 353)»:

բ) Համապատասխանության երանգ ունի համեմատությունը, երբ ներկայացվում է որպես իրական. օրինակ. «Օ՛, նա՛ է, նա է ստեղծել ինձ, Որ իմ մեջ տեսնի միշտ ինքն իրան, Ինչպես որ ես եմ իր հյուսիսում Տեսնում էությունն իմ անսահման (ՀՇ, 158)»: «Ու չի դառնա ոչ մի վիթ Օրերից անցած, Ինչպես որ չի ամոքվի մի մի սև հանցանք (ԳՄ, 116)»: Այստեղ գործողության ժխտական նշանակությունն է համեմատության հիմնական առանցքը (չդառնալու և չամոքվելու ժխտական նշանակությունը):

Արդի հայերենին քիչ անսովոր է բարդ ստորադասական նախադասության այն կառուցվածքը, երբ գլխավոր նախադասության մեջ օգտագործված են այն, այնպիսի հարաբերյալները. օրինակ՝ «Տեսնում է Աշխենին ու Եվային այն գրու-

թյամբ, ինչպես ուր դրանք ներկայանում էին նրան այդ երեկո... (ՆԴ, 73)»:

Այս շաղկապով կապակցվող նախադասությունը առաջադաս դիրք է ունենում, երբ վերջադաս գլխավորում առկա է այնպես էլ բառակապակցությունը՝ օրինակ՝ «Եվան՝ ինչպես ուր շոքած էր նրա առաջ, այնպես էլ մնացել էր արձանացած (ՆԴ, 128)»:

Միջանկյալ նախադասությունների կամ բառախմբերի կապակցման դերով այս շաղկապը քիչ է տարածված: Բերենք մի օրինակ՝ «—Ուրեմն, ընկերներ՛ը, ինչպես ուր ասի, Կոլիպոլ տարավ խոշոր հաղթանակ (ՆԶ, 158)»:

Նկատելի է, որ այս շաղկապի օգտագործմամբ շեշտվում է համապատասխանությունը կապակցվող մասերի միջև՝ զուգադրվող տարբեր փաստերի ինչ-որ կողմի ընդհանրության պատճառով: Բերենք երկու օրինակ՝

«Հասմիկը նրա սիրած մարդու համար լաց էր լինում զգացմունքների նույն թափով, ինչպես ուր ինքը, և դրանով նվաճում նրա սիրտը, և ունից սիրված լինելու նրան հավասար իրավունք (ՆԶԶ, 498)»: «Աղբյուրները մարգարտաշիթ՝ երբ ձմեռ լինի, էլ չեն կանչի կարկաչի, ինչպես որ հիմի (ԳՄԲ, 21)»:

ԱՅՆՊԵՍ ԻՆԶՊԵՍ—Այս հարադրական շաղկապը, որ ծագել է հարաբերյալի և հարաբերական բառի սերտ կապից, հազվագեպ է հանդիպում լեզվում՝ իբրև մեկ շաղկապական մեթոդություն կազմող բառ: Այն ավելի շատ տարածված է տրոհված կապակցությամբ՝ դիտվելով որպես հառաբերյալ և հարաբերական, օրինակ՝ «Անկասկած հարկավոր էր ապրել ընտանիքի մեջ այնպես, ինչպես սովոր էին ապրել հայրերն ու պապերը... (ՏԱԿ, 2, 496)»:

Միջին օղակն է կազմում այն գործածությունը, երբ հարաբերյալը արդեն գլխավոր նախադասությունից բաժանվում է ստորակետով, ինչպես՝ «Անգլիացիներն իրենց պարտքն են համարում ֆրանսիացիներին անվանել «մոնսյու», այնպես, ինչպես քաղաքավարության թերացում կհամարեն, եթե բոլոր իտալացիներին չանվանեն «սինյոր», իսկ գերմանացիներին՝ «հեր» (ԺՎԲԶԶՄ, 5)»:

Այս օրինակում դեռ լիովին չեն ձուլվել այս շաղկապական բաղադրիչները, որի հետևանքով դեռ զգացվում է հարաբերյալի անկախությունը որպես առանձին բաղադրիչ: Երբ նրանք արտասանվեն նույն շեշտով ու տոնով, առանց արտասանական դադարի, ապա մենք արդեն գործ կունենանք շաղկապական ամբողջություն կազմած ձևի հետ. օրինակ՝ «Արձագանքը շառաչելով անցնում է մի կողմից մյուսը, իսկ թռչունները վեր են բարձրանում բոլոր կողմերից, յուրաքանչյուրն իր յուրահատուկ աղմուկով, այնպես ինչպես իմ առաջին կրակոցի ժամանակ, որը հավանորեն առաջին դեպքն էր, որ երբեք տեղի էր ունեցել այդ կղզու վրա (ԴԴԽԿ..., 532)»:

ՈՐՊԵՍ, ՈՐՊԵՍ ԹԵ—Գործածությունների հաճախականությունյամբ սրանք շատ են զիջում ինչպես շաղկապին: Որպես բառը, որ թե կապական և թե շաղկապական կիրառությունների տեսակետից հոմանիշ է ինչպես-ին, արդի հայերենում տարածված է հիմնականում որպես կապ, մինչդեռ ինչպես-ը, որն ընդհանրապես շատ հազվագեղ էր կապական խոսքի մասային արժեքով կիրառվում, ամրացավ արդի հայերենում հիմնականում որպես շաղկապ՝ արտահայտելով համեմատական հարաբերություններ¹: Այդ է պատճառը, որ որպես շաղկապի օգտագործմամբ խոսքը ձեռք է բերում հնատիպության երանգ: Երբեմն գլխավոր նախադասության մեջ որպես բառին համապատասխանում է այնպես հարաբերյալը. օրինակ՝ «Գլուխը դրեց ասեղնագործ բարձիկին և հեկեկաց այնպես, որպես երբեք չէր հեկեկել (Շիրվ., 325)»:

Որպես շաղկապը կարող է կապակցել նախադասություններ, համեմատական դարձվածքներ ու արտահայտություններ, ինչպես նաև միջանկյալ նախադասություններ: Նրա գործածությամբ կապակցվող մասերի բովանդակությունները կարող են ներկայացվել ինչպես իրական (համապատասխան-

¹ Մենք այստեղ նկատի չունենք նրանց դերանվանական կիրառությունները որպես ճարտարական և ճարտերական, որոնք հավասարապես տարածված են ինչպես անցյալ, այնպես էլ այս դարի գրական հայերենում:

նության երանգով), այնպես էլ ոչ իրական, այսինքն պատկերավոր ու փոխաբերական ձևով: Բերենք օրինակներ՝

Կըզամ հողի գիրկը խավար, Կըլեմ, որպես քարն է լոռոմ (ՎՏ, 215): — Ես հրաժարվում եմ: Կովել հիվանդի հետ՝ միևնույն է, որպես կովելը դիակի հետ, որքան և արյունապարտ լիներ նա ինձ (Րաֆ., 584): Երբեք նա այնպես հափըշտակված չէր եղել, որպես այս գիշեր (=որպես հափըշտակված է այս գիշեր), երբեք նրա ղգացմունքները այնպես վառված չէին եղել, որպես այս գիշեր (=որպես վառված են այս գիշեր՝ (Րաֆ., 132): «Սահակը, որպես նախընթաց գըլխում ցույց տվինք, այդ Վարդանի դստեր որդին էր (Րաֆ., 108)»:

Որպես թե հարադրական շաղկապը, որը գերազանցապես օգտագործվում է նախադասությունների կապակցման համար, համեմատությունը ներկայացնում է միշտ ենթադրական երանգով: Չնայած այս հանգամանքին, նա իր նշանակությամբ չի նույնանում կառծես թե, ասես թե շաղկապներին, որոնք հիմնականում տարածված են փոխաբերական բնույթի համեմատությունների ու պատկերների կապակցման համար: Նկատելի է, որ որպես թե շաղկապով կապակցվող երկրորդական նախադասություններում (որոնք երբեմն կարծեսյալ պատճառի երանգ են ստանում) ստորոգյալը գործածվում է գերազանցապես ըղձական եղանակով (համեմատությամբ նաև ինչպես եթե շաղկապը). օրինակներ՝

Նեղ ձորերի մեջ գալարվում էին և արմավենու անտառներում կույս Հեծեծում էին հողմերը տխուր, որպես թե՝ մի սիրտ լաց լիներ անհույս (Ա.Ի, 194): Վերցրին մեզնից ֆոտոներ, պլոկեցին նրանց կարտոնները և մի կերպ տեղավորեցին երկուսիս նկարը խմբանկարի հեռավոր անկյուններում, որպես թե մենք անհարազատ, խորթ զավակներ լինեինք (ՀՀԵ, 402):

Համեմատական երկրորդական նախադասության ստորոգյալը երբեմն օգտագործվում է նաև սահմանական եղանակով. օրինակ՝ «Անուշը մերթնդմիթ քաշում էր ձեռքը, որպես թե կամենում էր բազուկն ազատել (Շիրվ., 127)»:

Այս շաղկապը գերազանցապես տարածված է գնդաոր-
վեստական զրահանություն մեջ, Կենդանի ժողովրդական-
լեզվին նա հատուկ չէ:

ԻնՉ ՈՐ—Այս հարադրական շաղկապը մեծ մասամբ
հանդես է գալիս նախադասության էլիպտիկ կառուցվածքնե-
րում: Նրանով կապակցվող մասում սովորաբար բաց է թող-
նվում ստորոգյալը, երբ այն նշանակությամբ նույնն է զըլ-
խավոր մասում օգտագործված ստորոգյալի հետ: Հաճախ
բաց են թողնվում նաև նախադասության այլ անդամներ (են-
թակա, խնդիր, պարագա և այլն), այնպես որ մնում է միայն
նախադասության մեկ անդամ, այն անդամը, որի նշանա-
կությունն է հիմք ծառայում համեմատության համար: Պետք
է նշել, որ այս շաղկապի օգտագործմամբ համեմատությունը
համապատասխանության երանգ է ստանում. օրինակներ՝

— Զարմանալի է: Որքան իմացել եմ, դուք ևս ծառա-
յում եք միևնույն գործին, ինչ որ նա, և ինչպե՞ս է, որ դուք
չեք ճանաչում նրան... (ՆԴ, 190): Այն սկսեցի «Հայաստան»
երգով, որը ընդունվեց ջերմորեն: Ես կատարեցի ևս մի քանի
հայկական երգեր, որոնց նույն բախտը վիճակվեց, ինչ որ
«Հայաստան»-ին (Եր., 1959, հունվ. 24, 3): Պատմության
տխուր կրկնողությունը նույնն էր, ինչ որ քառասուն տարի
առաջ (ՐՍ, 147):

Համապատասխանության երանգն ընդգծվում է, երբ կա-
պակցվում են նախադասություններ, օրինակ՝ «Որդին նույնն
էր մտածում հոր մասին, ինչ որ հայրն էր մտածում որդու
մասին (ՐՍ, 463)»:

Հարադրական այս շաղկապի կազմավորման համար լավ
օրինակ կարող է ծառայել հետևյալ կիրառությունը, ուր ու
բաղադրիչը բաժանված է ինչ-ից այն անդամով, որը կարող
էր և չկրկնվել, հիմք ստեղծելով այդ շաղկապական բաղա-
դրիչների ձևման համար, ինչպես՝ «Ամեն անգամ, երբ ար-
տասուքս գալիս, բռնում է բուկս... ես միևնույն տանջանքն
եմ զգում, ինչ տանջանք որ կզգար ծարավից պապակվող այն
մարդը, որ ջրի տեղ հալած արճիճ խմեր (ՆԴ, 375)»: Եթե
տանջանք և զգալ բառերը չկրկնվեին, ապա կստանայինք հե-

տեղյալ էլիպտիկ կառուցվածքը. «...Ես միևնույն տանջանքն
եմ զգում, ինչ որ ծարավից պապակվող այն մարդը, որ...»:

Ինչ որ շաղկապը տարածված չէ փոխաբերական բնույթ
ունեցող համեմատությունների կապակցման դերով:

ԿԱՐԾԵՍ, ԿԱՐԾԵՍ ԹԵ, ԱՍԵՍ, ԱՍԵՍ ԹԵ—Այս համեմա-
տական շաղկապները¹ տարածված են գերազանցապես գե-
ղարվեստական գրականության լեզվում: Նրանցով կապակ-
ցվող նախադասությունները նշում են այնպիսի իրողու-
թյուններ, որոնք ներքին կամ արտաքին որևէ հատկանիշով
նմանեցվում են գլխավոր նախադասության մեջ նկարագրե-
վող իրողություններին: Այս շաղկապների օգտագործմամբ
համեմատությունները գերազանցապես փոխաբերաբար են
ներկայացվում:

Նախքան շաղկապական կիրառությունն ստանալը, այս
բառերը հանդես են եկել որպես եղանակավորող բառեր, ընդ-
գծելով կապակցվող մասերի ենթադրական, անիրական կամ
փոխաբերական բնույթը: Գլխավոր և երկրորդական նախա-
դասությունների կապակցությունը իրացվել է որ շաղկապով.
օրինակներ՝

Առոնն այս խոսքերն ասում էր այնպիսի լուրջ ոգևորու-
թյամբ, որ կարծես ձին հասկանում էր նրանց իմաստը (ՆՁ2,
16):—Ես տեսել եմ մի դեպք, որ հիշողությանս մեջ մի այն-
պիսի անթառամ թարմությամբ է ապրում, որ ասես թե՝ հենց
հիմա աչքերիս առջևը կատարված լիներ (ԱԻ, 377):

Ինչպես տեսնում ենք, գլխավոր նախադասության մեջ
առկա է ցուցական դերանվամբ արտահայտված որևէ հարա-
բերյալ, որի բովանդակության բացահայտմանն է ծառայում
որ շաղկապով կապակցվող երկրորդական նախադասությու-
նը: Բարդ նախադասությունների նման կառուցվածքներում
որ շաղկապի բացակայության դեպքում նրա կապակցական
ֆունկցիան անցնում է այդ եղանակավորող բառերին, այն-
պես որ նրանք սկսում են արդեն շաղկապական գործածու-

¹ Պետք է նշել, որ այս շաղկապների կիրառություններում երբեմն դեռ
զգալի է նրանց ձգանակավորող նշանակությունը:

թյուն ձեռք բերել՝ համեմատական նշանակությամբ՝ օրինակ-ներ՝

Բազենյանը արմունկները սեղանի վրա դրած, ամբողջ մեջքով թեքվել էր դեպի իր ուղեկցուհին և խոսում էր նրա հետ այնպես, կարծես ինչ-որ ծածուկ բան էր պատմում նրան (ՆԳ, 9): ...Միայն նա էր, որ գրականության դասերը պատասխանելիս ոգևորվում էր այնպես, ասես մոռանում էր շրջապատը, վիճում ինչ-որ անտեսանելի հակառակորդների հետ (ՍԳ, 1958, № 2, 102):

Պետք է տարբերել այս շաղկապների հետևյալ կիրառու-թյունները.

1) Կապակցվող նախադասությունները ցույց են տալիս այն տպավորությունը (իրական կամ անիրական), որ ստանում է հեղինակը՝ նախորդ մասի որևէ գործողություն կամ իրողություն նկարագրելիս: Համեմատությունը, այսպիսով, ծառայում է նկարագրվող դեպքերն ու երևույթները ավելի լրիվ ու ամբողջական ձևով ներկայացնելուն: Օրինակներ՝

Ու ժայռի կրծքին հպարտ ու քարե Մաղկել է զվարթ կարմիր մի կակաչ, կարծես անցել են տարիներ, դարեր, Ու ծաղկել է նա ղեռ դարեր առաջ (ԳՄ, 12): Մյուս օրը, երեկոյան գնացինք Մարտին աղբոր մոտ: Ուրախությամբ ընդունեց, կարծես թե բան պատահած չէր (ԱԻ, 259): Հայրս սաստիկ անհանգիստ է. արտևանունքները թարթում է շուտ-շուտ, ասես ուզում է աչքերը բանալ (ՍԶ, 40): Տանն ամեն ինչ նախկին տեսքն ուներ, ասես ինքը երեկ էր թողել հեռացել (ՍԽՀ, 757): Էնքան լայն գետ էր, որ ասես թե մյուս ափը չըկար (ՀԹԵԺ, 3, 217):

Այս շաղկապների օգտագործմամբ համեմատություն պարունակող նախադասությունները երբեմն պատճառի կարծեցյալ երանգ են ունենում: Բերենք ևս մի օրինակ՝ «Մի անգամ էլ վեր կացավ, ճրագը վառեց, նայեց մեկ էլ, ասես տեսածին չէր հավատում (ԱՔԵ, 60)»: Եթե վեր կենալու, ճրագը վառելու պատճառը այն ենթադրությունը լիներ, որ նշված է ստորադաս համեմատական մասում, ապա այն հանդես կգար

որպես պատճառ՝ գլխավորում նկարագրված իրողության կատարման համար:

2) Նախադասության նախորդ մասում նկարագրված գեպքերն ու երևույթներն ավելի տպավորիչ ու արտահայտիչ ձևով ներկայացնելու համար համեմատվում են այնպիսի իրողությունների հետ, որոնք փոխաբերաբար են ներկայացնում նմանությունը: Այս գեպքում արդեն համեմատությունները ենթադրություններ չեն, որոնք կարող են իրականանալ, այլ սոսկ բանաստեղծական կամ հիպերբոլիկ պատկերներ, օրինակներ՝

Գիշերը շատ անհանգիստ էի, քնել չկարողացա: Իսկ այժմ հիվանդի պես եմ զգում ինձ. ականջներիս մեջ մի բան մրմնջում է, և ինձ այնպես է թվում, կաթնա գլուխս յուր տեղումը չլինի (Բաֆ., 333): Այդ բոպեին Սևադա իշխանի դեմքը վայրկենապես այլալվեց. կաթնա, քե՛! հանկարծ մի սուր ցցեցին նրա թոքերի մեջ... (Մուր., 114): Գեղեցիկ է կապուտաչա լեմանը... Ասես երկնքի կտոր լինի՝ ընկած Զվիցե-րիայի և Ֆրանսիայի մեջտեղ և իր երկնայինի կապուտակ անհունն ու անհասկանալի անդորրը հետը երկիր բերած... (ԴԴ, 12):

Այս շաղկապները տարածված են նաև համեմատական արտահայտությունների ու դարձվածքների կապակցման դե-րով. օրինակներ՝

Ու բացվեց խաղաղ մի այգաբաց, Մովը հանգիստ էր, ասես հոգնած... (ԳՄ, 193): Արևն ամբողջովին դուրս եկավ չեռան թիկունքից և սկսեց բարձրանալ՝ կաթնա անիվի պես արագ պտտվելով (ՆԶԶ, 3):

Որպես ոճական յուրահատկություն, պետք է նշել, որ ասես (քե) շաղկապը հատուկ է պարզ ժողովրդական խոս-քին, մինչդեռ կաթնա (քե)–ն ավելի գրական արժեք ունի:

ԻՅԲ ԹԵ (ԻՅԲԵՎ ԹԵ)—Այս եղանակավորող բառը, որ երբեմն հանդես է գալիս բացատրական շաղկապի նշանա-կություն՝ իրողությունները ներկայացնելով որպես ոչ ստույգ

1 Բաղադրիչների բաժանումը ստորակետով հանդիպում է մեծ մասամբ անցյալ դարի գրողների մոտ:

ու հավաստի, հանդես է գալիս նաև որպես համեմատական շաղկապ, ինչպես՝ «...Քու թուփ ու տերևիդ մեռնեմ, Սոնա ջան», խոսեց իրեն հետ Ուստան և մի սիգարետ նորից վառեց, ծուխը անհագ ծխելով, իբր թե Սոնայի բուրյան շունչը լիներ (ԱԻ, 420)»։ Հետաքրքրական է նաև այս շաղկապի կիրառությունը այն կառուցվածքներում, որոնց մեջ բացակա է բացատրման ենթակա բայական անդամը և միայն զորությամբ է իմացվում՝ օրինակ՝

Ամեն մի գրություն վրա ժամերով կախում էր գլուխը, թերթում, (ցույց տալու համար, թե...) իբր (թե) կարդում է (նա չէր ուզում ընկերներին իր հուզմունքը մատենել) և ապա դեն դնում (ԱԲՆ, 395)։ Ես երեսս շրջեցի (ձեացնելով, թե...) իբր (թե) սարերին եմ նայում։

Այս շաղկապը, որ գրքային երանգ է տալիս խոսքին, հատուկ չէ պարզ ժողովրդական լեզվին։

ՈՆՅ ՈՐ—Այս շաղկապը, որը հատուկ է մասնավորապես պարզ ժողովրդական խոսքին, ընդգծում է կապակցվող մասերի իրական և կարծեցյալ նմանությունը։ Նկատելի է, որ այս շաղկապի օգտագործմամբ համեմատությունները հաճախ ներկայացվում են համապատասխանության երանգով։ Բերենք օրինակներ՝

— Ա՛յ նանի, ոնց որ էս կտավը գործել ես, էնպես էլ պետք է կարես... (ՀԹԵ, 2, 391)։ Ոնց որ սոված հավը կուտին վրա ընկնի, վրա է ընկնում էս հաբերին ու կուլ է տալի իրար հտևից (ՀԹԵԺ, 3, 255)։ Ավտոն, որ գիշերը մնաց ծառի տակ... հաջորդ առավոտ նորից կանչեց զիլ, ոնց որ ձին էր վրնջում հնձվորին սպասելիս (ԱԲՆ, 399)։ Ետ մտիկ տամ, որ մի անտեր գել էլ մի ոչխարի բռնել է, հետը կողք կողքի ընկել ու պոչով հտևիցը քշում է, ոչխարն էլ հետը չափ ընկած գնում է, ոնց որ հարսանիքի ձիավոր ըլի... (ՀԹԵԺ, 3, 99)։ Ես էլ շունչս փորս քաշեցի, ոնց որ թե՛ մեռած եմ (ՀԹԵ, 1, 334)։

ՔԱՆ, ՔԱՆ ԹԵ—Այս շաղկապները, ի տարբերություն

¹ Կատարվող համեմատության փոխաբերական բնույթը ավելի է ընդգծվում թե-ի հարադրությամբ։

նախորդների, համեմատությունը ներկայացնում են հիմնականում քանակական կողմի ցուցադրումով, որն ակնարկվում է ավելի մակբայի օգտագործմամբ: Նրանք կապակցում են ինչպես լիարժեք ստորադաս նախադասություններ, այնպես էլ ստորադաս համեմատական դարձվածքներ կամ արտահայտություններ:

Որպես իմաստային կարևոր առանձնահատկություն, անհրաժեշտ է նշել, որ այս շաղկապների օգտագործմամբ սովորաբար ընդգծվում է համեմատվող մասերից մեկի առավելությունը մյուսի, այսինքն ստորադաս մասի նկատմամբ¹: Գերադաս մասում գրեթե միշտ օգտագործվում է ավելի մակբայը: Գերադասության, առավելության հիշյալ նշանակությունը ընդգծվում է հատկապես այն դեպքերում, երբ այս շաղկապներով կապակցվում են էլիպտիկ կառուցվածք ունեցող համեմատական դարձվածքներ, և ոչ թե քերականորեն ձևավորված լիարժեք երկրորդական նախադասություններ: Քննենք այս դեպքերը առանձին-առանձին:

1) Երբ ստորադաս մասը լիարժեք նախադասություն չէ, ապա այդ շաղկապներին սովորաբար հաջորդում է նախադասության այն անդամը, որը որևէ հատկանիշի տեսակետից իր առավելությունը զիջում է գլխավոր մասում նույնպիսի պաշտոնով հանդես եկող անդամին: Բերենք օրինակներ նախադասության տարբեր անդամների զուգադրման դեպքերից:

ա) Ենթակաների զուգադրում. «—Այո՛, ճիշտ է քո ասածը, Պատասխանեց երկաթը, Բայց (ես) զգում եմ ավելի ցավ, Քան ոսկին ու արծաթը (ՀՀԵ, 57)»: «Սուրիկն ավելի ընդունակ է, քան Վահրամը»:

Վերջին օրինակում ընդունակ լինելու տեսակետից համեմատվում են Սուրիկն ու Վահրամը, և գերադասությունը տրվում է Սուրիկին: Քանի որ գլխավոր մասում «Սուրիկը»

¹ Այս հանգամանքը չի վրիպել Բաղդասար Դպիրի ուշադրությունից, որը գրաբարի շաղկապները ըստ նշանակության խմբավորելիս քան, քան թե շաղկապները անվանել է նախընտրական (տե՛ս նրա «Պարզաբանություն քերականության կարճագույն և դիրքի մաս», Կ. Պոլիս, 1736, 168—182):

ենթակայի պաշտոն ունի, ապա պարզ է, որ համեմատվող անդամը ևս նույն պաշտոնը ունի (համեմատի՛ր հետևյալ կառուցվածքը՝ Սուրիկն ավելի ընդունակ է, քան ընդունակ է Վահրամը): Եթե գլխավոր մասում ստորոգյալը ժխտական ձևով է գործածվում, ապա գերադասությունը տրվում է արդեն ստորադաս մասի համեմատվող անդամին. օրինակ՝ «Սուրիկն ավելի ընդունակ չէ, քան Վահրամը (Վահրամն է ընդունակ)»: Այդպես նաև նախադասության մյուս անդամների վերաբերյալ:

բ) Խնդիրների զուգադրում. «նա ավելի շատ քեզ է սիրում, քան ինձ»:

գ) Հատկացուցիչների զուգադրում. «Այդ սենյակը ավելի զինարանի նմանություն ունի, քան թե ընդունարանի (Բաֆ., 15)»:

դ) Տեղի պարագաների զուգադրում: Որևէ հատկանիշի դրսևորման կապակցությամբ համեմատվում են տարբեր տեղեր. «—Մեղանում, դաշտ տեղերում, գեյը շատ ավելի վտանգավոր է, քան սար տեղերում (ՀԹԵ, 1, 391)»: «160—170 տարվա պատմություն ունեցող այս գյուղում, քան մի այլ տեղ, գուցե ավելի ակնառու նկատելի է կյանքի առաջընթացը (Ավ., 1957, մայ. 28, 4)»: Այս վերջին օրինակում քան շաղկապով կապակցվող մասը միջադաս է և գրված է անմիջապես այն անդամից հետո, որին զուգադրվում է:

ե) Ժամանակի պարագաների զուգադրում: Որևէ հատկանիշի դրսևորման կապակցությամբ համեմատվում են տարբեր ժամանակներ. «Այս անգամ ևս նա տխրեց ավելի, քան երբեք (Շիրվ., 158)»: «Այս տարվա Սևանը չինչ է, քան հերվանը, Հայելու նման է այս տարի (ՀՄ, 194)»:

զ) Ձևի պարագաների զուգադրում. «Եթե լեռներ կարողանար հասկանալ, ինչպես նա հասկանում էր, թե ինչու չի կարելի մոտենալ երկաթուղու գրամարկղին այլ կերպ, քան հերթի կանգնելով, նա չէր սրտնեղի և զայրանա (ՏԱԿ, 2, 296)»: Միջադաս գործածության օրինակ է հետևյալ նախադասությունը. «Այլ կերպ, քան այդ մերկացումներով, չի կարող դաստիարակվել մասսաների քաղաքական գիտակցու-

թյունն ու ռեռլուցիոն ակտիվությունը (ԼԵ, 5, 546)»։ Այս տիպի կառուցվածքներում հնարավոր չէ գլխավորում ավելացնել ավելի մակբայը։

է) Ստորագելիական վերադիրեների զուգադրում. «...Սահայն և այնպես նա շարունակում էր ժամանակ առ ժամանակ դղյակ գնալ և այդպիսով հասարակության աշքին շահել մի տեսակ պաշտոնական պաշտպանություն, որն ավելի շատ երևակայական էր, քան թե իրական¹ (ՌՌԺԶ, 350)»։

2) Բարդ նախադասության մասերի միջև օգտագործելիս քան, քան թե շաղկապներով զուգադրվում են տարբեր փաստեր, ըստ որում վճռականապես որոշվում է՝

ա) Թե ի՛նչն է գերադասվում կամ նախընտրվում գրլխավոր նախադասության մեջ՝ երկրորդականի համեմատությամբ։ Նկատելի է, որ կապակցվող մասերում ստորոգյալներն արտահայտվում են ըզձական կամ պայմանական եղանակներով։

Խարխուլ մակույկով հանձնվի՛ր ծովին, Քան թե հավատա կնոջ երդումին (ԱԻ, 190)։ Եվ ավելի մեծ հոժարությամբ կընդունեի մահը և իմ պատիվը ինձ հետ գերեզման կտանեի, քան թե իմ ճակատի վրա կընդունեի դավաճանի սև կնիքը... (ՐՍ, 335)։ Լավ է երեխեքը տկլոր մնան, քան նրանց դուռը գնաս... (ԱԲԾ, 448)։

Համեմատական հիշյալ երանգի արտահայտման համար արդի հայերենում ավելի շատ գործածվում է քան թե հարադրական ձևը։

բ) Թե ո՛րն է մեջ բերվող և համեմատվող կարծիքներից ճիշտը կամ հավանականը։ Ի դեպ պետք է նշել, որ այս տիպի բարդ նախադասություններում ստորադաս մասի բովանդակությունը իմաստային սերտ կախման մեջ է լինում գերադասի բովանդակությունից, քանի որ այս վերջինումն է արտահայտվում ընդհանուր ասույթի բովանդակության ամենակարևոր ու էական մասը, առանց որի ստորադաս նախադաս-

¹ Կարելի է նաև դիտել որպես բաղադրյալ ստորոգյալների զուգադրում՝ հանգույցի զեղչումով։

սությունը զուրկ է լինում կոնկրետ նշանակութունից. օրինակներ՝

Շունը շատ ավելի մեծ բան է եղել, քան թե ես կարծում էի էն ժամանակ... (ՀԹՆ, 1, 416): Բայց կյանքը շատ ավելի բարդ է, քան հաճախ թվում է արտաքուստ (ՆՁԶ, 422):

Նկատելի է, որ այս կիրառությամբ ավելի տարածված է քան շաղկապը:

զ) Թե ինչպիսի՛ն է համեմատվող դեպքերի կամ երեւոյթների ժամանակային հարաբերությունը. օրինակներ՝

Նա շտապում էր մի քանի ժամ առաջ տեղ հասնել, քան կը հասներ սև ձիավորը (Բաֆ., 5): Բայց մի անարժան ձեռք սաղափը հանել է և վաճառել ավելի կանուխ, քան կվաճառեին վերջին ժառանգները (ԱԲՆ, 582):

Պետք է նշել, որ այս վերջին երկու օրինակներում նշվող փաստերի կամ իրողությունների միջև առավելության կամ գերադասության նշանակություն չի դրսևորվում: Կապակցվող ստորադաս մասում ստորոգյալն արտահայտված է, ինչպես տեսնում ենք, պայմանական եղանակով:

Քան, քան թե շաղկապներով կապակցվող երկրորդական նախադասությունները տարածված են գերադանցապես վերջադաս գործածությամբ: Առաջադաս լինելու դեպքում, որ, ի դեպ, շատ հազվադեպ է պատահում, քան թե շաղկապը նշանակությամբ մոտենում է փոխանակ, փոխառեն բառերին: Նրա այդ գործածությամբ ընդգծվում է, որ համեմատվող իրողություններից գերադասությունը, նախընտրությունը տրվում է գլխավոր նախադասության մեջ նկարագրված փաստին, օրինակ՝

— Գովում եմ քո եռանդը, Դրաստամատ,— ասաց նա,— բայց չեմ կարող հավանություն տալ քո անշափ ոգևորությանը: Դու, քան թե այստեղ իմ ազատության հոգսերով զբաղվելու, որը ժամանակի և հաջող հանգամանքների գործ է, ավելի օգտավետ կլինեիր այնտեղ... (Բաֆ., 268): Քան թե այստեղ ենք ծանոթանում, հազիր մեր տանը կծանոթանայինք և ժամանակ էլ կունենայինք խոսելու (ՆԴ, 137):

Ուրիշ մասնակի կիրառություններ էլ ունեն այս շաղ-

կապաները: Այսպես, քան շաղկապով կապակցվող համեմատական մասը երբեմն առաջագահս դիրք է գրավում, ստեղծելով ոճական յուրահատուկ կառուցվածք: Կարևոր է նշել, որ նման դեպքերում համեմատության աստիճանն ընդգծող ավելի բառն էլ է միանում քան շաղկապին. օրինակ. «Ավելի քան բերդի ամրությունը, անխորտակելի էր պաշարյալների եռանդը... (ՐՄ, 351)»: Երբեմն այս կարգը խանգարվում է նրանով, որ գլխավոր մասից որևէ անդամ տեղադրվում է ավելի քան կապակցությունից առաջ. օրինակ՝ «Նա ավելի քան մեզանից յուրաքանչյուրը՝ ոգևորված է մեր աշխարհի փրկության գործով (ՐՄ, 149)»:

Քան շաղկապի համեմատական նշանակությունը աղոտանում է, երբ նրանով չեն զուգադրվում տարբեր իրողություններ: Նման դեպքերում նա սերտ կապի մեջ է լինում ավելի մակբայի հետ, որի հետ միասնաբար արտահայտում է քանակային հարաբերություն. օրինակ՝ «Տարել են ավելի քան տասն փարսախ հեռավորության վրա արածացնելու (ՐՄ, 368)»: Այս վերջին կիրառությունը բավական տարածված է ինչպես հրապարակախոսական, այնպես էլ գեղարվեստական գրականության լեզվում: Ի վերջո պետք է նշել, որ այս շաղկապների գործածությունը գրական լեզվի ոճական երանգ է տալիս խոսքին: Քան, քանի թե շաղկապների գործածությունները ժողովրդական պարզ լեզվում փոխարինվում են բացառական հոլովի համապատասխան կիրառություններով (նա ավելի ուժեղ է, քան Սուրիկը=Նա Սուրիկից ուժեղ է):

* * *

Արդի հայերենի շաղկապները, որոնց զգալի մասը հին հայերենից է ժառանգություն մնացել, անցել են զարգացման երկարատև շրջան և այժմ հանդես են գալիս որպես իմաստային և ոճական հարուստ հնարավորություններով օժտված կապակցության միջոցներ:

Լեզվի զարգացման ներկա շրջանում կապակցական դեր են կատարում ինչպես բուն շաղկապները, այնպես էլ շաղ-

կապական դերով հանդես եկող այլ խոսքի մասերը: Այս վերջին դեպքում շաղկապների հետ հարաբերակցող բառերը հանդես են գալիս ինչպես համատեղ, այնպես էլ զուգահեռ արժեքներով: Համատեղ արժեքով օգտագործվելիս կապակցական դեր կատարող բառը չի կորցնում խոսքի մասային իր բուն նշանակությունը, որով նրա հարաբերակցությունը շաղկապի հետ կրում է մասնակի բնույթ: Զուգահեռ արժեքով օգտագործվելիս կապակցական դեր կատարող բառը արդեն կորցնում է խոսքի մասային իր նախորդ նշանակությունը և հանդես է գալիս որպես սոսկ շաղկապ, որով նրա հարաբերակցությունը այդ խոսքի մասի հետ կրում է լիակատար բնույթ: Հարաբերակցության հիշյալ երկու եղանակների միջոցով արդի հայերենի շաղկապական համակարգը համալրվում է կապակցական դեր կատարող բազմաթիվ բառերով:

Լեզվի ներկա շրջանում շաղկապների քանակական և որակական աճը տեղի է ունենում գերադասեցապես հարադրական կազմություն ունեցող շաղկապների բուռն զարգացման շնորհիվ: Ուր, թե, և, էլ և այլ բառերի հարադրությամբ կազմված բաղադրյալ շաղկապները ոչ միայն բազմապատկում են արդի հայերենի շաղկապների թիվը, այլև ոճական կիրառությունների յայն հնարավորություններ են ստեղծում: Այս տեսակետից խիստ հետաքրքրական է հետևյալ հանգամանքը. արդի հայերենում շաղկապական նույն նշանակությամբ կարող են հանդես գալ զուգահեռ այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ֆանի-ֆանի դեռ, մինչ-մինչդեռ, մինչև-մինչև որ, երբ-երբ որ, հենց-հենց որ, ուստի-ուստի և, ուրեմն-ուրեմն և, չնայելով-չնայելով որ, չնայած-չնայած որ, թեպետ-թեպետ և, թեկուզ-թեկուզ և, ինչպես-ինչպես որ, կարծես-կարծես թե, ասես-ասես թե, ֆան-ֆան թե, բայց-բայց և, բայց և այնպես-սակայն և այնպես, թե չէ-եթե ոչ, կամ-կամ թե և այլն: Այս զուգահեռ ձևերը ժամանակակից հայերենում ոչ միայն ոճական նշանակություն ունեն (քանի որ նրանց օգտագործմամբ հաճախ խոսքին տարբեր երանգներ են տրվում՝ գրքային, խոսակցական, բարբառային և այլն), այլև տարբեր իմաստային երանգներ ու կիրառություններ ունեն: Այս կար-

գի բառերին են մոտենում և—ու և ու—թե ձևերը, որոնք սակայն, կազմված լինելով տարբեր արմատներից՝ ավելի տարբերակված նշանակություններ ունեն:

Բառերի և նախադասությունների կապակցման դերով արդի հայերենի շաղկապները հանդես են գալիս մեծադիւր, կրկնադիւր և զուգադիւր գործածությամբ: Շաղկապման այս տարբեր եղանակները շարահյուսական և ոճական տարբեր կառուցվածք են տալիս խոսքին՝ բազմազանություն ու այլաձևություն մտցնելով շաղկապական հարաբերությունների արտահայտման մեջ: Հատկապես նկատելի է զուգադիր գործածություն ունեցող շաղկապների աճը՝ ինչպես համադասական, այնպես էլ ստորադասական կապակցության մեջ:

Շաղկապների ավանդական բաժանումը համադասականի և ստորադասականի միշտ չէ, որ հիմնավորվում և պատճառաբանվում է: Փաստերը ցույց են տալիս, որ հաճախ համադասական շաղկապներով արտահայտվում են իմաստալիս այնպիսի հարաբերություններ, որոնք հատուկ են ստորադասական շաղկապներին, և ընդհակառակն, ստորադասական շաղկապները երբեմն թափանցում են համադասական կապակցության մեջ՝ իրենց կիրառական առանձնահատկություններով մոտենալով համադասական շաղկապներին: Կան նաև շաղկապներ, որոնք հավասարապես օգտագործվում են թե համադասական և թե ստորադասական կապակցության մեջ (թե, մինչդեռ, եթե... ապա և այլն): Վերջապես համադասական և ստորադասական շաղկապների միջև հատուկ դիրք են զբաղում մեկնական շաղկապները, որոնք կապակցում են ինչպես նախադասության անդամներ, այնպես էլ նախադասություններ:

Արդի հայերենի շաղկապների և շաղկապական բառերի հարստացումն ու զարգացումը տեղի է ունենում ինչպես ժողովրդական լեզվի ու բարբառների, այնպես էլ թարգմանական գրականության տեղական ու մշտական ազդեցության ներքո:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- ԱՐՆ—Ակսել Բակունց, Երկեր, Երևան, 1955:
- ԱԴԵՀ—Ալեքսանդր Դյոմա, Երեք հրացանակիրներ, Երևան, 1953:
- ԱԻ—Ավետիք Իսահակյան, Ընտիր երկեր, Երևան, 1948:
- ԳՄ—Գուրգեն Մահարի, Երկեր, Երևան, 1954:
- ԳՍԲ—Գեղամ Սարյան, Բանաստեղծություններ, Երևան, 1954:
- ԳՍԵ—Գեղամ Սարյան Երկեր, Երևան, 1956:
- ԴԴ—Դերենիկ Դեմիրճյան, Ընտիր պատմվածքներ, Երևան, 1950:
- ԴԴ, 3—Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. III, Երևան, 1956:
- ԴԴ, 4—Դերենիկ Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հատ. IV, Երևան, 1957:
- ԴԴԴ-Դանիել Դեֆո, Թորթինգոն Կրոսզոլի կյանքը..., Երևան, 1951:
- ԴԴՎ—Դերենիկ Դեմիրճյան, Վարդանանք, Երևան, 1954:
- ԵԶ—Եղիշե Չարենց, Ընտիր երկեր, Երևան, 1955:
- ԺԴԿՍԱ—Ժողուն դե Կաստրո, Սովի աշխարհագրությունը, Երևան, 1957:
- ԺՎԲՀՀՄ—Ժյուլ Վեռն, Բեզումի հինգ հարյուր միլիոնը, Երևան, 1949:
- ԻԷՓ—Իլյա Էրենբուրգ, Փոթորիկ, Երևան, 1951:
- ԼԵ, 5—Լենին, Երկեր, հատ. V, Երևան, 1948:
- ԽՄՄՀ—Վիգեն Խելումյան, Մեզ մոտ հարավում, Երևան, 1955:
- ՀԹ—Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, Երևան, 1953:
- ՀԹԵ—Հովհաննես Թումանյան, Երկեր, հատ. I և II, Երևան, 1958:
- ՀԹԵԺ—Հովհաննես Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. I—1950, հատ. II—1940, հատ. III—1949, Երևան:
- ՀՀԵ—Հակոբ Հակոբյան, Երկեր, Երևան, 1951:
- ՀՄԱԸ—Հեկտոր Մալո, Առանց ընտանիքի, Երևան, 1958:
- ՀՄՔՏ—Հակոբ Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Բ, մասն Ա, Երևան, 1957:
- ՀՇ—Հովհաննես Շիրազ, Հատընտիր, Երևան, 1954:
- ՀՍ—Համո Սահյան, Բարձունքի վրա, Երևան, 1955:
- ՀՔ—Հրաչյա Քոչար, Բարեկամություն, Երևան, 1950:
- ՀՔՍՈՒ—Հրաչյա Քոչար, Սրբազան Ուխտ, Երևան, 1946:
- ՄԱՊ—Մկրտիչ Արմեն, Պատմվածքներ, Երևան, 1957:
- ՄԳՄ—Մուրացան, Գևորգ Մարզպետունի, Երևան, 1939:
- Մուր.—Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. III, Երևան, 1952:
- Մուր. 4—Մուրացան, Երկերի ժողովածու, հատ. IV, Երևան, 1953:

ՆԴ—Նար-Դոս, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VI (Մահը), Երևան, 1946:

ՆԴՄ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, հատ. III, Երևան, 1955:

ՆԶ—Նաիրի Զարյան, Հատընտիր, Երևան, 1951:

ՆԶՀ—Նաիրի Զարյան, Հացավան, Երևան, 1955:

ՆԶՊ...—Նաիրի Զարյան, Պարոն Պետրոսի ու էր նախարարները, Երևան, 1958:

ՆՀԲ—Նոր բողոքը հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836—1837:

ՇԽՐՎ.—Շիրվանզադե, Երկերի լիակատար ժողովածու, հատ. IV (Քառու), Երևան, 1950:

ՈՄԲ—Սարգիս Ոսկերչյան, Մեր Բայբուրտը, Երևան, 1956:

ՋԼՄԻ—Ջեկ Լոնդոն, Մարտին Իդեն, Երևան, 1951:

ԴԻԺԲ—Դոմեն Ռոլլան, Ժան Քրիստոֆ, III և IV, Երևան, 1938:

ՍԶ—Ստեփան Զորյան, Երկերի ժողովածու, հատ. VI, Երևան, 1948:

ՍԽՀ—Սերո Խանզադյան, Հողը, Երևան, 1957:

ՍՈՎՄ—Ս. Սեկոյան, Ոսկե վազերի մեջ, Երևան, 1958:

ՎՏ—Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հատ. I, 1950:

ՎՓՀՀ—Վահրամ Փափազյան, Հետադարձ հայացք, գիրք I և II, Երևան, 1956—1957:

ВЯ — Вопросы языкознания.

ՏԱԿ—Լև Տոլստոյ, Աննա Կարենինա, հատ. I և II, Երևան, 1957:

ԲՄ.—Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. III (Սամվել), Երևան, 1950:

ԲՄ—Բաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. VII, Երևան, 1956:

ՕԴԲԽՊ—Օնորե դե Բալզակ, Խորտակված պատրանքներ, Երևան, 1949:

ՕԴԲԿՊ...—Օնորե դե Բալզակ, Կուրտիզանուհիների պերճանքն ու թշվառությունը, Երևան, 1958:

ՅԵԳ—Ալեքսանդր Յազեկ, Երիտասարդ Գվարդիա, Երևան, 1947:

ԼՐԱԳՐՆԵՐ ԵՎ ԱՄՍԱԳՐՆԵՐ

ԱՎ.—Ավանգարդ

ԳԹ.—Գրական թերթ

Եր.—Երևան

ՀՅ.—Հայաստանի ֆիզկուլտուրնիկ

ՍԱ.—Սովետական արվեստ

ՍԳ.—Սովետական գրականություն

ՍԴ.—Սովետական զարոց

ՍՀ.—Սովետական Հայաստան (օրաթերթ)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Աբեղյան Մ. Աշխարհաբարի շարահիսուսին, Վաղարշապատ, 1912:
- Աբեղյան Մ. Աշխարհաբարի քերականութիւն, Վաղարշապատ, 1906:
- Աբեղյան Մ. Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931:
- Աբեղյան Մ. Տարրական քերականութիւն, Քիֆլիս, 1910:
- Աբովյան Խ. Երկերի լիակատար ժողովածու, հինգերորդ հատոր, Երևան, 1950:
- Աբրահամյան Ա. Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1952:
- Աբրահամյան Ս. Ժամանակակից հայերենի լիքըզոլ խոսքի մասերը, Երևան, 1959:
- Աբրահամյան Ս. Արդի հայերենի դերանունները, Երևան, 1956:
- Աղայան Է. Լեզվաբանության ներածություն, Երևան, 1952:
- Աճառյան Հ. Հայերեն արմատական բառարան, Երևան, 1927—1932:
- Աճառյան Հ. Լիակատար քերականություն հայոց լեզվի, հատոր IV, առաջին մաս, Երևան, 1959:
- Աճառյան Հ. Քննություն նոր-նախիջեանի բարբառի, Երևան, 1925:
- Աճառյան Հ. Քննություն նոր-Ջուղայի բարբառի, Երևան, 1940:
- Աճառյան Հ. Քննություն Պոլսահայ բարբառի (Երևանի պետական համալսարանի «Գիտական աշխատություններ», հատոր 19, 1941:
- Աճառյան Հ. Գրախոսություն Խ. Կանյանի «Ավետիք Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն» գրքի (Սովետական գրականություն, 1941, 1, էջ 99):
- Այտրենեան Ա. Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, հանդերձ ներածութեամբ և լաւելուածով, Վիեննա, 1866:
- Ավետիքեան Գ. Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1823:
- Արաբաշեան Ա. Տարրական քերականութիւն հայոց աշխարհաբար լեզուի, մասն առաջին, Ալեքսանդրապոլ, 1903:
- Բահաթրեանց Ա. Քերականութիւն աշխարհիկ լեզուի, շրջան Ա, Տփլիս, 1879:
- Բաղդասար Դպիր, Պարզաբանութիւն քերականութեան կարճառու և դիրքիմաց, Կ. Պոլիս, 1736:
- Белашапкина В. А. К изучению типов сложного предложения, «Доклады и сообщения Института языкознания», 1952, № 2.

- Богомолова О. Современный французский язык, Москва, 1948.
- Богородицкий В. А. Общий курс русской грамматики, Москва—Ленинград, 1935.
- Борковский И. В. Сложносочиненные предложения в древнерусских грамотах, «Доклады и сообщения Института языкознания», Москва, 1956, № 10.
- Булаховский Л. Курс русского литературного языка, том I, Киев, 1952.
- Буслаев Р. Историческая грамматика русского языка, 4-е изд., Синтаксис, Москва, 1875.
- Гаджиева Н. З., Иванчикова Е. А. Дискуссия о частях речи, «Вопросы языкознания», 1953, № 2.
- Грамматика русского языка, Фонетика и морфология, том I, Москва, 1952, Синтаксис, том II, часть II, Москва, 1954.
- Գրիգորյան Ա. Հայոց լեզու, դասագիրք միջնակարգ դպրոցի VIII—X դասարանների համար, Երևան, 1953:
- Դադրյան Զ. Արևելահայ աշխարհաբարի քերականություն, մասնաժողով, Ստուգարանություն, Թիֆլիս, 1913:
- Давидовский Л. М. Придаточные предложения следствия, «Русский язык в школе», 1955, № 6.
- Земский Л. М., Крючков С. Е., Светлаев М. В. Грамматика русского языка, часть первая, Москва, 1948.
- Քումանյան Յար. Հայոց աշխարհաբար լեզուի համառոտ համաձայնություն, Թիֆլիս, 1911:
- Քումանյան Յար. Համառոտ ստուգարանություն հայոց աշխարհաբար լեզուի, Թիֆլիս, 1904:
- Ղարիբյան Ա. Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1956:
- Ղարիբյան Ա. Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1954:
- Մալխասյան Ե. Գրաբարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892:
- Մելիք-Թանգեան Ն. Աշխարհաբարի քերականություն, Շուշի, 1893:
- Meillet A. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique, Vienne, 1903.
- Meillet A. Linguistique historique et linguistique générale, T. I, Paris, 1948.
- Мещанинов И. Члены предложения и части речи, М.—Л., 1945.
- «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», հատ. I և II, Վենետիկ, 1836—1837:
- Шахматов А. Синтаксис русского языка, изд. 2-е, Ленинград, 1941.
- Շարարյան Պ. Գրաբարի շաղկապները, Երևան, 1960:
- Չալրխան Վրթ. Քերականություն հայկազեան լեզուի, Վիեննա, 1885:

- Չամչեան Մ. Քերականութիւն հայկազեան լեզուի, 4-րդ տպ., Վենետիկ, 1859:
- Պալասանեան Ս. Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, երկրորդ տիպ, Թիֆլիս, 1874:
- Պալասանեան Ս. Գործնական քերականութիւն հայերէն լեզուի, հատ. II, Համաձայնութիւն, Թիֆլիս, 1869:
- Պալասանեան Ս. Հնդհանուր տեսութիւն արեւելեան նոր դրաւոր լեզուի հայոց, Թիֆլիս, 1870:
- Պալասանեան Ս. Քերականութիւն մայրենի լեզուի, 5-րդ տիպ, Թիֆլիս, 1906:
- Պառնաւսյան Ն. Ստորադասական կապակցութիւնը արդի հայերենի բարդ նախադասութիւններում, Երևան, 1961:
- Пешковский А. Русский синтаксис в научном освещении, изд. 5-е, Москва, 1935.
- Петерсон М. Союзы (Современный русский язык, Морфология, Москва, 1952, стр. 432—452).
- Попова И. А. Сложносочиненное предложение в современном русском языке «Вопросы синтаксиса современного русского языка», Москва, 1950.
- Поспелов Н. С. Сложноподчиненные предложения и его структурные особенности (Вопросы языкознания, 1959, № 2, 19—27).
- Прияткина А. Ф. Конструкции с пояснительными союзами, «Русский язык в школе», 1956, № 5.
- Семенихин В. П. О союзах, «Русский язык в школе», 1956, № 6.
- Сепир Э. Язык, Москва—Ленинград, 1934.
- Schröder Thesaurus linguae Armenicae antiquae et hodiernae, Amstelodami, 1711.
- Современный русский язык, Морфология (курс лекций), изд. МГУ, Москва, 1952.
- Современный русский язык, Синтаксис (под редакцией Е. М. Галькиной-Федорук), изд. МГУ, 1957.
- Սեւակ Գ. Ժամանակակից հայերենի համառոտ պատմութիւն, Երևան, 1948:
- Սեւակ Գ. Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955:
- Սեւակ Գ. Խոսքի մասերի ուղմունքը (Երևանի պետական համալսարան, «Գիտական աշխատութիւններ», հատոր II, 1939):
- Սեւակ Գ. Հայոց լեզվի շարահյուսութիւն, Երևան, 1951:
- Вандриес Ж. Язык, Москва, 1937.
- Ванслова М. Л. О синтаксическом употреблении подчинительных союзов, «Русский язык в школе», 1948, № 6.
- Վանցեան Գ. Դպրոցական քերականութիւն, Ալէք-Պօլ, 1906:
- Виноградов В. В. Русский язык, Москва—Ленинград, 1947.

Տ է ր-Ղ և ո ն դ ե ա ն ն. Մայրենի լեզուի փերականութեան տարերքը, I
մաս, 2-րդ տպ., Քիֆլիս, 1883:

Տ է ր-Ղ և ո ն դ ե ա ն ն. Մայրենի լեզուի փերականութեան տարերքը, I և
II մաս, 6-րդ տպ., Քիֆլիս, 1906:

Ф е о д о р о в В. Е. «Курс лекций» как научный труд, «Вопросы
языкознания», 1954, № 6.

Ք Յ ու Ր Ջ Յ ա ն Ա. Հայերենի մակրայները (թեկնածուական դիսերտա-
ցիա):

ԱՅՍ ՄԱՏԵՆԱՇԱՐՈՎ ԼՈՒՅՍ ԵՆ ԸՆԾԱՅՎԵԼ

- Ա. Ա. Աբրահամյան—«Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը» (1953)
- Ա. Ա. Մուրվալյան—«Հայոց լեզվի բառային կազմը» (1955)
- Վ. Դ. Առաքելյան—«Ժամանակակից հայերենի հնչյունաբանությունը» (1955)
- Ս. Գ. Աբրահամյան—«Արդի հայերենի դերանունները» (1956)
- Վ. Դ. Առաքելյան—«Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները» (1957)
- Վ. Դ. Առաքելյան—«Հայերենի շարահյուսություն» (1958)
- Ա. Ա. Մուրվալյան—«Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն» (1959)
- Ս. Դ. Աբրահամյան—«Ժամանակակից հայերենի լիքեքվող խոսքի մասերը» (1959)
- Հ. Զ. Պետրոսյան—«Գոյականի առումները հայերենում» (1960)
- Ն. Ա. Պառնասյան—«Ստորադասական կապակցությունը արդի հայերենի բարդ նախադասություններում» (1961)
- Ս. Գ. Աբրահամյան—«Ժամանակակից հայերենի շարահյուսության միջանի հարցեր» (1962)
- Ա. Ա. Աբրահամյան—«Բայը ժամանակակից հայերենում» (1962)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք	5
----------------------	---

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

Շաղկապի բմբռնումը արևելահայ աշխարհաբարի փերականագիտության մեջ	7
Շաղկապը որպես խոսքի մաս	19
Շաղկապների ձևաբանական կազմը և նրանց տեսակներն ըստ կազմության	43

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Շաղկապների նշանակություններն ու կիրառությունները	
ա) Շաղկապների տեսակներն ըստ գործածության եղանակի	85
բ) Համադասական և ստորադասական շաղկապները և նրանց արտահայտած շարահյուսական հարաբերությունները .	88
Համադասական շաղկապներ	
1. Միավորիչ շաղկապներ	94
2. Հակադրական շաղկապներ	129
3. Տրոհական շաղկապներ	160
4. Մեկնական շաղկապներ	171
Ստորադասական շաղկապներ	181
1. Բացատրական շաղկապներ	185
2. Նպատակի շաղկապներ	226
3. Պատճառի շաղկապներ	239
4. Հետևանքի շաղկապներ	255
5. Պայմանի շաղկապներ	271
6. Ժամանակի շաղկապներ	293
7. Զիջական շաղկապներ	322
8. Համեմատական շաղկապներ	338
Համառոտագրություններ	363
Օգտագործված գրականության ցանկ	365

ԳՐԻԳՈՐ ԼԵՎՈՆԻ ԳԱՐԵԳԻՆՅԱՆ
ГРИГОР ЛЕВОНОВИЧ ГАРЕГИНЯН
«ՇԱՂԿԱՊԵՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ»

Պատ. խմբագիր՝ Վ. Գ. Առաքելյան
Հրատ. խմբագիր՝ Ա. Հ. Շաղգաձյան
Նկարչական ձևավորումը Ա. Գասպարյանի
Տեխ. խմբագիր՝ Հ. Լ. Գորոյան
Վերստուգող սրբագրիչ՝ Զ. Խ. Օրմանյան

ՎՖ 06108, ԽՀԽ № 758, հրատ. № 2128, պատվեր 234, տիրած 1500

Հանձնված է արտադրության 8/VIII 1963 թ., ստորագրված է տպագրության 27/X 1963 թ., տպագր. 23,25 մամուլ, հրատ.

16,41 մամուլ, թուղթ 84×108¹/₃₂: Գինը կազմով 1 ո. 18 կոպ.:

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ. տպարան, Երևան, Բաքեկամության 24:

9950